

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ
ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ

«Պետական ծառայություն» հրատարակչություն

2019

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66.0
Մ 350

**Տպագրության է երաշխավորվել Հայաստանի Հանրապետության պետական
կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի կողմից**

Գլխավոր խմբագիր՝ Ա. Փ. Ենգոյան, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Գրախոսներ՝ Ս. Տ. Քոչարյան, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ա. Ս. Ալեքսանյան, քաղ. գիտ. դոկտոր,
Կ. Ա. Գալոյան, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ
Մ. Գ. Մարգարյան, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ

Մարգարյան Մարիամ Մամիկոնի

Մ 350 Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի
Հանրապետությունում /Մ.Մ.Մարգարյան.- Երևան, «Պետական ծառայություն»
հրատարակչություն, 312 էջ:

Մենագրությունում համակողմանի ուսումնասիրված է քաղաքական արդիակա-
նացման քաղաքականության չափումը՝ որպես ռազմավարական կառավարման ապա-
հովման հիմք: Հիմնավորված է այն մոտեցումը, որ «թավշյա հեղափոխության»
հաղթանակից հետո ՀՀ քաղաքական համակարգի բնականոն արդիականացման
գործընթացի իմաստավորումը պահանջում է իրականացնել գիտավերլուծական
կառավարում՝ հենվելով **համախմբագիտության** (consolidation) սկզբունքների վրա: Այս
դիտանկյունից կարևորված է **բնաշխարհիկացված** (indigenization) էլիտաների՝ որպես ՀՀ-
ում քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման, քաղաքականության
ինքնորոշման, հասարակության երջանիկ ապագայի ռազմավարական կառավարման և
անվտանգության ապահովման պատասխանատուների կայացման հրամայականը:

Ելակետային այս դիրքորոշումը վերաբերում է հայ քաղաքական մտքում
ձևավորված և ժամանակի մարտահրավերներին դիմակայած **«Հոգևոր Հայաստանի»**
գաղափարը: **«Հոգևոր Հայաստանի» գաղափարն** այն տեսլականն է՝ արժեքաբանական
ուղենիշը, որը կարող է դառնալ քաղաքական ինստիտուտների կառավարման
ոգեղենությունն ապահովող խթան: Հայկական քաղաքակրթության կենսունակության
բարձրացման առումով հիմնավորված է Գրիգոր Նարեկացու գոյաբանական և
իմացաբանական հայեցակարգերի այժմեականացման հրամայականը:

Հեղինակը համոզված է, որ նմանօրինակ մոտեցումը Հայաստանի Հանրապե-
տությունը, քաղաքական արդիականացման արդի հրամայականներին համահունչ,
կկարողանա ինքնորոշվել և կառուցել ժողովրդավարական, ինքնիշխան, սոցիալական,
իրավական պետություն **Տունը Հայոց:**

Մենագրությունը նախատեսված է քաղաքական գործիչների, քաղաքական
վերլուծաբանների և փորձագետների, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և ՀՀ այլ
բուհերի ուսանողների, ասպիրանտների, դասախոսների, ինչպես նաև քաղաքացիական
ակտիվ դիրքորոշում ունեցող երիտասարդության համար:

ՀՏԴ 32.001

ԳՄԴ 66.0

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ԳԻՐՔ 1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՔ.....	10
1.1. Քաղաքական արդիականացման արժեքային համակարգի Էվոլյուցիան	10
1.2. Ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացը՝ որպես բնականոն արդիականացման հրամայական.....	36
ԳԻՐՔ 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	54
2.1. Լեգիտիմության հիմնախնդիրը քաղաքական զարգացումներում	54
2.2. Մարզինալությունը՝ քաղաքական արդիականացման բաղադրիչ.....	84
2.3. Ժողովրդավարության որակը քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման և խաղաղության մշակույթի հաստատման օրակարգում	101
2.4. Հեղափոխությունները և սոցիալ-քաղաքական ճգնաժամերի հաղթահարման գործընթացի հետագծերը	118
2.5. Ժողովրդավարական լեգիտիմացման բնութագրիչները Հայաստանի Հանրապետությունում	131
ԳԻՐՔ 3. ԱԶԳ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ- ՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆՈՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԺԵՔԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	147
3.1. Ազգը՝ որպես քաղաքական արդիականացման գործընթացի դերակատար	147

3.2. Ազգ-պետության արդիականացման հրամայականները զլոբալացման պայմաններում.....	159
3.3. Երիտասարդության քաղաքական սոցիալականացումը՝ որպես ազգային ինքնության արդիականացման գործընթաց. «հոգևոր անվտանգություն»	170
3.4. Պատմականությունը՝ որպես պետության ինքնիշխանության արդիականացման բաղադրիչ.....	181

**ԳԻՐՔ 4. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՄ 200**

4.1. ՀՀ քաղաքական էլիտայի արժեքային կողմնորոշիչները ժողովրդավարացման գործընթացում	200
4.2. Հայաստանի Հանրապետության քաղաքական մշակույթի ժողովրդավարացման հիմնախնդիրը խորհրդարանական կառավարման պայմաններում	224

**ԳԻՐՔ 5. «ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԳԱՂԱՓԱՐԻ
ՆՈՐԱՐԱՐԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 239**

5.1. Ոգեղենությունը՝ որպես հայկական քաղաքակրթությունը համակարգող ամբողջություն	250
5.2. «Հոգևոր Հայաստանի» Սահմանադրություն	271
5.3. Գրիգոր Նարեկացու գոյաբանական և իմացաբանական հայեցակարգերը՝ որպես հայկական քաղաքակրթության կենսունակության աղբյուր	275

**ՎԵՐՋԱԲԱՆ (ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ) 299**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նոր աշխարհակարգը իր աստիճանակարգային և ցանցային կառավարման տարածական հարթությունների բոլոր մակարդակներում մարտահրավերներ է նետել քաղաքական արդիականացման գործընթացում գտնվող ժողովուրդների ինքնությանը: Ժողովրդավարական անցում ենթադրող այս գործընթացը, մանիպուլացնելով տարաբնույթ էթնոմշակութային, սոցիոմշակութային, դավանաբանական արժեքներ, կոչված է **իմաստավորելու** սոցիալ-քաղաքական համակարգը: Քաղաքական արդիականացման հրամայականների ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետությունում պայմանավորված է ինչպես ժողովրդավարական անցման, անցումից համախմբման գործընթացների էությամբ ու բնությամբ, այնպես էլ արդի գլոբալացման և գլոկալացման համարժեք կերպափոխման քաղաքակրթական արժեքաբանությամբ:

Նկատի ունենալով քաղաքական արդիականացման տեսաբանների և փորձագետների այն մոտեցումը, որ քաղաքական արդիականացման առաջին երկու փուլերը (1950-1960 թթ., 1960-1980 թթ.) աֆրիկյան և լատինաամերիկյան երկրներում ձախողվել են, ելակետային ենք համարել նրանց կողմից հիմնավորված մեկ այլ դիրքորոշում. կերպափոխումներն արդյունավետ են, եթե հաշվի է առնվում քաղաքակրթական չափումը: Այս համատեքստում պահանջվում է բարձրացնել քաղաքականության դերակատարների պատասխանատվության մակարդակը և կանխել գծային ազատականացման հետևանքով առաջացած քաղաքական զարգացման ճգնաժամերը (բաշխման, մասնակցության, շարժունակության, ինքնության, լեգիտիմության):

Մեր հետազոտության արդիականությունը պայմանավորված է ինչպես ՀՀ բազմամակարդակ կերպափոխությունների իմաստավորման պահանջով, այնպես էլ նոր աշխարհակարգի զարգացման տրամաբանությամբ: Համոզված ենք, որ ՀՀ-ում առանց քաղաքական արդիականացման գործընթացների իմաստավորման անհնար է հրաժարվել «փորձի ու սխալի» հարացույցից՝ անցնելով «գիտավերլուծական» կառավարման հարացույցի:

Ներկա մարտահրավերներով պայմանավորված՝ «թավշյա հեղափոխության» հաղթանակից հետո իրավիճակը պահանջում է քաղաքական համակարգի ինստիտուտների բնականոն արդիականացման **ոչ պատվիրակված և**

ակադեմիական վերլուծություն: Դա ենթադրում է հայկական պետականության ժողովրդավարական որակների զարգացում, սոցիալ-քաղաքական դերակատարների մրցունակության հիմնավորում, փոխհամաձայնեցված խմբիշխանության մերժում, հանրային կառավարման ռացիոնալ ընտրության այնպիսի մոդելի մշակում, որը, համապատասխանելով ՀՀ-ի ազգային և պետական շահերին, նպաստում է այժմեական պահանջներին համահունչ քաղաքական ինքնություն ունեցող քաղաքացու և պոլիարխիկ էլիտայի կայացմանը:

Քաղաքական արդիականացումը՝ որպես քաղաքականության որակական փոփոխություն արտահայտող երևույթ, կոչված է նաև կանխատեսելու հասարակության ապագային ուղղված ակնկալիքները, ինչու՞ ոչ՝ նաև երազանքները: ՀՀ-ում քաղաքական արդիականացումն ունի իր առանձնահատկությունները՝ պայմանավորված երկրում գծային ազատականացման, արագացված սահմանադրական փոփոխությունների և նոր արժեքային համակարգի հանրային ընկալմամբ: Հետևաբար կարևորել ենք այն **քաղաքական դիսկուրսը, որի միջոցով հնարավոր է հիմնավորել ոչ միայն անցումագիտական, այլև համախմբագիտական հայեցակարգը՝ դիտարկելով համագործակցության այլընտրանքային բոլոր հնարավորությունները:** ՀՀ ժողովրդավարական համախմբման հեռանկարը միանշանակ պայմանավորում ենք բնականոն քաղաքական արդիականացմամբ՝ որպես **անհրաժեշտ** գործընթաց: **Անհրաժեշտ,** քանի որ տարաբնույթ մանիպուլյացիաների չենթարկվելու և ինքնիշխանությունը զարգացնելու համար Հայաստանը չի կարող հետ մնալ միջազգային զարգացման միտումներից: Մեր կողմից կարևորված հիմնախնդրի ուսումնասիրումը պայմանավորված է նաև նոր աշխարհակարգում դրա նկատմամբ առկա մոտեցումների բազմազանությամբ: Արդի աշխարհի զարգացման բնութագրիչն են դարձել տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաները, որոնց օգնությամբ ստեղծված սոցիալ-քաղաքական ցանցերը պարուրել են «Երկիր» մոլորակը՝ նպաստելով «ծայրամասերի» և՛ զարգացմանը, և՛ ինքնության կորստին, և՛ անորոշությունների խորացմանը: Աշխարհը դադարել է լինել հասկանալի և կանխատեսելի. Անորոշությունների հաղթահարման նպատակով նորարարական մոտեցում է մշակվել՝ հասարակության կերպափոխմանը զուգահեռ արդիականացնել քաղաքական համակարգը: Բնականաբար հարց է առաջացել՝ որո՞նք են

այդպիսի արդիականացման օրինաչափությունները: Ի՞նչ պետք է վերցնի մեր երկիրը հաջողված պետությունների քաղաքական համակարգերի արդիականացման փորձից: Ահա հիմնական հարցերից մի քանիսը, որոնց համակարգված պատասխանելը առավել քան երբևէ արդիական է Հայաստանի ժողովրդավարական համախմբման համար:

Քաղաքական համակարգի բնականոն արդիականացման գործընթացները, ցավոք, շատ քիչ են ուսումնասիրված ՀՀ-ում: Մինչդեռ քաղաքական համակարգի կերպափոխումները, սոցիալական կանխատեսման հիմնախնդիրները քաղաքական արդիականացման տեսության գերակա խնդիրներից են, քանի որ ցանկացած արդիականացում առաջին հերթին ենթադրում է քաղաքական ժամանակի ուսումնասիրումը անցյալ-ներկա-ապագա եռաչափության մեջ:

Ակադեմիական և կիրառական հետաքրքրությունը քաղաքական արդիականացման հիմնախնդրի նկատմամբ պայմանավորված է հայ հասարակության մեջ տեղի ունեցող տարաբնույթ, հաճախ անորոշություն մակածող կերպափոխումներով: ՀՀ-ում «թավշյա հեղափոխությունից» հետո առաջնային է դարձել հասարակության քաղաքական համակարգի արդիականացման տեսական և կիրառական հիմնախնդիրների ուսումնասիրումը: Ակնհայտ է, որ նոր աշխարհակարգի աստիճանակարգային և ցանցային կառավարման բոլոր մակարդակներում տեղի ունեցող գլխապտույտ փոփոխություններն անհրաժեշտ է հետևողական գիտական վերլուծության ենթարկել **ՀՀ ռազմավարական անվտանգ ապագայի, արդյունքի ժողովրդավարական կառավարման և համագործակցության մշակույթի զարգացման առումով:** Վերջիններիս արժևորմամբ հիմնավորված է այն մոտեցումը, որ նոր աշխարհակարգի կառուցվածքում քաղաքական արդիականացման իմաստավորումն **առանցքային նշանակություն ունի հայկական քաղաքակրթության ոգեղենության այժմեականացման համար:**

Այս համատեքստում **նախ** նպատակադրված վերլուծել **ենք քաղաքական արդիականացման արժեքային համակարգի էվոյուցիան, ապա** հիմնավորել նրա **քաղաքակրթական չափումը՝** որպես **ռազմավարական կառավարման ապահովման հիմք:** Հենվելով այն մեթոդաբանական մոտեցման վրա, որ քաղաքական արդիականացումը բացառապես էլիտաների կողմից ուղղորդվող և սոցիալական տարաբնույթ խմբերի կողմից որդեգրած գործընթաց է, **հիմնավորել ենք** **պոլիարխիկ էլիտայի կայացման**

անհրաժեշտությունը՝ որպես ՀՀ-ում ժողովրդավարական անցումից համախմբման իմաստավորման, ինչպես նաև ազգային ինքնության բնականոն արդիականացման պատասխանատուի:

Նշված հիմնախնդիրների համալիր ուսումնասիրումը Հայաստանում անհրաժեշտություն է, քանի որ աններդաշնակ և խիստ հակասական տեղեկատվական հոսքերը ստիպում են պատմականության տիրույթներում վերարժևորել անցյալը և հիմնավորել արդի Հայաստանի համար բնականոն քաղաքական արդիականացումը՝ որպես ժողովրդավարական համախմբման հզոր գործոն: Այս համատեքստում տեղեկատվական աններդաշնակ հոսքերի, ինչպես նաև պատերազմների քայքայիչ հետևանքների կանխումը և հոգևոր անվտանգության ապահովումը էականորեն պայմանավորված են «լոկալ» քաղաքակրթությունների, մեր պարագայում՝ հայկական քաղաքակրթության ոգեղենության արդիականացման հրամայականով: Ելակետային այս մոտեցման տիրույթներում վերարժևորել ենք հայ քաղաքական մտքում ձևավորված և ժամանակի մարտահրավերներին դիմակայած **«Հոգևոր Հայաստանի» գաղափարը՝ համոզված**, այն Հայաստանի ռազմավարական ապագայի տեսլականն է՝ արժեքաբանական ուղենիշ: Այսպիսով՝ հիմնվելով ազգային ինքնության մշակութահեն ինքնատիպության չափանիշների վրա, հիմնավորել ենք մոտեցումներ ՀՀ քաղաքական արդիականացման հրամայականների և **անցյալ-ներկա-ապագա** եռաչափության ու հայկական քաղաքակրթության **կենսունակության** տրամաբանության տիրույթներում: Այս մոտեցումը մեզ օգնել է հանգուցային եզրահանգումներ կատարելու և ուղենշելու ՀՀ բնականոն արդիականացման առաջնահերթությունները՝ **պայմանավորված ինքնության և քաղաքակրթական ինքնորոշման հույժ կարևոր խնդիրների այժմեականությամբ:**

Միևնույն ժամանակ, քննական մոտեցում ցուցաբերելով հայկական ինքնության վրա գլոբալ քաղաքականության, քաղաքակրթությունների բախման կամ երկխոսության հետևանքների ու ազդեցությունների նկատմամբ, դուրս ենք բերել մարտահրավերներին պատասխանելու հնարավոր բանաձևեր: **Համոզված ենք**, նմանօրինակ մոտեցմամբ ՀՀ քաղաքացին, քաղաքական արդիականացման արդի հրամայականներին համահունչ, կկարողանա ինքնակառավարվել, ինքնափրացվել և ինքնարդիականանալ և կառուցել (կերտել, արարել) ժողովրդավարական,

ինքնիշխան, սոցիալական, իրավական պետություն՝ **Տունը Հայոց**: Յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջան **Հայոց Տան** կերտման իր արժեքաբանական տեքստն ունի, սակայն հայկական քաղաքակրթության ամբողջացման և հանրային համակեցության ապահովման առումով ելակետային են Հայկական վերածննդի գաղափարախոս Գրիգոր Նարեկացու գոյաբանական և իմացաբանական հայեցակարգերը:

Մենագրության տեսական հենքը քաղաքական արդիականացմանը նվիրված այն ուսումնասիրություններն են, որոնցում ներկայացված են այդ գործընթացի խաղային բնույթը և համաշխարհային փորձի ընդհանրացումները: Մենագրության համար մեթոդական հիմք են ծառայել սիներգետիկական, համակարգային, պատմականության, պատճառահետևանքային սկզբունքները, որոնց շրջանակներում էլ կատարվել են հիմնախնդրի տեսական և կիրառական ընդհանրացումները:

Հարգելի՛ ընթերցող, որպես մենագրության հեղինակ՝ երախտապարտ եմ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Ենգոյանին՝ իր խորհուրդների, զրույցների և աշխատանքը համբերատար կարդալու ու գրախոսելու համար: Շնորհակալ եմ իմ մենագրության ընդդիմախոսներից, ինչպես նաև ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Քաղաքական կառավարում և հանրային քաղաքականություն» ամբիոնի երիտասարդ դասախոսներից՝ առաջարկների համար: Շնորհակալ եմ մենագրության խմբագիր Ա. Սամվելյանից և համակարգչային ձևավորող Հ. Նավասարդյանից:

Առանց իմ եղբոր կնոջ՝ Գեղեցիկ Մարգարյան-Թորոսյանի, և հարսիս՝ Արմինե Բաբայանի հոգատարության չէի կարող այսքան մեծ ժամանակ և ջանքեր տրամադրել այս աշխատանքին: Հարգելի՛ ընթերցող, շնորհակալ եմ նաև Ձեզնից, որ պետք է զինվեք համբերությամբ և կարդաք մենագրությունը:

ԳԻՐՔ 1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱ- ԿԱՆ ՉԱՓՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՔ

1.1. Քաղաքական արդիականացման արժեքային համակարգի էվոլյուցիան

Քաղաքական արդիականացումը բազմաչափ գործընթաց է, որը ենթադրում է իր սիմվոլներով ու արժեքներով ձևափոխվող քաղաքական համակարգի ձևավորում, վարչական մեքենայի արդյունավետ գործառնում, պետականաշինության մշակույթի զարգացում և ազգային անվտանգության համակարգային ապահովում: Նոր տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների զարգացման շրջանակներում, որպես ռազմավարական կառավարման ապահովման հիմք, որոշիչ տեղ և դեր ունի արդիականացման քաղաքակրթական չափումը: Այն մի կողմից ենթադրում է քաղաքական համակարգի ինստիտուտների ժողովրդավարական կառավարման որակական զարգացում և, ըստ այդմ, ազգային անվտանգության ընդարձակված օրակարգի ապահովում, մյուս կողմից մեծացնում է և՛ կառավարող, և՛ ընդդիմադիր էլիտաների պատասխանատվությունը:

Քաղաքական արդիականացման քաղաքակրթական բազմաչափությունը:

Քաղաքական արդիականացման գործընթացի հիմքում քաղաքական կառավարման համընդհանուր (ունիվերսալ) մոդելի կիրառության հիմնավորման գաղափարն է: Այս մոդելի հաստատման և արդյունավետ գործառնության համար անհրաժեշտ է ավանդական (փակ) հասարակությունից անցում կատարել դեպի արդիական (բաց) հասարակություն, որը գիտատեխնիկական առաջընթացի, սոցիալական շարժունակության, արժեքային և նորմատիվ համակարգերի էվոլյուցիայի վերակառուցման կամ արմատական փոփոխության արդյունք է¹: Այս տեսանկյունից քաղաքական գիտության մեջ մշակվել և ուսումնասիրվում է քաղաքական արդիականացման մի քանի տիպաբանություն: Առաջինն առանձնացնում է արդիականացման երկու մոդել՝

¹ Մարգարյան Մ. Մ., Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր: Եր., «Պետական ծառայություն», 2004, էջ 6:

- **ինքնաբուխ (շիթային) արդիականացում** - ներքին ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, սոցիալ-մշակութային, տնտեսական և քաղաքական զարգացման միջոցով անցում այժմեական ժամանակի կամ ժամանակակից տարածությունների ստեղծման՝ «արդի իրականության բոլոր դրսևորումներով»,
- **երկրորդական կամ արտացոլված արդիականացում** – ժամանակակից պայմանների (տարածությունների) ստեղծում՝ տեխնոլոգիաների, ներդրումների, մարդկային ռեսուրսների և արտաքին փոխառությունների միջոցով:

Ըստ երկրորդ տիպաբանության՝ առանձնացվում է արդիականացման երեք մոդել՝

- **ներծին (էնդոգեն)** – արդիականացում սեփական ռեսուրսների հաշվին,
- **արտածին (էկզոգեն)** - արդիականացում փոխառությունների միջոցով՝ սեփական ռեսուրսների բացակայության կամ մերժման պայմաններում,
- **ներծին – արտածին** - արդիականացում սեփական ռեսուրսների և փոխառությունների միջոցով²:

Ըստ քաղաքական գործընթացի արագության՝ ուսումնասիրվում են.

• **«Քայլող» կամ առաջնային քաղաքական արդիականացում:** Այն սկսվեց 16-րդ դարում Եվրոպայում տեղի ունեցող Ռեֆորմացիայով և իր ավարտին հասավ միայն Լուսավորության դարաշրջանում (17-18-րդ դարեր): Այստեղ կերպավորվածն էր ռացիոնալ ինստիտուտների ստեղծումը, քաղաքական իշխանության աշխարհիկացումը, բարձր սոցիալական շարժունակությունը, իրավունքի գերակայությունը, ժողովրդավարական կառավարման ձևը: Հենց այսպիսի հասարակությունն էր Մ.Վեբերն անվանում **«ժամանակակից»** (ի հակադրություն «ավանդականի»), Կ.Մարքսը՝ **կապիտալիստական:**

• **«Վազող» կամ «հասնող» քաղաքական արդիականացում:** Ձևավորվելով և տարածվելով զարգացող երկրներում ու տարածաշրջաններում (Լատինական Ամերիկա, Ասիա, Աֆրիկա և իհարկե՝ հետխորհրդային երկրներ)՝ այն, պայմանավորված քաղաքականապես զարգացած երկրների

² История модернизации как предмет социально-философского анализа / Отв. ред. В.Г. Федотова, В.А. Колпаков. М.: ИФ РАН, 2014. 233 с.

անընդհատ աճող ազդեցությամբ, ի վերջո հանգեցրեց արևմտյան քաղաքական ինստիտուտների արժեքաբանական խզման: Այս ամենը զարգացող երկրներին ստիպեց արագացնել արդիականացման սեփական գործընթացները: «Վազող արդիականացում» որդեգրած երկրները, օգտվելով արդիականացման գործընթացները «յուրացրած» երկրների օգնությունից, տարատեսակ մեթոդներով (քաղաքական ամբողջատիրական վարչակարգերի արագ ժողովրդավարացում) փորձում են արագացնել սեփական զարգացումը, ինչի հետևանքով հասարակությունները հանգում են փակուղային արդիականացման: Քաղաքական արդիականացման մարտահրավերներին արդյունավետ պատասխանելու և քաղաքական զարգացման չափանիշները բավարարելու նպատակով Գ. Ալմոնդը և Լ. Պայը տարբերակեցին քաղաքական արդիականացման գործառնական երեք մոտեցում՝

- **կառուցվածքային** - քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ բաղադրիչների աճ և դրանց գործառնությունների մասնագիտացում,

- **համակարգային ադապտացիա** - քաղաքական համակարգի ինքնանորացման մեխանիզմների բարձրացում, սոցիալական ռեսուրսների համախմբում՝ հանուն սոցիալական հակամարտությունների կանխման և հասարակական կարգի պահպանման,

- **մասնակցային ժողովրդավարության զարգացում** և հավասարության մթնոլորտի ձևավորում³:

Արդիականացման գաղափարախոս Շ. Էյզենշտատը դեպի արդիական հասարակություն անցում է համարում փոփոխության այն գծային գործընթացները, որոնք իրենց հեղափոխականացնող բնույթով հաստատվել են Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում դեռ 17–19-րդ դարերում, ապա 19–20-րդ դարերում տարածվել են Հարավային Ամերիկայում, Ասիայում, Աֆրիկայում⁴: 1950-1960-ական թվականներից, ապագադուրացմամբ պայմանավորված, քաղաքական արդիականացումը բազմակողմանիորեն ուսումնասիրվում է որպես քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումների մի այնպիսի ամբողջություն, որը

³ Теория и методы в современной политической науке: Первая попытка теоретического синтеза / под ред. С. У. Ларсена; (пер. с англ. Е. Жуковой). М.: Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2009, с. 120.

⁴ Эйзенштадт Ш., Революция и преобразование обществ. Сравнительное изучение цивилизаций / Пер. С англ. В.А. Гордона; науч. ред. пер.Б.С. Ерасов. М.: Аспект Пресс, 1999, с. 13–14.

ենթադրում է քաղաքական փոփոխությունների, կայունության, անվտանգության և լեգիտիմության բազմաչափ փոխապայմանավորվածություն:

Ըստ Ս. Հանթինգթոնի՝ «Արդիականացումը ներառում է ինդուստրացումը, ուրբանացումը, գրագիտության, կրթվածության, բարեկեցության և սոցիալական հոգսի աճող մակարդակը, ինչպես նաև ավելի բարդ ու բազմակողմանի մասնագիտական կառուցվածքներ: Սա գիտական և ինժեներական գիտելիքների ծավալման ցնցող արդյունք է: Արդի հասարակությունները կարող են իրար ավելի նման լինել, քան ավանդականները, և դա երկու պատճառ ունի: Նախ՝ արդի հասարակությունների միջև ավելի մեծ փոխազդեցությունը կարող է չծնել ընդհանուր մշակույթ, սակայն այն հեշտացնում է տեխնոլոգիաների, գյուտերի և համակարգի փոխանցումը մի հասարակությունից մյուսին մի այնպիսի արագությամբ և աստիճանով, որն ավանդական աշխարհում հնարավոր չէր: Երկրորդ՝ ավանդական հասարակությունը հիմնված էր գյուղատնտեսության վրա, մինչդեռ արդի հասարակությունը հիմնվում է արդյունաբերության վրա, որը կարող է արհեստներից վերաճել դասական ծանր արդյունաբերության, իսկ այնուհետև՝ գիտելիքահեն տեխնոլոգիաների և արտադրությունների»⁵:

Հենց այդ համակարգային փոփոխությունների համալիրն էլ դրդեց ուսումնասիրելու արդիականացումը 1950-ական թվականներին նոր անկախացած պետություններում տեղի ունեցող զարգացումների տարաբնույթ արդյունքների հետազոտման միջոցով: 1950-1960-ական թվականներին քաղաքական արդիականացման **առաջին փուլը** բնորոշվեց որպես արժեքային համակարգում ազգայինը պահպանած երկրների հասարակական-քաղաքական կյանքի ժողովրդավարացում արևմտյան ունիվերսալ արժեքների մեխանիկական տարածման միջոցով: Միաժամանակ այն ընկալվեց որպես ավանդական հասարակությունների արժեհամակարգի արմատական փոփոխություն՝ անհատապաշտական արժեքների աճ, ինչպես նաև մասնակցային ժողովրդավարության մեխանիկական ներդրում: Այս ամենին զուգահեռ ենթադրվում էր, որ քաղաքական արդիականացումը «երրորդ աշխարհի» երկրների ինդուստրալիզացումը և քաղաքական զարգացումն ուղղորդող գործընթաց է Եվրոպայի, ԱՄՆ-ի և Երրորդ աշխարհի միջև: Այս համատեքստում Հնդկաստանի «անգլիականացումը» և Հնդկաչինի

⁵ Хантингтон С., Столкновение цивилизаций. Пер. с англ. Т. Велимеева, Ю. Новикова. М.: 2007, с. 94–95.

«գալիացումը» դիտվեցին որպես արդիականացմամբ պայմանավորված փոփոխությունների տարբեր ձևաչափեր, որոնց տիրույթներում ձևավորվեց մեխանիկական «արևմտականացում» (westernization) երևույթը⁶:

Արդիականացման գործընթացում բազմաչափ փոփոխությունները մարմնավորող ավանդական և արդիական երկճյուղումները դիտարկելու համար առավել ուշագրավ է Թ. Պարսոնսի առաջարկած **«տիպային փոփոխականների»** հայեցակարգային գծապատկերը հետևյալ շարքով՝ **աֆեկտիվություն–աֆեկտիվ չեզոքություն, կոլեկտիվիզմ–ինդիվիդուալիզմ, պարտիկուլյարիզմ–ունիվերսալիզմ, որակ–արտադրողականություն, դիֆուզայնություն–յուրահատկություն**⁷:

Արդեն 1950-ականներին գաղութատիրության լուծը թոթափած երկրներին բազմաչափ փոփոխությունը կառավարելու համար, ըստ սույն մոտեցման, առաջարկվեց ավանդականից ազատականության միջոցով արագացված տեմպերով արդիականության անցնելու մի գծային մոդել, որտեղ ԱՄՆ-ն ու Արևմտյան Եվրոպան ներկայանում էին որպես արդիականությանը բնորոշ հատկանիշների հիման վրա բնականոն եղանակով նորարարացող երկրներ⁸: Այսպիսով՝ կայացման վաղ շրջանում արդիականացման տեսությունը ոչ այնքան ակնկալվող բազմաչափ փոփոխությունների կանխատեսման ու մեկնաբանության, այսպես կոչված, **«մաքուր»** գիտական տեսություն էր, որքան զարգացած Արևմուտքի գաղափարական, աշխարհաքաղաքական և քաղաքակրթական նկրտումները խաղային տրամաբանությամբ ներկայացնող ռազմավարական նախագիծ: Ավելին, հետահայաց վերլուծությունը հնարավորություն է տալիս արդիականացումը դիտելու որպես «սառը պատերազմի» ժամանակ նորանկախ երկրների քաղաքական համակարգը արագացված փոփոխությունների միջոցով ապակայունացնող խաղային գործողությունների կառուցվածքային–գործառական համալիր: Այս նկատառումներով արդիականացման տեսության կիրառման սկզբնական շրջանում Շ. Էյզենշտատը

⁶ Иноземцев В.Л., (ред.) Демократия и модернизация: к дискуссии о вызовах XXI века / Центр исследований постиндустриального общества; Вступ. статья В.Л. Иноземцева. - М.: Издательство «Европа», 2010, с. 202–203.

⁷ Парсонс Т., О социальных системах/ Под ред. В. Ф. Чесноковой и С. А. Белановского. -М.: Академический проект., 2002. с. 97.

⁸ Модернизация и политика в XXI веке / Отв. ред. Ю. С. Оганисян; Ин-т социологии РАН.- М.: Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2011, с. 112.

հասարակական կերպափոխումների որակական բնութագրիչների համակարգային ուսումնասիրության նպատակով հիմնավորեց մեթոդաբանական հիմք ծառայող հետևյալ երկճյուղումները.

1. **Ազատություն ընդդեմ անձի իշխանության (ավտորիտարություն):** Ելակետ ընդունվեց այն, որ անհատապաշտության վրա հիմնված ժամանակակից հասարակությունը ենթադրում է ազատության սահմանների անընդհատ ընդլայնում, ինչը ծնում է ինչպես կայունության և կարգուկանոնի պահպանման, այնպես էլ քաղաքական և քաղաքացիական ազատությունների ինստիտուցիոնալացման հիմնախնդիր:

2. **Կայունության և ժառանգորդության ապահովում հանուն շարունակական փոփոխությունների:** Ժամանակակից հասարակություններում, չհիմնավորված նկրտումների և անհապաշտության հիմքի վրա փոփոխությունների կանխման համար, անհրաժեշտ է ապահովել ինստիտուցիոնալ կայունության և մշակութային ժառանգորդության համատեղումը:

3. **Ժամանակակից սոցիալական ռացիոնալություն՝** ընդդեմ մշակութային կողմնորոշումների կամ արժեքների, որոնք մարմնավորված էին ավանդույթների, կրոնական կամ միատիկական փորձի մեջ⁹: Ինչպես տեսնում ենք, արդիականացումը՝ որպես քաղաքական գործընթաց, արդյունք է գրանցում, երբ ձևավորվում են իրականությունը նորացնող սուբյեկտները՝ **նոր ազատական էլիտա, երկրի շահերը ներկայացնող կրթված ու առաջադեմ միջին խավ, առանձին ռազմավարական ստեղծագործ անհատներ:** Այս համատեքստում շեշտադրվեց քաղաքական արդիականացումը՝ որպես արժեքային համակարգի միագիծ փոփոխությունների (միայն ազատականացում) համալիր ամբողջություն: Այն միանշանակ գնահատվեց առաջադիմական գործընթաց, որը նպատակադրված Արևմուտքի բարիքները հասանելի է դարձնում արդիականացման գործընթացի հորձանուտում հայտնված բոլոր ժողովուրդներին: Այս համատեքստում էլ **«ավանդականից-ժամանակակից»** երկճյուղման ուսումնասիրություններն իրականացվեցին անցման միջանկյալ փուլերով՝ ճկունություն հաղորդելով փոփոխությունների գործընթացին: **«Ժամանակակից հասարակության»** անցման հայեցակարգը ձևավորվեց զարգացման, ենթազարգացման, կախվածության տեսությունների հիման վրա, որոնցից յուրաքանչյուրը քաղաքական

⁹ St' u Эйзенштадт Ш., Революция и преобразование обществ. Сравнительное изучение цивилизаций / Пер. с англ. В.А. Гордона; науч. ред. пер.Б.С. Ерасов. М.: Аспект Пресс, 1999. с. 272:

համակարգի արդիականացման համատեքստում ժողովրդավարացման տարբեր ձևաչափեր մշակեց: Սերտորեն կապված լինելով միմյանց՝ այս տեսությունները պատմականորեն իրենցից ներկայացնում են միևնույն գործընթացի անբաժանելի մասեր, քանի որ այդ երևույթները գոյություն ունեն միաժամանակ՝ համագործակցելով իրար հետ և փոխարացնելով մեկը մյուսին: Ըստ Դ. Ռաստորուի՝ վերոնշյալ գործընթացում գերակա է ազատական էլիտայի¹⁰ դերը հանուն ժողովրդավարացման ստեղծում է ժամանակակից ինստիտուտներ¹¹: Լրացնելով Դ. Ռաստորուի առաջադրած դրույթը՝ Դ. Ապտերն այդ գործընթացում կարևորեց ռեսուրսները մոբիլիզացնելու հասարակության ընդունակությունը, ինչի արդյունքում հաստատվում են պլուրալիստական արժեքներ: Եթե մոբիլիզացիան անձնավորված է հատկապես խարիզմատիկ լիդերի և զանգվածային կուսակցության գերիշխանությամբ (ԽՍՀՄ-ը՝ Ի. Ստալինի, Չինաստանը՝ Մաո Յզե Դունի, Եգիպտոսը՝ Ա. Նասերի օրոք), ապա պլուրալիզմը կանխում է կենտրոնական իշխանության համակենտրոնացումը՝ բարձրացնելով ներկայացուցչական ժողովրդավարության դերը: Արդիականացումը դիտարկելով քաղաքական

¹⁰ **Էլիտա** (լատ. *eligere* – ընտրել, ֆրանս *elite* – լավագույն, ընտրյալ) – ՀՀ լեզվի պետական տեսչության պետի 2000 թ. փետրվարի 1-ի 8/4 հրամանով «Էլիտա» բառին համարժեք առաջարկվել է օգտագործել **վերնախավ, ընտրանի** բառերը: Կարծում ենք, որ առաջարկվող բառերն ունեն իմաստային նրբերանգներ, և նրանցից միայն «ընտրանի» բառը որոշակի վերապահումներով կարելի է նույնականացնել բազմաշերտ բովանդակություն ունեցող «Էլիտա» հասկացության հետ: **«Վերնախավ»** կարելի է համարել հասարակական բուրգի վերին շերտում հայտնված մարդկանց, որոնք, գրավելով հանրային տարածություն, ամենին էլ իսկության մեջ հանրային շահը արդիականացնող դերակատարներ չեն: Այս դիտանկյունից Ջ. Սարտորին **իշխանություն, հարստություն և հեղինակություն ունեցող** վերնախավին բնութագրում է որպես **բարձրաչափականության (Altimetric)** հետևանք: Ըստ Ջ. Սարտորիի՝ այդ ամենին հնարավոր է հասնել ոչ լեզալ ճանապարհով՝ օգտվելով հեղափոխական անորոշությունից, արտակարգ իրավիճակներից, պատերազմներից և անկայուն այլ իրավիճակներից (Сартори Дж. Вертикальная демократия -Полис, 1993, N 2): Մինչդեռ «Էլիտա» հասկացությունն ունի հանրության կողմից լեգիտիմ ընդունված և գնահատված արժեքաբանական բնույթ. որպես այդպիսին՝ այն իր կառուցվածքում ներառում է մարդկանց, որոնք ոչ միայն «գործունեության բարձրագույն ինդեքս են ապահովում (Վ. Պարետո)»՝ այլև պատասխանատու են հանրային արժեշահային համակարգի արդիականացման համար (Կ.Մանհեյմ): Սա թույլ է տալիս պնդել, որ Էլիտան՝ որպես յուրաքանչյուր հասարակությունում փոքրամասնություն կազմող սոցիալական խումբ, ունի որոշակի արժեքային և կառուցվածքագործառնությանի հատկանիշներ:

¹¹ Растоу Д. А., Переходы к демократии: попытка динамической модели .– Полис. Политические исследования, 1996. № 5. с.5-15.

գարգացմանը զուգահեռ՝ Դ. Ապտերը շեշտում է փոփոխությունների վերաբերյալ առկա և՛ «**համատեքստային**», և՛ «**ինստիտուցիոնալ**» մոտեցումների համադրման անհրաժեշտությունը՝ անկախ արդիականացող տարածաշրջանների էթնիկական պատկանելությունից: Ելակետ ընդունելով այս մոտեցումները՝ դեռևս 1950-ական թվականներին Ս. Լիփսեթն (1922-2005) առաջարկեց համատեքստային փոփոխության իր մոտեցումը, ըստ որի՝ ժողովրդավարական ինստիտուտների կայունությունը պայմանավորված է տնտեսական զարգացման մակարդակով¹², իսկ Դ. Ապտերը կարևորեց սոցիալ-տնտեսական այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են ազգային համախառն արդյունքը, մրցունակ կրթությունը, քաղաքական կայունությունը, լեզվափոխությունը, ազգային անվտանգությունը և այլն¹³: Այստեղ որոշիչը քաղաքական իշխանության ինստիտուցիոնալացման մշակույթն է, որը ենթադրում է քաղաքացիների կողմից պետական քաղաքականության իմացություն, դրա տեսլականի ձևավորման վրա ազդեցություն ունենալու հնարավորություն և այն վերահսկելու ընդունակություն:

Ելակետ ունենալով ինստիտուցիոնալ մոտեցումը՝ Ս. Հանթինգթոնը մշակեց հայեցակարգ, ըստ որի՝ արդիականացումը որոշվում է մի կողմից քաղաքացիական մրցակցային մասնակցության, իսկ մյուս կողմից՝ ինստիտուցիոնալացման աստիճանով: Եթե քաղաքական մասնակցությունն աճում է, ապա անհրաժեշտ է մշակել ծրագրեր՝ այդ մասնակցությունն ինստիտուցիոնալացնելու նպատակով¹⁴:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ նպատակահարմար ենք համարում համադրել «**համատեքստային**» և «**ինստիտուցիոնալ**» մոտեցումները, ինչը հնարավորություն կտա քաղաքական արդիականացումը դիտարկելու որպես տարաբնույթ շարունակական բարեփոխումների, հեղափոխությունների, պետական հեղաշրջման, ընտրությունների ու սահմանադրական փոփոխությունների քաղաքական զարգացման բազմաչափ գործընթաց: Եթե շարունակական բարեփոխումը ենթադրում է բնականոն արդիականացում

¹² Lipset S. M., Political man: the social bases of politics. Bsltimore: Johns Hopkins University Press., 1981. p. 30-31. 34

¹³ Аптер Д. И., Сравнительная политология: вчера и сегодня // Политическая наука: новые направления, / Под. ред. Р. Гудина, Х.-Д. Клингеманна / Научн. ред. русского издания Е. Б. Шестопаля. – М.: Вече, 1999, с. 363.

¹⁴ Хантингтон С., Политический порядок в меняющихся обществах. / пер. с англ. В.Р. Рокитянского. – М.: Прогресс-Традиция, 2004, с. 29.

քաղաքական ժամանակի մեջ, ապա հեղափոխությունը հաստատված կարգի տապալումն է՝ «պատմության շարժիչ ուժը» (Կ. Մարքս): Քաղաքական փոփոխությունը որպես հեղափոխություն դիտարկող Շ. Էյզենշտատի կարծիքով, արդիականացման այդ տեսակին բնորոշ է երեք առանձնահատկություն՝ **բռնություն, նորամուծություն և համընդհանուր վերափոխումներ**: «Հեղափոխությունը բոլոր հասարակական շարժումներից ամենալարված, բռնի և գիտակցված գործընթացն է: Այստեղ առանձնահատուկ նշանակություն են ստանում ուտոպիստական կամ ազատագրական գաղափարները՝ հիմնված հավասարության, առաջընթացի, ազատության միֆերի և այն համոզմունքի վրա, որ հեղափոխությունը ստեղծում է նոր ու ամենալավ հասարակական կարգը»¹⁵: Հանրագումարելով սոցիալական հեղափոխությունների, հատկապես անգլիական (1640), ֆրանսիական (1789), ռուսական (1917), չինական (1949) փորձը՝ Ս. Հանթինգթոնը միակողմանի է համարում Շ. Էյզենշտատի մոտեցումը, նրա համոզմամբ, ինչպես հեղափոխությունը, այնպես էլ պետական հեղաշրջումը՝ որպես երկրի միջազգային վարկանիշի անկման, տնտեսական հետամնացության, լեզվոսիրության թուլացման կամ վերացման, բանակի և կառավարության միջև ծագած անհամաձայնության հետևանք, ճիշտ է, փոխում է կառավարող վերնախավը, սակայն էական ազդեցություն չի ունենում էթնոսների քաղաքական կյանքի ժողովրդավարացման գործընթացի վրա¹⁶: Այս ամենից էլ բխում է արդիականացումը որպես քաղաքակրթական գործընթաց դիտելու անհրաժեշտությունը, քանի որ զարգացումը կաշկանդող «հնացած» երևույթները կարելի է հաղթահարել, եթե վերափոխման դերակատարները, հատկապես բոլոր տեսակի էլիտաները, հանդես գան որպես ժողովրդավարացման և ռազմավարական կառավարման ջատագովներ¹⁷:

«Արդիականացում» հասկացության էության և բնույթի համակողմանի ուսումնասիրման, ինչպես նաև այն որպես բարդ և բազմաշերտ գործընթաց

¹⁵ Эйзенштадт Ш., Революция и преобразование обществ. Сравнительное изучение цивилизаций / Пер. с англ. А. В. Гордона под ред. Б. С. Ерасова. – М.: Аспект Пресс, 1999. с. 226.

¹⁶ Хантингтон С., Политический порядок в меняющихся обществах. / пер. с англ. В.Р. Рокитянского. – М.: Прогресс-Традиция, 2004. с. 269-278.

¹⁷ Մարգարյան Մ., Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Պետական ծառայություն», 2005, էջ 130:

հիմնավորելու նպատակով Դանիել Բելլը տարանջատեց «մոդեռնիթի» («modernity»), «մոդեռնիզմ» («modernism») և «մոդեռնիզացիա» («modernization») բառերի իմաստները: «Մոդեռնիթին» վերաբերմունքն է աշխարհի հանդեպ: Առաջինը, որին կարելի է աշխարհի բացության մարմնավորում համարել, Դիոգենեսն է: Մոդեռնիթին աշխարհը բաց, թափանցիկ ընկալելն է: «Մոդեռնիզմը» պատմականորեն սահմանված մշակութային - քաղաքակրթական ֆենոմեն է. այն փորձարարության, արվեստի տարբեր ժանրերի ընկալման ձև է: «Մոդեռնիզացիան» հատուկ տերմին է, որը նշանակում է ռացիոնալացման որոշակի ձև վարչարարական, քաղաքական և մշակութային տարրերի համադրման միջոցով»¹⁸: «Մոդեռնիթի» մշակույթը, լինելով եվրոպական քաղաքակրթության հիմնական ուղղորդիչ, հիմնվում է առաջընթացի, համամարդկային արժեքների վրա՝ ժողովրդավարական քաղաքական համակարգ, տնտեսական ազատություն, անհատի ինքնուրույնություն, քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացում և իրավական պետություն:

Եթե այս համատեքստում անդրադառնում ենք քաղաքական արդիականացման արժեքային եվոլյուցիային, ապա տեսնում ենք, որ այդ գործընթացի ինստիտուցիոնալ մոտեցման կողմնակիցներն այն բաժանել են երեք փուլի: **Առաջին՝ նախամոդեռնի փուլում** արժեքային համակարգի հիմք են ընդունվում միջերը և անձնավորված արքեպիսկոպոսն ու տոտեմները: **Երկրորդ՝ մոդեռնի փուլում** բացարձակ արժեքների միջոցով ռացիոնալացվում է հասարակաքաղաքական կյանքը: **Երրորդ՝ պոստմոդեռնիզմի փուլում** արժեհամակարգը հիմնվում է հանրային բարոյականության այլընտրանքային սկզբունքների վրա: Դեռևս մոդեռնի փուլում սկիզբ առած անհատի դերի աճն ու նրա ինքնորոշումը բարօրության համապատասխան մակարդակի առկայության պարագայում հանգեցնում է ոչ նյութական արժեքների գերակայությանը՝ ինքնաիրացում, պարտավորություններ, վստահություն և այլն: Զուգահեռաբար, պոստմոդեռնիզմի հիմնական հատկանիշներից է համարվում բացառապես սեփական տնտեսական շահերով առաջնորդվող տնտեսական մարդու վրա հիմնված նեոլիբերալիզմի տարատեսակների աճը: Նեոլիբերալիզմն այս դրսևորմամբ

¹⁸ Белл Д., Иноземцев В.Л., Эпоха разобщенности: Размышления о мире XXI века. – М.: Центр исследований постиндустриального общества, 2007, с. 206.

դիտարկվում է որպես պետությունը խարխլող և պետության ինստիտուցիոնալ զարգացումը խոչընդոտող երևույթ¹⁹: Այս համատեքստում գոյություն ունի կարծիք, ըստ որի՝ արդի հասարակության արդիականացումն ավարտված է, քանի որ ազգային և ավանդական, մշակութային գործոնները սոցիալ-քաղաքական, տնտեսական ոլորտներում սակրալ չափումների հետ միասին վերացել են²⁰: Ամերիկացի սոցիոլոգ Ռ. Ինգլհարդի պնդմամբ, այս երևույթները պայմանավորված են արդի արդյունաբերական հասարակությունների սոցիալ-քաղաքական զարգացման ուղղությունների արագ փոփոխությամբ: Փոփոխվում են ինչպես ինստիտուցիոնալ կառույցները (հզոր բյուրոկրատական պետություն, անընդհատ փոփոխվող քաղաքական կուսակցություններ, շարժումներ և արհմիություններ, որոնք կազմում են արևմտյան քաղաքակրթության ձեռքբերումների հիմնական շրջանակը), այնպես էլ հիմնական արժեքները (հրաժարում նյութական արժեքներից, տնտեսական և ֆիզիկական անվտանգություն), և նկատվում է միտում դեպի պոստնյութական արժեքներ (ինքնարտահայտում, ինքնադրսևորում և կյանքի որակի խնդիրներ)²¹:

Արդի պայմաններում ակնհայտ է արդիականության մշակույթի հարացույցի ներքին ճգնաժամը. մակրոմշակութային կերպափոխման գործընթացների հետևանքով ստեղծվել են մշակութային նոր կոնֆիգուրացիաներ, առաջացել են երևույթներ, որոնք սպառնում են մարդկությանը (գիտություններն ու գիտնականները չգիտեն իրենց անպատասխանատվության սահմանները, տեխնիկաները ոչ թե ծառայում, այլ ծառայեցնում են մարդուն, արդյունաբերությունը պարբերաբար ոչնչացնում է շրջակա միջավայրը, իսկ իրավական շրջանակներում ժողովրդավարությունը միայն ձևականորեն է գործում): Միաժամանակ ժողովուրդների շահերը ստորադասվում են վերազգային կորպորացիաների, գերտերությունների և անդրազգային կառույցների շահերին: Այդ

¹⁹ Мартянов В. С., Глобальный Модерн, постматериальные ценности и периферийный капитализм в России. – Полис. Политические исследования, № 1, 2014, с. 83-98.

²⁰ Мнацаканян О., Постмодернизм. Происхождение, природа и место в современной социологии. М.: Издательство: ЮНИТИ-ДАНА, 2015, 335 с.

²¹ Инглхарт Р., Вельцель К., Модернизация, культурные изменения и демократия: Последовательность человеческого развития М.: Новое издательство, 2011., с. 10-11, 51, 67-68.

համատեքստում արդիականացման գործընթացները, չլինելով հումանիստական, սպառնում են ոչ միայն ավանդույթին, այլև անհատների ինքնությանը՝ խեղաթուրելով նրանց պատկերացումները քաղաքական, քաղաքացիական և անձնական ազատությունների մասին:

Այսպիսով՝ քաղաքական արդիականացումը, ըստ էության, հանգեցվեց կառավարման այնպիսի ընդհանուր մոդելի կիրառման, որի էությունը ցանկացած երկրի ավանդական արժեքային համակարգի գծային արդիականացումն է (միայն ազատականացում), այսինքն՝ անցումը արևմտյան չափանիշներով դեպի թվացյալ ռացիոնալ հասարակություն: Աֆրո-ասիական և լատինաամերիկյան պետություններում նմանօրինակ արդիականացումը ցույց տվեց, որ ավանդական սոցիալական կառույցների և մտածելակերպի բախումներն իրականում հանգեցնում են իշխանական հարաբերությունների կոռումպացման, բյուրոկրատական կամայականությունների, խնամիականության (նեպոտիզմ), բնակչության աղքատության աճի, օտարման և մարգինալության: Որպես հետևանք՝ արդիականացման հիմնադրույթները ենթարկվեցին խիստ քննադատության՝ հատկապես **ավանդույթ-արդիականություն** երկձյուղման համատեքստում:

Արդեն 1960-ական թվականների վերջում, նկատի ունենալով տեղի ունեցած փոփոխությունների անարդյունավետությունը, քաղաքագետ Ջ. Ալեքսանդերը արձանագրեց արդիականացման տեսության **«անփառունակ վախճանը»**²²: Նմանօրինակ կոշտ և միանշանակ կարծիքի հիմքը քաղաքական զարգացման լատինաամերիկյան և աֆրիկյան պետությունների փորձն էր: Զինվորականության կատարած բազմաթիվ պետական հեղաշրջումներից և ազատական վերնախավերի իրականացրած գծային ազատականացումից հետո այդ պետություններն ընկղմվել էին քաղաքական զարգացման (բաշխում, շարժունակություն, մասնակցություն, ինքնություն, լեզվիտիմություն) ճգնաժամների մեջ, իսկ սահմանադրական կարգի վերականգնման, կայուն զարգացման համար թույլ և կառավարելի ընդդիմության կողմից մղված պայքարը սպասված արդյունքը չէր տալիս: Փաստորեն, նոր ձևավորված ռացիոնալ արժեքային կողմնորոշիչները հան-

²² Sté u Alexander J.C., Modern, Anti, Post and Neo: How social theories have tried to understand the “New world” of “Our time” //Zetschrift für Soziologie, , Jg. 23, Heft 3, 1994, p. 175:

գեցրել էին «սպասումների հիասթափության», ինչն էլ արդիականացող հասարակություններին ստիպեց վերաբժնորել ավանդականը և հարցադրում կատարել, **թե ո՛վ են իրենք**: Հարցին տրված պատասխանը ներառեց ռացիոնալը և իռացիոնալը ներդաշնակող այնպիսի նախաստիպային արժեքներ, ինչպիսիք են ընդհանուր ծագումը, միջերը, սիմվոլները, ծեսերը, լեզուն, կրոնը, պատմական հիշողությունը, սովորույթները և հանրային հաստատությունները:

Քաղաքական արդիականացման տրամաբանությունը արմատապես փոխվեց, երբ 1974 թ. Պորտուգալիայում «կարմիր մեխակների հեղափոխության» արդյունքում պետությունը բռնեց ժողովրդավարացման ուղին՝ բռնապետ Ա. Սալազարի վարչակարգի տապալմամբ և ժողովրդավարացման «երրորդ ակիբի» մեկնարկով²³: Տեսաբանները, հստակեցնելով քաղաքական արդիականացման իրավաքաղաքական մեխանիզմները, կարևորեցին հանրաքվեի միջոցով իրագործվող սահմանադրական փոփոխությունները: Ստացված արդյունքների հիման վրա 20-րդ դարի 70–80-ական թվականներին (արդիականացման երկրորդ փուլ) սկսեցին առաջնային համարվել այն սոցիալ-տնտեսական և քաղաքական կառուցվածքային փոփոխությունները, որոնք կարող են կատարվել ոչ միայն ըստ արևմտյան ժողովրդավարացման մոդելի:

Արդիականացումն ընդհանուր առմամբ ներկայացնելով որպես զարգացման համընդհանուր ուղղություն՝ տվյալ ժամանակի տեսաբանները (Գ. Ալմոնդ, Դ. Փաուել, Լ. Փայ, Ս. Հանթինգթոն և ուրիշներ) համոզվեցին, որ հասարակության զարգացումը պայմանավորված էր կապիտալիստական հասարակարգի, տնտեսության և տեխնոլոգիաների զարգացմամբ, ընդհանուր կենսամակարդակի բարձրացմամբ և անվտանգության հիմնախնդիրների լուծման մրցունակ ռազմավարության մշակմամբ ու իրականացմամբ: Այս համատեքստում արժեքավոր է Ս. Հանթինգթոնի հետևյալ դիտարկումը. «Արևմտյան արժեքների պրոյեկտումը այլ քաղաքակրթություններում և վերջիններիս արևմտականացումը ոչ միայն անընդունելի են (ոչ բարոյական), այլև անհնարին, քանի որ տնտեսական

²³ Diamond Larry, The State of Democratization at the Beginning of the 21st Century http://blogs.shu.edu/diplomacy/files/archives/04_diamond.pdf

զարգացումն ու արդիականացումը չեն ենթադրում մշակութային արևմտականացում և չեն հանգեցնում դրան»²⁴:

Հենց մրցունակ ռազմավարության տեսակետից էլ քննադատվեց և վերա-
ինաստավորվեց 1970–1980-ական թվականներին Լատինական Ամերիկա-
յում և Աֆրիկայում «ժամանակակից հասարակություն» կառուցելու նպատա-
կով ծավալված, սակայն ակնկալված ժողովրդավարությունը չհաստատած
ինստիտուցիոնալ փոփոխությունները: Նախ կասկածի տակ դրվեց
վեկտորային փոփոխությունների (միայն ազատականացում) նպատակա-
հարմարությունը, ապա՝ «արևմտացման» ձևաչափը, քանի որ տարբեր քա-
ղաքակրթական չափումներ ունեցող պետություններում (Թուրքիա, Եգիպ-
տոս, Հնդկաստան) ավանդական և արդիական հաստատությունների համա-
դրումը հանգեցրել էր տարբեր արդյունքների: Այս ամենի հիման վրա էլ քա-
ղաքական արդիականացումը սահմանվեց որպես մի այնպիսի զարգացում,
երբ իրագործվում են ինստիտուցիոնալ նորամուծություններ ռեսուրսների
մոբիլիզացմամբ, քաղաքացիների, հատկապես երիտասարդության
սոցիալականացմամբ, էլիտաների պատասխանատվության բարձրացմամբ
և մրցունակ անվտանգային ռազմավարության մշակմամբ, ինչպես նաև
պետականաշինության մշակույթի ինստիտուցիոնալ կայացմամբ:

Վերոգրյալի համատեքստում, տարբերակելով Կ. Մարքսի հեղա-
փոխական և Մ. Վեբերի էվոյուցիոն զարգացման մոտեցումները
ինստիտուցիոնալ նորարարությունների վերաբերյալ, Դ. Ռաստոուն իր
«ժողովրդավարության ծագման» մոդելում, որպես նորարարություն
շեշտելով համակարգի բնականոն հարմարվողականությունը, տարբերակեց
այն երկրները, որտեղ քաղաքական արդիականացման գործոնները գտնվում
են «ներսում» և կախված չեն «դրսի» միջամտությունից²⁵: Ընդհանուր առմամբ
քաղաքական համակարգի ժողովրդավարացումը ենթադրում է գոյություն
ունեցող հասարակական հիմնական ուժերի միջև երկու փոխկապակցված
նախապայմաններ՝ ազգային միաբանության և քաղաքական հակամարտու-
թյան որոշակի մակարդակ: Համեմատելով Շվեյցարիայի՝ 1890-1920 թթ. և
Թուրքիայի՝ 1940-1960 թթ. անցման փորձը՝ Դ. Ռաստոուն առանձնացրեց

²⁴ Хантингтон С., Политический порядок в меняющихся обществах. - М.: Прогресс-Традиция, 2004, с. 10-11.

²⁵ Растоу Д. А., Переходы к демократии: попытка динамической модели. - Полис. Политические исследования, 1996. № 5. с. 12-14.

անցման հաջողությունը պայմանավորող հետևյալ հիմնական փուլերը՝ **նախապատրաստում, որոշումների լեզալ ընդունում ու լեզվափոխարկանացում** և **ամրապնդում**: Այսպիսով՝

Դ. Ռաստոուն սոցիալական հակասությունների հաղթահարման և պատմական փոխհամաձայնության միջոցով ցանկանում է հասնել ազգային միաբանության, համաձայնության (պակտ) և համախմբման՝ ամրագրելով խաղի նոր կանոններ և ձևավորելով նոր ինստիտուտներ:

Ակնհայտ է, որ քաղաքական արդիականացումը ներառում է, մի կողմից, քաղաքական շուկայի առաջարկի և պահանջարկի փոփոխականները՝ պայմանավորված քաղաքական իշխանության իրականացման մշակույթով, մյուս կողմից՝ ներքին ինստիտուցիոնալ կառուցվածքային բարեփոխումները կամ որակական կերպափոխումները՝ թելադրված քաղաքական համակարգի ժողովրդավարացման տրամաբանությամբ: Այս մոտեցումը ելակետ դարձավ, որպեսզի 1980–1990-ական թվականներին ստեղծվեն քաղաքական փոփոխություններ ենթադրող ժողովրդավարացման մի շարք մոդելներ, որոնք կապված են Ա. Պշևրսկու, Ֆ. Շմիտերի, Գ. Օ'Դոննելի, Խ. Լինցի, Ս. Հանթինգթոնի և բոլոր նրանց անունների հետ, ովքեր քաղաքական արդիականացումը «անցում–համախմբում» հարացույցի շրջանակներում ուսումնասիրեցին **արտաքին (Ս. Հանթինգթոն) և ներքին (Խ. Լինց) գործոնների** հիման վրա:

Այս համատեքստում քաղաքական արդիականացումը՝ որպես համալիր ամբողջություն, ենթադրում է նոր ձևավորված քաղաքական համակարգի հարահոս ադապտացիա՝ շարունակական ժողովրդավարական բարեփոխումների տրամաբանությամբ: Փաստորեն, քաղաքական զարգացումը մարտահրավեր է, որին յուրաքանչյուր հասարակություն պատասխանում է անցյալ–ներկա չափումների մեջ ձևավորված և երջանիկ ապագայի տեսլականի հիմքի վրա արդիականացող իր արժեշահային համակարգի և ինստիտուտների էվոլյուցիոն զարգացման միջոցով²⁶:

Դրան զուգընթաց նոր աշխարհակարգի տեսությունը կառուցվում է **«ազգային մոդելների»** կայացման և համագործակցության մշակույթի

²⁶ Մարգարյան Մ.Մ., Քաղաքական արդիականացման արժեքային համակարգի էվոլյուցիան, «Քաղաքական արդիականացումը և ՀՀ քաղաքական գործընթացները» (Քաղաքագիտական հանրապետության երրորդ գիտաժողովի նյութեր).– Եր. Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, 2013, էջ 37–38:

զարգացման վրա: Նոր աշխարհակարգի ձևավորումը, ըստ Հ. Քիսինջերի, շարունակելով հիմնված լինել Վեստֆալյան համակարգի վրա, պետք է կառուցվի «համաձայնեցված ռազմավարության մշակման միջոցով՝ ուղղված առանձին տարածաշրջանների ներսում կարգի հայեցակարգի ստեղծմանը և այդ տարածաշրջանային կարգերի փոխադարձ կապակցմանը»²⁷: Նոր աշխարհակարգի հաստատման հիմնական նպատակը Հ. Քիսինջերը տեսնում է կոնֆլիկտներից խուսափելու և **«խաղի ընդհանուր կանոններ»** հաստատելու անհրաժեշտության մեջ:

Ամերիկացի քաղաքական վերլուծաբան Ֆ. Զաքարիան առաջարկեց հրաժարվել նոր աշխարհակարգում ավանդական «աշխարհի կենտրոնների» առաջատար դերից՝ հանուն «մյուսների աճի»²⁸: Այս դիտանկյունից, զուբալ կառավարման գործընթացներին զուգընթաց, հիմնային նշանակություն ստացավ ազգային ինքնության արժեքային բազմաչափությունը: Ներառելով ավանդական արժեքները և դրանք զուգամիտելով արդի մարտահրավերներից բխող բարեփոխումների հետ՝ Ֆ. Զաքարիան ազգը դիտարկում է որպես քաղաքական արդիականացման դերակատար, քանի որ արմատապես փոխում է ազգի կամ էթնիկական խմբի գործունեության պայմանները:

Այս դիտանկյունից էլ ուշագրավ է հայ քաղաքագետ Հ. Քոթանջյանի հետևյալ մոտեցումը. «Որպես արդյունք՝ ազգային հակամարտություններն ապագայում կսկսեն ավելի հաճախ ծագել և առաջին հերթին կներառեն բազմազգ պետությունները, ինչի հետևանքն էլ կլինի դրանց տրոհումը առանձին տարածաշրջանների»²⁹:

Վերոշարադրյալը հնարավորություն է տալիս քաղաքական արդիակա-նացման գործընթացում կարևորելու նրա արժեքային էվոլյուցիայի ազդե-

²⁷ Kissinger H., World Order, Penguin Random House LLC, New York, 2014, p.p. 371-375.

²⁸ Zakaria F., The post-American World, W.W.Norton and Company, New York, London, 2008, pp. 1-6.

²⁹ Քոթանջյան Հ. Ս., Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, - Եր.: ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2010, էջ 265:

ցությունը քաղաքական համակարգի ադապտացիայի խնդրի վրա՝ հիմնավորելով քաղաքակրթական չափումը՝ որպես ռազմավարական կառավարման ապահովման հիմք³⁰:

Փաստորեն, քաղաքական արդիականացման գործընթացն իր խաղային տրամաբանությամբ, որպես համալիր ամբողջություն, ներառում է արժեքների մի քանի համակարգ: Այդ տեսակետից արդիականացման գործընթացը՝ որպես ռացիոնալ ընտրություն, հասարակության կողմից իր առաջընթացն ապահովող արժեքների ընտրությունն է կամ դրանց համադրումը առկա ազգային արժեհամակարգի և անհատի ռացիոնալ գործողությունների հետ, որոնք անհատակենտրոն հասարակություններում ռազմավարական համագործակցության իրենց բնույթով փաստացի խուսափում են զրոյական ելքով խաղից³¹: Վերոնշյալ մոտեցումների համադրումը ցույց է տալիս, որ արժեքային այս փոփոխություններն ու հասարակության արդիականացումը սերտորեն կապված են պետության ինստիտուտի ժողովրդավարացման հետ: Ա. Մելվիլն առանձնացնում է ժողովրդավարացման գործընթացի հետևյալ փուլերը՝ **ավտորիտարիզմի կազմաքանդում և անկում, վարչակարգի ազատականացում, ինստիտուցիոնալ ժողովրդավարացում, չհամախմբված ժողովրդավարության փուլից անցում դեպի ժողովրդավարական համախմբում**³²:

Այս գործընթացը՝ որպես պետության արդիականացման պատասխանատու, կարևոր նախադրյալ է դառնում խրհրդանիշներով ու արժեքներով ճկուն քաղաքական համակարգի ձևավորման, արդյունավետ վարչական մեքենայի ստեղծման և քաղաքական կանխատեսելի զարգացումների համար: Այս դիտանկյունից մի շարք տեսաբաններ արդիականացումը տարանջատեցին ժողովրդավարացումից և առանձնացրին անցման երկու հիմնական փուլ՝ **ազատականացում և ժողովրդավարացում**:

³⁰ Մարգարյան Մ. Մ., Քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափումը՝ որպես ռազմավարական կառավարման ապահովման հիմք, ՀՀ ՊՆ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, N 4 (94), 2017, էջ 21-33:

³¹ Модернизация и политика в XXI веке. Отв. ред. Ю. С. Оганисян. Ин-т социологии РАН. М.: Российская политическая энциклопедия (РОССПЭН), с. 112.

³² Мельвиль А.Ю., О траекториях посткоммунистических трансформаций. - Полис Политические исследования, № 2, 2004, с. 64-75.

Ըստ Խուան Ջ. Լինցի ու Ալֆրեդ Ստեփանի՝ ազատականացումը ոչ ժողովրդավարական միջավայրում կարող է նպաստել մի շարք փոփոխությունների՝ չհանգեցնելով ժողովրդավարացման. «...Ժողովրդավարությունը տանում է ազատականացման, սակայն այն ավելի լայն և զուտ քաղաքական հասկացություն է»³³: Ըստ նրանց՝ ժողովրդավարական համախմբումը կարևորում է լեգիտիմ ընտրված իշխանությունների առկայությունը և հասարակության շրջանում ձևավորում է գիտակցություն, որ այն «դարձել է զարգացման լավագույն տարբերակը»: Պետության ինստիտուտը դիտարկելով որպես քաղաքական արդիականացման հիմնական պատասխանատու՝ կարևորվեց **քաղաքացիական հասարակության, քաղաքական հասարակության, իրավունքի գերակայության, հասարակության աջակցությունը վայելող վարչակարգի և տնտեսական հասարակության փոխլրացնող հենասյուների գործունեությունը**: Ինստիտուցիոնալ մոտեցման նոր սերնդի ներկայացուցիչների կարծիքով, միայն նշված հենասյուների գործառման պայմաններում է ապահովվում ինչպես պետականաշինության մշակույթի, այնպես էլ քաղաքական կարգի և վարչարարական կառավարման ժողովրդավարացումը: Այս պարագայում **պետականաշինությունն ու ժողովրդավարացումը, որպես փոխլրացնող երևույթներ, դառնում են ազգային համախմբման գործընթացի հիմք**: Միայն երկարաժամկետ գործառնող ժողովրդավարական համախմբումն է կարողանում արդյունքի կառավարում իրականացնել, որն էլ նրանց կողմից դիտարկվեց որպես պետականության ամրապնդման խթան³⁴: Շ. Էյզենշտատն առանձնացրել է այն գործոնները, որոնք խոչընդոտում են ժողովրդավարական համախմբումը և հանգեցնում արդիականացման գործընթացի խափանման: Առաջնային գործոններից նա առանձնացնում է հասարակության տարբեր խմբերի՝ կուսակցությունների, կլանների, բյուրոկրատիայի, բանակի պահանջների միջև կտրուկ տարբերությունները և կենտրոնական իշխանությունների՝ դրանց արձագանքելու անկարողությունը: Հետևանքն այն է լինում, որ առկա քաղաքական համակարգի և ֆորմալ ու ոչ ֆորմալ ինստիտուտների անհամապատասխանությունը պարբերաբար փլուզում է ձևավորված նոր

³³ Juan J. Linz and Alfred Stepan, Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, South America, and Post-Communist Europe, JHU Press, 1996. p. 21.

³⁴ Carbone G., Memoli V., Does Democratization Foster State Consolidation? Democratic Rule, Political Order, and Administrative Capacity, Governance: An International Journal of Policy, Administration, and Institutions, Vol. 28, No. 1, January 2015, p.p. 5–24.

արժեքների համակարգը: Մյուս խնդիրը նա համարում է հաղորդակցության տեսակների տարբերությունը հասարակության մեջ և հասարակության անկարողությունը՝ կայուն կերպով ընկալելու և յուրացնելու հաղորդակցության այդ ուղիներով հաղորդվող ազդակները: Եվս մեկ պատճառ է հասարակության և իշխանության համագործակցության սիմվոլների բացակայությունը, որոնք ընդունելի կլինեին հասարակության կողմից³⁵:

Հանրագումարելով առկա մոտեցումները՝ ռուս հետազոտող Վ. Ֆեդոտովան առանձնացնում է արդիականացման և ժողովրդավարացման փոխկապակցվածության երեք հայեցակարգ. **անցում ժողովրդավարության՝** հիմնված հասարակության սոցիալ-տնտեսական արդիականացման վրա, **անցում հասարակության արդիականացման՝** ազատական ժողովրդավարության կառուցման միջոցով, **ժողովրդավարական անցում՝** քաղաքական արդիականացման դանդաղ, փուլային գործընթացի միջոցով³⁶:

Արդիականացման գործընթացի բոլոր փուլերում բավական մեծ է անորոշությունների և անկայունությունների հավանականությունը: Ժամանակակից հեղինակների կողմից այդ համատեքստում առաջարկվում է վերանայել **պետություն-հասարակություն-ազգ-անհատ** հարաբերությունները և արդյունավետության ապահովման համար, հիերարխիկ կառավարմանը զուգահեռ, դիտարկել ցանցային կառավարման մոդելը: Քաղաքական ցանցը սահմանվում է որպես «ոչ հիերարխիկ և փոխադարձ կապվածություն ունեցող կայուն քաղաքական կապերի համախումբ: Այն շաղկապում է բազմաթիվ դերակատարների, որոնք կիսում են քաղաքական ընդհանուր շահերը և իրականացնում ռեսուրսների փոխանակում իրենց շահերն առաջ մղելու համար՝ ընդունելով, որ համագործակցությունն իրենց ընդհանուր նպատակներին հասնելու լավագույն միջոցն է»³⁷: Ցանցային կառավարման պայմաններում բոլոր որոշումները կայացվում են պետական

³⁵ Эйзенштадт Ш., Срывы модернизации, Неприкосновенный запас. Дебаты о политике и культуре № 74 (6/2010), М.: Новое литературное обозрение, 2010, с. 42-67, <http://magazines.russ.ru/nz/2010/6/e4.html>

³⁶ Федотова В. Г., Модернизация и культура.- Ин-т философии РАН. – М.: Прогресс-Традиция, 2015, с. 24-25.

³⁷ Кастельс М., Информационная эпоха: экономика, общество и культура / Пер. с англ. под науч. ред. О. И. Шкаратана. — М.: ГУ ВШЭ, 2000, с. 243.

և քաղաքացիական հասարակության դերակատարների միջև բանակցությունների և փոխհամաձայնությունների միջոցով՝ մեծացնելով անկայունության հաղթահարման հնարավորությունը: Այս համատեքստում քննարկվում է նաև պետության դերի հնարավոր թուլացումը, ինչպես նաև պետության գործառույթի փոփոխությունը՝ խթանող դերակատարման մեծացումը փոխհամաձայնեցված գործողությունների կատարման ուղղությամբ:

Եթե **պետություն-հասարակություն-ազգ-անհատ** հարաբերությունները դիտարկենք արդիականացման վերոնշյալ մոտեցումների համատեքստում, կարելի է եզրակացնել, որ արդիականացման բնականոն գործընթացի պարագայում, առանց արտաքին գործոնների արհեստական միջամտության, արդիականացման գործընթացը մեկնարկում է անհատի ինքնորոշումից: Ստեղծվում է որոշակի միջավայր, որտեղ անհատներն սկսում են փնտրել իրացման նոր հնարավորություններ: Արդյունքում հասարակությունում տեղի ունեցող փոխակերպումների հետևանքով առաջանում է պետական ինստիտուտների միջոցով ազգային կամ ունիվերսալ արժեշահային համակարգի պաշտպանության, ինքնաիրացման հրամայական: Միաժամանակ պետության ինստիտուցիոնալ կայացումը հաղորդակցության ուղիների ակտիվ կիրառմամբ ապահովում է այն համակարգը, որի ներքո անհատը ստանում է իր անհատական, ազգային և քաղաքացիական իրավունքների ու ազատությունների իրացման լիարժեք հնարավորություն և իր հետագա արդիականացումն իրականացնում է քաղաքացիության և սահմանադրականության ներքո: Դա իր հերթին թելադրում է **արդիականացման ազգային մոդել՝ պայմանավորված** ազգային առանձնահատկություններով և առկա մարտահրավերներով:

Ուսումնասիրելով արդիականացման տեսության զարգացումը, մշակույթի և արդիականացման գործընթացի փոխազդեցության արդի միտումները՝ ռուս տեսաբան Վ. Ֆեդոտովան, հրաժարվելով գծային արդիականացման գործընթացից, հիմնավորեց «արդիականացման ազգային մոդել» հասկացությունը և այն հակադրեց «վազող-հասնող» մոդելին: Առաջարկված երրորդ ուղու գաղափարի հիմքում դնելով ազգային, պետական առաջընթացի տեղայնացումը՝ ռուս հետազոտող Վ. Ֆեդոտովան համոզմունք

է հայտնում, որ դա մեծ հնարավորություններ է ստեղծում ակտիվ գլոբալ գործընթացներին և զարգացման միտումներին մասնակցելու համար³⁸:

Արդիականացման «ազգային մոդելների» գաղափարը զարգացրել է նաև արդիականացման տեսաբան Շ. Էյզենշտատը. «Մոդեռնիթի արևմտյան պատկերացումները միակ «իրական» մոդեռնիթին չեն՝ չնայած շարունակում են պատմական նախադեպ և հիմնական հենման կետ հանդիսանալ մյուսների համար»³⁹: Արդիականացման առանձնահատկության գաղափարին անդրադարձել է նաև Դ. Բելլը: Նա առաջարկում է արդիականացումը չդիտարկել **կոնվերգենցիայի տեսության**⁴⁰ շրջանակներում: «Եթե նույնիսկ կոնվերգենցիայի գաղափարն իմաստ ունի, ապա պետք է նկատի ունենալ, որ հասարակությունները նման են մինչև որոշակի մակարդակ: Այնուամենայնիվ, դա որևէ կերպ չի երաշխավորում նույնիսկ համանման արձագանք առկա խնդիրներին: Արձագանքը կախված է լինելու տվյալ հասարակության քաղաքական և մշակութային կառուցվածքից»⁴¹: Այս մոտեցման շրջանակներում Դ. Բելլը եզրակացրեց, որ քաղաքակրթություններից յուրաքանչյուրի արդիականացման գործընթացը տեղի է ունենում տարբեր արագությամբ և ուղղություններով, ինչը ձևավորում է **բախում-համագործակցություն** բազմամակարդակ հարաբերություններ:

³⁸ Федотова В. Г., Колпаков В. А., Федотова Н. Н. Глобальный капитализм: три великие трансформации. М.: Культурная революция, 2008, с. 375.

³⁹ Eisenstadt S. N., Multiple Modernities // Daedalus. Winter 2000. Vol. 29, № 1, p. 2-3. <https://www.scribd.com/doc/138489491/Eisenstadt-Multiple-Modernities-Daedalus-2000>

⁴⁰ **Կոնվերգենցիայի (լատ. Convergo) տեսություն** - առաջացել է 20-րդ դարի 50-60-ական թվականներին: Ենթադրվում էր, որ գիտատեխնիկական հեղափոխության հետևանքով տեղի է ունենում կապիտալիզմի և սոցիալիզմի մերձեցում: Տեսության ներկայացուցիչներ Ջ. Գելլրայտի, Պ. Սորոկինի, Յա. Թինբերգենի միջև առկա էին տարաձայնություններ: Ըստ Պ. Սորոկինի՝ «կապիտալիզմի ու կոմունիզմի դրական արժեքների» գումարման միջոցով կառաջանա ինտեգրալ տիպի հասարակություն: Թինբերգենի կարծիքով, ապագայի հասարակությունը կապիտալիզմից և սոցիալիզմից կվերցնի դրանց դրական հատկանիշները: Ըստ Ջ. Գելլրայտի՝ ցանկացած հասարակությունում ժամանակակից տեխնիկայի ու արտադրության կազմակերպման բարդ պայմաններում շուկայական հարաբերությունները պետք է փոխարինվեն պլանային հարաբերություններով: Արդեն 1970-ական թվականներին, միջազգային լարվածության մեղմացման շնորհիվ, հատկապես մտավորականության շրջանում հստակեցվեցին կապիտալիզմի և սոցիալիզմի մերձեցման կառուցակարգերը:

⁴¹ Белл Д., Грядущее постиндустриальное общество. Опыт социального прогнозирования/ Пер. с англ. Изд. 2-ое, испр. и доп. М.: Academia, 2004, CLXX, p. 319.

Քաղաքական արդիականացման նկատմամբ հետաքրքրությունը նորովի մեկնաբանվեց, երբ հետխորհրդային նոր անկախացած երկրները, որպես արդիականության նոր կենտրոններ, ներքաշվեցին այդ բարդ գործընթացի մեջ⁴²: Հետխորհրդային երկրներում քաղաքական արդիականացման ուսումնասիրության նորագույն մոտեցումների հեղինակներ Ս. Լևիտսկին և Լ. Ա. Վեյնը այդ գործընթացը պայմանավորեցին ներքին և արտաքին երեք գործոններով՝ «Արևմուտքի լծակներով», Արևմուտքի հետ կապերով և իշխող ռեժիմի կազմակերպչական իշխանությամբ⁴³: Այդ համատեքստում վերաբժնորվեց Արևմուտքի ազդեցությունը սեփական քաղաքական ինքնության և պատմականորեն ձևավորված համակեցության նորմերի բնականոն արդիականացման վրա: Որպես ներքին գործոն՝ առանձնացվեցին քաղաքական էլիտայի քաղաքական կողմնորոշումները և ընդդիմության նկատմամբ նրա վերաբերմունքը: Այս երեք գործոնների համադրությունը, դրանցից մեկի գերակայությունը կամ թուլությունը, ըստ Ս. Լևիտսկու և Լ. Ա. Վեյնի, պայմանավորում է արդիականացման անդառնալիությունը:

Այս ելակետային մոտեցմամբ ի մի բերենք քաղաքական արդիականացմանը բնորոշ հայեցակարգային առանձնահատկությունները, որոնք են՝ 1) նախկին կրոնական կամ ցեղային հայրենասիրության և համերաշխության փոխարինում ժողովրդավարական քաղաքական համակարգով, 2) նոր քաղաքական արժեքների հիմնավորում, արդիականացող ընտրախավի և նորաստեղծ պետության իշխանության օրինականություն, 3) իշխանության ապակենտրոնացում, 4) այն քաղաքական ենթակառուցվածքների զարգացում, որոնք կազմակերպվում են արդի քաղաքական պահանջների բերումով, 5) քաղաքական գործընթացների փոխկապված կազմակերպում, 6) իշխանության տարաբաժանում և արդյունավետ օգտագործում, տնտեսական աճի և ռեսուրսների մոբիլիզացման ապահովման նպատակով բարիքների և արժեքների բաժանում՝ զանգվածային պահանջներին և սպասելիքներին համապատասխան: Այս գործընթացը սովորաբար իրագործվում է վեց փուլով. 1) ազգային ինքնության իմաստավորում և կազմակերպական մարմնավորում, 2) պայքար ազգային

⁴² Sh'u, Tiryakian E., Modernisation: Exhumetur in Pace (Rethinking Macrosociology in the 1990), // International Sociology vol. 6, № 2, 1991, 6 (2): p.165-180.

⁴³ Levitsky S., Lucan A., Way, Competitive authoritarianism: Hybrid regimes after the Cold War. New York: Cambridge University Press. 2010, p.p. 37-71.

անկախության համար, 3) անկախացումից հետո դերերի և դիրքերի վերաբաշխում ու վերադասավորում, 4) «խնամակալ» վարչակարգի հաստատում, 5) անձնիշխանական համակարգի թուլացում, 6) ընդդիմության հաղթանակ լեզալ և լեզիտիմ ճանապարհով:

Քաղաքական արդիականացման՝ որպես ժողովրդավարական համալիր բարեփոխումների ամբողջության հիմքում գլոբալ քաղաքական կառավարման ընդհանուր մոդելի հիմնավորման գաղափարն է: Քաղաքական արդիականացումը և զարգացումը մարտահրավեր են, որոնց յուրաքանչյուր հասարակություն պատասխանում է իր արժեշահային համակարգի և քաղաքական գիտակցությանը համապատասխան ընտրությունների և ինստիտուտների կայացման միջոցով: Այս նկատառումներով էլ, զարգացած և զարգացող երկրների բազմաչափ փոփոխությունների համեմատական ուսումնասիրություններին զուգընթաց, արդիականացման տեսությունը վերանայվեց նոր մարտահրավերներին համահունչ:

Մի կողմից այն պայմանավորված էր արդի դարաշրջանում գծային զարգացման անարդյունավետությամբ, մյուս կողմից՝ անվտանգության քաղաքականության արժեքաբանության դրույթների վերանայման անհրաժեշտությամբ, մեկ այլ կողմից՝ ցանցային կառավարման ժամանակ առաջացած անորոշությունների հաղթահարմամբ: Ինչպես նշեցինք վերևում, արդիականացման տեսությունը իր խաղային տրամաբանությամբ չի բացառում, որ, որպես համալիր ամբողջություն՝ այն ներառում է արժեքների մի քանի համակարգ, որոնցից յուրաքանչյուրն օժտված է հիմնախնդրի լուծման և գիտական հիմնավորման սեփական տրամաբանությամբ: Հենց այս նկատի ունենալով՝ նպատակահարմար է քաղաքական արդիականացումը դիտարկել որպես՝

❖ **տնտեսական առաջընթացի նախապայման**, որի համաձայն՝ քաղաքական և սոցիալական իրավիճակները որոշիչ դեր են խաղում ինքնակառավարվող շուկայական տնտեսության կայացման գործում.

❖ **հետարդյունաբերական հասարակություններին բնորոշ քաղաքականություն**, համաձայն որի՝ ստեղծվում է ժողովրդավարական համախմբվածություն ենթադրող քաղաքական կյանքի կազմակերպման համընդհանուր մի մոդել: Վերջինս, հիմքում ունենալով բազմաչափ փոփոխություններ, ռացիոնալացնում է դերակատարների վարքաբանությունը և ապակենտրոնացնում կառավարումը.

❖ **փոփոխությունների գործընթաց**, որը հիմնավորում է զարգացած երկրների՝ որպես «ընդօրինակման աղբյուրներ» հանդես գալու հանգամանքը, քանի որ վերջիններս իրենց «Բարեփոխումներ վերնից» խաղի կանոններով ի ցույց են դնում քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման ուղիները.

❖ **ազգ-պետության աստիճանակարգային և ցանցային գործունեություն**, համաձայն որի՝ քաղաքական կյանքի կազմակերպման այս ձևը, ինչպես նաև քաղաքական գործառույթների իրականացումը, փոխադարձ-նախադրված են ազգային ինքնորոշման և ինքնիշխանության սկզբունքների վրա արդիականացող արժեքների առկայությամբ.

❖ **վարչական և իրավական համակարգերի կատարելագործում**, որը, սերտորեն կապված լինելով ազգ-պետության բնականոն արդիականացման գործընթացների հետ, հարստանում է քաղաքական ժամանակի և տարածության պահանջներին համապատասխան.

❖ **զանգվածային շարժունակություն և մասնակցություն**, որը, պայմանավորված է քաղաքացիների վարքաբանությամբ և դերակատարների այլընտրանքային հնարավորությունների օգտագործմամբ.

❖ **պոլիարխիկ էլիտայի գործառույթ**. բնականոն գործունեություն, որը ժողովրդավարացնելով իր իրականացրած իշխանությունը, պատասխանատու է սահմանադրականության և անվտանգության ապահովման համար:

Այս համատեքստում բազմաչափ փոփոխությունների ժամանակ անհրաժեշտ է ապահովել քաղաքական շուկայի բնականոն արդիականացում, որը պետք է ուղեկցվի իշխանության իրականացման և համագործակցության մշակույթի զարգացմամբ, կապիտալի լեգիտիմացմամբ և հումանիզացմամբ: Եթե «նոր ժողովրդավարների» առաջին սերունդը բազմաչափ փոփոխություններ էր առաջարկում միայն ազատականացման սկզբունքով, ապա շուկայի բնականոն արդիականացմամբ պայմանավորված՝ քաղաքական ծառայությունների պահանջարկի շրջանակներում փոխվեց առաջարկի որակը: Վերջինս ենթադրում է քաղաքական ապրանքի որակի այնպիսի փոփոխականներ, որոնք, բացի ազատականացումից, պայմանավորված են պատմական ավանդույթներով, սոցիալ-քաղաքական սիմվոլներով, ներքին և արտաքին ուժերի հաշվեկշռով, ինչպես նաև դերակատարների վարքում ժողովրդավարական արժեքների բնականոն ներդրման անհրաժեշտության

գիտակցմամբ: Համոզված ենք, որ սույն մոտեցումը հնարավորություն է տալիս քաղաքական արդիականացումը որպես համալիր դիտարկելիս կարևորելու քաղաքական շուկայում առաջարկի և պահանջարկի փոփոխականները: Այսպիսով՝ քաղաքական արդիականացման տեսության էվոլյուցիան անհրաժեշտ է ուսումնասիրել ըստ համախմբագիտության և շուկայագիտության այն մոդելների, որոնք ձևավորվել են ժամանակակից արևմտյան քաղաքական ինստիտուտների կայացման փորձի հիման վրա: Այս համատեքստում հատկանշական է Ճապոնիայի փորձը, որի կարգախոսն էր «Waken Yosei»՝ ճապոնական ոգի և արևմտյան տեխնիկա: Ուսանելի է նաև ըստ քաղաքական ժամանակի հրամայականների արդիականացող Թուրքիայի «խորքային պետություն» ստեղծելու գործընթացը⁴⁴:

Ավանդականի և արդիականի համադրումը՝ որպես «երկրորդ սերնդի բնաշխարհիկացման»⁴⁵ երևույթ», հնարավորինս մերժեց գուտ արևմտյան կողմնորոշում ունեցող առաջին սերնդի «ժողովրդավար» հռչակված էլիտաների փորձը: Եթե առաջին սերունդը հրապուրվեց աշխարհաքաղաքական արժեքներով, իսկ երկրորդը չիզեց կապը իր ազգային արժեքների հետ և չօտարվեց հասարակությունից, ապա երրորդ սերունդը, իրականացնելով մրցակցային կառավարում, լեգիտիմացնում և հումանիզացնում է ոչ միայն իշխանական հարաբերությունները, այլև ազգային կապիտալը: Փաստորեն, տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման արդի պայմաններում քաղաքական արդիականացումը և զարգացումը մարտահրավեր է, որին համահունչ պատասխանելը հասարակությունների, մասնավորապես կառավարող էլիտաների կարևորագույն առաքելությունն է:

Սկսած 1990-ական թվականներից՝ **բնաշխարհիկացումը (Indigenization)** ոչ արևմտյան քաղաքակրթություններում դարձել է մրցակցային ռազմավարական կառավարման օրակարգի գերակա բաղադրիչ:

⁴⁴ St' u Хантингтон С., Столкновение цивилизаций / С. Хантингтон; Пер. с англ. Т. Велимеева. Ю. Новикова., М: ООО «Издательство АСТ», 2007 с.105.

⁴⁵ **Բնաշխարհիկացում (անգլ. indigenization)**՝ որևէ բան ավելի ազգային դարձնելու գործողություն, որևէ ծառայության, գաղափարի ևն հարմարեցում տեղական մշակույթին, հատկապես կառավարչական համակարգում, գործունեության ոլորտում ավելի մեծ թվով տեղաբնիկների ներգրավմամբ (տես “Oxford English Dictionary” (www.oed.com.2016, էջ 132–136:), ինչպես նաև՝ “Merriam-Webster Dictionary” (https://www.merriam-webster.com/dictionary/indigenise)):

իսլամական հասարակություններում առանցքային գաղափարներն էին իսլամի վերածնունդը և վերաիսլամացումը, Հնդկաստանում՝ արևմտյան արժեքների նկատմամբ ընտրողական վերաբերմունքը և հինդուիստական արժեքների վերադարձը հանրային քաղաքականություն, Արևելյան Ասիայի պետություններում՝ կոնֆուցիականության քարոզումը, որն ուղեկցվում էր էլիտաների կողմից իրենց պետությունների հզորացման գաղափարի ակտիվ քննարկումներով: Բնաշխարհիկացման տրամաբանության առումով արժեքավոր են Լի Կուան Յուի (1923–2015) և Սոլունոն Բանդարանաիկեի (1899–1959) օրինակները. նրանք, ստանալով լավագույն արևմտյան կրթություն, իշխանության գալու ճանապարհին ամբողջությամբ բնաշխարհիկացան՝ փոխելով ինչպես հագուստները, այնպես էլ անունները և հայացքները բոլոր առանցքային արժեքների նկատմամբ:

Հատկանշական է, որ բնաշխարհիկացման գործընթացի ինստիտուցիոնալացման անհրաժեշտությունը՝ որպես հանրային կենսունակության ապահովման գործոն, միջազգային հարթակում կարևորվել է դեռևս 1971 թվականին ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերով դեպարտամենտի կողմից ներկայացված 5-րդ միջազգային զեկույցի շրջանակներում⁴⁶: Ներկայումս բնաշխարհիկացումը դիտարկվում է ոչ միայն սոցիալ-հոգեբանական, այլև ինստիտուցիոնալ տիրույթում՝ որպես եռամակարդակ գործընթաց: Դրանք են՝ 1) փոխանցում (transmission)՝ արևմտյան մոդելի գծային և մեխանիկական ներդրում զարգացող երկրներում, 2) բնաշխարհիկացում (Indigenization)՝ այս փուլն սկսվում է ներդրված մոդելի տեսական և գործնական կիրառման անհամապատասխանության հետևանքով առաջացած արձագանքով, 3) աութենտիֆիկացիա (Authentization)՝ «իրական համապատասխանեցման» փուլ, երբ հաշվի են առնվում նաև ներքնից վերև ստացվող ազդակները⁴⁷: Այս համատեքստում ուշագրավ է Իբրահիմ Ա. Ռազաբի աութենտիֆիկացիայի

⁴⁶ Training For Social Welfare: Fifth International Survey. New Approaches In Meeting Manpower Needs. United Nations, Department Of Economic And Social Affairs, New York, 1971. <https://files.eric.ed.gov/fulltext/ED067316.pdf>

⁴⁷ Mel Gray and John Coates, From 'Indigenization' to Cultural Relevance 2008. P.18.

(Authentization)՝ որպես «վերադարձ արմատներին ուղղություն փնտրելու նպատակով» մեկնումը⁴⁸:

Վերը շարադրվածից ակնհայտորեն երևում է, որ մրցակցային ռազմավարական կառավարմանը նպատակամղված քաղաքական արդիականացման համար պատասխանատու ընտրախավերը պետք է ազգային ինքնության պահպանման, ըստ արդյունքի կառավարման և անվտանգ ապագայի ապահովման նպատակով հաշվի առնեն այդ գործընթացի քաղաքակրթական չափումը: Միայն այդպես է հնարավոր կառուցել «ուժեղ» ազգ-պետություն և քաղաքացիական հասարակություն:

1.2. Ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացը՝ որպես բնականոն արդիականացման հրամայական

Ի սկզբանե վեկտորային (միայն ազատականացում) զարգացում ենթադրող ժողովրդավարական անցման գործընթացում ստեղծվել են քաղաքական վարչակարգերի և իշխանական կառույցների չափազանց լայն տարրապատկեր. որոշ երկրներում ավարտվել է ժողովրդավարական համախմբումը, ամրապնդվել են ժողովրդավարական ինստիտուտներն ու փորձառությունը, մյուսներում՝ այդպիսի ինստիտուտներն ու պրակտիկաները, զուգակցվելով ժողովրդավարական ընթացակարգերի հետ, օգտագործվում են որպես քողածածկույթ, որի հետևում թաքնված են փոխհամաձայնեցված և քրեականացված խմբիշխանական կառավարման նոր տարատեսակները: Այս երևույթը հանգամանալից վերլուծելով՝ ռուս քաղաքագետ Ա. Մելվիլը նշում է. «Տարբերություններն այնքան մեծ ու աննախադեպ են, որ ժամանակակից քաղաքագիտական մտքի առջև ծառանում է քաղաքական փոփոխությունների և քաղաքական զարգացման մասին ձևավորված պատկերացումների հայեցակարգային նորացման խնդիրը՝ հաշվի առնելով հետկոմունիստական կերպափոխումների

⁴⁸ Ibrahim A. Ragab, How Social Work Can Take Root In Developing Countries. SDI Vol 12 (3) spring 1990, P. 43. https://www.researchgate.net/publication/274705743_How_social_work_can_take_root_in_developing_countries

տարամետ բնույթը»⁴⁹: Փաստորեն, ժողովրդավարական անցման գործընթացում առաջացած **պատվիրակված, ոչ ազատական, ոչ լրիվ, արատավոր, ընտրական, ավտորիտար, ածականակերտ** ժողովրդավարությունները, ըստ Օ'Դոնելի, աշխարհի քաղաքական քարտեզի վրա ձևավորել են **«մոխրագույն գոտի»**⁵⁰: Հետխորհրդային տարածքում ժողովրդավարական անցման գործընթացում ստացված արդյունքներն ակնհայտորեն վկայում են, որ հենց **վեկտորայնությունը (միայն ազատականացում) հանգեցրեց** քաղաքական զարգացման ճգնաժամերի⁵¹:

Ընկալվելով որպես վեկտորային՝ գլոբալ քաղաքական արդիականացումը և զարգացումը մեկնաբանվում էին **ժողովրդավարական անցման փուլերի** հարացույցի տիրույթներում: Ըստ այդմ՝ բոլոր զարգացող երկրները պետք է ունենան անցման միասնական կերպ. **ավտորիտարիզմի քայքայում և փլուզում, վարչակարգի ազատականացում, ինստիտուցիոնալ ժողովրդավարացում, ոչ համախմբված ժողովրդավարության փուլ և, վերջապես, ժողովրդավարական համախմբում**: Ժողովրդավարության համախմբումը ենթադրում է այնպիսի պայմանների ստեղծում, որոնց դեպքում գործառնում են միայն ժողովրդավարական կառույցները: **Կարևորվում է նաև ժողովրդավարական գործընթացների և ինստիտուտների՝ որպես հանրային կյանքի կազմակերպման առավել ընդունելի մեխանիզմների ընկալումը հանրության կողմից**: Հենց այստեղ է անցումագիտության մեջ տարածված համախմբված ժողովրդավարության իմաստը, որը, փաստորեն, ընկալվում է որպես **the only game in the town (միակ խաղը քաղաքում)**:

Ժողովրդավարական համախմբումը՝ որպես քաղաքակրթական արժեքային համակարգի բնականոնությունը պահպանած քաղաքական արդիականացման մոդել, հետազոտողի առջև դնում է տեսամեթոդաբանական և քաղաքական կառավարման հարցերի մի ամբողջ շարք: Ե՞րբ է վերջանում բուն անցումը («ժողովրդավարության հաստատման» փուլը), և

⁴⁹ Мельвиль А.Ю., О траекториях посткоммунистических трансформаций.- Полис (Политические исследования), № 2, 2004, с. 64-75.

⁵⁰ Օ'Доннелл Г., Делегативная демократия. Journal of Democracy. 1994. Vol. 5, No. 1. P. 55. Пер. с англ. — Век XX и мир, 1994. . № 7-8., С. 186-198.

https://studme.org/56939/politologiya/delegativnaya_demokratiya_odonnell

⁵¹ Մարգարյան Մ. Մ., Ժողովրդավարացման երրորդ փուլ. անցումային հասարակությունների գծային զարգացման բնույթը, Լրաբեր Հասարակական գիտությունների, № 2, 2005, էջ 126-140:

սկսվում համախմբումը: Ինչպիսի՞ն է փոխկապվածության սահմանը, այսպես կոչված, **«բացասական»** համախմբման, այսինքն՝ ոչ համակարգային ուժերի կողմից սոցիալական և ազգային միջավայրի մարգինալացման, և **«դրական»** համախմբման, այսինքն՝ ժողովրդավարական պոլիտիայի⁵² կառույցների կայունացման ու ժողովրդավարական արժեքների զանգվածային տարածման միջև:

Ինչպիսի՞ ներքին և արտաքին գործոններ են ազդում ժողովրդավարական համախմբման վրա: Ինչպիսի՞ն պետք է լինի քաղաքական էլիտան՝ որպես քաղաքական արդիականացման ոչ միայն ազատական, այլև քաղաքակրթական ու ազգային չափման պատասխանատու՝ ժողովրդավարական անցման և անցումից համախմբման պայմաններում: Կարծում ենք, նմանօրինակ հարցերի ցանկը կարելի է շարունակել, սակայն շատ դեպքերում՝ առանց սպառնիչ և հիմնավոր պատասխանների:

Հետխորհրդային տարածքի **«նոր ժողովրդավարությունների»** առանձնահատկություններն ուսումնասիրող գրականության մեջ ժողովրդավարության համախմբումն ընկալվում է որպես յուրատեսակ «վերընթաց» գործընթաց **«նվազագույն»**՝ ընթացակարգային մակարդակից, երբ պաշտոնապես հաստատված են ժողովրդավարական ինստիտուտներն ու ընթացակարգերը, մինչև **«առավելագույն»**՝ կառուցվածքային և բազմագործոնային մակարդակ, որը ենթադրում է ժողովրդավարության հաստատում չափումների մի ողջ համալիրով՝ վարքաբանականից ու արժեքայինից մինչև սոցիալ-տնտեսականն ու միջազգայինը⁵³: Ընդունված է համարել, որ և՛ ժողովրդավարական համախմբման գործընթացը, և՛ դրա ելքը կախված են **ներածին և արտածին գործոնների ամբողջությունից: Առաջիններից են՝** «մինչավտորիտար» քաղաքական փորձի առկայությունը, փլուզվող կամ փլուզված ոչ ժողովրդավարական վարչակարգի տեսակն ու առանձնահատկությունները, ավտորիտարի փլուզման պայմաններն ու հանգամանքները, անցման

⁵² **Պոլիտիա (հուն. πολιτεία)** - հասկացությունն ունի հին հունական ծագում և արդի քաղաքական գիտության մեջ դիտարկվում է երեք մակարդակում՝ 1) հանրային համակեցություն, 2) քաղաքական կառավարման քաղաքակրթվածության այնպիսի աստիճան, որը ենթադրում է շահերի զուգամիտում, 3) ժողովրդավարական արժեքների հաստատության այնպիսի մակարդակ, որը նվազագույնի է հասցնում հասարակության տարբեր շերտերի միջև անհանդուրժողականության արտահայտումները: Այս հասկացությունը տվյալ աշխատությունում դիտարկված է եռամիասնության մեջ:

⁵³ McFaul M., The fourth wave of democracy and dictatorship Noncooperative Transitions in the Postcommunist World, World Politics 54, January 2002, P. 212 -244.

ընթացքում առանցքային քաղաքական դերակատարների ընտրած ռազմավարությունները և այլն: **Երկրորդ խմբին են դասվում՝** արտաքին միջավայրը, հիմնական միջազգային կառույցներում ու ինստիտուտներում ներգրավվածության աստիճանը, միջազգային, քաղաքական, տնտեսական և այլ աջակցության ծավալները և այլն: Միննույն ժամանակ որոշ հեղինակներ մատնանշում են ժողովրդավարական համախմբման այնպիսի կառուցվածքային նախադրյալների դերը, ինչպիսիք են քաղաքացիական և քաղաքական մշակույթի փոխհարաբերությունները, նաև քաղաքացիական հասարակության արդյունավետ գործառման մակարդակը, սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանը՝ չափավոր սղաճի և նվազող ունեցվածքային անհավասարության զուգակցմամբ, ինչպես նաև հանրային հասարակական պաշարների (տնտեսական, քաղաքական, գաղափարախոսական, մտավոր) շատ թե քիչ համաչափ բաշխումը⁵⁴:

Վերոշարադրյալից ակնհայտ է, որ ժողովրդավարական համախմբման պայմանների մասին առաջարկվող **«անցում-համախմբում»** մոդելը հիմնված է քաղաքական արդիականացման և զարգացման փուլային պատկերացումների վրա: Մասնագիտական շրջանակներում կարծիք է ձևավորված, որ ժողովրդավարությունը շարժվում է տրված ուղղությամբ՝ կարծես վերաբժնորելով ինքն իրեն՝ մի փուլից մյուսին անցնելով: Ենթադրվում է, որ անցումային փուլում գտնվող նոր ժողովրդավարություններն ուսումնասիրելիս մենք պետք է միաժամանակ դիտարկենք սոցիետալ մեկնակետը, ներկա իրավիճակը և ժողովրդավարացման գործընթացի ուղղությունը՝ զուգահեռ իրականացնելով նաև համախմբման քաղաքականություն:

Մեթոդաբանական տեսանկյունից, որպես աստիճանաբար զարգացող հատվածներից և մասերից **«կառուցվող»** ժողովրդավարության հասունացման ու ձևավորման «զարգացումային» մեկնաբանումը որոշակի խաղային իմաստ ունի: Սակայն անհասկանալի է մնում՝ արդյոք ժողովրդավարական զարգացումը միշտ կընթանա՞ մի ուղղությամբ, ինչպիսի՞ն են նրա ժամանակային, տարածական, քաղաքակրթական և այլ

⁵⁴ Даль Р., Демократия и ее критики / пер. С англ. ; под ред. М.В. Ильина. М. : «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2003, Дзоло Д., Демократия и сложность: реалистический подход М.: Изд. дом Гос. ун-та — Высшей школы экономики, 2010. с. 97-110.

սահմաններն ու պաշարները, պարտադի՞ր են արդյոք զարգացման դանդաղեցումները, բնաշրջումը **«ոչ ժողովրդավարությունների»** նոր ձևերին և նույնիսկ **«հետնահանջը»** դեպի ավտորիտարիզմ պե՞տք է վաղ թե ուշ լրացվեն ժողովրդավարական անցման նոր փուլով, թե՞ սխալներից հրաժարվելով՝ հարկ է նպատակադրված համախմբվել:

Մեր կարծիքով, նման հարցադրումների պատճառն այն է, որ անցումագետները փորձում են պարզեցված ձևով մեկնաբանել «անցումի հարացույցը»: Մինչդեռ, նկատի ունենալով քաղաքական զարգացման ճգնաժամերի առկայությունն անցումային հասարակություններում, մեթոդաբանական առումով ճիշտ չէ **«ժողովրդավարացման «երրորդ ալիքի»** դրոշի ներքո սկսված քաղաքական կերպափոխումների ողջ բովանդակությունը հանգեցնել «անցման հարացույցին»: Մելվիլը նշում է. «Անցումագիտությունը՝ որպես համեմատական քաղաքագիտության ենթաճյուղ, որն ուսումնասիրում է այժմեականության բազմազան և տարամետ քաղաքական կերպափոխումների օրինաչափությունները, նպատակ չի հետապնդում ժողովրդավարացման համընդունելի ու համապարփակ մատրիցա կառուցել: Այդ գիտաճյուղի համար առանցքային՝ **«անցում»** հասկացությունը միավորում է նախկին՝ ոչ ժողովրդավարական կացությունից դեպի այլ՝ ցանկացած ձևի և բովանդակության անցման գործընթացները»⁵⁵:

Համաձայնելով Մելվիլի հետ՝ նշենք, որ անցումագիտության զարգացման վերջին երեսունից ավելի տարիներն **«անցման»** վերջնական նպատակ է հռչակված ժողովրդավարական կառուցվածքի այս կամ այն տարատեսակը, մինչդեռ իրականում ակնկալվող արդյունքը մնում է անհասանելի: Այնուհանդերձ, անցումագիտության նպատակաբանության ակնկալվող արդյունքների հակասականությունը, մեր կարծիքով, ամենևին էլ ժամանակակից քաղաքական կերպափոխությունների համեմատական հետազոտությունների **«մերկ մերժում»** չի նշանակում: **«Անցման հարացույցի վերջը»** նույնական չէ **«անցումագիտության վերջի հետ»**: Իսկապես, կարելի է անցումագիտության առարկայական ոլորտը նեղացնել մինչև գծային «անցումագիտական մատրիցա»: Բայց դա կնշանակի անտեսել անցումագիտության մեջ առկա որոշ սխալ դրույթների հաղթահարման

⁵⁵ Мельвиль А. Ю., О траекториях посткоммунистических трансформаций. – Полис. Политические исследования, 2004. № 2. с. 67.

հնարավորությունը, վարկածների և բացատրական մոդելների ինքնագարգացման միտումները՝ հաշվի չառնելով անցումային հասարակությունների կերպավորման գործընթացի առանձնահատկությունները: Ավելին, ժողովրդավարացման գործընթացների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաջողակ երկրները (հատկապես հարավեվրոպական և լատինաամերիկյան) ենթարկվել են քաղաքական արդիականացման և զարգացման որոշակի ներքին տրամաբանության: Այսինքն՝ «հաջողված պետությունները» ենթադրում են ոչ թե հակամարտող քաղաքական ուժերից (ազատական, պահպանողական էլիտաներ) մեկի հաղթանակ, այլ յուրօրինակ **սպակտ** (օր.՝ Մոնկլոայի պակտը Իսպանիայում⁵⁶) կամ **պակտերի շարքի ձևակերպում**, որոնք սահմանում են ժողովրդավարացման հետագա փուլերի «խաղի կանոնները» և որոշակի երաշխիքներ տրամադրում «պարտվածներին»: Պակտի լեգիտիմացումը և դրա հետագա զարգացումը թույլ են տալիս անցնել ժողովրդավարացման առանցքային պահերից մեկին՝ նոր իշխանության ազատ և մրցակցային (այսպես կոչված՝ **«սահմանադիր»**) ընտրությունների անցկացմանը: Հաղթանակն այդ ընտրություններում, որպես կանոն, բաժին է ընկնում ոչ թե ժողովրդավարական բարեփոխումներն սկսող կենտրոնամետ քաղաքական գործիչներին, այլ արմատական ընդդիմության ներկայացուցիչներին:

Բայց վերջիններիս «հաղթանակը» կարճատև է լինում, հատկապես երբ նոր, ժողովրդականորեն ընտրված իշխանությունն ստիպված է լինում արմատական տնտեսական բարեփոխումներ իրականացնել: Այդ բարեփոխումների արդյունքում, զանգվածային դժգոհության պայմաններում, հաջորդ ընտրություններին **(«հիասթափության ընտրություններ»)**

⁵⁶ **Մոնկլոայի պակտ** – Ֆրանկոյի մահից և բռնապետական վարչակարգի անկումից հետո պահպանողականների և զինվորականների դիրքերը դեռ բավական ամուր էին: Սակայն իր նշանակումից երեք ամիս անց վարչապետ Ա. Սուարեսը, որը մինչ այդ ծայրահեղ հետադիմականի համբավ ուներ, քաղաքական բարեփոխման մասին օրենք անցկացրեց: Օրինականացվեցին սոցիալիստական և կոմունիստական կուսակցությունները, արհմիությունները, գործադուլի իրավունք մտցվեց: 1977թ. հունիսին անցկացվեցին ազատ ընտրություններ: Սուարեսի «Ժողովրդավարական կենտրոնի միություն» կուսակցությունը բոլոր կուսակցություններին առաջարկեց ստորագրել համատեղ գործողությունների մասին համաձայնագիր՝ Մոնկլոայի հռչակավոր պակտը, որը սոցիալական երկխոսության հիման վրա առկա տնտեսական հիմնախնդիրների լուծման օրինակ դառնալով՝ ի սկզբանե նպաստեց իսպանական հասարակության համախմբմանը:

հանրության գերակշիռ մասը հայտնվում է արդեն ոչ թե արմատականների, այլ կենտրոնամետների՝ հին համակարգից դուրս եկածների կողմը: Ժողովրդավարական ընթացակարգերի ինստիտուցիոնալացումը և քաղաքական իշխանության օրինական ու լեգիտիմ հերթափոխումը անհրաժեշտ հիմքեր են ստեղծում **Ժողովրդավարության** հնարավոր (բայց ոչ պարտադիր) **համախմբման** համար:

Բնականաբար, հարց է առաջանում՝ որքանո՞վ էր արդյունավետ վերը նկարագրված մոդելի կիրառումը հետխորհրդային տարածքի կերպափոխությունների համար: Մեր կարծիքով, այս հարցի պատասխանով է մեծապես պայմանավորված հետխորհրդային տարածքներում ժողովրդավարացման գործընթացներում տեղի ունեցող կերպափոխությունների համեմատական հետազոտությունների հետագա ուղղությունը:

Ինչպես ցույց է տալիս Մ. Մաքֆոլի կատարած վերլուծությունը, հետխորհրդային կերպափոխումների դեպքում չեն գործում անցումագիտական պայմանական մոդելի առնվազն երկու հիմնական դրույթները՝ 1) պատկերացումն այն մասին, որ պահպանողական և բարեփոխիչ ուժերի հավասարակշռության հետևանքով առաջացող քաղաքական փակուղուց ելք է հաջող ժողովրդավարացման համար հիմքեր ստեղծող պակտը, 2) վերնախավերի փոխզիջման արդյունքում «վերնից» ժողովրդավարության պարտադրման գաղափարը: Մաքֆոլը նշում է. «Հետխորհրդային երկրների համար առավել բնորոշ է ոչ թե պակտի, այլ **հակասության ուժային լուծման** տարբերակը, ընդ որում, առաջացող վարչակարգի տեսակը մեծապես որոշվում է նրանով, թե որտեղից է գալիս քաղաքական վերափոխումների ազդակը: Եթե քաղաքական հակամարտությունում գերակշռում են **«ներքևից»** աջակցություն սպասող և ավանդական վերնախավից **«դուրս»** գործող արմատական բարեփոխիչները, ապա հեռանկարներ են բացվում իրական ժողովրդավարացման համար: Եթե ուժը **հին վարչակարգի «դիմակավորված»** ներկայացուցիչների կողմն է, որոնք «վերնից» խաղի նոր կանոններ են փաթաթում, ապա արդյունքում ավտորիտար վարչակարգի նոր վարկած է հաստատվում: Վերջապես, եթե հաղթողը որոշվում է միայն ուժերի բավական երկարատև հավասարակշռությունից հետո, առաջանում է **«խառնածին»** վարչակարգի որևէ տեսակ («կիսաժողովրդավարական-կիսադիկտատորական»)»⁵⁷: Փաստորեն, մենք ականատես ենք ոչ միայն իրենց էությամբ

⁵⁷ McFaul M., The fourth wave of democracy and dictatorship Noncooperative Transitions in the

տարբեր գործընթացների, այլև քաղաքական կերպափոխությունների արդյունքների լայն տարապատկերի՝ ազատական ժողովրդավարությունների համախմբումից մինչև նոր ավտորիտարիզմի լիովին կայացած տարատեսակները միջանկյալ տարբերակներով՝ փոխհամաձայնեցված խմբիշխանություններ՝ լճացած «խառնածին» վիճակներ, մարզինալ արդիականացում, մանիպուլյատիվ ժողովրդավարություններ: Այս ամենն այսօր մեծապես կարևորվում է ժամանակակից անցումագիտության կողմից՝ հիմք դառնալով մի նոր գիտաճյուղի՝ համախմբագիտության (կոնսոլիդոլոգիա) առաջացման համար⁵⁸: Ենթադրվում է, որ ժողովրդավարական արժեքները պետք է համախմբեն մարդկությանը, սակայն չի բացառվում դեպի համախմբված ժողովրդավարություն անցնելու յուրաքանչյուր երկրի առանձնահատկությունը՝ հաշվի առնելով ազգային արժեքների քաղաքական էությունը և քաղաքակրթական առանձնահատկությունները:

Այս գիտաճյուղը ձևավորել է նոր հարացույց, որը թույլ է տալիս ժամանակակից աշխարհում «ժողովրդավարացման» նշանի տակ ընթացող քաղաքական կերպափոխությունների որոշակի հետազոտելի համեմատական վերլուծություն կատարել: Մեթոդաբանական տեսանկյունից ավտորիտարիզմից դեպի կառավարման այլ (ավելի ժողովրդավարական կամ հակառակը՝ ավտոկրատական) ձևեր շարժվելու տարբերակների համեմատությունը ամենևին էլ չի ենթադրում քաղաքական փոփոխությունների համապարփակ և համակիրառելի հարացույցի կառուցում:

Հանրագումարենք: Անցումագիտության և, մասնավորապես, համախմբագիտության իմացական և ճանաչողական ներուժը հենց իրական քաղաքական փոփոխությունների բազմազանությունում ընդհանուրի և հատուկի հայտնաբերման մեջ է: Նման մոտեցումը թույլ է տալիս բացահայտել մասնավորապես անցման արդյունքում ի հայտ եկած ժողովրդավարության որակը: Այլ խոսքով՝ ժամանակակից քաղաքական կերպափոխությունները որպես ավտորիտար վարչակարգից համախմբված ժողովրդավարություն մեկնաբանող «անցումագիտական հարացույցի» հիմնարար տեսամեթոդաբանական դրույթը լուրջ վերաիմաստավորում է պահանջում՝ հոգուտ

Postcommunist World, World Politics 54 (January 2002), P. 212 -244.

⁵⁸ Шмиттер Ф., Процесс демократического транзита и консолидации демократии // Полис. Политические исследования, 1999, № 3, с. 30-33.

համախմբագիտության հարացույցի: Այս համատեքստում նշենք, որ անցումային հասարակություններում կերպափոխման գործընթացում հաստատված «ածականներով» ժողովրդավարությունների առկայությունը վկայում է, որ քաղաքական համեմատականության տեսամեթոդաբանական զինանոցում դեռևս հստակ մշակված չէ **անցման հարացույցի համակարգը**: Կարծում ենք, որ այն պետք է **բազմաչափ չափորոշիչներ** ունենա, որոնց հայեցակարգումը թույլ կտա ուսումնասիրել անցումային հասարակությունների կերպափոխման գործընթացի տարամիտությունը: Այդ առումով հայեցակարգային նշանակություն պետք է ունենան հետևյալ չափումները՝

- արտաքին միջավայրի դերը ներքին փոփոխությունների վրա ներազդելու գործում,
- քաղաքական փոփոխությունների մեկնարկման գործընթացում հասարակության կենսաձևը, կենսամակարդակը, կյանքի որակը և, իհարկե, գիտակցությունը,
- իշխանության ոչ ժողովրդավարական կառույցների քայքայման և փլուզման գործընթացը,
- քաղաքական և տնտեսական էլիտաների հավաքագրման և ընտրասերման սկզբունքները,
- նոր ժողովրդավարական ինստիտուտների կառուցման, հաստատման, բնականոն արդիականացման սկզբունքները,
- քաղաքական դերակատարների ռազմավարությունն ու մարտավարությունը (նրանց անհատական-հոգեբանական առանձնահատկությունները, ընտրյալությանը հակված լինելու հատկանիշները, ազգային մտահայեցողությունը հաշվի առնելով):

Բնականաբար, նշված չափումներն ամբողջական չեն և կարող են (ու պետք է) լրացվեն այնպես, որ համաձայն «անցում-համախմբում» հարացույցի շրջանակներում մշակված որոշ կանխադրույթների՝ վարչակարգի փոփոխությունը դիտարկվի որպես առանձին առարկայական ոլորտ: Այսինքն՝ համախմբում ենթադրող վարչակարգի փոփոխությունն այսօր մեկնաբանվում է որպես «նոր ժողովրդավարական» երկրների քաղաքական զարգացման համեմատաբար ինքնուրույն փուլ: Այնուամենայնիվ, գոյություն ունեն կառուցվածքային պայմաններ, որոնք օգնում են հասկանալու, թե ինչու է այս կամ այն երկրում առաջացել կայուն և բարձրորակ ժողովրդավարություն, որն աչքի է ընկնում **հասարակական**

համակեցության կենսունակությամբ և քաղաքական կարգի կայունությամբ:

Այսպիսով, ժողովրդավարական անցումը եզակի ուղիով զարգացող գործընթաց չէ, այլ այլընտրանքային զարգացման ուղիների մի համակարգ, որի օգնությամբ էլ անցմանը զուգահեռ ուրվագծվում է ժողովրդավարության համախմբման ծրագիրը: Այս համատեքստում էլ կարող ենք պնդել, որ գործընթացն ուսումնասիրելիս պետք է հաշվի առնել երկու սցենար. մի կողմից՝ քաղաքական էլիտայի և էլիտայի այլ տիպերի ու զանգվածների միջև հարաբերությունների ռազմավարության մշակում, մյուս կողմից՝ կառավարող խմբերի և իրենց ընդդիմադիրների միջև գոյություն ունեցող ուժերի հասակեցում: Դիտարկվող սցենարներում եթե քաղաքական ուժերը դեմ են «Հանուն հանրային շահի» ազատական քաղաքականությանը, ապա **սեղի ունեցող փոփոխությունը** հազվադեպ է հանգեցնում ժողովրդական համախմբման: Ավելին, հետխորհրդային երկրներում այն հիմնականում ուղեկցվեց քաղաքական զարգացման ճգնաժամերով, ուշացած հատվածային քաղաքական սոցիալականությամբ, մարզինալությամբ, ազգային ինքնության բնականոն արդիականացման և ժողովրդավարության որակի անտեսմամբ:

Հետանցումային իրողությունների իրատես իմաստավորման նպատակով Ֆ. Շմիտերը մեծ ուշադրություն է դարձնում «ժողովրդավարության որակի» ուսումնասիրմանը, որը սերտորեն կապված է «համախմբում» հասկացության հետ⁵⁹: Հետխորհրդային երկրների փորձը հանրագումարելով՝ նա խոստովանում է, որ այս հասկացությունն օգտագործվում է այնքան տարբեր իմաստներով և այնպիսի տարբեր խնդիրների լուծման ժամանակ, որ մասամբ կորցրել է (եթե, իհարկե, երբևէ ունեցել է) իր հայեցակարգային նշանակության մեծ մասը: Սակայն ակնհայտ է, որ ժողովրդավարական համախմբումը ժողովրդավարական վարչակարգի կայունության երաշխիք է: Այսուհանդերձ, այս պարագայում գերակա է այն հարցը, **թե ինչու որոշ ժողովրդավարություններ ավելի կայուն են (կամ ավելի երկար են պահպանվում), քան մյուսները:**

Հանրագումարելով հետկոմունիստական երկրների փորձը՝ կարող ենք եզրակացնել, որ «անցում-համախմբում» հարացույցի **միաժամանակյա**

⁵⁹ Шмиттер Ф., Процесс демократического транзита и консолидации демократии // Полис. Политические исследования, 1999, № 3, с. 30-33.

իրականացման կիրառման համար հարկավոր է հասարակական-քաղաքական այլ իրողությունները օբյեկտիվ գնահատող «նոր ժողովրդավարների» նոր սերունդ: Սակայն գործընթացի բազմաչափությունը թույլ է տալիս ասել, որ անցման պայմաններում մի դեպքում **ժողովրդավարության ապակայունացման պատճառը** քաղաքական կուսակցությունների կամ քաղաքացիական հասարակության որակն է, մյուս դեպքում որոշիչ են նոր ազատական տնտեսական բարեփոխումները, որոնց հետևողական իրականացումը կարող է դրական (կամ բացասական) ազդեցություն ունենալ ժողովրդավարության կայունության վրա: Եվ վերջապես՝ ժողովրդավարությունը կարող է անհետանալ, եթե անհավասարությունը չափազանց մեծ է, իսկ ժողովրդավարության պահպանման հիմնախնդրի լուծումը փոխհամաձայնեցված ստանձնել է խմբիշխանություն իրականացնող կառավարող վերնախավը: Այս **բազմազանությունն անընդհատ նոր անորոշություն է ստեղծում ժողովրդավարական անցման մոդելը համակարգային ամբողջություն դիտարկելու առումով:** Մեր կարծիքով, եթե նոր ժողովրդավարությունների իրատես գնահատման նպատակով հիմնվենք տնտեսական զարգացման մակարդակի՝ որպես ժողովրդավարության կայունության հիմնական բանաձևի վրա, ապա հնարավորություն ենք ստանում դիտարկելու այնպիսի ցուցանիշ, ինչպիսին **«ժողովրդավարության որակն»** է: Խ. Լինցը և Ա. Ստեփանը, բնութագրելով հետխորհրդային տարածաշրջանի անցումային փուլի խնդիրները, նշում են. «...Ե՛վ տնտեսական, և՛ գործնական մակարդակում կայացած ժողովրդավարությունները պետք է հարգեն անհատի իրավունքները: Որքան քաղաքացիության իրավունքների հասանելիությունը ներառական ու հավասար է, այնքան ժողովրդավարության որակն ավելի բարձր է: ...Կոլեկտիվ իրավունքները, որոնք, մեր կարծիքով, պետք է խելամիտ կերպով կիրառվեն որոշ բազմազգ և բազմամշակութային հասարակարգերում, երբեք չպետք է ոտնահարեն անհատի իրավունքները կամ ստեղծեն երկրորդ կարգի քաղաքացիների կատեգորիա»⁶⁰:

Այնուհանդերձ, ժողովրդավարական անցումների տեսաբանները լրջորեն չեն ուսումնասիրել «ժողովրդավարության որակի» հիմնահարցը: Գուցե այն պատճառով, որ համաձայն են Մ. Մաքֆուլի կարծիքին, թե

⁶⁰ Juan J. Linz and Alfred Stepan, Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, South America, and Post-Communist Europe, JHU Press, 1996. p. 506.

հետկոմունիստական տարածքներում անցման գործընթացում պետք է գերակայի **«հեղափոխությունը ներքևից»⁶¹**: Մինչդեռ հետկոմունիստական երկրները պետք է ժողովրդավարության համախմբման փուլ անցնեն, որից հետո միայն կարելի է դատողություններ անել նման արդյունքների հանգեցրած այն պայմանների մասին, որոնք ձևավորել են ժողովրդավարությունների առկա որակը: Ակնհայտ է, որ հետկոմունիստական երկրները հասել են համախմբման որոշակի մակարդակի, ուստի կարելի է գնահատել այն, ինչը ստացվել է վերջնական արդյունքում, և ոչ թե, ինչպես կարծում է Մ. Մաքֆուլը, պլանավորել նոր անցում՝ «հեղափոխություն ներքևից»:

Փաստ է, որ հետկոմունիստական երկրներում վարչակարգային փոփոխություններն ավարտվել են, և ո՛չ հետ գնալու, ո՛չ էլ երկրորդ հեղափոխական անցման անհրաժեշտություն չկա: Իսկ հետագա ինստիտուցիոնալ և վարքաբանական տեղաշարժերը, թվում է, կրելու են արդեն «ներհամակարգային» բնույթ: Այս մոտեցման **օգնությամբ հետկոմունիստական տարածքներում անհրաժեշտ է հետամուտ լինել «ժողովրդավարության որակի» ներդրմանը, որը, մեր համոզմամբ, հնարավոր է դիտարկել որպես ժողովրդավարացման նոր ալիք**: Մա էլ հետկոմունիստական երկրներին հնարավորություն կտա դուրս գալու Ս. Հանթինգթոնի ժողովրդավարացման «երրորդ ալիքի» շրջանակներում ձևավորված ժողովրդավարական անցման **մեթոդաբանական, խորհրդանշանային, քաղաքակրթական և վարքաբանական** սարդոստայնից: Ակնհայտ է, որ «նոր ժողովրդավարություններն» անհրաժեշտ է գնահատել եզակի չափանիշներով, ընդ որում, դրանք պետք է բխեն «իրական, ձեռքբերովի» և ոչ թե «իդեալական» նորմերից, որոնք իրականացնելու համար ամենագարգացած ժողովրդավար երկրներում անգամ դարեր են անհրաժեշտ եղել: Այլ կերպ ասած՝ ժողովրդավարական անցման պայմաններում հավասար իրավունքներով օժտված քաղաքացիները կարող են տիրապետել ոչ հավասար ռեսուրսների կամ իշխանություն ներթափանցելու հնարավորության. ոչ միշտ է հաջողվում երկրի ամբողջ տարածքում և սոցիալական ենթակառուցվածքների բոլոր մակարդակներում ապահովել կամ լիովին պահպանել սահմանադրական երաշխիքները: Եկամուտների, կյանքի որակի և մակարդակների տարբերությունները կարող են լինել այնքան նշանակալի, որ երկրի միջին

⁶¹McFaul M., Transitions from Post Communism, Journal of Democracy, vol.16, no.3 July, 2005, pp.5-19.

ցուցանիշները կարող են չարտացոլել իրերի իրական վիճակը:

Քաղաքական այն «բարիքների» տնօրինումը, որը քաղաքացուն էլիտա «մուտք գործելու» հնարավորություն է ընձեռում, կարող է լինել **անձնական, ընտանեկան կամ կլանային կապերի արդյունք**: Քանի որ, անդամագրվելով քաղաքական շարժումներին և կուսակցություններին, քաղաքական նոր իրողություններում հայտնված ոչ բոլոր քաղաքացիներն են գիտակցված մասնակցություն ունենում քաղաքական գործընթացներին: Բնականաբար, նոր հարց է առաջանում. այս ամենը ենթադրո՞ւմ է ժողովրդավարացման նոր ալիք, թե ոչ: Այս հարցին Մ. Մաքֆոլը պատասխանում է իր կողմից առաջադրված «ժողովրդավարացման չորրորդ ալիք» հասկացության համատեքստում: Մ. Մաքֆոլի կողմից «բացահայտված» ժողովրդավարացման նոր՝ «չորրորդ ալիքի» մասին խոսում են նաև Տ. Լ. Կարլը և Ֆ. Շմիտերը: Ակնհայտ է, որ Մ. Մաքֆոլը, հենվելով Ս. Հանթինգթոնի «երրորդ ալիքի» վրա, նոր իմաստ է տալիս ալիքների փոխհարաբերություններին՝ պատեցնելով և արագացնելով ժամանակը: Հետկոմունիստական անցումները որպես **«ժողովրդավարացման հատուկ ալիք»** դիտարկելով՝ Մ. Մաքֆոլը պնդում է, որ այս անցումը հեղափոխական բնույթ ունի, երբ Եվրոպայի հարավում և Լատինական Ամերիկայում, դրանք իբր, բնականոն զարգացող էին: Հետկոմունիստական երկրներում իրականացված կերպափոխումների նման ընդհանրացումը, Հարավային Եվրոպայի և Լատինական Ամերիկայի վարչակարգային փոփոխություններին դրանց հակադրումը և՛ տեսական, և՛ փորձնական առումով մեզ անընդունելի են թվում: Եթե քննարկվող տարածաշրջանում իսկապես տեղի են ունեցել հեղափոխություններ, ապա դրանք ավելի շատ եղել են հեղափոխություններ «վերնից» կամ «դրսից», քան «ներքևից»: Մեր այս եզրակացությունը լիովին ներառվում է ժողովրդավարական անցման ընդհանուր մոդելի մեջ: Ժամանակին Տ. Լ. Կարլը և Ֆ. Շմիտերը, Օ'Դոնելի հետ համատեղ համեմատելով ժողովրդավարական անցման մոդելը, եկան այն եզրակացության, որ լատինաամերիկյան և հարավեվրոպական «չընդունված» անցումների սկզբունքներից մեկը բուրժուազիայի սեփականության իրավունքի անվիճարկելիությունն է: Իսկ ինչ վերաբերում է հետկոմունիստական երկրներին, ապա այստեղ, որոշակի բացառություններով, գործեց մասնավոր սեփականության նկատմամբ **պարտոկրատիկ-նոմենկլատուրային** էլիտայի ոտնձգության անվիճարկելիության սկզբունքը:

Վերոնշյալով պայմանավորված՝ կարելի է առաջ քաշել նոր վարկած, որն ավելի է հակադրվում արմատավորված պատկերացումներին: Ինչպես արդեն նշվել է, «արևելաեվրոպական բացառիկության» հիմնական փաստարկը թեզն է այն մասին, թե, իբր, հետկոմունիստական երկրներում ավելի դժվար է փոխել վարչակարգը: Իր հերթին այս թեզը կառուցվում է միաժամանակյա ձևափոխումների կանխադրույթի վրա (*simultaneity*): Ընդունված է, որ «եռակի», «քառաչափ» կամ «բազմակի» անցում կերպափոխման ժամանակ ավելի դժվար է հասնել կայուն արդյունքի, մանավանդ՝ ժողովրդավարական: Իսկ եթե կերպափոխությունների միաժամանակությունը դիտարկենք ոչ թե որպես թերություն, այլ առավելություն, ապա խնդիրների զուգահեռ լուծումը, որ կապված է տնտեսավարման ազատ շուկայական համակարգին անցնելու, ժողովրդավարական կարգերի հաստատման և նոր միջազգային կարգավիճակի ձեռքբերման հետ, առաջացնում է հնարավորությունների առավել լայն շրջանակ, քան սովորական գծային (միայն ազատականացում) անցումը: Հակամարտող կողմերի (ինչպես կառավարող էլիտայի, այնպես էլ ընդդիմության) միջև հեշտանում է բարիքների հնարավոր բաշխման հետ կապված սակարկությունը:

Այս առումով անհրաժեշտ ենք համարում «բազմաչափ» անցումները, որոնց դեպքում պահանջվում է միաժամանակ լուծել **և՛ սեփականության լեզիտիմության, և՛ ազգային ինքնության արդիականացման, և՛ քաղաքական էլիտայի բաց հավաքագրման, և՛ համագործակցության մշակույթի, և՛ սոցիալական երկխոսության, և՛ քաղաքական դիսկուրսի հիմնախնդիրները:**

Ամփոփենք: Դատելով ստացված արդյունքներից՝ կարող ենք փաստել, որ հետխորհրդային հանրապետություններում հաստատվել է մենիշխանության մի յուրահատուկ տեսակ, տնտեսական մի համակարգ, որն ունի փոխհամաձայնեցված օլիգարխիկ բնույթ: Բայց, միաժամանակ, «նոր ժողովրդավարների» նոր սերունդները պարտավոր են պայքարել քաղաքական զարգացման ճգնաժամերի դեմ՝ ժողովրդավարական քաղաքական համակարգի բնականոն արդիականացման ակնկալիքով: Հենց այս ամենն էլ նկատի ունենալով՝ պնդում ենք, որ, չնայած ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացներում գտնվող երկրների միջև առկա տարբերություններին, անհրաժեշտ է վերլուծել աշխարհի տարբեր տարածաշրջաններում քաղաքական արդիականացման

Ժամանակ կուտակված ողջ փորձը և ձևավորված օրինաչափությունների օգնությամբ համակարգել նրանց անցած ուղին՝ հանուն ժողովրդավարության որակի:

Այսպիսով՝ քաղաքական արդիականացումը քաղաքականության դերակատարների, նոր արժեքներ կրողների ու արտացոլողների և իշխանության հաստատությունների միջև քաղաքական փոխազդեցությունների մի ընդարձակ ու բարդ խճանկար է: Նրանք գործում են ըստ այն դերերի և գործառույթների, որոնք թելադրում են հայկական մշակութաքաղաքակրթական արժեքային համակարգը, ավանդույթները, կրոնադավանական միջավայրը, ազգի մտահայեցողությունը, պատմական զարգացման առանձնահատկությունները, հանրային ու ազգային շահերը և այլն: Այդ է պատճառը, որ ՀՀ-ում քաղաքական արդիականացմանը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները:

Առաջին. Նրա մասնակիցների միջև նպատակների ու քաղաքական գործողությունների քննարկումների անբավարարությունը: Քաղաքական արդիականացման բախումնայնության պատճառներից մեկն էլ այն է, որ ձևավորվող քաղաքական ուժերը տարբեր կերպ են ընկալում ժողովրդավարության արժեքները, քանի որ բարեփոխումներում անձնական (մեկուսախմբային) շահերը գերակայում են հանրային շահերի նկատմամբ:

Երկրորդ. Քաղաքացիական վերահսկողության համակարգի անբավարար զարգացածությունը, որի պատճառը քաղաքացիական հասարակության գերազանցապես ձևական հաստատութենական և ոչ գործառութային կայացումն է:

Երրորդ. Ինստիտուցիոնալ կարգի ու քաղաքական դերերի որոշակի չափով համատեղվածությունն ու եզրահանգված փոխակերպումը: Քաղաքական կյանքի մասնակիցների բազմազանությունը թվացյալ է, քանի որ իրական դերն ու քաղաքական գործառույթները բավական սահմանափակ են՝ պայմանավորված հետապնդած նպատակներով: Որպես հաստատում նշենք, որ քաղաքական կուսակցությունները, որոնց թիվը ութսունից ավելի է, իրենց հնարավորություններով պայմանականորեն են արտահայտում քաղաքացիական հասարակության շահերը: Արտախորհրդարանական կուսակցությունները ներկայանում են ոչ այնքան որպես քաղաքացիական հասարակության հետ իշխանության կապն իրականացնող հաստատություններ, որքան քաղաքական գործչի շուրջ խմբված համախոհների (և ոչ միայն համախոհների) միավորումներ:

Չորրորդ. Քաղաքական արդիականացման դերակատարների շրջանում առկա «սպասումների հիասթափությունը» ժողովրդավարների «առաջին սերնդի» կատարած վաուչերային մասնավորեցմանը հաջորդած աղքատության, կոռուպցիայի դրսևորումների և արդարության պակասի, նաև հաղորդակցության համակարգի ցանցային մանիպուլյացիաների հետևանք է:

Հինգերորդ. Քաղաքական արդիականացման հիմքում դրված հեղափոխականությունը իր տարաբնույթ դրսևորումներով ներառում է սոցիալական, քաղաքական և իշխանական հարաբերություններում շահեկանորեն դիրքավորվելու հիմնավորված և անհիմն նկրտումներ. դրանով իսկ քաղաքական մասնակիցների գործընթացները դառնում են անորոշ և անկանխատեսելի:

Վեցերորդ. Քաղաքական զարգացման (բաշխում, շարժունակություն, մասնակցություն, ինքնություն, օրինականություն) ճգնաժամերի հաղթահարման ձգձգում, ինչի հետևանքով կոնտրելիտան հանդես է գալիս ոչ թե որպես քաղաքական ընդդիմություն, այլ հեղափոխական ուժ: Այդ պատճառով կառավարող էլիտայի և կոնտրելիտայի միջև ծավալված բանավեճը տեղի է ունենում ոչ թե ռացիոնալ, այլ զգացմունքային և խորհրդանշական հիմունքով:

Նշված առանձնահատկություններից ակնհայտ է դառնում, որ Հայաստանում քաղաքական արդիականացման գործընթացում հայ հասարակությունը բխվել է «վազող արդիականացման» հավերժական խնդրին: Սա արդիականացման մի այնպիսի երևույթ է, որն արթնացնում է կարծես թե վաղուց մոռացված, սակայն իրականում խոր արմատավորված և ընդամենը «նիրհող» ավանդական արժեքային շերտերը ինչպես գիտակցականի ոլորտում, այնպես էլ որոշակի սոցիալ-քաղաքական «կենցաղի» բնագավառում (տեղային հեղինակություններ, էթնիկական, կլանային ու խնամիական սահմանակարգերի վերարտադրում և հզորացում, բնակչության ինտեգրման համընդհանուր հոգևոր և ինստիտուցիոնալ հիմքերի քայքայվածություն): Ընդ որում, ակնհայտ է, որ հասարակության արդիականացումը ներքուստ աններդաշնակ է և կրում է բազում կառուցվածքային ճեղքվածքներ, ինչը հանգեցնում է «փոխհամաձայնեցված ձևական ժողովրդավարության» հաստատման:

Այստեղից էլ ծագում է քաղաքական արդիականացման հոգեբանական և բարոյական իրավահաջորդության հիմնախնդիրը, որն ընկալվում է որպես

«օտարերկրյա կամ համընդհանրացնող ազդեցություն»⁶²: Այս իմաստով անհրաժեշտ է կարևորել նաև հայ հասարակության վրա տեղեկատվական հեղափոխության հակասական ազդեցությունը: Մի դեպքում բնակչության բարձր կրթական մակարդակը նպաստում է մասնակցության քաղաքական մշակույթի արագ, սակայն հիմնականում մակերեսային հաստատմանը, մյուս դեպքում սոցիալական վարքի արևմտյան մոդելի արժեքները բնակչության մի զգալի մասի համար վերացական արժեքներ են, քանի որ թույլ են արտահայտված անհատի **գործունյա-ակտիվ** կողմնորոշումը, լավատեսության հոգեբանությունը և **ձեռնարկատիրական-նախաձեռնողական** ավանդույթները:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ-ում քաղաքական արդիականացումը ցանցայնացված ազատական մշակույթի ազդեցության հետևանքով բազմաթիվ խոչընդոտների է բխվել ոչ միայն քաղաքական մասնակցության մակարդակի աճի, այլև սոցիալ-պատմական տեքստի համակարգային զարգացման անհրաժեշտության բերումով: Վերջինիս բացակայության պատճառով առանձին մարզինալացված խմբերի ինքնարտահայտումը տեղի է ունեցել, այսպես կոչված, **մարզինալացված արդիականացմանը** ձգտող «ընտրախավային խմբերի» տեսքով: Այս ամենի հետևանքով իրական բազմակարծության փոխարեն ՀՀ-ում պարբերաբար ձևավորվել և ձևավորվում են ընտրյալ մեկուսախմբեր, որոնք մանիպուլյացիայի են ենթարկում «Հանրային շահը համընդհանուրի բարիքն է» քաղաքակրթիչ կարգախոսը:

Հետևաբար քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափման հեռանկարները որոշվում են այն հանգամանքով, թե վարչակարգն ի վիճակի՞ է լուծելու ինչպես ընդհանուր, այնպես էլ յուրահատուկ ազգային բնույթի հետևյալ հիմնախնդիրները.

1. **Պուրա բերել տնտեսական կապիտալը** քաղաքական վերահսկողությունից և նպատակամետ լեգիտիմացնելով ու հումանիզացնելով այն՝ նպաստել ազատ մրցակցային դաշտի արդյունավետ գործառնմանը, ինչպես նաև խաղաղության ու համագործակցության մշակույթի զարգացմանը:

⁶² Brian Levy, Francis Fukuyama, Development Strategies. Integrating Governance and Growth https://siteresources.worldbank.org/EXTGOVANTICORR/Resources/3035863-1286395629347/Levy_and_Fukuyama_WPS5196.pdf

2. **Ստեղծել բաց սոցիալական կառուցվածք**, որի միջոցով հնարավոր է ոչ միայն հաղթահարել շարժունակության ճգնաժամը, այլև քաղաքացիների ինքնահաստատման, ինքնադրսևորման, ինքնիրացման ճանապարհով բարձրացնել մասնակցային ժողովրդավարության որակը:

3. **Ապահովել երկխոսություն քաղաքական և քաղաքացիական հաստատությունների միջև**, ինչը հնարավորություն կտա բաց քաղաքական մրցակցություն ծավալելու միջոցով իշխանության համար պայքարում իրականացնելու **փոխադարձ անվտանգության փոխզիջումային (ՓԱՓ) քաղաքականություն**:

4. **Բարձրացնել տեղական ինքնակառավարման համակարգի պատասխանատվությունը և արդյունավետ գործառնումը**՝ սահմանամերձ համայնքներում զարգացնելու մանր ու միջին բիզնեսը:

Հայաստանի առջև ծառացել է պատմական խնդիր՝ հղկել քաղաքական արդիականացման «քառանկյուն անիվի» եզրագծերը և անցում կատարել դեպի բնականոն զարգացում: Առաջարկվող մոդելը ակնհայտորեն չի լինի ամբողջությամբ ո՛չ արևմտյան՝ ազատական, ո՛չ արևելյան՝ մեկուսախմբային-տարանջատական, և առավել ևս՝ փոխհամաձայնեցված-խմբիշխանական: Այն, լինելով հայկական՝ սինթետիկ, հնարավորություն կտա բնականոն արդիականացնելու քաղաքական, հանրային, պետական կառավարումը և հայկական քաղաքակրթությանը բնորոշ ոգեղենության, արարչականության, կենսասիրության և ժողովրդավարական համախմբման շնորհիվ իրականացնելու անվտանգ ապագայի ռազմավարություն:

**ԳԻՐՔ 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ
ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ.
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**2.1. Լեգիտիմության հիմնախնդիրը քաղաքական
գարգացումներում**

Քաղաքական գարգացման և արդիականացման գործընթացներում տեղի ունեցող փոփոխությունների արդյունավետությունը պայմանավորված է միայն իշխանության լեգիտիմության մակարդակով:

Քաղաքական գարգացման գործընթացում լեգիտիմացման հիմնախնդրի ուսումնասիրումն ուղեկցվում է առաջին հերթին **սիմվոլների և միջերի զերիշխանության արդիականացման անհրաժեշտությամբ**: Դրանք հնարավորություն են տալիս լեգիտիմությունը դիտարկելու որպես քաղաքական համակարգի յուրահատուկ վիճակ, որտեղ իշխանության տարանջատման շնորհիվ գոյություն ունեցող կարգն ապահովում է քաղաքականության դերակատարներին ուղղորդելու հնարավորությունը՝ բռնության և հարկադրանքի նվազագույն կիրառմամբ: Փաստորեն, նման ինտեգրումն անխուսափելիորեն ենթադրում է ոչ միայն ինստիտուցիոնալ կամ ինչ-որ այլ գործիքային միջոցների, այլև խորհրդանիշային ռեսուրսների կիրառում: Քաղաքական գարգացման գործընթացի այս հատկանիշի դիտարկումը, հատուկ ուշադրության արժանացնելով ժողովրդավարական «երրորդ ալիքի» շրջանակներում գտնվող հասարակություններում համագործակցության մշակույթի ձևավորման և բնականոն գործառնական կառուցակարգերը, նոր հնարավորություններ է ընձեռում քաղաքացիական ու քաղաքական ինստիտուտներին: Հետևաբար դժվար է թերագնահատել այս հիմնախնդրի նշանակությունը ժողովրդավարական «երրորդ ալիքի» շրջանակներում գտնվող երկրներում քաղաքական գարգացման ճգնաժամերի (բաշխում, շարժունակություն, մասնակցություն, նույնականացում, լեգիտիմացում) հաղթահարման հարցում: Ժամանակակից «արևմտյան» և «ոչ արևմտյան» հասարակություններում ընթացող քաղաքական փոփոխություններն անխուսափելիորեն արդիականացնում են կերպափոխվող քաղաքական ինստիտուտների և սոցիալ-քաղաքական ակտիվության ձևերի

լեզվափոխման հիմնախնդիրը՝ բացահայտելով քաղաքական մշակույթի և դիսկուրսի հետազոտման շուրջ ծավալված նոր մոտեցումները: Այս իմաստով քաղաքական զարգացման գործընթացում իշխանության լեզվափոխման հիմնախնդիրն արդիականություն է ձեռք բերել Հայաստանի Հանրապետությունում, որը, որպես «ոչ արևմտյան» կարգավիճակում գտնվող «վազող» արդիականացման երկիր, չհաղթահարելով քաղաքական զարգացման ճգնաժամերը, թևակոխեց մենիշխանական ժողովրդավարության զարգացման փուլ: Քաղաքական իշխանության լեզվափոխման ճգնաժամը ՀՀ-ում քննարկման առարկա է դարձել՝ պայմանավորված ՀՀ նախագահական (1996, 1998, 2003, 2008, 2013) և խորհրդարանական (1995, 1999, 2003, 2007, 2017) ընտրություններով, ինչպես նաև ՀՀ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների հանրաքվեով և 2018 թվականի ՀՀ վարչապետի ընտրություններով: Հայկական քաղաքական օրակարգն ընդգծված (երբեմն՝ նաև գիտակցված) «անտեղյակություն» են ցուցաբերում արևմտյան լեզվափոխման բովանդակության բազմաշերտության նկատմամբ: Դրա հետևանքով, գերիշխանության իրենց հավակնությունները հիմնավորելու համար որոշ քաղաքական գործիչներ և դիտորդներ կամայականորեն (երբեմն՝ փոխհամաձայնեցված), անտեսելով իշխանության հրապարակայնության հրամայականը, միայն խճճում են տվյալ հասկացության իմաստային բազմաշերտությունը՝ բևեռացնելով նրա արժեքային համակարգի քաղաքական էությունը: Մինչդեռ քաղաքական զարգացման գործընթացում լեզվափոխման ճգնաժամի հաղթահարումը ենթադրում է նրա սկզբնական ձևերի իմաստախորհրդանշանային մեկնաբանում և պատմական էվոլյուցիայի կրկնվող դրվագների բացահայտում:

«Լեզվափոխություն» հասկացության իմացաբանական դինամիկան (շարժը) պատմության հոլովություն: Քաղաքական գիտության կառուցվածքում իրավաքաղաքական տեսությունների և քաղաքականության տեսության որոշ հարցերի բազմակողմանի լուսաբանման նկատառումներով «լեզվափոխություն» (*legitimacy*) հասկացությունն ուսումնասիրվել է՝ ելնելով պատմության հոլովությունում սոցիո և էթնոմշակութային տարաբնույթ տարածություններում ու ժամանակներում տեղի ունեցող քաղաքական փոփոխություններից և դրա առկայությամբ կամ բացակայությամբ պայմանավորված գործընթացների փոխակերպումներից:

Այս նկատառումներով ռուս քաղաքագետ Մ. Իլյինը նշել է. «Կարելի է

համաձայնել բոլոր այն հետազոտողների հետ, որոնք հանրային իշխանության լեգիտիմությունը սկզբնավորող ելակետային ձևեր են դիտարկում իմաստային առումով բազմաբնույթ կապերի մեջ գտնվող **հեղինակությունը, նրանով օժտված լինելը և, միաժամանակ, վստահությունը (credulitas, trust)**⁶³։ Հեղինակությունը իշխող անձին կամ իշխանական կենտրոնները բնութագրող հատկություն է, որի առկայությունն իշխանական հարաբերությունների համար ապահովում է վստահելիություն, ընդունվածություն, համաձայնեցվածություն։ Հեղինակությունը իշխանության ինքնաձևավորումն է։ Ժամանակի ընթացքում այն վերածվում է իշխանության գոյության ձևի, որը սերտորեն կապված է լեգիտիմացման գործընթացի հետ։ «Հեղինակություն» հասկացության հենց այս իմաստային կոդին է ուշադրություն դարձնում Է. Բենվենիստը՝ նշելով, որ **«auctoritas»** իշխանության դեպքում խոսքը նախասկզբնական նշանակություն ունեցող աստվածային ուժի առջև խոնարհիվելու մասին է⁶⁴։

Ուսումնասիրելով **credo** հասկացության իմաստային նրբերանգների էվոլյուցիան հնդեվրոպական լեզուներում՝ Է. Բենվենիստը նշում է, որ այն ստուգաբանական տեսանկյունից բավական մեկուսացված է, քանի որ կիրառվում է որոշակի վստահության (հավատ) գործողություն նշանակող իմաստային համատեքստով, որն իրականացվում է Աստծո նկատմամբ՝ նրա կողմից օգնություն, բարեպաշտություն ստանալու նպատակով։ Աստծո մեջ **credo-ի** անուղղակի ներդրումը ենթադրում է գոհաբերության ծիսային գործողություն. խոսքը ոչ թե միակողմանի կախվածության հարաբերությունների մասին է, այլ ինչ-որ մրցակցության, խաղաղրույքներով խաղի, որը պետք է արդարացվի։ «Ես քեզ հավատում եմ և զոհ եմ մատուցում, իսկ դու՜...»։ Այստեղ հավատը պարունակում է պարզևատրման ակնկալիք. նվիրվելով Աստծուն՝ մարդն ակնկալում է որոշակի օգուտ։ «Վստահություն ցուցաբերել», «վստահել» նշանակում է վստահելով գոյությունը գրավ դնել՝ հետագայում անվտանգ զարգանալու և որոշակի մակարդակում իշխանություն ունենալու ակնկալիքով։ Էական դեր խաղալով լեգիտիմության հիմնախնդրի կայացման գործում՝ այս բարդ հասկացության իմաստաբանական «էներգիան»

⁶³ Ильин М.В., Слова и смыслы. Опыт описания ключевых политических понятий. - М.: Российская политическая энциклопедия (РОССПЭН), 1997. с. 168.

⁶⁴ Бенвенист Э., Словарь индоевропейских социальных терминов. - М.: Прогресс - Универс, 1995, с. 33.

փաստորեն տարրալուծել է քաղաքականի, դավանաբանականի, մոգականի և օգտապաշտականի տարրերը, որոնք ի սկզբանե «վստահություն» հասկացության հիմքն են: Այդ առումով ուշագրավ է անգլիական *trust-ի* կողմից պատմական ժամանակով ամբարված այն բառերի խումբը, որոնք ոչ միայն սոցիալ-հոգեբանական, այլև իրավաքաղաքական նշանակություն ունեն⁶⁵:

Ուշադրություն դարձնելով է. Բենվենիստի վերլուծած *fides-ի* երկակիությանը՝ Պ. Բուրդյոն նշում է. «Օբյեկտիվ իշխանությունը, որը կարող է օբյեկտիվացվել առարկաների միջոցով (մասնավորապես իշխանության սիմվոլների՝ գահեր, գայիսոններ, թագեր), խոստովանության սուբյեկտիվ գործողությունների արդյունք է, որը և՛ վստահության պահանջ է, և՛ վարկունակություն, և՛ գոյություն ունի լոկ պատկերացման, հավատամքի, ենթարկվածության ձևով ու միջոցով»⁶⁶: Պ. Բուրդյոն ենթադրում է, որ լեգիտիմության իրական իմաստն ամփոփված է *fides implicata* (լատ.՝ թաքնված հավատարմություն) աստվածաբանական հասկացության մեջ: Սա «ծալտյալ վստահություն է, լռելյայն ինքնատրամադրում, երբ սեփական կարծիքն ընտրում են սեփական պաշտոնական արտահայտչի միջոցով»⁶⁷: Թեպետ այս մոտեցումն արդիական է և համահունչ ժամանակի ոգուն, այնուամենայնիվ կարծում ենք, որ այն ամբողջությամբ չի արտահայտում կամ վերծանում *fides implicata-ի* իմաստաբանական նշանակությունը և հիշողությունը: *Fides implicata-ն*՝ ամբարված քրիստոնեական աստվածաբանական մտքում, ինչպես նաև լինելով կենսունակության ապահովման հիմնապայուսներից մեկը, չի ենթադրում միայն անվերապահորեն «լռելյայն ինքնատրամադրում», այլ անձին տալիս է սեփական վարքը ռացիոնալացնելու միջոցով «լռելյայն ինքնատրամադրումը» իրականացնելու հնարավորություն՝ որպես քննադատման, հիմնավորման և փաստարկման արդյունքում ձևավորված այլընտրանքներից ամենաարդյունավետը:

⁶⁵ **Trust** – հավատ, վստահություն, վարկ, փոխառություն, խնամառություն, խնամառության հանձնված գույք, միավորում (մենաշնորհ ունեցող ընկերությունների խումբ). *absolute trust* - բացարձակ վստահություն, *discretionary trust* - անվերապահ վստահություն, *implied trust* – վերապահված վստահություն (տե՛ս «Եվրոպայի խորհրդին առնչվող տերմինների և արտահայտությունների անգլերեն-հայերեն բառարան», Եր., 2005, էջ 366):

⁶⁶ Бурдьё П., Социология политики: Пер. с фр./Сост., общ. ред. и предисл. Н. А. Шматко, М.: Socio-Logos, 1993, с. 208-209.

⁶⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 114:

Ելակետ ընդունելով Պ. Բուրդյոյի մոտեցումները՝ նշենք, որ լեգիտիմ իշխանությունը «այն իշխանությունն է, որը կառավարվելու հակված մարդիկ որպես վարկ տալիս են նրանց, ովքեր ցանկանում են կառավարել: Այս ամենը նրանց փոխկախվածության մեջ է գցում՝ *fides-auctoritas*, քանի որ առաջինը, վստահելով երկրորդին, վերջինիս օժտում է վստահության մեծ պաշարով»⁶⁸: Նմանօրինակ մոտեցմամբ լեգիտիմության բազմաչափ իմաստը բացահայտվում է ***fides implicita*** ենթատեքստում՝ հաշվի առնելով տարաբնույթ տարածությունների համատեղման պատմամշակութային առանձնահատկությունները: Վստահությամբ օժտելու և բաշխելու մենատիրական սկզբի առկայության հետ մեկտեղ չի կարելի չնկատել **փոխադարձ ինքնորոշված քաղաքական տարածությունների** գոյությունն ու ամրապնդումը (մանավանդ այժմեական սոցիալական համակարգում), երբ հեղինակությունը դարձել է քաղաքական զարգացման գործընթացի յուրաքանչյուր մասնակցի գերակա ռեսուրս: Օրինակ՝ Ն. Լումանը, բացահայտելով վստահության իմաստը, ուշադրությունը կենտրոնացնում է լեգիտիմացման ժամանակատարածքային յուրահատուկ կտրվածքների վրա, որոնք չեն հանգեցվում միայն իշխանության կողմից խորհրդանշային ռեսուրսների օգտագործմանը. «Արժեքի արժեքը այն դիրքն է, որից ելնելով՝ էլիտաները, լիդերները և քաղաքացիները դիտարկում, պահանջում, պատվիրակում և իրենց ունակ են համարում գործելու»⁶⁹, - նշում է նա: Սրա հետ մեկտեղ «արժեքի և համարժեքի տարբերակման» դիրքը սոցիալական փոխազդեցության ժամանակ ազդանշում է «անբավարար իրադրության» պայմաններում գործողությունների հեռանկարները բացահայտելու ցանկության մասին: Վստահությունն համընդհանուր, խորհրդանշական միջնորդ է, սոցիալական փոխազդեցությունների ժամանակատարածքային առանձնահատուկ «ինտեգրատոր»:

Հիմնախնդրին նման մոտեցում է ցուցաբերում նաև ամերիկացի քաղաքագետ Չ. Ռ. Միլսը, որը ենթադրում է, որ լեգիտիմությունը սոցիալական էլիտաների, «բարոյական սիմվոլների, սուրբ խորհրդանշանների և իրավական բանաձևերի հավատամքի» արդյունավետ կիրառում է՝

⁶⁸ Бурдьё П., Социология политики: Пер. с фр./Сост., общ. ред. и предисл. Н. А. Шматко./ — М.: Socio-Logos, 1993. с. 209.

⁶⁹ Луман Н., Самоописания, Пер. с нем. под ред. О. Никифорова и А. Антоновского, М.: Логос- Гнозис, 2009, с. 233.

կառավարողների ինստիտուցիոնալ գերիշխանությունն ապահովելու ունակություն: Այդ պատճառով էլ, ըստ ամերիկացի քաղաքագետի, տեսաբաններն օգտվում են տարաբնույթ հասկացություններից: Այսպես օրինակ՝ Գ. Մոսկան խոսում է «քաղաքական բանաձևի» և «մեծ նախապաշարմունքների», Ջ. Լոկը՝ «ինքնիշխանության սկզբունքի», Ժ. Մերելը՝ «գերիշխող միֆի», Թ. Արնոլդը՝ «ֆոլկլորի», Մ. Վեբերը՝ «լեգիտիմացման», Է. Դյուրգհեյմը՝ «կոլեկտիվ պատկերացումների», Կ. Մարքսը՝ «գերիշխող գաղափարների», Ժ. Ժ. Ռուսոն՝ «համընդհանուր կամքի», Գ. Լասուելը՝ «իշխանության սիմվոլների», Կ. Մանհեյմը՝ «գաղափարախոսության և ուտոպիայի», Գ. Սփենսերը՝ «հասարակական զգացմունքի» մասին⁷⁰: Դժվար չէ նկատել, որ տարբեր հեղինակների կողմից լեգիտիմության հիմնադրույթի իմաստային բովանդակության մեկնաբանման հակասությունները պայմանավորված են լեգիտիմության իմացաբանական սխեմաներից մեկի գերակայությամբ: Եվ դա այն ժամանակ, երբ լեգիտիմությունն արտահայտվում է համալիր կերպով՝ նորմերի նկատմամբ վստահությամբ, իրավունքների օրենսդրական հաստատմամբ, իշխանության իրավական պատասխանատվությամբ, գաղափարախոսական «թափանցիկությամբ» (հավատամքներով արդարացվածությամբ) և պատվիրակված պարտականությունների կատարմամբ: Համապատասխանաբար լեգիտիմության ճգնաժամ առաջանում է օտարումից, «խաղի կանոններ» հաստատող ինստիտուտների բացակայությունից, իշխանության անպատասխանատվությունից, գաղափարախոսական «վակուումից», ամենաթողությունից և իշխանության իրականացման ֆունկցիոնալ անկարողությունից: Այսպես, Թ. Պարսոնսը նշում է, որ իշխանության լեգիտիմությունն արտահայտվում է ամբողջ սոցիետալ կոլեկտիվի անունից նպատակին հասնելու համատեքստում գործելու իրավունքով (նրա հիմնադրույթը կտրուկ քննադատում է Չ. Միլսը՝ այստեղ տեսնելով սոցիալական կարգի հաստատման ժամանակ պետական արժեքային-կանոնակարգային լեգիտիմացման բացարձականացում և իդեալականացում), սակայն սրանով լեգիտիմության մասին ամերիկացի գիտնականի պատկերացումները բնավ չեն սպառվում: Թ. Պարսոնսը նման բնույթի լեգիտիմացման («յուրահատուկ հիմնավորվածություն») մեջ առանձնացնում

⁷⁰ Миллс Ч. Р., Социологическое воображение / Пер. с англ. О. А. Оберемко; под ред. Г. С. Батыгина, М.: Стратегия, 1998, с. 48-49.

է սահմանադրական «բարոյական իմաստները»: Միննույն ժամանակ սահմանադրական կտրվածքն ամեննին չի հանգեցնում պետության ձևական-իրավաբանական պատասխանատվության, այլ ենթադրում է գործադիր իշխանության և նրա կազմի մեջ մտնող մարմինների իրավասությունների գործառույթների կանոնակարգային սահմանում՝ հարաբերականորեն անկախ օրենսդրության և օրենսդրական մարմինների համակարգի, ընտրական արարողակարգի, սահմանադրական դատարանի և այլնի միջոցով⁷¹:

Ակնհայտ է, որ քաղաքական զարգացման գործընթացում լեգիտիմության հիմնախնդրի բազմաշերտ իմաստային կտրվածքներն առավել ցայտուն երևում են փոփոխությունների ընթացքում գերիշխանության և ենթակայության հարաբերությունների գերակայության բացահայտման ժամանակ: Մեր կարծիքով, քաղաքական զարգացման գործընթացում միակողմանի կլինի հիմնախնդրի իմաստային բովանդակությունը հանգեցնել բացառապես քաղաքական էլիտաների կողմից իշխանական հարաբերություններում կիրառվող խորհրդանշանային տեխնոլոգիաներին: Նախ՝ քաղաքական զարգացման գործընթացում բովանդակային առումով այդ տեխնոլոգիաները պատմականորեն փոփոխվող են և տարբեր պատմամշակութային դարաշրջաններում ունեն յուրահատուկ համատեքստային բնույթ, ապա՝ նույնիսկ «դիրքերի հնազանդ հանձնման», «վստահության իմաստային ուղղահայացի» դիրքորոշման գերակայության դեպքում լեգիտիմացումից երբեք չի վերանում փոխադարձ անձնական պատասխանատվության և վստահության հորիզոնականի իմաստավորման անհրաժեշտությունը⁷²: Ուստի պատմության հոլովությամբ լեգիտիմության հայեցակարգի կայացման վերլուծությունը քաղաքական զարգացման գործընթացում այդ հիմնախնդրի իմաստային բազմաշերտության բացահայտման գերակա պայմանն է:

«Հեղինակության» և «վստահության» համատեքստում քաղաքական զարգացման գործընթացում իշխանական հարաբերությունների իմաստային բովանդակության էվոլյուցիան արտացոլում է անհատի իմացաբանական և

⁷¹ Парсонс Т., Система современных обществ / Пер. с англ. Л. А. Седова и А. Д. Ковалева. Под ред. М. С. Ковалевой. М.: Аспект Пресс, 1997, с. 34-35.

⁷² Бурдьё П., Социология политики: Пер. с фр./Сост., общ. ред. и предисл. Н. А. Шматко./- М.: Socio-Logos, 1993, с. 25.

ծագումնաբանական առանձնահատկությունները: Ելնելով այս դրույթից՝ Պ. Բերգերը և Թ. Լուկմանն առաջարկում են քաղաքական զարգացման արդյունքում հաստատված ինստիտուցիոնալ կարգի իմացաբանական հիմնավորվածության գործընթացը բաժանել չորս հիմնական մակարդակներ՝ **սաղմնային վիճակում գտնվող** (որոշակի գործողությունների արդյունքում ձևավորված), **տեսական պնդումների, ակնհայտորեն ձևավորված տեսությունների** և, վերջապես, **սիմվոլների համընդհանրացման** (ավանդույթների համակարգ) մակարդակներ⁷³: Ելակետ ընդունելով մեթոդաբանական այս դրույթը՝ կարծում ենք, որ դրա օգնությամբ կարելի է առանձնացնել նաև լեզվատիմության հիմնախնդրի իմացաբանական մակարդակները:

Վերոշարադրյալը մեզ հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ լեզվատիմացման առավել պատմական ձև է միֆամտածողությունը: Վերջինս՝ որպես «վստահության վերաբաշխման» (Պ. Բուրդյո) հայեցակարգային մեխանիզմ, ավելի մոտ է գիտակցության խորհրդանշային և միֆային մակարդակներ՝ դիցաբանական ուժերի հետ նույնականանալու ակնկալիքով: Այս գործընթացի իմացաբանական հիմք կարելի է դիտարկել իշխանական հարաբերությունների անդամների միջև առկա ինչպես օգտապաշտական, այնպես էլ խորհրդապաշտական տարրեր ներառող վստահության հարաբերությունները, որտեղ կրոնն ու իրավունքը ներծծված են առարկայական խորհրդապաշտությամբ: Սրա հետ մեկտեղ չի կարելի խոսել ո՛չ հանրային հեղինակության, ո՛չ էլ լեզվատիմացման մասին, չնայած սաղմնային վիճակում նշմարվում են թե՛ մեկի և թե՛ մյուսի տարրերը: Այդ առումով ուշագրավ է տոների ժամանակ ընծա մատուցելու և հեղինակությամբ օժտելու արարողակարգային սովորույթը, որը, հանդիսանալով նաև ակտիվ և հաջողակ անհատների հարգն ավելացնելու եղանակ, ուղղված է աջակցմանը, երաշխավորող համախմբության ամբողջականությանը: Փաստորեն, համաձայն մոզական պրակտիկայի, նա, ով խմբային գոյատևման կամ ընծայման արարողության ժամանակ ավելի շատ ներդրում էր ունենում, մյուսներից ստանում էր յուրահատուկ վստահության քվե: Այս համատեքստում սերտորեն փոխկապակցված և փոխապայմանավորող է «երջանկության» դերը, որի իմացաբանական եզրույթը հստակեցվում էր ոչ թե

⁷³ Бергер П., Лукман Т., Социальное конструирование реальности. Трактат по социологии знания, Пер. Е. Руткевич, М.: “Медиум”, 1995. с. 10- 13.

անձի ունեցվածքի, այլ խմբային գոյատևման կամ համայնքում նրա ունեցած ներդրումի (contribution) աստիճանով: Աստիճանաբար նման բնույթի հարգը սկսում է գնահատվել օգտապաշտական նշանակությամբ: Ավելին, այն նյութականությունից բարձր ռեսուրս է ընկալվում, իսկ վստահության կապիտալի տիրապետողի անձը և նրա կողմից օգտագործվող իրերը, համապատասխանաբար անվտանգության ապահովման ակնկալիքով օժտվելով միատիկական ուժով, ձեռք են բերում **տաբուի և տոտեմների** ինստիտուտը տնօրինողի կարգավիճակ⁷⁴: Ըստ Կ. Լևի-Ստրոսի՝ նման հարաբերություններում առաջնորդի իշխանությունը բխում է **վստահության պատվիրակման** յուրահատուկ կանոնակարգից:

Իշխանություն ունենալու երկրորդ կարևոր պայմանը **փոխադարձ պարտավորվածությունն** է, որի միջոցով մշտական հավասարակշռություն է պահպանվում կառավարողների և կառավարվողների միջև⁷⁵: Այդ հավասարակշռության պահպանման արդյունքում փոխադարձ վարկավորման իմացաբանական էվոլյուցիան էլ հենց կանխորոշեց քաղաքական զարգացման գործընթացում լեգիտիմացման հիմնախնդրի հետագա հայեցակարգման էությունը, որը մի կողմից ենթադրում է իշխանության կիրառման իրավունք, մյուս կողմից՝ հպատակեցման պատրաստակամություն:

Այս առումով ուշագրավ են անտիկ սոցիալ-քաղաքական պրակտիկաների համակարգված դիտարկումները, որոնց օգնությամբ էլ պատմության հոլովույթում հնարավոր է համակարգել լեգիտիմության հիմնախնդիրը քաղաքական զարգացման գործընթացում: Հիմք ընդունելով հունական «կոսմոսի» (բնական-աշխարհագրական, սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական, դիցաբանական և այլն) գերակայությունները՝ լեգիտիմության հիմնախնդիրը հետազոտողները Հին Հունաստանի քաղաքական զարգացման գործընթացները կապում են պոլիսային իշխանության լեգիտիմացման առանձնահատկությունների հետ: Այսինքն՝ չնայած

⁷⁴ **Տաբու (taboo)** - արգելադրում, սրբազան արգելադրում. արգելքներ, որոնք ձևավորվել են տոհմացեղային խմբերի մոտ, որոնց խախտման համար ոգիները պատժում էին խմբի շարքային անդամներին, քանի որ ընդհանուրի անվտանգության ապահովման համար չէր կարելի օգտագործել որոշակի առարկաներ, ուտելիքներ, բառեր, որոնցից օգտվում էին արդեն վստահություն ձեռք բերած և ծիսակատարությունների ժամանակ նվիրատվության ինստիտուտը տնօրինող սրբացված մոզերը (շամանները), ((տե՛ս Ֆրեդեր Զ. Զ., Ոսկե ճյուղը. մոգության և կրոնի ուսումնասիրություն, Ե., 1989, էջ 15-16):

⁷⁵ Леви-Стросс К., Печальные тропики. /Пер. с франц. Сергеева Г.Е./ Львов: Инициатива; М.: ООО «Издательство АСТ», 1999, с. 401-409.

պոլիսում ավանդական հասարակությանը բնորոշ արժեքների, մասնավոր սեփականության, մրցակցային մթնոլորտի առկայությանը, այնուհանդերձ, ինքնահաստատման ձգտումը հանգեցնում է լեգիտիմացման բնույթը սկզբունքորեն փոխող իմացաբանական և նորմատիվ դրույթների կայացմանը:

Նման մոտեցումը հնարավորություն է ստեղծում քաղաքական զարգացման գործընթացում գուգամիտելու **«Ճանաչիր ինքդ քեզ», «Պահպանիր համակեցության կանոնները» և «Երջանիկ կառավարում է նա, ով հասկանում է երևույթների միջև կապը»** սկզբունքները՝ հանրային համաձայնության ինստիտուտների ձևավորման նպատակով: Իշխանության խորհրդանշանային ընկալման տեսականացումն աստվածաբանական բանավեճը տեղափոխում է գիտական հայեցակարգման մակարդակ՝ դիտարկելով «լեգիտիմացում քառակուսի արմատով»: Ըստ այդմ՝ կարևորվում է politeia հասկացության դիտարկումը, որը լեգիտիմացման համատեքստում հայեցակարգում է քաղաքացիական իրավունքների և պարտականությունների «մասնակցության և համաձայնության» փոխկապվածությունը: Այս իմաստով Պլատոնին և Արիստոտելին կարելի է անվանել իշխանության լեգիտիմության առաջին տեսաբաններ, որոնց կողմից գերիշխանության և լեգիտիմության տեսակների կառուցման վերաբերյալ նախագծված սկզբունքները որդեգրել է վեբերյան մեթոդաբանությունը: Վերջինս էլ հենց հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ հին հույների պոլիսային գիտակցությունը նոր ժամանակների ժողովրդավարական կառուցվածքների և լեգիտիմացման պրակտիկաների նախատիպն է: Սրա հետ մեկտեղ հնարավոր չէ անտեսել հելլենիզմի և Pax Romana-ի ծնած լեգիտիմության առանձնահատկությունները, որոնք պատմական հոլովույթում ձևավորված ավանդական-հայրիշխանական հասարակություններին հատուկ լեգիտիմության տարատեսակ էին:

Ինչպես գրում է Շ. Էյզենշտատը, հունական պոլիսին՝ որպես երկրագործական համայնքների վարչականացված և մշակված կենտրոնին վերագրվող ընդհանուր բնութագրիչներ կարելի է գտնել նաև աշխարհի այլ տարածաշրջաններում⁷⁶: Քաղաքական կյանքի անկայունությունը պոլիսում,

⁷⁶ Эйзенштадт Ш., Революция и преобразование обществ. Сравнительное изучение цивилизаций / Пер. с англ. В. А. Гордона; науч. ред. пер. Б. С. Ерасов. М.: Аспект Пресс, 1999, с. 101-102.

մի շարք դեպքերում նրա անդամների կողմից կայացված քաղաքական որոշումների իրացիոնալությունը, հանրային իշխանության լեգիտիմացման գործընթացում մոգական պրակտիկաների ներկայության հատուկ արտահայտությունը հիմնականում արդարացնում են իշխանական հարաբերությունների լեգիտիմացման աստվածաբանական բնույթի մասին ենթադրությունները, նրա սերտ փոխկապվածությունը ինչպես կրոնական, այնպես էլ քաղաքացիական ծիսակարգերի հետ:

Այս պատճառով արդարացված է համարվում հունական պոլիսներում առավելապես դիցաբանական ակունքների վրա հիմնված իշխանական հարաբերությունների կազմակերպման վարկածը՝ պայմանավորված երկու տարակերպ մրցակցող սկիզբներով՝ երկնային (օլիմպիական) և երկրային (ընդերքային): Պոլիսային համայնքի գոյության հիմքում վախ՛ն էր երկրային և ստորգետնյա աշխարհի աստվածությունների նկատմամբ, որոնք պահանջում էին ինչպես ամբողջ համայնքի, այնպես էլ նրա յուրաքանչյուր անդամի կողմից քաղաքի արարողակարգային անադարտության պահպանում: Մասնակցությունը քաղաքական կյանքին քաղաքացիների ճնշող մեծամասնության համար կրում էր դիցական արարողակարգի բնույթ, որը նույնքան պարտադիր էր, որքան բուն դիցական արարողակարգի անադարտության պահպանումը: Հենց այս պատճառով էլ այս ամենը միայն սոցիալ-քաղաքական բանակցային փոխազդեցության զարգացած ձև չէ, այս ամենի օգնությամբ նաև հնարավոր է բացահայտել պոլիսային ժողովրդավարության պարադոքսները: Այս նկատառումներով Յո. Գալթունգը գրում է. «Տարաբնույթ բախումների լուծման արարողակարգային ձևերը հունական պոլիսում օգտագործվում են մեծամասնության կարծիքն իրացնելու համար, որը շատ հաճախ իրացիոնալ էր և, հաշվի չառնելով փոքրամասնության և առանձին քաղաքացիների կարծիքը, ձեռք բերելով առավելագույն համաձայնություն՝ մերժում էր նվազագույն համաձայնության անհրաժեշտությունը»⁷⁷:

Այս առումով կարևորում ենք քաղաք-պետությունների հիմնադրման հետ կապված անտիկ լեգենդների իմաստաբանական վերլուծությունը, որոնց հերոսները, հանդես գալով որպես որոշակի սոցիալ-քաղաքական

⁷⁷ Գալթունգ Յո., Խաղաղություն խաղաղ միջոցներով. խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն, Եր., ՄԶՄԿ, 2005, էջ 11-12:

համայնքներ ձևավորողներ, հաճախ նախկինում իրենց ընտանիքի նկատմամբ հանցագործություն (հոր, մոր, եղբայրների և քույրերի սպանություն) գործածներն են, այսինքն՝ երկրային արարողակարգերի ավանդական դրույթները վերանայածները կամ ոչ լեգիտիմ կարգավիճակ ունեցող **«վարկաբեկված ապօրինածինները (բաստարդ)»**։ Վերջիններիս նոր տեղ, նոր կարգավիճակ և հեղինակություն ունենալու ցանկությունը համակարգում է նրանց գործողությունների նպատակամետությունը՝ ընդգծելով արարողակարգային մաքրություն պահպանելու նշանակությունը և արվածի համար անձնական պատասխանատվություն կրելու սուր զգացումը։ Ոչ լեգիտիմ սոցիալական կարգավիճակի **«կեղտը մաքրելու»** պահանջունքն իրականացվում էր նման **«վարկաբեկված ապօրինածիններին»** հերոսացման և մաքրման միջոցով։ Այսպես կանոնակարգվեցին քաղաքացիների փոխադարձ պատասխանատվությունը քաղաք-պետության «մաքրության» համար և անհանդուրժողականությունը հայրիշխանության սկզբունքները խախտողների նկատմամբ («Էդիպի բարդույթ»)։

Աստվածների և մարդկանց միջև հարաբերությունների մոգական համարժեքություն ամփոփած հավասարությունը, կարևորելով երկրային լեգիտիմացման մրցունակությունը, հանգեցրեց օլիմպիական աստվածների լեգիտիմացման՝ բնորոշելով հայրիշխանական հասարակությունների և քաղաք-պետությունների վարչակարգերի աստվածաբանական էությունը։ Հունական պոլիսային հայեցակարգը, ինչպես նշում է Շ. Էյզենշտատը, անընդունակ եղավ իրավական և ինստիտուցիոնալ տեսանկյունից հաղթահարելու քաղաք-պետության սահմանները⁷⁸։ Անտիկ պոլիսը ոչ այնքան ժողովրդավարական լեգիտիմացման նախատիպն էր, որքան բազմաբնույթ քաղաքական գաղափարների և, մասնավորապես, քաղաքացու «պատվի» (արժանապատվության) գիտակցման վրա հիմնված քաղաքական մասնակցության և կարգի ինտելեկտուալ **«բուծարան»**⁷⁹։

Հունական քաղաք-պետությունների ինտելեկտուալ էլիտայի կողմից իրականացված իմացաբանական համակարգը սոցիալական պրակտիկայի իմաստով ակտիվ կիրառություն գտավ Հռոմի կայսերական կառույցներում,

⁷⁸ Эйзенштадт Ш., Революция и преобразование обществ. Сравнительное изучение цивилизаций / Пер. с англ. В. А. Гордона; науч. ред. пер. Б. С. Ерасов. М.: Аспект Пресс, 1999. с. 193.

⁷⁹ Парсонс Т., Система современных обществ / Пер. с англ. Л. А. Седова и А. Д. Ковалева. Под ред. М. С. Ковалевой. М.: Аспект Пресс, 1997, с. 21-23.

ֆեոդալական Եվրոպայի կայսրություն-պետություններում: Այնտեղ քաղաքային, կորպորատիվ, տարածքային ինքնակառավարման կառույցների և իրավական վարչակարգի շրջանակներում տեղի ունեցավ արդեն քաղաքաբնակ անձի մասնակի ազատագրում հայրիշխանությունից: Սրա հետ մեկտեղ ընդհանուր իրավական տարածությունը, ներառելով նաև մասնավորը, խթանեց **միջնորդային (արբիտրաժի) և պայմանագրային** ինստիտուտների զարգացումը: Իշխողի հեղինակությունն ձեռք բերելու համար Հռոմի սենատը և կայսրը ստիպված էին հանդես գալ ժողովրդական համաձայնության յուրատեսակ ինստիտուցիոնալ շրջանակով՝ բացահայտելով պետականության և քաղաքացիական հասարակության միասնության և տարբերության եզրերը⁸⁰: Հանրույթների ինքնարտահայտման ապահովումը և նրանց միջև կապերի կազմակերպումը մտնում են կայսրության քաղաքական էլիտայի և համընդհանուր (ունիվերսալ) խորհրդանշանային կարգ կառուցող «մասնագետների» պարտականությունների մեջ⁸¹: Եվ պատահական չէ, որ հենց Հռոմեական կայսրության ընդերքում ծնվեց քրիստոնեական քաղաքակրթությունը՝ քաղաքական զարգացման գործընթացում իշխանական հարաբերությունների լեգիտիմացման որակապես նոր պրակտիկաներով:

Քրիստոնեական Եվրոպան, պահպանելով և ամրապնդելով Հռոմեական կայսրությունում ձևավորված իշխանական հարաբերությունների (Հռոմեական իրավունք) լեգիտիմացման սկզբունքները, քաղաքական կարգի ռացիոնալացման նկատառումներով ընթացակարգային իմաստով ձեռնամուխ եղավ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների տարանջատմանը: Չնայած դրան՝ իշխանության իրականացման ուղղահայաց և հորիզոնական կառուցակարգերը, ինչպես նաև նրանց համապատասխան «վստահելի վարկավորման» պրակտիկաները, համակարգվեցին համընդհանուր լեգիտիմացմամբ, որի հիմքում Աստծո (բացարձակ հեղինակություն) գաղափարն էր: Այս առումով ուշագրավ է արդեն Օգոստինոս Երանելու (354-430) կողմից ձևավորված «մարդկային շփման երկու ձևի»՝ «երկու քաղաք» (պետություն) հասկացությունների քննարկումը:

⁸⁰ Ильин М. В., Слова и смыслы. Опыт описания ключевых политических понятий. - М.: Российская политическая энциклопедия (РОССПЭН), 1997, с. 206, 324-325.

⁸¹ Эйзенштадт Ш., Революция и преобразование обществ. Сравнительное изучение цивилизаций / Пер. с англ. В. А. Гордона; науч. ред. пер. Б. С. Ерасов. М.: Аспект Пресс, 1999, с. 138.

Հակադրելով մարդկային համակեցության երկու տեսակները՝ «երկրային պետություն»՝ հիմնված ինքն իր նկատմամբ տաժած սիրո վրա՝ **«քամահրանքի հասնելով Աստծո հանդեպ»**, և երկնային հոգևոր համակեցություն՝ հիմնված Աստծո հանդեպ սիրո վրա՝ **«հասնելով քամահրանքի ինքն իր նկատմամբ»**, Օ. Երանելին որևէ հակասություն չի տեսնում աստվածային նախասահմանման սկզբունքի և մարդկային ազատության միջև: Դա բացատրում է նրանով, որ ազատությունն ասելով հասկանում է ոչ թե գործողության օբյեկտիվ անկախությունը, այլ անկախության ու ազատության օբյեկտիվ վերապրումը⁸²:

Միջնադարյան իմացաբանության համար բոլոր հիերարխիկ կապերը հարաբերական են, քանի որ Աստծո հետ անհատական հարաբերությունների առաջնայնության վրա հիմնված աշխարհիկ միասնականությունը բոլոր մակարդակներում գործող հոգևոր բարեպաշտության օգնությամբ ապահովում է աշխարհի ամբողջությունը: Կատարյալ պատկերացմամբ՝ աստվածային բարեպաշտությունը բաշխվում է բոլոր հավատացյալ անհատների միջև՝ անկախ նրանց սոցիալական և քաղաքական պատկանելությունից, Աստվածամարդու՝ Քրիստոսի, Հայր-Աստծո «միածին որդու» պատվիրաններին (օրենքին, իրավունքին) հետևելու միջոցով: Այդ իսկ պատճառով աստվածային հիերարխիայում յուրաքանչյուրը ծառայում է բոլորին, և բոլորը ծառայում են յուրաքանչյուրին: Նման իմացաբանական աշխարհայացքը հիմնվում է «բնական» մարդու «կրկնակի հարմարվողականության» պրակտիկայի վրա՝ երկրային և երկնային: Այդ պատճառով միջնադարի սոցիալ-քաղաքական հասկացությունների համակարգը զարգանում է ինչպես զուտ աստվածաբանական հիմքի վրա, այնպես էլ գիտակցության բնագիտական հիմնադրույթների համատեքստում: Միջնադարյան բոլոր քաղաքական կառույցները (թագավորություն, իշխանական տուն, քաղաք, միություն), իրենց հերթին կազմված բազում տարրերից, ընկալվում են որպես Աստծո հովանու ներքո քրիստոնյաների միության ավելի լայնածավալ՝ համընդհանուր մասեր: Երկնային սիմվոլների հիերարխիան սկզբունքորեն ներառում է հոգևորը և աշխարհիկը, որտեղ Եկեղեցին և Կայսրությունը տեսականորեն մեկ ընդհանրություն են կազմում՝ հանդիսանալով միասնական օրգանիզմի

⁸² История политических и правовых учений. Изд. 2-е, Под общ. ред. члена-корреспондента РАН В. С. Нерсисянца, М.: НОРМА-ИНФРА, 1998. с. 103.

երկու կողմեր, մարդու հոգևոր և մարմնական բաղկացուցիչների համանմանությամբ, բայց միաժամանակ պահպանելով հարաբերական ինքնությունություն՝ մարմնավորում են «Աստծո երթն աշխարհում»:

Դրա հետևանքով քրիստոնեական դոկտրինի համատեքստում հնարավոր եղավ սոցիալական կարգի հիմնավորման երկու հիմնական տարբերակ: Առաջինի դեպքում իշխանության վերնախավային աստիճանակարգը ղեկավարող Տիրակալը՝ որպես եկեղեցու պաշտպան և դատապաշտպան, մտնում է նրա հիերարխիայի մեջ և լեգիտիմացնում իր իշխանությունը՝ ստանալով բռնապետական քաղաքական պրակտիկաներին ձգտող աստվածային միջնորդի կարգավիճակ: Երկրորդի դեպքում, նույնիսկ աստվածային բարեպաշտություն ունենալով (օծվելուց հետո), Տիրակալն օժտվում է իշխանությամբ ոչ թե հոգիների, այլ բացառապես մարմինների նկատմամբ: Այս դեպքում Եկեղեցին, պահպանելով բարեպաշտության և «վստահության քվեի» իր բարձրագույն իրավունքը, Տիրակալի և Քրիստոսի միջև էական տարբերություն է դնում՝ Քրիստոսը **«հավերժ օծյալ է»**, իսկ երկնային Տիրակալը՝ **«ժամանակավոր օծյալ»**: Քաղաքական կարգի լեգիտիմությունը ապահովվում է **«Քրիստոսի մարմնի»** (*corpus Christi*) հեղինակությամբ, որի դերը ձգտում է ստանձնել կաթոլիկ Եկեղեցին: Այդ միջոցով իրականացվում է «Քրիստոսի միստիկական մարմնի» (*corpus mysticum Christi*) վերակազմավորում եկեղեցում ներփակված կղերական, վերնախավային և իրավաբանական հանրույթների յուրահատուկ սիմվոլի: Ձգտելով բազմապատկել և պահպանել իր աստվածային հեղինակությունը՝ այս ինստիտուտը քաղաքական զարգացման գործընթացում նպատակաուղղված սահմանազատում է կրոնական («հոգևոր») և կայսերական («աշխարհիկ») իշխանությունների հայեցակարգերը: Նման սահմանազատման տարբերակները բազմաբնույթ են՝ պայմանավորված այս կամ այն պատմական դարաշրջանի կոնկրետ քաղաքական զարգացման առանձնահատկություններով: Սակայն ամբողջ միջնադարի իմաստաբանությանը հատուկ են իշխանության բազմաչափությունը հիմնավորող ընդհանուր դրույթներ. «Երկրային քաղաք» և «Աստծո քաղաք»՝ Սուրբ Օգոստինոս, աստվածային օրենքի գերակայություն՝ Թ. Աքվինացի, որն ասում է. «Ամեն անձ պետք է հնազանդվի բարձր իշխանություններին, որովհետև չկա իշխանություն, որը Աստծուց չէ,

իսկ առկա իշխանություններն Աստծուց են կարգված»⁸³: Փաստորեն, եկեղեցու հեղինակության իսկությունն ապացուցվում է Եկեղեցու ամենուրեք տարածմամբ՝ որպես մարդկանց **համաշխարհային համաձայնություն (consensus gentium)**, որն արտացոլում է ամբողջ տիեզերքի միասնական Աստվածային կարգը:

Այս առումով ֆեոդալական պետությունների «հոգևոր» և «աշխարհիկ» իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա գործող աստվածաբանական լեգիտիմությունը սկզբունքորեն տարբերվում է անխուսափելիորեն բռնապետական կառավարում ենթադրող ավանդական կայսրությունների լեգիտիմությունից: Նման մոտեցմամբ տեսականորեն հիմնավորվում էր «ֆեոդալական քաղաքի» քաղաքական կարգի «կայսերական ուղղահայացը», որը խթանում էր հիերարխիկ կառույցներում դինամիկ բազմաձևությունն ապահովող «հորիզոնական» լեգիտիմացման ինստիտուտների սաղմերի ստեղծումը⁸⁴: Ընդգծելով աստվածային կարգի ամբողջականությունն ու հիերարխիկությունը՝ քրիստոնեական աստվածաբանությունը կամքի ազատության տեսությունների միջոցով, սոցիալական խմբերի համար միաժամանակ անուղղակիորեն «փրկության» ակնկալիքով ինքնուրույն դիրք գրավելու հնարավորություն էր ստեղծում: Սրանով իսկ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների տարանջատման շնորհիվ նրանք որոշակի ճկունություն են ձեռք բերում, քանի որ այդ երկու հիերարխիաներն իրավունք են ստանում գոյություն ունենալու զուգահեռաբար՝ ապահովելով և՛ ուղղահայաց, և՛ հորիզոնական շարժունակ լեգիտիմություն:

Ելակետ ունենալով պատմականորեն մշակված սկզբունքները՝ ավանդական, մոդեռն և պոստմոդեռն հասարակությունների քաղաքական զարգացման գործընթացն ուսումնասիրողներ Թ. Հոբսը, Ջ. Լոկը, Շ. Մոնտեսքյոն, Ֆ. Թոքսիլը, Է. Բյորքը, Դ. Բեյլը, Է. Սմիթը լեգիտիմության «աշխարհիկ» հայեցակարգի կայացման համար շրջադարձային են համարում **Ռեֆորմացիայի** շարժումը: Հիմք ընդունելով տիեզերքի քրիստոնեական մոդելը՝ այս շարժման տեսաբանները քաղաքական զարգացման գործընթա-

⁸³ История политических и правовых учений. Изд. 2-е, Под общ. ред. члена-корреспондента РАН В. С. Нерсисянца, М.: НОРМА–ИНФРА, 1998 с. 114.

⁸⁴ Эйзенштадт Ш., Революция и преобразование обществ. Сравнительное изучение цивилизаций / Пер. с англ. В.А. Гордона; науч. ред. пер.Б.С. Ерасов. М.: Аспект Пресс, 1999, с. 127-128.

ցում առաջարկեցին իշխանական հարաբերությունների լեգիտիմացման այնպիսի նախագծեր, որոնք արմատապես տարբերվում էին միջնադարյան լեգիտիմացման սկզբունքներից: Այն պետություններում, որտեղ հաղթեց Ռեֆորմացիան, փաստորեն տեղի ունեցավ **բացարձակ իշխանության** ընկալման կերպափոխում: Աստծո ողորմածության առաջ բոլորը հավասար են, իսկ հերոսությունն ասպետական սխրագործության մեջ չէ, այլ Աստծո Փառքի և Փրկության Հույսի համար ամենօրյա համբերատար աշխատանքի և խղճի ազատության (Բարձրյալի հետ շփումներում միջնորդներից ազատվելը): Հավասարության և պարզության պահանջները սկսեցին վերաճել բնական, Աստծո կողմից շնորհված իրավունքների պահանջի՝ **կյանքի, սեփականության, անձնական աշխատանքի արդյունքները տնօրինելու իրավունքի**: Այսպես հասունացավ համոզմունք, որ հասարակական համակեցության աղբյուրը միայն պետությունը չէ, այլ միմյանց հետ որոշակի պարտականություններով կապված, իսկ Աստծո նկատմամբ հավատով լցված քաղաքացիների կամավոր միությունները:

Այս իմաստով ուշագրավ է Ռեֆորմացիայի սկանավոր գործիչ, բողոքականության հիմնադիր Մարտին Լյութերի (1483-1546) դիրքորոշումը. ժխտելով եկեղեցու և հոգևորականության՝ որպես մարդու և Աստծո միջև միջնորդի դերը՝ նա ուշադրությունը կենտրոնացնում է խղճի ազատության և Բարձրյալի նկատմամբ յուրաքանչյուրի անհատական պատասխանատվության վրա. «Աստված ցանկանում էր և արեց այնպես, որ կառավարիչները, պայմաններից դրդված, հույսները դնեն իրենց վրա, այնպես, ինչպես յուրաքանչյուրն իրեն պետք է նվիրի իր գործին...»⁸⁵:

Այսպիսով՝ մինչև նոր դարաշրջանը կարելի է հաշվարկել իշխանական հարաբերություններում լեգիտիմության բազմաթիվ ու բազմաբնույթ աշխարհիկ և հոգևոր հայեցակարգեր՝ պայմանավորված ինքնիշխանության մեկնաբանման ու իշխանության իրականացման մշակույթի բնույթով: Նոր դարաշրջանի քաղաքական զարգացման տրամաբանությունը, ներառելով պատմության հոլովույթում ձևավորված իմաստային բազմաշերտություն ունեցող այնպիսի բարդ հասկացություններ, ինչպիսիք են «վստահությունը», «նվիրվածությունը», «ինքնակամությունը», «հիմնավորվածությունը», «արդարությունը», «լեզավությունը», «ինքնիշխանությունը», հանրագումարեց նոր

⁸⁵ Лютер Мартин, Избранные произведения. Санкт-Петербург, «АНДРЕЕВ И СОГЛАСИЕ» 1994, с. 159.

արժեքների հիման վրա հանրային և պետական իշխանություն իրականացնելու քաղաքականություն: Այս իմաստաբանական հիմքով ուղղորդվելով՝ նորագույն ժամանակների փիլիսոփայական, բարոյական, իրավաբանական, քաղաքական բանավեճերի բարդ դինամիկան ի վերջո հանգեցրեց «լեզվիտիմություն» հասկացության քաղաքացիական բովանդակության կայացմանը: Այս նկատառումներով, վերլուծելով 16-17-րդ դարերում Եվրոպայում իշխանության տարանջատման սկզբունքի հիման վրա ինքնորոշված քաղաքական տարածությունների կայացումը, Մ. Ֆուկոն նշում է, որ քաղաքական զարգացման գործընթացում իշխանության նոր կառուցվածքների հիմնավորումն ընթանում է բարերարության՝ որպես պետական գործի, գաղափարի հովանու ներքո («Պետության օրենքների և սրտի օրենքների միացում»), որտեղ իրավունքը թագավորում է «բարու գերակայության» անդրդվելի ուժի օգնությամբ, ինչն արդարացնում է կոշտ դիսցիպլինար կարգի կայացումը: Արդյունքում հաստատվում են այնպիսի հասարակական կառույցներ, որոնք հիմնված են քաղաքացիական օրենքի և բարոյական պարտականության սինթեզի վրա, իսկ վճիռները կայացվում են բարոյական սկզբունքների կարգի՝ իշխանության ֆիզիկական կարգի հիմքի վրա⁸⁶:

Անգլիական և Ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխություններից հետո տեղի ունեցավ «լեզվիտիմություն» հայեցակարգի իմաստաբանական ընդլայնում: Օրենսդիրները, գիտնականներն ու բարոյախոսներն են սկսում բանավեճեր՝ ուղղված «սոցիալական անբարոյության» աստիճանից կախված քրեական օրենքների կիրառման անհրաժեշտության հիմնավորմանը: Մա վկայում է հասարակական դաշինքի և խելամիտ օրենքների համընդհանրության վերաբերյալ աբստրակտ-իրավաբանական հռչակագրերի համատեքստում իշխանության «արդարացման» մշակութային բազմաձևության աճի մասին: Այս ամենը կապված է գաղափարախոսական լեզվիտիմության առաջացման հետ, որը մեկնաբանում է համընդհանրացումը՝ պայմանավորված բազմաբնույթ խմբերի կոնկրետ շահերով: Դա հնարավորություն է տալիս արտահայտել սոցիալական աստիճանակարգման «արդարացման» նրանց պահանջմունքը՝ միասնական իրավական-

⁸⁶ Фуко М., История безумия в классическую эпоху. -СПб.: Университетская книга, 1997, с. 90-92.

քաղաքական կարգի պայմաններում⁸⁷:

Հանցագործությունների կանխումը, դատավարության արարողակարգերի կանոնների և պատիժների սանդղակի հաստատումը հանգեցնում են գաղափարախոսական բանավեճերի, ինչն արդեն իսկ հստակ մատնանշվել է ֆրանսիացի փիլիսոփա Դեստյուտ դե Տրասին (1754 1836): «Գաղափարախոսական իշխանությունը»՝ որպես մտքերի վերահսկման իմաստաբանական տեխնիկա, ավելի արդյունավետ էր, քան առասպելաբանական կամ դիցաբանական լեգիտիմությունը: «Քաղաքացիների գիտակցության մեջ ձևավորելով մտքերի շղթա՝ դուք կարող եք հպարտանալ նրանով, որ կատարում եք նրանց առաջնորդների և տերերի դերը,- նշում էր Դ. Մ. Սերվանը (1767)»⁸⁸: Իշխանության լեգիտիմության կրոնական-առասպելական ձևն այստեղ էլ բավական լայնորեն կիրառվում է՝ հարմարեցվելով խմբային շահերին: 18-րդ դարից սկսած՝ «Նորմի իշխանությունը» միանում է «Օրենքի, Բառի, Տեքստի, Ավանդույթի, Խղճի, Մշակույթի և Սեքսի իշխանություններին»՝ պարտադրելով նրանց նոր սահմանադրումներ⁸⁹: Փաստորեն, 20-րդ դարի սկզբին տեղի է ունենում «աստվածների», այսինքն՝ իշխանական իրավասությունների ամբողջությամբ հավակնող համընդհանուր հեղինակության «վախճան»: Հնարավորություն է ստեղծվում մարդկանցից և նրանց պրակտիկաներից անմիջականորեն կախում ունեցող «բազմաթիվ մարդակենտրոն աստվածների» արարման համար⁹⁰: Վերջինս էլ քաղաքական զարգացման գործընթացում պատմական հիշողության հատվածայնությունը և առասպելականությունն ընդգծելու նպատակով արդիականացնում է տեղեկատվության և հաղորդակցության համակարգը՝ լեգիտիմության հիմնախնդրի բազմաչափ բացահայտման գիտական չափանիշների մշակման նկատառումներով:

Լեգիտիմության տիպերի տարածական ընդարձակումը: Քաղաքական

⁸⁷ Фуко М., Интеллектуал и власть: Избранные политические статьи, выступления и интервью. Часть 2, Пер. с франц. . Окунево по обще ред. Б. М. Скуратова, М.: Праксис, 2005, с. 404-405.

⁸⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 150:

⁸⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 267- 268:

⁹⁰ Московичи С., Машина, творящая богов. / Пер. с фр. Т. П. Емельяновой, Г. Г. Дилигенского, Научный ред. А. И. Донцов, М.: «Центр психологии и психотерапии», 1998, с. 110-111.

գարգացման գործընթացում կառավարողների կողմից իրականացվող իշխանության լեգիտիմության հիմնախնդիրները համակարգված ուսումնասիրել է Մ. Վեբերը (1864-1920): Ըստ նրա՝ պատմության հոլովույթում ձևավորված լեգիտիմությունը՝ որպես սոցիալ-հոգեբանական երևույթ, ենթադրում է կառավարողների և կառավարվողների միջև դերային գործառույթների հասակեցում՝ հիմնված **հավատի, կամքի և աջակցության** վրա: Մինչև Մ. Վեբերը «լեգիտիմություն» և «լեգալություն» հասկացություններն իմաստաբանորեն նույնացվելով՝ դիտարկվում էին որպես լատինական *lex (legis)* «օրենք» բառի հոմանիշներ, որը մեկնաբանվում էր որպես գրված իրավունք: Իշխանության իրականացման մշակույթի վերլուծության ժամանակ Մ. Վեբերը ձգտում է հաղթահարելու հայեցակարգման աստվածաբանական, փիլիսոփայական և իրավաբանական մոտեցումների միակողմանիությունը, երբ լեգիտիմությունը հիմնվում է ավանդույթի, «աստվածային» կամ «բնական» իրավունքի, օրենքներին ձևականորեն հետևելու միջոցով: Առաջին դեպքում լեգիտիմությունը դիտվում է լեգալությունից բարձր, երկրորդում հանդես է գալիս որպես նրանից բխող: Այս համատեքստում, ըստ Մ. Վեբերի, գերիշխանությունը տարաբնույթ գաղափարախոսական դրույթներում ամրագրված «բազմաթիվ հավատամքներ» ամփոփած մարտահրավերի պատասխանն է: Նկատի ունենալով այս ամենը՝ ֆրանսիացի քաղաքագետ Դ. Կոլան գրել է. «...Ամբողջ տեսությունը հիմնված է հավատի վրա»⁹¹: Որպես այդպիսին՝ այն ոչ թե ուժերի պարզունակ հարաբերակցության արդյունք է, այլ կոռ կառուցակարգ, որը «...համարյա պայմանավորված չէ առանձին անձանց վարքաբանությամբ»⁹²:

Ուսումնասիրելով երեք տիպի գերիշխանություն (**ավանդական, խարիզմատիկ, ռացիոնալ-իրավական (լեգալ)**)՝ Մ. Վեբերը նպատակամետ հարցադրում է կատարում. նրանցից որի⁹³ն է պատկանում առավելագույն ուժը և ինչո՞ւ: Միանշանակ պատասխան չտալով իր իսկ առաջադրած հարցին՝ Մ. Վեբերը գալիս է այն եզրակացության, որ ռացիոնալ գերիշխանությունն առավել արդյունավետ կարելի է դարձնել՝ այն ամրապնդելով խարիզմայով և ավանդույթով: Ահա թե ինչ է գրում նա. «...Հավերժ արժեքի հեղինակություն, բարքերի հեղինակություն: Այնուհետև՝ անհատական հեղինակություն, առաջնորդին լիարժեք անհատական նվիրվածություն և վստահություն՝ նրա

⁹¹ Доминик Кола, Политическая социология М.: Весь мир; ИНФРА-М.- 2001. с. 91.

⁹² Տե՛ս նույն տեղում, էջ 96:

որակով, տեսակով՝ խարիզմայով պայմանավորված: Եվ վերջապես՝ ռացիոնալ կերպով ընդունված օրենքներով պայմանավորված գերիշխանությամբ՝ հիմնված բանիմացության, հավատի և հեղինակության վրա»⁹³:

Գերապատվությունը տալով իրատես գերիշխանությանը՝ Մ. Վեբերը կառավարման գործընթացում կարևորում է բյուրոկրատիայի դերը. «Աստիճանահարթակի վերին մասում նստած է կա՛մ իշխանությունը ժառանգած միապետը, կա՛մ ժողովրդի կողմից ընտրված նախագահը, կա՛մ խորհրդարանական արիստոկրատիայի կողմից ընտրված լիդերը: Ճիշտ է, քաղաքականությունը մշակվում է նրանց կողմից, սակայն ամենօրյա աշխատանքն իր բարդությամբ և բազմաչափությամբ հատուկ ապարատի օգնությամբ իրականացնում են բյուրոկրատները»⁹⁴: Հենց այս նկատառումներով էլ Պ. Սորոկինը գրում է. «Ինչպես երևում է, պատահական չէ, որ Մ. Վեբերն իրեն թույլ տվեց ենթադրել, որ ապագան պատկանում է բյուրոկրատիային, այսինքն՝ բարձր կատեգորիայի ծառայողների դասակարգին»⁹⁵:

Իրականացվող գերիշխանության լեգիտիմության կառուցակարգը քննարկելով կոնկրետ պատմամշակութային արժեքների հիմքի վրա՝ Մ. Վեբերը կատարեց հետևյալ ընդհանրացումը. «Բյուրոկրատիան միայն արևմտյան հասարակություններին հատուկ չէ... Ցանկացած հասարակություն, եթե ուզում է գերծ մնալ ավելորդ հակասություններից, պետք է ունենա կիրթ, բարոյական սկզբունքներ ունեցող բյուրոկրատիա»⁹⁶: Ըստ Վեբերի՝ բյուրոկրատ կարող է լինել այն անձը, որը՝ 1) ունի մասնագիտական կրթություն և այդ պաշտոնում աշխատում է կնքված համաձայնագրի համապատասխան, 2) իշխանություն է իրականացնում պաշտոնական (պետական) օրենքների հիման վրա. նրա ընտրյալությունը որոշվում է պաշտոնական պարտականությունների կատարման ժամանակ

⁹³ Вебер М., Критические исследования в области логики наук о культуре.-Избранные произведения: Пер. с нем./Сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова; Предисл П. П. Гайденко.—М.: Прогресс, 1990.. с. 481.

⁹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 484:

⁹⁵ Сорокин П., Человек, цивилизация, общество / Под ред. А. Ю.Согомонова. М.: Политиздат, 1992, с. 369.

⁹⁶ Вебер М., Критические исследования в области логики наук о культуре. - Избранные произведения: Пер. с нем./Сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова; Предисл П. П. Гайденко.—М.: Прогресс, 1990, с. 442.

օրինապահության պահպանմամբ, 3) տվյալ պաշտոնում նշանակվելիս հաշվի է առնվում մասնագիտական որակավորման աստիճանը, 4) աշխատում է ոչ թե դեպքից դեպք, այլ անընդհատ, 5) ունի մասնագիտական հպարտություն և աչքի է ընկնում ջանասիրությամբ: Բյուրոկրատիայի տեսության մեջ Մ. Վեբերը տարբերակեց «իշխանություն» և «գերիշխանություն» հասկացությունները: **Գերիշխելը կառավարողների և կառավարվողների միջև եղած այնպիսի հարաբերություն է, որտեղ առաջինը պարտավորեցնող հրամանների միջոցով երկրորդին թելադրում է իր կամքը:** Փաստորեն, գերիշխանությունը քաղաքականորեն ամրագրված **կարգ է**, որի դեպքում ընտրյալ փոքրամասնություն կազմող կառավարողները հրամայում են, իսկ մյուսները՝ ենթարկվում: Այսպիսի **կարգը** պետք է ներդաշնակի քաղաքական էլիտայի, հասարակության տարբեր շերտերի, ցանկալի է՝ ամբողջ ընտրազանգվածի շահերին:

Այս հիմքի վրա Մ. Վեբերը մշակել է «իդեալական տիպերի» տեսությունը, համաձայն որի՝ լեգիտիմ իշխանություն իրականացնողը հնարավորություն է ստանում դասակարգելու կառավարման ընթացքում ստացած փորձնական նյութը՝ այն փոփոխության ենթարկելով կամ նոր տեքստ գրելով գերիշխանություն իրականացնել: Այս նկատառումներով Չ. Միլը կարևորել է «գերիշխանության սիմվոլները»՝ համաձայնելով Պ. Բուրդյոյի՝ այս սիմվոլները մենաշնորհելու և հասկացությունը փաթեթավորելու տեսակետին⁹⁷: Իսկ ըստ Թ. Պարսոնսի՝ լեգիտիմության հիմքը վախի զգացումից հարաբերականորեն անկախ գերիշխող արժեքային կողմնորոշումներն են⁹⁸:

Այս հեղինակները ելակետ են ընդունել Մ. Վեբերի այն դրույթը, թե «իդեալական տիպերը» չեն արտացոլում իրականությունը, դրանք միայն միջոց են գերիշխման ժամանակ կուտակված փաստերի գուգամիտման համար. արժեքային մի համակարգ, որի հետ ուսումնասիրողը համեմատում է իրականությունը: Իր բովանդակությամբ «իդեալական տիպերի» տեսությունն ուղղված էր հասարակական-տնտեսական ֆորմացիաների մարքսիստական ուսմունքի դեմ: Համաձայն «իդեալական տիպերի» տեսութ-

⁹⁷ Миллс Ч. Р., Социологическое воображение/ Пер. с англ. О. А. Оберемко под ред. Г. С. Батыгина. М.: Стратегия, 1998. с. 49.

⁹⁸ Парсонс Т., Система современных обществ / Пер. с англ. Л. А. Седова и А. Д. Ковалева. Под ред. М. С. Ковалевой. М.: Аспект Пресс, 1997, с. 28.

յան՝ իշխանության լեգիտիմության համար որոշիչը հասարակության **տնտեսական կյանքի, տարբեր սոցիալական խմբերի և կրոնական գիտակցության** միջև առկա կապերի բացահայտումն ու վերլուծությունն է: Մեծ տեղ հատկացնելով սոցիալական կառուցվածքին և դասակարգային բախումներին՝ Վեբերը մարքսիզմի պրոլետարական հեղափոխության (հատկապես պրոլետարիատի դիկտատուրայի) տեսությանը հակադրում է իր տեսակետը, որ տեղ ընդգծում է հասարակության մեջ դասակարգային տարբերությունների բազմաձևության անհրաժեշտությունը՝ իշխանության լեգիտիմության հաստատման համար: Մ. Վեբերն ի սկզբանե մերժեց խորհրդային հասարակության լեգիտիմությունը՝ համարելով, որ գործող սիմվոլների պայմաններում իրականացվող իշխանությունը ոչ միայն լեգիտիմություն, այլև նույնիսկ լեգալություն չունի⁹⁹:

Այսպիսով՝ իշխանությունը լեգիտիմ է, եթե այն համապատասխանում է իրավունքի և արդարության մասին մարդկանց գաղափարներին, դրանց հիմքում ընկած արժեքներին ու նորմերին, որոնց վրա հիմնվում է բոլորի կողմից ընդունված պետական իշխանությունը: Քաղաքական զարգացման գործընթացում յուրաքանչյուր պետական իշխանություն վստահության՝ լեգիտիմության կարիք ունի: Այն կարող է էվոլյուցիոն զարգացում ապրել և հարատևել որպես գլխավոր քաղաքական արժեք ոչ միայն փոխհարաբերության, այլև հոգեբանական ու ֆիզիկական ներգործության և, առավել ևս, ահաբեկչության միջոցով: Քաղաքական էլիտայի իշխանությունը լեգիտիմ է, եթե՝ ա) բխում է ժողովրդից և իրագործվում է մեծամասնության կամքին համապատասխան. այսինքն՝ պետական իշխանություն ունեցողն ուղղակի կամ անուղղակի ընտրված է ժողովրդի կողմից որոշակի ժամանակով և նրա կողմից էլ կարող է վերահսկվել, բ) պետական իշխանությունն իրականացվում է սահմանադրական սկզբունքներին համապատասխան:

Իշխանության լեգիտիմության էության մեջ որոշիչը գերիշխանության արժեշահային համակարգի քաղաքական բովանդակությունն է, որը պետական իշխանության իրականացման մակարդակով արտացոլում է տարբեր տիպի էլիտաների վերաբերմունքը միայնաց նկատմամբ: Այս ամենը նկա-

⁹⁹ Вебер М., Протестантская этика и дух капитализма.- Избранные произведения: Пер. с нем./Сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова; Предисл П. П. Гайденоко.—М.: Прогресс, 1990, . с. 122.

տի ունենալով՝ Մ. Վեբերը գերիշխանության և իդեալական տիպերի տեսության շրջանակներում համակարգել է հպատակեցման դրդապատճառների առանձնահատկություններն արտահայտող եռաստիճան՝ ավանդական, խարիզմատիկ, ռացիոնալ-իրավական (լեգալ) դասակարգման օգնությամբ¹⁰⁰:

Ամփոփենք. քանի որ Մ. Վեբերը արդյունաբերական հասարակության կառավարման կառուցակարգի մշակողներից է, նրան հետաքրքրել են գերիշխանությունը և տիրապետումը: Այս տեսանկյունից նա կարևորել է իշխանության լեգիտիմության բովանդակությունը, քանի որ այն պայմանավորված է քաղաքական էլիտայի որակով: «Իշխանությունը՝ որպես գերիշխանություն, սոցիալական փոխհարաբերությունների ժամանակ ընտիր դերասանի կողմից սեփական կամքի իրականացման հնարավորությունն է՝ հակառակ ընդդիմության»¹⁰¹: Կյանքի վերջին տարիներին վերջնականապես կողմնորոշվելով դեպի առաջնորդի՝ հանրաքվեի միջոցով ստացած լեգիտիմությամբ խորհրդարանական ժողովրդավարության ներքո գործող էլիտայի համալրման գաղափարը՝ Մ. Վեբերը կարծում էր, որ միայն ողջ ժողովրդի կողմից ընտրված քաղաքական առաջնորդը կարող է անմիջականորեն դիմել նրան: Փաստորեն, լեգիտիմ գերիշխանության տիպերի միախառնման արդյունքում Մ. Վեբերն առաջարկում է լեգիտիմության նոր ձև՝ **«առաջնորդի պլեբիսցիտար (հանրաքվեի միջոցով ստացված) ժողովրդավարություն»**, որտեղ գերակա է հեղափոխականացվող մեծ ուժ ունեցող խարիզմատիկ առաջնորդի **կամքի** գերիշխանությունը¹⁰²:

Լեգիտիմության վերերյան հայեցակարգը ենթարկվել է մասնակի քննադատության՝ չնայած մինչև օրս էլ օգտագործվում է որպես մեթոդաբանական ուղեցույց քաղաքական գերիշխանության ժամանակ լիդերների և էլիտաների իրականացրած իշխանության մշակույթի հետազոտությունների համար: Գերմանացի գիտնականի առաջարկած հիմնադրույթի քննադատության հիմքերը տարբեր են: Մեթոդաբանական տեսանկյունից նշվում են լեգիտիմության երեք հիմնական տեսակների առանձնացման պայմանականությունը և լեգիտիմացման ժամանակակից պրակտիկաների վերլուծության հա-

¹⁰⁰ Вебер М., Профессиональная этика аскетического протестантизма. - Избранные произведения, Пер. с нем./Сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова; Предисл П. П. Гайденко. - М.: Прогресс, 1990 М., 1990. с. 140-141.

¹⁰¹ Տե՛ս նույն տեղում, էջ 152:

¹⁰² Տե՛ս նույն տեղում, էջ 152- 153:

մար նրանց զուգամիտումները: Ուշադրությունը կենտրոնացվում է իշխանության առաջարկվող մեկնաբանության միակողմանիության և, համապատասխանաբար, լեգիտիմացման գործընթացի վրա: Մ. Վեբերին կշտամբում են նաև լեգիտիմության իրական հիմքերի վերլուծությունը գերակայող հավատամքների հետազոտությամբ փոխարինելու համար: Սակայն գերիշխանության տեսության և լեգիտիմության փոխհարաբերությունների բազմաշերտությունը բացահայտելու նկատառումներով անհրաժեշտ է նշել, որ Մ. Վեբերին հասցեագրված քննադատությունը միակողմանի է, քանի որ հենց ինքն իր «իդեալական տիպերի» տեսության շրջանակում ուսումնասիրել և օգտագործել է «լեգիտիմություն» հասկացությունը տարբեր ենթատեքստերում՝ մի դեպքում հարմարեցնելով, մյուս դեպքում կերպավորելով, երրորդ դեպքում արդիականացնելով նրա բովանդակությունը՝ պայմանավորված քաղաքական զարգացման գործընթացների առանձնահատկություններով:

Լեգիտիմության հիմնախնդիրը ժողովրդավարական հասարակություններում: Քաղաքական ազատության և ժողովրդավարության գաղափարախոս Ռ. Արոնը այն քչերից է, որը քննադատել է Մ. Վեբերին. «...Նա բոլորից վեր է դասում ոչ թե ժողովրդավարությունը կամ մարդու ազատությունը, այլ իր երկրի ազգային վեհությունը, որին հասնելու համար, որպես փրկության միջոց, կարևորվում է առաջնորդի խարիզմատիկ գերիշխանությունը բյուրոկրատիայի անանուն թագավորության դեմ»¹⁰³: Ըստ Ռ. Արոնի՝ Մ. Վեբերը հստակ չի տարբերակել խարիզմատիկ կառավարման սահմանները¹⁰⁴: Բացի դրանից, Մ. Վեբերի ուշադրությունից վրիպել է այն հանգամանքը, որ հանրաքվեի ճանապարհով ընտրված լիդերը կարող է դաշինք կնքել բյուրոկրատիայի հետ, ինչը, ըստ Ռ. Արոնի, գործնականում տեղի ունեցավ 20-րդ դարի ամբողջատիրական և մենիշխանական վարչակարգերում: Վերանայելով Մ. Վեբերի մոտեցումները՝ անգլոսաքսոնյան (Դ. Իստոն, Մ. Լիփսեթ) և ֆրանսիական (Ռ. Արոն, Ժ. Շաբոն) դպրոցի ներկայացուցիչները միաձայն եկան այն եզրակացության, որ քաղաքական արդիականացման գործընթացը կարիք ունի ընտրազանգվածի ինչպես մասնակցության, այնպես էլ վստահության և

¹⁰³ Арон Р., От Сараево до Хиросимы // Арон Р., История двадцатого века. Антология. М.: Ладомир, 2007. с. 71-152.

¹⁰⁴ Арон Р., Этапы развития социологической мысли / пер. с франц. М.: Прогресс, 1993. С. 315-397.

աջակցության: Քաղաքական համակարգի ինստիտուտների նկատմամբ ունեցած աջակցությունը հաստատում է նրա գոյության օբյեկտիվությունը և, որ ամենակարևորն է, հավատը համակարգի լեգիտիմության նկատմամբ: Դ. Իստոնը լեգիտիմությունը դիտարկում է արդարության և ճշմարտության (իսկության) հետ համատեղ¹⁰⁵: Լեգիտիմությունն այն փաստի արտահայտությունն է, համաձայն որի՝ անհատն ակնհայտ կամ ոչ ակնհայտ ընկալում է քաղաքական օբյեկտը՝ իր բարոյական սկզբունքներին համապատասխան, իսկ արդարության և ճշմարտության նրա սեփական պատկերացումները համընկնում են քաղաքական դաշտում առկա արդարության և ճշմարտության հետ: Կատարելով քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ վերլուծություն՝ Դ. Իստոնը ստեղծեց լեգիտիմության նոր և առավել գործառնական հայեցակարգ, որի օգնությամբ հնարավոր դարձավ այն ուսումնասիրել կուտակված փորձաքարական նյութի համակարգման միջոցով¹⁰⁶: Համաձայն Դ. Իստոնի հայեցակարգի՝ քաղաքական համակարգի աջակցությունը կարող է տարբեր լինել՝ ինչպես ըստ օբյեկտի բովանդակության, այնպես էլ ըստ գործունեության ժամանակի: Պայմանավորված ժամանակի բովանդակությամբ՝ Դ. Իստոնն առաջարկեց տարբերակել աջակցության երկու տիպ՝ **անորոշ և հատուկ**¹⁰⁷: Առաջինի դեպքում քաղաքական կարգը, անկախ իր գործունեության արդյունքներից, աֆեկտի վրա հիմնված առավել ընդհանուր աջակցություն է ստանում: Այս պարագայում լեգիտիմությունը հիմնված է **հավատի և վստահության** վրա: Երկրորդ դեպքում իշխանությունը լեգիտիմ է համարվում այնքան ժամանակ, քանի դեռ նրա գործողություններն արդյունավետ են, ինչի արդյունքում նրա նկատմամբ ցուցաբերվում է **գործիքային, կարճաժամկետ և գիտակցված աջակցություն**: Փաստորեն, քաղաքական էլիտայի իրականացրած իշխանության նկատմամբ ունեցած երկարաժամկետ և կարճաժամկետ աջակցությունը համակարգը կարող է զերծ պահել անկայունությունից (նույնիսկ ճգնաժամից, քառսից), եթե նրա առանձին ինստիտուտները (կուսակցություն, քաղաքական լիդեր, էլիտա), կենտրոնացնելով իրենց ուժերը, կարողանան կերպափոխվել և կանխել լեգիտիմության արդեն

¹⁰⁵ Easton, D., The Political System: An Inquiry into the State of Political Science, New York: Alfred A. Knopf, 1953, p. 10.

¹⁰⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 80:

¹⁰⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 100-101:

սկսված քայքայումը: Այս նկատառումներով Դ. Իստոնը տարբերակում է լեզվափոխության երեք աղբյուր՝ **գաղափարախոսություն, կառուցվածք և անձնական հասկություններ**: Համաձայն աղբյուրների՝ դիտարկվում է լեզվափոխության երեք մակարդակ՝ **գաղափարախոսական, կառուցվածքային և անձնավորված**:

Գաղափարախոսականը համակարգում է այն գաղափարները, արժեքները և նորմերը, որոնք տարբերակում են քաղաքական վարչակարգերը: Փաստորեն, այս լեզվափոխությունը հիմնվում է քաղաքացիների այն համոզմունքների վրա, ըստ որոնց՝ իրենց դավանած գաղափարները, ընդունած արժեքներն ու նորմերը ճշմարիտ են և արդար:

Կառուցվածքային լեզվափոխությանը բնորոշ է քաղաքացիների այն ճշգրտված դերային վերաբերմունքը քաղաքական վարչակարգի կառուցվածքի, նորմերի և իշխանական հարաբերությունների հանդեպ: Այս լեզվափոխության համար առանձնահատուկ տեղ ունեն քաղաքացիների համոզմունքները, որոնց համաձայն՝ առկա քաղաքական համակարգն իր կառուցվածքից արդյունավետ կերպով կարողանում է իր պահանջներին համապատասխան արժեքներ **ստեղծել և իրականացնել**: Այս լեզվափոխությունը ենթադրում է քաղաքական համակարգի օպտիմալացված կառուցվածք և մերժում է քաղաքական ժամանակի մեջ չորոշակիացված դեգերումների գործընթացը:

Անձնավորված լեզվափոխության հիմքում քաղաքացիների համոզվածությունն է, որ տվյալ քաղաքական գործիչը (նաև էլիտան) «լավ է խաղում իր դերը», որ տվյալ քաղաքական գործիչի անձնական ունակությունները համապատասխանում են նրա իշխանությամբ թելադրված դերակատարներին, իսկ դերակատարները կարողանում են համոզել քաղաքացիներին, որ իրենք անփոխարինելի են: Այս լեզվափոխությունն իր զգայական երանգավորմամբ կարողանում է կանխել քաղաքական գործընթացի անդեմությունը: Մակայն լեզվափոխությունը չի ենթադրում միայն քաղաքացիների համոզվածություն: Առկա լինելով պատմական զարգացման գրեթե բոլոր փուլերում՝ այն ամբարում էր փոխադարձ գործողություններ, որոնք պարուրված էին ինչպես ոգեղենությամբ, այնպես էլ իրատեսական փոխադարձ պատասխանատվությամբ և պարտավորություններով, որոնց հիմքում «գոհաբերություն (տրամադրում)-ակնկալիք» շարունակականության ապահովումն էր: Կարևոր է այն, որ այս հարաբերություններում «ակնկալիքը» իշխանությունը

կրողի կողմից մշտապես դիտարկվել է ոչ թե որպես բարի կամքի դրսևորում, այլ որպես «գոհաբերողի (տրամադրողի)» հստակ իրավունքը իշխանությունը կրողի նկատմամբ: Այս համատեքստում արժեքավոր է Մ. Մոսսի դիտարկումը. «Կասկած չի հարուցում այն, որ սովորաբար մինչև որոշակի աստիճանի գոհաբերությունները պարզևներ էին, որոնք հավատացյալին օժտում էին իրավունքով իրենց Աստծո նկատմամբ»¹⁰⁸:

Հանգամանալից ուսումնասիրելով Մ. Վեբերի և Դ. Բստոնի պատկերացումները լեգիտիմության մասին՝ ակնհայտ է, որ Դ. Բստոնի համար իշխանությունը միայն ռացիոնալ չէ, ինչպես կարծում է Մ. Վեբերը, այն լեգիտիմ է, եթե համապատասխանում է քաղաքացու անձնական, բարոյական սկզբունքներին: Լեգիտիմության նման ընկալումը կարևորում է քաղաքացիների ակտիվ դերը և պատասխանատվությունը լեգիտիմացման գործընթացում՝ նրանց վերապահելով իշխանությունների գործունեությունը լեգիտիմ կամ ոչ լեգիտիմ ճանաչելու վերաբերյալ վերջնական որոշում ընդունելը: Հարցի նման ընկալումը հիմք ընդունելով՝ Մ. Լիփսեթը կարևորեց կառավարողների իշխանության լեգիտիմության և արդյունավետության փոխհարաբերությունները¹⁰⁹: Ելնելով այն փաստից, որ լեգիտիմության հիմնախնդրի բովանդակությունը, տարաբնույթ հեղափոխություններով և ժողովրդավարացման գործընթացով պայմանավորված, դարձել է ծայրահեղ բազմիմաստ, Մ. Լիփսեթը, ըստ վեբերյան ավանդույթի, լեգիտիմությունը սահմանում է որպես համակարգի, բնակչության և սոցիալական խմբերի հավատը առ այն, որ գոյություն ունեցող քաղաքական ինստիտուտներն առավելապես արտահայտում են տվյալ հասարակության ակնկալիքները: Միաժամանակ նա լեգիտիմությունը կապում է սոցիալական ինստիտուտների զարգացման արժեքային դինամիկայի հետ¹¹⁰: Լեգիտիմությունը՝ որպես պետության պատասխանատվություն, գոյություն ունեցող կանոնակարգված սահմանադրական կարգի պահպանման համար, փաստորեն, իրականացվում է մի քանի արարողակարգերի միջոցով՝ հաշվի

¹⁰⁸ Мосс Марсель, Социальные функции священного / Избранные произведения. Пер. с франц. под общей ред. Утехина И.В. Научная редакция Утехин И. В. и Геренко Н. М. Составление Трофимов В. Ю. – СПб. “Евразия” 2000, с. 10.

¹⁰⁹ Lipset S., Political Man. The social bases of politics. Doubleday, New York, 1960. p. 240, <https://www.scribd.com/doc/233891534/Seymour-Martin-Lipset-Political-Man-The-Social-Bases-of-Politics>

¹¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 64:

առնելով հասարակության հիմնական սոցիալական խմբերի շահերը: Փաստորեն, Ս. Լիփսեթը լեգիտիմության հիմնախնդիրը մեկնաբանելիս, ճիշտ է, տեսականորեն առանձնացնում է կառավարման արդյունավետության և լեգիտիմության հիմքերը, սակայն, ըստ էության, դրանք դիտարկում է սերտորեն փոխկապակցված¹¹¹:

«Քաղաքական մարդը» դասական գրքում Ս. Լիփսեթը պնդում է. «Լեգիտիմությունը ենթադրում է, որ (քաղաքական) համակարգը պետք է կարողանա ստեղծել ու պահպանել այն հավատը, որ գոյություն ունեցող քաղաքական հաստատություններն ամենից համապատասխանն են տվյալ հասարակությանը»¹¹²: Համաձայն Ս. Լիփսեթի՝ արևմտյան հասարակությունները ստիպված են եղել գործ ունենալ երեք դժվար և ապակայունացնող խնդրի հետ՝

1. եկեղեցու կամ տարբեր կրոնների դերը պետության մեջ,
2. աշխատավոր դասի տնտեսական և քաղաքական լիակատար իրավունքների ճանաչումը,
3. ազգային եկամտի բաշխման համար շարունակվող պայքարը:

Ռ. Արոնը, Դ. Իստոնը և Ս. Լիփսեթը, մեկնաբանելով Մ. Վեբերի «գերիշխանության տեսությունը»՝ ըստ պոստմոդերնիստական անընդհատ փոփոխվող իրականության, փաստորեն համակարգային վերլուծության են ենթարկում լեգիտիմությունը:

Մեր կարծիքով, բացի քննարկված ձևերից, քաղաքական զարգացման արդյունավետությունը կարելի է որոշել նաև լեգիտիմացման այլ եղանակներով ու տեսակներով: Այդ իմաստով նրանցից առավել ուշագրավը ազգային արժեհամակարգի քաղաքական էության արդիականացմամբ պայմանավորված լեգիտիմությունն է, որը հակված է ազգային գաղափարի մրցունակության բարձրացման միջոցով իրականացնելու իշխանության բնականոն արդիականացում:

Ազգային գաղափարի օգնությամբ հիմնավորվում է իշխանության լեգիտիմության համապատասխանությունը ժողովրդի, ազգի կամ հասարակության արժեքային համակարգին: Որոշիչն այն է, թե ազգային գաղափարը արժեշահային համակարգի որ շերտն է օգտագործում, ում և ինչ է արժևորում կամ վերարժևորում: Իշխանության լեգիտիմությունը՝ որպես

¹¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 68:

¹¹² Տե՛ս նույն տեղում, էջ 43, 50, 54:

արժեաշահային համակարգի հաստատման հնարավորության կառուցակարգ, երկակի վիճակ ունի. առաջին դեպքում հաստատվում է գաղափարի իշխանություն, երկրորդ դեպքում՝ իշխանության (հատկապես գերիշխանության) գաղափարը: Երկու դեպքում էլ լեգիտիմացվող իշխանությունը ենթարկվում է որոշակի կադապարի:

Գաղափարի իշխանությունը որոշակի կարգախոսային բովանդակությամբ ձնշում և բնեռացնում է հասարակության տարբեր ենթաշերտեր՝ «...շահարկելով նրանց վարքաբանության արժեքային համակարգը, շեղումները դրանից և իհարկե՝ անհատական հոգեբանական որպիսության առանձնահատկությունները»¹¹³: Իշխանության գաղափարի կարգախոսային և վարքաբանական շահարկումը հասարակությանը հնարավորություն չի տալիս քաղաքական իրականությունը ռեալ գնահատելու՝ իր ելքի և մուտքի բազում տարբերակներով: Հաստատված իշխանությունը դառնում է ինքնանպատակ, իսկ իշխանություն իրականացնողները՝ «ինքնիշխաններ»: Ստեղծվում է օտարված վիճակ իշխանության գաղափարն իրականացնող, կառավարող ընտրախավի և նույն այդ գաղափարի դրոշի ներքո կառավարվող սոցիալական ենթաշերտերի միջև:

Ինքնիշխանությունը, իր իսկ ծնած օտարվածությունը զանգվածների ենթագիտակցությանն ուղղելով, բախումներից խուսափելու համար շահարկում է գաղափարը: Վերջինիս տրվում է տնտեսական, քաղաքական, հոգևոր, ազգային բովանդակություն՝ ելնելով նրանց էլիտաների տրամաբանական, գաղափարական և ինտելեկտուալ առանձնահատկություններից: Այդ իմաստով ուշագրավ են գաղափարի իշխանության շահարկման նրբերանգները, որոնք որոշիչ դեր ունեն գերիշխանության իրականացման համար: Քաղաքակրթության փորձն ապացուցում է, որ այս կառուցակարգն ունի դրսևորման հետևյալ ձևերը՝ **դասակարգային, պետական, ազգային, քաղաքացիական**: Եթե քաղաքական զարգացման գործընթացում դրանցից որևիցե մեկը գերակայում է կամ անտեսվում, ապա նպաստավոր պայմաններ են ստեղծվում մարգինալության համար: Նման մոտեցման օգնությամբ հնարավորություն ենք ստանում բացահայտելու արժեշահային համակարգի քաղաքական էությամբ ու պետության

¹¹³ Теория и методы в современной политической науке: Первая попытка теоретического синтеза / под ред. С. У. Ларсена; (пер. с англ. Е. Л. Жуковой). - М. Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2009. - 351 с.:

իշխանության որակով պայմանավորված լեգիտիմությունը և այդ համատեքստում դիտարկելու մարզինալությունը՝ որպես քաղաքական արդիականացման բաղադրիչ:

2.2. Մարզինալությունը՝ քաղաքական արդիականացման բաղադրիչ

Հասարակության քաղաքական համակարգի արդիականացման գործընթացը ենթադրում է ինստիտուտների գործառույթների հստակեցում և պատասխանատվության բարձրացում, շարունակական բարեփոխումներ վերնից, համագործակցության մշակույթի հաստատում՝ հանուն սոցիալական երկխոսության, սերունդների համերաշխության և սոցիալական պատասխանատվության: Այս նպատակով հրամայական է քաղաքական գործընթացները կազմակերպելը «համախմբում» գիտավերլուծական պարադիգմի շրջանակներում: Մի կողմից, բարձրացնելով ժողովրդավարության որակը, այն կկանխի հասարակության մարզինալացումը, մյուս կողմից կմեկնարկի ժողովրդավարական համախմբման գործընթացը՝ հանուն ռազմավարական ապագայի: Այլապես ցանկացած ընտրությունից հետո քաղաքական զարգացման ճգնաժամերը խորանում են, իսկ հեղափոխականացված զանգվածները տարաբնույթ ընդվզումների, խռովությունների և «գունավոր հեղափոխությունների» դրոշ կարող են պարզել: Մինչդեռ Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի, հետխորհրդային նորանկախացած երկրների, ինչպես նաև ՀՀ-ի քաղաքական արդիականացման փորձը վկայում է, որ քաղաքական համակարգը «համախմբում» հարացույցի օգնությամբ իրապես ժողովրդավարացվում է միայն այն դեպքում, երբ իրականացվում է գիտավերլուծական կառավարում:

Վերջինս առաջին (նաև երկրորդ) սերնդի «նոր ժողովրդավարներին» հնարավորություն է տալիս մշակելու քաղաքացիակենտրոն ռազմավարություն և կազմակերպելու ազատ ու արդար ընտրություններ՝ առանց արդյունքները կանխավ իմանալու: Այն պետք է ենթադրի ոչ թե անորոշ գործընթացներ և նախապես հայտնի արդյունք, այլ որոշակի գործընթացներ (թափանցիկ և հստակորեն սահմանակարգված) և նախապես անհայտ արդյունք: Այդ կերպ իշխանության եկած երկրորդ (նաև երրորդ, չորրորդ) սերնդի «նոր ժողովրդավարները», հրաժարվելով վեկտորային անցումից

(միայն ազատականացում), պետք է հետամուտ լինեն ժողովրդավարական շարունակական բարեփոխումների վերնից: Այն իրական հնարավորություն կրնձեռի կանխելու և հաղթահարելու սոցիալ-քաղաքական և քաղաքակրթական գիտակցության տրոհվածությունը: Հետևաբար հայ «Ես»-ի ինքնակազմակերպման, ինքնահաստատման և ինքնաիրացման նկատառումներով հրամայական է, որ բոլոր սերունդների «նոր ժողովրդավարներն» իրականացնեն այնպիսի բարեփոխումներ, որոնք հնարավորություն կտան գլոբալ քաղաքակրթության մեջ պահպանելու հայերիս ուրույն տեղը, դերը և տեսակը, լինելու ամբողջի մասը՝ հայկական քաղաքակրթությամբ և քաղաքական ինքնությամբ:

Մարզինալությունը՝ որպես համադրական երևույթ. մարզինալ մարդը՝ հեղափոխությունների կրող և արարող: Մարզինալությունն ուսումնասիրող հոգեբաններից, քաղաքագետներից, սոցիոլոգներից յուրաքանչյուրն այն դիտարկում է երկու հիմնական իմաստով. 1) մարզինալ է այն ամենը, ինչը գտնվում է ընդունված կառուցվածքների ու նորմերի սահմաններից դուրս, 2) մարզինալ է այն, ինչը գտնվում է երկու և ավելի իրողությունների միջակայքում: Այս երկու մոտեցումների միջև գոյություն ունեցող էական տարբերություններն առավել քան ակնհայտ են դարձնում այն, որ մարզինալությունը՝ որպես քաղաքական արդիականացման գործընթացի բաղկացուցիչ, անհրաժեշտ է ուսումնասիրել ոչ միայն սոցիոմշակութային և էթնոմշակութային արժեհամակարգերի կերպափոխման համատեքստում, այլև որպես համադրական (սինթետիկ) երևույթ: Որպես այդպիսին՝ մարզինալությունը քաղաքական արդիականացման գործընթացում մշտապես ուղեկցում է տարբեր հասարակություններին, սոցիալական խմբերին, էթնիկ միավորումներին: Ահա թե ինչու կերպափոխվող հասարակությունների քաղաքական համակարգերի արդիականացման գործընթացներն ուսումնասիրող տեսաբաններ Խ. Լինցը, Գ. Օ'Դոնելը, Ֆ. Շմիտերը, Տ. Կարլը, Ա. Պշևորսկին, Ս. Հանթինգթոնը, Ռ. Դալը, Դ. Ռաստոուն և այլք կարևորում են հասարակական այն տարածությունները, որտեղ առավել համակարգված գործունեություն են ծավալում մարզինալները՝ հարափոխ կերպափոխելով իրենց «Ես»-ը նոր և հին արժեքների հանդիպման տիրույթներում:

Դեռևս 1928 թվականին Ռ. Պարկն (1864-1944), առաջին անգամ շրջանառության մեջ դնելով «մարզինալ մարդ» հասկացությունը, այդպիսին էր համարում երկու տարբեր մշակույթների, սոցիալական կառուցվածքների սահմանագծում հայտնված այն մարդուն, որը լիարժեքորեն ներառված չէ ո՛չ

մեկի և ո՛չ էլ մյուսի մեջ¹¹⁴: Վերլուծելով հեղափոխական, կերպափոխման և միգրացիոն երևույթները՝ Ռ. Պարկը վատատեսորեն է վերաբերվում մշակութային խառնածիններին ոչ թե այն պատճառով, որ արժեքային անցման մեջ գտնվող մարզինալը չի կարող կտրվել իր անցյալից և հարմարվել նոր մշակութային միջավայրին, այլ այն, որ հնարավոր չէ միշտ մնալ սահմանագծին՝ անհրաժեշտ է կողմնորոշվել: Ռ. Պարկի համար գոյություն չունի երկու կամ ավելի սոցիալականություն, այն մեկն է, և դրանում տեղ չկա մարզինալության համար, քանի որ դրա առկայությամբ հնարավոր չէ ժողովրդավարական համախմբում իրականացնել՝ պահպանելով շարունակական բարեփոխումների տրամաբանությունը:

Ելակետ ընդունելով Ռ. Պարկի հայացքները՝ Է. Սթոունքվիստը կարծում է, որ «մշակութային խառնածնություն» կրող և արարող **սոցիալական, քաղաքական, հոգեբանական, մտավոր և զգացմունքային** պարբերական փոխակերպման մեջ գտնվող մարզինալ մարդու վերաճումը քաղաքացու տևում է շուրջ 20 տարի: Այս նկատառումներով Է. Սթոունքվիստն ուսումնասիրել է մարզինալ մարդուց դեպի քաղաքացու բնաշրջման երեք փուլ: **Առաջին փուլում** մարդը, աստիճանաբար յուրացնելով գերիշխող խմբի մշակույթը, հրապուրվում է դրանով: **Երկրորդ փուլում** մարդը գիտակցում է բախման տրամաբանությունը. արագորեն փոխելով իրեն՝ ինքնորոշվում է: **Երրորդ փուլում** մարզինալ մարդը հաջող կամ անհաջող փորձեր է կատարում հարմարվելու բախումային իրավիճակին: Հաջողության դեպքում նա դուրս է գալիս մարզինալ վիճակից՝ դառնալով քաղաքացի, իսկ անհաջողության դեպքում օտարվում է իրականությունից¹¹⁵:

Այս ճշմարտության իմացությամբ է, որ ժողովրդավարացման «երրորդ ալիքի» տեսաբանները կերպափոխվող հասարակություններում արմատական ազատականացման հետևանքով առաջացած անորակ ժողովրդավարություններից ազատվելու նկատառումներով տարաբնույթ խռովությունների, ըմբոստությունների, ահաբեկչությունների հորձանուտ ներքաշված մարզինալներին դարձնում են «գունավոր հեղափոխությունների» խաղի կրողներ և

¹¹⁴ Park R., Human migration and marginal man / American Journal of Sociology. Chicago, 1928, vol. 23, N 6. p. 881-883.
https://canvas.instructure.com/files/43705036/download?download_frd=1&verifier=KlThebnMdyDGlcLyayGNZs7qsi7TJoG3rhmiI8q

¹¹⁵ Stonequist E.V., The marginal man. A study in Personality and Culture Conflict. N. Y., Russell&Russell Pub, 1961. p. 92-93.

արարողներ¹¹⁶:

Տեղեկատվական դարաշրջանը, արմատապես կերպափոխելով սոցիո և էթնոմշակութային տարաբնույթ նորմերը, ստեղծել է արժեշահային բազմաչափություն ենթադրող նոր աշխարհ, հաճախ՝ նաև վիրտուալ: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման արդյունքում փոփոխության են ենթարկվել (կամ խեղաթուրվել են) ժամանակի և տարածության վերաբերյալ պատմականորեն ձևավորված և կենսաբանորեն հիմնավորված ընկալումներն ու քաղաքակրթական չափումները: Այս նկատառումներով անհրաժեշտություն է առաջացել վերանայելու անձի սոցիալական դերակատարումը, քանի որ արմատական կերպափոխությունները հաճախ **ֆրոստրացիաների** պատճառ են դարձել: Իսկ այդ պայմաններում անկանխատեսելի ընթացք են ստանում հարաբերական անկախության մեջ գտնվող անձի բազմաշերտ ու բազմաբովանդակ «Ես»-պատկերներն ու վարքագիծը: Արդյունքում մարզինալությունը համադրական բնույթ և էություն է ստանում: Վերջինիս տիրույթներում հայտնված անձը ցանկանում է նախ պարզել, թե էթնոմշակութային և սոցիոմշակութային համակարգերն ինչպես են փոխհարաբերվում, ապա՝ ինչ գործոնների ազդեցությամբ ինքը կարող է օգուտ քաղել այդ վիճակից՝ հաղթահարելով օտարվածությունը, ֆրոստրացիաները, սթրեսը, անումիան և բացառելով հակասոցիալական ագրեսիվ գործողությունները:

Կերպափոխվող հասարակություններում տարբերակելով մարզինալության առաջացման արտաքին և ներքին պատճառները՝ կարծում ենք, որ այն տվյալ հասարակությունում առկա ավանդական, մոդեռն և պոստմոդեռն արժեքների կրող սոցիալական խմբերի միջև թույլ արտահայտված սոցիալական երկխոսության, սերունդների համերաշխության, իշխանության իրականացման ցածր մշակույթի և անհանդուրժողականության հետևանք է: Մարզինալությունը դիտարկելով որպես արտագաղթի (ներգաղթի), մշակութային խառնածնության, աղքատության ու գործազրկության, քաղաքական իրավազրկության, բազմաչափ կերպափոխումների հետևանք՝ Ռ. Պարկը գրում է. «Անկասկած, բոլորի կյանքում էլ ձգնաժամեր լինում են,

¹¹⁶ Меркель В., Круассан А., Формальные и неформальные институты в дефектных демократиях (I). – Полис. Политические исследования. 2002. № 1. С. 6-17.; Ларсен С. У., Херсвик Я., Крушение и восстановление демократического режима в Португалии (Опыт применения теории игр к анализу исторических событий) (I). – Полис. Политические исследования. 2004. № 2. С. 51-63.

սակայն անհրաժեշտ է տարբերակել այն ճգնաժամերը, որոնք ունեն ուրիշ երկրներում բախտ փնտրող արտագաղթածները: Միննույն ժամանակ ճգնաժամեր կարելի է ունենալ սեփական երկրում՝ լինելով գործազուրկ, օտարված և հանրորեն մերժված, մարգինալ մարդ, որը ոչ միայն չգիտի ինչպես վերաբերվել իր ժամանակին, այլև չգիտի, թե ինչպես հարաբերություններ ստեղծել այն տարածքներում, որտեղ ինքը կարող է ինքնադրսևորվել»¹¹⁷: Ճիշտ է, մարգինալ մարդու կերպարը վերլուծելիս Ռ. Պարկը հիմնվում է հոգեբանական հասկացությունների վրա, սակայն մարգինալության իր հայեցակարգը նա պայմանավորում է քաղաքական գործընթացներով: Ուշադրություն դարձնելով այս հանգամանքին՝ Տ. Շիրուտանին մշակում է մարգինալության հատկանիշների համակարգը, համաձայն որի՝ մարգինալ են արդարության հիվանդագին զգացում և հավակնոտ մարդիկ, որոնք գիտակցորեն իրենց զատում են շրջապատից՝ ցանկանալով գերիշխել նրա նկատմամբ¹¹⁸:

Վերոշարադրյալից կարելի է եզրակացնել, որ մարգինալությունն արժեշահային բազմաչափության, սոցիալական բևեռվածության և էթնիկական խտրականության, անձի օտարվածության, ինքնահաստատվելու այլընտրանքային ուղիների դերային անորոշության հետևանք է: Իրավիճակով պայմանավորված՝ **ներքին և արտաքին** փոփոխությունները, մարտահրավեր նետելով սոցիալական «Ես»-ին, մղելով նրանց մարգինալության տիրույթ, թաքնահարույց (լատենտ) դիրքավորվելու հնարավորություն են տալիս և անկանխատեսելի են դարձնում քաղաքական զարգացման գործընթացում նրանց ստանձնած դերի իրատեսության մակարդակը: Որպես այդպիսին՝ վերջինս հետևանքն է՝ ա) ռեֆերենտային խմբում անձի ինտեգրվելու կամ սպասվելիք կարգավիճակ ունենալու անհաջողությունների՝ «սպասումների հիասթափության», բ) սոցիալական դերերի իրականացման ժամանակ առաջացած անհանդուրժողականության, գ) սոցիալական խմբերի՝ մարգինալ իրավիճակում իրականացրած այնպիսի գործունեության, որը չի համապատասխանում նրանց սոցիալական հավակնություններին:

Ըստ այդմ էլ միջմշակութային տարծություններում հայտնված և հասովածայնորեն սոցիալականացված մարգինալ անհատները իշխանական

¹¹⁷ Park R., Race of culture. Glance, Free press, 1964, part 26.

¹¹⁸ Шибутани Т., Социальная психология / Ростов-на-Дону : Феникс, 2002, с. 475.

հարաբերություններում տեղ ու դեր գրավելու նպատակադրմամբ, հեղափոխականացնելով սոցիալական տարածությունը, տրոհում են այն և պարբերաբար մակաձում են անորոշություններ:

Այս դիտանկյունից մարզինալության կարևոր ցուցիչ են նաև ազատության գաղափարի ընկալումն ու նույնականացումը: Այժմեականության մեջ այն հիմնականում նույնացվում է տնտեսական մարդու արժեշահային համակարգի ածանցյալ նպատակների հետ: Դրանք, անհատին պարզնելով որոշակի բավարարվածություն, վերջնականապես խզում են նրա կապը պատմականորեն ժառանգած երջանկության մատրիցայից, այն է՝ ներդրումը (contribution) սեփական տեսակի և հասարակության (կամ համայնքի) կենսունակությունը բարձրացնելու գործընթացում: Ակնհայտ է, որ մարզինալությունը՝ որպես համադրական երևույթ, որոշակի սոցիալական իրականության մեջ ինքնահաստատման, ինքնադրսևորման, ինքնաիրացման ձգտող «Ես»-երի առկայության արդյունք է: Սակայն որոշիչն այստեղ այն համընդհանուր արժեքների առկայությունն է, որոնց օգնությամբ ընդարձակվում է հանրային և քաղաքական կառավարման սոցիալական բազան: Խորհրդային տարիներին մարզինալ էին համարվում սոցիալական այն խմբերը, որոնք, լքելով գյուղը, թեն ստանում էին մասնագիտական կրթություն, սոցիալական կարգավիճակ, հասարակական գործառույթներ և անդամագրվում էին բազմազգ համամիութենական կառույցներին («Խոպան հողերի մշակում», «Բրատսկի ՀԷԿ», «ԲԱՄ» և այլն), սակայն մտածողությամբ մնում էին գեղջուկ: Մյուս կողմից, հանուն քաղաքական կայունության, սոցիալիստական պետությունը նման գործընթացներում սակավ մասնակցություն ունեցողներին հնարավորություն էր տալիս օգտվելու սոցիալական հիմնադրամներից՝ ստանալով նաև ժամանակի պահանջներին համահունչ մրցունակ կրթություն¹¹⁹: Մինչդեռ ազատականության արժեշահային համակարգի հաստատման նկատառումներով տեղի ունեցող կերպափոխման գործընթացները, նեղացնելով սոցիալական հենքը, մեխանիկորեն դուրս են մղում բոլոր նրանց, ովքեր, չկողմնորոշվելով ազատ շուկայական հարաբերությունների շրջանակներում կերպափոխվելու բազմաչափ գործընթացում, օտարվում են սոցիալական

¹¹⁹ Старики Е., Маргиналы // В человеческом измерении, издательство "Прогресс", 1989, <http://www.agitclub.ru/gorby/homosovet/starikov.htm>, Старики Е. Маргиналы и маргинальность в советском обществе // Рабочий класс и современный мир. 1989. No 4. С. 27.

իրականությունից և մղվում չնորմավորված վարքաբանության հորձանուտ: Այս նկատառումներով ուշագրավ է Պ. Սորոկինի այն մոտեցումը, որը մարզինալությունը դիտարկում է հանցավորության և սոցիալական կյանքի այլ բացասական երևույթների համատեքստում¹²⁰: Անկասկած, մարզինալությունը զարգացած և զարգացող հասարակություններում հանցագործություն ծնող պատճառներից մեկն է, սակայն միջմշակութային և միջսոցիալական բազմաչափ տարածություններում էականը ոչ այնքան նշված երևույթների փոխկապակցվածության աստիճանի վիճակագրությունն է, որքան այն վերացնելու մերիտոկրատական էլիտայի կամքն ու ունակությունը¹²¹:

Համաձայն Ռ. Պարկի՝ մարզինալ մարդը մարդու այն տիպն է, որը բացահայտվում է այն ժամանակ և այն տեղում, որտեղ ռասաների և մշակույթների բխյումներից ձևավորվում են նոր համակեցություններ, ժողովուրդներ, մշակույթներ: Ճակատագիրն այդպիսի մարդկանց հնարավորություն է տալիս ինքնահաստատվելու երկու աշխարհներում միաժամանակ կամ էլ մերժել այդ աշխարհները՝ մնալով իր «ջունգլիում»¹²²: Նման մարզինալության կրող է օտարականը (օտարական մարզինալ), որը տվյալ սոցիումի մեջ ներգրավվելու նկատառումներով մշակութային առումով կա՛մ չեզոք է, կա՛մ ագրեսիվ, կա՛մ օտարված, կա՛մ էլ հակված է մշակութային երկխոսության: Այս առումով ուշագրավ է գլոբալ հաղորդակցական տարածություններում ձևավորված ժամանակակից սփյուռքը, որը, պահպանելով իր շփումները «պատմական հայրենիքի» հետ, ինքնահրացվում է անդրազգային ցանցերի միջոցով՝ ինքնարդիականացնելով իր էթնիկ արժեշահային համակարգի քաղաքական էությունը: Ժամանակակից սփյուռքի ցանցային կառուցվածքով էլ պայմանավորված՝ էթնոմշակութային մարզինալությունը՝ որպես հաղորդակցական գործունեության առանձնահատուկ ձև, դրսևորվում է եռաչափության մեջ՝ «սփյուռք-պատմական հայրենիք», «սփյուռք-որդեգրված

¹²⁰ Сорокин П.А. Социальная и культурная динамика / Пер. с англ., вступ.ст. и коммент. В.В. Сапова. - М.: Академический проект, 2006. с. 779-780.

¹²¹ Белл Д. Грядущее постиндустриальное общество. Опыт социального прогнозирования, Перевод с английского. — Изд. 2-ое, испр. и доп. — М.: Academia, 2004. с. 57-58.

¹²² Park R., Human migration and marginal man / American Journal of Sociology. Chicago, 1928, vol. 23, N 6. , p. 355-356.

https://canvas.instructure.com/files/43705036/download?download_frd=1&verifier=KlThebnMdyDGlcLyayGNZs7qsi7TJoG3rhmiI8q

հասարակություն», «սփյուռք-միջազգային (միջկառավարական) կազմակերպություններ»¹²³: Այս եռաչափության մեջ էթնոմշակութային մարզինալության մեջ գտնվող սոցիալական խմբերը հնարավորություն են ստանում առնչվելու իրենց էլիտաների և բոլոր այն ակտիվիստների հետ, որոնք միավորում են տվյալ էթնոսի անդամների կյանքը «նոր տարածություններում»՝ ստեղծելով ոչ միայն համախմբման համար նպաստավոր պայմաններ, այլև հնարավորություն՝ ինքնաիրացվելու աշխատանքի միջազգային նոր բաժանման պահանջներին համապատասխան:

Այսպիսով՝ էթնոմշակութային մարզինալությունը գլոբալ հաղորդակցական տարածություններում իրականության արժեշահային, մշակութային և հոգեբանական ընկալումների արդյունք է, որը կարող է և՛ բախումների, և՛ բանակցությունների հիմք հանդիսանալ: Փաստորեն, գլոբալացման պայմաններում ընթացող կերպափոխումների համատեքստում կարելի է լրացնել (կամ վերանայել) Ռ. Պարկի այն մոտեցումը, համաձայն որի՝ սահմանային կարգավիճակում գտնվող երկու տարբեր արժեշահային համակարգերից որևիցե մեկն անկում է ապրում: Մինչդեռ գլոբալ հաղորդակցական տարածությունների ընդարձակման հետևանքով մարզինալությունն այսօր տարաբնույթ սոցիոմշակութային փորձերի սահմանագծերում կարող է լինել, մի կողմից, «Ես»-ի բախումնաձին մենախոսության, մյուս կողմից՝ հանդուրժողական երկխոսության միջոցով նրա ինքնարդիականացման արդյունք:

Մարզինալությունը և քաղաքական համակարգի արդիականացման տարամիտվածությունը ՀՀ-ում: Քաղաքական զարգացմանը բնորոշ են՝ 1) քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ արդիականացում՝ բազմատեսակ լեգիտիմ դերակատարներով, 2) ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացում, ինչը ենթադրում է ինստիտուտների բնականոն գործունեություն, 3) հասարակական բոլոր խավերի պարբերական ներգրավում քաղաքական իշխանության մեջ, 4) համակարգի արդիականացման գործընթացում նախկին ավանդական ընտրախավի (ավանդական մարզինալներ) դուրսմղում, 5) իշխանության լեգիտիմության առկայության պայմաններում կառավարողների կողմից կառավարվողների

¹²³ Шеффер Г., Диаспоры в мировой политике, Диаспоры, N 1, 2003. С.162-184 http://world.lib.ru/k/kim_german_nikolaewich/3019-3.shtml

նկատմամբ պատասխանատվության բարձրացում, 6) քաղաքական ինքնության շարունակական արդիականացում: Փաստորեն քաղաքական զարգացումը մարտահրավեր է, որին յուրաքանչյուր հասարակություն պատասխանում է իր արժեքային համակարգին և քաղաքական գիտակցությանը համապատասխան: Քաղաքական զարգացման մարտահրավերներին համարժեք պատասխանելը հիմնականում պայմանավորված է ընտրական ինստիտուտի և դրա շրջանակում ընթացող գործընթացների արժեքային և գործառության փոփոխականներով: Հենց այստեղ է տեղի ունենում կառավարող էլիտաների և կոնտրէլիտայի դերային հստակեցումը:

Ընտրությունները՝ որպես քաղաքական զարգացման ինստիտուտ, անհատի համար ստեղծում են մի դեպքում ինքնորոշվելու (**ինքնորոշված մարդ**), մյուս դեպքում՝ մարզինալացվելու (**մարզինալ մարդ**) հնարավորություն: Ընտրությունների ինստիտուտը՝ որպես կայուն ժողովրդավարացման ցուցանիշ, նվազեցնում է մարզինալությունը և նպաստավոր պայմաններ ստեղծում քաղաքական համակարգի արդիականացման համար: Ուստի ՀՀ քաղաքական համակարգի բնականոն արդիականացման նկատառումներով ընտրական գործընթացներն ուսումնասիրելու համար ելակետային ենք ընդունել հետևյալ դրույթները.

1. Կերպափոխվող հայ իրականության մեջ առկա է ժողովրդավարական արժեքների կիրառման հանրային պահանջ: Վերջինիս ապահովումը քաղաքացիներին, հատկապես երիտասարդությանը հնարավորություն է տալիս իրատեսորեն գնահատելու ավանդականի և արդիականի փոխհարաբերությունները:

2. Մեծ է արտաքին միջավայրի դերը ներքին կերպափոխումների վրա ներագրելու գործում:

3. Առկա է ոչ ժողովրդավարական (կոնսենսուսային օլիգարխիկ) կառույցների հետևողական փլուզման քաղաքականություն իրականացնելու հանրային պահանջ:

4. Անհրաժեշտ է քաղաքական և տնտեսական էլիտաների ժողովրդավարական հավաքագրման (recruitment) և սելեկցիայի սկզբունքների իրականացման մշակույթի ձևավորում:

5. Չեն պահպանվում նոր ժողովրդավարական ինստիտուտների կառուցման, հաստատման, բնականոն արդիականացման մեխանիզմների զարգացման հրամայականները:

6. Քաղաքական դերակատարների ռազմավարությունն ու մարտավարությունն ունեն պոպուլիստական և մարգինալ բնույթ, քանի որ նրանց անհատական և հոգեբանական առանձնահատկությունների, ընտրությանը մասնակցելու նպատակների և շահերի իրականացման նկատառումներով մասսաների գիտակցությունը մանիպուլացվում է:

Քաղաքական զարգացման դինամիկայով պայմանավորված՝ արդի գլոբալ քաղաքականությունն այսօր ներկայացնում է երկու տեսակ (զարգացած-զարգացող) հասարակությունների համագործակցություն: «Ես»-ի բնականոն զարգացման փիլիսոփայության վրա հիմնված **«քայլող»** արդիականացումը բնորոշ է այն հանրություններին, որոնք քաղաքական զարգացում են ապրել Վերածննդի, Ռեֆորմացիայի, Լուսավորչականության արժեքների և արդյունաբերական առաջին հեղաշրջման գործընթացներում՝ հաստատելով սոցիալական, իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն: **«Վազող-հասնող»** արդիականացումը վերագրվում է լատինաամերիկյան, աֆրիկյան, ասիական այն հանրություններին, որոնք նախընտրում են իրենց կենսաձևը և կյանքի որակը կերպափոխել՝ մեխանիկորեն ընդօրինակելով հանրային կառավարման արևմտյան փորձը:

Հանրագումարելով 20-րդ դարի 50-ականներից մեկնարկած քաղաքական զարգացման փորձը՝ Ս. Հանթինգթոնը, Շ. Էյզենշտատը, Ռ. Դալը, Հ. Ալմոնդը, Ֆ. Ֆուկույաման խոսում են **«արդիականացման սինդրոմի»**, **«փակուղային արդիականացման»**, ինչպես նաև՝ **«մարգինալ արդիականացման»** մասին, որոնք հակասական ներգործություն ունենում քաղաքական համակարգի արդիականացման վրա: Այդ երկրների տնտեսական և քաղաքական անկայուն իրավիճակը վկայում է, որ պատրաստի մոդելների հանպատրաստից ներդրումը որևէ հասարակության (որը չի հասցրել արդիականանալ սեփական արժեհամակարգի հաշվին) սոցիալ-պատմական ենթատեքստում, անհամատեղելիություն առաջ բերելով տվյալ հանրության անցյալի, ներկայի և ապագայի միջև, ստեղծում է և՛ պատահականության, և՛ քաոսի, և՛ մարգինալության մեծ հնարավորություններ¹²⁴: Փաստորեն ազատականացման գործընթացն ուղեկցվում է տիպաբանորեն հակադիր արժեքների բախմամբ, որն էլ, հանգեցնելով փոխադարձ անհանդուրժողականության, հասարակական

¹²⁴ Рюэль Д., Случайность и хаос. – М.: Издательство «Регулярная и хаотическая динамика», 2001 с. 68-69.

գիտակցության մեջ մեծացնում է մարզինալությունը: Այստեղից էլ՝ մարզինալ արժեքների որդեգրման համատեքստում գործառվող ռացիոնալը «վագող» արդիականացնող երկրներում չի գործում որպես ավանդական արժեք: Պարբերաբար կերպափոխման ենթարկվող քաղաքացիները կա՛մ աղապատացվում են նոր քաղաքական արժեշահային համակարգին, կա՛մ էլ, օտարվելով սոցիալական և քաղաքական իրականությունից, նպատակամետորեն մարզինալացնում են իրենց վարքը: Այս ամենի կանխման նպատակով, 1990-ական թվականներից սկսած, «նոր ժողովրդավարների» քաղաքական համակարգերի ժողովրդավարացման հիմնախնդիրներն սկսեցին դիտարկվել քաղաքական մարզինալացման հաղթահարման տեսանկյունից: Ելակետ ընդունելով Ռ. Դալի մշակած պոլիարխիայի տեսությունը՝ ըստ այդմ էլ գործառնության մեջ դրվեց երկու չափանիշ՝

- ժողովրդավարական ընտրությունների ճանապարհով մրցունակ կառավարող ընտրախավի հավաքագրում և լիդերի կայացում,

- բնակչության լայն զանգվածների մասնակցություն քաղաքական որոշումների ընդունման գործընթացին՝ հիմնվելով ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքների վրա¹²⁵:

Նշված սկզբունքների կիրառումը կանխատեսելի է դարձնում իրականացվող բարեփոխումների էլքը, որը կարող է արդյունավետ լինել, եթե՝

- բարեփոխումների գործընթացի իրականացման տրամաբանությունը հետևողական լինի. այս դեպքում ճգնաժամերը կնվազեն՝ բարձրացնելով ժողովրդավարության որակը,

- իրականացվող բարեփոխումների արդյունքում անցկացվեն ժողովրդավարական ընտրություններ. այս դեպքում լեգիտիմ հավաքագրված նոր էլիտան ոչ միայն պատասխանատվություն կկրի իր իրականացրած քաղաքականության համար, այլև պատրաստ կլինի ապահովելու երրորդ սերնդի «նոր ժողովրդավար» բարեփոխիչ լիդերի հաղթանակը ընտրություններում:

Միայն այս «եթե»-ները նկատի առնելով էր հնարավոր ժողովրդավարական ընտրությունների միջոցով հավաքագրված էլիտայի և լիդերի կողմից նոր սերնդի բարեփոխումներ իրականացնել ՀՀ-ում՝ զուգամիտելով ազգային և հանրային շահերը: Միաժամանակ պետք է հաշվի

¹²⁵ Даль Р., Демократия и ее критики / Пер. с англ. Под ред. М. В. Ильина. — М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2003 с. 428.

առնել, որ այս գործընթացը ենթադրում էր նաև **քաղաքականապես չեզոք բյուրոկրատիայի** առկայություն, որն իրականացնում է՝

- վարչական ապարատի վերապատրաստում և նորարարական գիտելիքների յուրացում,

- կառավարման ապարատի իրավունքներն ու պարտականությունները կարգավորող կանոնների և ընթացակարգի մանրամասն մշակված օրենսդրական համակարգի ստեղծում,

- ապակենտրոնացման միջոցով ինքնակառավարման ինստիտուտների արդյունավետության ապահովում՝ համայնքների, անհատների և կազմակերպությունների մակարդակով,

- տարաբնույթ արժեշահային համակարգ ունեցող սոցիալական խմբերի միջև սոցիալական երկխոսության և համագործակցության մշակույթի հաստատում,

- քաղաքական էլիտայի, լիդերության և բյուրոկրատիայի ինստիտուտների գործառնությունների հստակեցման նկատառումներով օրենսդրական դաշտի շարունակական բարեփոխումների իրականացում:

Վերջիններս էլ բյուրոկրատիային հնարավորություն կտան ոչ միայն «ազատագրվելու» քաղաքական վերահսկողությունից, այլև քաղաքական համակարգը ձերբազատելու ոչ լեգիտիմ ընտրությունների միջոցով հավաքագրված կառավարող խավից: Ելակետ ունենալով ՀՀ նախագահական և խորհրդարանական ընտրությունների փորձը՝ աներկբա կարող ենք եզրակացնել, որ ՀՀ-ում անհատի գիտակցությունը կողմնորոշված է դեպի մարզինալ արժեքներ: Թեև անհատը մասնակցում է քաղաքական կյանքին, սակայն այդ մասնակցությունը չի համարվում նրա կողմից քաղաքական նպատակի ակտիվ ընտրության հետևանք և, ըստ էության, ներկայանում է որպես քաղաքականից դուրս գործունեություն՝ թելադրված վախի, շահի և այլ գործոններով: Հիմնականում ուղեկցվելով համակարգի նկատմամբ անհատի ունեցած անգործության պատրանքով՝ այն բացառում է այլընտրանքային մասնակցության և իրացման հնարավորությունների ռացիոնալ ընտրությունը: Համակարգի կենսունակությունն անմիջականորեն պայմանավորելով դրանում ունեցած անհատի դերով՝ օնտոհոգեբանության հիմնադիր Ա. Մենեգետին արդարացիորեն նշում է. «**Համակարգը գոյատևում է, քանի դեռ առկա է անհատների կողմից նրա գոյաբանական սնուցումը (ընդգծումը մերն է):** Համակարգը ուժեղ է ոչ թե ներքին ճշմարտությամբ, այլ

բացառապես հավատով: Այն պահպանվում է «պահի ճշմարտության», սեփական «վասալների» աջակցության և հավատարիմ հպատակների շնորհիվ, այն դեպքում, երբ նրանք վստահ են, որ իրենց կյանքը կախված է հենց համակարգի աջակցությունից»¹²⁶:

Քաղաքական զարգացման գործընթացները ՀՀ-ում, ներառելով **ավանդական և արդիական մշակույթներ**, կողմնորոշված չեն դեպի ընտրության ազատությունը, մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները: ՀՀ-ում քաղաքական համակարգի բնականոն արդիականացման հարցում առկա են հետևյալ հիմնախնդիրները.

- ժողովրդավարական քաղաքական մշակույթի համապարփակ բնույթի ընդունում բոլոր դերակատարների կողմից և քաղաքական գործունեության սահմանների ու հնարավորությունների մշակում,

- պատմականության վերծանում և կենսունակ մեխանիզմների գեներացում, ավանդույթների նկատմամբ վերաբերմունքի հստակեցում, քանի որ հանրային կառավարման համակարգը, բացառելով իր անցյալը, չի կարող արդյունավետ ժողովրդավարացվել առանց ներկայի և ապագայի: Այս մոտեցումը հիմնավորվում է մեր կողմից՝ հաշվի առնելով, որ մարդու գիտակցությունը, ըստ էության, նրա կողմից իրացված մշակութային մեխանիզմների գործունեության տիրույթ է,

- քաղաքական համակարգում գոյություն ունեցող դերերն արդյունավետ օգտագործելու խնդրում անվստահության հաղթահարում՝ PR և GR նոր տեխնոլոգիաների օգտագործում:

Այս սկզբունքների առկայությունը ժողովրդավարացվող քաղաքական համակարգին հնարավորություն է տալիս նմանօրինակ մշակույթի օգնությամբ հետևողականորեն իրականացնելու անձի քաղաքական սոցիալականացում: Գաղտնիք չէ, որ քաղաքացու ներգրավումն ընտրական գործընթացներում իրականացվում է իշխող մշակութային կողմնորոշիչների և նորմերի, քաղաքական վարքաբանության նմուշների և արժեքների յուրացման գործընթացում: Իր հերթին քաղաքացիներին ընտրական գործընթացում հավաքագրող սոցիալականացման գործառույթն ապահովում է հասարակության քաղաքական համակարգի ժողովրդավարացումը՝ պետության և քաղաքացու միջև ստեղծելով համագործակցության եզրեր,

¹²⁶ Менегетти А., Система и личность/Пер. С итальянского ННБФ «Онтопсихология». – Изд. 2-е, исправленное и дополненное. – М.: ННБФ «Онтопсихология», 2007. с. 169.

ինչն էլ երաշխավորում է ժողովրդավարական կայունություն¹²⁷:

Հետևաբար ՀՀ խորհրդարանական և նախագահական ընտրությունների ժամանակ անհրաժեշտ էր նկատի ունենալ (մինչև 2015 թվականի սահմանադրական բարեփոխումները), որ սոցիալական հիշողությունը ներառում է իշխանության իրականացման **մշակութային, բարոյական և հումանիստական** նորմեր, որոնք քաղաքական համակարգի արդիականացման գործընթացում ենթադրում են ռացիոնալի և իռացիոնալի փոխներդաշնակում: Մինչդեռ ՀՀ-ում անձը ընտրական գործընթացներին մասնակցեց խմբային խառնածին մշակույթների միջավայրում, որտեղ գերակա էր **«խմբիշխանության երկաթյա օրենքը»**: Ռ. Միխելսն (1876-1936) այն կարծիքին է եղել, որ կուսակցական կազմակերպության ղեկավար միջուկը, իր ձեռքում պահելով հասարակական հարաբերությունների ժողովրդավարացման շղթան, սկսում է զուգամիտել իր խմբային շահերը հանրային շահերի հետ՝ ցանկանալով քաղաքակրթել իշխանության իրականացման մեխանիզմները, բայց հետագայում հրապուրվել է իշխանությամբ և, անտեսելով սպասելիքները, ստեղծել է խմբիշխանության երկաթյա օրենք: Իսկ կուսակցության շարքային անդամները, հարմարվելով քաղաքական ժամանակի պահանջներին, ընդարձակում են «խմբիշխանության երկաթյա օրենքի» սոցիալական բազան¹²⁸: Ելակետ ընդունելով այս մոտեցումը՝ նշենք, որ կերպափոխվող հայ հասարակություններում ընտրական գործընթացների կազմակերպման ժամանակ առաջացել է երկու հիմնախնդիր.

➤ Սոցիալական անկայունության և սոցիալականացման փուլերի միջև անհամաձայնությունը սահմանափակում է անհատի նույնականացման կայուն և վստահ զգացողություն ունենալու հեռանկարը, ինչի հետևանքով անհատն անընդհատ մարզինալ նույնականացման մեջ է:

➤ Նույնականացման այդ զգացողությունը թուլանում է, քանի որ պրոֆեսիոնալիզմը, շահադրդող նպատակները և զուգորդիչ զգացողությունն անհրաժեշտ չափով չեն զարգանում:

Այդ հիմնախնդիրներով պայմանավորված՝ ՀՀ-ում ընտրությունները կազմակերպվել և իրականացվել են խառնածին մշակութային տարածությունում՝ պահպանելով **«խմբիշխանության երկաթյա օրենքը»**: Այս ամենն էլ

¹²⁷ Մարգարյան Մ. Գ., Քաղաքական կայունության և ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր.: «ՀՀ ՊԿԱ», 2015, էջ 121:

¹²⁸ Михельс Р., Социология политической партии в условиях демократии // Антология мировой политической мысли, Т.2, М., 1997. с. 132.

ընդգծված արտահայտվեց ՀՀ 2008թ. նախագահական ընտրություններում, որն էլ հենց հնարավորություն տվեց թեկնածուներին ընտրողների վարքաբանությունում ակտիվացնելու մարզինալություն ծնող հետևյալ գործոնները.

1. **Նացիոնալիզմ և կոսմոպոլիտիզմ**, որոնք հանդես են գալիս որպես անհատի սոցիալական նույնականացման հիմնական պայման: ՀՀ-ում և՛ ազգայնական, և՛ կոսմոպոլիտ արժեքների տիրույթներում քարոզչություն ծավալած նախագահական թեկնածուները, օգտագործելով մարզինալ շերտերի անլիարժեքության բարդույթը ներգրավեցին իրենց քաղաքական կուսակցությունների և շարժումների ուղեծրում (այս առումով իրար փոխլրացրին ՀՀ նախագահի թեկնածուներ Արտաշես Գեղամյանի «Արարման» նախընտրական ծրագիրը՝ հանուն ազգային միաբանության¹²⁹, Արթուր Բաղդասարյանի «Նոր Հայաստան, նոր հաջողություններ յուրաքանչյուրին» նախընտրական ծրագիրը՝ «Հայաստան, բաց արա քո աչքերը» կարգախոսով¹³⁰, Վահան Հովհաննիսյանի նախընտրական ծրագիրը՝ **Ազատ քաղաքացիների Արդար** երկիր կառուցելու ակնկալիքով¹³¹:

2. **Սոցիալական հովանավորչության պահանջմունքի աճ**: Բարեփոխիչ լիդերները հաղորդակցական յուրօրինակ մեխանիզմներ են իրականացնում բնակչության հիմնական զանգվածի և քաղաքական որոշումների ընդունման գործընթացների միջև՝ սոցիալական ներկայացուցչության (ընտրական համակարգ և շահերի խմբեր) համակարգի զուգամիտման պայմաններում:

3. **Սոցիալական հիշողություն, այսինքն՝ ազգի պատմական փորձ**: ՀՀ սոցիալական հիշողությունն արտացոլում է հայկական մշակութային ոլորտի հարաբերական անկախությունը և համարվում է ժողովրդավարական ընտրությունների կազմակերպման առավել էական բաղադրիչներից մեկը: Դրսևորվելով մշակութային նորմերի միջոցով՝ այն իր դրոշմն է դրել դարերով ձևավորված այնպիսի նորմերի և արժեքների վրա, որոնք ամրագրված են լեզվում, գեղարվեստական գրականության մեջ, սովորույթներում, միջամտածողությունում և սիմվոլներում: Փաստորեն, քաղաքական համակարգի արդիականացումը բնակչության ավանդույթների և սոցիալական հիշողության դեմ ուղղված պայքար չէ: Վերոնշյալ գործոնները դասակարգելով որպես արտաքին մեխանիզմներ՝ հարկ է նշել,

¹²⁹ Գեղամյան Ա., «Արարման» նախընտրական ծրագիր, Եր., 2008 էջ 164:

¹³⁰ Բաղդասարյան Ա., Հայաստան, բաց արա քո աչքերը, Եր., 2008: էջ 32:

¹³¹ Հովհաննիսյան Վ., Մեր հին ընկերը՝ երկրի նոր նախագահ, Եր., 2008: էջ 8:

որ երբ որոշակիություն և կայունություն ապահովող արտաքին մեխանիզմներն անհետանում կամ ձևափոխվում են ոչ էվոյուցիոն ճանապարհով, անձը դառնում է խոցելի, իսկ վարքը ձևախեղվում է՝ դարձնելով նրան անկանխատեսելի և անվստահելի: Գաղտնիք չէ, որ ՀՀ-ում քաղաքական համակարգի արդիականացման առաջին փուլից (1990-1996) հետո հայ հասարակությունն ընկղմվեց քաղաքական զարգացման ճգնաժամերի մեջ: Մի կողմից առաջին սերնդի «նոր ժողովրդավարների» ստեղծած «խմբիշխանության երկաթյա օրենքը» բացարձակացրեց խմբային շահը, մյուս կողմից քաղաքացիներն իրենց գիտակցության մակարդակով մերժեցին մտածողության բազմազանությունը և հասարակությանը զրկեցին պլուրալիզմից: Այս ճշմարտության իմացությամբ էլ ՀՀ նախկին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն առաջադրվեց ՀՀ նախագահի թեկնածու: Լինելով «ժողովրդավարություն» խաղի փայլուն գիտակ (խաղ, որն ընթանում է ոչ միայն շախմատի կանոններով¹³²՝ նա կարողացավ կանչ տալ ներքին և արտաքին այն բոլոր ուժերին, որոնք «խմբիշխանության երկաթյա օրենքի» պայմաններում մի կողմից դժգոհ էին իրենց կարգավիճակից, մյուս կողմից քաղաքական համակարգի արդիականացման այլընտրանքային ձևաչափեր էին մշակել՝ ցանկանալով բարձրացնել իրենց տեղն ու դերը իշխանական հարաբերություններում և վերաբժնորել աշխարհաքաղաքական կողմնորոշումները: Եթե արտաքին ուժերը ցանկացան նետած մարտահրավերն օգտագործել իրենց աշխարհաքաղաքական շահերի հստակեցման նպատակով, ապա պարբերաբար **«սպասումների հիասթափություն»** ապրող ներքին ուժերը, օգտագործելով տրված հնարավորությունը, հեղափոխականացրին իրենց վարքը: Հետևաբար, մանիպուլացնելով հայ հասարակության **սոցիալական ներկան**, Լ. Տեր-Պետրոսյանը հստակեցրեց ու ճշգրտեց իր և իր շրջապատի վերակենդանացման հնարավորությունները՝ մարզինալացնելով ընտրազանգվածին: Վերջինս իր արդարացված սոցիալական դժգոհությամբ առավել ընդգծեց ՀՀ նախագահի ընտրությունների արդյունքների նկատմամբ գործընթացների տրոհվածությունը: Այդ համատեքստում Հայաստանում հասունացած ճգնաժամը վերածվեց 2008թ. մարտի 1-ի ողբերգության¹³³: Այսինքն՝ 2008 թվականի ՀՀ նախագահի

¹³² Оуэн Г., Теория игр, Пер. с англ. под ред. А. А. Корбута, Изд. 3-е, М.: Изд. ЛКИ, 2007. с. 25-36.

¹³³ Manutscharjan A. State of Emergency in Armenia. Political Crisis After the Presidential

ընտրությանը հաջորդած մեծամասշտաբ ցույցերն ավարտվեցին մարտի 1-ին՝ ոստիկանական ուժերի և ցուցարարների բախմամբ, որի հետևանքով եղավ տասը զոհ, մի քանի վիրավոր, և 100-ից ավելի մարդ ձեռքակալվեց¹³⁴։ Այս ամենի հետևանքով առանց այն էլ օտարված և մարգինալացված հայ հասարակությունը առավել քան հեղափոխականացվեց և երկար ժամանակով մտավ քաղաքական անորոշ սպասումների փուլ։ Փաստորեն, 2008 թվականի ՀՀ նախագահական ընտրություններին մասնակցած ինը թեկնածուներից յուրաքանչյուրը, առաջարկելով քաղաքական համակարգի ժողովրդավարացման իր ձևաչափը և անտեսելով քաղաքական իրականությունը, մարգինալացրեց ՀՀ ընտրազանգվածին և չկողմնորոշեց նրան դեպի **լեզալ և լեզիտիմ** պայքար։

Մինչդեռ եվրոպական, աֆրիկյան, լատինաամերիկյան, հետխորհրդային երկրների (Վրաստան, Ուկրաինա, Դոմինիկյան Հանրապետություն) «գունավոր հեղափոխությունները» դիտարկելով որպես քաղաքական ֆենոմեն¹³⁵՝ նշենք, որ նրանք նպատակ ունեն իշխանության բերելու կոռուպացված իշխող վերնախավերին ընդդիմադիր ուժերի և իրականում վերականգնելու ազատական-ժողովրդավարական մոդելը՝ դառնալով քաղաքական համակարգի բնականոն արդիականացման դերակատարներ։ Ավելին, այն կարծիքին ենք, որ ընտրական գործընթացների լեզիտիմության միջոցով կերպափոխվող հասարակությունների մարգինալության կանխման և քաղաքական համակարգի բնականոն արդիականացման համար անհրաժեշտ է հետամուտ լինել՝

Առաջին. նոր սերնդի բարեփոխիչ լիդերների նպատակամետ գործունեությանը, որոնք իրենց հեղինակության շնորհիվ ընդունակ են ընտրազանգվածին համոզելու նոր սերնդի բարեփոխումներ կատարելու իրենց մտադրությունների մեջ՝ դուրս բերելով նրանց հեղափոխականացնող կոշտ կարգախոսներով հանդես եկող լիդերների ազդեցության տիրույթից։ Ներառելով լիդերության տարբեր տիպերի որոշակի հատկանիշներ՝

Elections of February 2008 / Ascot Manutscharjan // Auslandsinformationen, 2008, No. 6. http://www.kas.de/wf/doc/kas_14423-544-2-30.pdf

¹³⁴ Human Rights Watch – Democracy on Rocky Ground. Armenia’s Disputed 2008 Presidential Election, Post-Election Violence, and the One-Sided Pursuit of Accountability. February 25, 2009. <https://www.hrw.org/report/2009/02/25/democracy-rocky-ground/armenias-disputed-2008-presidential-election-post-election>

¹³⁵ Дэвид Лейн. “Цветная” революция как политический феномен, Социология: теория, методы, маркетинг, 2010, 1, с. 16-38. http://ecsocman.hse.ru/data/2012/08/23/1265226303/14-36_2010-1.pdf

բարեփոխիչներն ընտրական քարոզարշավը կազմակերպելիս պետք է կիրառեն և՛ մենախոսության, և՛ երկխոսության մեթոդները, որոնց օգնությամբ էլ բարձրանում է նրանց իշխանության լեգիտիմության մակարդակը:

Երկրորդ. նույնականացման բազմաչափություն ապահովելուն, ինչը ենթադրում է կառավարման ինստիտուցիոնալացման կարգի արդյունավետության բարձրացում և շարունակական բարեփոխումներ՝ հանուն ժողովրդավարության որակի: Նման կառուցակարգերի ստեղծման համար անհրաժեշտ է ոչ միայն մեծացնել էլիտաների հավաքագրման սոցիալական բազան և ռացիոնալացնել ՀՀ քաղաքացիների սոցիալական շարժունակությունը, այլև իրականացնել այնպիսի *PR* տեխնոլոգիաներ, որոնց օգնությամբ հնարավոր է ցույց տալ իշխանության նկատմամբ սեփական հավակնությունների հիմնավորվածությունը՝ հանուն նոր սերնդի բարեփոխումների, սոցիալական երկխոսության, սերունդների համերաշխության և անվտանգ ապագայի:

2.3. Ժողովրդավարության որակը քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման և խաղաղության մշակույթի հաստատման օրակարգում

1990-ական թվականներից ՀՀ-ում իրականացված գծային ազատականացումից բխած քաղաքական զարգացման առաջին ճգնաժամը **բաշխման ճգնաժամն** էր: Իրականացված «վաուչերային» սեփականաշնորհման և գծային ազատականացման բարեփոխումների (1990-1996թթ.) հետևանքով «նոր ժողովրդավարների» առաջին սերունդը քաղաքական, տնտեսական և բազմաթիվ այլ արտոնություններ ստացավ, ինչն էլ ուղեկցվեց հասարակության վտանգավոր բևեռացումով: Վերջինս սուր դրսևորվեց 1996 թվականի ՀՀ նախագահական ընտրություններում, որի արդյունքների լեգիտիմությունը չընդունվեց, իսկ քաղաքացիների «ապստամբ էներգիան» Վ. Մանուկյանն օգտագործեց իր «քաղաքական շահույթի» տոկոսները բարձրացնելու և քաղաքական աճուրդից գերագույնս շահած դուրս գալու համար:

«Հաղթողը ստանում է ամեն ինչ» սցենարով իշխանությունը ստանձնելուց հետո, որպես իշխող կուսակցություն, ՀՀԾ-ն արտոնություններ տվեց բոլոր նրանց, ովքեր իրենց մարզինալ վարքաբանությամբ կայացվող որոշումների վրա ազդելու հնարավորությունը ստացան խմբիշխանական շահերի

պաշտպանության տեսանկյունից: Հետևանքն այն եղավ, որ ոչ մարզինալ քաղաքական դերակատարների օտարվածությունը ծնեց **մասնակցության ճգնաժամ** կամ **մարզինալ-պոպուլիստական մասնակցություն**: Իսկ սոցիալական-քաղաքական-տնտեսական խմբերից հաճախակի դեգերումները, օտարվածությունը, սոցիալական բևեռվածությունը առաջ բերեցին **շարժունակության ճգնաժամ**: Այդ վիճակում գտնվող ՀՀ քաղաքացիների համար «նոր ժողովրդավարների» առաջին սերնդի կողմից ներդրվող ազատական ժողովրդավարական արժեքները կորցրին իրենց գրավչությունը, ինչը հանգեցրեց հակասոցիալական վարքագծի աճի և օտարվածության՝ հաստատված արժեքնորմատիվ համակարգի նկատմամբ թերահավատության՝ խորացնելով օտարումը: Հաստատված վարքի նոր ձևաչափերի և արժեքների նկատմամբ ձևավորված անվստահությունը հարուցեց **ինքնության ճգնաժամ**: Այս գործոնի ազդեցության տակ ՀՀ քաղաքացիները կորցրին իրենց հավատն ու վստահությունը իշխանության նկատմամբ, իսկ քաղաքական իշխանությունն ընկղմվեց **լեզխտիմության ճգնաժամի** մեջ: Հարկ է նշել, որ այս ճգնաժամերը ոչ միայն պայմանավորեցին մեկը մյուսին, այլև ընթացան և ընթանում են գրեթե միաժամանակ: Սոցիալական բևեռվածությունը, աղքատությունը, կոռուպցիան, իշխանության իրականացման ցածր մշակույթը նպաստավոր միջավայր են ստեղծում ոչ միայն զանգվածային մարզինալացման առաջացման, այլև տրոհված և աններդաշնակ կորպորատիվ շահերի արտահայտման համար:

Զարգացող երկրների քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման համար 1990-ականների վերջում ՄԱԿ-ի «Զարգացման ծրագրեր» փաստաթղթերում մշակվեցին «լավ կառավարման» («good governance») սկզբունքները՝ ի հակադրություն «վատ կառավարման»: «Լավ կառավարումը» արդիական հայեցակարգ է, որի ձևավորմանը նպաստեցին 1980–1990-ական թվականներին Համաշխարհային բանկի նախաձեռնությամբ տեղի ունեցած քննարկումները: Որպես արդյունք՝ ՄԱԿ-ի «Զարգացման ծրագրեր» փաստաթղթերի փաթեթում 1997թ. ընդգրկվեցին կերպարավորվող երկրների բարեփոխումների արդյունավետ կատարման համար մշակված «լավ կառավարման» ներքոհիշյալ ութ բնութագրիչները¹³⁶, որոնք հետո ներդրվեցին հետխորհրդային Եվրասիայի «վատ/անարժանապատիվ

¹³⁶ Տե՛ս «What is Good Governance». United Nations ESCAP, նաև՝ Towards Good Governance (http://reform.gov.bb/page/GOOD_GOVERNANCE.pdf):

կառավարում» («bad governance») ունեցող երկրներում¹³⁷: Փորձագետները վստահ էին և են, որ առանց այդ սկզբունքների գործառնական հետխորհրդային Եվրասիայի երկրները չեն հաղթահարի աղքատությունը, կոռուպցիան, արտագաղթը, բյուրոկրատական կառավարության անարդյունավետությունը: Այդ սկզբունքներն են.

1. **Մասնակցություն (Participation)**, այն է՝ բոլոր մարդիկ, անկախ սեռից և ֆիզիկական վիճակից, պետք է որոշումների ընդունման գործում ունենան ձայնի իրավունք կա՛մ անմիջականորեն, կա՛մ այն օրինական միջնորդ հաստատությունների միջոցով, որոնք ներկայացնում են նրանց շահերը:

2. **Իրավունքի գերակայություն (Rule of law)**, այն է՝ օրենքները, կանոնադրությունները, օրենսգրքերը պետք է արդար լինեն և գործադրվեն անաչառ կերպով, մասնավորապես՝ մարդու (հատկապես՝ փոքրամասնությունների) իրավունքների մասով:

3. **Թափանցիկություն (Transparency)**, այն է՝ գործընթացները, հաստատությունները և տեղեկությունը պետք է անմիջականորեն հասանելի լինեն նրանց, ովքեր հետաքրքրված են դրանցով, ընդամին, նրանց պետք է տրվի բավարար չափով տեղեկություն՝ դրանք հասկանալու և մշտազննելու համար: Դա հանրային հատվածի և բոլոր շահագրգիռ անձանց համար ապահովում է կառավարության գործունեության, որոշումների ընդունման և խորհրդատվությունների բաց լինելը:

4. **Արձագանքողականություն (Responsiveness)**, այն է՝ հաստատությունների և զարգացումների ծառայեցումը բոլոր շահագրգիռ անձանց՝ ընդունելի ժամկետներում:

5. **Կոնսոլիդացվածություն դեպի համաձայնություն (Consensus orientation)**, այն է՝ «լավ կառավարումը» պահանջում է միմյանց հակասող շահերի պայմաններում միջնորդել համաձայնության գալու, թե որն է դրանցից լավագույնը, և ինչպես կարելի է դրան հասնել:

6. **Հավասարություն և ներգրավվածություն (Equity and inclusiveness)**, այն է՝ հասարակության բարեկեցությունը կախված է այն բանի ապահովումից, որ հասարակության յուրաքանչյուր անդամ իրեն զգա ոչ թե հանրության

¹³⁷ Гельман В. Я., Политические основания «недостойного правления» в постсоветской Евразии: наброски к исследовательской повестке дня, СПб.: Издательство Европейского университета в СПб, 2016, с. 4-5.

ընդհանուր զանգվածից դուրս մղված, այլ այդ բարեկեցության ապահովման գործում ներբերում կատարող անձ:

7. Արդյունավետություն և օպերատիվություն (Effectiveness and efficiency), այն է՝ գործընթացների ու հաստատությունների արգասիքները, որոնք բավարարում են ռեսուրսների ճիշտ կամ արդյունավետ օգտագործման պահանջմունքները:

8. Հաշվետվողականություն (Accountability), այն է՝ կառավարությունում որոշում ընդունողները, մասնավոր հատվածը և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները պատասխանատու են հանրության, ինչպես նաև հաստատությունների շահագրգիռ անձանց առջև: Հետագայում, հիմք ընդունելով անվտանգային քաղաքականության զարգացումները, գիտական գրականության մեջ ավելացվեց նաև 9-րդ կետը, որով ամբողջականացվեց «լավ կառավարման» հայեցակարգը:

9. Ռազմավարական տեսլական (Strategic Vision), այն է՝ ղեկավարները և հանրությունը ունեն «լավ կառավարման» և մարդկային զարգացման երկարաժամկետ սպասումներ: Գոյություն ունեն նաև պատմական, մշակութային, հանրային արժեքաբանական համալիրները, որոնց վրա խարսխվում են այդ սպասումները¹³⁸: Վերջիններս էլ, հանդես գալով որպես խաղաղության մշակույթի գործառնական երաշխավորներ, իրենց ոլորտում ընդգրկում են պետության ինստիտուտը, քաղաքական հասարակությունը, մասնավոր հատվածը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կառույցները: Ներառելով հասարակական կարգուկանոնը, խաղաղաստեղծությունը, խաղաղապահ ուժերը, խաղաղություն պահպանող երկրները՝ խաղաղության մշակույթը ենթադրում է քաղաքական բախումների ռացիոնալ լուծում բանակցությունների և փոխզիջումների եղանակով ¹³⁹:

Խաղաղության մշակույթը բազմաչափ հարաբերությունների համակարգ է, որը ներառում է քաղաքացիական համաձայնության, սոցիալական երկխոսության, սերունդների համերաշխության և ազգային անվտանգության արդիականացման ապահովման գործընթացներ: Վերոգրյալի հիման վրա

¹³⁸ «What is Good Governance». United Nations ESCAP

(<http://www.unescap.org/pdd/prs/ProjectActivities/Ongoing/gg/governance.asp>), նաև՝ Towards Good Governance (http://reform.gov.bb/page/GOOD_GOVERNANCE.pdf):

¹³⁹ Տե՛ս, Ռ. Ֆիշեր, Ու. Ուրի, Համաձայնության հասնելու ուղին: Բանակցություններ առանց պարտվողների: Եր., ՄԶՄԿ, 2005, էջ 5-6:

կոպենհագենյան դպրոցի տեսաբաններն ընդլայնեցին անվտանգության մասին ժամանակակից պատկերացումները՝ այն ուսումնասիրելով «Ես»/«Մենք»/«Նրանք» դերակատարների գործառնական, աշխարհագրական, քաղաքակրթական, գենդերային, մշակութային, հոգեբանական, էթնիկական, լեզվաբանական, ծագումնաբանական, արժեքաբանական տիրույթներում: Այս առումով «խաղաղության մշակույթ» հասկացությունը հարաբերակցում է «քաղաքացիական անվտանգություն» (*civilian security*) և «համընդգրկուն անվտանգություն» (*comprehensive կամ overall security*) հասկացությունների հետ: Նման մոտեցումն արտահայտվեց նաև ՄԱԿ-ի ընդունած «Խաղաղության մանիֆեստում», որը երրորդ հազարամյակի առաջին տասը տարին պաշտոնապես հռչակեց խաղաղության մշակույթի և ամբողջ աշխարհի մանուկների նկատմամբ բռնության դեմ պայքարի միջազգային տասնամյակ (2000–2012): Համաձայն մանիֆեստի՝ անվտանգությունը «ոճերի, արժեքների, հուզական ապրումների, մտավոր ձեռքբերումների ապահովման թագավորություն է, իսկ բռնությունը՝ մարդու զարգացման իրավունքի մերժում և՛ ֆիզիկապես, և՛ մտովի»¹⁴⁰:

3. Գալթունգը խաղաղության մշակույթը բացատրում է՝ օգտագործելով երկու փոխաբերություն: **Առաջինը առողջությունն է:** Խաղաղությունը բռնության համար այն է, ինչ առողջությունը հիվանդության համար՝ անձը կարող է լինել առողջ այնպես, ինչպես և խաղաղ կարող են լինել անձը, խումբը, նահանգը, ազգը, մարզը, քաղաքակրթությունը: **Երկրորդ փոխաբերությունը սերն է,** որը մարմնի, մտքի և հոգու ներդաշնակ միությունն է: Նշված մեխանիզմների համադրմամբ, 3. Գալթունգի կարծիքով, մշակվում է խաղաղության մշակույթի գլխավոր արժեքը՝ կրթությունը. «Կրթության խնդիրն է՝ հաստատել տևական խաղաղություն: Առավելագույնը, ինչ կարող են անել քաղաքագետները, մեզ պատերազմներից հեռու պահելն է»¹⁴¹:

Ակնհայտ է, որ համընդհանուր արժեքների հաստատման միջոցով բնության և բանականության էկոլոգիայի պահպանման համար խաղաղության մշակույթը կերպավորվող հասարակություններին հնարավորություն կտա ռացիոնալ պատասխան տալու ներքին և արտաքին

¹⁴⁰ Josef De Rivera, Assessing the Basis for a Culture of Peace in Contemporary Societies. «Journal of Peace Research», 2004, Vol. 41, N 5, PP. 531–548 http://web.pdx.edu/~abyron/peace_ed/Wk4/culture1.pdf

¹⁴¹ Գալթունգ Յո., Խաղաղություն խաղաղ միջոցներով. խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն: Եր., ՄԶՄԿ, 2005, էջ 48 – 49:

սպառնալիքներին¹⁴²: Այս առումով էլ խաղաղության մշակույթի հաստատման համար 1999 թ. ՄԱԿ-ի կողմից ընդունվեցին գործողության ծրագրի ութ հենասյունները՝ կարևորելով իշխանական հարաբերությունների հումանիզացումը¹⁴³: Այս համատեքստում նոր մարդասիրությունը կընդարձակի կայուն զարգացման և համագործակցության ապահովման սոցիալական տարածությունը: Այս հիմնային մոտեցումների տիրույթներում էլ իր արժեքային բազմաչափության մեջ ՄԱԿ-ը կարևորեց խաղաղության հայեցակարգումը ինչպես սոցիալական բոլոր տարածություններում, այնպես էլ հասարակության մակրո (հանրային անվտանգություն՝ խաղաղության բաղադրիչ) և միկրո (անհատի անվտանգություն) մակարդակներում: Համաձայն այս փաստաթղթի՝ խաղաղությունն ունի երեք տարբեր սոցիալական մեծություններ. **քաղաքական**՝ ազատություն վախից, **ռազմադիվանագիտական**՝ ազատություն բռնությունից և հակամարտությունից, **սոցիալական/տնտեսական**՝ ազատություն չքավորությունից, կյանքի որակ, անվտանգություն, ապահովություն¹⁴⁴:

Վկայակոչենք Հայաստանի վերաբերյալ իրականացվող բարեփոխումների արդյունքների գնահատականը «Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք (Հայաստան 2011–2013 Ազգային ինդիկատիվ ծրագիր)» փաստաթուղթը, որտեղ արձանագրված է «լավ կառավարման» սկզբունքների հետևողական ներդրման անհրաժեշտությունը¹⁴⁵:

ՀՀ-ում կարևորում ենք կառավարող էլիտայի կողմից ինչպես պետության արդիականացման տեսլականի ձևավորման, այնպես էլ կառավարման ծրագրային, գիտական ապահովման և արդյունավետության գնահատման համակարգերի ստեղծման անհրաժեշտությունը: Դրանց բնականոն գործունեությունն ունի ռազմավարական նշանակություն, որովհետև ձևավորվում է

¹⁴² Stéu Tom Lombardo, The Future Evolution of the Ecology of Mind. «Center for Future Consciousness 2009»:

http://www.centerforfutureconsciousness.com/pdf_files/Readings/EvolEcolMindPaper.pdf

¹⁴³ Stéu Josef De Rivera. Assessing the Basis for a Culture of Peace in Contemporary Societies. «Journal of Peace Research», 2004, Vol. 41, N 5, PP. 531–548.

http://web.pdx.edu/~abyron/peace_ed/Wk4/culture1.pdf

¹⁴⁴ Stéu Sang-Hyun Lee. World Peace Index. «The 3rd OECD WORLD FORUM», October 29, 2009. Busan, Korea <http://www.oecd.org/site/progresskorea/44121754.pdf>

¹⁴⁵ Stéu «Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք (Հայաստան 2011–2013 Ազգային ինդիկատիվ ծրագիր)»: Եր., 2010, էջ 17–21
(http://www.mineconomy.am/uploads/NIP_2011-2013.pdf):

ազգային անվտանգության ապահովման ցանցային համակարգ ¹⁴⁶: Վերջինս, հիմնվելով սոցիալական տարածության ցանցային ընդարձակման վրա, արդիականացնում է խաղաղության մշակույթի ընկալումները պետության, հասարակության և անձի կողմից: Այս նկատառումներով քաղաքական համակարգը անվտանգության քաղաքականություն է ապահովում «անցում–համախմբում» հարացույցների բնականոն գործառնման միջոցով: Նման մոտեցմամբ ներդրվում է համընդհանուր արժեքների, վարքի, բարոյական նորմերի, սոցիալական գործունեության համակարգը, որի հիման վրա էլ տեղի է ունենում անցում խաղաղության մշակույթի սուբյեկտիվ-զգայական ընկալումից դեպի օբյեկտիվ-ռացիոնալ ընկալում: Այս ամբողջությունն էլ, որպես ազգային անվտանգության զարգացման համակարգ, ունի **ինստիտուցիոնալ-նորմատիվային, տեղեկատվահաղորդակցական, քաղաքակրթական, բարոյավարքային** ենթահամակարգեր: Դրանցից յուրաքանչյուրը, ունենալով արտաքին և ներքին սպառնալիքների կանխարգելման ուղղությամբ ռազմավարական գործողություններ կատարելու հստակ պարտականություններ, արդիականանում է՝ ընդարձակելով ազգային անվտանգության սոցիալ-քաղաքական տարածության արժեքաբանությունը:

Այս համատեքստում էլ կարևորենք նաև այն, որ ՀՀ-ում «լավ կառավարման» սկզբունքների ներդրումը վճռորոշ էր պետության կերպարի նորամուծական փոխակերպման գործառույթի համար: Դա ենթադրում էր «լավ կառավարման» սկզբունքների հաստատում գործառական մոտեցման միջոցով, համաձայն որի ինստիտուցիոնալ համակարգը փոխակերպվում է՝ **ռացիոնալ ընտրության, մրցունակ մասնակցության և թափանցիկ վերահսկողության** իրականացման տիրույթներում:

2008 թվականին մեկնարկած համաշխարհային տնտեսական ճգնաժամի ողբերգական արդյունքները և նոր անկախացած երկրներում առկա քաղաքական զարգացման ճգնաժամերի խորացող բնույթը նկատի ունենալով՝ Եվրոպական խորհրդի փորձագետները «լավ կառավարման» սկզբունքների ներդրման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, որոշակի տեղաշարժեր կատարելով առաջարկվող 9 սկզբունքների

¹⁴⁶ Մարգարյան Մ. Գ., Քաղաքական կայունության և ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր.: «ՀՀ ՊԿԱ», 2015, էջ 44-45:

սանդղակում, ավելացրին ևս 3 սկզբունք (Էթիկական վարքագիծ (Ethical conduct), Նորարարություն և բաց փոփոխություններ (Innovation and Openness to Change), Ֆինանսական կառավարում (Sound Financial Management))¹⁴⁷:

Միաժամանակ «Freedom House»-ի հետազոտություններն ապացուցում են, որ ժողովրդավարական արժեքներն անկում են ապրում¹⁴⁸: Իսկ ամերիկացի քաղաքագետ Լ. Դայմոնդը գրեց. «Խնդիրները, որոնք ես անվանել եմ «կառավարման եռակի ճգնաժամ», իրենցից ներկայացնում են՝ 1. հաշվետվողականության և իրավունքի գերակայության պակաս, ինչի մասին վկայում են համատարած կոռուպցիան, մաքսանենգությունը, քրեական բռնությունը, իշխանության անձնավորումը, մարդու իրավունքների ոտնահարումը, 2. տարածքային և էթնիկ ստորաբաժանումների խաղաղ կառավարման անկարողություն, 3. տնտեսական ճգնաժամ կամ լճացում, ինչը պայմանավորված է ազատ տնտեսական բարեփոխումների իրականացման, ինչպես նաև ամբողջականության, պետական բյուրոկրատիայի մեջ պրոֆեսիոնալիզմի մակարդակի բարձրացման ձախողմամբ: Որևէ երկրի ժողովրդավար լինելու համար անհրաժեշտ է, որ նրա քաղաքական իշխանությունը ունենա իմաստալից, ազատ ու արդար ընտրությունների անցկացման դիրքորոշում: Սա նշանակում է, որ պետք է հնարավոր լինի փոխել իշխանության պաշտոնյաներին, եթե ընտրողների մեծամասնությունը նախընտրում է ուրիշ կուսակցություն կամ դեկավարների ուրիշ կոալիցիա, և նա, ով կընտրվի, պետք է օժտված լինի իշխելու իրական գործությամբ: Նախկին Խորհրդային Միության 15 պետություններից միայն Մերձբալթյան երեք երկրներն են ազատական ժողովրդավար, իսկ մյուսները հիմնականում ունեն ավտորիտար տարաբնույթ դրսևորումներ: «Հակադարձ ալիքի» կանխման բանալին, այսպիսով, կառավարման որակի, ինչպես նաև նոր ժողովրդավարությունների քաղաքականության արդյունքների բարելավումն է: Եթե «ժողովրդավարություն» աշխատում է այս իմաստով, որպեսզի ապահովի հաշվետվողական կառավարում, արժանի հասարակություն և, վերջապես՝

¹⁴⁷ 12 Principles of Good Governance and European Label of Governance Excellence (ELoGE) https://www.coe.int/en/web/good-governance/12-principles-and-elope?fbclid=IwAR0u-pvU_gftVLu5Kpk5vTn632RGYD6aPnmkzTa-htV4pHeu9sVNzV4m100

¹⁴⁸ Freedom in the World 2018, Democracy in Crisis <https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2018>

ավելի բարեկեցիկ կյանք մարդկանց մեծամասնության համար, այն ավելի կխորանա ու կամրապնդվի...»¹⁴⁹:

Հետագա քաղաքական զարգացումներում, երբ «կառավարման որակ» եզրույթի կառուցվածքը տրոհեցին «ժողովրդավարության որակ» և «քաղաքացիության որակ» մասերի, ակնհայտ դարձավ, որ ՀՀ-ում որոշիչ է կառավարող վերնախավի, բիզնես վերնախավի և արհմիութենական ղեկավարների՝ որպես ժողովրդավարական համախմբում իրականացնող դերակատարների համագործակցության աստիճանը: Միայն դրա բարձր արժեքների դեպքում հանրապետությունում ակտիվ կերպով կգործառի ոչ միայն մարդու իրավունքների և ազատությունների, այլև պարտականությունների ու պատասխանատվության մշակույթի համակարգը՝ ձևավորելով **հասարակություն-մասնավոր հատված համագործակցության (Public-Private Partnerships (PPP))** արդյունավետ փոխգործակցություն:

ՀՀ-ում այս համակարգերի բնականոն գործառման պարագայում պատասխանատվությանը զուգահեռ կմեծանա նաև արդյունքի ռազմավարական կառավարման անհրաժեշտության գիտակցումը: Միննույն ժամանակ, ապահովելով անարգել կապ կառավարման տարբեր հարթությունների միջև, այն նպաստելու էր պետական, հանրային և քաղաքական կառավարման համակարգերում հավաքագրված կադրերի անձնական պատասխանատվության բարձրացմանը՝ կարևորելով՝

❖ ներքին և արտաքին հրամայականներին համահունչ արդիականացման, հարմարվողականության և ռազմավարական փոփոխությունների գործընթացների ծավալումը,

❖ մարդկային ռեսուրսների պատրաստումը (վերապատրաստումը), գլխավոր քաղաքական դերերի կատարմանը կոչված էլիտայի և լիդերների բաց առաջաջումը,

❖ տեղական ինքնակառավարման մարմինների զարգացումը, որը հնարավորություն կտա բարձրացնելու ժողովրդավարության որակը,

¹⁴⁹ Diamond Larry, The State of Democratization at the Beginning of the 21st Century The Whitehead Journal of Diplomacy and International Relations http://blogs.shu.edu/diplomacy/files/archives/04_diamond.pdf

❖ վերնախավի և զանգվածների գիտակցության ու վարքաբանության մեջ խաղաղության մշակույթի ներդրումը քաղաքական սոցիալականացման միջոցով¹⁵⁰:

Փաստորեն, «լավ կառավարման» սկզբունքները ներառվեցին կառավարման որակի մեջ, որոնց միջոցով փորձում էին ամբողջացնել **«համընդհանուր սոցիալական խաղաղության»** և **«կոլեկտիվ անվտանգության»** գաղափարները, որոնք էլ դրվում են «Ես»-ի և «Մենք»-ի կայուն զարգացման ռազմավարության հիմքում: Նման մոտեցումը հենվում էր այն նոր (ոչ ավանդական) վտանգի աղբյուրների բացահայտման և կանխման վրա, ինչպիսիք են **զանգվածային համաճարակները, թմրամոլությունը, անօրինական շրջանառությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կատարվող հանցագործությունները, նոր սերնդի զենքերի զանգվածային օգտագործումը, ահաբեկչությունը, անորոշությունները և այլն**¹⁵¹:

Այսպիսով՝ խաղաղության մշակույթի ապահովումը պայմանավորված է ոչ միայն ազգային կառավարության գործունեության որակով, այլև անդրազգային անվտանգություն (transnational security) ապահովող դերակատարների քաղաքականության նպատակադրումից: Դրա հետևանքով Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի, Հարավարևելյան Ասիայի, ինչպես նաև հետխորհրդային երկրներում, պայմանավորված քաղաքական զարգացման բազմավեկտորությամբ ու ժողովրդավարության որակի բարձրացման անհրաժեշտությամբ, մեծացել է խաղաղության մշակույթի պահանջարկը: Մի կողմից պատրանքային հեղափոխական գործընթացների հետևանքով «ներքինից» պարտադրվող ժողովրդավարական բարեփոխումների բազմաչափությունը, մյուս կողմից կերպափոխվող հասարակություններում քաղաքական տարածության տրոհվածությունը և քաղաքական ժամանակի վերաբերյալ աններդաշնակ պատկերացումների առկայությունը անվտանգության ապահովման համակարգում որակական նոր մակարդակի են բարձրացրել ազգային համագործակցային բաղադրիչի

¹⁵⁰ Մարգարյան Մ. Մ., «Լավ կառավարման» սկզբունքների ներդրումը՝ որպես Հայաստանի Հանրապետությունում խաղաղության մշակույթի հաստատման գործընթաց, «Հայկական բանակ», ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ ռազմագիտական հանդես, 2013, 1-2 (75-76), էջ 80-91:

¹⁵¹ Кувалдин В., Глобальный мир. Политика. Экономика. Социальные отношения. М.: Изд. Весь мир, 2017, 400с.

պահանջարկվածությունը: Այդ առումով ուշագրավ է հայ քաղաքագետ Հ. Քոթանջյանի հետևյալ մոտեցումը. «Հարավային Կովկասի կայուն զարգացման համար բնական կլիմեր անվտանգության ու դրան առնչվող խնդիրների նկատմամբ բազմակետոր մոտեցում ցուցաբերել, ինչը կապ կստեղծի տարածաշրջանում բոլոր հիմնական դերակատարների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Թուրքիայի և Իրանի, ինչպես նաև ԵԱՀԿ-ի, ԵԽ, ԵՄ, ՀԱՊԿ-ի, ՆԱՏՕ-ԵԱԳԽ և ՄՕՏՀ կազմակերպությունների միջև»¹⁵²:

Բազմակետորության փայլուն դրսևորում էր այն, որ 1994 թվականից ՀՀ-ն ներգրավված է ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրում: Տվյալ ծրագրի շրջանակում 2003թ. հունիսին ՀՀ-ում առաջին անգամ անցկացվեց զորավարություն, որին մասնակցեց 400 հոգուց բաղկացած զորակազմ ՆԱՏՕ-ի գործընկեր 19 երկրից (ԱՄՆ, Ռուսաստան, Մեծ Բրիտանիա և այլն): 2004 թվականից մինչև այսօր Հայաստանը մասնակցում է ՆԱՏՕ-ի ղեկավարությամբ իրականացվող խաղաղա-պահական գործողություններին:

Հայաստանը, լինելով ԱՊՀ անդամ և ՌԴ ռազմավարական դաշնակից (1992թ. Հայաստանը Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի հետ միասին դարձավ Հավաքական անվտանգության պայմանագրի հիմնադիր անդամ), մասնակցեց «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության» (ՀԱՊԿ) ստեղծման աշխատանքներին: Նմանօրինակ բազմակետոր համագործակցությունը ապակենտրոնացման հնարավորություն տվեց՝ հետևողականորեն հաստատելով բազմադերային կառավարման ցանցային դաշտ: Սակայն համագործակցությունը հետագայում կերպափոխվեց ՀՀ-ՌԴ կոշտ գծային (հրաման-կատարում) հարաբերությունների: Այդ դաշտը քաղաքական զարգացման դերակատարների (կառավարող էլիտա, ճնշման խմբեր, լիդերներ, ընտրազանգված, կուսակցություններ) գիտակցված փոխհամագործակցության միջոցով ապահովում է ռազմավարական մասնակցություն՝ միտված խաղաղության մշակույթի կիրառմանը: Ռազմավարական մասնակցությունը, ներառելով քաղաքական, տնտեսական, մշակութային,

¹⁵² Քոթանջյան Հ. Ս., Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում.- Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2008, էջ 62 – 63:

հումանիստական և բնապահպանական ոլորտներում հարաբերական անկախության մեջ գործառույթ ծրագրեր, ենթադրում է գիտատար նորագույն ռեսուրսների առկայություն:

Փաստորեն, գիտակրթական համակարգի արդյունավետության ցածր մակարդակը սպառնալիք է ժողովրդավարության որակի գործառման համար, քանի որ և՛ ՀՀ-ում, և՛ ԱՀ-ում, և՛ Սփյուռքում պետք է պատրաստ լինեն հավասարաթեք պատասխանելու ազգային անվտանգությանն ուղղված քառամակարդակ (հասարակություն, պետություն, ընտանիք, անհատ) մարտահրավերներին: Այս համատեքստում հայ ազգային ինքնության արդիականացման գերիսնդիքը մրցունակ սերնդի ձևավորումն է՝ անվտանգային և համագործակցային արժեքների համաժամանակյա գործառման մտահոգություններով հանդերձ:

Համագործակցությունը՝ որպես համակարգային ամբողջություն, ներառում է համապատասխան գիտելիքներ, հմտություններ, արժանիքներ, նպատակադրում՝ հիմնված ինքնակարգապահության, ինքնարդիականացման և ինքնաիրացման վրա: Համագործակցային տրամաբանությամբ խարսխված կրթությունը ՀՀ ազգային անվտանգության հիմնարար արժեքներն ապահովող մի գործընթաց է, որտեղ անձի սոցիալականացման արժեքայնությունը պայմանավորված է կառավարող ընտրախավի՝ քաղաքական շուկան արդիականացնելու ընդունակությամբ: Որպես արդյունք՝ հայ «Ես»-ը, որդեգրելով **«Համագործակցությունը անվտանգության հիմքն է»** սկզբունքը, հնարավորություն է ստանում համագործակցելու տարաբնույթ «Ես»-երի հետ: Այս գործընթացում ազգային ինքնության արդիականացման հիմնախնդիրը և համագործակցությունը հնարավոր չէ տարանջատել պետության քաղաքականությունից, պետություն, որի «հիմնական պարտականությունը իր քաղաքացիներին առաքինի դարձնելն է՝ մտավոր կրթությամբ և բարոյական կարգավարժությամբ, նրանց մտքերը լուսավորելով, սրտերը մաքրելով և նրանց՝ իրենց իրավունքներն ու պարտականություններն ուսուցանելով»¹⁵³:

Ըստ այդմ՝ անհրաժեշտ է ազգային համագործակցային մշակույթ ներմուծել այնպիսի ժողովրդավարական արժեքներ, որոնք հային հնարավորություն կտան պատասխանելու ժամանակի մարտահրավերներին և իր

¹⁵³ Գալթունգ Յո., Խաղաղություն խաղաղ միջոցներով. խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն: Եր., ՄԶՄԿ, 2005, էջ 49:

քաղաքացիական դիրքորոշմամբ ապահովելու ազգային անվտանգություն բնականոն արդիականացման միջոցով: Այս առումով անհրաժեշտ է պատմության հոլովությունում ձևավորված հայ ազգային լավագույն ավանդույթները՝ արարչական էություն, աշխատասիրություն, հանդուրժողականություն և այլն, զուգամիտել Արևմուտքի գիտակրթական նորամուծությունների հետ, որոնք, արդիականացնելով ազգային ինքնությունը, կդրդեն նրան մրցունակ նորամուծական գիտելիքների իմացության:

Հաշվի առնելով 70-ամյա խորհրդային անցյալի և համակարգային մետամորֆոզների խորքային ազդեցությունը՝ հատկապես կարևորվում է ինքնության արդիականացման **շարունակականության** ապահովումը՝ որպես անվտանգության ապահովման երաշխավորի: Սոցիալ-քաղաքական տարածության և ժամանակի փոխակերպումների հետևանքով անձին նետված մարտահրավերների համատեքստում ուշագրավ է Ա. Մենեգետիի հետևյալ դիտարկումը. «Տիրոջից ազատվելը դեռևս չի ենթադրում ազատության ձեռքբերում. վերացնում են ֆիզիկական խոչընդոտները, սակայն նախկինի պես մնում են անձ դառնալու, իրացվելու և սեփական «Ես»-ը կերտելու խնդիրները»¹⁵⁴:

Կարևորելով մարդկային ռեսուրսների ռացիոնալ կառավարումը՝ մրցունակ կրթությունը դարձել է համագործակցության և ինքնաիրացման այնպիսի ցանց, որը ռազմավարական նկատառումներով ներառում է հիմնախնդրի շարունակական, ազատ մտափոխանակումների, տարաբնույթ գաղափարների ծրագրված ուսուցում:

Մրցունակ մասնագիտական և խաղաղապահական կրթության միջոցով ապահովելով իրենց ապագան՝ մարդիկ հնարավորություն են ստանում իրենց քաղաքացիական դիրքորոշմամբ երաշխավորելու տեղական, տարածաշրջանային և համընդհանուր բնականոն արդիականացումը: Նպատակամետ ռազմավարական մասնակցության արժեհամակարգը, ստեղծելով ուրույն քաղաքակրթական շփումների միջավայր, հնարավորություն է տալիս խաղաղության մշակույթի օգնությամբ բնականոն կերպով արդիականացնելու ազգային ինքնությունը: Իսկ սրա համար քաղաքականության արժեհամակարգի վրա նպաստավոր էր Ֆ. Զաքարիայի՝ մեր ժամանակների պատմությունը վերաձևող «մնացյալի

¹⁵⁴ Менегетти А., Система и личность / Пер. С итальянского ННБФ «Онтопсихология». – Изд. 2-е, исправленное и дополненное. М.: ННБФ «Онтопсихология», 2007, с. 80.

հզորությունը։ Քննարկելով էթնիկական ցանցերի, համընդհանուր էթնիկական ձեռներեցության հիմնախնդիրները՝ Ֆ. Զաքարիան «մնացալի հզորություն» հասկացությունն ընկալում է որպես ժողովրդավարական, հանդուրժողական, ազատական արժեքների հիմքի վրա բնականոն կերպով արդիականացող հասարակություններ¹⁵⁵, որտեղ «Ես»-ը մեխանիկական արևմտականացման փոխարեն իր ինքնությունը բնականոն եղանակով կերպափոխելու իրական հնարավորություն է ստանում։

Այս առումով ուշագրավ էր ՀՀ նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանի «Հայկական աշխարհ»¹⁵⁶ նախագիծը. «...Արդյոք մենք կարո՞ղ ենք չհնտեգրվել խոշոր քաղաքակրթություններին, այլ վարել քաղաքակրթությունների երկ-խոսություն։ Մեր կարծիքով, ոչ թե կարող ենք, այլ ուրիշ ընտրություն չունենք, եթե ուզում ենք պահպանել մեր ինքնօրինակությունը»¹⁵⁷։ «Հայկական աշխարհի» ձևավորումը նպատակ՝ ունեւ սոցիալ-քաղաքական ցանցերի միջոցով աշխարհին ներկայացնելու հայկական քաղաքակրթությունը, ինչը նախադրյալներ կստեղծեր համաշխարհային գլոբալ քաղաքական դաշտում որպես դերակատար հանդես գալու, գլոբալ քաղաքացիական հասարակության լիիրավ մասնակիցը լինելու, ինչպես նաև աշխատանքի միջազգային նոր բաժանման գործընթացում առավել շահավետ դիրքեր զբաղեցնելու համար։ «Հայկական աշխարհը» տարածական առումով լայն ընդգրկվածություն ունենալու շնորհիվ կարող է ներկայացվածություն ապահովել գլոբալ քաղաքացիական հասարակության բազմաթիվ շերտերում։ «...«Հայկական աշխարհ» նախագիծը հնարավորություն կտա օգտագործելու ինչպես հայկական, այնպես էլ ոչ հայկական ռեսուրսները՝ մեծացնելով հայության էթնիկական նույնականության արդիականացման հնարավորությունները»¹⁵⁸։

«Հայկական աշխարհի» ձևավորումը առաջին հերթին միտվում է ժամանակի բազմազան քաղաքակրթական հարաբերությունների

¹⁵⁵ St' u Zakaria F., The Future of Freedom: Illiberal Democracy at Home and Abroad. New York, Norton, 2007, P. 286.

¹⁵⁶ Սարգսյան Տ., Հայկական քաղաքակրթությունը՝ որպես բեկումնային նախագիծ. - «21-րդ դար», Եր.։ N 2, 2006, էջ 24 – 25։

¹⁵⁷ St' u նույն տեղում, էջ 24 – 25։

¹⁵⁸ Մարգարյան Մ. Մ., Համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման հիմնախնդիրները և «Հայկական աշխարհը» / «Հայկական բանակ», N 1 – 2, 2011, էջ 117–118։

խառնարանում սեփական քաղաքակրթության ներկայացմանը: Այդ առումով կարևոր նշանակություն ունի բազմաչափ հարաբերությունների ոլորտում հենց հայկական քաղաքակրթության ոգեղենության բյուրեղացումը, ինչի շարունակական արդիականացումն էլ կհանգեցնի խոշոր քաղաքակրթությունների կողքին նրա համահավասար մասնակցությանը: Փաստորեն «Հայկական աշխարհի» ձևավորումը աշխարհին հայկական ուրույն քաղաքակրթությունը ներկայացնելու փորձ է, ինչը կստեղծի գլոբալ քաղաքացիական հասարակություն աշխատանքներին լիիրավ մասնակցելու, ինչպես նաև աշխատանքի միջազգային նոր բաժանման գործընթացում առավել շահավետ դիրքեր զբաղեցնելու նախադրյալներ:

Տվյալ միտումը, գիտավերլուծական հարացույցի շրջանակներում ՀՀ–Մփյուռք–ԱՀ հարաբերություններին հաղորդելով բազմավեկտոր բնույթ, մեծացնում էր հայկական ցանցի ռեսուրսների ռեալ օգտագործման հնարավորությունը: Այստեղից հետևում է, որ «Հայկական աշխարհի» դերակատարները, ընդարձակելով համագործակցությունը, հնարավորություն էին ստանալու փոխգործակցության իրենց դրսևորումներով ազդեցություն գործելու ՀՀ վարչատարածքային միավորների համաչափ զարգացման և ժողովրդավարության որակի բարձրացման վրա: Դրա հետ մեկտեղ, ժամանակի հրամայականին համապատասխան, «Հայկական աշխարհի» համար ստեղծվելու էր տարբեր քաղաքակրթական չափումներում խաղաղության մշակույթի գործառնանք մրցունակ կերպով մասնակցելու և համաշխարհային հանրության հետ համագործակցելու հնարավորություն¹⁵⁹:

Փաստորեն, խաղաղության մշակույթը՝ որպես ներքին և արտաքին անվտանգության ապահովման արժեքային համակարգ, ենթադրում է, որ հասարակական կերպավորվածությունների գործընթացում քաղաքական զարգացման կարևորագույն ռեսուրսը **մրցունակ կրթություն, քաղաքացիական գիտակցություն, այլընտրանքային մասնակցության և մրցակցության հնարավորություն** ունեցող մարդն է:

Խաղաղության մշակույթի ռազմավարական գերակայությունները անհրաժեշտ է դիտարկել ռացիոնալ ընտրության և իր շահերը հետապնդող ու հանրային համակեցության սկզբունքները պահպանող ազատ անհատի գաղափարախոսական, նորմատիվային և դերային խթանների դրսևորման

¹⁵⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 119:

միջոցով: Բոլոր այդ խթանները որոշիչ դեր են խաղում միջին դասի և բաց հավաքագրված կառավարող էլիտայի կայացման գործում՝ որպես ժողովրդավարական համախմբման գաղափարախոսներ: Այս տեսանկյունից կառավարման ժողովրդավարության որակի խնդիրը անցումն է մասնակցության մարզինալ-պոպուլիստական մոդելից ազատական մոդելին: Աներկբա է, որ պոպուլիզմը «պարզեցնում է» քաղաքական տարածությունը՝ «տարբերությունների» բարդ բազմազանությունը փոխարինելով հստակ դիստոտմիայով, որի երկու բևեռներն էլ որոշակի չեն¹⁶⁰:

Քաղաքական տարածության «պարզեցման», սակայն չհասակեցնելու հետևանքով մարզինալ պոպուլիստական մասնակցության մոդելը ՀՀ-ում իրականացվում է ոչ ինստիտուցիոնալացված՝ «խմբիշխանության երկայնաօրենքի» սկզբունքների հիման վրա, և հետամուտ է լինում դերային մենաշնորհի պահպանմանը: Սա խոչընդոտում է ժողովրդավարական համախմբումը՝ պարբերաբար հանգեցնելով անկայունության և անհանդուրժողականության: Ի վերջո մարզինալ-պոպուլիստական մոդելի դերակատարները հեղափոխականացնում են հասարակության վարքը:

Խաղաղության մշակույթի ներդրումը կմեծացնի ՀՀ-ում մասնակցության ազատական մոդելի հաստատման հնարավորությունը՝ բարձրացնելով կոռուպցիայի ու աղքատության դեմ մղվող պայքարի արդյունավետությունը և ընդարձակելով ժողովրդավարական համախմբման համընդհանուր տարածքը: Միաժամանակ այն ռեալ պայմաններ կստեղծի քաղաքացիների ինքնաիրացման համար՝ ապահովելով ՀՀ ինտեգրումը աշխատանքի միջազգային բաժանման նոր գործընթացներին: Վերջինս հնարավորություն կտա հայ մարդու համար մրցունակ գիտելիքը և կրթությունը դարձնելու փոխհամաձայնեցված խմբիշխանության մենաշնորհի դեմ պայքարի և հաղթանակի գրավական: Առաջարկվող մոդելի օգնությամբ ժողովրդավարական համախմբման սկզբունքների շուրջ կմիավորվեն բոլոր սոցիալական խավերը՝ ընդգրկվելով կոռուպցիայի և աղքատության դեմ մղվող պայքարի նպատակամետ գործընթացում: Վերոբերյալի օգնությամբ էլ հենց տարբերակվում է զարգացած և զարգացող հասարակություններում առկա մարզինալության՝ որպես համադրական երևույթի առկայությունը:

Եթե զարգացած հասարակություններում մարզինալությունը վերահսկելու և կանխելու համար օգտագործում են իրենց քաղաքական

¹⁶⁰ Laclau E., On Populist Reason. London. New York. Verso 2005 , p.18.

զարգացման փորձը, ապա զարգացող հասարակություններում մարգինալացման գործընթացներն ունեն ոչ միայն անկանխատեսելի ու անվերահսկելի, այլև, շատ հաճախ, փոխհամաձայնեցված խմբիչխանական խմբերի կողմից նպատակամետ ուղղորդված բնույթ: Այս ընդհանրացման համար ելակետային է Ե. Ստարիկովի հետևյալ մոտեցումը. «Հետամրոջատիրական հասարակության սոցիալական կառուցվածքում գործնականում մարգինալացվում են սոցիալական բոլոր խմբերը, ինչի հետևանքով ջնջվում են մարգինալի և ոչ մարգինալի միջև եղած տարբերությունները»¹⁶¹: Տեսակետը վիճելի է, քանի որ մարգինալությունը, ճիշտ է, մի կողմից ենթադրում է շարժունակության առկայություն, սակայն երբ այդ շարժունակությունը գլխապտույտ արագությամբ հանգեցնում է հասարակական «Ես»-ի կորստի՝ արմատապես խաթարելով նրա արժեշահային համակարգը, ապա առաջացած սոցիալական բևեռվածության պատճառով բնակչության մեծամասնությունը դառնում է մարգինալ զանգված, որի օգնությամբ «մարգինալ իրավիճակը» հեշտությամբ կարող է վերաճել հեղափոխության¹⁶²:

Ենթադրվում է, որ նմանօրինակ հեղափոխության կրողները, շահարկելով «ոչ լավ կառավարման» առկայությունը, անցնում են կոշտ ընդդիմության դիրքերը՝ ցանկանալով իրենց համար իշխանություն ապահովել ոչ միայն ընտրությունների միջոցով, այլև, անկախ ընտրության ելքից, գնալ ռևանշի: Այս համատեքստում կերպափոխվող հասարակությունների հեղափոխականացված քաղաքական գործընթացներում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ոչ միայն մարգինալները, որոնք ձևավորվել են «նոր ժողովրդավարների» առաջին սերնդի կողմից իրականացված բարեփոխումների արդյունքում, այլև երիտասարդությունը:

Ցանկանալով ինքնահաստատվել, ունենալով սեփական արժեշահային համակարգ և հանդես գալով որպես ժողովրդավարության որակի ջատագովներ՝ երիտասարդները տարբեր ձևերով են օգտագործում մարգինալ իրականությունը: Չունենալով բարդույթներ՝ երիտասարդներն

¹⁶¹ Старииков Е. Н., Социальная структура переходного общества: горизонтальный срез . – Полис. Политические исследования. 1995. № 5, С. 97.

¹⁶² Goldberg M., Qualification of the Marginal Man Theory. American Sociological Review. 1941, vol. 6, N 1. p. 52-58; 173. Antonovsky A., Toward a Refinement of the “Marginal Man” Concept. Social Forces. 1956, vol. 35, N 1. p. 57 <https://academic.oup.com/sf/article-abstract/35/1/57/2226405>

իրենց մրցունակ գիտելիքների, նորագույն կրթության, էներգիայի, եռանդի և նվազ կադապարվածության շնորհիվ արագորեն յուրացնում են հարահոս փոփոխվող խաղի կանոնները՝ ստանձնելով «նոր ժողովրդավարների» երկրորդ, երրորդ սերունդների դերը, որոնք ցանկանում են քաղաքական փոփոխություններ իրականացնել **տարաբնույթ հեղափոխությունների** միջոցով:

2.4. Հեղափոխությունները և սոցիալ-քաղաքական ճգնաժամերի հաղթահարման գործընթացի հետագծերը

Նոր աշխարհակարգի ձևավորման շրջանակներում հետխորհրդային երկրներում երիտասարդությունը՝ որպես «նոր սերնդի ժողովրդավարներ», հանդես է գալիս նոր որակի՝ **(ազգակենսորոն, պետականակենսորոն, քաղաքացիակենսորոն)** քաղաքական արդիականացման գործընթացների կրող և արարող: Որպես սոցիալ-քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման դրոշակակիր՝ երիտասարդությունը ձեռնամուխ է լինում քաղաքական իրականության փոփոխությունների հեղափոխությունների միջոցով:

Եթե վարքի միասնական մոտիվացիա և արժեշահային համակարգ ունեցող զարգացած հասարակության համար հեղափոխության հնարավորությունը նվազագույնի է հասցված, ապա կերպափոխվող հասարակություններում, որտեղ անցյալի իդեալականացումը, անումիան և ֆրուստրացիան սովորական վիճակ են, երիտասարդության ներառվածությունը այդպիսի գործընթացների մեջ տարածված սոցիալական երևույթ է: Դիցուք՝ Վրաստանի երկրորդ սերնդի «նոր ժողովրդավարները», օգտագործելով քաղաքական զարգացման ճգնաժամերի հետևանքով առաջացած սոցիալական խմբերի դժգոհությունը, իրականացրին «վարդերի հեղափոխություն»՝ ստանալով վրացական «Կմառա» երիտասարդական շարժման աջակցությունը: Որպես կանոն՝ «գունավոր հեղափոխությունների» գլխավոր դերակատար երիտասարդությունն օգտագործում է մարզինալ մարդկանց՝ ինքնահաստատման, ինքնաիրացման ձև ընտրելով պայքարը հանուն ժողովրդավարական համախմբման: Այս ամենն էլ հնարավորություն է տալիս «նոր ժողովրդավարների» երրորդ սերնդին խուսափելու սեփական մարզինալների հանդեպ բարոյական և իրավական խիստ պատժամիջոցներ կիրառելուց, քանի որ նրանք հստակ դերակատարում ունեն կանխավ

ծրագրված հեղափոխության մեջ: Քաղաքական գործընթացների կազմակերպման այս տեխնոլոգիաների իմացությամբ էլ կերպափոխվող Ուկրաինայում, Վրաստանում և Ղրղզստանում կազմակերպվեցին «զունավոր հեղափոխություններ»¹⁶³:

Մասնագիտական գրականության մեջ «զունավոր հեղափոխությունների» պատճառների վերաբերյալ լիակատար համաձայնություն չկա, սակայն առկա է բացահայտ տեղաշարժ զուտ դասակարգային և տնտեսական մոտեցումներից (Կ. Մարքս և նեոմարքսիզմ) դեպի բազմագործոն և կառուցվածքային նեովեբերական ուղղվածության տեսություններ¹⁶⁴: Քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման գործընթացի համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նեովեբերականությունը ենթադրում է ինչպես պետության և վերնախավերի վիճակի, միջազգային դրության, զանգվածների մոբիլիզացիայի կարևորություն, այնպես էլ քաղաքականության, տնտեսության, լեզվափոխության և բռնության ինքնավար ոլորտների բարդ փոխազդեցություն՝ ազգ-պետության կայացման և զարգացման համար:

Ցանկացած քաղաքական վարչակարգ բախվում է բազում հիմնախնդիրների, այդ թվում՝ իշխանություններից և կարգերից բնակչության դժգոհության արտահայտման, վերնախավի անտարբերության, ոչ պրոֆեսիոնալիզմի, տարբեր աստիճանի զանգվածայինության ապստամբությունների, անհատական էկսցեսների, ահաբեկչության, խմբակային բողոքների տարբեր ձևերի: Որտե՞ղ է այն սահմանը, որից հետո ներքինների բողոքի տևականությունը, իսկությունը տեսնելու վերնախավի անընդունակությունը և քաղաքական ազատության անհատ կրիչների գործունեությունը կարող են դասակարգվել որպես հեղափոխություն:

¹⁶³ Станчик С.С., Молодежные организации как ударная сила «ЦВЕТНЫХ РЕВОЛЮЦИЙ», Право и политика 10 (154), 2012, С. 1676- 1679.
http://www.nbpublish.com/library_get_pdf.php?id=21552

¹⁶⁴ Առավել վաղ և արդեն դասական դարձած աշխատանքներ - Голдстоун Дж., К теории революции четвертого поколения. – Логос. № 5, 2006.с. 58-103; Голдстоун Дж. Революции. Очень краткое введение. М.: Изд-во Института Гайдара. 2015, 192 с.: Епархина О.В. Теоретические подходы к исследованию социальных революций: возможности исторической социологии, Вестник РГГУ. Серия: Философия. Социология. Искусствоведение. № 2 (82), 2012, с. 36-51; Козер Л. А. Функции социального конфликта. М.: Дом интеллектуальной книги: Идея-пресс, 2000, 208 с.

Հարցադրմանը համակարգված պատասխանելու նպատակով օգտվենք Ա. Թոյնբիի դասական «**մարտահրավեր-պատասխան**» հայեցակարգից: Այդ դիտանկյունից ակնհայտ է, որ ամեն մի բողոք կամ ընդվզում փաստորեն մարտահրավեր է վարչակարգի համար¹⁶⁵: Ըստ Ա. Թոյնբիի «**մարտահրավեր-պատասխան**» հայեցակարգի՝ եթե հակամարտության փոխազդեցության դաշտերում ընտրված ռազմավարությունը (կաշառում, բանակցություններ և զիջումներ, ահաբեկում, ռեպրեսիաներ և այլն) ոչ թե մարում, այլ ավելի է մեծացնում են դժգոհությունը, ապա իշխող վերնախավից ակնկալվում է նոր պատասխան: Այդ պատասխանի համապատասխանության աստիճանով պայմանավորված՝ ճգնաժամը կարող է ճնշվել, խաղաղեցվել, իսկ անտեսման դեպքում՝ վերածվել հեղափոխության:

Այդ գործընթացներն ուղեկցվում են «վերնների» և «ներքնների» միջև հեղափոխություն ծնող «օբյեկտիվ» և «սուբյեկտիվ» պատճառների «շարժիչ ուժերի» և այլ հեղափոխականացնող գործոնների կարծրատիպերի փլուզմամբ, քանի որ սա իր հերթին պահանջում է հասարակական կարծիքի ձևավորում վերնախավի և առաջնորդների, ինչպես նաև բնակչության այն մասի վերաբերյալ, որն աջակցում է տվյալ համակարգին: Դա էլ նոր որակ է հաղորդում «**օտար-յուրային**» երկվության շրջանակում իրականացվող հասարակական գիտակցության մանիպուլյացիայի վրա հիմնված քաղաքական արդիականացման գործընթացներին՝ ծնելով նոր որակի քաղաքական **արդիականացման մարզինալ ռազմավարություն ունեցող դերակատարների կողմից իրականացվող սոցիալ-քաղաքական գործընթաց**: Աշխարհի չափ հին «օտար-յուրային» երկվության ուսումնասիրությամբ զբաղվող Է. Բենվենիստը, Տ. Ա. Վան Դեյկը, Վ. Ի. Շախտսկին դրա միջոցով հիմնավորել են մանիպուլյատիվ տեխնոլոգիաների հնարավոր ներդրումները, որոնց օգտագործմամբ արդիականացման դերակատարները ձևավորում են ոչ միայն «օտարին» կոշտ մերժելու մեխանիզմներ, այլև «յուրայիններին» համոզում են պատրաստակամ լինել աջակցելու «օտար/թշնամի» համակարգի և դրա վերնախավի նկատմամբ բռնությանը: Այս համատեքստում շրջանառվում է ոչ թե Վ. Ի. Լենինի¹⁶⁶, այլ Ս. Հանթինգթոնի՝

¹⁶⁵ Розов Н. С., Теория трансформации политических режимов и природа неопатримониализма. Полис. Политические исследования. № 6. 2015, с. 157-172.

¹⁶⁶ **Լենին Վ. Ի. (1870-1924)** - Ըստ պրոլետարիատի առաջնորդի՝ հեղափոխությունը անհնարին է առանց հեղափոխական իրավիճակի, ընդ որում, ոչ բոլոր հեղափոխական իրավիճակներն են հանգեցնում հեղափոխության: Վ. Ի. Լենինը նշել է հեղափոխական

հեղափոխությանը տված հետևյալ սահմանումը. «...Հասարակության, քաղաքական ինստիտուտների, սոցիալական կառույցների, պետության առաջնորդության և քաղաքականության մեջ գերիշխող արժեքների ու առասպելների արագ, հիմնարար և բռնի փոփոխություններ»¹⁶⁷, որոնք ուղեկցվում են արժեքների, ավանդույթների, կրոնական համոզմունքների մի մասի ոչնչացմամբ, մերժմամբ կամ կերպափոխմամբ՝ արդիականացման դերակատարներին դրդելով մշակելու մարզինալ-պոպուլիստական ռազմավարություն: Այդ իսկ պատճառով նման հեղափոխություններն սկսել են ընկալվել որպես դրամատիկ սյուժեով քաղաքական ներկայացումներ, որտեղ որոշիչ են երկրի աշխարհագրական դիրքը, քաղաքակրթական պատկանելությունը, քաղաքական համակարգի առանձնահատկությունները, կառավարման ձևը, տնտեսական և սոցիալական զարգացման մակարդակը:

Այդպիսի հեղափոխությունների նախապատրաստման համար մեթոդաբանական հիմք մշակելով՝ Ս. Հանթինգթոնը¹⁶⁸ համոզված էր, որ քաղաքակրթությունը մարդուն առանձնացնում է մնացած կենսաբանական տեսակներից, բացի այդ, այն որոշվում է ինչպես ընդհանուր օբյեկտիվ տարրերով՝ լեզու, պատմություն, կրոն, սովորույթներ, սոցիալական ինստիտուտներ, այնպես էլ մարդկանց սուբյեկտիվ ինքնանույնականացմամբ. «Իրենց արմատները որոնող մարդկանց համար թշնամիները

իրավիճակի երեք գլխավոր պայման. 1) հեղափոխության համար բավարար չէ, որ «ներքինները չցանկանան», այլև անհրաժեշտ է, որ «վերինները չկարողանան» առաջվա նման կառավարել, 2) ճնշված դասակարգերի կարիքի և աղքատության սովորականից ավելի սրացում, 3) նշվածի արդյունքում այն զանգվածների ակտիվության զգալի բարձրացում, որոնք «խաղաղ» դարաշրջանում հանգիստ թույլ էին տալիս թալանել իրենց, իսկ բուռն ժամանակներում ներգրավվում են (ինչպես ճգնաժամի ընդհանուր իրավիճակով պայմանավորված, այնպես էլ հենց «վերինների» կողմից) հրահրված ելույթների մեջ: Հեղափոխությունը ծագում է այնպիսի իրավիճակից, երբ վերը թվարկված օբյեկտիվ փոփոխություններին միանում է **սուբյեկտիվը**՝ հեղափոխական **դասակարգի**՝ զանգվածային հեղափոխական շարժումներ իրականացնելու ընդունակությունը, դասակարգ, որը բավարար չափով **ուժեղ է** տապալելու (կամ ջարդելու) հին կառավարությունը, որը երբեք, նույնիսկ ճգնաժամերի ժամանակներում, «չի ընկնի», եթե նրան «չգցեն» (**Ленин В. И.** Крах II Интернационала. ПСС. Т. 26. С. 218–219):

¹⁶⁷ Хантингтон С., Политический порядок в меняющихся обществах, пер. с англ. В.Р. Рокитянского. - М. : Прогресс-Традиция, 2004, с. 54.

¹⁶⁸ Хантингтон С., Политический порядок в меняющихся обществах, пер. с англ. В.Р. Рокитянского. - М. : Прогресс-Традиция, 2004, с. 50-94.

կարևոր են, և ամենավտանգավոր պոտենցիալ թշնամանքը ծագում է հիմնական համաշխարհային քաղաքակրթությունների «խզման գծերի» երկայնքով»¹⁶⁹:

Այս համատեքստում «խզման գծերը» այն տարածքներն են, որտեղ տեղի էին ունենում քաղաքակրթությունների փոխադարձ ներթափանցումներ, որտեղ կարելի է մոդելավորել հեղափոխական իրադարձությունների զարգացման տարբերակներ՝ կապված ինչպես հասարակության համախմբման, այնպես էլ այստեղ հակամարտության գոտիների առաջացման հետ, որոնք կարող են իրենց ազդեցությունը տարածել մշակութաքաղաքակրթական, աշխարհաքաղաքական, քաղաքատնտեսական բավական մեծ տարածքների վրա: Քաղաքական արդիականացման գործընթացների շրջանակում տեղի ունեցող «գունավոր հեղափոխություններն» առաջին հերթին առնչվում են մարդկանց իրավունքին և հոգևոր կյանքին: Այս իրադարձությունների նախապատրաստման ընթացքում լուծվում են ոչ միայն բնակչության հիմնական զանգվածի կյանքի որակի և կյանքի մակարդակի էական բարելավման, այլև **քաղաքակրթության ընտրության հարցերը**: Այսինքն՝ **«քաղաքակրթության խզման գծերի»** վրա տեղի ունեցող «գունավոր հեղափոխություններ» կոչվող իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ գործընթացն ուղեկցվում է քաղաքական համակարգերի ապակայունացմամբ¹⁷⁰: Դրանում հիմնական դերը սկսեցին խաղալ **լեզվի, կրոնի, մշակույթի և ավանդույթների արդիականացման** հիմնախնդիրները: Մարդկանց հոգևոր կյանքի այս նույն տարրերն էլ սկսեցին արդիականացվել նաև «գունավոր հեղափոխություններ» իրականացնելիս, որոնց ժամանակ ոչ միայն ապամոնոտաժվում կամ արմատապես վերափոխվում են քաղաքական, տնտեսական և սոցիալական համակարգերը, այլև տեղի է ունենում արժեքների, ավանդույթների, կրոնական համոզմունքների մի մասի ոչնչացում կամ ձևափոխում և դրանց փոխարինում ուրիշներով:

¹⁶⁹ Хантингтон С., Столкновение цивилизаций. Пер. с англ. Т. Велимеев. М. АСТ, 2007, с.15

¹⁷⁰ Lane D. The Orange Revolution: 'People's Revolution' or Revolutionary Coup? /D. Lane // British Journal of Politics and International Relations, 2008, Vol. 10, P. 525–549, Wilson J. L. Colour Revolutions: The View from Moscow and Beijing / J.L. Wilson // in Rethinking the 'Coloured Revolutions' / D. Lane and S. White (eds.), Abingdon, UK and New York: Routledge, 2010, 336 p.

«Խզման գծերը» այն տարածքներն են, որոնցում տեղի ունեցող «գունավոր հեղափոխությունների» և «թավշյա հեղափոխությունների» ազդեցության ուժեղացումը կարող է հանգեցնել տարաբնույթ քաղաքական արդյունքի: Տվյալ պարագայում անհրաժեշտ ենք համարում տարբերակել այս երկու հեղափոխությունների սահմանումները: Եթե հետամրոդջատիրական (պոստսոցիալիստար) վարչակարգերը փլուզած Արևելյան Եվրոպայի երկրներում ստացված արդյունքի տեսակետից «թավշյա հեղափոխությունների» հետևանքով տեղի են ունենում հակաժողովրդավարական վարչակարգերի քայքայում, **վերնախավի փոփոխություն, քաղաքական համակարգի վերափոխում և ժողովրդավարական անցում** ավետող ռազմավարական **քաղաքականության մշակում**, ապա «գունավոր հեղափոխությունները» հանգեցրին իշխանության փոփոխման, սակայն ժողովրդավարության ճանապարհին շրջադարձային փուլ չդարձան: «Գունավոր հեղափոխությունները» վարկաբեկում և, հետևաբար, տապալում են ոչ թե ռեժիմը, համակարգն ու ինստիտուտները, այլ գործող քաղաքական վերնախավը հենց վերջինիս մեթոդներով, որոնք քայքայում են գոյություն ունեցող ռեժիմի հիմքերը: Ակտորների անուններում՝ «Օտպոր», «Կմարա» (բավական է), «Պորա», «Քել Քել» (վերածնունդ), զգացվում է հեղափոխական ժամանակների ոգին (լենինյան «Երեկ շուտ էր, իսկ վաղը ուշ կլինի» դարձվածքը), սակայն հեղափոխությունների դերակատարները խոսում են միայն քաղաքական լիդերների և դրանց կողմնակիցների փոփոխման մասին և չունեն հասարակության հեղափոխական վերակառուցման գաղափարապես հիմնավորված պլաններ: «Գունավոր հեղափոխությունների» հռչակած գլխավոր նպատակը ռեժիմի ներսում առաջնորդության փոփոխումն է՝ ընտրությունների ընթացքում խախտված վարչակարգի ինստիտուցիոնալ հիմքերի (տվյալ դեպքում՝ ժողովրդավարության) վերականգնման համար: «Գունավոր հեղափոխությունը» չի պահանջում լայն հասարակական և քաղաքական վերակառուցման իրականացում, և դրա լեգիտիմացումը կատարվում է նախկին իշխանության վարկաբեկման ու զանգվածային մոբիլիզացիայի շնորհիվ: Կան հեղինակներ, որոնց կարծիքով, «գունավոր հեղափոխությունների» հետո ավելի շատ ժառանգվածն է պահպանվում, քան փոփոխություններ են կատարվում, դա էլ թույլ չի տալիս խոսել որևէ ժողովրդավարական կամ, առավել ևս, հեղափոխական էֆեկտի

մասին¹⁷¹: Փաստորեն, «գունավոր հեղափոխությունները» դասական իմաստով հեղափոխական արդյունքներ չեն ապահովում¹⁷²:

«Թավշյա հեղափոխությունների» արդյունք են ոչ ժողովրդավար վարչակարգերի քայքայումը և ժողովրդավարական անցումները, սակայն «գունավոր հեղափոխությունները», հանգեցնելով իշխանության փոփոխության, շրջադարձային փուլ չդարձան ժողովրդավարության ճանապարհին: Միակ հատկանիշը, որը միավորում է բոլոր հեղափոխությունները, լայն մոբիլիզացիան է, որը երկու դեպքում էլ միջդասակարգային է: Մասնակցության ընդհանուր շարժառիթ դարձան փոփոխությունների կարգախոսները (համակարգերը՝ առաջին դեպքում, վերնախավերը՝ երկրորդ), ինչպես նաև որոշակի սոցիալական դասակարգերին կամ խմբերին պատկանելը:

Վ. Բանսը և Ս. Ուոլչիկն օգտագործում են **«Էլեկտորալ հեղափոխություններ»** եզրույթը, որը միավորում է զանգվածային ելույթներով ուղեկցվող ընտրությունների արդյունքում տեղի ունեցած բոլոր իշխանափոխությունները: Այդ պատճառով նրանք գալիս են այն եզրահանգման, որ Էլեկտորալ հեղափոխությունների ալիքը հետկոմունիստական երկրներում «ոչ միայն տարածաշրջանային է իր ընդգրկմամբ, այլև նույնքան ուժգին է ժողովրդավարական էֆեկտի մասշտաբներով, որքան 1988-1992թթ. հեղափոխությունների առաջին ալիքը»¹⁷³: Ըստ Բանսի և Ուոլչիկի՝ հեղափոխությունների առաջին ալիքն ընդգրկում է արևելաեվրոպական ժողովրդավարացման երրորդ ալիքի «թավշյա հեղափոխությունները», երկրորդը՝ «Էլեկտորալ հեղափոխությունները»: Միլիցկու կարծիքով, «Էլեկտորալ հեղափոխություն» հասկացությունը ներառում է հետկոմունիստական աշխարհում քաղաքական փոփոխությունների երեք կատեգորիա՝ **«տրանսֆորմացիոն ընտրություններ»**, **«Էլեկտորալ հեղափոխություններ»** և **«հետԷլեկտորալ ժողովրդական ելույթներ»**: Տրանսֆորմացիոն ընտրությունները բերում են ռեժիմի փոփոխության (Սլովակիա և Խորվաթիա): Էլեկտորալ հեղափոխություններ տեղի են ունեցել Սերբիայում, Վրաստանում և

¹⁷¹ Cheterian V., From reform and transition to «Coloured revolutions» // Journal of communist studies and transition politics. - L., 2009.-Vol. 25, N 2-3.-P. 136-160.

¹⁷² Манойло А. В., Цветные революции и технологии демонтажа политических режимов.- http://e-notabene.ru/wi/article_12614.html

¹⁷³ Bunce V., WolchikS. Favorable conditions and electoral revolutions // Journal of democracy. - Baltimore, MD, 2006. - Vol. 17, N 4. - p. 5.

Ուկրաինայում: «Պոստէլեկտորալ ելույթների» կատեգորիայի մեջ մտնում են Ղրդգստանի խորհրդարանական ընտրություններին հաջորդած կլանային բախումները:

Ըստ մեր հայրենակից Վ. Չետերյանի՝ «գունավոր հեղափոխությունների» ալիքը «հանգեցրեց հեղափոխության միակ իմաստով՝ շրջեց անցման հարացույցը¹⁷⁴»: Ըստ Հանթինգթոնի՝ «հեղափոխությունները կարող են հանգեցնել քաղաքականության, առաջնորդության և քաղաքական ինստիտուտների, բայց ոչ երբեք սոցիալական կառուցվածքի և արժեքների փոփոխության»: Փաստորեն, եթե Ս. Հանթինգթոնը մշակել է աշխարհի քաղաքական համակարգի ապագա ձևափոխումների մեթոդաբանությունը, ապա դրա իրականացման մեթոդները համակարգվել են «գունավոր հեղափոխությունների» գաղափարախոս Ալբերտ Էյնշտեյնի անվան ինստիտուտի տնօրեն Ջին Շարպի կողմից: Ի սկզբանե Ջ. Շարպը խորհրդատուի դերում հանդես եկավ Մերձբալթիկայում՝ 1990-1991թթ.: Դրանից հետո նրա մշակած մեթոդներն օգտագործվել են բոլոր «գունավոր» հեղափոխությունների ժամանակ, մասնավորապես, նա «արաբական գարնան» կազմակերպման գաղափարախոսն է համարվում: Նրա մեթոդաբանության համաձայն են «Պորա» երիտասարդական շարժման մասնակիցներն իրականացրել 2004-2005թթ. ուկրաինական «հեղափոխությունը»: Նման սցենարով սկսվեց իրադարձությունների զարգացումը Կիևում 2013թ. դեկտեմբերին: Շարպը համարվում է տարբեր երկրներում «գունավոր հեղափոխությունների» նախապատրաստման ժամանակաշրջանում ակտիվորեն գործող «Օտպոր» (Սերբիա), «Կմարա» (Վրաստան), «ՔելՔել» (Ղրդգստան), «Զուրր» (Բելառուս), «Սայուդիս» (Լիտվա) շարժումների գաղափարական ոգեշնչողը: «Ոչ բռնի պայքարի տեսություն» աշխատության մեջ Ջ. Շարպն ընդգծում է, որ «ոչ բռնություն» տերմինը վերջին ժամանակներում ավելի ու ավելի մեծ տարածում է գտնում: Այն հաստատուն կերպով մտել է քաղաքական լեզվի շրջանառության մեջ: Առանց դրա մամուլում ընթացիկ սոցիալական և քաղաքական իրադարձությունների առիթով լույս տեսնող հոդվածներում քաղաքական բանավեճերը ձևական բնույթ են կրում»¹⁷⁵: Շարպի մշակած

¹⁷⁴ Cheterian V., From reform and transition to «Coloured revolutions» // Journal of communist studies and transition politics. - L., 2009.-Vol. 25, N 2-3.-P. 136.

¹⁷⁵ Шарп Джин, Теория ненасильственной борьбы»
[http://mioritix.tripod.com/civica/sharp1\(24.03.2019\)](http://mioritix.tripod.com/civica/sharp1(24.03.2019))

մեթոդաբանության համաձայն՝ դիմադրությունը պետք է լինի ոչ բռնի. «Ոչ բռնի մեթոդներ ընտրելը իմաստ ունի ոչ միայն պարզապես այն պատճառով, որ դա լավ է կամ հաճելի, այլ քանի որ դա առավել արդյունավետ է»¹⁷⁶: Բռնության փոխարեն պայքարը տարվում է **«բնակչության և հասարակական ինստիտուտների կողմից կիրառվող հոգեբանական, սոցիալական, տնտեսական և քաղաքական զենքով: Նման զենքը հայտնի է տարբեր անուններով՝ բողոք, գործադուլ, համագործակցությունից հրաժարվել, բոյկոտներ, դժգոհության արտահայտում և ժողովրդական ինքնակառավարում»**:

Շարափի մեթոդի հիմքում այն մոտեցումն է, որ իշխանության թույլ կետերի բացահայտմամբ իշխանափոխություն է իրականացվում հետևյալ երեք փուլերով: Փուլ **առաջին**՝ բողոքի գործողություններ և իշխանության ոչ լեգիտիմ բնույթի մեխանիկական տապալում: **Երկրորդ փուլ**՝ ուժային կառույցների և պետական ապարատի վարկաբեկում, սաբոտաժի և վնասատվության քարոզչություն: **Երրորդ փուլ**՝ իշխանության անմիջական տապալում: «Ոչ բռնի գործողությունների» իրականացման պլանների իրագործման գործում Ջոն Շարպն առանձնահատուկ տեղ է հատկացնում իշխանությանը ցուցաբերվող դիմադրության փուլերից յուրաքանչյուրի պլանավորմանը: Ջ. Շարպը հավաքել և մանրամասն նկարագրել է ոչ բռնի պայքարի 198 մեթոդ, ինչպես նաև դրանց փոխազդեցության որոշ տարբերակներ: Դրանք բաժանված են երեք խմբի՝ **բողոք և հորդոր, հրաժարում համագործակցությունից և միջամտություն**: Ոչ բռնի բողոքի և հորդորի մեթոդները հիմնականում ներառում են խորհրդանշական ցույցեր, այդ թվում՝ երթեր և պիկետներ (54 մեթոդ): Հրաժարումը համագործակցությունից բաժանվում է չորս կատեգորիայի՝ ա) հրաժարում սոցիալական համագործակցությունից (16 մեթոդ), բ) հրաժարում տնտեսական համագործակցությունից, այդ թվում՝ բոյկոտներ (26 մեթոդ) և գործադուլներ (23 մեթոդ), հրաժարում քաղաքական համագործակցությունից (38 մեթոդ): Ոչ բռնի միջամտությունը հոգեբանական, ֆիզիկական, սոցիալական, տնտեսական և քաղաքական միջոցների օգտագործմամբ, ինչպիսիք են հացադուլը, ոչ բռնի

¹⁷⁶ Տե՛ս նույն տեղում:

օկուպացիան և զուգահեռ ինքնակառավարումը (41 մեթոդ), ձևավորում են վերջին խումբը¹⁷⁷:

Դրանց կառուցվածքայնացման վերաբերյալ կոշտ հրահանգներ չկան. երկրներից յուրաքանչյուրում նշված մեթոդները կարող են կիրառվել ցանկացած համադրությամբ՝ օգտագործելով մարզինալներին, օտարվածներին, սպասումների հիասթափության մեջ հայտնվածներին, իրենց իրավունքների համար պայքարող փոքրամասնություններին, հավակնոտներին: Բազմամակարդակ անորոշության հաստատման համար «գունավոր հեղափոխությունների» շուրջ ծավալված քաղաքական բանավեճում Հարվարդի համալսարանի Քենեդու անվան պետական կառավարման դպրոցի ԶԼՄ-ների և հանրային քաղաքականության կենտրոնի պրոֆեսոր **Ժոզեֆ Ս. Նայը**¹⁷⁸ մշակեց և հիմնավորեց «փափուկ ուժի» (soft power) տեխնոլոգիան:

Հանդես գալով ռազմական ուժի կիրառման նվազեցման օգտին՝ **Ժ. Նայը** իր **«Փափուկ ուժ» հայեցակարգի** օգնությամբ առաջարկում է ներքին փոփոխություններ իրականացնել նորմերի և արժեքների մանիպուլյացիաների ճանապարհով: Ըստ Նայի՝ Արևմուտքի ներքին նվաճումների և ձեռքբերումների «գրավչության» ցուցադրումը հաղորդակցության բազմաթիվ ալիքների միջոցով կարող է վերաբերվել քաղաքական արժեքներին (**ժողովրդավարություն, ազատություն, արդարություն**), մշակութային արտեֆակտներին (փոփ-երաժշտություն, արվեստ) և սպառման առարկաներին («Մակ Դոնալդս» բջջային հեռախոսներ): Հիմնական ռազմավարությունը քաղաքացիների նորմերի և արժեքների

¹⁷⁷ Шарп Джин, Теория ненасильственной борьбы»

[http://mioritix.tripod.com/civica/sharp1\(24.03.2019\)](http://mioritix.tripod.com/civica/sharp1(24.03.2019))

¹⁷⁸ Ժոզեֆ Ս. Նայը Բ. ԱՄՆ նախագահ Բ. Քլինտոնի վարչակազմում աշխատել է Պենտագոնի ղեկավարի՝ միջազգային անվտանգության գծով օգնականի պաշտոնում, 1993-1994թթ. գլխավորել է ԱՄՆ հետախուզության ազգային խորհուրդը: Որպես Եռակողմ հանձնաժողովի գործադիր կոմիտեի անդամ՝ պարբերաբար մասնակցել է Միջազգային հարաբերությունների կոմիտեի նիստերին: Եղել է տնօրեն Արևելք-Արևմուտք անվտանգության ուսումնասիրությունների ինստիտուտում և Ռազմավարական ուսումնասիրությունների միջազգային ինստիտուտում: ԱՄՆ նախագահ Բ. Օբամայի օրոք ներգրավվել է երկու նոր հետազոտական նախագծերում՝ «Հանուն նոր ամերիկյան անվտանգության» և «ԱՄՆ ազգային անվտանգության բարեփոխումներ»: Ժ. Նայի տեսական դրույթներն ունեն գիտավերլուծական նշանակություն և կիրառական իմաստով ուղղված են առաջին հերթին ԱՄՆ-ի հեգեմոնիայի ընդլայնմանը, ինչպես նաև նպատակ՝ առավելագույնս հիմնավորելու այս կամ այն էլիտար խմբի շահերը:

մանիպուլյացիաների ճանապարհով ներքին փոփոխությունների առաջնությունն էր. «Մեր ուժի կիրառումից օգուտ են քաղելու ավելի շուտ այն երկրները, որոնք ամենաշատն են մոտեցել ազատականության, խոսքի ազատության և ինքնավարության գլոբալ նորմերին, որոնց առավել հասանելի են հաղորդակցման բազմաթիվ ուղիները, և որոնց նկատմամբ վստահության մակարդակը մեծանում է դրանց ներքին և միջազգային նվաճումների հաշվին»¹⁷⁹: Այս տեսակետի վրա հիմնված արտաքին քաղաքականությունը ներառում է քաղաքացիական հասարակության կառույցները, որոնց աջակցմամբ է միայն ավտորիտար պետություններում լեզալ և լեզվատիր միջոցներով վարչակարգի փոփոխություն իրականացվում: Ավտորիտար պետություններում ընտրությունների լեզվատիրությունը վիճարկող «գունավոր հեղափոխությունների» սատարումը «փափուկ ուժի» կիրառման ձևերից է:

Ինստրագենտները՝ բողոքի կրիչները, շեշտը դրել են ազատության, մասնավոր սեփականության նկատմամբ լեզվատիր իրավունքի, ազատ շուկայական հարաբերությունների և պետական կարգավորման գործող կարգին հակադրվելու վրա: Այս համատեքստում, Նայի «փափուկ ուժը» վճռական դեր ունի նոր աշխարհակարգի կայացման գործընթացում, քանի որ ազդեցության, իշխանության այս տեսակը անմիջականորեն կապված է տեղեկատվական հեղափոխության, տեղեկատվության բուն ծավալի աճի, ինչպես նաև համացանցի շնորհիվ այդ տեղեկատվության տարածման լայնամասշտաբության և արագության հետ: Այստեղ գլխավորը ոչ թե նյութականն է, այլ տեղեկատվությունը և դյուրաշարժությունը¹⁸⁰:

Սակայն «փափուկ ուժի» գլխավոր իմաստն այն է, որ այն ոչ միայն հորդորման, համոզելու կամ փաստարկների օգնությամբ մարդկանց ինչ-որ քայլի դրդելու ընդունակության վրա հիմնված իշխանություն է, այլև մի կողմից մրցունակ կրթության, նորարարական մտածողության վրա, մյուս կողմից՝ չհիմնավորված նկրտումներ ունեցող «ակտիվիստների»: Այդ դիտանկյունից ակնհայտ է, որ սոցիալ-քաղաքական փոփոխությունները

¹⁷⁹ Най Дж. С., Гибкая власть. Как добиться успеха в мировой политике. М.: ФСПИ Тренды, 2006. с. 176–177

¹⁸⁰ Մարգարյան Մ. Մ., «Փափուկ ուժի» (soft power) տեխնոլոգիայի կիրառման անհրաժեշտության մասին, <https://mmmargaryan.wordpress.com/2016/08/27/%D6%83%D5%A1%D6%83%D5%B8%D6%82%D5%AF-%D5%B8%D6%82%D5%AA%D5%AB-soft-power>

հնարավոր չէ իրականացնել և կառավարել միայն ուժային մեթոդներով: Դրա համար անհրաժեշտ է գիտակցության «վերակոդավորում», ինչն էլ, իր հերթին, պահանջում է ոչ միայն տեղեկատվական, այլև խորհրդանշական աշխարհի փոփոխություն: Ընդ որում, հենց խորհրդանշական աշխարհն է առավել նշանակալի, քանի որ հիմնականում դեպի այդ աշխարհն է կողմնորոշվում հասարակության սոցիալական հիշողությունը, որը թույլ է տալիս նրան դիմակայել ինչպես արտաքինից եկող քայքայմանը, այնպես էլ ինքնառնչացմանը: Ակնհայտ է, որ ցանկացած հասարակությունում, բարեփոխումներին, հեղաշրջումներին, հեղափոխություններին զուգահեռ, տեղի են ունենում նաև այսպես կոչված **խորհրդանշական հեղափոխություններ**: Ընդ որում, արմատապես վերանայվում է **«խորհրդանշական կապիտալը»**, որը կուտակվել է քաղաքական զարգացման նախորդ փուլի ընթացքում:

Հայկական «թավշյա հեղափոխության» հաջողության և արդյունավետ փոփոխությունների համար անհրաժեշտ է հայ հասարակության գիտակցության «վերակոդավորում», ինչն էլ, իր հերթին, պահանջում է ոչ միայն տեղեկատվական, այլև խորհրդանշական աշխարհի բնականոն արդիականացում: Եթե քաղաքական իշխանությունը ցանկանում է լինել լեգիտիմ ու խարիզմատիկ և հրաժարվում է անորոշություններ մակածելուց, ապա ի սկզբանե պետք է գծագրի իր կողմից կառուցվող աշխարհի ազատության և հումանիզմի սիմվոլները (Միշել Ֆուկո):

Խորհրդանշական աշխարհն առավել նշանակալի է, քանի որ դեպի այդ աշխարհն է հիմնականում կողմնորոշված հասարակության սոցիալական հիշողությունը, որը թույլ է տալիս նրան դիմակայել արտաքին և ներքին սպառնալիքներին ու մարտահրավերներին: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ խորհրդանշական հեղափոխությունները կոչված են կտրուկ փոխելու մեր և աշխարհի մասին ունեցած մեր պատկերը՝ մշակելով անվտանգ Ներկայի և Ապագայի տեսլականն ու իրականացման մեխանիզմները:

Այդ համատեքստում, «թավշյա հեղափոխությունների» պայմաններում արմատապես արդիականացվում է պատմականորեն կուտակված «խորհրդանշական կապիտալը»՝ հումանիզացնելով արդյունքի կառավարման փիլիսոփայությունը: Կարծում ենք, որ հայ հասարակության խորհրդանշական հիերարխիայի արժեքային փոփոխությունը մոտավորապես պետք է ընթանա այսպիսի մոդելով.

1. Անկառավարելի թվացող խորհրդանշական գործընթացներն իրականում հստակորեն ուղղված են որոշակի նպատակի՝ հաղթահարել խնդիրները «փափուկ ուժի» միջոցով: «Փափուկ ուժը» ենթադրում է հասարակական գիտակցության այլընտրանքային արդիականացում՝ տեղեկատվության, գիտելիքի և մշակույթի օգնությամբ:

2. Փոխվում է **«թշնամի-բարեկամ»** և **«հերոս-հակահերոս»** կողմնորոշիչների համակարգը՝ պայմանավորված նոր աշխարհատեսությամբ, աշխարհընկալմամբ, ինչպես նաև նոր հիմնավորված և չհիմնավորված ամբիգիաներով:

3. Փոխվում է ծիսային տարածությունը՝ PR և GR կապերի վերանայման հետևանքով կերպավորվում և վերաբժնորվում է **իշխանություն-հասարակություն** կապը:

4. Նոր ծիսականության հաջողությունը պայմանավորված է նոր սիմվոլների միջոցով արդյունքի կառավարման նոր մակարդակի և իշխանության խարիզմայի երկարակեցության ապահովմամբ:

5. Հին տեքստերը կորցնում են իրենց արդիականությունը, արտադրվում են գաղափարախոսական նոր տեքստեր, որոնք կոչված են հիմնավորելու ազգային անվտանգության նոր ընկալումները՝ ապահովելով անցյալ-ներկա-ապագա կապը, ինչպես նաև հասարակության և իշխանության ռացիոնալ և իռացիոնալ էներգիան:

6. Քաղաքական բեմ են բարձրանում ազգային մրցունակության բարձրացման և հայկական քաղաքակրթության բնականոն արդիականացման նոր հերմենալ տեքստ մշակողները՝ լրագրողներ, գրողներ, գիտնականներ, ինչպես նաև վիրտուալ աշխարհի դերակատարներ (բլոգերներ, սոցիալական ցանցերի օգտատերեր):

7. Շարունակական քաղաքացիական կրթություն և քաղաքացիական մշակույթի զարգացում, ինչը հնարավորություն կտա զարգացնելու քաղաքացիավարության (civiliarchic) ինստիտուտը՝ մոդելավորելով ազատ ժամանակի տնօրինման արժեքաբանությունը:

8. **«Փորձի և սխալի»** կառավարման հարացույցի մերժում և **«գիտավերլուծական»** կառավարման հարացույցի օգնությամբ իշխանության իրականացման մշակույթի հումանիզացում, գերշահույթի և փոխհամաձայնեցված խմբիշխանության մերժում, տրիպարտիզմի հաստատում, ինչպես նաև երիտասարդության քաղաքական սոցիալականացում:

Հանրագումարենք, ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացման գործընթացում ձևավորված մարզինալությունը համադրական էություն և բնույթ ունի: Դա էլ հենց քաղաքական զարգացման ճգնաժամերի պայմաններում հեղափոխականացում է կերպափոխվող հասարակության վարքը՝ նպաստելով ոչ լեգիտիմ իշխանության վերարտադրմանը: Հետևաբար ժողովրդավարության որակի ապահովումը հնարավորություն կտա հաղթահարելու և կառավարելի դարձնելու համադրական մարզինալությունը: Այդ նպատակով քաղաքական համակարգի բոլոր ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտները, ՀՀ «թավշյա հեղափոխության» հաջողությունն ապահովելու նկատառումներով, պետք է իրականացնեն սոցիալական երկխոսության, սերունդների համերաշխության, ժողովրդավարական կայունության, սոցիալական պատասխանատվության քաղաքականություն՝ ապահովելով բնականոն արդիականացում:

2.5. Ժողովրդավարական լեգիտիմացման բնութագրիչները Հայաստանի Հանրապետությունում

Հետխորհրդային նորանկախ երկրներում տեղի ունեցած «գունավոր հեղափոխությունների» քաղաքակրթական, ինստիտուցիոնալ, սոցիալ-հոգեբանական և աշխարհաքաղաքական հիմքերի տարամիտվածությունը վերանայեց «առաջին սերնդի» ժողովրդավարների իշխանության լեգիտիմացման արդյունավետությունը: Ուսումնասիրվող թեմայի տիրույթներում ուշագրավ են նաև արաբական երկրների քաղաքական զարգացումները, որտեղ պատրանքային ժողովրդավարության դերակատարները ներծին ու արտածին նոր ազդակների օգնությամբ մերժեցին իշխանության ներկայացուցիչների լիազորությունների լեգիտիմությունը: Ժողովրդավարական լեգիտիմության նկատմամբ գիտական հետաքրքրության աճը պայմանավորված է նաև գլոբալ կերպափոխումներով, քանի որ «կենտրոն-ծայրամաս» շահերի ներդաշնակման համար անհրաժեշտ է կանխել մեզապոլիսներում գործառույթ տարաբնույթ մարզինալների թատերականացված քաղաքական գործունեությունը: Այս համատեքստում անհրաժեշտ է ուսումնասիրել **անցում-կերպափոխում-լեգիտիմություն-համախմբում-բնականոն արդիականացում** փոխհարաբերությունների բազմաչափության համադրականության հիմնախնդիրները՝ բացահայտելով ազգային անվտանգության

ապահովման և ժողովրդավարության որակի միջև եղած կապը: Ամբոխավարության, մարգինալության կանխման, ինչպես նաև ազգային անվտանգության նոր սպառնալիքների բացահայտման նկատառումներով ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմացման արժեքաբանության հիմնախնդրի ուսումնասիրումն իրականացված է քաղաքական գիտության նոր գիտաճյուղի՝ համախմբագիտության (կոնսոլիդոլոգիա) եզրույթների միջոցով:

Ժողովրդավարական լեգիտիմացումը, իշխանության դերակատարների փոխհարաբերությունների բնույթով պայմանավորված, **հասարակություն-պետություն-ազգ-անհատ** բազմավեկտոր երկխոսության համակարգ է: Այն համալիր ամբողջություն է, որի բնութագրիչներն են.

- ❖ սոցիալական, տնտեսական և քաղաքական համակարգերի բնականոն արդիականացում,

- ❖ երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական և տեղեկատվա-հաղորդակցական համակարգերի համամասնական զարգացում,

- ❖ «կենտրոն-ծայրամաս» տիրույթներում իշխանության հարաբերությունների լեգիտիմ և լեգալ երկխոսության ծավալում,

- ❖ երկրի տարածքում վարչակարգի կողմից ընդունված օրենքների և կառավարության որոշումների կատարում՝ «Ժողովրդավարության որակի» սկզբունքների հիման վրա,

- ❖ պետական քաղաքականության մեջ կառավարման ուժային և համագործակցային մեթոդների դերի հավասարակշռում՝ պետականաշինության մշակույթի զարգացում,

- ❖ ճանաչում միջազգային ասպարեզում՝ մասնակցություն ռազմավարական/խաղաղասիրական անվտանգության կերտման գործընթացին: Ակնհայտ է, որ ժողովրդավարական լեգիտիմացումը քաղաքական զարգացման այնպիսի աստիճան է, որի շրջանակում իշխանության դերակատարները կարողանում են հաղթահարել գլոբալ քաղաքատնտեսական գործընթացների ժամանակ առաջացած ճգնաժամերը և պարբերաբար մակաձվող անորոշությունները:

Ժողովրդավարական անցման գործընթացում ծագած անորոշության մասին առաջին անգամ 20-րդ դարի 50-60-ական թվականներին խոսել են Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների փորձը հանրագումարած քաղաքագետներ Գ. Օ'Դոնելը և Պ. Շմիթերը. «Անցումը տեղի է ունենում

որոշակի մենիշխանական վարչակարգից դեպի անորոշ **«ինչ-որ բանի»**: Այս «ինչ-որ բանը» կարող է կապված լինել ինչպես ժողովրդավարական լեգիտիմության հաստատման, այնպես էլ նոր և, հնարավոր է, առավել կոշտ ավտորիտար կառավարման ձևի վերականգնման հետ»¹⁸¹: Վերոնշյալ հեղինակներն անցումից համախմբում տիրություններում մշակել են անորոշությունից դուրս գալու չորս հնարավոր սցենարներ.

1. Եթե դերակատարներից որևէ մեկը, չունի հստակ հակակշիռ, ապա ուժային ռազմավարությունն առաջացնում է **«բոլորի պատերազմը բոլորի դեմ»**, իսկ զանգվածների ներգրավվածության դեպքում՝ նաև քաղաքացիական պատերազմ: Տվյալ սցենարի դեպքում հնարավոր չէ անորոշությունից լեգիտիմ դուրս գալ. այն միայն խորացնում է քաղաքական զարգացման ճգնաժամերի շարունակականությունը:

2. Դերակատարներից մեկը դառնում է իրադրության լիիրավ տերը՝ **«հաղթողը ստանում է ամեն ինչ»** սկզբունքով: Այս դեպքում ժողովրդավարական լեգիտիմության ձևավորումը պայմանավորված է հաղթողների իրականացրած իշխանության մշակույթով:

3. Դերակատարներից մեկի գերակայության դեպքում անորոշությունից ելք կարող է դառնալ քաղաքական գործընթացի մասնակիցների իշխանության լեգիտիմության լեգալ կամ ոչ լեգալ համաձայնությունը համընդհանուր նորմերի ընդունման վերաբերյալ՝ **«էլիտաների համագործակցություն»**:

4. Դերակատարների ուժի և ուժային բախման ժամանակ պարտություն կրելու անորոշ հարաբերակցության դեպքում նրանք կարող են որպես պայքարի միջոց օգտագործել իրավական ինստիտուտները՝ դրանով իսկ **«բոլորի պատերազմը բոլորի դեմ»** սկզբունքը փոխարինելով **«կանոններով պատերազմ»** սկզբունքով:

Հասկանալի է, որ առաջարկված սցենարներն իդեալական տիպային են. քաղաքական իրականության մեջ ավելի շուտ անհրաժեշտ է խոսել սցենարների համակցումների մասին: Օրինակ՝ ՀՀ-ում ՀՀ նախագահական ընտրություններին հաջորդած 1996թ. սեպտեմբերյան դեպքերից հետո անորոշությունից ելքը ներառում էր **«հաղթողը ստանում է ամեն ինչ»**

¹⁸¹ O'Donnell G., Schmitter P. and Whitehead L. Transition from Authoritarian Rule. Tentative Conclusions about Uncertain Democracies. Baltimore and London, Johns Hopkins University Press, 1996, p. 3

սցենարը: Փաստորեն, ՀՀ քաղաքական գործընթացների առանձին ժամանակահատվածներն այս սցենարների օգնությամբ դիտարկելով՝ կարելի է վերակազմավորել սցենարներից յուրաքանչյուրի տրամաբանությունը և ի հայտ բերել անցումային վարչակարգերին բնորոշ լեգիտիմացման բնութագրիչներն ու իշխանության իրականացման մշակույթը:

Այս ելակետային մոտեցման համատեքստում անցման ժամանակ, ճիշտ է, ժողովրդավարական ինստիտուտների գործունեությունն ունի որոշակի նորմավորված բնույթ, սակայն արդյունքներն ի սկզբանե անհայտ են: Բացի այդ, ավտորիտար ժողովրդավարական կառավարման ժամանակ ինստիտուտների գործունեությունը լեզալ է, սակայն քաղաքական գործընթացի արդյունքների լեգիտիմությունը կասկածանքի է ենթակա, եթե, իհարկե, կանխավ որոշված չէ¹⁸²: Անցման անորոշության կանխման ռազմավարական պլանավորումը ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմացման գործընթացի կարևոր բնութագիրն է, որը կերպափոխման բնույթի արդյունք է: Այս տեսանկյունից, անցումից համախմբում գործընթացում ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմացման առանձնահատկությունները վերլուծելիս ակնհայտորեն երևում է, որ ՀՀ-ում առկա անորոշությունների կանխման նկատառումներով անհրաժեշտ է քաղաքական և տնտեսական համակարգի բնականոն արդիականացում: Նմանօրինակ տիրույթներում Ա. Պշևորսկին հատուկ ուշադրություն է դարձրել ոչ միայն քաղաքական վերնախավին, այլև հասարակության գիտակցությանը և քաղաքակրթվածության մակարդակին¹⁸³: Նմանօրինակ մոտեցումով էլ պայմանավորված են ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմացման գործառնական հետևյալ մակարդակները.

1. ժողովրդավարական համախմբման սկզբունքներին համապատասխան նույնականության ձեռքբերում,

2. քաղաքացիության զարգացման նկատառումներով՝ ընտրագանգվածի, հատկապես երիտասարդության քաղաքական սոցիալականացում,

¹⁸² Մարգարյան Մ. Մ., Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Պետական ծառայություն», 2006, էջ 123:

¹⁸³ Пшеворский А., Демократия и рынок. Политические и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке. Пер. с англ./ Под ред. проф. Бажанова В.А., М.: Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2000. с. 11

3. ազատական տնտեսական հարաբերությունների զարգացում, որը ենթադրում է «նոր հարուստների» սեփականության լեգիտիմացում և սոցիալական պատասխանատվություն, քաղաքական ինստիտուտների հեղինակություն, միջանձնային վստահություն, քաղաքացիության զգացում և այլն,

4. բարեկեցության պետության և գործող վարչակարգի գործունեության ժողովրդավարության որակի ապահովում՝ հանրային շահի գերակայությամբ:

Վերոշարադրյալից ակնհայտ է, որ ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմացման գործընթացում գլխավորը մրցակցող էլիտաների կողմից քաղաքական շուկայի կառավարման գործընթացում քաղաքական կարգի և ինստիտուտների գործունեության որակը գիտակցաբար բարձրացնելն է: Այս մոտեցմամբ պաշտպանում ենք այն դրույթը, որ քաղաքական դերակատարների որոշումները և լեգիտիմությունը պայմանավորում են **«շարունակական բարեփոխումներ վերևից»** գործողությունների բնույթը: Դերակատարներն իրենք են ընտրում իրենց ռազմավարությունն ու մարտավարությունը՝ դրանով իսկ պայմանավորելով ստեղծվող ընթացակարգերի և ինստիտուտների յուրահատկությունները: Այլ խոսքով՝ ժողովրդավարական լեգիտիմացումը հաստատվում է ոչ թե հասարակական *tabula rasa*-ի պայմաններում, որի վրա կարելի է «գրել» ցանկացած քաղաքական ծրագիր. նրա վրա ազդում է նաև նեոինստիտուցիոնալիզմի հասունության մակարդակը՝ կապված առաջին հերթին իշխանության իրականացման մշակութային ավանդույթների և սոցիալ-տնտեսական բազմաշերտ ենթատեքստի հետ:

Իրականում ժողովրդավարական լեգիտիմացումը պայմանավորված է ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացի կառուցվածքային, այսինքն՝ ազգային և պետականաստեղծ, սոցիալ-տնտեսական և մշակութաարժեքային գործոններով: ՀՀ ժողովրդավարացման գործընթացը հանրագումարելով՝ առաջինի առնչությամբ քաղաքական ընտրախավին կարելի է մեղադրել «փոխհամաձայնեցված խմբիշխանական» զարգացման կործանարար ուղի ընտրելու մեջ: Միաժամանակ նշենք, որ քաղաքական գործընթացների վեկտորային և ոչ վեկտորային մոդելների բարդ չափումների «հանդիպման» պատճառով ի սկզբանե օբյեկտիվորեն չի բացառվում անկանխատեսելին, քանի որ «նոր ժողովրդավար» ընտրախավերը չունեն

արդիականացման խաղը տեսնելու համապատասխան քաղաքական գիտակցության մակարդակ և հաճախ նաև ունակություն՝ վերախմբագրելու գծային ազատականացումը: Ուստի հետխորհրդային նոր անկախացած երկրներից շատերում, «գունավոր հեղափոխությունների» պատրանքային բնույթով պայմանավորված, հիմք կա եզրակացնելու, որ ստեղծված ինստիտուտները բավարար չեն արդյունավետ կառավարելու ժողովրդավարական լեգիտիմացման գործընթացները: Ավելին, տրոհված սոցիալական տարածության մեջ հայտնված մարզինալ անհատները հաճախ «համընդհանուր փոփոխությունների սուրբ պարտականությունները ստանձնած» դրոշակակրի մտայնությամբ կասկածի տակ են առնում պատմականորեն բյուրեղացած քաղաքակրթական կարևորագույն գոյաբանական բաղադրիչները, որոնք էլ ծնում են անհաղթահարելի անորոշություններ:

Այս համատեքստում ուշագրավ է Ա. Գելենի հետևյալ բնորոշումը. «Երբ ծաղրածուները, դիլետանտները, թեթևամիտ մտավորականները մխրճվում են առաջ, այդժամ ամենուր տիրում է Բալագանի ոգին, և ընկնում են նույնիսկ հնագույն սոցիալական ինստիտուտներն ու խիստ մասնագիտացված միությունները: Իրավունքը դառնում է էլաստիկ, մշակույթը՝ նյարդային, կրոնը՝ սենտիմենտալ»¹⁸⁴: Ակնհայտ է, որ «գունավոր հեղափոխությունների» պատրանքային բնույթը և աշխարհի տարբեր մասերում ահագնացող ահաբեկչությունը ստիպում են վերաբժնորել վեկտորային զարգացման նպատակահարմարությունը. անհրաժեշտ է նոր ռազմավարությունների մշակման միջոցով կառուցվածքավորել և՛ գլոբալ, և՛ լոկալ քաղաքակրթությունների ապագան:

Ռուս քաղաքագետ Ռ. Պ. Շպակովան ընդգծում է «ի սկզբանե դեռ Վերերի կողմից հիմնավորված լեգիտիմացման գործընթացում հասարակության և իշխանության միջև հեռավորության չափի հիմնախնդիրը: Հանուն իշխանության լեգիտիմացման այդ հեռավորության կրճատումը կատարվում է դեպի «ներքև»՝ «ժողովրդավարական հասարակության» ձեռքը փոխանցելով էլ ավելի մեծ թվով իշխանական լիազորություններ»¹⁸⁵:

¹⁸⁴ Гелен А., Образ человека в свете современной антропологии. Личность. Культура. Общество. 2007. Вып. 3 (37). С.42

¹⁸⁵ Шпакова Р. П., Легитимность и демократия (уроки Вебера), - Полис. Политические исследования. 1994. № 2. с. 170-171, 173

Փաստորեն, ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմացումը ենթադրում է քաղաքական համախմբման բազում սցենարներ, որոնցից **«քաղաքական դիսկուրսի»** և **«քաղաքական համագործակցության» մեթոդների** ընտրությունը ընտրախավերից և հայ հասարակությունից պահանջում է քաղաքական զարգացման ճգնաժամերի իրատես վերլուծություն: Վերջիններիս օգնությամբ լեգիտիմացումը տեղի է ունենում իշխանական հարաբերությունների բոլոր մակարդակներում՝ ներառելով ռացիոնալ և իռացիոնալ փոխհարաբերությունները: Այդ առումով խիստ արժեքավոր է Յ. Հաբերմասի՝ **«Ցանկացած իշխանության լեգիտիմացում ենթադրում է քաղաքական դիսկուրսի ծավալում»** սկզբունքի վրա հիմնավորված այն մոտեցումը, համաձայն որի՝ ժամանակակից պետության սոցիալական բնույթի աճը հակասության մեջ է մտել կապիտալիստական արտադրության տրամաբանության հետ: Ուստի որպեսզի արդի հասարակությունները խուսափեն հեղափոխություններից, սոցիալական բուստերից, քաղաքական ինստիտուտների գործառույթների հստակ իրականացման վրա հիմնված լեզալ կարգ են հաստատում բանավեճի կամ բանակցությունների միջոցով: Յ. Հաբերմասի կարծիքով, անհատական շահերն **անհասկանալի, անընդունելի և անհասանելի են, հետևաբար լեգիտիմ չեն** առանց փոխըմբռնելի հաղորդակցման: Ուստի, անհրաժեշտ է հստակ տարբերություն դնել **նպատակառացիոնալ և հաղորդակցառացիոնալ գործողությունների միջև**¹⁸⁶: Նմանօրինակ քաղաքականությունը թույլ է տալիս փաստել, որ ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմացման հիմնական բնութագրիչը **«բարեփոխումներ վերևից»** կամ **«հեղափոխություն վերևից»** սցենարի ակտիվ կիրառումն է, որը ենթադրում է քաղաքական զարգացման **կառուցվածքային և ընթացակարգային գործոնների** համադրում: Վերջինիս օգնությամբ ապացուցվեց, որ անցումագիտական գրականության մեջ ժողովրդավարական անցման և ժողովրդավարության ծննդի (լինի դա նրա «օրգանական աճը, ուժային ներդրումը ներսից» կամ նույնպիսի «փաթաթումը դրսից») լեգիտիմացման վերաբերյալ միարժեք մոտեցում գոյություն չունի: Նման գործընթացների շարժիչ ուժը հարաբերական անկախության մեջ իր շահերը պաշտպանող ընտրողն է, որի վարքագծով է պայմանավորված ժողովրդավարական լեգիտիմացման ապահովումը: Նման մոտեցման օգնությամբ հնարավորություն ենք ստանում կանխատեսելու ՀՀ

¹⁸⁶ Habermas. J., Legitimation Crisis. London: Heinemann, 1973. p. 8-9

ժողովրդավարացման **կառուցվածքային** և **ընթացակարգային** գործոնների ռազմավարությունը: Ուստի, պայմանավորված քաղաքական ուժերի ռազմավարության և մարտավարության փոխհարաբերություններով, մինչև անգամ առանցքային քաղաքական դերակատարների անհատական յուրահատկություններով, կարևորում ենք հայ իրականությունում սոցիալ-դասային պայմանների (ժողովրդավարացման սոցիալական բազա) և մշակութաարժեքային գործոնների, իսկ հետո արդեն ընթացակարգային գործոնների համադրականությունը:

Այս առումով ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմացումը որոշակի զուգահեռներ ունի անցումային բոլոր այն երկրների հետ, որոնց քաղաքական համակարգերը **ձևավորվում, կայանում, կերպավորվում և բնականոն արդիականացման են ձգտում** էթնիկական բախումների առկայության պարագայում: Ուստի նպատակահարմար է նկատի ունենալ.

1. Ս. Հանթինգթոնի «Քաղաքակրթությունների բախման» և Ֆ. Ֆուկույամայի «Պատմության վերջի» ազատական հայեցակարգերի գծային զարգացման արդյունքում կենտրոն-ծայրամաս տիրույթներում առաջացած «մեծ խզումը» վկայում է, որ ազատական ժողովրդավարության իդեալը միանգամից չէր կարող հանգեցնել քաղաքական զարգացումների՝ Ֆ. Ջաքարիայի «այլոց հզորությունը» հայեցակարգի շրջանակներում: Անկախացումից հետո ՀՀ-ում առաջացած քաղաքական զարգացման ճգնաժամերը ձևավորել են **«նոր կենտրոն»-«նոր ծայրամաս»** հակասություններ՝ հանգեցնելով **«մեծ խզումից» «ուժեղ պետության» միջոցով դուրս գալու անհրաժեշտության**¹⁸⁷: Լինելով բարդ և բազմաշերտ քաղաքական հասկացություն՝ ժողովրդավարությունը ենթադրում է կառավարության ղեկին տիրանալու իրավունքի թափանցիկ քննարկում, որն էլ խթանում է ժողովրդավարական լեգիտիմացման հաստատման գործընթացի արժեքային ուղղվածությունը: Այս համատեքստում ժողովրդավարական անցումը ՀՀ-ում այլ հետագիծ կարող էր ունենալ, եթե չլինեք 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը¹⁸⁸: Այսինքն՝ եթե ժողովրդավարական անցումը լինեք նորաստեղծ

¹⁸⁷ Фукуяма Ф., Великий разрыв, Пер. с англ. под общ. ред. А.В. Александровой. — М: ООО «Издательство АСТ»: ЗАО НПП «Ермак», 2004. — 474 с., Фукуяма, Ф. Сильное государство: Управление и мировой порядок в XXI веке: пер. с англ. М: АСТ: АСТ МОСКВА: ХРАНИТЕЛЬ, 2006.—220 с

¹⁸⁸ 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի վնասի գոտու մակերեսը կազմել է 10 000 կմ² տարածք, որտեղ ապրում էր 1 մլն բնակիչ, ուժեղ ավերման գոտին կազմել է 3000 կմ²

ՀՀ սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր, մշակութային կյանքը համակարգող միակ գործոնը, ապա այս տիրույթներում կգրանցեինք քաղաքական զարգացման և արդիականացման գործընթացների բացարձակ այլ արդյունքներ: Նման երկրներից են Մերձբալթյան հանրապետությունները, Լեհաստանը, Հունգարիան, Չեխիան, Գերմանիան, որոնց ժողովրդավարական լեզվատիմացումն ի սկզբանե տեղի է ունեցել և այժմ էլ տեղի է ունենում համախմբման ու բնականոն արդիականացման տիրույթներում:

2. Ժողովրդավարական անցման գործընթացը ՀՀ-ում գրեթե միաժամանակ ներառեց երկու տարբեր գործոններ՝ Ղարաբաղյան հիմնախնդիրն առանձին և Հայ դատին առնչվող խնդիրները՝ առանձին, որոնց իրականացման համար **«առաջին սերնդի ժողովրդավարները»** գծային զարգացման (միայն ազատականացում) միջոցով շահարկեցին և մարգինալացրին հասարակության սպասելիքները: Սակայն նույնիսկ այս դեպքում միջազգային շրջակայքի հարթության վրա 90-ական թվականներից մինչև այսօր ՀՀ քաղաքական զարգացման գործընթացում Ղարաբաղյան և Հայ դատի հիմնախնդիրները շարունակում են գերակայել: Այս պարագայում օրինաչափ է այն հանգամանքը, որ ՀՀ ժողովրդավարացման արդյունքները, կրելով վերը նշված երկու գործոնների ազդեցությունը, փաստորեն այսօր էլ գերակայում են, բայց արդեն իրենց բազմավեկտոր բնույթով ունեն **սիներգետիկական արժեքաբանություն:** Այս նկատառումներից ելնելով՝ ուշագրավ է այն հանգամանքը, որ ռազմավարական անվտանգության գլոբալ դերակատարները՝ ԱՄՆ, ԵՄ, ՌԴ, հետամուտ որոշակի նպատակների, օգտվելով քաղաքական ընտրախաղի անվճռականությունից ու տրոհվածությունից, հաճախ ժողովրդավարացման գործընթացի գնահատման և դրա վերահսկման առումով կիրառում են երկակի ստանդարտներ (օրինակ՝ տարբեր չափորոշիչներով են իրականացվում միջերեսիկական բախումների գնահատումը և կարգավորումը): Այս առումով էական ազդեցություն ունեցավ ոչ միայն Թուրքիայի և Ադրբեջանի կողմից ՀՀ-ի և ԱՀ-ի շարունակական շրջափակումը, այլև նրանց կողմից ծավալված տեղեկատվական ցանցային պատերազմը: Ուստի ՀՀ ժողովրդավարական լեզվատիմացման գործընթացը համակարգված դիտարկելու նպատակով

տարածք, ավերված քաղաքների թիվը՝ 11, գյուղերինը՝ 58, տուժած քաղաքների թիվը՝ 21, գյուղերինը՝ 342, անօթևան մնացածների թիվը՝ 514000 մարդ, զոհերը՝ 25000, www.nssp-gov.am/spitak.htm, spitakseism.info:

վերլուծենք փոփոխականների այն մակարդակները, որոնց միջև առկա պատճառահետևանքային կապերի խզումները հնարավորություն տվեցին կառավարող վերնախավին պարբերաբար մանիպուլացնելու և երկարաձգելու ՀՀ ժողովրդավարական անցումը՝ ստեղծելով փոխհամաձայնեցված խմբիշխանական կառավարում:

1. **Միջազգային գործոններ.** 1990թ. օգոստոսի 23-ին Անկախության հռչակագրի ընդունումից, իսկ 1992թվականի մարտի 2-ին ՄԱԿ-ին ՀՀ անդամագրվելուց հետո ՀՀ-ն ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու հնարավորություն ստացավ: Սակայն տարածաշրջանի գրեթե բոլոր երկրների միջև աշխարհաքաղաքական տարամիտող կողմնորոշումները հանգեցրին նրան, որ գլոբալ քաղաքականության հիմնական դերակատարները, նրանցից յուրաքանչյուրին ընդգրկելով իրենց շահերի և անվտանգության համակարգի տիրույթ, կրկնակի լարվածություն ստեղծեցին տարածաշրջանում: Հետևանքն այն է, որ տարածաշրջանի պետություններն իրենց անվտանգության քաղաքականությունը միմյանց հանդեպ կառուցում են առճակատման, այլ ոչ թե համագործակցության մշակույթի և քաղաքակրթությունների երկխոսության հիման վրա:

3. **Ազգ-պետություն կազմավորող գործոններ.** այս մակարդակում անհրաժեշտ է կարևորել ազատական-ժողովրդավարական արժեքների հիմքի վրա մշակված ՀՀ Սահմանադրության (1995) ընդունումը և 2005թ. ու 2015թ. սահմանադրական փոփոխություններով պայմանավորված ժողովրդավարական ինստիտուտների արդիականացման գործընթացը: Ղարաբաղյան հիմնախնդրի վերջնականապես կարգավորված չլինելու պատճառով և պատերազմի վերսկսման սպառնալիքից դրդված՝ հասարակությունը և հատկապես պետական իշխանության այն ինստիտուտները, որոնք իրականացնում են պաշտպանության և անվտանգության գործառույթներ, մշտապես կիսառազմականացված վիճակում են: Այս պատճառով ազգի համախմբման և ազատության ընկալումներում հասարակության մեջ առկա են **ազատական-պահպանողական և ազգայնական-պահպանողական, նոր ազատական մոտեցումներ:** Ազատական արժեքների կենսագործման նպատակով ՀՀ քաղաքական ընտրախավը նպատակամետ փորձում է ինտեգրվել գլոբալ քաղաքակրթության կառուցվածքում՝ գիտակցելով, որ ՀՀ մեկուսացումը և ժողովրդավարության ցածր որակը կարող են հանգեցնել արտաքին

միջազգային միջավայրի հետ ՀՀ քաղաքական համակարգի բախման:

4. Սոցիալ-տնտեսական գործոններ. ԽՍՀՄ ժողովրդատնտեսական համալիրի փլուզումից հետո ՀՀ ժողովրդավարացման ողջ գործընթացում տեղի ունեցած վաուչերային սեփականաշնորհումը հանգեցրեց տնտեսության փոշիացման և կենսական պաշարների քայքայման, քանի որ իրականացվեց ոչ թե հանրային շահով պայմանավորված և ռազմավարական զարգացման տեսլականի շրջանակներում, այլ մասնավոր շահի գերակայությամբ¹⁸⁹: Պաշտոնական տվյալներով 1997թ. օգոստոսի 25-ի դրությամբ սեփականաշնորհվել է խոշոր և միջին 910 ձեռնարկություն և 1658 փոքր օբյեկտներ¹⁹⁰: Վաուչերային սեփականաշնորհման հետևանքով ՀՀ-ում ձևավորվեց «նոր հարուստների» փոքրաթիվ մի խումբ, որը յուրացրեց պետական ունեցվածքի գերակշիռ մասը՝ չունենալով ոչ ծրագիր, ոչ իրավական հարթությունում ամրագրված պարտավորություններ և ոչ էլ ստացված արտադրական հզորությունները գործարկելու ցանկություն:

5. Սոցիալ-դասային գործոններ. այս մակարդակում ՀՀ-ում առկա է խիստ տրոհված պատկեր: ՀՀ-ում անցման ազատականացման փուլում առաջացած սոցիալական բևեռացումը միջին խավի գրեթե բացակայության պատճառով շարունակում է սպառնալիք մնալ: ՀՀ-ում ձևավորված սոցիալ-դասային տարամիտվածությունը հասարակության մեջ ի սկզբանե կենտրոնախույզ միտումներ է ձևավորել: Այդ իմաստով ուշագրավ է այն հանգամանքը, որ անկախության առաջին ամիսներին արդեն առկա էին ըմբոստության միտումներ, որոնք իրենց կենտրոնախույզ բնույթով կարող էին ապակառուցողականացնել Հայաստանի ներքին կյանքը (ՀԱԲ-ի դեպքերը)¹⁹¹: Միաժամանակ, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակչության ֆիզիկական անվտանգությունն ապահովելու նկատառումներով, հասարակության մեջ կենտրոնամետ ուժերի միավորման արդյունքում ձևավորվեց «Երկրապահը»: Վերջինս կարողացավ կանխել

¹⁸⁹ Տե՛ս ՀՀ օրենքը «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին (ընդունված ՀՀ ԱԺ կողմից 17.12. 1997թ.)», <https://www.arlis.am/documentview.aspx?docID=28458> (30.03.2019)

¹⁹⁰ ՀՀ օրենքը «Հայաստանի հանրապետության պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման 1996-1997 թվականների ծրագրի կատարման հաշվետվության մասին (ընդունված ՀՀ ԱԺ կողմից 05. 12. 1997թ.)», <http://www.irtek.am/views/act.aspx?aid=3771> (30.03.2019):

¹⁹¹ Վասիլյան Ռ., Միքայելյան Ի., ՀԱԲ-ի ճակատագիրը..., Եր., Ա. հ. 2005, 112 էջ

կենտրոնախույզ խմբերի հզորացումը, և Ղարաբաղյան պատերազմում տարած հաղթանակի ոգու շնորհիվ օբյեկտիվորեն կանխվեցին սոցիալական բևեռվածությամբ պայմանավորված հակամարտությունները: Դրանով իսկ նա հնարավորություն ստացավ ոչ միայն մերձենալու ազատականներին, այլև, ներառվելով նրա մեջ, միջանկյալ կարգավիճակ ստանձնեց ազատական-պահպանողականների և ազգայնական-պահպանողականների միջև:

6. Սոցիալ-մշակութային և արժեքային գործոններ. այս մակարդակում ազատականների և ազգայնականների փոխհարաբերությունների միջև եղած տարաձայնությունները նվազեցին, քանի որ արդեն իսկ ձեռք բերված «վաուչերային» սեփականությունը չկորցնելու նպատակով նրանք սկսեցին ծրագրված մանիպուլացնել և մարզինալացնել զանգվածներին: Սակայն քաղաքական զարգացման հետագա գործընթացը, հատկապես 1998թ. ՀՀ նախագահական ոչ լեգիտիմ ընտրություններից հետո, առավել խորացվեց գծային ազատականացման մեխանիկական ներդրման հետևանքով առաջացած ճգնաժամերը: Այս համատեքստում, սոցիո և էթնոմշակութային օտարվածության հաղթահարման նկատառումներով պայմանավորված, քաղաքական ուժերը սկսեցին կարևորել ազատական-պահպանողականությունը և ավտորիտար ժողովրդավարությունը:

7. Քաղաքական գործոններ և գործընթացներ. այս մակարդակում ՀՀ քաղաքական իրականության մեջ նկատվում է քաղաքական ուժերի կողմից «պատերազմ խաղի կանոններով» ռազմավարության որդեգրում: Այս ամենը հանգեցրեց նրան, որ մարզինալ վազքի մեջ գտնվող քաղաքական ուժերը մի կողմից գծային ազատականացման ջատագով էին, մյուս կողմից, վարելով **ապագադափարականացված** պայքար, փոխզիջումային ռազմավարություն են մշակել **«քաղաքականությունն իբրև սակարկություն»** սցենարով, որի պարագայում յուրաքանչյուրը ստանում է այնքան, որքան կարող է վերցնել: Այլ կերպ ասած՝ զուտ անձնային կամ խմբային շահերի պաշտպանության նկատառումներով սակարկություն է տեղի ունենում, որը ենթադրում է «դրական գումարով խաղ», և այսպես շարունակ:

8. Անհատական կամ անձնական սոցիալ-հոգեբանական գործոնների մակարդակում մշակվել են փոխզիջումային կառուցակարգեր՝ պայմանավորված իրավիճակով: Պատճառը քաղաքական հարթությունում անհատի մարզինալությունն է, որը պատճառ է դարձել իրականությունից

ֆիզիկական և հոգևոր օտարման՝ գերակա դարձնելով լեզվափոխության ճգնաժամի փուլայնությունը:

Հանրագումարենք, ՀՀ-ում գծային ազատականացման փուլը հանգեցրել է քաղաքական զարգացման ճգնաժամերի, իսկ որպես միջէթնիկական հակամարտության գործընթացի դերակատար՝ այն շարունակում է ենթարկվել այդ թատերաբեմում գործող երկվեկտորային զարգացման «խաղի կանոններին»՝ միաժամանակ ներքաշվելով և՛ սոցիալ-տնտեսական, և՛ միջէթնիկական բախումների ոլորտ: Նշված գործոնները, ձևավորելով որոշակի վարքաբանական նմուշներ, դարձան և շարունակում են մնալ **ռիսկային** հասարակության, պետության, ազգի, անհատի կենսագոյության համար: Այստեղ մենք կարևորում ենք ժողովրդավարական անցման սուբյեկտիվ առանձնահատկությունները պայմանավորող ՀՀԾ-ական քաղաքական ընտրախավի լատենտ դերը: Ըստ էության, նրա կայացրած որոշումներից էր կախված ազատականացման գործընթացին զուգահեռ առաջացած քաղաքական զարգացման ճգնաժամերի կառավարումը:

Ահա թե ինչու ազատական բարեփոխումների արդյունքները Ռ. Դալը գնահատում է երկու չափորոշիչով՝ **թափանցիկ մասնակցություն և ազատ մրցակցություն**¹⁹²: Առաջինի համար որոշիչ է, թե ինչպիսի և ինչ քանակով դերակատարներ են մասնակցում գործընթացին (մասնակցության ազատության աստիճանը), իսկ երկրորդը՝ թե ինչպես, ինչ ազատությամբ են նրանք մասնակցում գործընթացին (մրցակցության ազատության աստիճանը): Հայաստանի վերաբերյալ կարելի է վկայակոչել իրականացվող բարեփոխումների արդյունքների գնահատականը «Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք» փաստաթղթում Հայաստանի 2012-2013թթ. Ազգային ինդիկատիվ ծրագիրը, որտեղ արձանագրվեց. «Ժողովրդավարական կառույցների հզորացումը, օրենքի գերակայությունը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգանքը ԵՄ-Հայաստան հարաբերությունների հիմնական ոլորտներն են... 2008թ. նախագահական ընտրություններին հաջորդած քաղաքական ճգնաժամն ընդգծում է ժողովրդավարացման գործընթացի ամրացման և Հայաստանի քաղաքական համակարգում ու կառավարման մեջ ժողովրդավարական

¹⁹² Даль Р., Демократия и ее критики, Пер. с англ. Под ред. М.В. Ильина. М., Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2003. с. 56-57

արժեքների որդեգրման անհրաժեշտությունը»¹⁹³:

Փաստ է, որ թեպետ սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ ոլորտներում իրավական-նորմատիվ առումով ՀՀ-ում ապահովված է ազատականության միջավայրը, սակայն գերակա չէ ժողովրդավարության բաղադրիչը, այսինքն՝ ազատականության հայեցակարգով հիմնադրված ինստիտուտների, կառույցների գործառնությունն ու փոխազդեցությունը՝ ժողովրդավարության սկզբունքների համաձայն: Մինչդեռ ինստիտուտների ժողովրդավարացումը կառավարող ընտրախավին հնարավորություն է տալիս **գիտագործնականորեն հիմնավորելու քաղաքական և կառավարչական որոշումները**՝ պայմանավորված ինչպես գլոբալացման գործընթացների քաղաքատնտեսական փոփոխությունների ինտենսիվությամբ, այնպես էլ «լավ կառավարման» սկզբունքների ներդրմամբ: Այս սկզբունքների օգնությամբ ՀՀ-ում պետական կառավարման արդյունավետության բարձրացման նկատառումներով կարևորում ենք քաղաքական ընտրախավի կողմից **ինչպես պետության արդիականացման ռազմավարության մշակումը, այնպես էլ կառավարման ծրագրային, գիտական ապահովման և արդյունավետության գնահատման համակարգերի ստեղծման անհրաժեշտությունը:**

Դրանց գոյությունը և բնականոն գործունեությունն անչափ կարևոր են ՀՀ-ում ժողովրդավարության որակի բարձրացման և բնականոն արդիականացման առումով: Այս ամենը, համախմբվածության առաջնային նախապայման հանդիսանալուց բացի, կհանգեցնի նաև կառավարման թափանցիկությանը և որոշումների նախապատրաստման գործընթացին փորձագետների մասնակցությանը՝ նպաստելով ժողովրդավարական լեգիտիմացմանը: Վերջինիս առկայությունն էլ հենց ենթադրում է ժողովրդավարության համախմբում, որի հիմքում հանրապետական և տեղական ինքնակառավարման ընտրությունների լեգիտիմության և ժողովրդավարության որակի արդյունքների ընդունումն է: Այդ դիտանկյունից տարանջատելով ժողովրդավարական անցման ժամանակային տարբեր փուլերը, տարբերակվում են **հիմնադիր, հիասթափության, սպասումների և օտարվածության, ակտիվության ընտրություններ:** Բաժանումը կատարված է ըստ ժողովրդավարացման «երրորդ ալիքի» տրամաբանության,

¹⁹³ Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք, Հայաստան. Ազգային ինդիկատիվ ծրագիր 2011-2013, Եր., ԵՀԱՀԳՏ, 2010, էջ 7:

համաձայն որի՝ եթե գծային զարգացմանը զուգահեռ հասարակության ընդերքում ձևավորվում է **ազգային արժեքային համակարգի լեգիտիմ արդիականացման հանրային պահանջումներ**, ապա փոփոխություն է տեղի ունենում գերակա դերակատար էլիտայի փոխդասավորվածության մեջ: Այս համատեքստում անցումից համախմբում գործընթացում անորոշությունից դուրս գալու ելքի հնարավոր տարբեր սցենարների դեպքում պետական-քաղաքական իշխանության և բյուրոկրատական ապարատի համալրմանը ծառայող «կադրերի բանկը» տարբեր է: Քանի որ անցումը սկսվեց **«Բոլորի պատերազմը բոլորի դեմ»** սցենարով, ուստի հաստատված քառսի պայմաններում քաղաքական պաշտոնների բաշխման և բյուրոկրատական ապարատի գործունեությունը ենթարկվում էր **«Հաղթողը ստանում է ամեն ինչ»** սկզբունքին: Մինչդեռ ակնհայտ է, որ ժողովրդավարական լեգիտիմացման համար անհրաժեշտ է ստատուսքվո պահպանող **էլիտաների համագործակցություն և ընտրագանգվածի մասնակցություն**, ինչպես նաև **քաղաքացիական վերահսկողություն**: Հաջողված ժողովրդավարական անցման երկրների փորձը (Լեհաստան, Չեխիա, Մերձբալթյան հանրապետություններ) վկայում է, որ **«էլիտաների համագործակցություն»** սցենարն ի սկզբանե բնականոն արդիականացման լավագույն մոդելն է: Հրաժարվելով «Պատերազմ բոլորի դեմ» ռազմավարությունից՝ անցում է կատարվում «Պատերազմ խաղի կանոններով» ռազմավարության: Այս սցենարի կայացման համար կոշտ ուժային ռազմավարությունը բացառված է, ավելին, գիտակցորեն մերժվում է «Հաղթողը ստանում է ամեն ինչ» սկզբունքը: Այսինքն՝ հնարավորություն է ստեղծվում լեգիտիմ ընտրությունների միջոցով կառավարող էլիտայի բաց հավաքագրման համար: Վերոշարադրյալը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմացման համար անհրաժեշտ է՝

❖ **վերահսկել** քաղաքական էլիտայի գործունեությունը՝ քաղաքացիական և քաղաքական հասարակության ինստիտուտների ներուժի փոխներդաշնակման միջոցով.

❖ **բարձրացնել** կառավարող էլիտայի պատասխանատվությունը՝ ժողովրդավարության որակի ապահովման և նոր հանրային կառավարման սկզբունքների արդյունավետ ներդրման նկատառումներով,

❖ **իրականացնել** քաղաքական և սոցիալական տարածության **«կենտրոն»-«ծայրամաս»** հարթությունների հավասարաչափ զարգացում՝

համընդհանուր և ազգային արժեշահային համակարգի բնականոն արդիականացման միջոցով: Դրանց գերակայությամբ լեզվիտիմացնել նախ **անհատ-հասարակություն-պետություն-միջազգային շրջակայքը**, ապա **միջպետական և միջազգային հարաբերությունները**՝ ապահովելով ազգային անվտանգություն:

❖ **կարևորել «բարեփոխումներ վերնից»** սցենարը, քանի որ ՀՀ-ում բնականոն արդիականացման գործընթացի դիտանկյունից նպատակահարմար է կասեցնել զանգվածներին մարզինալացնող **«բարեփոխումներ ներքևից»** զարգացումները: Այս պարագայում նախ կնվազի հասարակության հեղափոխականացվածությունը, ապա լեզվիտիմացման գործընթացը կառավարող ընտրախավն հնարավորություն կունենա նախաձեռնելու ժողովրդավարական համախմբում:

❖ **մշակել** համահայկական զարգացման համակարգված գիտավերլուծական համալիր ծրագիր՝ այդ աշխատանքում ընդգրկելով մրցունակ ներուժ ունեցող մարդկային ռեսուրսներ: Այս պարագայում հայ հասարակությունը ժողովրդավարական լեզվիտիմացման ընձեռած իր հնարավորությունները կօգտագործի և՛ ազգային, և՛ քաղաքական ինքնության բնականոն արդիականացման նպատակով՝ ընդարձակելով հայկական քաղաքակրթության գործունեությունը գլոբալ տարածության բազմաչափության մեջ:

❖ **ապահովել** հանրային շահի գերակայության վրա հիմնված շարունակական ժողովրդավարական բարեփոխումներ՝ անվտանգության ընդարձակված օրակարգի տարաբնույթ ինստիտուտների ռացիոնալ գործունեության և արդյունքի կառավարման երաշխիքների գործառնման միջոցով:

**ԳԻՐՔ 3. ԱԶԳ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆՈՆ
ԱՐԴԻԱԿԱՆԱՅՄԱՆ ԱՐԺԵՔԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**3.1. Ազգը՝ որպես քաղաքական արդիականացման
գործընթացի դերակատար**

Քաղաքական արդիականացումը բարդ և բազմաչափ գործընթաց է: Քաղաքական համակարգի բոլոր ինստիտուտները, ըստ իրենց գործառույթների, այդ գործընթացի դերակատարներն են: Մակայն այդ գործընթացի առանձնահատուկ դերակատարը քաղաքական ազգն է, որն արդի ցանցային և աստիճանակարգային կառավարման փոխհարաբերությունների խաղային զարգացման տրամաբանության անմիջական կրողն է: Այդ նկատառումներով քաղաքական ազգի ձևավորումն ու կայացումը ենթադրում է էթնոազգային «Ես»-ի բնականոն արդիականացում: Դա ազգին հնարավորություն կտա հավասարաբեք պատասխանելու մարտահրավերներին nation-building-ի միջոցով, ինչի շնորհիվ կառավարող էլիտան հնարավորություն կունենա ցանցային կառավարման պայմաններում բնականոն արդիականացնելու ազգային շահը: Ուստի կառավարող էլիտան՝ որպես քաղաքական արդիականացման ռազմավարության պատասխանատու, պետք է պատրաստ լինի մշակելու և իրականացնելու շարունակական բարեփոխումներ:

Պատմականորեն «ազգ» հասկացությունը օգտագործվում էր դեռևս Հին Հռոմում՝ հպատակ ժողովուրդներին բնորոշելու համար: Միևնույն ժամանակ այն օգտագործվում էր հունական ծագում ունեցող «էթնոս» հասկացության հետ միասին, որը նշանակում է ցեղ (մարդկանց հանրույթ)՝ միավորված բարեկամական կապերով, արյամբ, ընդհանրություններով, լեզվով և տարածքով: «Ազգ» հասկացությունն օգտագործվում էր նաև արտագաղթի, տարածքների բռնագավթման կամ հողերի միավորման միջոցով տեղի ունեցած մի քանի էթնոսների միաձուլման արդյունքը բնորոշելու համար: Ֆրանսիական ալկադեմիան 1694 թ. ազգը բնորոշեց որպես «միևնույն պետության, միևնույն

երկրի բոլոր բնակիչների միասնություն, որոնք ապրում են միատեսակ օրենքներով և օգտագործում են միևնույն լեզուն»¹⁹⁴։ Աբբա Միյենի բնորոշմամբ, ազգը «...միասնական խումբ է, որն ապրում է ընդհանուր օրենքով, ներկայանում է միևնույն օրենսդրությամբ և այլ ընդհանրություններով»¹⁹⁵։

Նշված ձևակերպումներով Էռնեստ Ռենանն (1882) ընդգծեց ազգի սուբյեկտիվ բնույթը. «Ազգը հոգի է, հոգևոր սկզբունք։ Որպես առանձին երևույթ՝ ազգը համարվում է հեռավոր անցյալի վերջնական կետ՝ կազմված տանջանքներից, զոհերից և ինքնամերժումից։ Ընդհանուր հոչակն անցյալում է, ընդհանուր կամքը՝ ներկայում՝ ուղղված մեծ բաների իրականացմանը և այդպիսի բաներ անելու ցանկությանը. այս ամենը ժողովուրդը համարվելու էական հիմքերն են»¹⁹⁶։

Տարբեր իրավիճակներում «ազգ» հասկացությունն ընկալվում է և՛ որպես էթնիկական հանրույթ, և՛ պետության բնակչություն, և՛ նույնականանում է հենց պետության հետ։ Այսպիսի մոտեցումը հանգեցրեց նրան, որ արդի գիտական մոտեցումներում ազգը, դիտարկվելով որպես քաղաքական արդիականացման դերակատար, համարվում է պետականաշինության մշակույթի ձևավորման և կայացման պատասխանատու։ Վերոշարադրյալից ակնհայտ է, որ պետականաշինության մշակույթն անվտանգության, հասարակական դաշինքի, միջազգային իրավունքի, քաղաքացիական հասարակության, մարդու իրավունքների և ազատությունների, ժողովրդավարության, իշխանության տարաբաժանման սկզբունքներով կառավարվող ազգ-պետությունների գործառնական արդյունք է։

Ազգ-պետության հիմնական բնութագրիչը ընդհանուր մշակույթ, լեզու, էթնիկականություն և պատմական կարծր հիշողություն ունեցող մեկ ազգի ինքնիշխանության բնականոն արդիականացման գործընթացն է։ Պատմության հոլովությունում այն ունեցել է մեծ ազդեցություն՝ հանդիսանալով քաղաքական լեզվատիրության և կայունության ապահովման երաշխիք։ Որպես քաղաքական կազմակերպություն՝ ազգ-պետությունն ապահովում է ինքնիշխանություն թե՛ աշխարհագրական սահմանների ներքո և թե՛ այլ ինքնիշխան պետությունների հետ հարաբերվելիս՝ նպաստելով ոչ միայն

¹⁹⁴ Попов О., Еврейский этнос, иудаизм и этническая конкуренция <http://pravaya.ru/faith/13/4317?print=1>

¹⁹⁵ Տե՛ս նույն տեղում։

¹⁹⁶ Pierre Manent, What Is a Nation? The Intercollegiate Review—Fall 2007, p. 23-24 <https://home.isi.org/what-nation>

կառավարող էլիտայի բաց հավաքագրմանը, այլև քաղաքական ինքնիշխանության ու հանրային համակեցության զարգացմանը:

Մասնագիտական գրականության մեջ ասվում է, որ ազգի ընկալումը ձևավորվել է 17-րդ դարի վերջին՝ պայմանավորված Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ քաղաքական հնչեղություն ստացած պետական ինքնիշխանության պահանջներով և սկիզբ առած ազգային ինքնագիտակցության ձևավորման գործընթացով: Ֆրանսիացի հեղափոխականները հանդես էին գալիս որպես հայրենասերներ, և այդ ժամանակներից «հայրենիք» բառը (հուն. patria) դարձավ ազգի սիմվոլ՝ կապվելով պետականության և քաղաքացիական ինքնության հետ: Վաղ բուրժուական դարաշրջանում առաջացած ընդհանրության զգացողության այս առանձնահատուկ դրսևորումը հետագայում հարստացավ նոր սիմվոլներով՝ պայմանավորված ազգային պետությունների ձևավորմամբ, ազգային ազատագրական պայքարի և ստրկատիրական, ավատատիրական համակարգերի փլուզմամբ, տարբեր մայրցամաքներում էթնոսների վերաբնակեցման հետ կապված սահմանների վերակառուցմամբ:

Քաղաքական մտքում առկա ազգի տեսական մեկնաբանությունների բազմազանությունը պայմանավորված է քաղաքական ժամանակի առանձնահատկություններով: Ուստի, չմերժելով դրանցից և ոչ մեկը, կարևոր ենք արդի պայմաններում ընդունված երկու հիմնական տեսական մոտեցումների անառարկելի գերիշխանությունը՝ **պրիմորդիալիստական** (անգլ. primordial՝ նախաստեղծ, նախասկզբնական) և **կոնստրուկտիվիստական** (լատ. constructivus՝ կառուցվածք, նախագծում):

Կառուցվածքային ուղղության կողմնակիցներն ազգը դիտարկում են որպես այս կամ այն սուբյեկտի նպատակաուղղված գիտակցված գործողությո-

յան արդյունք: Այս տեսանկյունից ազգը մեկնաբանվում է ն' որպես «երևակայական հանրույթ» (imagined communities), (Կ. Անդերսոն)¹⁹⁷, ն' որպես իշխանությունների կողմից համապետական համերաշխության արմատավորման հետևանք (Վ. Ռոզենբաում)¹⁹⁸:

Հետաքրքիր է նաև ազգը որպես ազգային համերաշխության պատկերներ ստեղծող ռազմավարական էլիտայի գործունեության արդյունք ներկայացնելը¹⁹⁹: Այսօր առավել ընդունած է Է. Գելների մոտեցումը. ըստ նրա՝ ազգը ծնող, արտադրող հիմնական սուբյեկտ է պետությունը: Որպես քաղաքական համակարգի գերակա ինստիտուտ՝ միայն նրա կողմից «միմյանց հանդեպ որոշակի ընդհանուր իրավունքների և պարտականությունների» կոշտ ընդունմամբ «մարդկանց խմբերը վերածվում են ազգի»²⁰⁰: Այդ պատճառով էլ հենց պետական կառույցների կողմից ազգային շարժումներ ձևավորելու գիտակցված գործողություններն էլ զարգացնում են ազգը: Նրա համախոհ Է. Հոբսբաումն ազգի ձևավորման գործընթացում նույնպես կենտրոնական տեղ է հատկացնում քաղաքական էլիտայի կողմից իրենց քաղաքացիների էթնիկական զգացմունքների մոբիլիզացման կառուցակարգերին և էթնիկական ինքնության տեղափոխմանը դեպի պետության մակարդակ²⁰¹: Այսպիսով, այս դեպքում երևակայական ազգի պաշտպանությանն ուղղված քաղաքական գործունեությունը ճանաչվում է ազգի՝ որպես առանձնահատուկ հանրույթ դիտարկելու գործոնը: Ընդունված է, որ այս հանրույթի ձևավորման վրա պետությունն ավելի շատ է ազդում, քան կենսաբանական կամ որևէ այլ նախախնամություն: Միևնույն ժամական հաստատվում է և այն, որ պետության այսպիսի կառուցողական գործու-

¹⁹⁷ Anderson K., “Accountability” as “Legitimacy”: Global Governance, Global Civil Society and the United Nations/Washington College of Law, Research Paper N 28, 2011, pp. 841; Андерсон Б., Воображаемые сообщества. Размышления об истоках и распространении национализма / Пер. с англ. В. Николаева; вступ. ст. С. П. Баньковской. — М.: Кучково поле, 2016. — 416 с

¹⁹⁸ Rosenbaum W. A., Political Culture: Basic Concepts in Political Science, New York, 1975. p. 170

¹⁹⁹ Касьянова К., О русском национальном характере. — М.: Академический Проект, Екатеринбург: Деловая книга, 2003. с. 27

²⁰⁰ Геллнер Э., Нация и национализм. М.: Прогресс, 1991, с. 35

²⁰¹ Хобсбаум Э., Нации и национализм после 1780 года.- Перевод с англ. А. А. Васильева.- Санкт-Петербург: Алетейя, 1998, с. 14-45

ներությունը պետք է գուգակցվի քաղաքացիների ընդհանուր բարի կամքի, ինչպես նաև մի շարք անհրաժեշտ նախադրյալների հետ, մասնավորապես՝ **պատմական հիշողության, մշակութային ընդհանրության որոշակի մակարդակի և հասարակության կրթվածության:**

Ըստ էության՝ պատմականորեն ազգային հանրույթի տվյալ ընկալումը, որը ենթադրում է պետության տարածքում բնակվող մարդկանց միավորում, հիմնվում է ազգի ձևավորման, այսպես կոչված, ֆրանսիական (արևմտյան) ձևաչափի վրա: 18-19-րդ դարերում Ֆրանսիայում ստեղծված քաղաքացիական հասարակության օրինակը պատմականորեն կանխորոշեց ազգի առաջին ընկալումը՝ որպես համաքաղաքացիության որոշակի ձև, որը ներառում է որոշակի տարածքում ապրող մարդկանց՝ անկախ նրանց օգտագործած լեզվից, մաշկի գույնից և կրոնական համոզմունքներից: Ազգի այսպիսի ազատական ընկալումը կողմնորոշված է քաղաքացիների որոշակի գաղափարական ընդհանրությամբ և քաղաքական ընտրությամբ, որոնք պետական ինստիտուտների հետ մեկտեղ հանդես էին գալիս որպես խմբային համերաշխության և հասարակության ինտեգրման խրախուսման կառուցակարգեր: Միաժամանակ ազգային շահերի հիմքում գլխավորապես դրվեցին քաղաքատնտեսական, աշխարհաքաղաքական հետաքրքրություններ, որոնք պահանջում էին քաղաքական ժամանակի ռացիոնալ գնահատական և ոչ պատվիրակված վերլուծություն:

Ազգի այսպիսի ընկալմամբ սահմանվեց **«մեկ ժողովուրդ – մեկ տարածք – մեկ պետություն»** բանաձևը, որը 19-րդ դարում Եվրոպայում ազգային պետությունների առաջացման համար դարձավ հիմնական կողմնորոշիչ:

Ազգի ձևավորման գաղափարի և փորձի մեկ այլ մոտեցում՝ գերմանականը, բխում էր նրա՝ որպես օրգանական միասնության մեջ գտնվող մարդկանց մշակութային հանրույթ ճանաչելու սկզբունքից: Ազգակերտման այսպիսի ընկալման և ձևի պայմաններում առանձնահատուկ նշանակություն ձեռք բերեցին էթնոգենետիկական գործոնները և հատկապես լեզուն, ավանդույթներն ու սովորույթները՝ ուշադրությունը կենտրոնացնելով մարդկանց ծագման ընդհանրության, բնակչության տվյալ խմբի արյունակցական կապի և պատմության հոլովությամբ ձևավորված համակեցության գործոնների վրա: Իր հերթին, դա անշեղորեն խթանեց շահերի ռացիոնալացման բարդ գործընթացը, ակտիվացրեց մարդկանց իռացիոնալ հույզերն ու զգացմուն-

քները, որոնցում լսվում էր «արյան ձայնը», «նախնիների կանչը», «հողի շունչը» և այլն: Այս հանգամանքն էլ նկատի ունենալով, եվրոպական բազմաթիվ հասարակություններում առկա ընդհանրությունները հիմք ընդունելով՝ ազգային գիտակցության նոր մակարդակ ստանալու նպատակով կարևորվեց ազգի մշակութային համերաշխության հիմքը:

Փաստորեն, «ազգ» հասկացությունը հավասարեցնելով մշակույթին՝ անտեսվեց այն, որ մշակույթը ազգի ընդամենը մեկ հատկանիշն է: Ըստ Է. Գելների՝ մշակույթները լինում են «վայրի» և «ջերմոցային».²⁰² «... Վայրի տեսակներն իրենց արտադրում ու վերարտադրում են ինքնաբերաբար՝ որպես մարդկանց կյանքի մի մաս: Չկա հանրություն, որ համատեղ կեցության նորմերի ու հաղորդակցության համակարգ չունենա: Այս կարգի վայրի համակարգերը (այլ խոսքով՝ մշակույթները) սերնդեսերունդ վերարտադրում են իրենց առանց որևէ գիտակից ծրագրի, հսկողության կամ հատուկ սննդի: Մշակովի կամ ջերմոցային բույսերն ուրիշ են, չնայած դրանք էլ են ծագել իրենց վայրի տարբերակներից: Սրանք ավելի բարդ են ու հարուստ և մեծ մասամբ օգտվում են գրագիտության ու մասնագետների ծառայություններից և կոչնչանան, եթե զրկվեն այդ անգնահատելի գուրգուրանքից, եթե չլինեն դրանց նվիրված մասնագետներին քիչ թե շատ կրթող, բազմաթիվ ու մասնագիտական կրթօջախները»²⁰²:

Այս պատմական և հոգևոր զարգացման փորձի հիմքի վրա աստիճանաբար առաջացավ **այրիմորդիալիստական** մոտեցումը, համաձայն որի՝ ազգը մարդկանց օբյեկտիվորեն ձևավորված հանրույթն է, որը տիրապետում է որոշակիացված արժեչափային համակարգի, և որի գոյությունը պայմանավորված չէ որևէ մեկի գիտակցված ու չգիտակցված գործողություններով: Այս իմաստով ազգն սկսեց հիմնականում ընկալվել որպես հանրույթի բնույթը և էությունը բացահայտող հատկանիշների ամբողջություն: Այս տեսանկյունից առավել հատկանշական է սոցիալ-դեմոկրատական կուսակցության գլխավոր քարտուղար, ավստրիացի Օ. Բաուերի (1881-1938)՝ ազգի հետևյալ մեկնաբանությունը. «Ազգը մարդկանց ամբողջությունն է, որը տարածքի, ծագման, լեզվի, բարքերի և ավանդույթների, ապրումների և պատմական

²⁰² Геллнер Э., Нация и национализм. М.: Прогресс, 1991, с. 66-67.

անցյալի, օրենքների ու կրոնի ընդհանրության հիման վրա ունի ճակատագրի և բնավորության ընդհանրություն»²⁰³:

Հետագայում պրիմորդիալիստական մոտեցման շրջանակներում ձևավորվեցին տարաբնույթ հայեցակարգեր, որոնցում ազգը դիտարկվում էր ոչ միայն որպես տվյալ հանրությին բնորոշ հատկություններ կրող ամբողջություն, այլև յուրօրինակ գաղափարներ ծնող և պատմականորեն ձևավորված մեծություն: Այսպես, սոցիոկենսաբանական մեկնությունների հեղինակները (Վ. Ռեյնպոլդս, Վ. Ֆալգեր, Յա. Վին), ինչպես նաև ռասիստական գաղափարներ ծնող Ժ. Գոբինոն, Խ. Մեյներսան և ուրիշներ շեշտադրում էին մարդկանց ռասայական պատկանելությունը, նրանց արյունակցական կապերը՝ պնդելով ազգի առաջացման բնական-գենետիկական բնույթը: Այս տեսանկյունից, օրինակ, մարդկանց կողմից ժառանգական համարվող այս կամ այն սիմվոլներն ու կարծրատիպերն ընկալվում էին որպես ժամանակի ընթացքում անփոփոխ և այլ ազգերի ներկայացուցիչների հանդեպ հստակեցված վերաբերմունք պահպանող ազգապահպան մեծություններ:

Ռուս պատմաբան-ազգագրագետ Լ. Գումիլովն առաջարկեց էթնիկական (ազգային) շարժումները դիտարկել նրանցում առկա կենսաբանական և սոցիալական ներուժի փոխհարաբերության մակարդակի տեսանկյունից: Եթե **կենսաբանական ներուժը** ներառում էր աշխարհագրական լանդշաֆտի, մշակութային գործոնների ազդեցությունը, հարևանների հետ փոխհարաբերությունները և այլն, ապա **սոցիալականի բնորոշման համար** Լ. Գումիլովը շրջանառեց, այսպես կոչված, **«պասիոնարություն»** եզրույթը: Ենթադրվում էր, որ **«պասիոնարությունը»** զարգացման որոշակի աղբյուրի առկայություն է, որը կենտրոնացնում է մարդկային էներգիայի լարվածությունը և արտահայտվում մարդկանց որոշակի գործողություններում, որոնք թելադրում են տվյալ հանրության զարգացման եղանակն ու ուղղությունը²⁰⁴:

Ազգի ձևավորման և գործառման առումով հատուկ մոտեցում ունի մարքսիզմը, որն ազգը մեկնաբանում էր որպես դասակարգերի համեմատությամբ երկրորդական նշանակություն ունեցող յուրահատուկ հանրությ, իսկ ազգա-

²⁰³ Бауэра О., Национальный вопрос и социал-демократия.- Нации и национализм, Пер. с английского и немецкого Л. Е. Переяславцевой, М. С. Панина, М. Б. Гнедовского, М.: Практис, 2002, с. 56.

²⁰⁴ Гумилев Л. Н., Этногенез и биосфера Земли, Изд.: Астрель СПб, 2005, с. 16-52.

յին հարցը ներկայացնում էր որպես կապիտալիզմի շրջանում դասակարգային պայքարի բաղկացուցիչ մաս: Ի. Ստալինի սահմանումը հետևյալն է. «Ազգը մարդկանց պատմականորեն կազմավորված կայուն ընդհանրություն է, որ ծագել է լեզվի, տարածքի, տնտեսական կյանքի և մշակութային ընդհանրության մեջ դրսևորվող հոգեկան կերտվածքի ընդհանրության հիմքի վրա»²⁰⁵: Ազգերի կազմավորումը մարքսիզմի գաղափարախոսները կապում էին բուրժուական արտադրահարաբերությունների ձևավորման հետ, ուստի միանգամայն բնական է, որ ազգերի վերացումը պետք է կապելին դրանց վերացման հետ:

Ըստ մշակութաբանական մոտեցման ներկայացուցիչ Ֆ. Բարտի՝ էթնիկականությունը (տվյալ պարագայում՝ որպես ազգայինի դրսևորման տարածություն) մշակութային տարբերությունների կազմակերպվածության ձև է, և հենց տարբերություններն էլ այդ տարածության յուրահատուկ բնութագրիչներն են: Վերջիններս, ըստ Ֆ. Բարտի, ձևավորվելով ավանդույթների, պատմական, տնտեսական գործոնների ազդեցության ներքո, արտահայտվում են մարդկանց կողմից իրենց ազգային ինքնության ընկալման մեջ, այսինքն՝ այդ խմբային միավորմանն իր անհատական պատկանելության ճանաչման մեջ²⁰⁶:

Չափազանց ուշագրավ է Կ. Դոյչի մոտեցումը, համաձայն որի՝ ազգը սոցիալական զարգացման և պրոգրեսիվ հաղորդակցության արդյունք է²⁰⁷: Այսպիսի ընկալման պայմաններում ազգի համախմբումը տեղի է ունեցել մարդկանց կողմից խմբային արժեքների՝ որպես նրանց աշխարհի ճանաչումը համակարգող առաջատար կողմնորոշիչների գիտակցման և տիրապետման շրջանակներում: Այս կառուցակարգում որոշիչ է լեզվի գերակայությունը. կյանքի կազմակերպման նպատակով հաղորդակցվելով՝ մարդիկ դառնում են որոշակի տարածքի վրա առաջացած արժեքների կրողն ու արարողը՝ արդիականացնելով ավանդույթները, սիմվոլները և համակեցության

²⁰⁵ Сталин И. В., Марксизм и национальный вопрос

https://www.marxists.org/russkij/stalin/t2/marxism_nationalism.htm (20.02.2019)

²⁰⁶ Ethnic Groups and Boundaries The Social Organization of Culture Difference (Edited by Fredrik Barth), LITTLE, BROWN AND COMPANY BOSTON, 1969, pp. 9-39 <http://www.urbanlab.org/articles/Barth,%20Fredrik%201969.%20Ethnic%20groups%20and%20boundaries.pdf>

²⁰⁷ Deutsch K., National integration: an overview of some concepts and research approaches / Ethnicity and Politics: A Reader, M.:URAO, 2000, p 190-202

նորմերը: Այս իմաստով ենթադրվում էր, որ նույնիսկ արժեքների միևնույն համակարգը յուրացրած և դրանով ղեկավարվող տարբեր էթնոսների ներկայացուցիչները կարող են դիտարկվել որպես մեկ ազգի ներկայացուցիչներ:

Կառուցվածքային և պրիմորդիալիստական մոտեցումների տեսական տարբերությունները ձևավորվել են քաղաքական արդիականացման գործընթացում: Առաջին, այսպես կոչված, եվրոպական ազգերը, որոնք առաջացել են կապիտալիստական հարաբերությունների ձևավորման դարաշրջանում, նշանակալի չափով հիմնվում էին ինտեգրման բնական կառուցակարգերի վրա, որոնք գործում էին ոչ միայն մշակութային, այլև տնտեսական գործոնների հիման վրա: Առավել ուշ շրջանում, երբ արդեն ձևավորվել էր ազգի կառուցման որոշակի փորձ, երբ Վեստֆալյան աշխարհակարգի պետությունների շրջանակներում ակնհայտ էին նրանց արդյունավետ գործառման օրինակները, հասարակության ինտեգրման այդպիսի կառուցակարգերն սկսեցին օգտագործվել նաև այն երկրներում, որոնք սկսել էին լուծել իրենց ինքնիշխանության ամրապնդման և ինստիտուցիոնալ կայացման հարցերը:

Այս տեսանկյունից ազգի կերտումն սկսեց դիտարկվել որպես կառավարող կամ քաղաքական էլիտայի որոշակի քաղաքական ծրագրերի իրականացում՝ հանրային գիտակցված համախմբման նպատակով: Ընդ որում, այսպիսի գործընթացներ տեղի են ունեցել ոչ միայն 19-րդ դարում, այլև 20-րդ դարի վերջերին: Օրինակ՝ Բելովեժյան²⁰⁸ համաձայնագրի կնքումով և ԽՍՀՄ-ի փլուզումից հետո առաջացած նորանկախացած պետություններում նոր ազատական ինստիտուտների ստեղծումը, այնուհանդերձ, պետության ինքնիշխանության և ազգի ինքնորոշման խնդիրները չլուծեցին:

Այսպիսով՝ արդի գլոբալ զարգացումներում քաղաքական ազգի կայացման գործընթացի մեկնաբանման լիարժեք իրատեսական բանաձև է ոչ միայն ազգի ներքին միաձուլվածության օբյեկտիվ գործոնների պարզաբանման վրա հիմնված պրիմորդիալիստական, այլև կառուցվածքային մոտեցումը: Կառուցվածքային և պրիմորդիալիստական մոտեցումների

²⁰⁸ **Բելովեժյան համաձայնագիր** - 1991թ. դեկտեմբերի 8-ին Բրեստի մոտ (Բելառուս) գտնվող Վիսլուլի բնակավայրում (Բելովեժյան թավուտ) ՌԽՖՍՀ նախագահ Բորիս Ելցինը, Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կրավչուկը և Բելառուսի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Ստանիսլավ Շուշկևիչը ԽՍՀՄ-ի փլուզման և Անկախ պետությունների համագործակցության (ԱՂՀ) ստեղծման մասին համաձայնագիր են ստորագրել: Ըստ Բելովեժյան համաձայնագրի՝ ԽՍՀՄ-ը դադարեց գոյություն ունենալ՝ որպես միջազգային իրավունքի և աշխարհաքաղաքական իրականության սուբյեկտ:

գործնական կիրառման շնորհիվ ձևավորվում են տարաբնույթ ինստիտուցիոնալ շրջանակներ ինչպես պետական իշխանությանն ուղղված պահանջների ձևակերպման, այնպես էլ միջազգային հարաբերությունների կարգավորման և քաղաքականության մշակման համար: Այսպիսի կառուցվածքային մոտեցումները հիմնական շեշտը դնում են պետության, կուսակցությունների, շարժումների հնարավորությունների և նրանց տիրապետած ռեսուրսների վրա: Սակայն չի բացառվում նաև, որ ծավալապաշտական գաղափարների շրջանակներում շեշտադրվում են «բացառիկ» նպատակներ և նախասիրություններ: Օրինակ՝ «արյան գերագանցության» գաղափարի վրա հիմնված սոցիոկենսաբանական մոտեցումներն անխուսափելիորեն կանխորոշում են քաղաքական պահանջների էթնոհեգեմոնիկ համակարգ, որն արտահայտում է մեկ ազգի գերագանցությունը մյուսի նկատմամբ, համապատասխան տարածքում նրանց ներկայացուցիչների բացարձակ գերիշխանության ցանկությունը, այս կամ այն խմբի կյանքի ոճի հաստատման ձգտումը մեկ այլ խմբի հաշվին:

Միաժամանակ, կողմնորոշումը դեպի բացառապես մշակութաքաղաքակրթական արժեքները արդի զարգացումներում հաճախ հանգեցնում է կոսմոպոլիտիզմի սահմանների ընդարձակման կամ ընդհանրապես կոսմոպոլիտիզմի գերակայության: Տարբեր տեսական և գաղափարախոսական մոտեցումների քաղաքական նշանակությունն առավել լիարժեք արտահայտվում է նացիոնալիզմի այս կամ այն ձևում: Ինչպես նշում էր դեռևս Շ. Մոնտեսքյուն, «ազգի ոգին», սերը Հայրենիքի հանդեպ համարվում են «օրգանական» հասարակության գոյության միակ հիմքը²⁰⁹:

Պայմանավորված քաղաքական ժամանակի հրամայականներով՝ նացիոնալիզմը ներառում է նաև պետության գործունեության արդյունավետության, նրանում այս կամ այն ազգության կամ էթնիկական խմբերի քաղաքացիների մշակութային և սոցիալական պաշտպանվածության մակարդակի որակական բարձրացմանն ուղղված բարեփոխումների իրականացման քաղաքականություն: Այս գործընթացում առանձնահատուկ է ազգային էլիտաների դերը: Հենց նրանք են զարգացնում ազգային հանրությունը ինտեգրող արժեքներ, լուսաբանում պատմական ավանդույթների և սովորույթների ժամանակակից նշանակությունը, ձևավորում և

²⁰⁹ Монтескье Ш., Избранные произведения, М.: Госполитиздат, 1955, с. 410-432.

արդիականացնում ազգային շահերը, որոնք այդ քաղաքական ուժերի յուրաքանչյուր օրվա գործունեության հիմքն են:

Ազգային շահի արդիականացումը պետական իշխանության կողմից իրականացվող ռազմավարական քաղաքական գործունեությունն է՝ կողմնորոշված դեպի ազգապահպանման և ազգային մրցունակության քաղաքականության իրականացում: Այն ազգային և մշակութաքաղաքակրթական ինքնության զարգացման գերակա պայման է: Բացի այդ, արտահայտում է դրանց հասնելու նպատակներն ու միջոցները, որոնք ազգայնական շարժումներին տալիս են այս կամ այն քաղաքական կարգավիճակը ինչպես պետության ներսում, այնպես էլ միջազգային ոլորտում: Վերջապես, որպես ազգ-պետության գործունեության հիմք՝ ազգային շահը հանդես է գալիս նաև որպես երկրի ներքին և արտաքին քաղաքականության կառուցվածքում ժողովրդավարական արժեքների որոշակիության ցուցանիշ: Այդուամենայնիվ, չնայած ազգային շահի այսչափ մեծ նշանակությանը, քաղաքական արդիականացման տեսաբանների և փորձագետների շրջանում նույնիսկ, կարելի է ասել, քաղաքական գիտության մեջ որոշակի համաձայնություն չկա ինչպես դրա մեկնաբանման, այնպես էլ գոյության ճանաչման հարցում²¹⁰:

Այնուհանդերձ, քաղաքական ժամանակում կուտակված փորձը ցույց է տալիս, որ ազգային շահերի արդիականացման գործողությունները, որոնք արտահայտում են, օրինակ, քաղաքականության «սկզբունքայնությունը», նրա՝ «իդեալներին և սկզբունքներին պատկանելությունը», միայն խորացնում է տարաձայնությունները մրցակիցների միջև՝ տրոհելով քաղաքական իրադրության ընկալումը: Բացի դրանից, այդպիսի վիճակը պետությանը՝ որպես քաղաքական համակարգի գերակա ինստիտուտի, ի սկզբանե դնում է պարտված դրության մեջ մրցակիցների հետ պայքարում, որոնք կարող են առավել ճկուն վերաբերվել իրադրության գնահատմանը, մանևրել, կերպափոխել իրենց նպատակները և այլն: Ուստի ազգային շահը ենթադրում է պրագմատիկ վերաբերմունք քաղաքական արդիականացման նկատմամբ, ինչի միջոցով իրականացվող համապատասխան սուբյեկտիվ շահերը գնահատվում են համընդհանուր բարիքի և շահի շրջանակներում: Այսպիսի մոտեցման պայմաններում ազգային շահերի բոլոր բովանդակային չափորոշիչներն արդիակա-

²¹⁰ Мнацаканян М. О., Национализм и глобализм. Национальная жизнь в современном мире, М.: Анкил, 2008, с 27

նանում են և՛ իրավիճակային, և՛ ռազմավարական արժեքայնության տիրույթներում: Այդ պատճառով անընդհատ փոխվում են ազգային շահերն այս կերպ ընկալող ելիտաների և՛ «հնարավոր» դաշնակիցները, և՛ ազգի (ազգ-պետության) «պոտենցիալ» հակառակորդները, և՛ ներքին ու արտաքին իրադրությունների դրական և բացասական գնահատականները: Այս ամենով հանդերձ՝ պահպանվում են երկու հանրային նպատակներ՝ **քաղաքացիների կյանքի որակի բարձրացումը և պետության հզորության ամրապնդումը**: Մրա հետ մեկտեղ ազգային շահերի բնականոն արդիականացումը լուծում է բարեկեցիկ, երջանիկ, գոյաբանական առումով անվտանգ ապագայի և ազգային մրցունակության ապահովման հիմնախնդիրներ:

3.2. Ազգ-պետության արդիականացման հրամայականները գլոբալացման պայմաններում

Աշխատանքի այս բաժնում համեմատության մեջ ուսումնասիրված են Եվրոպայում (1648թ. Վեստֆալյան պայմանագրից հետո) և հետխորհրդային նոր անկախացած տարածություններում ազգ-պետության արդիականացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները: Եթե Եվրոպայում ազգ-պետությունները ձևավորվեցին որպես **պետութենակենտրոն և աստիճանակարգային ինստիտուտներ**, ապա արդի գլոբալացման պայմաններում դրանց **արդյունավետությունը պայմանավորված է «վազող» արդիականացմամբ և արագացված ապակենտրոնացմամբ:** Դրա հետևանքով «**արդյունավետ պետության**» փոխարեն առաջացել են «**չկայացած պետություններ**»: Գլոբալացման գործընթացն արդյունավետ է, երբ ինքնիշխան **պետության կայացումը տեղի է ունենում հանուն համաշխարհային քաղաքականության մեջ սեփական «Ես»-ի ինքնության արդիականացման պահպանման և մրցունակ մասնակցության՝ ի հակադրություն մրցակցող քաղաքական, տնտեսական միավորումների աճող ճնշման:**

Վերջին տարիներին ակնհայտ է դարձել, որ արդի գլոբալացման գործընթացներում ընդլայնվել է նոր ձևավորված ինստիտուցիոնալ կազմավորումների գործունեության ոլորտը, ինչն իր հերթին անխուսափելիորեն հանգեցրել է ոչ միայն պետական ինքնիշխանության տրոհման, այլև ազգ-պետության ինստիտուտի «մահվան»: Նման մոտեցումը նորագատականները հիմնավորում են հետևյալ կառուցակարգերի գործառման հիման վրա.

1. գլոբալ քաղաքացիական հասարակության («քոչվորների նոր հասարակություն», Ժ. Ատալի²¹¹) վրա հենված համաշխարհային հաղորդակցական ցանցի ձևավորում,

2. միջազգային շուկայի ակտիվ գործառման վրա հիմնված ազգային տնտեսության ինտեգրման գործընթացի պետական կարգավորման անկում,

3. անդրազգային կառույցների աճ, որոնք ունեն ավելի մեծ հնարավորություններ, քան ազգ-պետությունները,

²¹¹ Аттали Жак, На пороге нового тысячелетия.- Перевод с английского, М.: Международные отношения, 1993, с. 12

4. գոյաբանական հիմնախնդիրների գերակայություն, որը ենթադրում է իշխանության անդրազգային կենտրոնների զարգացում և համաշխարհային կառավարում:

Նշված հատկանիշների հիման վրա արդի ֆուտուրոլոգները եզրակացրել են, որ «ինքնաբավ պետությանը փոխարինում է անդրազգային ֆիրմաների կողմից ստեղծված և տարածքային սահմանափակությունից ազատ ցանցը, որն առանց սահմանների բաց համակարգ է»²¹²:

Փաստորեն, փլուզված վեստֆալյան աշխարհի փոխարեն հաստատվել է մինչ այժմ մարդկությանն անհայտ կառավարման սկզբունքորեն նոր մոդել: Համակարգելով ուսումնասիրված գիտական գրականությունը՝ կարող ենք եզրակացնել, որ քաղաքական գիտության մեջ չկա միասնական կարծիք ազգ-պետության «մահվան» մասին²¹³: Ընդհակառակը, հետխորհրդային և մերձավորարևելյան քաղաքական զարգացումներով պայմանավորված՝ հաճախակի են դարձել «ճկուն», «փոփոխվող», «արդիականացող», «զարգացող» ազգ-պետությունների արդյունավետ գործառման հիմնախնդրի քննարկումները, որոնց նպատակն է ինստիտուցիոնալացնել պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների արդյունավետությունը: Այսպիսի մարտահրավերներին համահունչ՝ անհրաժեշտ է նորովի ուսումնասիրել ազգ-պետության ծագումնաբանական ֆենոմենը: Մինչ նրա «մահվան» մասին մերկապարանոց հայտարարություններ անելը անհրաժեշտ է բացահայտել **պատմական, ծագումնաբանական և գործառնական** կապերի այն առանձնահատկությունները, որոնք առկա են այսօր պետության և նոր ձևավորված ինստիտուցիոնալ կազմավորումների գործունեության մեջ: Միայն պետությունը պատասխանատու չէ կառավարման արդյունավետության համար, քանի որ նոր ինստիտուցիոնալ կազմավորումներն այսօր ներխուժել են այն ոլորտները, որոնք իրենց հերթին ավանդաբար համարվում են պետական իշխանության մենաշնորհը²¹⁴:

²¹² Аттали Жак, Краткая история будущего.- Санкт-Петербург, Изд.: Питер, 2014, с 75

²¹³ Миллер Алексей, Нация-государство или государство-нация? / Россия в глобальной политике, №6, 2017

https://globalaffairs.ru/number/Natciya-gosudarstvo-ili-gosudarstvo-natciya19200?fbclid=IwAR0gMUL6yIS31KNgGWvv6pfgvoSbHvF_7XrwnjZ0Jc46vs1Qa4vpHyseA9I (29.12.2018)

²¹⁴ Мартин ван Кревельд., Расцвет и упадок государства/ пер. с англ. под ред. Ю. Кузнецова и А. Макеева.- М.: ИРИСЭН, 2006, с. 26

Նոր կազմակերպությունները ձեռք են բերում այդ իշխանության «առանձին հատկանիշները» և սկսում են դրանք իրականացնել արդեն պետությունից անկախ՝ ինչպես ձևավորելով լոյալության և կոլեկտիվ նույնականության նոր տիպեր, այնպես էլ ապահովելով սեփականության իրավունքը և երաշխավորել լով պայմանագրերի իրականացումը: Փորձենք պարզել, թե իշխանության տարածական կազմակերպման ինչ ձևեր են լրացնում պետությանը: Գլոբալ կառավարման (Global governance) կայացման և զարգացման վերաբերյալ մոտեցումներն արտացոլում են հիմնախնդրի լոկ իրավիճակային ընկալումը՝ նկարագրելով բարդ իրականության տարրերից մեկը: Համաձայն «գլոբալ կառավարման» հայեցակարգի՝ պետություններն իրենց իրավասությունների զգալի մասը կամավոր փոխանցելու են համապատասխան միջազգային կազմակերպություններին²¹⁵: Սակայն իրականում գլոբալ կառավարման կայացումն արդեն իսկ **ինքնիշխան պետության արդիականացման ձևերից է՝ հանուն համաշխարհային քաղաքականության մեջ սեփական դերի պահպանման և ի հակադրություն մրցակցող քաղաքական ու տնտեսական միավորումների աճող ճնշման:**

Միջազգային հարաբերությունների ավանդաբար գործող դերակատարներին զուգահեռ (ինչպիսիք ճանաչված և չճանաչված պետություններն են) հետազոտողներն առանձնացնում են ինտեգրացիոն խմբավորումները, ոչ պետական և ոչ կառավարական կազմակերպությունները, ոչ առևտրային կազմակերպությունները, անդրազգային կորպորացիաները, սոցիալական և կրոնական շարժումները, ինչպես նաև ահաբեկչական ցանցերը: Ընդ որում, կարծիք կա, որ համաշխարհային ասպարեզում գործող դերակատարների թվի զգալի աճի հիմնական պատճառը տնտեսական գլոբալացումն է, որը հանգեցրել է տարածքների ինքնակազմակերպման և քաղաքական-տնտեսական իշխանության էական կերպափոխման²¹⁶:

Գլոբալացումը կարող է սահմանվել որպես տարբեր ինստիտուցիոնալ կազմավորումներում ընթացող գործընթացների փոխադարձ կախվածության մեծացում և նոր աշխարհի կառուցում ավելի շուտ ցանցային, քան աստիճա-

²¹⁵ Хардт М., Негри А., Империя / Пер. с англ., под ред. Г. В. Каменской, М. С. Фетисова. - М.: Практис, 2004, с. 5-6

²¹⁶ Кувалдин В., Глобальный мир. Политика. Экономика. Социальные отношения. М.: Изд. Весь мир, 2017, с 210 -211.

նակարգային սկզբունքով: Ընդգծենք, որ Է. Գիդենսի կարծիքով ցանցը հորիզոնական հարաբերությունների ամբողջություն է և կողմերից յուրաքանչյուրին հնարավորություն է տալիս առկա մարտահրավերներին համահունչ արդիականացնելու իր «Ես»-ի ինքնությունը²¹⁷: Տվյալ գործընթացում առանցքային գործոնը տեխնոլոգիական հեղափոխությունն է, ինչի շնորհիվ աշխարհը տեղեկատվական բազմաշերտ հոսքերի նոր հերթական շրջապտույտ ապրեց. հաղորդակցության նոր միջոցները վերափոխեցին հարաբերությունները ինչպես պետության և հասարակության, այնպես էլ տնտեսական դերակատարների միջև: Այդ հարաբերությունները կառուցվում են ցանցային սկզբունքով, որը բարձրացնում է դրա **գործունեության հետևանքների անորոշության աստիճանը վերջինիս կազմի մեջ չմտնող սուբյեկտների համար**: Ցանցի կառուցվածքն առանձնանում է ճկունության և հարմարվողականության բարձր մակարդակով, ինչի շնորհիվ էլ շատ հաճախ այն կարող է լինել ինքնավար և ստեղծվել կոնկրետ խնդրի լուծման նպատակով՝ դադարեցնելով իր գործունեությունը տվյալ նպատակին հասնելուց հետո: Այս գործոնը խոչընդոտում է պետության կողմից ցանցային աշխատանքի ակտիվ կարգավորման գործընթացը: Համընդհանուր վերահսկողության իրականացումն այսօր կամ անհնարին է, կամ պահանջում է այնպիսի հսկայական բյուրոկրատական ապարատի գոյություն, որի պահպանման արժեքը թերևս ավելի բարձր է, քան դրա օգտագործումից ստացվող եկամուտները: Ընդունելով գիդենսյան մոտեցումը, բայց և նկատի ունենալով **կենտրոն-ծայրամաս** հարաբերության մեջ տեղի ունեցած արմատական փոփոխությունները՝ կարծում ենք, որ դիտարկվող ցանցը բազմամակարդակ է և ճկուն: Անձի սոցիալականացման արժեքայնությամբ պայմանավորված՝ «Ես»-ը կարող է այն ճկել, ուղղել կամ էլ, դուրս մնալով արդիականացման պարույրից, դարձնել ուղղահայաց՝ հայտնվելով նրա բուֆերային հատվածում:

Արդի գլոբալացման գործընթացում ազգ-պետության կերպափոխման շրջանակներում ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևերից մեկը մյուսով լրիվ կամ մասնակի փոխարինման էությունը և հեռանկարներն ըմբռնելու համար նպատակահարմար ենք համարում վերլուծել անցած դարաշրջանի զարգացման միտումները, հասկանալ, թե ինստիտուցիոնալ կառուցվածքի նոր ձևե-

²¹⁷ Гидденс Э., Ускользящий мир: как глобализация меняет нашу жизнь / Пер. с англ. - М.:Издательство «Весь Мир», 2004, 120 с.

րից որոնք են առավել կենսունակ եղել: Նման վերլուծության հիման վրա առաջարկում ենք մեթոդաբանության որոշ ուրվագծեր արդի գլոբալացման գործընթացի և պետական ինքնիշխանության տրոհման պատճառների ուսումնասիրման համար:

Այս նկատառումներով անհրաժեշտ ենք համարում վերադառնալ եվրոպական պատմության այն ժամանակաշրջանին, երբ ինքնիշխան պետությունն իր ինստիտուցիոնալացված կառուցվածքով դառնում է կառավարման արդյունավետ ձևի գերակա խաղացող: Ինքնիշխան պետությունների միջազգային համակարգի կայացման ժամանակը համարվում է 1648 թվականը, երբ Վեստֆալյան հաշտության պայմանագրերի ստորագրմամբ ավարտվեց Երեսնամյա պատերազմը: Վեստֆալյան հաշտության պայմանագրերով իր իրավական ամրագրումը գտավ որոշակի հատկանիշներով օժտված ինքնիշխան պետությունը: Այդ հատկանիշները վերջինիս թույլ էին տալիս գերակա լինել ինստիտուցիոնալ այլընտրանքային միավորումների մրցակցությունում: Այդ առումով առանձնացվում են պետական իշխանության հետևյալ բնորոշ գծերը՝

1. որոշակի տարածության մեջ երկարատև գոյատևում և սահմանների լեգիտիմություն,
2. համեմատաբար կայուն քաղաքական ինստիտուտների ձևավորում և արդյունավետ գործունեություն,
3. լեգիտիմացում բնակչության կողմից, որն արտահայտվում է գերագույն իշխանության անհրաժեշտության բուն գաղափարի ընդունմամբ,
4. գերագույն իշխանության անհրաժեշտության բուն գաղափարի ընդունման նկատմամբ լոյալության պահպանում,
5. երկարատև համակեցության արդյունքում ձեռք բերված քաղաքական ինքնության գործառում:

Այս համատեքստում Մ. Խարդուր և Ա. Նեգրին կարծում են, որ ազգ-պետությանը հաջողվեց համատեղել քաղաք-պետության և կայսրության դրական բնութագրերը: Չնայած ռազմական հզորությանը՝ կայսրությունները ոչ արդյունավետ ինտեգրված կառույցներ են և ի գործու չեն բնակչության մեծ մասին մասնակից դարձնելու ընդհանուր ինքնության կերտման քաղաքական գործընթացներին: Այս հանգամանքն իր հերթին հանգեցնում էր մարդկային ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման և գերագույն իշխանության նկատմամբ հավատարմության նվազեցման. կայսրության բնակիչների մեծ

մասի կողմից սոցիալական միավորումը չէր դիտվում որպես բարձրագույն արժեք: Քաղաք-պետությունն արդյունավետ օգտագործեց մարդկային կապիտալը և ստեղծեց կառավարման այնպիսի համակարգ, որի դեպքում գործնականում բոլոր քաղաքացիները մասնակցում էին քաղաքական կյանքին, ինչը բարձրացնում էր նրանց քաղաքական հավատարմության մակարդակը: Սակայն քաղաք-պետությունը չկարողացավ լուծել արդեն գոյություն ունեցող կառուցվածքի մեջ նոր տարածքներ և այնտեղի բնակչությանը ներգրավելու հիմնախնդիրը: Միայն ազգ-պետությանը հաջողվեց միավորել կայսրության և քաղաք-պետությունների ուժեղ կողմերը²¹⁸: Իսկ Յուրգեն Հաբերմասի կարծիքով, «Ժամանակակից ազգ-պետության երկու բաղադրիչները՝ ազգը և պետությունը, միմյանցով են պայմանավորված, սակայն ի սկզբանե տարբեր պատմական գործընթացներ են, որոնցից մեկը ժամանակակից պետության կազմավորումն է, մյուսը՝ ժամանակակից ազգի կերտումը»²¹⁹:

Փաստորեն, ազգ-պետության ձևավորման գործընթացի սկիզբը 12-13-րդ դարերում Եվրոպայում հարաբերական կայունության ժամանակաշրջանն է, երբ ավարտվեց գաղթերի, արշավանքների ու նվաճումների երկարատև դարաշրջանը և ապահովվեց հարաբերական անվտանգություն: Անվտանգության և արդարադատության ապահովումը դարձավ ինքնիշխան պետության նոր ձևավորվող կառավարող էլիտաների առաջնահերթ խնդիրը, որի պայմաններում միայն հնարավոր եղավ ստանալ բնակչության աջակցությունը: Սակայն, որպեսզի ինքնիշխանությունը և գերիշխանությունը պետության կայացման հիմնական արժեք ընկալվեն, դրանք համադրվեցին ռազմական մրցունակության հետ, ինչն արտացոլվեց պետության ներքին կառուցվածքի վրա՝ պահանջելով արժևորված քաղաքականության և մշտական գործող ազգային բանակի ստեղծում: Այս համատեքստում «կոնսոլիդացված պետության» ձևավորմանն ու կայացմանը նվիրված իր աշխատանքներում Չ. Տիլլին պնդում է, որ միջպետական և ներպետական փոխգործակցության հիմնական օբյեկտը լեզվտիմ վերահսկողությունն է տարածքի և դրա բնակչության նկատմամբ: Հենց այդ պատճառով էլ պետություններն առաջացան որպես

²¹⁸ Хардт М., Негри А., Империя / Пер. с англ., под ред. Г. В. Каменской, М. С. Фетисова. - М.: Практис, 2004, с. 81- 87

²¹⁹ Хабермас Ю., Европейское национальное государство: его достижения и пределы: о прошлом и будущем суверенитета и гражданства // Нации и национализм. Перевод с английского и немецкого Л. Е. Переяславцевой, М. С. Панина, М. Б. Гнедовского, М.: Практис, 2002, С. 364-380.

ռազմական ոլորտում մրցակցության արդյունք, երբ ռազմական առավելությունը թույլ էր տալիս ընդլայնել այդ վերահսկողության սահմանները²²⁰: Վերահսկողության ընդլայնման գործիքներ էին տարատեսակ ռեսուրսները, որոնց հարաբերական առկայությամբ էր պայմանավորվում տիրակալների կողմից կիրառվող ռազմավարությունը: Տիլլին թվարկում է ռազմավարությունների մի քանի տարբերակ:

1. Բռնության վրա հիմնված ռազմավարություն (coercion-intensive), որի դեպքում տիրակալները պատերազմի համար անհրաժեշտ ռեսուրսները գանձում էին սեփական կամ գրավված տարածքների գյուղական բնակչությունից, ինչն ուղեկցվում էր զանգվածային վարչական և վերահսկողական ապարատների ստեղծումով:

2. Կապիտալի վրա հիմնված ռազմավարություն (capital-intensive), որի դեպքում ռազմական ուժի ժամանակավոր օգտագործման կամ ձեռքբերման համար (օրինակ՝ վարձկանների) տիրակալները համաձայնություն էին կնքում վաղ կապիտալիստների հետ (առևտրականներ և բանկիրներ), որոնց շահերը, անկասկած, հաշվի էին առնվում: Միաժամանակ պետական հսկայական և թանկ կառույցներ ստեղծելու անհրաժեշտություն այլևս չկար:

3. Ռազմավարություն, որի հիմքում ընկած էր բռնության և կապիտալի միաժամանակյա օգտագործումը (capitalized coercion): Այս պարագայում տիրակալները ռեսուրսներ էին ստանում թե՛ առաջին և թե՛ երկրորդ սոցիալական խմբերից, սակայն դրա համար ավելի մեծ ջանքեր էին գործադրում, քան առաջին երկու դեպքերում: Տիրակալի կողմից օգտագործվող ռազմավարությամբ էր պայմանավորված պետության այս կամ այն տիպի զարգացումը. առաջին դեպքում ձևավորվում էին կայսրություններ, որոնք գոյատևում էին տուրքեր հավաքելու հաշվին, երկրորդ դեպքում առաջանում էին դրվագային ինքնիշխանության ձևեր, երրորդ դեպքում՝ ազգ-պետություն:

Այս դիրքորոշումը համընկնում է Տ. Էրտմանի կարծիքի հետ. «Ներկայումս ժամանակակից պետության ձևավորման գործընթացն ուսումնասիրողների շարքում գոյություն ունի ընդհանուր կոնսենսուս այն հարցում, որ պատերազմը, երբեմն այլ գործոնների համադրմամբ, այն գլխավոր պատճառն էր, որ ստիպեց տիրակալներին ադապտացնել քաղաքական համակարգերը,

²²⁰ Charles Tilly and Wim P. Blockmans (eds), *Cities and the Rise of States in Europe, A.D. 1000 to 1800*. Boulder, San Francisco and Oxford: Westview Press, 1994. p 4 -38

ինչպես նաև ընդլայնել և ռացիոնալացնել պետական ապարատը՝ ռազմական ոլորտում մրցակցության ապահովման նպատակով»²²¹: Այսպիսով՝ հենց այս գործոնն էլ առանցքային ազդեցություն ունեցավ վաղ Մոդեռնի դարաշրջանի Եվրոպայում քաղաքական համակարգերի ինստիտուցիոնալ կառուցվածքի արդիականացման վրա: Այսինքն՝ սոցիալական ցանկացած տեսակ (եկեղեցի, քաղաք-պետություն, քաղաքների լիգա, կոմունաների միության ինստիտուտներ, միանձնուհիների և ասպետական միաբանություններ, առևտրային խոշոր ընկերություններ) պահպանեց հարաբերական անկախություն միայն մեկ պայմանով՝ նախ հրաժարվեցին իրենց բացարձակ գերակայության հավակնություններից, ապա ճանաչեցին Վեստֆալյան համակարգի սկզբունքները: Սակայն դրանց իրավունք էր վերապահվել մասնակցելու միջազգային հարաբերություններին. օրինակ՝ Շվեյցարիայի Համադաշնության անկախությունը Հռոմի սուրբ կայսրությունից վերջնականապես ամրագրվեց հենց 1648թ., իսկ Վատիկանը, որն օժտված էր հզոր կազմակերպչական ցանցով, միշտ էլ ակտիվ խաղացող է եղել եվրոպական թատերաբեմում:

10-12-րդ դարերից սկսած՝ տնտեսական զարգացումն անուղղակիորեն առնչվեց նաև սոցիալական կազմակերպման այլ ձևերի հետ: Այսպես՝ Խաչակրաց արշավանքների սկիզբը պետք է դիտարկել ոչ թե սրբազան հողերն անհավատներից ազատագրելու համար մղվող գաղափարական քարոզչական պատերազմների տեսանկյունից, այլ որպես զուտ քաղաքական-առևտրային ձեռնարկ, որը ոչ միայն հսկայական շահաբաժիններ բերեց հզորացող պապական պետությանը, այլև Եվրոպայի մարզինալ աշխատուժին ուղղորդեց դեպի սրբազան գործունեություն: Ուստի Խաչակրաց արշավանքները եվրոպական տնտեսական էքսպանսիայի անքակտելի մասն են: Ջենովայի և Վենետիկի հանրապետությունների տնտեսական պատմության ուսումնասիրությունները վկայում են, որ հենց Խաչակիրների պետությունների հիմնման արդյունքում էլ սերտ կապեր հաստատվեցին Մերձավոր Արևելքի երկրների հետ, և խարխուլվեց Բյուզանդիայի գերիշխանությունը Սևծովյան նեղուցներով անցնող առևտրային ուղիների նկատմամբ²²²:

²²¹ Ertman T., *Birth of the leviathan: Building states and regimes in medieval and early modern Europe*. Cambridge: Cambridge UP. 1997. p. 4-29

²²² Tilly Ch., *States and Nationalism in Europe 1492-1992 // Theory and Society*. 1994. Vol. 23. № 1. p.131-146

Այնուհետև 14-րդ դարից կասեցված ժանտախտի համաճարակի և Հյուսիսային ու Հարավային Եվրոպաների միջև կապերի ակտիվացումից հետո Ֆլորենցիայում խոշոր ընտանեկան ընկերությունների ձևավորումը նոր թափ հաղորդեց Եվրոպայի տնտեսական վերելքին: Ընտանեկան ընկերությունները, համակարգելով բանկային գործը, սպասարկում էին Պապին և Եվրոպայի թագավորական պալատները: Ֆլորենցիայի խոշոր առևտրային տները գործում էին Եվրոպայում և բազմազան էին դարձնում իրենց բիզնեսը՝ դրանով իսկ հիմք դնելով եվրոպական ազգային բաժնետիրական ընկերությունների, որոնք ձևավորվեցին Նոր աշխարհի հետ առևտուր սկսելու համար: Իրենց հերթին, այս ընկերությունների կազմակերպական մոդելը հիմք հանդիսացավ արդի անդրազգային կորպորացիաների համար: Մեղիչի ընտանիքը Ֆլորենցիայում իշխանության գալուց առաջ, իր հաճախորդներից մի ամբողջ կուսակցություն ստեղծեց՝ վերջինիս աջակցություն ցուցաբերելով լայնամասշտաբ բանկային ցանցի շրջանակներում իրականացվող ֆինանսական գործառնություններից ստացվող եկամուտների հաշվին²²³: Այսպիսով՝ 10-15-րդ դարերում բոլոր այլընտրանքային կազմավորումները տարբեր չափերով ունեին և՛ լոյալություն, և՛ ինքնակազմակերպման հնարավորություն: Բացի այդ, իրականում նրանց էր պատկանում սեփական **«հաճախորդ-հպատակներ»** նկատմամբ լեգալ քաղաքական իշխանություն ունենալու իրավունքը:

Եվրոպական տիպի ազգ-պետության հետագա զարգացման համար վճռական դարձավ 15-րդ դարի վերջից մինչև 17-րդ դարի սկիզբն ընկած ժամանակաշրջանը: Վեստֆալից հետո ազգ-պետությունը դարձավ քաղաքական և տնտեսական ինքնորոշված միավոր, քանի որ ստանձնեց ռազմական գործողություններ վարելու և անվտանգություն ապահովելու գերակա դերը: Փաստորեն, ելնելով միջազգային թատերաբեմում գրաված իր մենաշնորհային իրավունքից, այն կարողացավ ոչ միայն վերահսկել 10-րդ դարից պետության հետ մրցակցող և նրան հավասար միջազգային հարաբերություններում մասնակցող տարբեր ինստիտուցիոնալ ձևավորումները, այլև ստիպեց նրանց ինքնակազմակերպվել իր շահերի տիրույթներում կամ ընդհանրապես վերանալ Եվրոպայի քարտեզից: Արդյունքում աշխարհը դարձավ **պետութենակենտրոն, աստիճանակարգային և աշխարհիկ**:

Արդի գլոբալացման գործընթացներում մարդկությունը վկա է հակառակ հարաբերությունների՝ **պետական կառավարման արդյունավետությունը**

²²³ Hale J. R., Florence and the Medici: the Pattern of Control. L. Phoenix, 2001(1977). P. 20-38

պայմանավորված է ապակենտրոնացման մակարդակով: Գնալով ավելի շատ դերակատարներ են ազդում քաղաքական համակարգի արդիականացման և որոշումների ընդունման վրա: Չնայած դրան, ինչպես նշում է Մարգարեթ Թետչերը, «միայն պետություններին է պատկանում հարկադրման մենաշնորհային իրավունքը...: Հարկադրելու գործառույթը պետությունը երբեք չպետք է փոխանցի»²²⁴:

Սակայն նորանկախացած պետությունների գործունեության արդյունավետությունն ուղղակի կախվածության մեջ է կերպավորված ժամանակ առաջացած քաղաքական զարգացման ճգնաժամերից, որոնց պարագայում ժողովրդավարական բարեփոխումները շարունակական բնույթ չունեն: Արդյունքում «չկայացած պետություն» անվանված այդ միավորներում տեղի է ունենում ոչ թե պետության ինստիտուցիոնալացված իշխանության պատվիրակում, այլ նոր դերակատարների կողմից դրանց «ինքնության սեփականաշնորհման» գործընթաց: Նկատենք, որ հաճախ նման կազմակերպություններն իրենց ակտիվության շնորհիվ ինքնուրույն նախաձեռնությամբ են հանդես գալիս և ստանձնում են պետության համար ավանդական խնդիրները լուծողի դեր: Ակնհայտ է, օրինակ, որ Հյուսիսատլանտյան պայմանագրի (ՆԱՏՕ-ի) կազմակերպությունն ապահովում է ԵՄ այն երկրների անվտանգությունը, որոնք պատրաստ չեն (կամ միգուցե անհրաժեշտ չեն համարում) զգալի ֆինանսական միջոցներ տրամադրելու բյուջեի այդ հոդվածին: Ուշագրավ են նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումները, որոնք վերջին ժամանակներս (Իրաքի, Աֆղանստանի և Սիրիայի ռազմական գործողությունների ժամանակ) փորձեցին ստանձնել միջազգային ասպարեզում պետական իշխանության գործադիր և օրենսդիր ճյուղերի գործառույթները՝ ապացուցելով իրենց երկդիմությունը:

Արդի անդրազգային ընկերությունները տնօրինում են վիթխարի ռեսուրսներ որոնք մի քանի անգամ գերազանցում են առանձին ինքնիշխան պետությունների հնարավորությունները: Ունենալով ընդարձակ ցանց և միավորելով մարդկանց կազմակերպական առումով, այլ ոչ թե ազգային պատկանելությամբ, աշխատանքով ապահովելով տասնյակ հազարավոր մարդկանց՝ նրանք համապատասխան քաղաքականություն իրականացնելու նպատակով ճնշում են գործադրում ազգային կառավարությունների վրա: Այնպիսի

²²⁴ Тэтчер Маргарет Искусство управления государством. Стратегии для меняющегося мира /Пер. с англ. — М.: Алыгана Паблишер, 2012, с.16

միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են Համաշխարհային բանկը, Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, Արժույթի միջազգային հիմնադրամը, խրախուսում են արդի անդրազգային ընկերությունների ամրապնդումը՝ ունիֆիկացնելով օրինական դաշտը նրանց գործունեության համար և համահարթեցնելով տարբերությունները ազգային օրենսդրություններում:

Այնուհանդերձ, պետության ինստիտուտի «վախճանի», «վերացման» կամ «փոշիացման» մասին խոսելը աննպատակահարմար է, եթե հասարակությունը ցանկանում է դուրս գալ քառսից և հաղթել, իսկ հաղթել «...նշանակում է կառուցել ապագայի հետինդուստրիալ հասարակությունն այսօր՝ մինչինդուստրիալից **թռիչք** (ընդգծումն իմն է՝ Մ.Մ) կատարելով դեպի հետինդուստրիալ»²²⁵: Պատմության հոլովությունը ձևավորված ճշմարտություն է. հետինդուստրիալ հասարակության հենքն արդի գիտատեխնիկական ձեռքբերումների կիրառմամբ բնակչության բարեկեցության բարձրացումն է և մարդկային կապիտալի զարգացումը: Այլապես «ծայրամասերում» հետարդիականացման բնութագրիչն է դառնում մարզինալությունը, փոխհամաձայնեցված խմբիշխանությունը և դեմագոգիան: Եվ եթե գոնե «թավշյա հեղափոխությունից» հետո Հայաստանը ազգային էկոնոմիկայի ստեղծման նպատակադրմամբ տեղ և դեր չգրավի աշխատանքի միջազգային բաժանման մեջ, ապա չի կարող համաչափ անցում ապահովել դեպի հետարդյունաբերականություն: Ավելին, ՀՀ նախկին վարչապետ Տ. Սարգսյանի «իրականացրած» «թռիչքի» պատճառով գործ ունենք **հայելային արդիականացման** հետ՝ երկրի «կենտրոնում», հատկապես մայրաքաղաք Երևանում բարձր տեխնոլոգիական հենքի վրա ստեղծված կազմակերպությունները և Հյուսիսային պողոտան ձևավորել են պոստմոդեռնիստական օազիսներ, ինչը հանգեցրել է կյանքի որակի, ծառայությունների մատչելիության և մրցունակության անհամաչափության: Դրա հետևանքով մարզերի և Երևանի միջև առաջացած «խզումը» արտագաղթի, օտարման, աղքատության պատճառներից մեկն է: Այսինքն՝ ՀՀ-ում քաղաքական արդիականացման հրամայականներն անհնար է դիտարկել առանց «կենտրոն-ծայրամաս» փոխկախվածության: Այս

²²⁵ Սարգսյան Տ., Պետության վախճանը (կամ հասարակության կազմակերպման նոր ձևը) // «21-րդ դար», № 1, 2008, էջ 23 – 24:

http://www.luys.am/attachments/articles/Tigran_Sargsyan-The_End_of_the_State-am.pdf

շրջանակներում հանրագումարելով հետխորհրդային նորանկախացած երկրների քաղաքական արդիականացման գործընթացը՝ ռուս հետազոտող Վ. Ֆեդոտովան կարծում է, որ թույլ զարգացած արդյունաբերական համակարգ ունեցող երկրներում, երբ կապիտալը վաշխառուական բնույթ ունի, նոր առաջնահերթությունները կարող են արդյունավետ չլինել: Հետևաբար՝ արդի ցանցային քաղաքականության ընդարձակման պայմաններում որոշիչ դեր ունի պետությունների իրավասության ավանդական ոլորտներում կազմակերպման նոր ձևերի զարգացման գործընթացը: Նման պատմական ժամանակաշրջանի առանցքային բնութագրիչը ապագայի նկատմամբ անվստահությունը և մեծ անորոշությունն է՝ զարգացման այլընտրանքների լայն ընտրության առկայության առումով²²⁶: Ելակետ ընդունելով այս մոտեցումը՝ փաստենք, որ գլոբալացման գործընթացում տարբեր բնույթի դերակատարների առկայության երաշխիքը նրանց մրցունակությունն է: Այս համատեքստում որոշիչ է երիտասարդության քաղաքական սոցիալականացման արժեքային բազմաչափությունը: Այն ենթադրում է, որ ներկայումս գոյություն ունեցող պետական, հանրային և գլոբալ ինստիտուցիոնալ կառուցվածքային տարաբնույթ ձևերը լայն հնարավորություն են տալիս երիտասարդությանը նախ նպատակադրված պայքար մղելու ժողովրդավարացման որակի համար, ապա՝ իր տեսլականին համապատասխան արդիականացնելու ազգային ինքնության արժեքային համակարգի քաղաքական էությունը:

3.3. Երիտասարդության քաղաքական սոցիալականացումը՝ որպես ազգային ինքնության արդիականացման գործընթաց. «հոգևոր անվտանգություն»

Մենագրության այս մասում հոգևոր անվտանգությունը դիտարկվում է որպես պատմության հոլովությամբ ձևավորված և քաղաքական ժամանակի մեջ պարբերաբար արդիականացող բազմաշերտ մշակութաքաղաքակրթական տեքստ: Որպես այդպիսին՝ գլոբալացման և գլոկալացման, ինչպես նաև տեղեկատվահաղորդակցական նոր տեխնոլոգիաների

²²⁶ Федотова В. Г., Неклассические модернизации и альтернативы модернизационной теории <http://www.intelros.ru/subject/figures/valentina-fedotova/9901-neklassicheskie-modernizacii-i-alternativy-modernizacionnoj-teorii.html>

զարգացման պայմաններում այն կերպափոխում է սոցիալ-քաղաքական տարածությունն ու ժամանակը՝ մի կողմից ենթադրելով երիտասարդության քաղաքական սոցիալականացման նոր արժեքաբանություն, մյուս կողմից՝ ազգային ինքնության արդիականացում:

Այս մոտեցումը հիմնավորվում է ՀՀ-ում «թավշյա հեղափոխության» հաղթանակից հետո սոցիալ-քաղաքական արդիականացման հետևանքների առաջին փուլի (գծային ազատականացում) վերանայման և արդյունքի կառավարման հրամայականներով:

Այս համատեքստում դիտարկվում է ազգ-պետության արդյունավետ գործառույթը՝ որպես Հայաստանի հոգևոր անվտանգության ապահովման և հայկական Մփյուռքի համախմբման նոր որակի արժեքների ներդրման համակարգ: Առաջարկվում է ՀՀ-ի հոգևոր անվտանգության ապահովման հիմքում դնել նոր հումանիզմը, համաձայն որի՝ հոգևոր անվտանգությունը պետք է իրականացվի համագործակցության մշակույթի զարգացման, գերշահույթի և մենաշնորհի մերժման միջոցով:

Երիտասարդության քաղաքական սոցիալականացման և ազգային ինքնության արդիականացման փոխապայմանավորվածության **ինստիտուցիոնալ հիմքերի համալիր ուսումնասիրությունը** այն հիմնախնդիրն է, առանց որի հնարավոր չէ ՀՀ-ում հաստատել ժողովրդավարական համախմբում: Ս. Հանթինգթոնը գրում է. «Համախմբված ժողովրդավարությունը միայն գյուղի, համայնքի կամ քաղաք-պետության ժողովրդավարություն չէ. դա ազգային պետության ձևավորման և հաստատման հետ սերտորեն կապված ժողովրդավարություն է: Ժողովրդավարությունը միայն խոսքի ազատություն, ընտրություններին մասնակցելու իրավունք չէ: Դա օրենքի իշխանություն է: Ժողովրդավարության հաստատած ազատությունը առանց պատասխանատվության մահանում է»²²⁷:

Ս. Հանթինգթոնի այս ելակետային մոտեցման համատեքստում ակնհայտ է դառնում, որ ՀՀ-ում «թավշյա հեղափոխության» հաղթանակը ժողովրդավարական անցման ձգձգվածության հետևանք է, իսկ օտարումը, աղքատությունը, կոռուպցիան, արտագաղթը, մենաշնորհը և գերշահույթը սպառնալիք են ազգային անվտանգության համար: Այս դիտանկյունից

²²⁷ Хантингтон С., Третья волна. Демократизация в конце XX века; пер. с англ. Л. Ю. Пантиной, М.: РОССПЭН, 2003, с . 120.

անհրաժեշտ է օբյեկտիվորեն վերլուծել ՀՀ-ում հոգևոր անվտանգության հիմնախնդիրները, քանի որ միայն այդպես է հնարավոր ազգ-պետության գործառնական տիրույթներում ժողովրդավարացնել քաղաքական իշխանության իրականացման մշակույթը: Հոգևոր անվտանգությունը՝ որպես ազգային անվտանգության կարևոր բաղադրիչ, ներառում է ազգային ինքնագիտակցությունը՝ արտացոլելով հասարակության կենսագործունեության ավանդույթները, նրա մշակույթը և պատմությունը, ինչպես նաև հասարակության բարոյաքաղաքական միասնության աստիճանը: Հոգևոր անվտանգության հիմքում ազգային անվտանգությունն ապահովող բոլոր այն բարոյահոգեբանական և հայրենասիրական նորմավորված արժեքներն են, որոնց միջոցով ժողովուրդն արտահայտում է ոչ միայն իր վստահությունն ու աջակցությունը կառավարող էլիտայի քաղաքականության նկատմամբ, այլև պատրաստակամությունը՝ պաշտպանելու իրեն, իր պետությունն ու պետականությունը: Քաղաքակրթության փորձը վկայում է, որ ազգերի և պետությունների դժբախտությունն սկսվում է այն ժամանակ, երբ քայքայվում է ժամանակի ընթացքում ձևավորված նրանց մշակութանորմատիվային և բարոյահոգեբանական համակարգի քաղաքական էությունը, երբ իշխանական հարաբերությունների լեգիտիմության ցածր մակարդակը օտարում և մարգինալացնում է հասարակությանը, քաղաքացուն և հատկապես երիտասարդությանը՝ տրոհելով (փոշիացնելով) ազգի ոգին և ազգի իշխանությունը:

Ըստ Ս. Հանթինգթոնի՝ ժողովրդավարության «երրորդ ալիքի» շրջանակում սոցիալ-քաղաքական արդիականացումը տեղի է ունենում անհավասար չափով, քանի որ՝ «...Արդի հասարակությունները կարող են իրար ավելի նման լինել, քան ավանդականները երկու պատճառով: Նախ՝ արդի հասարակությունների միջև ավելի մեծ փոխազդեցությունը կարող է չծնել ընդհանուր մշակույթ, սակայն այն հեշտացնում է տեխնոլոգիաների, գյուտերի և կազմակերպվածքի փոխանցումը մի հասարակությունից մյուսին մի այնպիսի արագությամբ և աստիճանով, ինչն ավանդական աշխարհում հնարավոր չէր: Երկրորդ՝ ավանդական հասարակությունը հիմնված էր գյուղատնտեսության վրա, մինչդեռ արդի հասարակությունը հիմնվում է արդյունաբերության վրա, որը կարող է արհեստներից վերաճել դասական

ծանր արդյունաբերության, իսկ այնուհետև՝ գիտութենահեն տեխնոլոգիաների և արտադրությունների»²²⁸:

Այս դիտանկյունից երիտասարդության քաղաքական սոցիալականացման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել, որ ինքնությունը մարդու վարքահոգեբանական ունակությունն է՝ խտացված ձևով արտահայտելու իր պատկանելությունը տարբեր մասնագիտական, սոցիալական, ազգային, լեզվական, քաղաքական, ռասայական, կրոնական, մշակութային և այլ խմբերին: Նման մոտեցումն անհրաժեշտ պայման է, որպեսզի փոփոխվող աշխարհում մարդը պահպանի իր տեսակի մրցունակությունն ու հոգևոր անվտանգությունը, քանի որ «մինչև մարդիկ հարաբերվում են շրջապատի մարդկանց հետ, նրանք այլ ելք չունեն, քան իրենց սահմանելու մյուսների հետ հարաբերությունների միջոցով և հիմնվելու նմանությունների ու տարբերությունների վրա: Ինքնությունը կարևոր է, քանի որ թելադրում է մարդու պահվածքը»²²⁹:

Ազգային ինքնությունը պատմության հոլովոյթում ձևավորված և քաղաքական ժամանակի մեջ պարբերաբար կերպափոխվող սոցիալ-քաղաքական տեքստ է: Այն ներառում է ազգի ծագումը, զարգացումը, ազգային հոգեկերտվածքն ու պատմական հիշողությունը, ազգային սիմվոլներն ու սոցիոմշակութային ժառանգությունը, ինչպես նաև քաղաքական ինքնակազմակերպման և ինքնակառավարման արժեքային համակարգի այն հիմնարար բնութագրիչները, որոնք ձևավորում են քաղաքական ազգը: Վերջինս, զուգամիտելով ռացիոնալը և իռացիոնալը, արդիականանում է միայն գոյություն ունեցող ազգ-պետության միջոցով. «Նացիոնալիզմն ունի ինտեգրող քաղաքական ուժի դեր, եթե մի ժողովուրդ կամ ազգ պետք է հաստատվի՝ ի հակադրություն մեկ ուրիշի: Նացիոնալիզմը անձեռնմխելի լեզվիտիմություն է ստանում այնտեղ, որտեղ ուղղված է ուրիշի գերիշխանությունից ազատմանը»²³⁰:

Որպես ինքնիշխանության վրա հիմնված երևույթ՝ ազգ-պետությունում գերակա է ընդհանուր մշակույթ, լեզու, էթնիկություն և կարծր պատմական

²²⁸ Хантингтон С., Столкновение цивилизаций. Пер. с англ. Т. Велимеева, Ю. Новикова. М. АСТ, 2007, с. 94-95.

²²⁹ Хантингтон С., Кто мы?: Вызовы американской национальной идентичности, Пер. с англ. А. Башкирова. — М.: ООО «Издательство АСТ»: ООО «Транзиткнига», 2004. с. 51

²³⁰ Альтерматт У., Этнонационализм в Европе. М.: Изд-во РГГУ, 2000, с.44.

հիշողություն ու մեծ ազդեցություն ունեցող մեկ ազգ, որը կառավարությունների լեգիտիմության և քաղաքական կայունության ապահովման երաշխիքն է²³¹: Լինելով քաղաքական կազմակերպություն՝ ազգ-պետությունն ինքնիշխանություն է ապահովում թե՛ աշխարհագրական սահմաններում, թե՛ այլ ինքնիշխան պետությունների հետ հարաբերվելիս՝ կարևորելով ոչ միայն լեգիտիմության և արդյունքի կառավարման անհաղթահարելի զուգամիտումը, այլև մշակութաստեղծությունը՝ կառավարող էլիտայի իշխանության իրականացման մշակույթի ժողովրդավարացման համար:

Ըստ Ս. Հանթինգթոնի՝ եթե ազգը պատրաստ չէ պատասխանելու մարտահրավերներին, անորոշությամբ հղի մեծ շեղումով փոփոխվում է նրա հոգևորի արժեքային առանցքը (միջուկը), որի պատճառով ազգը կա՛մ կորցնում է իր ինքնությունը և ձուլվում, կա՛մ դրսևորում է արդիականանալու քաղաքական կամք՝ իր քաղաքակրթական ինքնատիպությունը կենսունակ (մրցունակ) պահելու նպատակով, կա՛մ էլ պարբերաբար հայտնվելով անորոշությունների մեջ՝ չի կարողանում ինքնակազմակերպվել իր «անփոփոխ միջուկի» շուրջ՝ հանուն ժողովրդավարական համախմբման²³²: Ինչպես տեսնում ենք, ազգային ինքնության գիտակցված և բնականոն արդիականացումը ազգ-պետության կառուցման և ամրապնդման համար հզոր ռազմավարական ռեսուրս է: Ավելին, նրա անտեսումը խոչընդոտում է ազգային անվտանգության հիմնախնդիրների, հատկապես հոգևոր անվտանգության ապահովումը:

Հայաստանի և հայության համար, երբ սոցիալ-քաղաքական համակարգի կերպավորումը հղի է տարաբնույթ անորոշություններով, երբ արմատապես փոխվել է ինքնության արդիականացման արտաքին միջավայրը, հոգևոր անվտանգության ապահովման հիմնախնդրի ուսումնասիրությունն ունի և՛ գիտատեսական, և՛ գործնական նշանակություն²³³: Հենց դա էլ երիտա-

²³¹ St' u The Concise Oxford Dictionary of Politics. McLean Iain, McMillan Alistair New York, 2009, p. 360.

²³² St' u Многоликая глобализация. Под ред. П. Бергера и С. Хантингтона. Пер. с англ. В. В. Сапова, под ред. М. М. Лебедевой. М., Аспект Пресс, 2004, с. 90:

²³³ Մարգարյան Մ.Մ., Երիտասարդության քաղաքական սոցիալականացումը՝ որպես ազգային ինքնության արդիականացման գործընթաց. հոգևոր անվտանգություն, «Հայկական բանակ», ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ ռազմագիտական հանդես, 3 (97). 2018, էջ 66-79

սարդության քաղաքական սոցիալականացումը որպես հոգևոր անվտանգության ապահովման համակարգի արդիականացման եղանակ դիտելու հիմք է դառնում: Կարծում ենք, որ այս մոտեցման շրջանակում էլ որոշիչ է Հայաստանի «Թավշյա հեղափոխությունից» հետո կարևորել երիտասարդության քաղաքական սոցիալականացման արժեքաբանությունը: Այն, որ հայ երիտասարդությունը պատրաստ է պայքարելու հանուն իր ազատության և գոյատևման, ապացուցում են Արցախյան հերոսամարտը, 2016 թ. ապրիլի

2-6-ը Արցախի վրա Ադրբեջանի ձեռնարկած լայնածավալ հարձակմանը դիմակայելու, ինչպես նաև «Թավշյա հեղափոխության» գլխավոր դերակատարի գործառույթ ստանձնելու փաստերը:

Հոգևոր անվտանգության խնդիրներով պայմանավորված՝ մարդն արժևորում է իր անհատական ինքնությունը՝ այն անվերապահ ընդունելով որպես ինքնապահպանման, հանրության մեջ գտնվելու, համակեցություն մշակելու, զարգացման գոյաբանությունն ապահովելու, մարզինալության իրավիճակից դուրս գալու գործընթաց: Հենց այս մոտեցմամբ էլ Կ. Յունգը հիմնավորեց մարդու անգիտակցական միտքը, ինչպես նաև նրա մարմինը՝ որպես անցյալի հիշողությունների և հետքերի պահեստարան²³⁴: Ըստ այդմ էլ՝ մարդու էթնիկական նախակերպարը (նախատիպը) ունի բարոյահոգեբանական և սոցիալ-քաղաքական արժեքային ծանրաբեռնվածություն: Այդ տիրույթներում բազմամակարդակության հիմնավորմամբ Կ. Յունգը եզրակացրեց, որ ազգային բնավորության գիտակցականի կողքին գոյություն ունի նաև անգիտակցականը: Դրանց վրա հիմնված անհատականի ու սոցիալականի զարգացման մեջ գերիշխող սոցիալականը ենթադրում է ընդհանուր փորձի, տեղեկատվության ընդհանուր աղբյուրների միջոցով իրականացվող սոցիալականացում:

Փորձելով հասկանալ, թե ով է ինքը, մարդը հարաբերվում է ուրիշ «Ես»-ի հետ և ըստ այդմ ընդարձակում իր ճանաչողության ու իմացության տիրույթը՝ ստեղծելով համագործակցության մշակույթ: Փաստորեն, հոգևոր անվտանգությունը, վերոնշյալ օբյեկտիվ գործոնների հետ մեկտեղ, առաջին հերթին իմացագաղափարական և մտածելակերպային զգացողություն է: Ըստ դրա

²³⁴ Sté u Юнг К. Г., Архетипы коллективного бессознательного. (2014)

<http://sophia.nau.edu.ua/2010-07-29-11-48-45/2010-07-29-11-55-07/103-2010-07-31-12-22-00> (04.03.2019)

անձը, գիտակցելով իր քաղաքական և քաղաքացիական ազատության աստիճանը, գնահատում է իր էթնոազգային պատկանելությունն «այս» կամ «այն» խմբին: Այս դիտանկյունից հենց ծագման ընդհանրության՝ հավատի, մշակույթի, լեզվի, սովորությունների, ավանդույթների, առասպելների և սիմվոլների ընդունման ազդեցությամբ էլ տեղի է ունենում անհատի սոցիալականացումը²³⁵: Մակայն, եթե «Ես»-ի և «Մենք»-ի սոցիալականացումը չի հենվում անհատի՝ պատմականորեն ձևավորված արժեշահային համակարգի վրա, ապա ազգը և հասարակությունը քայքայվում են: Հետևաբար ազգային նպատակներն և ռազմավարական տեսլականը զարգացման հարացույցում ընդգրկելուց առաջ պետք է հստակ կերպով պատասխանել **«Ո՞վ ենք մենք»** հարցին²³⁶: Իսկ «Մենք»-ը հոգևոր անվտանգության ապահովման նպատակով պետք է հաղորդակցվի և համագործակցի այլ խմբերի հետ: Որպես ազգի անցյալի, ազգային կերպարի, նկարագրի ու կեցության, հոգեդրվածքի, ինչպես նաև ճանաչողության և իմացության ամբողջություն՝ հոգևոր անվտանգությունը համակարգում է՝

❖ տվյալ հասարակության գոյաբանության փորձը, որը **անցյալ-ներկա-ապագա** եռաչափության մեջ պատմության կարևորագույն իրադարձությունների ընկալման և արժեքների վերարտադրման հարատև գործընթաց է,

❖ պետութենաշինության մշակույթի զարգացման շնորհիվ ձևավորված և համագործակցության համար իրական պայմաններ ապահովող ստեղծարար գործունեությունը՝ օտարման ու մարզինալության չեզոքացմամբ,

❖ պետության և հասարակության անվտանգ ապագայի կանխատեսումն ու ռազմավարական տեսլականի մշակումը՝ ապահովելով ազգի ժողովրդավարական համախմբման և քաղաքացիավարական պատասխանատվության զարգացումը: Այս համատեքստում հոգևոր անվտանգության ապահովումը ոչ միայն պատասխան է նոր մարտահրավերներին, այլև իր տեսակի մրցունակությունն ապացուցելու համար կարող է ձևավորել նոր որակի համագործակցության մշակույթ: Փաստենք, որ պատմության մեջ կան բավական մեծ թվով օրինակներ, երբ պետությունները իրադարձությունների

²³⁵ St' u Алмонд Г., Верба С., Гражданская культура: политические установки и демократия в пяти странах / Г. Алмонд ; С. Верба ; пер. с англ. Е. Генделя, М.: Мысль, 2014. с. 145:

²³⁶ St' u Хантингтон С. Кто мы?: Вызовы американской национальной идентичности, Пер. с англ. А. Башкирова. М.: ООО «Издательство АСТ»: ООО «Транзиткнига», 2004, с. 31

բերումով ի վիճակի չեն եղել պահպանելու իրենց հոգևոր անվտանգությունը, ինչին մշտապես հաջորդել է քաղաքական քարտեզից այդ պետության անհետացումը: Ասվածի վառ օրինակ է պատմության թատերաբեմից ԽՍՀՄ անհետացումը:

Ազգային ինքնության ձևավորման գործում կարևոր դերը պատկանում է ընտրախավին, սակայն կարող ենք պնդել, որ արդի տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների և քաղաքական զարգացումների պայմաններում նրա գլխավոր կրողը քաղաքականապես սոցիալականացված երիտասարդությունն է: Հենց երիտասարդությունն է, որ իրեն նետված մարտահրավերների պայմաններում վերարժևորում է **անցյալ-ներկայի մասին** ընդհանուր պատկերացումները, ինչպես նաև անվտանգ ռազմավարական ապագայի համար պատասխանատվության զգացումը: Իսկ երիտասարդության քաղաքական սոցիալականացումն արդյունավետ է, եթե շարունակական բարեփոխումների և մարդկային կապիտալի կառավարման հիմքում դրվում է կապիտալի **հումանիզացման քաղաքականությունը**:

ՀՀ-ում «թավշյա հեղափոխությունից» հետո ծավալված սոցիալ-քաղաքական կերպափոխումները պահանջում են հումանիզացման նոր նախագիծ, համաձայն որի՝ կենսագործունեության կազմակերպումը և սոցիալականացումը պետք է կատարվեն սոցիալական խավերի միջև համագործակցության մշակույթի զարգացման միջոցով: Այդ առումով ուշագրավ է հոլանդացի տնտեսագետ Յան Թինբերգենի մոտեցումը, ըստ որի՝ հանրային բարեկեցության և պետության անվտանգության կարողությունների արդիականացման համար անհրաժեշտ է, որ մարդկային կապիտալի կառավարումն իրականացվի **ազգային հոգևոր առաջնությունների, մրցունակության և ազգի բնական մարդկային ներուժի փուլային զարգացման ռազմավարության հիման վրա**²³⁷:

Անհրաժեշտ է մշակել ՀՀ պետական նոր քաղաքականություն, որը պետք է նպատակաուղղված լինի գերշահույթի մերժմանը՝ ապահովելով **«բարեգործության» սկզբունքից անցումը «համագործակցության» սկզբունքի: Զուգահեռաբար** նոր սերնդի սոցիալականացումը պետք է ուղեկցվի

²³⁷ St' u Тинберген Ян., Пересмотр международного порядка. Пер. с англ. И. Бонк, В. Иванов, О. Иванова, М. Носов, М. Портной, А. Чехутов, М.:Прогресс, 1980.; Тинберген Ян., Фишер Д., Война и благоденствие. Интеграция политики обеспечения безопасности в социально-экономическую политику, М.: ИНИОН, 1988.

պատմական հիշողության վերախմաստավորմամբ և պատմական անցյալի օբյեկտիվ գնահատմամբ: Այլ կերպ ասած՝ հոգևոր անվտանգության ապահովումը ներառում է **ինքնաճանաչողություն**, հասարակական-քաղաքական երևույթները փոխադարձ կապի մեջ ընկալելու և համակեցությունը պահպանելու ունակություն, ինչպես նաև «Ես»-ի՝ նյութականի և հոգեմտավորի փոխներդաշնակման միջոցով ազգային արժեքների մրցունակությունը բարձրացնելու կարողություն:

Ըստ պատմական հիշողության գիտակ ֆրանսիացի Պ. Նորայի՝ ազգային ինքնության կարևոր բաղադրիչ է տոնական և հիշատակման օրերի պետականորեն նշումը, ինչը նպաստում է միասնության գաղափարի ամրապնդմանը²³⁸: Ակնհայտ է, որ ժամանակային պարույրում միայն այդ ձևով կարելի է կանխել պատմական հիշողության մեջ ապակառուցողականություն մակաձող կոլեկտիվ գիտակցականի և անգիտակցականի խզումները, որոնք հոգևոր անվտանգության ապահովման գործում քառս ու պատրանքայնություն են ստեղծում:

Հայ երիտասարդի պատմական հիշողության մեջ որոշիչ տեղ ունի Հայոց ցեղասպանությունը: Կարծում ենք, որ այժմ հայ երիտասարդության քաղաքական սոցիալականացման գործընթացում տեղի են ունենում արմատական փոփոխություններ ցեղասպանության զոհի բարդությից ազատվելու, թույլ ու անօգնական ներկայանալու, հովանավորներ փնտրելու քաղաքականությունից հրաժարվելու և համամարդկային մարդասիրական գործունեություն վարելու ուղղությամբ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ հոգևոր անվտանգության ապահովման գործում առավել քան առանցքային է կառավարող վերնախավի դերը: Լինելով քաղաքական որոշումների ընդունման, իրագործման և վերահսկման գլխավոր դերակատար՝ ազգային վերնախավերն են պատասխանատու պետության պաշտպանական քաղաքականության, ազգային ավանդույթների արդիականացման, ինչպես նաև համագործակցության մշակույթի զարգացման համար: Այս դիտանկյունից, ՀՀ-ում անհրաժեշտ է դաստիարակել այնպիսի էլիտա, որն ի վիճակի լինի ցուցաբերելու բարձր պրոֆեսիոնալիզմ և, հրաժարվելով մեխանիկական արևմտականացումից, նպատակադրված կերպով բնաշխարհիկացման

²³⁸ Sté u Нора П., Озур М., де Пюимеж Ж., Винок М.. Франция-память. Пер. с фр. Д. Р. Хапаевой. СПб.: Изд-во С. -Петербург. ун-та, 1999. сс. 15–60:

(Indigenization) քաղաքականություն մշակի և իրականացնի, այսինքն՝ ազգային մշակութային հիմքերը նորովի մեկնելու և ոչ թե մերժելու միջոցով ապահովի հոգևոր անվտանգություն:

Քաղաքակրթությունների զարգացման փորձը վկայում է, որ եթե հոգևոր անվտանգության համակարգի բնականոն արդիականացում տեղի չի ունենում, ապա «Ես» և «Մենք» բևեռները մարզինալացվում են: Դրա հետևանքով կորցնում են իրողության մեջ կատարվող սոցիալ-քաղաքական փոփոխությունները իրատես գնահատելու ունակությունը և սկսում են իրականացնել հոգևոր անվտանգության համար վտանգավոր ուժացման (ասիմիլյացիոն) կառավարում: Ըստ այդմ՝ հայ հասարակության հոգևոր անվտանգության ապահովման համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է՝

1. քաղաքական և տնտեսական վերնախավերի միջև «համաձայնություններ» կնքել՝ հիմնված նոր հանրային կառավարման սկզբունքների ներդրման վրա,

2. քաղաքացիական հասարակության ինստիտուտները՝ որպես հոգևոր անվտանգության ապահովման պատասխանատուներ, պետք է գործունեություն ծավալեն՝ հանրային ու խմբային շահերի զուգամիտմամբ,

3. արդի մարտահրավերներին պատասխանելու համար շահային խմբերն ու անհատները պետք է ոչ թե մեխանիկորեն կողմնորոշվեն դեպի տարբեր քաղաքակրթություններն և աշխարհաքաղաքական կենտրոնները, այլ ինքնորոշվելով՝ մշակեն ազգակենտրոն ու պետութենակենտրոն գործողությունների համակարգ: Ընդամին, այդ գործողությունների կատարման համար որոշիչ է ՀՀ – Սփյուռք – ԱՀ ցանցային համագործակցությունը: Դա կստեղծի բարենպաստ պայմաններ, որ Սփյուռքի հայ գործարարները ՀՀ-ում ներդրումներ կատարեն՝ **բարեգործից վերածվելով ներդրողի**: Նման պետական քաղաքականություն վարելու համար անհրաժեշտ է ՀՀ-ում հստակեցնել օրենսդրական դաշտը և հավասար մրցակցային պայմաններ ստեղծել հակամենաշնորհային քաղաքականության և **պետություն–գործարար հարաբերությունների ինստիտուցիոնալացման միջոցով**: Նման քաղաքականության շնորհիվ ոչ միայն կնվազեն կոռուպցիան և նեպոտիզմը, այլև կբարձրանա կյանքի որակն ու մակարդակը: Այս ռազմավարությունը կմիավորի հայությանը և ապահովելով հոգևոր անվտանգություն՝ կնպաստի **բարեկեցիկ, կայուն զարգացող ու գիտելիքահեն ապագա ունեցող Հոգևոր Հայաստանի զարգացմանը**:

Վերոշարադրյալը թույլ է տալիս հանրագումարել. ՀՀ հոգևոր անվտանգության ապահովման հրամայականներն են՝ նախ սոցիալ-քաղաքական կերպափոխումների վերարժևորումը, ապա՝ քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման նպատակով սեփականության լեզիտիմացման գործընթացի ապահովումը, սոցիալական երկխոսությանը նպաստելը, մրցունակ կրթությունը, պատմությունը սերունդներին ներկայացնելը **անցյալ-ներկա-ապագա** եռաչափության մեջ, քաղաքական և քաղաքացիական մշակույթների փոխհարաբերությունների միջոցով ազգային ինքնագնահատականի բարձրացումը:

Վերը շարադրվածի հիման վրա կարող ենք եզրակացնել.

ա) Հոգևոր անվտանգության ապահովման քաղաքականության և երիտասարդության քաղաքական սոցիալականացման արդյունավետությունը ուղիղ համեմատական է «Մենք»-«Նրանք» ցանցային հաղորդակցման միջոցով սոցիալ-քաղաքական արդիականացմանը և ազգային մրցունակության մեծացմանը: Այս դիտանկյունից անհրաժեշտ է ապահովել Հայաստանի Հանրապետության, Սփյուռքի և Արցախի Հանրապետության հայության միասնականությունը:

բ) Երիտասարդության քաղաքական սոցիալականացման ընթացքում անհրաժեշտ է դաստիարակել նոր սերնդի էլիտա: Այն, չհրապուրվելով անհատական ազատությամբ²³⁹ և չշահարկելով մարդու իրավունքները (չկա իրավունք առանց պատասխանատվության), նպատակադրված բարելավելով ժողովրդավարության որակը, կվարի ազգային ինքնության բնականոն արդիականացման վրա հիմնվող անվտանգային քա-

²³⁹ Այդ իմաստով, Ի. Վալերսթայնը մշակույթի կարևոր բաղադրիչ դիտարկելով սահմանափակումները, այն կարծիքին էր, որ անհատական անպատասխանատու ազատությունը մշակութային բարիք չէ: Ազատությունը սահմանափակվում է մշակույթի զարգացմանը զուգահեռ, իսկ արդարությունը պահանջում է, որ այդ սահմանափակումներից և ոչ մեկից հնարավոր չլինի խուսափել: Այն, ինչը հասարակության մեջ համարվում է ազատության ձգտում, կարող է լինել ընդվզում առկա անարդարության դեմ և այդ միջոցով նպաստել մշակույթի հետագա զարգացմանը, մշակույթի հետ սերտաճմանը: Սակայն այդ նույն ձգտումը կարող է բխել անձի մշակութային անհանդուրժողականությունից և վերածվել մշակույթի նկատմամբ թշնամանքի: Այդ իսկ պատճառով ազատության ազդեցիկ ձգտումն ուղղված է կա՛մ մշակույթի որոշակի ձևերի և պահանջների դեմ, կա՛մ մշակույթի դեմ ընդհանրապես: (Валлерстайн И., Конец знакомого мира: Социология XXI века / Пер. с англ. под ред. Б. Л. Иноземцева; ЦИПО, М.: Логос, 2003, 368 с.)

ղաքականություն: Հենց դա էլ կբարձրացնի անվտանգ ապագայի ռազմավարության մշակման և իրականացման համար իր պատասխանատվության մակարդակը:

գ) Աշխատանքի միջազգային բաժանմանը մրցունակ կերպով մասնակցելու համար բարձրացնել ազգային կապիտալի տեխնոլոգիական հագեցվածության մակարդակը և հասարակության կյանքի որակը:

3.4. Պատմականությունը՝ որպես պետության ինքնիշխանության արդիականացման բաղադրիչ

Նոր աշխարհակարգի կայացման պայմաններում ազգ-պետության հզորացման դիտանկյունից հիմնավորել ենք մոտեցում, որ պատմականությունը, ներառելով պատմական հիշողությունը, անցյալի վերլուծման, ապագայի կանխատեսման, տեղեկատվական հոսքերի իրատես կառավարման գործընթաց է: Այս համատեքստում առաջարկված է **«անցյալի ընտրություն»**²⁴⁰ եզրույթը, որը հնարավորություն է տալիս ռացիոնալ մակարդակում պատմական հիշողությունից կանչելու այն հատվածը, որի հետագա գեներացումը կապահովի և՛ կենսունակություն, և՛ մրցունակություն, միննույն ժամանակ կգտի տեղեկատվական աղմուկը: Համոզված ենք, որ նոր աշխարհակարգում պետական-ազգային «Ես»-ի անվտանգության համալիր ապահովման գործընթացը պետք է հիմնվի հայկական երեք հանրապետությունների անցյալ-ներկա-ապագա եռաչափ կապի վրա:

Ինքնիշխանության արժեքային բազմաչափությունը: Նոր աշխարհակարգը ուղղահայաց և ցանցային կառավարման սկզբունքների գուգամխումն իր կառուցակարգերով հայտնվել է համաչափ և անհամաչափ սպառնալիքների, անորոշ քաղաքական զարգացումների մեջ: Մինչդեռ, ըստ Հ. Քիսինջերի, նոր աշխարհակարգը, շարունակելով հենվել Վեստֆալյան համակարգի վրա, պետք է կառուցվի «համաձայնեցված ռազմավարության մշակման միջոցով՝ ուղղված առանձին տարածաշրջանների ներսում կարգի հայեցակարգի ստեղծմանը և այդ տարածաշրջանային կարգերի փոխադարձ

²⁴⁰ Մարգարյան Մ.Մ., Պատմականությունը՝ որպես պետության ինքնիշխանության արդիականացման բաղադրիչ.- «Վեմ» համահայկական հանդես, Ժ (ԺԶ) տարի, 2018, թիվ 2 (62), ապրիլ-հունիս, էջ 10- 29:

կապակցմանը²⁴¹»։ Անորոշություններից և տարաբնույթ բախումներից խուսափելու նպատակով Հ. Քիսինջերն առաջարկում է զարգացնել պետության ինքնիշխանությունը։

Ինքնիշխանությունը պետության բացարձակ հատկությունն է՝ արտահայտված բարձրագույն իշխանություն կրողի կողմից սեփական կամքը անկախ, ինքնուրույն ձևավորելու և իրականացնելու քաղաքական բովանդակությամբ, ինչպես նաև պետական իշխանության մարմինների կառուցվածքի և լիազորությունների սահմանադրաիրավական ձևի ամրագրմամբ։ Այս համատեքստում նպատակահարմար է ինքնիշխանությունը դիտարկել գոյաբանական, նյութական, իրավաքաղաքական, քաղաքակրթական արժեքների և սկզբունքների արդիականացման մակարդակներում։ Ունենալով **իրավաքաղաքական բնույթ՝ պետության ինքնիշխանությունը՝ որպես** բազմաչափ երևույթ, ներառում է՝ 1) պետության իշխանության գերակայությունը նրա ողջ տարածքում, 2) ժողովրդական ինքնիշխանությունը՝ որպես պետության ինքնիշխանության կամարտահայտման աղբյուր, 3) պետության իշխանության անկախությունը մյուս պետություններից և միջազգային հարաբերությունների այլ սուբյեկտներից, 4) ինքնիշխանության անբաժանելիությունը, 5) պետության ինքնիշխանության բացառիկությունը նրա տարածքում, 6) ինքնիշխան իրավունքների անօտարելիությունը, 7) ինքնիշխանությանը բնորոշ են պետական իշխանության անկախությունը, միասնականությունը, գերակայությունը, քանի որ՝ «Առանց ինքնիշխան պետության չի կարող լինել ապահով ժողովրդավարություն»²⁴²։

Ակնհայտ է, որ ինքնիշխանության արժեքայնությունն արդիականանում է պետության ինստիտուտի զարգացմանը համընթաց։ Ուստի ինքնիշխանությունը դիտարկել ենք քաղաքական և սոցիալական կարգի կերպավորման հրամայականների համատեքստում՝ որպես էլիտայի և հասարակության կոլեկտիվ կամքի զուգամիտման գիտակցված դրսևորման արդյունք։ Որպես այդպիսին՝ «Պետությունն իր բնույթով ունի միավորող հատկություն, բայց ոչ այն պատճառով, որ կոչված է ամեն բան կլանելու, այլ որովհետև այն վերաբերում է քաղաքական հասարակությանն ամբողջությամբ, սահմանում

²⁴¹ Kissinger H., World Order, Penguin Random House LLC, New York, 2014, p.p. 371-375

²⁴² Juan Linz and Alfred Stepan, Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, South America, and Post-Communist Europe, JHU Press, 1996. p. 45:

է հասարակության կենսաձևը, կառուցում է ընդհանուր կյանքի հիմքերը, պայմանավորում է մնացած ամեն բան»²⁴³: Այս դիտանկյունից պատմականորեն պետության ինքնիշխանությունը հիմնավորվում է միայն հետևյալ գործոններով՝ **ընդհանուր սահմանների անվտանգության ապահովում՝ որպես ազգի, հասարակության կենսագործունեության կազմակերպման, վերարտադրման, ազգային ինքնության պահպանման և արդիականացման համար անհրաժեշտ սոցիալական և քաղաքական տարածության ստեղծման անհրաժեշտություն**: Ակնհայտ է, որ՝ «...Պետությունը գործակալ է, որը ներկայացնում է հասարակությունը իր ներսոցիալական հարաբերություններում: Այն միևնույն ժամանակ հասարակությանը ներկայացնում է որպես սեփական պատմությունը կերտողի: Այն հաստատում է ներկայի կապը անցյալի և ապագայի միջև: Չկա պետություն, որը չունենա պատերազմելու կամ խաղաղություն կնքելու իրավունք, հետևաբար չկա պետություն առանց հասարակության կյանքի և ապագայի նկատմամբ պատասխանատվության: Չկա նաև պետություն, որը չլինի հասարակական կարգի, այսինքն՝ վերարտադրման մեխանիզմների ամբողջության երաշխավորը»²⁴⁴: Վերոշարադրյալը հիմք է, որ պետական ինքնիշխանության արժեքային համակարգի արդիականացման միտումները դիտարկենք Հայաստանի Հանրապետության հարյուրամյա տարեդարձի արժևորման, ինչպես նաև բարեկեցիկ և երջանիկ ապագայի ապահովման դիտանկյունից:

Պատմականության (historicism) էության ու բնույթի մասին: Պատմականությունը գիտական ճանաչողության սկզբունք է, ըստ որի՝ իրերն ու երևույթներն ուսումնասիրվում են իրենց ծագումնաբանության, գոյաբանության և անցյալ-ներկա-ապագա եռաչափության ծիրում ունեցած զարգացման մեջ²⁴⁵: Ընդունելով իրականությունը որպես ժամանակի մեջ դրսևորվող երևույթ՝ պատմականությունը օբյեկտին դիտարկում է իր ծագման, զարգացման և կերպավորման բազմաչափության տիրույթում:

²⁴³ Бенетон Ф., Введение в политическую науку. Пер. с фр., М.: Весь мир, 2002. с. 144.

²⁴⁴ Турен Ален, Возвращение человека действующего. Очерк социологии, М.: Научный мир, 1998, с. 72

²⁴⁵ Никитина А. Г., Историзм социально-политического явления (Отношение социологии и историографии в свете проблемы историзма).- Полис. Политические исследования. 2000. № 5. с. 167; Мартынов В. С., Постмодерн-реванш “проклятой стороны Модерна”.-Полис. Политические исследования. 2005. № 2. С. 147-157.

Պատմականության անհրաժեշտությունը՝ որպես հասարակության զարգացման էությունը բացահայտող երևույթ, ժամանակին հիմնավորել են Հերակլիտը, Պլատոնը, Արիստոտելը, հետագայում նաև Դժ. Վիկոն, Վոլտերը, Հեգելը, ինչպես նաև Մ. Վեբերը և Կ. Մարքսը: Երևույթները պատմական հոլովությամբ և ապագաբանական հեռանկարում դիտարկելը դարձավ հասարակության զարգացման և արդիականացման հիմնախնդիրների կենտրոնացված բացահայտման այնպիսի բնութագրիչ, որի օգնությամբ կանխատեսվում են հանրային շահի զարգացման հեռանկարը, անհանդուրժողականության կուտակումը, անարդարության դեմ պայքարի կառուցակարգերը և պատմության ընթացքը՝ որպես աշխարհի կառավարման «աստվածային պլանի» իրականացում (պրովիդենցիալիզմ), ինչպես նաև իրականությունը որպես անցյալի իսկության արտացոլում մեկնաբանելը²⁴⁶:

Պատմականությանը (historicism)՝ որպես բազմաչափ երևույթի, բնորոշ է հետևյալ մոտեցումը. «1. Պատմական և սոցիալական երևույթները պայմանավորվում (բնորոշվում) են պատմության ընկալմամբ, իսկ պատմական երևույթները կարգավորվում (դեկավարվում) են բնական օրենքներով: 2. Պատմական զարգացմանը բնորոշ է որպես մարդու գոյության ամենահիմնական ասպեկտ վերաբերվելու միտումը: Այն ենթադրում է համոզմունք (հավատ)՝ անցյալի ոճերի նկատմամբ չափազանց մեծ վերաբերմունք (արտիստիկության և ճարտարապետության համատեքստում)»²⁴⁷:

Պատմականության ընկալումը դինամիկ փոփոխվում է՝ պայմանավորված «Ես»-ին ուղղված ժամանակի մարտահրավերներով: Նշենք, որ ինչպես անցյալն է ազդում ներկայի վրա, այնպես էլ ներկայով է մեծապես պայմանավորված, թե ինչպես կընկալվի և կվերծանվի անցյալը: Ուստի անցյալին դիմելը տարբեր շահային խմբերի և ինստիտուտների միջև կապեր հաստատելու ճկուն և առաձգական մեխանիզմ է, որի հիման վրա էլ կառուցվում է հանրային անվտանգությունը: Ավելին, Է. Մմիթի կարծիքով, ազգակառուցման ու պետականակառուցման գործընթացում ներկա աշխարհի ամենահզոր ուժերից մեկը ներկայի ինքնիշխանության մեջ

²⁴⁶ Соловьёв Э., Судьбическая историософия Хайдеггера // Прошлое толкует нас (Очерки по истории философии и культуры). - М.: Политиздат, 1991, с. 353

²⁴⁷ <https://en.oxforddictionaries.com/definition/historicism>

անցյալի դերի հարցն է²⁴⁸: Այս տեսանկյունից պատմական հիշողությունը հիմնված է մարդկանց՝ իրական կամ պատկերացրած պատմական անցյալի ամբողջական կամ առանձին դրվագների շուրջ գիտելիքների և վերաբերմունքի, ինչպես նաև ուրիշներին ճանաչելու վրա²⁴⁹: Այսինքն՝ կարևորություն է ստանում հետևյալ հարցը. ազգակառուցման և պետականակառուցման նպատակով պատմական հիշողության ո՞ր հատվածի վրա է անհրաժեշտ կենտրոնացնել ուշադրությունը և ո՞ր հերոսի **«կյանքն ու գործունեությունը»** մատուցել հասարակությանը: Այս համատեքստում կարևորվում է Լ. Պայի՝ ասիական ժողովուրդների օրինակով կատարված դիտարկումը. «Ասիական ժողովուրդները, ունենալով ամուր էթնիկ, մշակութային, կրոնական և նույնիսկ ռասայական ինքնանույնականացում, առանցքային և կարևորագույն արժեքների ընտրության հարցում դեռևս բխվում են խնդիրների, որոնք պետք է լինեն ազգային ինքնության հիմնական բաղկացուցիչները: Դրանք պետք է լինեն այն արժեքներն ու գաղափարները (իդեալները), որոնք պետական իշխանությանը կօժտեն լեգիտիմությամբ»²⁵⁰:

Որպեսզի պատմական փաստերի նորովի մեկնումը պահպանի ոգեղենությունը և խարիզմատիկ լեգիտիմացվի, անհրաժեշտ է, որ գործողությունների համակարգը համապատասխանի օբյեկտիվության, վստահության, թափանցիկության, հուսալիության և նման այլ չափանիշների, որոնց միջոցով քաղաքացիների գիտակցության մեջ վստահություն է հաստատվում դրանց իսկության վերաբերյալ: **Պատմական հիշողությունը քաղաքական վարքը, գիտակցությունը ձևավորող կարևոր բաղկացուցիչ է, որն իր էներգիայով (շատ դեպքերում՝ չգիտակցված) հասարակությանը (ազգին, էթնոսին, անձին) մղում է ինչպես որոշակի ինստիտուցիոնալացված վարքագծի, այնպես էլ, ենթարկվելով էնտրոպիայի, տրոհում է քաղաքական տարածությունն ու ժամանակը**²⁵¹: Հանրագումարելով՝ կարող ենք փաստել, որ

²⁴⁸ Anthony D. Smith. *Myths and Memories of the Nation*, Oxford UP, New York, 2000, p. 165-166.

²⁴⁹ Леви-Стросс Клод., *Узнавать других. Антропология и проблемы современности*, Пер. с фр. Е. Чебучевой. М.: Текст, 2016. - 160 с.

²⁵⁰ Pye Lucian W., *International Relations in Asia: Culture, Nation and State*. Published by The Sigur Center for Asian Studies, July 1998. P. 9.

²⁵¹ Մարգարյան Մ.Մ., *Պատմականությունը՝ որպես պետության ինքնիշխանության արդիականացման բաղադրիչ* - «Վեմ» համահայկական հանդես, Ժ (ԺԶ) տարի, 2018, թիվ 2 (62), ապրիլ-հունիս, էջ 13:

առանց պետականության կամ պետության հզորության մասին երազանքի ո՛չ ազգը և ո՛չ էլ հասարակությունը չեն կարող իրենց անվտանգությունն ապահովել: Այդ պատճառով էլ պետության ինքնիշխանության ապահովումը, հաշվի առնելով պատմականությունը, ազգի կյանքում կարևորագույն դեր է խաղում: Սակայն բաց հասարակության գաղափարախոս Կ. Պոպպերը թերահավատորեն է վերաբերվում հասարակական-քաղաքական համակարգի ինստիտուտների ժողովրդավարացման հիմնախնդիրներում պատմականության համընդգրկուն ազդեցությանը: «Գալիքը կախված չէ հենց մեզնից, իսկ մենք էլ պատմական որևէ տեսակի անհրաժեշտությունից կախված չենք»²⁵²: Այնուամենայնիվ, ՀՀ-ում պետության (և ընդհանրապես, կառավարման, հատկապես պետական կառավարման) արդիականացման և ժողովրդավարացման գործընթացի վերլուծությունն անհնար է առանց պատմական դաշտի քննարկման, քանի որ Հայաստանի երեք հանրապետությունների վերածնունդը և նրանց գործառնումը կրել և կրում են այդ դաշտի խորքային ազդեցությունը:

Համաձայն գործառնական մոտեցման հիմնավոր պնդման՝ **քաղաքական համակարգը, որը միջանկյալ է պատմականության դաշտի և սոցիալական կազմակերպման միջև, ազդվելով առաջինից՝ ուղղորդում է երկրորդին:** Գործառնական հայեցակարգը Ա. Թուրենն օգտագործել է որպես գործունեության սոցիոլոգիայի (ակցիոնալիզմ) մեկնակետ, որը բխում է պատմական սուբյեկտի հայեցակարգից: Տվյալ պարագայում Ա. Թուրենի կողմից պատմականության հայեցակարգն այլ իմաստով օգտագործելը հիմնավորվում (բացատրվում) է նրանով, որ վերջինիս բազմաշերտ բովանդակությունից «բացառվում կամ մերժվում» են սոցիալական փաստերը ոչ սոցիալական սկզբունքներով մեկնաբանող մետասոցիալական երաշխիքները: Պատմականությունն այն հեռավորությունն է, որն ազդում է հասարակության գործունեության վրա. այն գործունեության, որի միջոցով նա սահմանում է իր պրակտիկայի կատեգորիաները: Ինստիտուցիոնալ համակարգը «այնպիսի կառուցակարգերի համախումբ է, որոնց միջոցով պատմականության դաշտը փոխակերպվում է սոցիալական կյանքի

²⁵² Պոպեր Կ., Բաց հասարակությունն ու նրա թշնամիները (թարգմ. Ս. Հարությունյանի). - Եր., Հայաստան, 2001, էջ 3:

կանոնների մի համախմբի, որն էլ, իր հերթին, կանխորոշում է կազմակերպությունների գործառնությունները»²⁵³:

ՀՀ-ում հաստատված կառավարման ինստիտուցիոնալ նոր համակարգի վերլուծության համար թուրքենյան մոտեցման օգտագործումը մեր կողմից հիմնավորվում է այսպես.

1. Երրորդ հանրապետության ինստիտուցիոնալ համակարգը միանշանակ նախորդած երկրորդ հանրապետության (Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն՝ ՀԽՍՀ) բնականոն արդիականացման արդյունք չէ, քանի որ այդ երկուսի հիմքում բացարձակապես հակադիր գաղափարական համակարգեր են: Նույն տրամաբանությամբ էլ հնարավոր չէ երկրորդ հանրապետությունը առաջինի բնականոն արդիականացման արդյունքը համարել, քանի որ առաջին հանրապետության խորհրդայնացման հետևանքով արմատապես փոխվեց գաղափարական համակարգը և դրա հենքի վրա կատարված ինստիտուցիոնալացումը: Մյուս կողմից, բոլոր երեք հանրապետությունների հռչակման պատմական նախադրյալները տարբեր են: Այսինքն՝ հայ հանրության կողմից իր բնապատմական և միջազգային շրջակայքի հետ ունեցած հարաբերությունների գիտակցումն ու իմաստավորումը տարբեր են եղել և, բնականաբար, տարբեր տեղակայումների համադրությամբ է հասունացել կոլեկտիվ **ազատության և անվտանգության երկվության փոխհարաբերությունների ինստիտուցիոնալացման պահանջմունքը:**

Ասվածը հիմնավորելու նպատակով նշենք, որ Առաջին հանրապետության հաստատման ամենաեական նախադրյալներից է տարածաշրջանում Վրաստանի և Ադրբեջանի անկախության հռչակման հետևանքով նախկինում գոյություն ունեցած որոշակի կարգի՝ Անդրկովկասյան ժողովրդավարական դաշնակցային հանրապետության (ԱԺԴՀ) ու Անդրկովկասյան սեյմի փլուզման հետևանքով հարուցված և հայ հանրության կողմից կարևորված՝ այդ քառսին դիմակայելու, սեփական հանրային անվտանգությունն ապահովելու գիտակցությունը: Այս համատեքստում որոշիչ էին նաև ազգային անվտանգությունն ապահովելու գիտակցության ռացիոնալացմանը նպաստած (նկատի ունենք մայիսյան հերոսական

²⁵³ Турен Ален, Возвращение человека действующего. Очерк социологии. - М.: Научный мир, 1998. 204 с

հաղթանակները) այն գործողությունները, որոնք հաջորդեցին 1915թ. Հայոց մեծ եղեռնին:

2. Ցեղասպանությունից և բոլշևիկյան հեղափոխությունից հետո Հայաստանը հայտնվեց քաղաքական նոր անորոշությունների մեջ՝ փլուզված տնտեսությամբ, փախստականներով ու գործազուրկներով, առանց դաշնակիցների, առանց հիմնավորված գաղափարախոսության: Անբարենպաստ ռազմաքաղաքական իրավիճակում 1918 թվականի մայիսի 28-ին հռչակված նորաստեղծ հայկական պետության համար չափազանց բարդ էր պահպանել ինքնիշխանությունը՝ դիմակայելով արտաքին և ներքին քառսին: Այնուամենայնիվ, 1918-1920թթ. Հայաստանում պետությունը, իր բոլոր թուլություններով ու թերություններով հանդերձ, և՛ վերականգնվեց, և՛ դարձավ ազգային ինքնիշխանության պատվար: Փաստորեն, հայոց պատմության մեջ առաջին անգամ ներդաշնակվեցին **ազգային ինքնիշխանության և պետական ինքնիշխանության գաղափարները**²⁵⁴: Դասկնհայտ է Հայաստանի կառավարության վարած քաղաքականությունից: Ստեղծվեց գաղթականության հարցերի հանձնաժողով: 1918թ. սեպտեմբերի 28-ին ընդունված «Կարիք ունեցող գաղթականների խնամատարության մասին» օրենքում պաշտոնապես արձանագրվեց, որ Հայաստանի ողջ ազգաբնակչության շուրջ 45 տոկոսը գաղթական է²⁵⁵: Հայաստանի անկախության առաջին տարեդարձի կապակցությամբ խորհրդարանը 1919թ. մայիսի 26-ին ընդունեց «Միացյալ և Անկախ Հայաստանի անկախության մասին», իսկ մայիսի 27-ին՝ «Հայաստանի խորհրդի համալրման մասին» օրենքները: Նմանօրինակ դիրքորոշումը բխում էր այն գաղափարից, որ Միացյալ Հայաստանը պիտի ունենար նաև միացյալ խորհրդարան: Այդ նպատակով որոշվեց Հայաստանի խորհրդարանի կազմը համալրել դաշնակցական արևմտահայերի 12 ներկայացուցչով: Դա էլ դարձավ «աջ» և «ձախ» ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչների հարաբերությունների խզման պատճառ, քանի որ **նրանք, կողմ լինելով Հայաստանի հզորացմանը, չէին ցանկանում պատմականորեն ձևավորված Հայկական հարցը քաղաքական օրակարգ մտցնել**: 1919թ. հունիսի 4-ին, երբ

²⁵⁴ Մարգարյան Մ.Մ., Պատմականությունը՝ որպես պետության ինքնիշխանության արդիականացման բաղադրիչ.- «Վէմ» համահայկական հանդես, Ժ (ԺԶ) տարի, 2018, թիվ 2 (62), ապրիլ-հունիս, էջ 15:

²⁵⁵ Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Երևան, ՀՅԴ հրատ., 2005, էջ 110:

խորհրդարանի նիստին մասնակցում էին նաև 12 արևմտահայ ներկայացուցիչները, մեղադրելով կառավարությանը պետական հեղաշրջում կատարելու մեջ՝ Սոցիալ-դեմոկրատական խմբակցության և ՀԺԿ պատգամավորները, հանդես եկան հայտարարությամբ և **ցուցադրաբար հեռացան խորհրդարանի դահլիճից**: Դահլիճում մնացին միայն ՀՅԴ խմբակցությունը և արևմտահայ 12 պատգամավորները²⁵⁶: Այդ օրերին նորընտիր վարչապետ Ալ. Խատիսյանը Ամերիկայից ստացավ նախկին վարչապետ Հ. Քաջազունու ծրագրային բովանդակությամբ նամակը, որտեղ առաջարկվում էր առաջնորդվել զուտ պետական մտածելակերպով²⁵⁷: Ինչպես ՀՅԴ ներսում, այնպես էլ խորհրդարանական խմբակցությունում առկա էր երկու թև. **աջ՝ ազգային և ձախ՝ ընկերավարական հոսանքները**: Եթե ազգային հոսանքը ներկայացնում էին հիմնականում կուսակցության արևմտահայ ներկայացուցիչները, ապա ընկերայինը՝ ռուսահայերը: Արևմտահայ պատգամավորները (Ա. Մաքսապետյան, Մալխաս, Սեպուհ, Հ. Մանուկյան և այլք) մտաւոգ էին միացյալ և անկախ Հայաստանի հզորացման, ինչպես նաև երկիրը հայացնելու հարցերով: Արևելահայ պատգամավորներ Վ. Խորենին, Վ. Նավասարդյանը, Ա. Ջամալյանը, Ս. Թորոսյանը և ուրիշներ ունեին ընդգծված ընկերավարական հակումներ: Հայաստանի քաղաքական կողմնորոշման հարցում ևս ՀՅԴ խորհրդարանական խմբակցության անդամները տարբեր դիրքորոշումներ ունեին: Փարիզի խաղաղության համաժողովում ՀՅԴ խմբակցությունը պաշտպանում էր արևմտյան քաղաքական դիրքորոշումը: Սակայն 1920թ. վերջին քաղաքական իրավիճակը կտրուկ փոփոխվեց: Պատգամավորական խմբակցության զգալի մասը Դրոյի գլխավորությամբ դեկտեմբերի 2-ին, ժամը 12-ին ստորագրեց Երևանի համաձայնագիրը, որով իշխանությունը հանձնվեց Հայհեղկոմին²⁵⁸:

Հետահայաց ընդհանրացնելով Առաջին հանրապետության անկումը՝ կարող ենք եզրակացնել. նախ՝ հանրապետությունը արտաքին և ներքին բազմաբնույթ մարտահրավերներին պատասխանելու ժամանակ ցուցաբերեց

²⁵⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 210

²⁵⁷ Քաջազունի Հ., Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Եր., 1994, էջ 30:

²⁵⁸ Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918 – 1920 թթ.), Եր.: ՀՅԴ հրատ., 2005, 211-212

իրավիճակային մոտեցում²⁵⁹, ապա ռացիոնալ չկողմնորոշվեց և չգնահատեց բոլշևիզմի հաղթանակով տեղի ունեցած գլոբալ փոփոխությունները: Սակայն, մեր կարծիքով, Առաջին հանրապետության գործունեության գնահատման չափանիշ պետք է համարել ոչ թե ինստիտուցիոնալ համակարգի իրավական անկատարությունը, տնտեսական ու սոցիալական ծրագրերի չհիմնավորվածությունը, այլ **անկախ և միացյալ Հայաստանի պետականության գաղափարի պաշտպանությունը: Այս դիտանկյունից՝ Առաջին հանրապետությունը միայն իր գոյությամբ վերականգնեց հայի՝ պետականության վերածնման յոթհարյուրամյա երազանքը:**

3. Առաջին և երրորդ հանրապետությունների համեմատությամբ Հայաստանի Խորհրդային Հանրապետության ինքնիշխանությունը ԽՍՀՄ կազմում ածանցված էր «de facto» և ոչ թե «de jure»: Ըստ էության՝ Երրորդ հանրապետության և նրա ինստիտուցիոնալ համակարգի ծնունդը գերազանցապես հասարակության ներսում պատմականության և որակապես այլ աշխարհաքաղաքական կերպափոխումների ազդեցության ներքո տևական ժամանակահատվածում խմորված գործընթացների և ոչ թե քաղաքական համակարգի գերագույն ինստիտուտի՝ պետության փոխակերպման արդյունք է: Պետության փոխակերպման մասին խոսելը արդարացված կլիներ ԽՍՀՄ կազմից միայն Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի սոցիալիստական պետությունների համար, երբ պետությունը (թող որ սահմանափակ ազատության աստիճանով) իր ինստիտուտներով առկա էր, իսկ Հայաստանի և նախկին Խորհրդային Միության մյուս հանրապետությունների պարագայում քաղաքական համակարգի ինստիտուտները Մոսկվայից էին ածանցված: Հետևաբար Հայաստանի երրորդ հանրապետությունը հայ հանրույթի պատմականության կողմից ուղղորդված, հասարակության կոլեկտիվ «Մենք»-ի և անհատական «Ես»-ի գիտակցականի մակարդակում կարևորված **պատմական գործունեության համակարգի ժառանգականության** խզման հետևանքով կուտակված հիմնախնդիր էր:

Օժտված լինելով ուժեղ պատմական հիշողությամբ, ինչպես նաև լինելով հիերարխիկ կազմակերպված՝ հայ հանրույթի հասարակական ենթահամակարգերը ոչ թե փոխազդեցության հորիզոնական, այլ

²⁵⁹ Վաղարշյան Ա., Հայաստանի առաջին հանրապետության գործադիր իշխանության համակարգը (1918 – 1920 թթ.): Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 32-33:

աստիճանակարգային կապերի մեջ են գտնվում (որ հայեցակարգի շրջանակներում էլ դիտարկելու լինենք): Այսինքն՝ որքան էլ նրանք հարաբերական ինքնուրույնություն ունենան, փոխադարձաբար գտնվում են աստիճանակարգային ենթակայության և գերակայության վիճակում: Միաժամանակ այդ ենթահամակարգերը «հագեցած» են հայ հանրույթի սոցիալ և էթնոմշակութային տեքստով (պատմականությունը այն տարբեր չափումներով տարրալուծում, ներառում է իր ենթահամակարգերի մեջ), որի դերակատարությունը հսկայական է նրանցից յուրաքանչյուրի գործառնության մեջ: Այդ համատեքստում վարքաբանական և անհատապաշտական գործոններն այնքան էլ որոշիչ չեն, որքան, ասենք, բազմաբաղադրյալ ամերիկյան անհամասեռ հասարակության պարագայում (հակառակ դեպքում տեղին կլինեք, օրինակ, օգտագործել Թ. Պարսոնսի հայեցակարգերը²⁶⁰): Իսկ Ա. Թուրենի մշակած ակցիոնալիստական տեսությունը լավագույնս բացատրում է նման զարգացումների արդյունք հանդիսացող ինստիտուցիոնալ համակարգերը:

1980-ական թվականների կեսերից ԽՍՀՄ բարձրագույն դեկավարության կողմից որդեգրված «վերակառուցման» քաղաքականությունը լավագույն պայմաններ ստեղծեց, որ հայոց պատմականությունը և նրա դաշտը մարտահրավեր նետեն նոր ինստիտուցիոնալ համակարգի (ներառյալ նաև պետության) լինելիությանն ու որպիսությանը և ուղղորդեն սոցիալական կազմակերպումը: Քաղաքական գիտակցության մեջ ինքնիշխան պետականության բազմադարյան չգոյության իրողության հետ այլևս չհաշտվելը, այդ իրողության դեմ ընդվզումը, սեփական ինքնիշխան պետականությունը վերականգնելու անհրաժեշտության գիտակցումը ամենաեական տեղաշարժն էր հայոց պատմականության «ճանաչողության կերպի» ենթահամակարգում: Իսկ գերագույն նպատակը՝ անկախ պետականության ստեղծումը, արդեն հասունացել և դարձել էր Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) քաղաքական օրակարգի գերակա խնդիր: Այս դիտանկյունից փաստենք, որ հայ հասարակության համար ընդհանրական մշակութային մոդելը կրեց դերակատարների ճանաչողության կերպում արձանագրված

²⁶⁰ Парсонс Т., Система современных обществ/Пер, с англ. Л. А. Седова и А. Д. Ковалева. Под ред. М. С. Ковалевой. — М.: Аспект Пресс, 1998. с. 270

տեղաշարժի ազդեցությունը և, հանձինս նոր կողմնորոշումների, կանխորոշեց ձևավորվող սոցիալական հարաբերությունների դաշտը, ինչպես նաև ուրվագծեց ազատության, անկախության կողմնակից դասի ու նախկին աջակիցների հարաբերության բնույթը: Ակնհայտ է, որ **մշակութային մոդելը, ընդգրկելով և արտապատկերելով հասարակական հարաբերությունները, բացահայտում է նաև այն գերագույն նպատակներն ու սպասումները, որոնք կարող են համախմբել ամբողջ հասարակությանը:**

Քաղաքական արդիականացումն ապահովող մշակութային մոդելին մնում էր սոսկ կուտակումն ուղղել իր իսկ նախանշած կողմնորոշիչների ձեռքբերմանը: Այդպիսով՝ բոլոր ենթահամակարգերում (**ճանաչողության կերպ, մշակութային մոդել, կուտակում**) էական տեղաշարժ արձանագրած և որակապես նոր անհավասարակշիռ վիճակում հայտնված պատմականությունը ի գործու էր նոր ազդակներով սնուցելու պատմական գործունեության և դասային հարաբերությունների համակարգերը: Վերջիններիս մեծ խզման պարագայում ի հայտ եկած միանգամայն սպասելի (օրինակ՝ սոցիալիստական հետարդյունաբերականացման բնապահպանական հիմնահարցեր) և արտաքուստ անսպասելի, նոր (անկախության ինստիտուցիոնալացումը) սոցիետալ հիմնախնդիրներն էլ, բնական է, պետք է համարժեք սոցիալ-քաղաքական շարժումների դրդապատճառ դառնային: Գորբաչովյան հրապարակայնության միջավայրում «մաքուր» սոցիալական հարցադրումներով հագեցած շարժումը վերաճեց քաղաքականի՝ օրակարգում ներառելով դարաբաղյան հարցը պատմական արդարության վերականգնման հիմքի վրա լուծելու պահանջը...: ԽՍՀՄ քաղաքական համակարգին առաջադրված այս պահանջին գերագույն քաղաքական ղեկավարության կողմից ոչ հավասարաբաշխ վերաբերմունք ցուցաբերելու հետևանքով Հայոց համագգային շարժման օրակարգային խնդիրների կիզակետ դարձավ Հայաստանի անկախության հարցի առաջադրումը: Այստեղ հարկ է նշել, որ հին հանրություններին բնորոշ ուժեղ պատմականության ազդեցության ներքո քաղաքական շարժման օրակարգում ներառվեցին ինչպես պահանջատիրության, այնպես էլ այլ խնդիրներ: Սակայն բախտորոշ էր այն հանգամանքը, որ անկախության վերանվաճման գաղափարը գերակա հռչակվեց, որին աստիճանակարգային (ինքնա)կազմակերպման ենթարկվեցին քաղաքական շարժման մյուս հարցադրումները: Այդպիսով՝ **պետականության ինստիտուցիոնալացման հանրային**

պահանջմունքը գուգամիտվեց քաղաքական գործընթացի օրակարգի բոլոր խնդիրներին:

Չուտ սոցիալականից քաղաքականի վերաճած հայոց համագգային շարժումը դրսևորվեց իր բոլոր հնարավոր ձևերով. **ինտեգրումը** լավագույնս արտահայտվեց ազգային միասնության տեսքով, **մասնակցությունը**՝ քաղաքական համակարգը հիմնավորապես ցնցող հանրահավաքների և ցույցերի, **դիմադրությունը**՝ գործող վարչակարգին և նրա կայացրած որոշումներին քաղաքացիական անհնազանդության, գործադուլների, հացադուլների տեսքով:

Հանրության որդեգրած սոցիալական շարժման այս ձևերին հակադրվում էին **հետապնդումները** ԽՍՀՄ պետական վարչակազմի կողմից («Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալում), ինչն էլ կարևորեց այլախոհի սոցիալական դերակատարումը՝ լիցքավորելով և արագացնելով հասարակության սոցիալ-քաղաքական շարժումները: Նշված շարժումների հետևանքով ավելի հստակ տարանջատվեց նոր դասային հարաբերության սահմանագիծը, որը փոխարինելու էր գալիս նախկին (արդեն իսկ դեկլարատիվ բնույթ կրող պրոլետարիատ-կապիտալիստ բախումնային և վերջինիս հեղափոխական լուծումով) դասային հարաբերությանը. մի բևեռում ազատություն-անկախություն շարժմանն աջակցող սոցիալական դասն էր, մյուս բևեռում՝ շարժմանն ընդդիմացող ԽՍՀՄ-ի նոմենկլատուրան: Չնայած զանգվածային մարզինալ-պոպուլիստական մասնակցությանը, սոցիալական շարժումների տարաբնույթ դրսևորումներին և ստեղծված մթնոլորտում հեղափոխականության տարրերի առկայությանը՝ ձևավորված նոր դասային բախումը, այնուամենայնիվ, չհանգուցալուծվեց հեղափոխության ճանապարհով: Ձևավորված նոր սոցիալական դասի քաղաքական կամքն ու պահանջմունքներն արտահայտող ներկայացուցիչները 1991թ. գործող ԽՍՀՄ-ի ինստիտուցիոնալ կարգի ու արարողակարգերի շրջանակներում պատգամավորական բավարար տեղեր ստացան նախկին քաղաքական համակարգի ներկայացուցչական ինստիտուտի՝ Գերագույն խորհրդի ընտրություններում (կենսագործունեության սոցիալիզմ-կոմունիզմ պրակտիկայի և գաղափարախոսության մերժման հետևանքով Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն այլևս լեգիտիմ և մեծամասնություն կազմող նոր դասի կամքի արտահայտիչ չէր ընկալվում, իսկ Գերագույն խորհուրդը միակ մարմինն էր, որի ձևավորումը, ՀԽՍՀ

սահմանադրական դիզայնի համաձայն, նախատեսված էր ժողովրդավարական սկզբունքներով): Ակնկալվող նոր ինստիտուցիոնալ համակարգի ազդարարումը դարձավ Հայաստանի անկախության հռչակագրի ընդունումը 1991թ. օգոստոսի 23-ին: **Հռչակագիրը՝** որպես **«Հայաստանի ժողովրդի միասնական կամքի»** արտահայտություն, անկախ պետականության հիմքում դնելով միջազգային իրավունքի նորմերն ու սկզբունքները՝ հռչակեց, որ հայոց պետականության կրողը ՀՀ-ի ժողովուրդն է, որն «...իր իշխանությունն իրականացնում է անմիջականորեն և ներկայացուցչական մարմինների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրության և օրենքների հիման վրա»²⁶¹:

Այս համատեքստում որոշակի իմաստ է տրվում Առաջին և Երկրորդ հանրապետությունների օրոք հայ հանրության պրակտիկաներին: Ընդ որում, եթե Առաջին հանրապետության օրոք իր ծավալած պրակտիկայի իմաստավորման ուղղակի անդրադարձն առկա է, ապա Երկրորդի օրոք իմաստավորումն ակնհայտորեն բխում է հոգուտ առաջինի մասին արտահայտվելու հանգամանքից. սա հաստատում է նրանց անուղղակի կատարած հակադրում-համեմատությունը: Այսինքն՝ Երրորդ հանրապետության ծնունդը ոչ միայն հայի ազատատենչ ճանաչողության կերպի, մշտապես ինքնուրույն քաղաքակրթության տեսքով ինքնահաստատմանը զուգամիտող մշակութային մոդելի և այդ ուղղությամբ անհրաժեշտ պաշարներ «ներդնելու» պատմական գիտակցության արդյունք էր, այլև նախորդ՝ երկրորդ հանրապետությանը հակադրվելու արդյունք: Թուրենյան տերմիններով ներկայացնելու դեպքում, փաստորեն, այդ հակադրման պատճառը դարձան հետևյալ երկու գլխավոր կառուցակարգերը.

1. Հայ հասարակության դիրքորոշումը Առաջին հանրապետության, ապա՝ ԽՍՀՄ օրոք իր իսկ գոյության նկատմամբ: Այս պայմաններում ձևավորվում է «լարված դիստանցավորում մարդկանց կոնկրետ գործունեության (աշխատանք) և պատմականության (նրանց աշխատանքին տրված իմաստը) միջև.... Մարդիկ սկսում են իրականացնել աշխատանք աշխատանքի վրա»²⁶²: Ինչպես բխում է Հռչակագրից, պրակտիկաների իմաստավորման

²⁶¹ Հայաստանի Հանրապետության Անկախության հռչակագիր,
<http://www.gov.am/am/independence/>

²⁶² Турен Ален. Возвращение человека действующего. Очерк социологии. Перевод с французского. М. Научный мир 1998. с.199-200.

արդյունքում այդ դիրքորոշված լարվածությունը նվազել էր առաջինի և աճել երկրորդի նկատմամբ և, միննույն ժամանակ, առկա էր Երկրորդ հանրապետության պրակտիկային զուգահեռ: Ընդունած դիրքավորումը նշանակում էր անցյալի և ներկայի ընդգծված, կարելի է ասել՝ կոշտ տարանջատում, որը պայմանավորված էր նրանով, թե ինչպես է կատարվել այդ տարանջատումը, արդյոք համարժեք ինստիտուցիոնալ ամրագրում կստանան ապագան ու ապագայի մշակույթը: Ողջ պատմականության (առանց առաջին, երկրորդ և երրորդ հանրապետությունների շրջանները տարանջատելու) իմաստավորումը Հռչակագրում ամրագրված է «Գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջև համայն հայության իղձերի իրականացման և պատմական արդարության վերականգնման գործում» ձևակերպման մեջ: Այսինքն՝ այդ ձևակերպումն առաջին հերթին ենթադրում էր գերագույն քաղաքական ինստիտուտի՝ պետության կայացում: Թեպետ բնական է ենթադրել, որ «պատմական արդարության վերականգնում» խիստ ընդհանուր արտահայտության մեջ արտացոլված են նաև Արևմտյան Հայաստանի կորստի, 1915թվականի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, ինչպես նաև 1920թ. Հայաստանի բռնի խորհրդայնացման և այլ ցավոտ հիմնախնդիրների լուծման ենթատեքստերը: Առավել ևս, երբ այդ համատեքստում հիշատակվում է արդեն իսկ մոտ անցյալի՝ «1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ» որոշումները: Եվ ամենևին էլ պատահական չէ նշված ենթատեքստերի առկայությունը Հայաստանի երրորդ հանրապետության առաջին քաղաքական տեքստում՝ Անկախության հռչակագրում:

2. 1980-ական թվականների կեսերից գործաչովյան «վերակառուցման» քաղաքականությունը նպաստավոր պայմաններ ստեղծեց հայոց ինքնիշխան պետականության դարավոր կորստի վերականգնմանն ուղղված ինքնակազմակերպման համար: Սակայն կարծում ենք, որ անկախացման անհրաժեշտության գիտակցումն առկա է եղել նաև դրան նախորդող ժամանակահատվածում, անկախ նրանից, թե որ մակարդակում և գիտակցության որ շերտում է ակտիվ եղել կամ թեկուզ դրսևորվել բարդույթի տեսքով: Գործաչովյան «պերեստրոյկայի» միջավայրում զուտ սոցիալական հարցադրումներով (արդյունաբերական քաղաքներում պոտենցիալ

մարդասիրական և առկա բնապահպանական աղետների կանխում հայկական ԱԷԿ-ում, լեռնամետալուրգիական քաղաքներում և այլուր) շարժումը վերաճեց քաղաքականի՝ օրակարգում ներառելով դարաքաղյան հարցը պատմական արդարության վերականգնման հիմքի վրա լուծելու պահանջը՝ ուղղված ԽՍՀՄ և ՀԽՍՀ ղեկավարությանը: ԽՍՀՄ քաղաքական համակարգին առաջադրված այս պահանջին գերագույն քաղաքական ղեկավարության կողմից ցուցաբերված ոչ հավասարաբեռն վերաբերմունքի հետևանքով Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) օրակարգային խնդիրների կիզակետ դարձավ Հայաստանի անկախության հարցի առաջադրումը: Այստեղ հարկ է նշել, որ ավանդապահ հանրություններին բնորոշ ուժեղ պատմականության ազդեցության ներքո քաղաքական շարժման օրակարգում ներառվեցին ինչպես պահանջատիրության, այնպես էլ այլ խնդիրներ: Մակայն որոշիչ էր այն հանգամանքը, որ անկախության վերանվաճման գաղափարը գերիշխող, գերակա հռչակվեց, որին աստիճանակարգային (ինքնա)կազմակերպման ենթարկվեցին քաղաքական շարժման մյուս հարցադրումները: Այդպիսով՝ հայոց պետականության ինքնիշխանության վերականգնման հանրային պահանջումնքը զուգամիտվեց քաղաքական զարգացման գործընթացի օրակարգի բոլոր խնդիրների հետ: Հենց այս շրջանակներում հնարավորություն ենք ստանում շարժման մեջ դիտարկելու ՀՀ ինքնիշխանության **հաստատման, զարգացման, պատվիրակման և խաղաղկման** բազմամակարդակ գործընթացը.

1. 1988-1990 թթ. - ինքնիշխանության վերածննդին ուղղված Ազգային ժողովրդավարական շարժումը, որն իրավական ամրագրում ստացավ ԽՍՀՄ-ից դուրս գալու համազգային հանրաքվեի միջոցով:

2. 1991-1994 թթ. - ՀՀ անկախության հռչակումից մինչև պետական կառույցների հիմնադրում՝ ժողովրդավարական անցման պայմաններից բխող հետևանքներով:

3. 1995-1996 թթ. - ընդդիմության դեմ ճնշումներից և խորհրդարանական ընտրություններից մինչև ՀՀ նախագահի երկրորդ ընտրությունը, որի ընթացքում ժողովրդի և իշխանությունների միջև տեղի ունեցած զանգվածային ընդհարումները հանգեցրին ինքնության (ինքնիշխանության) ճգնաժամի:

4. 1996-1998 թթ. - ընտրություններից հետո լեգիտիմության սուր ճգնաժամը ՀՀ իշխանությունների, քաղաքացու և հասարակության միջև

առաջացրեց լիակատար օտարում, որը, խորացնելով աղքատությունը, կոռուպցիան ու արտագաղթը, հանգեցրեց ինչպես քաղաքական զարգացման ճգնաժամերի համակարգված դրսևորման, այնպես էլ հանրային շահի գերակայության անտեսման :

5. 1998-2008 թթ. - ՀՀ առաջին նախագահի հրաժարականը, ՀՀ երկրորդ նախագահի ավտորիտար կառավարումը, անձի, հասարակության և պետության փոխհարաբերություններում օտարումն ավելի խորացավ՝ պայմանավորված 2008թ. փետրվարի 19-ին ՀՀ նախագահական ընտրություններին հաջորդած մարտի 1-ի ողբերգական դեպքերով: Կարծում ենք, որ հենց մարտյան դեպքերը խորացրին քաղաքական զարգացման ճգնաժամերը ՀՀ-ում:

6. 2008թ. - մինչ այժմ - համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, ինչպես նաև Հարավային Կովկասում ուժերի վերադասավորումը ցույց տվեցին, որ պետության ինքնիշխանության սոցիալական, քաղաքակրթական, աշխարհաքաղաքական սահմաններն ավելի պաշտպանված են, եթե ինստիտուցիոնալացված են հասարակության, ազգի և անհատի ինքնիշխանության սահմանները:

7. 2018 թվականի մարտից հասարակության զանգվածային մասնակցությամբ տեղի ունեցավ «Ժավշյա հեղափոխություն», որը նպատակ ունի համակարգային և շարունակական փոփոխության միջոցով հաղթահարելու քաղաքական զարգացման ճգնաժամերը ՀՀ-ում:

Հանրագումարենք. 20-րդ դարի տարբեր պատմական ժամանակաշրջանների նկատմամբ գրաված դիրքի շնորհիվ հանրային քաղաքական գիտակցության մեջ իմաստավորված անցյալ(ներ)ը ազդել և ազդում են քաղաքական արդիականացման ինստիտուցիոնալացման գործընթացների վրա: Այս գործընթացին զուգահեռ առկա է նաև պատմականության ոչ խորքային ընկալումներ՝ պայմանավորված աշխարհաքաղաքական հատվածային պատկերացումներով, անձնական և հանրային շահի ակնհայտ դիվերգենցիան քողարկելու միջանկյալ լուծումներով: Եվ դա այն պարագայում, երբ ինքնիշխանության հռչակումից հետո տրամաբանական կլիներ սոցիալական պրակտիկայի քաղաքական արդիականացման շրջանակներում իմաստավորել քաղաքական դիսկուրսը՝ պայմանավորված առկա մարտահրավերներով: Քաղաքական արդիականացման դերակատարները դեռևս փոխհամաձայնության չեն եկել 20-րդ դարի

պատմականության հարցում: Իսկ դա կարևոր է, քանի որ դրանով է թելադրված պետության և նրա գործառույթների որպիսությունը, ամրագրվող ինստիտուցիոնալ կարգը և դրա շրջանակներում իրականացվող (այդ թվում՝ պետական) կառավարումը:

Այս համատեքստում ՀՀ-ում իրականացվող բարեփոխումների նկատմամբ տարբեր նորարարական ընտրախավերի վերաբերմունքը փաստորեն ձևավորվեց ոչ այնքան իրականացվող բարեփոխումների տեմպի, ձևերի, արդյունավետության, որքան պատմականության ու նրա դաշտի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հիմքի վրա: Նշվածի հիման վրա հստակ տարանջատված **ավանդականներն ու ազատականները** պատմականության արժեքային համակարգերի նկատմամբ իրենց դիրքորոշումների շրջանակում հիմնականում խաղարկում էին այն: Այդ էական հանգամանքն էլ ողջ քաղաքական արդիականացման գործընթացում պարբերաբար մեծացնում է ամրագրված ինստիտուցիոնալ կարգից դուրս, ոչ ինստիտուցիոնալ կառուցակարգերով ընթացող փոխազդեցությունների չափաբաժինը: Իսկ իշխող քաղաքական ուժի և նրա առաջնորդի կողմից այդ հանգամանքի նկատմամբ որդեգրած դիրքորոշումը, այդ գործընթացներին մասնակցության, միջամտության բնույթն էլ դեռևս զգալի կերպով շարունակում են ազդել նրա կողմից իրականացվող քաղաքական կառավարման, պետություն-հասարակություն փոխազդեցության վրա: Այսպիսով, **ի տարբերություն Հայաստանի նախորդ երկու հանրապետությունների, Երրորդ հանրապետության ինստիտուցիոնալ համակարգի կենտրոնական ինստիտուտի՝ պետության ձևավորման օբյեկտիվ և սուբյեկտիվ իրողությունները տարբեր են. Երրորդ հանրապետության ինստիտուցիոնալ համակարգը թելադրած է պատմականության (ճանաչողության կերպ, կուտակում, մշակութային մոդել) և նրա դաշտի տեղակայումներից (պատմական գործունեության, դասային հարաբերությունների և սոցիալական շարժումների համակարգեր):** Այս համատեքստում ազատական բարեփոխումների և պատմականության իմաստավորման նկատմամբ ունեցած տարաբնույթ վերաբերմունքի շրջանակներում ծավալված քաղաքական դիսկուրսը պարբերաբար տրոհում է սոցիալ-քաղաքական տարածությունը: Սակայն նկատի պետք է ունենալ, որ այդ տրոհվածությունը քաղաքական արդիականացման առանձնահատկությունն է, և կառավարող վերնախավն իր ծրագրում պարտավոր է ներառել

պատմականության դաշտին այս կամ այն չափով ենթակա և նրա կողմից ազդվող հանրային հիմնախնդիրների լուծումը: Այդ մոտեցումներով ձևավորված քաղաքական արդիականացումը խիստ խճանկարային է, իսկ կառավարող էլիտայի և կոնսերվատիվների փոխազդեցության համակարգի երկու բևեռներն էլ ենթակա են շարունակական տրոհման, միավորման և ցրման: Այս գործընթացում պատմականության վերծանումը և վերարժևորումը կարևորագույն նախապայման են պետություն-հասարակություն-անձ եռամիասնության բնականոն կերպավիժիման շարունակականության և կենսունակության ապահովման համար:

**ԳԻՐՔ 4. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**4.1. ՀՀ քաղաքական էլիտայի արժեքային կոդմնորոշիչները
ժողովրդավարացման գործընթացում**

Քաղաքական էլիտան բնակչության փոքրաթիվ և ինտելեկտուալ մասն է՝ իր բարձր պատասխանատվության, մասնագիտական գործունեության բնույթի և առանձնահատուկ անձնային արժանիքներով օժտված լինելու շնորհիվ: Ըստ էության՝ քաղաքական էլիտան իր քաղաքական և քաղաքակրթական հատկանիշներով ամբարում է իշխանության իրականացման մշակութային արժեքները, նորմերը, կարծրատիպերը, նախապաշարմունքներն ու ավանդույթները: Քաղաքական էլիտայի կարևորագույն բնորոշիչներից է հանրային և պետական շահի գերակայության ռազմավարական գիտակցումը և դրա տիրույթում վարքաբանության սահմանակարգումը, որն էլ թույլ է տալիս տարանջատել քաղաքական էլիտային քաղաքական վերնախավից: Ուստի ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացման ներկայիս փուլի քաղաքական էլիտայի իշխանության իրականացման մշակույթին բնորոշ է այնպիսի բազմաշերտություն, որի արժեքային առանցքը ենթադրում է **իմաստանշանային արժեքների ու դիրքորոշումների ամբողջություն**: Ակնհայտ է, որ որոշիչը քաղաքական էլիտայի դերային պատկերացումների համակարգն ամրացնող կարևորագույն սկզբունքներից է. Հոբսի կողմից ձևակերպված «Լեկիոթանային բնագոյն է», որն իր ներագդեցության ուժով իմաստավորում է էլիտայի ոչ միայն մասնագիտական գործունեության, այլև վարքագծի արժեքային կոդմնորոշիչները: Դա իշխանությունն է և նրա իրականացման մշակույթը: Ակնհայտ է, որ կարելի է հարստանալ՝ իրավիճակից օգտվելով, բայց գրեթե անհնար է ու վտանգավոր պետությունը, հասարակությունը և մարդկանց կառավարել միայն հարկադրանքի և մանիպուլյացիայի ուժով: Ուստի **homo politicus**-ի համար ձգտումն առ իշխանություն և՛ կյանքի իմաստ է, և՛ գայթակղեցնող կիրք, որը, կերպափոխելով նրա արժեքային կոդմնորոշիչները, վերջին հաշվով դառնում է էլիտայի քաղաքական վարքագծի արտահայտիչ:

Ըստ մշակութաբան Կ. Գիրցի՝ թեև անցումային հասարակություններում տեղի է ունենում աշխարհի գեղարվեստական պատկերի և քաղաքական

հերմենևտիկայի փյուզում, սակայն մշակութային կողմնորոշիչների կենտրոնացումը դեպի իշխանության արժեքները կարող է նաև չհանգեցնել քաղաքական էլիտայի կառավարչական գործունեության շեղման, քանի որ «իշխել նշանակում է չոգևորվելով միանալ և բաժանվել, փոխել կարգավիճակը և ձևը, կարողանալ մեռնելով վերածնվել»²⁶³:

Իսկապես, անցումային հասարակությունների իշխանական հարաբերություններում ամենուրեք հանդիպում ենք իրավիճակի, երբ իշխանության ձգտող կառավարող շերտերն իրենց մասնագիտական և հոգեբանական ուղղվածությամբ մշակում են գործունեության այնպիսի ծրագրեր, որոնք էականորեն սահմանափակում են հանրային պահանջմունքներն ու տրամադրությունները: Ավելին, գծային ազատականացման հետևանքով հաստատված սոցիալական բևեռվածությունն ուղեկցվում է սոցիալական օտարվածությամբ և վերևների խմբային շահերի համախմբմամբ: Այդ առումով ուշագրավ է Ռ. Բուդոնի արդարացի դիտարկումն այն մասին, որ եթե «էլիտան ռեսուրսների ավելցուկի է տիրապետում», ապա նա «հակված է վատնելու դա սպառման, այլ ոչ թե ներդրման նպատակով»²⁶⁴, բնականաբար, սեփական շահերից ելնելով: Ընդ որում, այս հիմքի վրա ձևավորված քաղաքական էլիտայի եսապաշտությունն այսօր անցումային հասարակությունների խառնածին ռեժիմի կենսունակությամբ պայմանավորված լրացուցիչ ներուժ է ստանում՝ հիմնվելով մարզինալ իրավիճակների և սոցիալապես օտարված խմբերի վրա:

Այս հանգամանքներում «հանուն իշխանության» մղվող քաղաքական ուժերի հեղափոխական-պոպուլիստական պայքարը և հասարակական կարծիքի ակնհայտ խաղարկումը մարզինալացնում են պետական կառավարում՝ խրախուսելով ապակառուցողական սոցիալական գործընթացները և նվազեցնելով հասարակության հետ համաձայնեցված իշխանության կառուցակարգերի կիրառման հնարավորությունները: Ուշագրավ է Պ. Նորիսի և Ռ. Ինգելհարթի այն պնդումը, որ պոպուլիզմը, խորացնելով հանրային հիասթափությունը ժողովրդավարական այնպիսի ինստիտուտների նկատմամբ, ինչպիսիք են ընտրությունները, ԶԼՄ-ները և

²⁶³ **Гирц К.**, Интерпретация культур / Пер. с англ. - М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2004, с. 120.

²⁶⁴ **Будон Раймон**, Место беспорядка. Критика теорий социального изменения М.: Аспект Пресс, 1998, с.99.

դատարանները, կարող է պետության վրա ունենալ ապակայունացնող ազդեցություն, որն էլ ինքնաբերաբար բարձրացնում է սոցիալական անհանդուրժողականությունը: Իսկ հանրային թերահավատությունը ժողովրդավարության նկատմամբ կարող է վերաճել ցինիզմի²⁶⁵: Միննույն ժամանակ Պ. Նորիսը և Ռ. Ինգելհարթը, ուսումնասիրելով պոպուլիզմը արևմտյան ժողովրդավարությունների շրջանակներում, փաստում են, որ քաղաքական համակարգի նկատմամբ վստահության երկարաժամկետ նվազման պարագայում ավտորիտար պոպուլիստ առաջնորդների կամ կուսակցությունների ընտրությունը ավելի շուտ հետևանք է (կամ իրականության գնահատման ախտանիշ), քան հիմնային պատճառ²⁶⁶:

Սակայն քաղաքական էլիտայի և հանրային շահերի աններդաշնակությունը ոչ միայն վերնների՝ իշխանության հանդեպ ունեցած հատուկ կողմնորոշման, այլև հասարակության քաղաքական ինքնության բացակայության հետևանք է: Վերջապես, ինչպես ցույց է տալիս քաղաքական արդիականացման «վազոդ» երկրների փորձը, այդ կողմնորոշումը կարող է էականորեն կերպափոխվել, օրինակ, տարաբնույթ ճգնաժամերի կամ էլ էլիտայի հավաքագրման կառուցակարգերի նկատմամբ վերահսկողության փոփոխման պայմաններում: Այդպիսի քաղաքակրթական կողմնորոշման հետևանք է քաղաքական էլիտայի վերին շերտերում ձևավորված վերաբերմունքը **քաղաքականության, բարոյականության և իրավունքի նկատմամբ՝** որպես սոցիալական հիմնական կարգավորիչների նվաճած սեփական դիրքերը պահելու **մասնակի և անբավարար** միջոցների: Այլ կերպ ասած՝ իրավունքը քաղաքական էլիտայի գիտակցության մեջ ոչ միայն զրկվում է իր արժեքային նշանակությունից, այլև, դիտարկվելով նրանց իշխանական դիրքն ամրապնդող կառուցակարգերի հետ կապից դուրս, ընդհանրապես կորցնում է իր սոցիալական գերակայությունը և՛ պետական կառավարման բնագավառում, և՛ մասնավոր կյանքում: Ավելին, տարանջատված չլինելու պատճառով իրավական արժեքները հավասարեցվում են իշխանական հարաբերությունների հզոր կարգավորչի՝ քաղաքականության հետ: Գործնական տեսանկյունից դա բացատրելի է. զարգացած ժողովրդավարական երկրներում, որտեղ գերակշռում

²⁶⁵ Pippa Norris and Ronald Inglehart – Cultural backlash: Trump, Brexit and the rise of authoritarian –populism. New York, NY : Cambridge University Press, 2018. p. 420

²⁶⁶ Նույն տեղում՝ էջ 421:

են իշխման պայմանագրային (կոնվենցիոնալ) ձևերը, կարգավորման քաղաքական միջոցները և՛ լեգիտիմ են, և՛ լեգալ:

Քաղաքականությունը և իրավունքը՝ իբրև իշխանական հարաբերությունների կարգավորիչներ: Քաղաքականությունը ծագումնաբանորեն կողմնորոշված է դեպի իշխանական հարաբերությունների արդիականացում: Որպես այդպիսին՝ այն ոչ մի դեպքում չի կարող անտեսել **խմբային շահերը**, եթե նույնիսկ համապետական մակարդակում փորձի համադրել դրանք հանրային շահերի հետ: Այս հատկանիշի անտեսումը քաղաքականությանը զրկում է սոցիալական (ազգային, տարածքային, կոլեկտիվ) խմբերի շահերը բացահայտելու և համաձայնեցնելու իր հիմնական գործառույթից: Այդ պատճառով պետությունը՝ որպես քաղաքական համակարգի գերակա ինստիտուտ, այլ ոչ թե մակրոտնտեսական կարգավորման կամ վարչարարության գործիք, առաջին հերթին շահագրգռված է հասարակության մեջ իշխանական հարաբերությունները վերահսկող և գործող վարչակարգի դիրքերի ամրապնդմամբ: Տնտեսական, սոցիալական, բնապահպանական և այլ հիմնախնդիրների լուծման նշանակությունն անհրաժեշտ է դիտարկել այդ առաջնայնության վրա ազդեցության տեսանկյունից: Տվյալ խնդրի լուծման նպատակով պետությունը հանրային պահանջմունքի գնահատումն ու ախտորոշումը իրականացնում է փոխհամաձայնեցված խմբային շահի տիրույթներում: Դրա հետևանքով հանուն գերիշխող խմբի իշխանության պահպանման գործընթացը, բնականոն կերպով դուրս գալով երկրի օրենքների և նույնիսկ Սահմանադրության շրջանակներից, մանիպուլացնում և մարգինալացնում է հասարակական գիտակցությունը:

Այս առումով փաստենք, որ քաղաքականությունը՝ որպես իշխանության արդիականացման միջոց, հիմնականում պայմանավորված է դերակատարների կողմից կանխավ հաշվարկված օրենսդրական իրավասությունների որոշակի **գերազանցմամբ**: Քաղաքականության այդ հատկանիշը պայմանավորվում ու ամրապնդվում է հասարակության առանձին խմբերի առջև էլիտայի որոշակի **բարոյական** պատասխանատվությամբ, որը հաճախ, գերազանցելով նրանց **ծառայողական և գործառական** հնարավորությունները, իշխանության համար օգտապաշտական (ուտիլիտար) հենք է ստեղծում: Այդ պատճառով էլ քաղաքականությանը բնորոշ է կառավարող խմբավորումների կողմից որոշումները համաձայնեցնելու և ընդունելու տարատեսակ կիսա-

սովերային ու ստվերային եղանակներ, որոնք հիմնվում են որոշակի միավորումների ոչ պաշտոնական աջակցության վրա և արդյունավետ կերպով նպաստում են ծրագրված նպատակների իրականացմանը:

Ակնհայտ է, որ քաղաքականության և իրավունքի հարաբերակցությունը հասկանալու համար որոշիչ է հետևյալ գաղափարը. էլիտան իշխանության վերաբաշխման տեսանկյունից քաղաքական մեթոդներով կարող է (նաև պետք է) իրատեսորեն վերահսկել ոչ թե ողջ սոցիալական տարածությունը, այլ իշխանության իրականացմանը մասնակից ուժերի հարաբերակցության փոփոխման վրա ազդող առավել վիճահարույց խնդիրներն ու բախումները:

Այսպիսով՝ քաղաքականության մեջ **տարբեր գաղափարախոսական և նպատակաբանական դիրքորոշումների գնահատման չափանիշների հիմքում գուգամիտված գոյակցում են** իշխանության նկատմամբ որոշակի խմբերի հավակնություններն արդարացնող հանրային հիմնախնդիրներ: Այդ պատճառով քաղաքական տարածության մեջ առկա են իշխանական փոխգործակցության բազում տրամաբանություններ, որոնք իշխանության համար մղվող պայքարի հետ համատեղ ենթադրում են նաև մասնակի շահերի արտահայտման **նպատակային, բարոյական և նորմատիվ** համակարգերի բախում: Մինչև նույն ժամանակ մրցակցության պատճառով տարաբնույթ դերակատարների միջև պետական իշխանության կարգավորման քաղաքական միջոցների կիրառումը դառնում է անհավասարաչափ: Իր հերթին իրավական կարգավորման համակարգը նույնպես օժտված է առանձնահատուկ կառուցվածքային և ընթացակարգային հատկանիշներով: Ի տարբերություն քաղաքականության՝ այն ի սկզբանե ուղղված է ողջ սոցիալական համակարգի կարգավորմանը՝ առանց որևիցե խմբային նախապատվություն առանձնացնելու: Իրավունքի բարոյական սկզբունքը բոլորի հավասարությունն է օրենքի առջև: Իրավական կարգավորմանը սկզբունքորեն հակացուցված է պետական իշխանության գործընթացի կարգավորման որևէ ստվերային ձև: Այնպես որ կիրառվող կարգավորման միջոցների հրապարակայնությունը, բացությունը, թափանցիկությունը (ընդ որում, ընթացակարգային և տեխնոլոգիական առումով ամրագրված) իշխանության իրավական դաշտի իրատեսական մատչելիությունն են ապահովում: Այդ պատճառով պետությունը՝ իբրև կարգավորման ու վերահսկման իրավական ինստիտուտ, համապատասխանաբար, այս հարաբերություններում պատասխանատվության միասնական տեսակ է ձևավորում ինչպես ընտրյալ, այնպես էլ հանրային շրջանակների համար: Ընդ որում,

այդ կարգը պահպանվում է հատուկ մարմինների օգնությամբ (օրինակ՝ Սահմանադրական դատարանի), որոնց պարտականությունն է վերացնել բախումնային իրավիճակի մեկնաբանման բոլոր երկխմաստությունները, այլաբանությունները, ենթատեքստերը՝ դրանով իսկ ապահովելով իրավական նորմերի և պատժամիջոցների լիարժեք ու միանշանակ կիրառում: Այսպիսով՝ քաղաքականությունը և իրավունքը, առաջնորդվելով պետական իշխանության իրականացման **տարբեր** սկզբունքներով ու տեխնոլոգիաներով, **տարբեր** ձևերով են կազմակերպում ու կարգավորում սոցիալական կարգը: **Քաղաքականությունը բացահայտում ու ամրապնդում է հասարակական զարգացման առաջնահերթությունները, իսկ իրավունքը սահմանադրում է՝ դրանց հաղորդելով համընդհանուր և իրավական տեսք:** Այդ պատճառով իրավունքն արտահայտում է իշխանական հարաբերությունների լեգիտիմացման սահմանային շեմը:

Քաղաքականության և իրավունքի կարգավորիչ հնարավորությունների այդպիսի զուգամիտումը հնարավորություն է տալիս իշխանությանը ազատվելու ներքին հակասություններից՝ կողմնորոշվելով դեպի հանրային համակեցություն: Այս ամենը հանրային համակարգը գերծ է պահում ոչ միայն քաղաքական խաղի դաժան ծայրահեղություններից, այլև կառավարման կարգի հախուռն վերանայումից: Սակայն իշխանության իրականացման ցածր մշակույթի պատճառով ՀՀ-ում օրենսդրական կարգավորման կառուցակարգն այդպես էլ չկարողացավ ապահովել ո՛չ էլիտաների միջև համաձայնության (պակտի) կնքումը, ո՛չ էլ քաղաքական շուկայի բնականոն արդիականացումը կառավարող էլիտայի և կոնտրէլիտայի երկխոսության միջոցով: Ըստ որում, հասարակության մեջ շարունակեց մնալ օրենքի համար անձեռնմխելի մարդկանց մի խավ, ինչը կտրուկ նվազեցնում է հասարակության լայն շրջանում ժողովրդավարական վարչակարգի հեղինակությունը: Հասարակության առջև պետության պատասխանատվության զգալի հատվածներ այդպես էլ իրավական ձևակերպում չեն ստացել: Մասնավորապես՝ օրենսդրորեն հստակեցված չեն գործադիր իշխանության ինստիտուտների ռազմավարական գործառնություններն ու լիազորությունները, ինչը զարգացնում է վարչաքաղաքական ոլորտում նախարարությունների և գերատեսչությունների բյուրոկրատացումը: Կանոնակարգված չեն որոշումների ընդունման բնագա-

վառում ճնշման և շահային խմբերի գործունեության իրավական սահմանները: **Դա էլ չի նպաստում ՀՀ-ում պոլիարխիկ էլիտայի, հատկապես ռազմավարական էլիտայի կայացմանը և արդյունավետ գործառնանք:**

Այսպիսով՝ ՀՀ-ում իշխանական հարաբերությունները գտնվում էին **ֆորմալ** իրավակիրառման մակարդակում, որտեղ գերակայում են պետության ինստիտուտների գործողության հանրային, իրավական ոլորտի հիմքերը քայքայող քաղաքական հակամարտության և մասնավոր իրավունքի սկզբունքները: Իսկ քաղաքական էլիտայի իրականացրած իշխանության որակը վկայում էր նրա գիտակցության կառուցվածքում իրավական արժեքների **երկրորդական** նշանակության մասին: Միաժամանակ, հայ քաղաքական էլիտայի բոլոր խմբերը, դրսևորելով նվազ պատասխանատվություն, սեփական նյութական և հոգևոր ինքնաբավության արդարացմանը համահունչ, ձեռք են բերել լիակատար **ինքնավարություն:**

Ժողովրդավարական անցման գործընթացում ՀՀ քաղաքական էլիտան չկարողացավ հաղթահարել **մեկուսախմբային** գիտակցության կողմնորոշումները, որոնք իշխանական ոլորտում նրանց մասնագիտական գործունեությունը հանգեցրին զուտ մասնավոր շահերի իրականացմանը առավելապես քաղաքական եղանակներով: Այնպես որ քաղաքական և իրավական կարգավորման չափանիշների հստակեցված չլինելը **գործառական** առումով քաղաքական էլիտայի՝ իբրև պետության, հասարակության և իր ներկայացրած սոցիալական խմբի շահերի արտահայտչի ցածր քաղաքակրթվածության հետևանք է: Միաժամանակ իրավունքի գերակայության անտեսումը քաղաքական վերնախավի **մարգինալության** վկայություն է: Այս ամենն էլ հաշվի առնելով՝ կարող ենք պնդել, որ անցումային հասարակություններում գործունենք իրավունքի՝ որպես իշխանության դաշտի կարգավորչի նկատմամբ ոչ թե **արժեքային**, այլ **ֆորմալ-տեսական** շահագրգռվածության հետ: Իսկ դա նշանակում է, որ ՀՀ քաղաքական վերնախավի ձգտումը դեպի սահմանադրականությունը **դիմակավորված էր**՝ որպես սոցիոմշակութային երևույթ, այսինքն՝ արդիականացման գործընթացին բնորոշ խաղային բնույթի հիմքում դրված էր փորձի և սխալի, և ոչ թե գիտավերլուծական կառավարման հարացույցը: Ահա թե ինչու և՛ իշխանական, և՛ ընդդիմադիր էլիտաներին հաջողվեց մանիպուլացնել հանրային գիտակցությունը՝ հմտորեն քողարկելով իրենց հակվածությունը **«Հաղթողը ստանում է ամեն ինչ»** սցենարին:

Ժողովրդավարական անցման գործընթացում քաղաքական էլիտան իրավունքի նկատմամբ իր ունեցած ընտրողական վերաբերմունքով միայնակ չէ, քանի որ վերնների ու ներքևների միջև ապշեցուցիչ հոգևոր համախմբվածություն է դիտվում: Ինչպես հայտնի է, պատմականորեն հայ իրականության մեջ լուրջ նշանակություն չի տրվել **իրավունքի կողմնակցված նորմերին**: Այնպես որ հիմնարար արժեքաիրավական կողմնորոշիչների անլիարժեքությունը ոչ միայն կառավարող էլիտայի (հատկապես բյուրոկրատիայի) իրավիճակային գործառության, այլև խոր ավանդույթների հետևանք է: Վերջիններիս ազդեցությունը է՝ լավելի զգալի է դառնում այն առումով, որ իրավունքի արժեքի հանրային ընկալման թույլ մակարդակը պայմանավորված է «վազող/հասնող» արդիականացման գործընթացում գտնվող ՀՀ իշխանական հարաբերությունների կառուցվածքում պատասխանատվության երկակի չափանիշների (վարչական, կուսակցական և հանրային, ընկերական) ամրապնդմամբ: Դրա հետևանքով կառավարիչներն ընտելացել են ինչպես ողջ հասարակության, այնպես էլ իրենց ղեկավարության հանդեպ որևէ իրական պատասխանատվությունից խուսափելուն: Նման դիրքորոշմանը նպաստում է նաև ՀՀ քաղաքական իրականության մեջ առկա կառավարման **«բյուզանդական ոճը»**, որին առավելագույնս բնորոշ են որոշումների ընդունման, կադրերի ընտրության, ռեսուրսների բաշխման ստվերային և կիսաստվերային եղանակները:

Մակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ոչ միայն կառավարող էլիտայի, այլև գրեթե բոլոր քաղաքական դերակատարների պատասխանատվության մշտական պակասը հայ քաղաքական դաշտի բնորոշ գծերից է: Մինչդեռ, ինչպես վկայում է Պ. Սորոկինը, իշխանական հարաբերություններում պայմանագրային իրավունքի ձևավորման գործընթացով է պայմանավորված արդիականացման քաղաքակրթական չափումը ռազմավարական կառավարման ապահովման հիմքի առանձնահատկություն դիտարկելը: Ներառելով պատժի և խրախուսանքի կառուցակարգեր՝ պայմանագրային իրավունքը հնարավորություն է տալիս որոշելու, թե **«ով է արդար, ով՝ մեղավոր»**: Ավանդական հասարակություններում պայմանագրա-

յին հարաբերությունները մշտապես հակադրվում են «օրգանական» սոցիալական կապերին, «որոնցում չպետք է լինի ձևական, իրավաբանական ոչինչ, և որոնց ոչ մի իրավական երաշխիք պետք չէ»²⁶⁷:

Պետք է հաշվի առնել, որ համակրանքի, ընկերության, բայց ոչ բանականության վրա հիմնված իրավական նորմերի նկատմամբ կամայականությունը «վազող/հասնող» արդիականացման գործընթացում գտնվող ՀՀ-ում գրեթե ինստիտուցիոնալացրել է **հովանավորչական** իշխանությունը: Վերջինս «....-հովանավորում է հպատակներին՝ նրանց հավատարմության և հնազանդության փոխարեն հավատարմության անձնական կապերով միավորելով մարդկանց: Այս իշխանությունը պատերնալիստական գերիշխման ու հնազանդեցման տարատեսակ է, քանի որ ֆորմալ առումով սահմանափակված չէ հպատակների իրավունքներով և նրանց առջև պարտավորություններով»²⁶⁸: Այդ իսկ պատճառով ՀՀ ժողովրդավարական անցման գործընթացի մեկնարկից հետո քաղաքական վերնախավը օրենքներ է հաստատել առանց քաղաքացիների կարծիքը հաշվի առնելու՝ նրանց հնարավորություն տալով կա՛մ ապրելու՝ «անմնացորդ սիրելով հարազատ կառավարությանը», կա՛մ էլ ամեն կերպ հարմարվելու վերնից թելադրվող՝ հասարակության և պետության գոյակցման կանոններին: Եվ ստացվում է, որ մի կողմից քաղաքացիներն օտարվում են պետությունից՝ չապավինելով նրա ինստիտուտների պաշտպանությանը, իսկ մյուս կողմից առանց երկմտանքի թալանում և խաբում են իրենց **«հովանավորին»**: Այս երկդեմ բարոյագրկված վիճակն էլ լուրջ հիմքեր ստեղծեց «թավշյա հեղափոխության» համար:

Կառավարող էլիտայի կերպափոխումը՝ որպես քաղաքական ինքնության արդիականացման գործընթաց: Ժողովրդավարացման «երրորդ ակիքի» շրջանակներում է կարևորվում կառավարող էլիտայի կերպափոխումը՝ որպես քաղաքական ինքնության արդիականացման գործոն: Քանի որ

²⁶⁷ Сорокин П. А., Преступление и кара, подвиг и награда: Социологический этюд об основных формах общественного поведения и морали. Сост. и примеч. В.В. Сапова. М.: Астрель, 2006, 618 с.

²⁶⁸ Кнорринг В. И., Теория, практика и искусство управления. 2-е изд., изм. и доп., пер. с нем., М.: Изд. НОРМА, 2001, с. 528.

փոփոխությունները քաղաքական համակարգի արդիականացման ռազմավարության առաջնահերթությունների որոշման հիմք են, ուստի «...ընտրախավը կա՛մ կրում է պատասխանատվություն, կա՛մ չի կրում»²⁶⁹:

Անցման էլիտիստական տեսության համաձայն՝ քաղաքական արդիականացման գործընթացում անհրաժեշտ է տարբերակել էլիտայի երեք իդեալական տիպ .

1. **Տրոհված, բաժանված** էլիտա, որի առանձնահատկություններն են.

ա) գոյություն ունեցող քաղաքական ինստիտուտների նկատմամբ էլիտայի խմբակցությունների միջև փոխգործակցության և արժեքային փոխհամաձայնության նվազագույն մակարդակ,

բ) «գրոյական գումարով խաղի» (կամ, ըստ Ջ. Սարտորիի, «քաղաքականությունը՝ որպես պատերազմ») սկզբունքով ընթացող սահմանափակ քաղաքական պայքար²⁷⁰: Այս տիպի էլիտայի համապատասխանում են ինչպես անկայուն ժողովրդավարական, այնպես էլ ավտորիտար, նաև ավտորիտար-ժողովրդավարական քաղաքական համակարգեր:

2. **Փոխհամաձայնեցված միասնական** էլիտայի բնութագրիչներն են՝

ա) գոյություն ունեցող քաղաքական ինստիտուտների նկատմամբ վերնախավի խմբակցությունների միջև փոխգործակցություն և արժեքային փոխհամաձայնություն,

բ) այդ շրջանակներում զարգացող «դրական գումարով խաղի» (ըստ Ջ. Սարտորիի՝ «քաղաքականությունը որպես առևտուր») սկզբունքով քաղաքական բախումներ: Այս տիպի էլիտային համապատասխանում են կայուն ներկայացուցչական՝ ժողովրդավարական քաղաքական համակարգեր:

3. **Գաղափարական միասնական** էլիտա, որի դեպքում՝

ա) գոյություն ունեցող քաղաքական ինստիտուտների նկատմամբ էլիտայի խմբակցությունների միջև փոխազդեցությունը և արժեքային փոխհամաձայնությունն ապահովվում է իշխող խմբի գերիշխանության նկատմամբ գծային կոնֆորմիզմի տիրույթներում,

²⁶⁹ Гельман В. Я., Постсоветские политические трансформации (Наброски к теории). – Полис. Политические исследования. № 1, 2001. с. 15.

²⁷⁰ Сартори Дж. Вертикальная демократия. – Полис. Политические исследования, № 2, 1993, http://www.polisportal.ru/files/File/puvlication/Starie_publicacii_Polisa/S/1993-2-9-Sartori-Vertikalnaya_demokratiya.pdf

բ) նրա գաղափարախոսությունը որոշում և թելադրում է պաշտոնական քաղաքական կուրսի բնույթը: Այս տիպին էլ համապատասխանում են ոչ ներկայացուցչական կայուն վարչակարգերը, որտեղ նույնիսկ ժողովրդավարական ինստիտուտների առկայության դեպքում բացակայում է զանգվածների աջակցության համար քաղաքական մրցակցությունը:

Համաձայն քաղաքական արդիականացման արժեքայնության՝ ժողովրդավարական անցման հիմնական միտումը համարվում է էլիտանիների և քաղաքական վարչակարգերի կերպափոխությունը տրոհվածից դեպի փոխհամաձայնեցված միասնական էլիտայի²⁷¹: Մինչդեռ ՀՀ-ում կառավարող ընտրախավի կերպափոխման և քաղաքական ինքնության արդիականացման միտումները տատանվել և տատանվում են գաղափարական միասնականի ու տրոհված էլիտանիների միջակայքում: Փաստորեն, ժողովրդավարացման գործընթացն իրականացվում է կառավարող էլիտայի կերպափոխության երկու սցենարով՝ **«էլիտաների համագործակցություն»** և **«էլիտաների զուգամիտում»**: Նշվածի համաձայն՝ այս երկու սցենարների հաջորդական իրականացումից ակնկալվող արդյունքը ներկայացուցչական ժողովրդավարության կայուն համակարգն է: Ի սկզբանե նշենք, որ առաջադրված ձևաչափն ի վիճակի չէ համակարգված բացատրելու հայ քաղաքական իրականության մեջ ընթացող գործընթացները, քանի որ՝

- ❖ ժողովրդավարացման գործընթացը բնութագրվում է կառավարող էլիտայի պառակտմամբ և խմբիշխանական գերակայությունների առկայությամբ,

- ❖ կառավարող էլիտայի լեգիտիմ հավաքագրման գործընթացում քաղաքական համակարգի էական բաղադրիչ է դարձել մարզինալ քաղաքականությունը,

էլիտայի կերպափոխումն ընթանում է երկրի ազգային-պետական կառուցվածքի հետ կապված հիմնախնդիրների աճի հենքի վրա (խառնակչախմբեր, խմբիշխանական կառույցներ, կեղծ ընդդիմություն և այլն): Դրա հետևանքով էլիտաների համագործակցության փոխարեն դիտվում է ներէլիտային փոխազդեցությունների շիկացում (էսկալացիա), «պակտի» փոխարեն՝ **փոխհամաձայնեցված խմբիշխանություն** (կռալիցիաների տեսքով), որոնք չեն

²⁷¹ Munck, G. L., & Leff, C. S. Modes of transition and democratization: South America and Eastern Europe in comparative perspective. Comparative Politics, 29(3), 1997, 343-362.

նպաստել ոչ քաղաքական, ոչ էլ ազգային ինքնության բնականոն արդիականացմանը:

Այսպիսով՝ Հայաստանի քաղաքական համակարգի ժողովրդավարացման գործընթացին բնորոշ են հետևյալ գծերը.

- ❖ օրենսդրի նկատմամբ գործադիր իշխանության գերակայություն,
- ❖ տարբեր մակարդակների լիդերների միջև փոխադարձ չեզոքության ապահովում,
- ❖ հեղափոխական (հակահեղափոխական), հանցածին և կոռումպացված մթնոլորտ էլիտաների կոնֆիգուրացիայում,
- ❖ գործադիր իշխանության անուղղակի վերահսկողություն ՁԼՄ-ների նկատմամբ,
- ❖ ռեալ կամ պոտենցիալ ընդդիմադիր կենտրոնների ճնշում կամ չեզոքացում,
- ❖ հասարակական միավորումների (ինչպես քաղաքական, այնպես էլ «երրորդ սեկտորի») նկատմամբ խնամակալություն՝ գործադիր իշխանության կողմից վերջիններիս հանրային աջակցության փոխարեն,
- ❖ պետական բյուրոկրատիայի կողմից խմբային շահերի պաշտպանություն:

Նման հատկանիշների առկայությունը վկայում է, որ «էլիտաների համագործակցության» ձևավորումը հանգեցրել է ՀՀ-ում խառնածին (հիբրիդային) ավտորիտար վարչակարգի²⁷²: Այս համատեքստում կիրառելի է նաև Օ'Դոննելի **«դեկզատիվ ժողովրդավարության»** ձևավորման հայեցակարգը²⁷³: Այս պայմաններում ցանկացած դերակատար շահագրգռված է առավելագույնս երկար պահպանելու իր իշխանությունը, իսկ դրանից զրկվելու վտանգը ձգտում է հասցնել նվազագույնի և, հետևաբար, զբաղեցնելով իշխող դիրք, հակված չէ հաշվետու լինելու հակառակորդին և քաղաքական մրցակցության

²⁷² Freedom House, Nations in Transit 2018. <https://freedomhouse.org/report/nations-transit/2018/armenia> (20.12. 2018)

²⁷³ **Դեկզատիվ ժողովրդավարությունը** քաղաքական զարգացման ընթացքում տեղի ունեցող ինստիտուցիոնալ փոփոխությունների հետևանքով ստեղծված մի իրավիճակ է, որը, ավտորիտարիզմից դեպի ժողովրդավարություն անցման ժամանակ ստանալով խառնածին (ավտորիտարիզմ, ամբողջատիրություն, ժողովրդավարություն) բնույթ, չի նպաստում իրավունքի և իրավունքի գերակայության հաստատմանը (տես Դ. Օ'Դոննել. *Делегативная демократия* (<http://old.russ.ru/antolog/predely/2-3/dem01.htm>)

ն: Ֆորմալ ինստիտուտներից ազատ միջավայրում չհանդիպելով դիմադրության՝ այդպիսի դերակատարները կարող են կառավարել՝ «համակցելով կառավարումը, մանիպուլյացիան, կամայական որոշումները և կադրային խաժամուժը՝ ձգելով այդ իրավիճակի գոյությունը և ապագային թողնելով քաղաքական վակուում»²⁷⁴:

Ռացիոնալի և իռացիոնալի ներդաշնակումը քաղաքական ինքնության արդիականացման գործընթացում: Պակտային անցման առանձնահատկությունները փաստելու նպատակով անհրաժեշտ է դիտարկել ՀՀ կառավարող էլիտայի կերպափոխման հետևյալ փուլերը.

1. Թաքնահարույց (լատենտ) փուլ (1985-1989): Վերակառուցման ժամանակաշրջանը նշանավորվեց քաղաքական բնույթի աստիճանական փոփոխություններով, որոնք պայմաններ ստեղծեցին խորհրդային նոմենկլատուրային ընտրախավի վերակառուցման համար: Դա, այսպես կոչված, կոռպերատիվ շարժման, «ցեխավիկային» տնտեսության ստվերային կապիտալի բաժնեմասի լեգիտիմացման առաջին փորձերի ժամանակաշրջանն է: Նման քաղաքական բնույթի արմատական փոփոխությունների հետևանքով արդեն իսկ թաքնահարույց շրջանի վերջում ձևավորվեցին տվյալ իրականության նկատմամբ դիրքավորված նորարարական ընտրախավերի թաքնահարույց, ոչ օրինական (լեգալ) երեք հիմնական դաշտեր՝ **պահպանողական, բարեփոխումնային և հեղափոխական** (թաքնահարույց, քանի որ վարչակարգը ժողովրդավարական չէր և թույլ չէր տալիս ինստիտուցիոնալացված բազմակուսակցական քաղաքական համակարգի առկայություն): 1985-1989թթ. վերակառուցման արդյունքում ԽՍՀՄ էլիտայի որոշակի մասը, ինչպես գրում է Մ. Ս. Գորբաչովը, «...հանդես եկավ որպես բարեփոխումների էլիտա, որը տվյալ պահին հասարակական կարգում ձգտում էր այնպիսի փոփոխությունների, որոնք համակարգը չէին ենթարկի արմատական ձևափոխությունների, այլ կմեղմացնեին սկիզբ առնող սոցիալական բախումները և թույլ կտային քաղաքական էլիտային խուսափել անվերահսկելի պայթյուններից»²⁷⁵: Սակայն բարեփոխումները չբավարարված են թողնում ինչպես դրանք չափազանց

²⁷⁴ O'Donnell G., Schmitter P., Transitions from Aulhorian Rule. Tentative Conclusions about Uncertain Democracies. Baltimore and London: Johns Hopkins University Press, 1986. p. 40

²⁷⁵ Горбачев М. С., и др. Грани глобализации: Трудные вопросы современного развития. - М.: Альпина Паблишер, 2003, с. 309.

համարձակ համարող պահպանողականներին, այնպես էլ հեղափոխականներին, որոնք դրանք համարում են չափազանց մեղմ: Այդ պատճառով էլ բարեփոխող կառավարությունը դառնում է երկկողմ հարձակումների թիրախ, քանի որ փոփոխությունների աճը որոշվում է նկարագրված քաղաքական վարքաբանություններից որևէ մեկի գերազանցությամբ: Տվյալ պարագայում այդպիսին ՀՀ-ում հանդես եկավ հեղափոխական վարքաբանությունը, որն ավելի ակնառու դրսևորվեց էլիտայի կերպափոխման հաջորդ շրջանում:

2. Շրջաբերման փուլ (1989-1991): Փոփոխություններին նախապատրաստված էր առաջին հերթին մտավորականությունը, նոմենկլատուրան (հատկապես միջին և ստորին խավը), որոնցից ձևավորված հեղափոխական էլիտան էլ ակտիվորեն սկսում է մասնակցել երկրի զարգացման նոր ինստիտուցիոնալ, տնտեսական և քաղաքական պայմանների ժողովրդավարացմանը: Հայոց համագգային շարժումով (ՀՀՇ) միաժամանակ ի հայտ եկավ նոր քաղաքական էլիտա, որն սկսեց կառավարել նոր՝ ազատական արժեքների և ինստիտուտների հիման վրա: Վերակառուցման գործոնների ի հայտ գալուն պես հայ հասարակությունը հեղափոխական իրավիճակ ապրեց Ղարաբաղյան շարժման ներքո, ինչը պայմանավորված էր կոնկրետ կոնյուկտուրայով (այդ իսկ պատճառով սկզբում նրա էլքը ծայրաստիճան դժվար կանխատեսելի էր): Մյուս բոլոր հիմնախնդիրները (ՀՀ քաղաքական, սոցիալ-տնտեսական ճգնաժամերը, ադրբեջանա-ղարաբաղյան պատերազմի արդյունքները, Հայաստանի միջազգային հարաբերությունները) այդ ամբողջական պատեռնում ենթակա էին Ղարաբաղյան հիմնախնդրին:

3. Առձակատման փուլ

1. ա) 1991-1994 թվականներին բնորոշ է ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացման գործընթացին ուղեկցող ինտենսիվ քաղաքական հատվածայնությունը (ֆրագմենտացիա), որի զարգացմանը նպաստեց ինստիտուցիոնալ դիզայնը, բազմակուսակցական համակարգի ձևավորումը, բացահայտ անցումը շուկայական հարաբերությունների: Նոր քաղաքական և տնտեսական համակարգը պահանջում էր մեծ թվով դերակատարներ, որոնք հեղափոխական գործունեություն ծավալեցին ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացման հաջորդ երկու փուլերում, որոնց համառոտ նկարագրությունն այսպիսին է: Առաջին փուլն սկսվեց **«ապստամբ-հեղափոխական»** նորարարական էլիտայի հաղթանակով, որոնց լիդերները (Լ. Տեր-Պետրոս-

յան, Վ. Մանուկյան և այլք) ստանձնեցին պետական ապարատի ղեկավարումը՝ չունենալով հուսալի բյուրոկրատական և տեխնիկական անձնակազմ, որը կարողանար **հավատարիմ և նպատակադրված իրականացնել** ազատական քաղաքական բանաձևի մշակումը: Ավելին, Լ. Տեր-Պետրոսյանի և Վ. Մանուկյանի՝ ժողովրդավարական անցման նկատմամբ տարբեր մոտեցումների հետևանքով 1993 թվականին Վազգեն Մանուկյանը ստեղծեց **«Ազգային ժողովրդավարական միություն» (ԱԺՄ)** կուսակցությունը: 1991-1994թթ. քաղաքական զարգացման բնութագրիչ է նաև Լ. Տեր-Պետրոսյանի հրամանագրով ՀՅԴ-ի գործունեության կասեցումը²⁷⁶: Բ) **1995-1999 թվականներն** իր հերթին կարելի է բաժանել երկու մասի՝ պայմանավորված քաղաքական կայունացման և կայուն զարգացման փոխհարաբերություններով: **Առաջին շրջանը՝ 1995-1998թթ., երկրորդ շրջանը՝ 1998-1999թթ.:** Խաղի նոր կանոնների ներմուծումից հետո (Սահմանադրության ընդունում, ուժային կառույցների կողմից խաղի կանոնների թելադրում և այլն) հաստատվեց ուժերի նոր դասավորվածություն, որը թույլ չտվեց ընտրախավերի խմբակցություններից և ոչ մեկին գերակա դիրք զբաղեցնել (որոշ առումներով՝ բացառությամբ ՀՀԾ-ի մինչև 1997թ.):

Այդ ժամանակաշրջանի քաղաքական գործընթացը բնորոշվում է երկու հիմնական միտումով. առաջինը՝ **«գերնախագահական»** հանրապետություն, երկրորդը՝ **«ժողովրդավարական համախմբման»** սկզբունքների ձևավորում: Վերջին միտումը հիմք հանդիսացավ (թեկուզ և սահմանափակ տեսքով) «պակտի» ձևաչափի կիրառման համար: 1996թ. ՀՀ նախագահական ընտրություններում դառնալով ազգային համաձայնության միասնական թեկնածու՝ Վազգեն Մանուկյանն արժանացավ ժողովրդի վստահության քվեին, սակայն Լևոն Տեր-Պետրոսյանի վարչակազմը կեղծիքներով պահեց իշխանությունը²⁷⁷: Հայաստանը կորցրեց Հարավային Կովկասում ժողովրդավարության կղզյակի դերակատարման իր դիմագիծը, որը ձեռք էր բերել 1991 թվականին, և ընկղմվեց լեզիտիմության ճգնաժամի մեջ: 1998 թվականի փետրվարի 3-ին Լեոնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման առիթով երկրում ստեղծված լարված ներքաղաքական

²⁷⁶ Ինչո՞ւ է Տեր-Պետրոսյանը կասեցրել ՀՅԴ-ն, <https://www.a1plus.am/22112.html> (28.11.2018)

²⁷⁷ Վազգեն Մանուկյանի կենսագրությունը, <http://vazgenmanukyan.am/am/5/vazgen-manukyani-kensagrutyuny.htm/> (02.01.2019)

իրավիճակը ստիպեց Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին հրաժարական տալ ՀՀ նախագահի պաշտոնից:

2. Այս փուլի սկզբում ՀՀ կառավարող վերնախավը, զրոյացնելով իր իշխանության խարիզման, ռացիոնալացրեց այն՝ բացահայտելով պատմականորեն ձևավորված այն ճշմարտությունը, որ հեղափոխությունն իրականացնում են մարդիկ և ոչ աստվածները: Այդ իսկ պատճառով միամտություն կլինեք կարծելը, թե նրա հետ կապված բոլոր մարդիկ բարձր բարոյական իդեալներ են մարմնավորում: Կարևոր վտանգներից մեկն էլ, որին ենթարկվում են հեղափոխական գործընթացներն իրենց համախմբումից և ինստիտուցիոնալացումից հետո, առավելությունների տրամադրումն է որոշակի խմբերին: ՀՀ-ում սուր հակասություն ծագեց «նոր ժողովրդավարների» առաջին սերնդի կողմից հռչակված իդեալների և առավելություններ ունեցող խմբերի միջև, ինչը հանգեցրեց կլանային ու օլիգարխիկ խմբերի ձևավորմանը: Այս միտումն արտահայտվում է «նոր ժողովրդավարների» միջավայրում պայմանականորեն **«գործարարության ոճ»** կոչվող մասնագիտական գործունեության մեթոդների ամբողջությունն արդարացնող և թույլատրելի համարող բարոյական նորմերի արմատավորմամբ, այսինքն՝ պետական ձեռնարկատիրության այն տարատեսակով, որից ստացված եկամուտներն ուղղվում են ոչ թե գանձարան, այլ իշխանությանը սպասարկող անձանց: Դա նյութական ապահովվածության մասին ՀՀ իշխանական հարաբերություններում կառավարող դասի իմաստանշանային կերպարի նկատմամբ ունեցած կողմնորոշվածության միակ վկայությունն է: Կառավարող շրջանակները, նշված կողմնորոշվածությամբ կառուցակարգելով սեփական «Ես»-ը իշխանական հարաբերություններում, ըստ էության, սատարեցին պետական կառավարման ողջ համակարգի քրեականացումը: Այս համատեքստում հնարավոր է երկակի գործընթաց դիտարկել: Մի կողմից քաղաքական կուսակցությունները և կառավարչական խմբերը վերածվեցին «փակ» կազմավորումների, որտեղ առաջնորդի քննադատությունը դիտարկվում է որպես հանցագործություն: Դրան գուցահեռ կառավարման ոլորտում տեղի ունեցավ ակնհայտորեն քրեականացված միավորումների թվի ընդլայնում, որոնց գործող իշխանությունները ներմուծել են սովետային տնտեսության բնագավառից՝ դարձնելով (գոնե դրանց վերնախավին) կառավարող դասի **բաղկացուցիչ մաս**: Փաստորեն, տնտեսական կառուցակարգերի միջոցով հասարակության

կառավարող և քրեականացված հատվածների **միաձուլումը (կամ ինտեգրումը)** կայացել էր: Այս կապակցությամբ անհրաժեշտ է ընդգծել նաև, որ քաղաքական վերնախավի հավաքագրման պրակտիկան իր փակվածությամբ և մանիպուլացվածությամբ, այլ հասարակական խմբերից օտարման հետ մեկտեղ, հասարակության և պետության համար ունեցավ աղետալի բացասական հետևանքներ: Սոցիալական բևեռվածության պատճառով քաղաքական մարզինալների ազդեցության խորացումը հարկադրեց իշխանությանը, ներընտրախավային լատենտ «պակտ» կնքելով, գնալ լայն զանգվածների քաղաքական մասնակցության դերի թատերականացման: Լատենտ պակտային անցումները սովորաբար ձգտում են փոխազդեցության կորպորատիվ ձևերի (օրինակ՝ կոլեկտիվ լիդերությունը, որը Տ. Կարլը ուսումնասիրել է Մեքսիկայի օրինակով)²⁷⁸: Սակայն կորպորատիվությունը ենթադրում է եթե ոչ «պակտի» մասնակիցների կարգավիճակների հավասարություն, ապա նրանց որոշակի երաշխիքներով ապահովում, ինչը հակասում է լիդերի գերակա դիրքին²⁷⁹:

4. Ձևական կայունության փուլ (1999-2008): Այս շրջանը ևս կարելի է բաժանել երկու մասի՝ պայմանավորված ձևական կայունացմանն ուղղված փորձերի քանակով: **Առաջին շրջանը՝ 1999-2000թթ. և երկրորդ շրջանը՝ 2000-2008թթ.:** 1999թ. հոկտեմբերի 27-ից հետո քաղաքական զարգացման գործընթացը խաղի նոր կանոնների ուժային ներմուծմամբ արմատապես փոխեց ընտրախավերի դասավորվածությունը, որը հնարավորություն տվեց 2003թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում կառավարվող կոալիցիոն կառավարություն ձևավորելու: Դիտարկվող ժամանակաշրջանն արմատական փոփոխության ենթարկվեց հատկապես 2005թ. նոյեմբերի 27-ի ՀՀ հանրաքվեով տեղի ունեցած Սահմանադրության փոփոխությունից հետո: Քաղաքական ինքնության բնականոն արդիականացման համար ստեղծվեցին նպաստավոր ինստիտուցիոնալ պայմաններ, բայց հանրային և պետական կառավարման յուրաքանչյուր ինստիտուտում էլիտան ոչ թե հստակեցրեց իր պարտականությունները ընտրազանգվածի նկատմամբ, այլ

²⁷⁸ Karl T., Dilemmas of Democratization in Latin America. Author(s):, Comparative Politics, Vol. 23, No. 1, Oct., 1990, pp. 1-21.

http://commonweb.unifr.ch/artsdean/pub/gestens/f/as/files/4760/42821_182036.pdf

²⁷⁹ Пшевровский А., Демократия рынок. Политические экономические реформы Восточной Европе Латинской Америке. Пер англ. / Под ред. проф. Бажанова В.А. - М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2000. с. 73.

ազատականության գծայնությունն ու բարեփոխումների ձգձգվածությանը զուգահեռ երկրում զարգացրեց կոռուպցիան²⁸⁰։ Իսկ քանի որ ժողովրդավարացման գործընթացում քաղաքական համակարգը կոռուպցիայի պայմաններում իմունիտետ չունի, ուստի էթնիկ ինքնության բնականոն արդիականացումը ոչ միայն մարզինալացվեց, այլև ընկղմվեց ոչ խարիզմատիկ, փոխհամաձայնեցված խմբիշխանության ռացիոնալիզմի մեջ։

5. Սպասումների հիասթափության և օտարման փուլ (2008-2018)։ 2008 թվականի մարտի 1-ի ողբերգական դեպքերից հետո ակնհայտ դարձավ, որ Էլիտայի իշխանության մշակույթը փոխհամաձայնեցված խմբիշխանական է, իսկ քաղաքական և տնտեսական ընտրախավերի կողմից պետական կառավարման ոլորտի վերջնական սեփականաշնորհման պայմաններում գերիշխման գլխավոր արժեք է դառնում կառավարողների վերահսկողությունը ռեսուրսների վերաբաշխման նկատմամբ։ Մեր դիտարկումների համաձայն՝ հայաստանցին մի մարդ է, որն ապրում է «խղճով և ճշմարտությամբ», չվստահելով օրենքին և ղեկավարությանը, բայց որոշակի փոխհատուցման դիմաց պատրաստ է զիջելու իր իրավունքների զգալի մասը։ Այդ իսկ պատճառով նա ոչ միայն դատապարտում, այլև վախենում է կոռումպացված, փոխհամաձայնեցված խմբիշխանական կարգավիճակ ունեցող պաշտոնյաներից՝ մտածելով ոչ թե նմանատիպ երևույթները կասեցնելու, այլ նրանց օգնությամբ իր որևիցե «եկամտաբեր» պաշտոն ձեռք բերելու կամ երկրից արտագաղթելու մասին։ Այսպիսի դիտարկումները թույլ են տալիս ընդհանրացնել, որ պետության և հասարակության արդիականացման գործընթացում վերնախավի իշխանության իրականացման մշակույթը ոչ միայն լեգիտիմ **խմբիշխանության**, այլև հենց իր կողմից «...վերարտադրված ավատատիրական նորմերի բյուրոկրատացման արդյունք է»²⁸¹։ Այս պարագայում բարձրագույն ղեկա-

²⁸⁰ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիր (ՀՀ կառավարության որոշումն ընդունվել է 2003թ. նոյեմբերի 6-ին), Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում, 25 սեպտեմբերի, 2015 թվականի N 1141-Ն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=100900>

²⁸¹ Мизес фон Людвиг, Бюрократия. Запланированный хаос. Антикапиталистическая ментальность, Научный редактор Р. Левита, Общее редактирование Бориса Пинскера, Перевод с английского Е. Журавской, Б. Пинскера, В. Родионова, Корректор Т. И. Алейникова М.: "Дело" при участии изд-ва "Catallaxy", 1993, С. 240.

վարներն իշխանության իրականացման ժողովրդավարական մշակույթն ընկալում են ոչ թե որպես էլիտայի գործառույթ, առավել ևս՝ ժողովրդի՝ իբրև իշխանության միակ կրողի կամքի արտահայտություն, այլ իր անձի աստվածային մենաշնորհ, անձ, որն իրականացնում է «Աստծո երթն աշխարհում» (Հեգել):

Կատարված վերլուծությունից ակնհայտ է, որ **իրավունքը որպես արժեք եղել և մնում է էլիտայի իշխանության իրականացման մշակույթի ու սոցիալական մտածողության ռիսկային արտացոլում, եթե արմատավորված չէ իմաստանշանային արժեքային կոդմուրոշիչներում:** Այս պարագայում ուշագրավ է էլիտայի մաքիավելիստական դպրոցի հիմնադիրներից մեկի՝ Գ. Մոսկայի այն դիտարկումը, որ օրենքները զանգվածներին բոլորովին չմոտեցնելով իշխանությանը, էլիտար խմբերի կողմից օգտագործվում են բացառապես սեփական գերիշխանությունն ուժեղացնելու համար, եթե նա իրեն պատասխանատու չի զգում: Հայաստանյան էլիտայի համար ոչ միայն սովորական, այլև ձեռնտու է իշխանության (նույնն է՝ պետական ռեսուրսների) համար իրավական դաշտից դուրս գործելը: Ուստի ՀՀ ժողովրդավարացման գործընթացի առանձնահատկությունն այն է, որ սահմանադրականության՝ որպես քաղաքական բնականոն արդիականացման գերակա ռեսուրսի նկատմամբ վերաբերմունքը նախ անտեսվեց, ապա մանիպուլացվեց: Այս համատեքստում, քննարկվող քաղաքական ժամանակի մեջ սահմանադրականության բարձրացման փոխարեն, քաղաքական օրակարգում դրվեց պետության կառավարման ձևը, որը վիճարկելի էր **կառավարող խմբավորումների միջև առկա սոցիալ-հոգեբանական և քաղաքակրթական տարաձայնությունների պատճառով:** Պայմանավորված ժողովրդավարական անցման անորոշության բաղադրիչով՝ ընթացող քննարկումներն առավել քան խմբիշխանական դիրքերից չընթացան հանրային շահի և հանրային գիտակցության արդիականացման տիրույթներում, որի դեպքում կգործառնվեր իրավունքի գերակայությունը՝ կանխելով սպասումների հիասթափությունը: Հասարակության օտարումը սոցիալական իրականությունից առավել սրվեց, երբ սկսվեց քննարկվել 2015 թ. դեկտեմբերի 6-ին²⁸² տեղի ունեցած Հայաստանի սահմանադրական բարեփոխումների

²⁸² Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի քվեարկության արդյունքների արձանագրություն, 2015թ. դեկտեմբերի 6: <https://res.elections.am/images/doc/06.12.15v.pdf>

հանրաքվեի արդյունքների լեգիտիմությունը: Այս համատեքստում ուշագրավ է հետխորհրդային երկրների սահմանադրությունների փոփոխությունները ուսումնասիրող Ա. Ֆրուստորֆերի այն դիտարկումը, որ «հիբրիդային վարչակարգերում իրականացվող սահմանադրական փոփոխությունները միշտ չէ, որ նպատակ ունեն պետությունը դարձնել ավելի ժողովրդավար: Նույն տրամաբանության շրջանակներում այն միտքը, որ սահմանադրության փոփոխությունը (Constitution-making) քաղաքականության շարունակությունն է այլ միջոցներով, հուշում է, որ Սահմանադրությունները օգտագործվում են, որպես իշխանության վերարտադրման գործիք»²⁸³:

2017թ. ապրիլի 2-ին կայացած ՀՀ խորհրդարանական ընտրություններից հետո քաղաքական ուժերի դասավորվածությունից (ՀՀԿ՝ 58 մանդատ, ՀՅԴ՝ 7 մանդատ, «Ծառուկյան» դաշինք՝ 31 մանդատ, «Ելք» դաշինք՝ 7 մանդատ) պարզ էր, որ Հայաստանն անցում է կատարել կառավարման խորհրդարանական համակարգին, որպեսզի ապահովի ՀՀԿ-ի քաղաքական իշխանության վերարտադրությունը (2018 թվականին լրանում էր Սերժ Սարգսյանի ՀՀ նախագահության երկրորդ ժամկետը, իսկ Ս. Սարգսյանը դեռ 2014 թվականին հայտարարել էր, որ երկրի Սահմանադրության փոփոխությունից հետո ինքն այլևս չի առաջադրվի ո՛չ որպես ՀՀ նախագահ, ո՛չ որպես ՀՀ վարչապետ): Իրավիճակն արմատապես փոխվեց, երբ ՀՀԿ-ն, խորացնելով ճգնաժամը, հայտարարեց, որ երկրում չկա Սերժ Սարգսյանին փոխարինող: Ճգնաժամն իր գագաթնակետին հասավ 2018թ. ապրիլի 17-ին, երբ ՀՀ 3-րդ նախագահ Ս. Սարգսյանը Ազգային ժողովի կողմից ձայների 77 կողմ, 18 դեմ և 0 ձեռնպահ²⁸⁴ համամասնությամբ ընտրվեց ՀՀ վարչապետ:

ՀՀ-ում հասարակական գիտակցության աճի և քաղաքացիական դիրքորոշման ակտիվացման հետևանքով տեղի ունեցավ «թավշյա հեղափոխություն»: Հավատալով քաղաքական փոփոխությունների կառավարման «Քաղաքացիական պայմանագիր (ՔՊ)» կուսակցության առաջնորդ Նիկոլ Փաշինյանի ունակություններին և հնարավորություններին՝

²⁸³ Anna Fruhstorfer - Pradoxes of Constitutional Politics in the Post-Soviet Space. University Of Illinois Law Review, Vol. 2017. P. 770. <https://illinoislawreview.org/wp-content/uploads/2017/03/Fruhstorfer.pdf>

²⁸⁴ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի ապրիլի 17-ի հատուկ նիստի արձանագրություն: <http://parliament.am/register.php?AgendaID=480&day=17&month=04&year=2018&lang=#17.04.2018>

հեղափոխականացված ժողովուրդը պահանջեց նորընտիր վարչապետի հրաժարականը: 2018թ. ապրիլի 23-ին ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը հրաժարական տվեց՝ ընդհանրացնելով. «Խաղաղություն, ներդաշնակություն և տրամաբանություն մեր երկրին: Շնորհակալ եմ»²⁸⁵:

Նիկոլ Փաշինյանի կողմից ձևավորած կառավարությունը չունեւ ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված խորհրդարանական կայուն մեծամասնություն²⁸⁶: Ինստիտուցիանալ այդ ճգնաժամը պահպանվեց մինչև 2018 թվականի դեկտեմբերի 9-ի ՀՀ ԱԺ արտահերթ խորհրդարանական ընտրությունները, որի արդյունքում ձևավորված կայուն խորհրդարանական մեծամասնությանը, հանձին «Իմ քայլը» դաշինքի, դեռևս չի հաջողվել կանխել քաղաքական անորոշությունները:

6. «Թավշյա հեղափոխության» կողմից մեկնարկած սիրո, հույսի և սպասումների վերականգնման շրջան (2018) - «Թավշյա հեղափոխության» հաղթանակն ապացուցեց, որ ՀՀ-ում անհրաժեշտ է իրատեսորեն վերաբերվել իշխանության իրականացմանը և ստեղծել երկիրն արդյունավետ կառավարող մրցունակ ու ռազմավարական մտածողություն ունեցող կադրերի բանկ:

Նոր վարչակարգը իր դիրքերի պահպանման համար պետք է հետամուտ լինի բնականոն արդիականացման: Նորմատիվ տեսանկյունից, գործող վարչակարգի համար անհրաժեշտ է իրավունքի գերակայության ապահովում: Դա կօգնի ապացուցելու, որ **ժողովրդավարությունը պատասխանատվության ինստիտուցիոնալացված տեսակ է, այլ ոչ թե հասարակական անարդյունք բանավեճերի կազմակերպման ձև**: Այս իմաստով բնականոն արդիականացման ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է ապահովել **քաղաքական դիսկուրսի ինստիտուցիոնալ տարածությունը** կառուցող քաղաքական էլիտայի տեղեկատվահաղորդակցական ընթացակարգերի թափանցիկություն **պետական կառավարման բոլոր այն ոլորտներում, որոնք պետական գաղտնիք չեն պարունակում**: Ուստի անհրաժեշտ է դաստիարակել նոր էլիտա, որը չի գայթակղվի իշխանության թաքնահարույց

²⁸⁵ Սերժ Սարգսյանը հրաժարական տվեց. պաշտոնական 23.04.2018
<https://armtimes.com/hy/article/136111> (04.01.2019)

²⁸⁶ Հայաստանի Հանրապետության սահմանադրություն փոփոխություններ
(06.12.2015) <http://parliament.am/parliament.php?id=constitution>


պերճանքով, էլիտա, որն ի վիճակի կլինի բարձր պրոֆեսիոնալիզմ և մարդասիրություն ցուցաբերել՝ չմոռանալով նրանց մասին, որոնց օգնությամբ իրենք «թագադրվել» են: Հարցադրումը, իհարկե, հռետորական է, սակայն պատասխանները՝ զուտ արժեքաբանական, և դրանից է ուղղակիորեն կախված մեզնից յուրաքանչյուրի, մեր հայրենիքի և ժողովրդավարական կենսունակ պետություն ունենալու ապագան:

Հանրագումարենք: ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացման գործընթացում դերակատարների ուժերի հավասարակշռության պայմանները կամ ուժերի հարաբերակցության անորոշության իրավիճակում ձևավորվող և ֆորմալ ինստիտուտների վրա հենվող էլիտաների համագործակցությունը, այնուհանդերձ, կարող են նախադրյալներ ստեղծել քաղաքական ինքնության բնականոն արդիականացման համար:

Պատմության հոլովությունում տեղի ունեցած արդիականացման ընթացքում էլիտաները, իրենց իսկ անվտանգությունից դրդված, ձևավորել և զարգացնում են հիերարխիայի տարբեր հարթությունների վրա գտնվող ենթահամակարգեր՝ տարաչափ և տարաբնույթ սոցիալական կառուցվածքներ: **Նպատակը ոչ միայն հասարակությունում ժողովրդավարական արժեքների ներդրումն է, այլև տեսակի քաղաքական ինքնության բնականոն արդիականացումը՝ պատմական հիշողությամբ պայմանավորված իմունոհամակարգի միջոցով:** Այս գործընթացում քաղաքական ինքնության բնականոն արդիականացումը որոշակի օրգանական և ֆունկցիոնալ դեր է խաղում՝ մշակելով յուրահատուկ ինքնապաշտպանական ռեսուրսներ: Նրանցից յուրաքանչյուրին բնորոշ սեփական **լեզվական, միֆային, ծիսային, կրոնական և այլ խորհրդանշանային համակարգերը** կարելի է դիտել որպես էթնիկ ինքնություն ձևավորող յուրատեսակ հորմոններ: Վերջիններս ձևավորում են էթնիկ ինքնության խորհրդանշանային հիերարխիկ համակարգը: Հիերարխիայի տարբեր հարթությունների վրա գտնվող այդ ենթահամակարգերի փոխադարձ կապը պարտադիր պայման է իմունոհամակարգի ամբողջականության համար, որն ապահովվում է ռացիոնալ-իրացիոնալ պարույրագույզով՝ որպես տեղեկատվության ձև: Ռացիոնալ պարույրը մարդու, ինստիտուտի, հասարակության, ռացիոնալ աշխարհի տեղեկատվությունն է կրում, իսկ իրացիոնալ պարույրը՝ իրացիոնալ աշխարհին: Հետևաբար, կտրելով դրանցից

մեկն ու մեկը, ազգը, հասարակությունը կբարակեցնեն իրենց համար կենսական նշանակության հյուսվածքը, իսկ դա էլիտային դարձնում է անկենսունակ...²⁸⁷:

Այդ նույն պարույրագույցն է ապահովում հիերարխիայի տարբեր հարթությունների վրա գտնվող կառուցվածքային միավորների միջև համակարգված «ներքին տեղեկատվությունը»՝ դառնալով տարբեր մակարդակների միջև փոխադարձ կապի ապահովման յուրատեսակ կառուցակարգ: Ընդ որում, տարբեր հարթությունների սիմվոլներն օժտված են տարաչափ արժեքային էներգետիկ դաշտերով: Հետևաբար էլիտայի էթնիկ ինքնության արդիականացումը պետք է հիերարխիայի այդ հարթություններն օժտի տարաչափ և տարաբնույթ էներգիաներով, որոնք ունակ են անհատներին ներուժ հաղորդելու և դնելու շարժման մեջ (կախված տվյալ մակարդակի կառուցվածքային տարրի կողմնորոշիչից և դրանց համար ակնկալվող վտանգի չափից):



Էթնիկ ինքնության բնականոն արդիականացման ներդաշնակության խախտման դեպքում ակտիվանում է սոցիալական ենթահամակարգը, որը, առաջին պլան մղելով սոցիալական պահանջմունքները, անտեսում է սիմվոլների դերը էթնիկ ինքնության պահպանման ենթատեքստում:

²⁸⁷ Москвичи С. Машина, творящая богов. Пер. с фран. Т. П. Емельяновой, Г. Г. Дилигенского, Научный редактор проф. А. И. Донцов. - М.: «ЦПП», 1998. с. 110.

Սիմվոլների նշված հիերարխիան սովորաբար պատմության հոլովությամբ կարծրացած կառուցվածք է՝ հասարակության, ինստիտուտների, անհատների համար, սակայն էթնիկ ինքնության արդիականացումն ապահովում է նրանց ներքին դինամիկ տեղափոխությունները: Ճկուն և մշտապես ինքնարդիականացման ունակ էթնիկ ինքնության օգնությամբ ապահովվում է ոչ միայն այդ սիմվոլներից յուրաքանչյուրի «առաջնորդ սիմվոլ» դառնալու, այլև համախմբվելու հնարավորությունը: Այս առումով հայի պատմական հիշողությունը պահպանել է իր ինքնության համախմբվածության բազմաթիվ դեպքեր: Օրինակ՝ երբ վտանգված է եղել ողջ ազգը, պետականությունը, բոլոր կառուցվածքային տարրերը գնացել են Ավարայր, Ձիրավ, Սարդարապատ, Թատերական հրապարակ, Ղարաբաղ և այլն: Եթե վտանգված է ինստիտուտը (օրինակ՝ երկրաշարժից հետո Սպիտակը, Գյումրին, Վանաձորը), բոլորը միահամուռ շտապում են օգնության:

Անհատը և հանրային ինստիտուտները ռացիոնալ պարույրով ստացած վտանգ ահագնագող տեղեկատվության հիման վրա բարձրացնում են ինքնության արդիականացման պարամետրը բոլոր կառուցվածքային միավորների համար: Դրա շնորհիվ օգնության եկած կառուցվածքային բոլոր միավորները, պայմանավորված իրենց իռացիոնալ էներգիայով, համախմբվում ու համատեղ գործողությունների են պատրաստվում հորիզոնական հարթության վրա:

Էթնիկ ինքնության արդիականացումը իր ճկունությամբ մշտապես (և ոչ թե ժամանակ առ ժամանակ կամ էլ միայն որոշակի կառուցվածքային տարրերի համար) ապահովելով դինամիկ տեղաշարժեր՝ պետք է զուգամիտի հասարակությունում առկա ռացիոնալ և իռացիոնալ ներուժը: Այլապես այդ ներուժը կխաթարվի՝ վտանգելով նրա անվտանգության ապահովման տեղեկատվական համակարգի պարուրային հարաստությունը: Վերջինս հայ ինքնության արդիականացման գործընթացում համակարգում է **«ողբ-հաղթանակ»** և **«հերոս-հակահերոս»** խորհրդանշային բևեռները, որոնց օգնությամբ ձևավորվել է քաղաքական տեքստի արժեքային համակարգը: Այդ բազմաբևեռ արժեքային համակարգի իմացությունն էլ հենց հնարավորություն կտա բնականոն արդիականացնելու էթնիկ ինքնության քաղաքական էությունը՝ գլոբալ քաղաքակրթության տարածքում ինտեգրվելու նկատառումներով:

կույթը՝ որպես ընդհանուր մշակույթի բաղկացուցիչ և գաղափարական-աշխարհայացքային ֆենոմեն: Այդ համատեքստում քաղաքական մշակույթը դիտարկել ենք որպես քաղաքական համակարգում դերակատարների նորմավորված վարքագիծը սահմանող **համագործակցային սկզբունքների ամբողջություն**՝ կարևորելով ազատական և ավանդական մշակութային արժեքների փոխներդաշնակման անհրաժեշտությունը:

Մոտեցումը հիմնավորված է՝ նկատի ունենալով այն, որ խորհրդարանական կառավարման պայմաններում ՀՀ-ի քաղաքական մշակույթի ժողովրդավարացման գերակա հիմնախնդիր է քաղաքական սոցիալականացումը՝ պայմանավորված հանրային շահով:

ՀՀ-ում խորհրդարանական կառավարման արդյունավետության ապահովման դիտանկյունից անհրաժեշտ է նվազեցնել PR տեխնոլոգիաների և GR կապերի մանիպուլյացիաները: Դա, նպաստելով խորհրդարանական մշակույթի զարգացմանը, կլուծի ՀՀ-ում խորհրդարանական կառավարման արդյունավետության ապահովման գերակա հրամայականը՝ իրականացնել քաղաքական էլիտա-հասարակություն, էլիտա-քաղաքական հասարակություն և էլիտա-քաղաքացիական հասարակություն դիսկուրս, ինչի շնորհիվ կնվազի քաղաքական համակարգի մարգինալության ռիսկայնությունը:

Քաղաքական մշակույթը դիրքորոշումների, համոզմունքների և զգացմունքների համադրություն է, որը, քաղաքական գործընթացին հաղորդելով որոշակի արժեքաբանություն, ներկայացնում է վարքագծի ու քաղաքական համակարգի արդիականացման հիմնարար սկզբունքներ և կանոններ: Այս ամենի համար անհրաժեշտ է ունենալ որոշակի գիտելիքներ, փոխանցված ավանդույթներ և ընդունված վարքի չափանիշները կանոնակարգող գործելակերպ, այլ կերպ ասած՝ քաղաքական մշակույթ:

Դեռևս 18-րդ դարում գերմանացի փիլիսոփա Յոհան Հերդերը, առաջին անգամ օգտագործելով «քաղաքական մշակույթ» եզրույթը, գրել է. «...Հին հույն իմաստունների մեծամասնությունը զբաղեցնում էր հանրային պաշտոններ՝ ժողովրդական առաջնորդների, թագավորների խորհրդականների,

գորահրամանատարների, քանի որ նման նշանավոր մարդկանցից, արիստոկրատներից կարող էր միայն սկիզբ առնել քաղաքական մշակույթը և գործունեկերպով ազդել ստորին խավի մարդկանց վրա»²⁸⁸:

20-րդ դարի 50-60-ականներին ամերիկացի քաղաքագետներ Գ. Ալմոնդը և Ս. Վերբան, համեմատության մեջ ուսումնասիրելով քաղաքականության դերակատարների վարքաբանությունը, գրեցին. «Երբ մենք խոսում ենք հասարակության քաղաքական մշակույթի մասին, նկատի ենք ունենում այն քաղաքական համակարգը, որն արտացոլված է նրա անդամների գիտելիքներում, զգացմունքներում և գնահատականներում»²⁸⁹: Ելակետ ընդունելով այս մոտեցումը՝ հնարավորություն ենք ստանում փաստարկելու քաղաքական էլիտայի իրականացրած իշխանության մշակույթը՝ համադրելով իրավական և հոգևոր մշակութային այն նմուշները, որոնք ներառում են քաղաքական դերերը և նրանց փոխհարաբերությունները:

Քաղաքական մշակույթը՝ որպես ընդհանրական մշակույթի բաղադրիչ և գաղափարական-աշխարհայացքային ֆենոմեն, ներառում է անձի հարատև սոցիալականացումը և արժեքների արդիականացումը այն բազմամակարդակ տարածությունում, որտեղ քաղաքական էլիտան գործունեություն է ծավալում՝ լեգիտիմացնելով իր իշխանությունը: Քաղաքական մշակույթը տվյալ հասարակական-քաղաքական կյանքում մարդկանց վարքի կերպի այն ամբողջությունն է, որը, մարմնավորելով իրենց արժեքային պատկերացումները քաղաքականության նպատակների մասին, պահպանում և մշակում է ամրագրված նորմերն ու ավանդույթները **պետություն-հասարակություն-անհատ** փոխհարաբերություններում:

Ակնհայտ է, որ քաղաքական մշակույթը ոչ միայն քաղաքականության սուբյեկտիվ բովանդակության արտահայտությունն է, այլև, վերածվելով հասարակական գիտակցության ձևի, իր արտահայտությունն է ստանում մտահայեցողության և վարքաբանության մեջ: Հենվելով ընդհանուր մշակույթի ոգեղեն կառուցակարգի վրա՝ այն հանրագումարում է այնպիսի արժեքային կոդմոտրոշումներ, որոնք կարող են և՛ **մարզինալացնել**, և՛ **շահադդդել**, և՛ **սոցիալականացնել** քաղաքացու վարքը: Որպես անձի քաղաքական կյանքի

²⁸⁸ Гердер И., Идеи к философии истории человечества, перевод и примечания А. Михайлова, М.: Наука, 1977, с. 368.

²⁸⁹ Алмонд Г., Пауэлл Дж., Стром К., Далтон Р., Сравнительная политология сегодня. Мировой обзор.- пер. с англ. А. С. Богдановского, Л. А. Галкиной; Под ред. М. В. Ильина, А. Ю. Мельвиля. М.: Аспект Пресс, 2002, с. 66-67

բաղկացուցիչ՝ քաղաքական արժեքների յուրացումը միաժամանակ պարտադիր կրում է հասարակական պահանջմունքների առանձնահատուկ ազդեցությունը: Նախևառաջ դա տեղի է ունենում քաղաքական համակարգի նորմերի ընկալման հիմքի վրա՝ ներառելով ոչ միայն ժամանակակից պահանջները, այլև ընդգրկելով անցյալի փորձը, ինչպես նաև կառուցելով ապագայի տեսլականը: Այս ամենը, ժառանգորդություն ապահովելով անցյալի և ապագայի միջև, հասարակությանը համախմբում է որպես ամբողջական կենդանի օրգանիզմ՝ իր **անցյալով, ներկայով և ապագայով:**

Որպես բարդ, բազմաշերտ հասկացություն՝ այն ամփոփում է քաղաքական սովորույթներում ամրագրված **անցյալը և ներկան, ինչպես նաև** հնարավորի, ցանկալիի և արժանավորի հետ երջանիկ **ապագան:** Քաղաքական մշակույթի այս ենթաշերտերը, լրացնելով մեկը մյուսին, էքստրոպոլացիայի են ենթարկում ապագայի չափումները, քանի որ առանց դրա հնարավոր չէ պատասխանել քաղաքական արդիականացման մարտահրավերներին: Այս եռաչափության օգնությամբ քաղաքական մշակույթը քաղաքականության դերակատարներին տալիս է անվտանգության զգացողություն և հնարավորություն է ընձեռում հակազդելու քաղաքական գործընթացների անկանխատեսելիությանը: Այս առումով ամերիկացի քաղաքագետ Ռ. Ինգլիհարթը նշել է. «Նույնիսկ բռնապետական վարչակարգերում կոդմոնորշումների մակարդակով անցյալի յուրացումը կարող է կատարվել միայն մտածողության ինչ-որ ձևերի և անցյալում ապրող սերունդների վարքի **ազատ զարգացման** հիմքի վրա: Բռնապետությունն ընդունակ է վերահսկելու միայն վարքը, բայց ոչ միտքը, և դրա համար մշակույթը վերահսկման ոչ մի կառուցակարգ չունի, բացի մարդու գիտակցության սահմանափակումներից»²⁹⁰: Հենց դա էլ քաղաքական մշակույթը դարձնում է **ինքնազարգացման, ինքնաիրացման և ինքնարդիականացման** հզոր գործոն:

Որպես այդպիսին՝ այն իրական ազդեցություն է գործում քաղաքական գործընթացի, պետական իշխանության ոլորտում փոփոխությունների դինամիկայի վրա՝ դրսևորվելով քաղաքակրթական չափումներում, ինչպես նաև կրոնական, էթնո և սոցիո ենթամշակույթներում: Այդ իմաստով, որպես յուրաքանչյուր երկրի ընդհանուր (ազգային) մշակույթի օրգանական մաս, քաղաքական մշակույթը սահմանակարգում է համամշակութային արժեքները՝

²⁹⁰ Инглхарт Р., Вельцель К. Модернизация, культурные изменения и демократия: Последовательность человеческого развития, М.: Новое издательство, 2011, с. 35-36

հիմնավորելով քաղաքական համակարգի բոլոր դերակատարների բնականոն արդիականացումը: Քաղաքական մշակույթի ժողովրդավարացման վրա ազդում են կրոնը, էթնոագգային մտահայեցողությունը, գիտության և տեխնիկայի ձեռքբերումների մակարդակը և այլն: Այլ կերպ ասած՝ մշակույթն ամբողջությամբ սոցիալական տեքստ է, որի ներսում քաղաքական իրադարձությունների համակարգումը մարդու համար ստեղծում է ինքնորոշվելու հնարավորություն: Այսպիսով՝ քաղաքականությունը հասարակության մշակույթային լեզվի կեցության միջոց է, նրա իմաստային կառուցվածքների, ագգային ինքնության, ավանդույթների արտահայտություն: Համակարգելով ժողովրդի «գենետիկական ծրագիրը», նրա ոգին առասպելներում և սիմվոլներում՝ մշակույթը, նպաստելով հասարակության միասնությանը, ապահովելով էլիտայի, լիդերների և ընտրագանգվածների միջև հարաբերությունների ժառանգականությունը, երկխոսություն է ենթադրում: Քաղաքական մշակույթը՝ որպես տվյալ քաղաքական համակարգի դերակատարների արժեքային կողմնորոշիչների սուբյեկտիվ ոլորտ, իմաստավորում է քաղաքական գործունեության հիմքերը՝ **հանրագումարելով**.

ա) քաղաքական փաստերի իմացության, հավաքման, վերլուծության և կանխատեսման արժեքաբանությունը,

բ) քաղաքական գործընթացների իրատես գնահատումը՝ բացահայտելով քաղաքական տարածության և ժամանակի մեջ «Ես»-ի ադապտացիայի իսկությունը,

գ) որոշակիացված քաղաքական դիրքորոշումը, որը ենթադրում է ռացիոնալի և իռացիոնալի, ինչպես նաև ավանդական և արդիական արժեքների փոխներդաշնակում: Հետևաբար քաղաքական մշակույթը, փոխակերպելով քաղաքականության տեղեկատվության դաշտը, դրսևորվում է՝

❖ որպես գլոբալ քաղաքակրթության ընդհանուր համակարգի կառուցվածքային բաղադրամաս,

❖ որպես քաղաքացիների կողմից պետական քաղաքականության իմացություն և այն իրականացնելու ընդունակություն,

❖ որպես քաղաքական կյանքին մասնակցության ակտիվության աստիճանի բնութագրում,

❖ որպես մարդու իրավունքների ու պարտականությունների ըմբռնման և գիտելիքների օգտագործման աստիճանի սահմանում,

❖ որպես քաղաքական համակարգի արդիականացման և ժողովրդավարացման պայման²⁹¹:

Կարծում ենք, որ քաղաքական մշակույթը կարելի է դիտարկել նաև որպես **մարդասիրական գիտակցության արժեքային ամբողջություն**: Այս մոտեցումը հիմնավորում ենք՝ նկատի ունենալով այն, որ այսօր կյանքի որակի և մակարդակի առումով զարգացած և զարգացող երկրների միջև հսկայական տարբերություն կա: Այժմ արդեն ցանցային կառավարման արժեքային համակարգի արդյունք «ոսկե միլիարդի» դեմ հանդիման աշխարհի տարբեր մասերում կանգնած է մարդկության աղքատ, օտարված և մարգինալ մասը: Դա ստիպում է խմբիշխանական վարք ունեցող հետխորհրդային տարածքների նոր անկախացած երկրների կառավարող էլիտաներին ժողովրդավարացնել քաղաքական մշակույթի արժեքային համակարգը: Այլապես այդ երկրները կարող են դուրս չգալ քաղաքական զարգացման ճգնաժամներից՝ դառնալով «ձախողված պետություններ»²⁹²:

Ըստ Գ. Ալմոնդի՝ քաղաքական մշակույթն ընդգրկում է քաղաքացիների կողմնորոշումների երեք մակարդակով հանդես եկող վերաբերմունք **քաղաքական համակարգի, քաղաքական կուրսի, քաղաքական կուրսի արդյունքների նկատմամբ**²⁹³: Այս համատեքստում անհրաժեշտ է ընդգծել, որ արևմտյան և արևելյան տիպի մշակույթները տարբեր կերպ են լուծում այս խնդիրները: Արևմտյան մշակույթը քաղաքականությունը բերեց ազատ մասնակցության (*laissez – faire*) փիլիսոփայությունը, որի համար իրավունքի գերակայությունը ձևավորում է կառավարման ոճը, երաշխավորում անձի ինքնորոշումը, ազատ շուկայի զարգացումը, պետության չեզոքությունը քաղաքացիական հասարակության նկատմամբ: Արևելյան մշակույթը հենվում է համայնքային մարդու և իշխանության միջև միջնորդի՝ **ԽԱՐԻԶՄԱՏԻԿ ՌԻՍՈՒՑՉԻ** անհրաժեշտության, ինչպես նաև քաղաքական իշխանությունը որպես աստվածային պարզ և ընկալելու վրա:

²⁹¹ St' u Алмонд Г., Пауэлл Дж., Стром К., Далтон Р., Сравнительная политология сегодня. Мировой обзор.- пер. с англ. А.С.Богдановского, Л. А. Галкиной; Под ред. М. В. Ильина, А. Ю. Мельвиля. М: Аспект Пресс, 2002, с. 94,110,119

²⁹² St' u Աճեմօղլու Տարոն, Ռոբինսոն Ջեյմս Ա. Ինչու են ձախողվում պետությունները : Տ. Աճեմօղլու, Ջ.Ա. Ռոբինսոն- Եր., Անտարես. 2018, 688էջ:

²⁹³ St' u Алмонд Г., Пауэлл Дж., Стром К., Далтон Р., Сравнительная политология сегодня. Мировой обзор.- пер. с англ. А.С.Богдановского, Л. А. Галкиной; Под ред. М. В. Ильина, А. Ю. Мельвиля. М: Аспект Пресс, 2002, с. 221:

Ակնհայտ է արևմտյան և արևելյան քաղաքական մշակույթների քաղաքակրթական հակադրությունը: Մակայն չի կարելի անտեսել արևմուտքի և արևելքի խիստ արդյունավետ այնպիսի փոխներգործություն, ինչպիսին է Ճապոնիան: Այստեղ կառավարող էլիտան, աշխարհի առաջատար արդյունաբերական տեխնոլոգիական առաջընթացն օգտագործելով, ճապոնական ավանդական մշակույթը կերպափոխեց ազատական-ժողովրդավարական արժեքների հիմքի վրա և արդյունավետ կառավարում իրականացնելու նպատակով արևմտյան մշակույթների հիմքի վրա ստեղծված տեխնոլոգիաները գուգակցեց ազգային-ավանդականի հետ:

Վերոգրյալի տիրույթներում հարց է առաջանում. իսկ ինչպիսի՞ն պետք է լինի ժողովրդավարական անցումից համախմբում պայմաններում պարբերաբար ինստիտուցիոնալ դիզայնի մեջ կերպափոխվող ՀՀ-ի քաղաքական մշակույթի արժեքաբանությունը: Սահմանադրական արագացված փոփոխությունների փորձը ՀՀ-ում հավաստում է, որ ժողովրդավարացման որոշակի փուլում քաղաքական լեգիտիմության մշակութային հիմք կարող է լինել իշխանության ինստիտուցիոնալացված դիմակայությունը և բնակչության օտարվածությունը: Մակայն սահմանադրական փոփոխություններից հետո, երբ փոխվել է կառավարման ձևը, քաղաքական մշակույթի նման բնութագիրն անբավարար է: Զարգացման բոլոր փուլերում քաղաքական մշակույթը կատարում է իր կարևորագույն գործառնություններից մեկը՝ անձի քաղաքական սոցիալականացումը: Մարդու մուտքը քաղաքականություն, նրա նախապատրաստումը և ներառումը իշխանական հարաբերություններում իրականացվում է իշխող մշակութային կողմնորոշիչների և նորմերի, քաղաքական վարքաբանության նմուշների և արժեքների յուրացման գործընթացում:

Իր հերթին՝ ՀՀ քաղաքական կյանք նոր սերունդների մուտքն ապահովում է քաղաքական սոցիալականացումը՝ կարևորելով հասարակության քաղաքական զարգացման ժառանգականությունը: Դա երկխոսության բազմամակարդակ հնարավորություն է ստեղծում պետության ինստիտուտի և քաղաքացու միջև, որն էլ, քաղաքական կայունություն երաշխավորելով, հնարավորություն է տալիս կառավարող էլիտային հանդես գալու որպես ժողովրդավարական քաղաքական մշակույթի կրող և արարող: Այդ առումով ՀՀ-ում խորհրդարանական կառավարման գործընթացում առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում անձի սոցիալականացման բազմաչափությունը: Եթե այս կառուցակարգը գործում է հանրային շահի

գերակայության տիրույթում, ապա անհատը ձեռք է բերում ոչ միայն անհրաժեշտ կրթական և մասնագիտական պատրաստվածություն, այլև շահադրդող նպատակներ, ասոցիատիվ կապեր և արժեքներ, որոնք նույնականություն են ապահովում այս կամ այն սոցիալական խմբի հետ: Ազատական արժեքների հաստատման հիմքի վրա ընթացող սոցիալականացման բազմաչափ գործընթացի տրամաբանությունը ՀՀ-ում խախտված է, ավելի ճիշտ՝ այն կատարվում է թերացումներով և հատվածայնորեն: Դա պատճառ է դարձել, որ անձը քաղաքականություն մտնի ոչ միայն տրոհված և իրարամերժ փոխբացառող արժեքային համակարգով, այլև իրականությունից օտարված ու մարգինալացված, քանի որ անտեսված է ազատական և ավանդական մշակութային արժեքների փոխներդաշնակման անհրաժեշտությունը: Նման պարագայում խորհրդարանական կառավարման անցած ՀՀ-ում առկա է երկու հիմնախնդիր.

1. սոցիալական անկայունության և սոցիալականացման փուլերի միջև անհամաձայնություն, որը սահմանափակում է քաղաքացիության, քաղաքացիական դիրքորոշման և քաղաքացիական մշակույթի զարգացման հեռանկարը, ինչի հետևանքով անհատը կա՛մ անընդհատ մշակութային և գաղափարական դեգերումների մեջ է, կա՛մ օտարվում է իրականությունից, կա՛մ էլ մարգինալ մասնակցություն է ապահովում,

2. օտարվածության, մարգինալության, հիասթափության զգացում, որը թուլանում է, եթե պրոֆեսիոնալիզմի, շահադրդող նպատակների և ասոցիատիվ կապերի զարգացման հիմքում դրվում է ժողովրդավարության որակի և իշխանության ու սեփականության լեգիտիմացման հիմնախնդիրը: Որպես այդ դժվարությունների հետևանք՝ ՀՀ-ի քաղաքական մշակույթում շարունակում է որոշակի տեղ գրավել արժեքային անորոշությունը (կամ բևեռվածությունը): Դրան զուգահեռ խորհրդարանական կառավարման հաստատման գործընթացն ուղեկցվում է սոցիալական երկխոսության անարդյունավետությամբ, տրոհված արժեքային համակարգով, ինչը չի նպաստում քաղաքացիական հասարակության ֆունկցիոնալ զարգացմանը: ՀՀ-ում քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալ, բայց ոչ ֆունկցիոնալ զարգացածության պատճառով քաղաքականության դերակատարների վարքաբանության մեջ այսօր սկսել են վճռորոշ դեր խաղալ և՛ **նացիոնալիզմը, և՛ կոսմոպոլիտիզմը:** Այս գործոնների միջոցով ՀՀ-

ում կառավարող դասի առանձին խմբեր օգտագործում են մարզինալ շերտերի անլիարժեքության բարդությո՜ր և նրանց ներգրավում իրենց կուսակցությունների ու շարժումների գործունեության տիրույթում: Դա տեղի է ունենում բնակչության հիմնական զանգվածի և քաղաքական որոշումների ընդունման միջև սոցիալական ներկայացուցչության (ընտրական համակարգ և ճնշման խմբեր) համակարգի գործունեության ցածր արդյունավետության պատճառով: Օգտվելով դրանից՝ հատկապես նորաստեղծ կուսակցական գործիչներն իրականացնում են տեղեկատվահաղորդակցական մանիպուլյատիվ գործառույթներ՝ շահարկելով **սոցիալական ու ազգային ինքնության արդիականացման հրամայականները**: ՀՀ սոցիալական հիշողությունն արտացոլում է հայկական քաղաքակրթության արժեքային համակարգի հարաբերական անկախությունը և համարվում է քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման առավել էական բաղադրիչներից մեկը: Այն դրսևորվում է մշակութային նորմերի միջոցով, որոնք հասարակության կողմից ոչ միշտ են անմիջականորեն գիտակցվում: Դարերով ձևավորված նորմերն ու արժեքները՝ ամրագրված լեզվում, գեղարվեստական գրականության մեջ, սովորույթներում, իրենց դրոշմն են դրել սոցիալական կապերի կառուցվածքի և մարդու ձևավորման աստիճանի, ինչպես նաև էլիտայի իրականացրած իշխանության արժեքաբանության վրա:

Պատմության հոլովությունում ձևավորված փորձը վկայում է, որ պառլամենտական կառավարման արդյունավետության ապահովման համար առաջին հերթին անհրաժեշտ է ՀՀ-ում ժողովրդավարացնել քաղաքացիների վրա ազդելու PR տեխնոլոգիաների և GR կապերի մշակման արժեհամակարգը՝ նվազեցնելով մանիպուլյացիան: Քաղաքական աջակցություն ստանալու նպատակով կառավարող վերնախավը պետք է ՀՀ քաղաքացիներին ապացուցի անհատական սոցիալական շարժունակության հնարավորությունների իրական լինելը, ստեղծի հաղորդակցման արդյունավետ ուղիներ և գործնականորեն ցույց տա իշխանության նկատմամբ սեփական հավակնությունների հիմնավորվածությունը: Հետևաբար ՀՀ-ում սահմանադրական փոփոխությունից հետո անհրաժեշտություն է առաջացել զարգացնելու խորհրդարանական մշակույթը՝ իրականացնելով կյանքի որակի և մակարդակի բարձրացման պահանջներին համապատասխանող օրենսդրական փոփոխություններ: Նկատի պետք է ունենալ, որ խորհրդարանական մշակույթը որոշիչ ազդեցություն ունի պետության և սոցիումի

քաղաքական գիտակցության, պետական կառավարման սուբյեկտների քաղաքական վարքագծի և ամենակարևորը՝ քաղաքական զարգացումների գործընթացում ձևավորվող հասարակական կարծիքի ու իշխանության լեգիտիմության վրա: Այս համատեքստում խորհրդարանական մշակույթի արժեքաբանությունը, հենվելով մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության կառուցակարգերի վրա, համարվում է ոչ միայն քաղաքական համակարգի, նրա մուտքերի ու ելքերի և քաղաքացու կողմից այդ համակարգում իր դերի վերաբժնորման գործընթաց, այլև քաղաքացիական հասարակության զարգացման և գործառման կարևորագույն պայման²⁹⁴:

Միայն այդպես կարելի է կանխել կուտակված բարիքների բաշխումից և քաղաքական որոշումների իրական հետևանքների խզումից ծագող անբավարարվածության աճը, որն ուղեկցվում է օտարամբ, աղքատությամբ, արտագաղթով և ժողովրդագրական ճգնաժամով: Այս համատեքստում հանրագումարելով ՀՀ-ում քաղաքական փոփոխությունների արդյունքները՝ ընդգծենք, որ խորհրդարանական կառավարումը առավել մեծ հնարավորություն է տալիս քաղաքական էլիտային կառավարում իրականացնելու «անցում-համախմբում» հարացույցի զուգամիտման համաձայն: Այն զուգամիտման արդյունավետության ապահովման նկատառումներով ենթադրվում է՝

1) ժողովրդավարական ճանապարհով քաղաքականապես մրցունակ կառավարող էլիտայի բաց հավաքագրում,

2) էլիտայի հետ բնակչության լայն զանգվածների քաղաքական համագործակցություն և մասնակցություն քաղաքական որոշումների ընդունմանը:

Փաստորեն, «անցում-համախմբում» հարացույցի շրջանակներում ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացման գրավական է մրցունակ և նորարարական գիտելիքներով օժտված էլիտայի բաց հավաքագրման ապահովման գործընթացը: Այս սցենարն ի վիճակի չէ համակարգված բացատրելու հայ քաղաքական իրականության մեջ ընթացող գործընթացների լեգիտիմությունը, եթե քաղաքական ընդդիմությունը հանդես չգա որպես **քաղաքական համակարգի ինստիտուտ**: Դրանով էլ կարելի է բացատրել ՀՀ

²⁹⁴ St' u Алмонд Г., Верба С., Гражданская культура: политические установки и демократия в пяти странах.- пер. с англ. Е. Генделя, М.: Мысль, 2014, с. 283-322:

բարեփոխումների թույլ դինամիկան և ընդունվող քաղաքական որոշումների կատարման ցածր արդյունավետությունը: Այս գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է համագործակցության մշակույթի զարգացմամբ, ինչը հնարավորություն կտա՝

ա) ներդաշնակելու քաղաքական փոփոխությունները և հասարակական ակնկալիքները՝ վերլուծելով տարածաշրջանային և գլոբալ մակարդակում տեղի ունեցող քաղաքական արդիականացման գործընթացները,

բ) համակարգելու քաղաքական գործունեության ռազմավարությունները և ժողովրդավարական բարեփոխումներին ուղղված նախագծերի մշակումը՝ խուսափելով իրավիճակային և անձնավորված լուծումներից,

գ) նվազեցնելու հասարակական հարաբերությունների մարզինալացումը՝ ապահովելով խորհրդարանական և քաղաքացիական վերահսկողություն քաղաքական էլիտայի գործունեության վրա,

դ) ներկայացնելու ընտրողների հոգսերը իսկության մեջ՝ ընդունելով արդյունավետ գործող օրենքներ, որոնք արտահայտում են երկրի կամ բնակչության հիմնական հատվածի օրինական շահերը և ուժեղացնում հասարակության «իմունային համակարգը»,

ե) զարգացնելու խորհրդարանական մշակույթը՝ նպաստելով քաղաքացիական հասարակության գործառույթների զարգացմանը: Խորհրդարանական մշակույթը՝ որպես սոցիալ-քաղաքական ֆենոմեն, ներառում է ոչ միայն քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալ-գործառութային զարգացման հեռանկարները, այլև պատգամավորների գիտակցության մակարդակը և մտածողության առանձնահատկությունները: Ըստ Գ.Մ. Ռոբերտի՝ արժեքների հիերարխիկ կառուցվածքը խորհրդարանական մշակույթի հիմնական բաղադրիչն է, և հանրային քաղաքականություն իրականացնելիս անհրաժեշտ է խուսափել իրավական հիմք չունեցող անհատական ձևակերպումներից ու հայտարարություններից²⁹⁵:

Խորհրդարանական ժողովրդավարությունը կատարյալ է, եթե մեծամասնության կամքը ոչ միայն չի ճնշում փոքրամասնության ձայնը, այլև ստեղծում

²⁹⁵ Robert H. M., Robert's Rules of Order Newly Revised 11th Edition, New York: Liberty publishing house, 2011, 151p.
[http://holstonpresbytery.org/files/8815/0878/6701/Roberts Rules of Order Newly Revised 11th Edition.pdf](http://holstonpresbytery.org/files/8815/0878/6701/Roberts_Rules_of_Order_Newly_Revised_11th_Edition.pdf)

է պայմաններ, որ կոլեգիալության, ընտրողների հետ մշտական կապի ապահովման շնորհիվ զարգանա մասնակցային ժողովրդաիշխանությունը: Նկատի պետք է ունենալ, որ կառավարման խորհրդարանական ձևը հետամուտ է քաղաքական դիսկուրսի միջոցով քաղաքական համակարգի «վերնից» արդիականացմանը: Ունենալով վերահսկողական, իշխանության լեգիտիմացման և վերարտադրության, կողմնորոշման և սոցիալական համախմբման հատկանիշներ՝ դիսկուրսն ապահովում է ինչպես սոցիալական խմբերի, այնպես էլ հասարակության ժողովրդավարական համախմբում: Յուրաքանչյուր դիսկուրսի կարևորագույն տարրը մասնակիցների շրջանակն է, քանի որ հենց վերջիններս են սահմանում գաղափարներ, արժեքներ, նորմեր՝ տիրապետելով քաղաքական ենթատեքստերին, ձևերին, միջոցներին և դիսկուրսի գործառույթներին: Ըստ էության, քաղաքական դիսկուրսը սոցիալ-պատմական հոլովությամբ իմաստավորված տեքստերի ամբողջություն է²⁹⁶: Որպես այդպիսին՝ դրանք ձևավորում են քաղաքականության հանդեպ **վերաբերմունք, ընկալում, մեկնաբանություն և արդիականացում են արժեքային համակարգը՝ ըստ մարտահրավերների**: Միաժամանակ քաղաքական դիսկուրսը՝ որպես կառավարող էլիտայի և լիդերի կերպավորման գործընթացում ծագած հարցերի քննարկման մշակույթի առկայության արդյունք, ուղղված է սոցիալական երկխոսության և համագործակցության մշակույթի զարգացմանը: Այս դիտանկյունից քաղաքական դիսկուրսը ոչ միայն քաղաքական օրակարգի կառուցվածքային և հաղորդակցական գործառույթների վերլուծությունն է, այլև հստակ ուղղորդված հաղորդակցության յուրահատուկ ձև, քաղաքական դերակատարների տեսակետների ուսումնասիրություն, քննարկում և հաստատում:

Ըստ էության՝ լեզվի համակարգը թույլ է տալիս յուրաքանչյուր տիրույթում ստեղծել սկզբունքորեն անվերջ թվով իմաստներ, որոնք շրջանառության մեջ են որոշակի պատմական ժամանակահատվածում: Այս գործընթացում ՀՀ քաղաքական արդիականացման հրամայական է ավանդական և էլեկտրոնային ՋԼՄ-ների ինստիտուցիոնալ պատասխանատվության հիմնախնդրի լուծումը: Որպես հանրային կարծիքի ձևավորման գլխավոր ինստիտուտներ՝ մի կողմից դրանք դիսկուրսի մասնակիցների կողմից ձևավորված տարբեր մտքերի ու արժեքների առավել արդյունավետ փոխանցման

²⁹⁶ Делёз Ж. Логика смысла /Пер. с фр. Я. Свирского, М.: Академический Проект, 2011, с. 7-8.

միջոց են, իսկ մյուս կողմից, ունենալով մեծ ազդեցություն փոխանցվող տեղեկության վրա և ծառայելով այս կամ այն խմբի շահերին, այսպես կոչված «թարգմանիչներ» են, որոնք կարող են ստեղծել և՛ կոնֆլիկտային, և՛ կոնսենսուսային իրավիճակ: Ուստի քաղաքական դիսկուրսը ենթադրում է տարաբնույթ լեզվամտածողական ճկունություն, համակարգված գիտելիքներ աշխարհի, նպատակադրման, կարծիքների, դիրքորոշումների, գաղափարախոսությունների, իշխանական հարաբերություններում առկա տեղեկատվահաղորդակցական հարաբերությունների մասին: Փաստորեն, ինչպես կոնֆլիկտ, այնպես էլ կոնսենսուս ենթադրող քաղաքական դիսկուրսը որոշակի պատմական իրավիճակի, մշակույթի և որոշակի պայմաններում արդիականացող տեքստի բազմակողմանի վերլուծության հետևանք է: Այս գործընթացի արդյունավետության համար անհրաժեշտ է համադրել քաղաքական դիսկուրսի **ինստիտուցիոնալ** (տարբեր քաղաքական ուժերի մրցակցային շահերը ներառող իշխանական կառուցվածքների ստեղծում), **ընթացակարգային** (քաղաքական դերակատարները պահպանում են Սահմանադրությամբ ամրագրված խաղի կանոնները), **արժեքային** (ժողովրդավարական հիմնարար արժեքների վերաբերյալ համաձայնության կնքում) բաղադրիչները:

Խորհրդարանական կառավարման պայմաններում ՀՀ-ում ժողովրդավարության որակի բարձրացման նկատառումներով հնարավոր է նեգատիվ և պոզիտիվ դիսկուրս: Առաջինը հասարակական համախմբում է ապահովում «ապակառուցողական» փոփոխությունների փուլում՝ կապված նախկին ավտորիտար համակարգի փլուզման հետ: Այստեղ խոսքային ակտը կարող է ավարտվել հաջողությամբ, եթե իրականացվում է նախանշված պայմանական ընթացակարգին համապատասխան, եթե խոսքային ակտի մասնակից անձն արտահայտվում է անկեղծ, համոզիչ, իսկ յուրաքանչյուր անձ, մասնակցելով խոսքային ակտին, կարևորում է դիսկուրսի էությանը համապատասխան ինտելեկտուալ գործողությունների ամրագրումը խոսքի և գործի իսկության միջոցով:

Այս դիտանկյունից էլ ՀՀ-ում բնականոն քաղաքական արդիականացման ապահովման համար «**պոզիտիվ դիսկուրսի**» անհետաձգելի պահանջումն է առաջացել: Այս համատեքստում փոխակերպումների իրականացման անհրաժեշտ պայման են դառնում բարեփոխումների վերջնական նպատակների ընդհանուր ընկալումը և «**հասարակական կառուցվածքի ցանկալի ձևերի**» վերաբերյալ ընդհանուր համաձայնությունը հանրային շահի գերակայության

հիմքի վրա: Միևնույն ժամանակ կառավարող էլիտան, լինելով քաղաքական մշակույթի կրող և արարող, դիսկուրսի միջոցով պարտավոր է ռացիոնալացնել ազգային, պետական շահերի շուրջ ձևավորված օրակարգը: Այս համատեքստում արդիականացվում է իշխանության իրականացման մշակույթի արժեքաբանությունը: Ըստ էության, այն ունի որոշակի սոցիալ-պատմական և մշակութաքաղաքակրթական ենթատեքստ, որտեղ ձևավորվում են երևույթների մեկնաբանումն ու ընկալումը: Այսինքն՝ քաղաքական դիսկուրսը պատմականորեն ձևավորված և քաղաքական ժամանակի հրամայականով արդիականացած տեքստերի ամբողջությունն է: Որպես այդպիսին՝ այն գտնվում է լիդերների և էլիտաների իշխանության իրականացման մշակույթի հիմքում: Եթե քաղաքական դիսկուրսը չի արդիականանում՝ պայմանավորված ժամանակի հրամայականով, ապա քաղաքական զարգացման ճգնաժամերի լուծման գործընթացը երկարաձգվում է: Ուստի ՀՀ-ում խորհրդարանական կառավարման պայմաններում կառավարող էլիտան՝ որպես արդիականացման գլխավոր դերակատար, նպատակադրված պետք է իրականացնի հանուն սոցիալական երկխոսության, սերունդների համերաշխության, իշխանության իրականացման մշակույթի հումանիզացման սկզբունքների վրա հիմնված դիսկուրս: Այս դիտանկյունից կառավարող էլիտայի կազմում պետք է բաց հավաքագրվեն այն անհատները, որոնք ունակ են ըստ արդիականացման հրամայականի փոփոխելու իշխանության իրականացման մշակույթը: Հենց նրանք են պատասխանատու դիսկուրսի իրականացման և արդյունքի համար, քանի որ նրանք՝ որպես հանրային շահի արդիականացման պատասխանատուներ, շահագրգռված են զարգացնելու քաղաքացիական մշակույթը²⁹⁷: Վերջինիս գործառման համար անհրաժեշտ է ՀՀ քաղաքական արդիականացման հրամայական դիտարկել այնպիսի դիսկուրսը, որի պայմաններում էլիտաների միջև հաստատվում է հաղորդակցություն՝ հանրային ու ազգային շահը համախմբելու համար: Փաստորեն, քաղաքական դիսկուրսն ունի վերահսկողական, իշխանության լեգիտիմացման և վերարտադրման, կողմնորոշման, ինչպես նաև բնականոն արդիականացման նպատակ: Այս համատեքստում գիտելիքի արտադրության, կազմակերպման և նորարարացման օգնությամբ լեզվամտածողությունը

²⁹⁷ Алмонд Г., Верба С., Гражданская культура: политические установки и демократия в пяти странах / Г. пер. с англ. Е. Генделя. М.: Мысль, 2014. с. 7-8.

ստեղծում է սկզբունքորեն անվերջ թվով իմաստներ՝ նպատակամետ շրջանառելով որոշակի մշակութաքաղաքակրթական ժամանակահատվածի առանձնահատկությունը:

Փաստորեն, քաղաքական դիսկուրսը սեմանտիկական տեսանկյունից ներառում է նշանների համակարգեր, որոնք ամփոփում են տարատեսակ տեքստեր, լեզուներ, սիմվոլներ: Սեմանտիկայի ուսումնասիրության համար կարևոր է անցումից համախմբում գործընթացում բացահայտել քաղաքական դիսկուրս ձևավորող այնպիսի հայեցակարգերի բազան, ինչպիսիք են **ընտրությունը, մասնակցությունը, իշխանությունը, աջակցությունը, սոցիալական երկխոսությունը, պատասխանատվությունը, հարստության լեգիտիմությունը:** Ընդհանուր նշանակության այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ազգային գաղափարը, ազգային շահը, ժողովրդավարության հետընթացի կանխումը և այլն, քաղաքական դիսկուրսի բովանդակության հիմքն են²⁹⁸: Նկատի պետք է ունենալ, որ կառավարման խորհրդարանային ձևի պայմաններում խորհրդարանական էլիտան, լինելով քաղաքական արդիականացման գլխավոր դերակատար, նպատակադրված դիսկուրսով և՛ հասարակական կարծիք է ձևավորում, և՛ անձի քաղաքական սոցիալականացում իրականացնում, և՛ PR տեխնոլոգիաներ ու GR կապեր մշակում:

Հանրագումարենք. քաղաքական մշակույթն իր **անցյալ-ներկա-ապագա** բազմաչափությամբ որոշակի համընդհանուր և ազգային արժեքային համակարգերի փոխազդեցությունների ամբողջությունն է: Այդ առումով ՀՀ-ի բնականոն քաղաքական արդիականացման գործընթացի հիմքում առաջարկում ենք դնել ժողովրդավարության որակի ապահովման, նոր հումանիզմի, ինչպես նաև կյանքի որակի և մակարդակի բարձրացման, քաղաքական էլիտայի ինդիգենիզացման, ազգային, հանրային և պետական շահերի ներդաշնակման, ինչպես նաև ռազմավարական անվտանգ ապագայի իրականացման հրամայականները: Դա հնարավորություն կտա ՀՀ-ում բարձրացնելու ինստիտուտների գործունեության որակը և քաղաքական համակարգը գերծ պահելու տարաբնույթ մարզինալ ցնցումներից:

²⁹⁸ Larry Diamond, Democracy in Decline: How Washington Can Reverse the Tide, July/August 2016, Issue : U.S. Foreign Policy, <https://www.foreignaffairs.com/articles/world/2016-06-13/democracy-decline>

**ԳԻՐՔ 5. «ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԳԱՂԱՓԱՐԻ
ՆՈՐԱՐԱՐԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**

«Հայության հավաքում» կամ «հայության կազմակերպում» գաղափարական իմաստով - ահա ինչ էմ հասկանում ես «Հոգևոր Հայաստան» ասելով: Դա այն կուլտուրան է, այն կուլտուրայես կազմակերպված ժողովուրդն է, որի գալուն մենք կուզեինք հավատալ: «Ազգը միայն արտաքին ուժերի գործությամբ, իրերի արհեստական դասավորությամբ չի ստեղծվում, այլև իր անդամների ներքին մտավոր-հոգեկան կապով: Պետք է բացի արտաքին հնարավորությունից լինի և ներքին մի գործություն, մի հոգևոր մղում, որ մարդկանց համախմբումը ազգ է դարձնում»: «Ահա թե ինչու ես կարծում եմ, որ, բացի արտաքին արգելքները հաղթահարելուց, ամեն մի՝ ազգ կազմելու ցանկություն ու կամք ունեցող ժողովուրդ անդադար պիտի ստեղծե այն արժեքները, որոնք նրա ինքնության առհավատյաներն են» (Վահան Տեյյան «Հոգևոր Հայաստան»):

Քաղաքական արդիականացման գործընթացը տարածության և ժամանակի մեջ դրսևորվող փոփոխական արժեք է, և նպատակադրված նորարարացման քաղաքականություն: Այս նկատառումներով էլ քաղաքական գործընթացների բնույթը ժողովրդավարական անցումից համախմբման պայմաններում գտնվող հասարակություններում պայմանավորված է ոչ միայն ինստիտուցիոնալ կարգով ընդունված քաղաքական որոշումների նպատակամետ իրականացմամբ, այլև ավանդական և արդիական արժեքների փոխհարաբերությունների ապահովման նկատմամբ էլիտաների, լիդերների, հասարակության, ազգի, պետության ունեցած պատասխանատվությամբ: Առանց այդ հիմնախնդրի կարևորման հնարավոր չէ ապահովել ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացը: Ահա թե ինչ է այդ մասին գրում Ս. Հանթինգթոնը. «Համախմբված ժողովրդավարությունը միայն գյուղի, համայնքի կամ քաղաք-պետության ժողովրդավարությունն է. դա ազգային պետության ձևավորման և հաստատման հետ սերտորեն կապված ժողովրդավարություն է: Ժողովրդավարությունը միայն խոսքի ազատություն, ընտրություններին մասնակցելու իրավունք չէ: Դա օրենքի իշխանություն է: Առանց պատասխանատվության ժողովրդավարություն հաստատած ազատությունը մահանում է»²⁹⁹: Հանթինգթոնյան այս ելակետային մոտեցումն էլ

²⁹⁹ Хантингтон С., Третья волна. Демократизация в конце XX века / Пер. с англ., М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2003, с. 120

հիմք ընդունելով՝ փաստենք, որ Հայաստանում, ինչպես նաև ժողովրդավարական անցումից համախմբման պայմաններում գտնվող ցանկացած երկրում, նախ պետք է հաղթահարել քաղաքական զարգացման ճգնաժամերը, ապա մշակել պետության արդիականացման ռազմավարություն: Ժողովրդավարական անցումից համախմբման քաղաքականության իրականացումը, համաձայն Ս. Հանթինգթոնի, բացի ինստիտուցիոնալ փոփոխություններից, ենթադրում է ինչպես անձի քաղաքական սոցիալականացման որոշակի աստիճան, քաղաքական, քաղաքացիական և սահմանադրական մշակույթի առկայություն, այնպես էլ ազգային մտահայեցողության հաշվառում և արդիականացում, քանի որ՝ **«Միտքը չունի գաղտնիք, որ վարքը երևան չբերի» (Գյոթե):** Այս ամենն էլ ձևավորում է իշխանության իրականացման այնպիսի մշակույթ, որն իր հերթին խթանում է մրցակցությունը՝ նպաստելով քաղաքականության դերակատարների, հատկապես էլիտայի պատասխանատվության և մշակութաքաղաքակրթական կյանքի համատեղելիության մակարդակի բարձրացմանը: Այս առումով այժմեական է ռուս նշանավոր պետականագետ Ի. Իլինի հետևյալ ընդհանրացումը. «Հոգևոր կյանքի միասեռությունը, հոգևոր ստեղծագործության համատեղությունը և հոգևոր մշակույթի ընդհանրությունը ամեն տեսակ պետական միավորման խորագույն և իսկական հիմքն են: ...Պետությունը որոշվում է հենց նրանով, որ այն հայրենիքի դրական-իրավական ձևն է, իսկ հայրենիքը՝ նրա ստեղծագործական, հոգևոր բովանդակությունը³⁰⁰»:

Այս համատեքստում քաղաքական արդիականացման գործընթացում իշխանության իրականացման մշակույթին ներկայացվող պահանջներն իրենց ողջ բազմազանությամբ ենթադրում են ազգայինի գաղափարական հիմքի և անվտանգության ապահովման կառուցակարգերի հստակեցում՝ պետության ինստիտուտի ժողովրդավարացման միջոցով: Իշխանության իրականացման քաղաքակրթական փորձի հանրագումարից ակնհայտ է, որ միայն ազգային արժեքների իմացության դեպքում կարելի է արդյունավետ սկզբունքներ մշակել պետական իշխանության ժողովրդավարացման համար: Այդ նկատառումներով էլ քաղաքական արդիականացման գործընթացի համակարգայնության ապահովումը նախ ենթադրում է պետական իշխանության իրականացման գործընթացում ազգային մտահայեցողության

³⁰⁰ Ильин И. А., О сущности правосознания. /Подготовка текста и вступительная статья И. Н. Смирнова. М.: «Парогъ», 1993, 235 с.

հարատև ու համընթաց արդիականացման ապահովում, ապա՝ քաղաքականության սուբյեկտների, հատկապես կառավարող էլիտայի վարքաբանությունում ազգային գաղափարի տեղի ու դերի հստակեցում, ինչպես նաև նյութական և հոգևոր արժեքների փոխներդաշնակում ոգեղենության հիմքի վրա:

Ազգային գաղափարախոսությունը օրգանական միասնության մեջ գտնվող, պատմականորեն ձևավորված տեսակի կենսունակության ապահովմանն ուղղված արժեքների համակարգ է: Այն տվյալ ազգի կենսահասարակական ինքնությունը, էությունը համակողմանիորեն արտացոլող իդեալների, ռազմավարական շահերի, նորմերի, նպատակների հարատևման փիլիսոփայությունը ներառած միաձույլ, ամբողջական, կուռ և մշտապես արդիականացում պահանջող գաղափարների հանրագումարն է: Տրամաբանորեն կարելի է ընդհանրացնել. եթե առկա է համակարգը (դիցուք՝ ազգը), ապա գոյություն ունի «Ես»-ի համար տեղ, կարգ, ինքնություն, էություն, գոյություն, անվտանգություն ապահովող գաղափարախոսություն: Աստծո կամոք հայ գաղափարական «Ես»-ի արարման կառուցակարգի համակարգումն սկսվել է հայկական ժայռապատկերներից, մաշտոցյան այբուբենից, Քերթոդահոր «Պատմությունից», ազգային էպոսից, Նարեկացու «Մատյանից», Շնորհալու «Ողբից», Մոմիկի խաչքարերից, ապա շարունակվել Խ. Աբովյանի, Բաֆֆու, Հ. Թումանյանի, Ե. Չարենցի, Պ. Սևակի ստեղծագործություններում: Այսինքն՝ արարվել է բոլոր նրանց կողմից, ովքեր ժամանակի մարտահրավերներին համահունչ լուսավորելով Հային՝ հիշեցրել են, որ ինքը **հավատի, արդարության, յուրօրինակության կրող է, այսինքն՝ Հայ, իսկ իր հայրենիքը՝ ՀԱՅՔ, այսինքն՝ հավատի, արդարության, յուրօրինակության, քերթության վայր:** Այս առումով ուշագրավ են Մարդու գոյաբանության հիմնախնդիրը բարձրացրած և բյուրեղացրած Գրիգոր Նարեկացու մոտեցումները, որոնք հետագա շարադրանքում դիտում ենք որպես հայկական քաղաքակրթության բնականոն արդիականացման կենսունակության աղբյուր:

Միանշանակ պետք է ընդունել, որ «հայ ազգային գաղափարախոսությունն արարված է մեր նախնյաց կողմից, և այսօր չպետք է մտատանջվենք ազգային գաղափարախոսության ստեղծումով: Փա՛ռք Աստծո, այն կա... Մտահոգության առարկան այն է, թե տվյալ քաղաքական ժամանակի մեջ տեղեկատվական ձևը, ճշմարիտ և փաստացի

արտահայտելով ազգի ինքնությունը, որքանով է կարողանում արդիականացնել այն՝ իրատեսորեն մոդելավորելով տվյալ քաղաքական գործընթացը»³⁰¹: Ցավոք, մեր պատմական զարգացման մեջ առկա արժեքային համակարգի փլուզումները (պետության կորուստ, նվաճումներ օտարի կողմից, քաղաքական խաղեր, ժամանակավրեպ կամ կեղծ քաղաքական օրակարգ, իշխանության իրականացման ցածր մշակույթ) ստեղծել են տեղեկատվության մարզին ալ ընկալման կառուցակարգեր: Դա էլ տրոհելով՝ հայության ազգային գաղափարակիր «Ես»-ին զրկել է սեփական արժեքաբանության հիմքի վրա հայկական քաղաքակրթությունը բնականոն արդիականացնելու հնարավորությունից և դրդել նրան ճոճվելու Արևելք-Արևմուտք³⁰² բևեռների միջև ընտրություն կատարելու և իրեն այդ բևեռներից մեկում անվտանգ տեսնելու հույսով: Եվ այսպես, «... Եթե Եվրոպայի և Ասիայի սահմանը կարող է փոքր-ինչ տեղաշարժվել այս կամ այն կողմ աշխարհագրագետների, քաղաքական գործիչների և սահմանամերձ տարածքների բնակիչների երևակայության մեջ, ապա Արևմուտքի և Արևելքի սահմանն անհամեմատ ճկուն է և շարժական: Բայց զարմանալին այն է, որ այդ սահմանի տեղաշարժերը կարծես թե առանց հայերի մասնակցության չեն անցնում»³⁰³:

Բայց դա չի նշանակում, որ հայ մարդը ծանոթ չէ պատմության հոլովույթում ձևավորված իր քաղաքակրթության արժեքաբանության հիմքերին: Վերջինս, հայ մեծերի կողմից իր ոգեղեն դրսևորմամբ, քաղաքական աննպաստ պայմաններից ելնելով, ներդրվել է ազգային մտահայեցողության արժեքաբանության մեջ և, որպես միֆ, «Հոգևոր Հայաստանի» ուստպիականացված տեսլականով պարուրային զարգացմամբ անցել է դարերի հոլովույթով և հասել մեզ՝ որպես արդիության մեջ զարգանալու մրցունակ արժեքաբանություն: «Հոգևոր Հայաստանի» գաղափարը միֆաստեղծման և անորոշությունների հաղթահարման առանձնահատուկ արժեքաբանական ֆենոմեն է՝ հայկական ոգեղեն քաղաքակրթության կենսունակության հիմք, որի առկայությունը հնարավորություն է տալիս մեզ վերականգնելու

³⁰¹ Մարգարյան Մ. Մ., Հոգևոր Հայաստանի գաղափարախօսությունը արդիականացման գործընթացում, ԲԱԶՄԱՎԷՊ. -Հայագիտական-բանասիրական հանդես, ՃԿԲ տարի, թիվ 1-4, ՌՆԾԳ, ՌՆԾԴ, ՎԵՆԵՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ, էջ 186-187:

³⁰² Աբրահամյան Լ., «Հայաստանը և հայերը Արևելքի և Արևմուտքի միջև», «21-րդ ԴԱԲ», թիվ 2 (12), 2006, էջ 29-34, http://www.noravank.am/upload/pdf/149_am.pdf (09.10.2018)

³⁰³ Տե՛ս նույն տեղում, էջ 30:

երևոյթների միջև կապը և հստակ պատասխան տալու «Ո՞վ ենք մենք» հարցին: Որպէս այդպիսին՝ հայ սոցիումը իրեն նետած մարտահրավերներին պատասխանելու, ինչո՞ւ ոչ, նաև մարտահրավեր նետելու պատրաստակամությամբ ցանկանում է ուտոպիան իրականություն դարձնել՝ հաղթահարելով քաղաքական զարգացման ճգնաժամերը և բնականոն արդիականանալով՝ ժամանակի հրամայականներին համահունչ: Ասվածի համատեքստում քննադատորեն վերաբերվենք ՀՀ նախկին վարչապետ Ս. Սարգսյանի հետևյալ մտքին. «Մենք ներկայացուցիչն ենք ինչ-որ ժամանակ գոյություն ունեցած եզակի քաղաքակրթության, բայց այսօր ամենին էլ քաղաքակիրթ ազգ չենք»³⁰⁴: Ըստ հեղինակի՝ պատմական հոլովությամբ ձևավորված և զարգացած հայ մշակութային արժեքաբանությունը հասարակական գիտակցության մեջ առկա է որպէս երբեմնի հզոր ու վեհ ժամանակի քաղաքակրթության հայելային (նաև ստվերային) արտացոլում: Այնինչ անկախ պետությանն ուղղված առկա մարտահրավերների բազմաշերտությունից հայ հասարակությունն իր կենսասեր ու ոգեղեն բնույթով եղել և շարունակում է մնալ հայկական լոկալ քաղաքակրթության կրող ու արարող: Այս դիտանկյունից, համոզված ենք, «վազող/հասնող» քաղաքական արդիականացման անորոշությունները հաղթահարելու համար անհրաժեշտ է ստեղծագործական մոտեցում և քննական դիրքորոշում ունենալ սեփական և օտար ժառանգության նկատմամբ: Այդ առումով «Հոգևոր Հայաստանի» նորացումը անցյալի հետ հաղորդակցական պարույրի պահպանման միջոցով «երևոյթները կապի մեջ տեսնելու» հարատև ձգտումն է, որտեղ տարածական ու ժամանակային չափումներով հստակեցված են և՛ վեհ անցյալը, և՛ երբեմնի հզոր հայկական քաղաքակրթության վերածնման ու հզորացման կառուցակարգերը:

Հայկական քաղաքակրթությունն ամփոփում է Հայկական լեռնաշխարհում հայ ժողովրդի ստեղծած հազարամյա նյութական և հոգևոր մշակութային ժառանգությունը, ինչպէս նաև դրա առնչակցությունը հայ հանրույթի ազգային և մշակութային ինքնության տարաբնույթ դրսևորումների հետ: Բրիտանացի պրոֆեսոր Դ. Մ. Լանգը (1924-1991 թթ.), բարձր գնահատելով Հայաստանի քաղաքակրթական նշանակությունը, իր աշխատության մեջ երկու մոտեցում է դիտարկում. նախ քաղաքակրթական

³⁰⁴ Սարգսյան Ս., Հայկական քաղաքակրթությունը՝ որպէս բեկումնային նախագիծ, <http://www.gov.am/files/docs/181.pdf> (09.10.2018թ.)

հետազոտության մեթոդաբանությամբ բացահայտում է Հայաստանի պատմամշակութային պատկերը, ապա, հիմնվելով վաղ բրոնզի դարի հնագիտական պեղումների արդյունքների վրա, դրանք բնութագրում է «հայկական» տերմինով: Իսկ էթնիկական պատմությունը շարադրելիս նա իր հարցադրումներով փորձում է հայերի էթնիկական ծագումնաբանության հարցը լուծել ոչ թե «գաղթի պարզունակ տեսության»³⁰⁵, այլ էթնոմշակութային ժառանգության շարունակականության սկզբունքով՝ ակունքներում տեսնելով առնվազն Հայաստայի ժամանակները³⁰⁶: Քաղաքակրթական չափանիշներով մոտենալով հնագիտական, պատմագիտական և մշակութաբանական տվյալներին՝ Դ. Մ. Լանգը բարձր է գնահատել հին և միջնադարյան Հայաստանում (Մեծ Հայք, Փոքր Հայք, Կիլիկյան Հայաստան) հայ ժողովրդի՝ ճարտարապետության (քաղաքաշինություն, ամրոցաշինություն, տաճարաշինություն և եկեղեցաշինություն), խաչքարային արվեստի և մանրանկարչության, գորգագործության, դրամագիտության, դպրության, գիտության և կրթության (պատմագիտություն, փիլիսոփայություն, տիեզերագիտություն և աշխարհագրություն, աստղագիտություն, մաթեմատիկա) բնագավառներում մշակութակերտ գործունեությամբ համաշխարհային մշակույթի գանձարան ներդրված արգասիքները:

Վերոշարադրյալը հնարավորություն է տալիս հիմնավորելու այն, որ քաղաքակրթությունը քաղաքական ժամանակի մեջ հարափոփոխ և կայուն զարգացող որոշակի արժեքաբանական համակարգ է: Քաղաքակրթության և մշակույթի կապն ու գիտականորեն տարրորոշելը հեշտ չէ: Բանն այն է, որ տարբեր դպրոցների և ուղղությունների ներկայացուցիչներ դրանց տարրորոշման ուրույն մեխանիզմներ են մշակել, որոնք ոչ միայն տարբեր են,

³⁰⁵ Էդուարդ Լ. Դանիելյան, Դ. Մ. Լանգի ներդրումը Հայաստանի քաղաքակրթական ժառանգության արժևորման բնագավառում («Օտարագգի հայազետների ավանդը Հայաստանի հին և միջնադարյան պատմության ուսումնասիրության բնագավառում» գիտաժողով), Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 28 հոկտեմբերի, 2016թ.:
http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15919 (19.01.2019)

³⁰⁶ David M. Lang, Armenia: Cradle of Civilization, London, 1970, p. 9. Դ.Մ. Լանգն իր գիրքը ժամանակագրորեն հասցրել է մինչև 1968թ., երբ «հայ ժողովուրդը տոնում էր Երևանի հիմնադրման 2750-ամյակը... Այս հոբելյանին մասնակցեցին հազարավոր հայեր ամբողջ աշխարհից, և այն վերածվեց ազգային հպարտության և համերաշխության տարերային դրսևորման: Այդ ամենը լավագույնս կանխատեսում է այս հիասքանչ ժողովրդի և նրա՝ մեծ վնասներ կրած, սակայն հավերժ սրբազան երկրի՝ իրոք մարդկության քաղաքակրթության բնօրրանի ապագա ճակատագիրը» (David M. Lang, Armenia: Cradle of Civilization, London, 1970, p. 296):

այլև շատ հաճախ՝ իրարամերժ: Այսպիսով՝ մենք, առանց ներքաշվելու քաղաքակրթություն-մշակույթ գիտական սահմանումների հակասականության և անհամադրելիության տիրույթ, փորձել ենք մեր տեսությունը համադրել քաղաքակրթությունների էվոլյուցիայի մասնագետ, ամերիկացի պատմաբան Ք. Քուիգլիի տեսակետի հետ: Վերլուծելով քաղաքակրթությունների էվոլյուցիայի մասին իր հայեցակարգը՝ Ք. Քուիգլին գրում է, որ «մշակույթը հիմնավորապես զատված չէ մարդ էակից՝ մի կողմից, շրջակա միջավայրից՝ մյուս կողմից»: Ք. Քուիգլին առանձնացնում է նաև արտաքին մշակույթ, ինչը, ըստ նրա, «բաղկացած է մարդկային հարաբերությունների ցանցերից, հստակ գործիքներից, որոնք սկզբնավորվում են հաղորդակցության կամ արտահայտման սիմվոլներից»³⁰⁷: Մեր համոզմամբ, մշակույթի այս սահմանումից էլ անհրաժեշտ է բխեցնել «հայկական քաղաքակրթություն» եզրը: Այսինքն՝ հայ ժողովուրդը (մարդը), գիտակցելով իր արդիականացման հրամայականները, չպետք է իր գոյատևման ու ապագայի տեսլականի հիմքում դնի միայն նյութական Հայաստանի գաղափարը. «Հակառակ դեպքում մենք կնմանվենք մեր տգետ հայ բուրժուային, որ առատ ձեռքով նվիրում է իր ոսկին դպրոցական շենքեր կառուցելու, առանց երբևիցե մտածելու, թե ինչպիսի՞, ի՞նչ դպրոց է լինելու այդ շենքի մեջ, թե վերջապես դպրո՞ց է լինելու դա... Ով լոկ շենքերի մասին է մտածում, նա «չգիտի ինչ է անում»³⁰⁸:

Այսօր, տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման պայմաններում, երբ առավել քան ակնհայտ է սպառողական հասարակության պերճանքն ու թշվառությունը, **«Հոգևոր Հայաստանի» գաղափարի այժմեականացումը դարձել է Հայի ինքնության մրցունակ արդիականացման հրամայական**: Հետևաբար հիմնավորվում է այն տեսակետը, որ քաղաքակրթական չափումը ռազմավարական կառավարման ապահովման հիմքն է, քանի որ **քաղաքակրթություն-ինքնություն-քաղաքականություն** կապի բազմաչափության շնորհիվ է քաղաքակրթական տեքստի ուսումնասիրությունը, մեր համոզմամբ, հանգեցնում նաև դրա քաղաքական բնականոն արդիականացմանը: Այս համատեքստում

³⁰⁷ Carroll Quigley, The Evolution of Civilizations: An Introduction to Historical Analysis, Liberty Fund, Inc.; 2nd edition, 1979, pp. 64-65.

³⁰⁸ Տեղյան Վահան - Երկեր [Բանաստեղծություններ, գրականագիտական հոդվածներ, նամակներ: Առաջաբանը՝ Է. Մ. Զրբաշյանի].- Եր., «Սովետական գրող», էջ 346-347:

կարևորում ենք **գաղափարախոսություն-ինքնություն-արժեքաբանություն** եռաչափության մեջ հետագա ուսումնասիրությունների իրագործումը, ներառյալ սույն աշխատանքը՝ հայկական ինքնության մրցունակ արդիականացման բովանդակային գիտահետազոտական անդրադարձ ունենալու ակնկալիքով: Այսպես, որքան էլ ազգային արժեքների ու գաղափարախոսության և դրա տարատեսակ դրսևորումների կամ պիտակավորումների, օրինակ՝ ազգայնականության կամ ազգային ինքնիշխանության, քաղաքակրթական ինքնության գաղափարաբանական չափման վերաբերյալ տարաբնույթ գիտական մեկնաբանություններ լինեն, հստակ է, որ **ազգային-համաշխարհային, ազգային ինքնություն-արդիականացում** հարաբերություններում կարելի է հենվել **ինքնության, ազգայնականության, գաղափարախոսության** տեսական ձևակերպումների ու սահմանումների վրա՝ բանաձևեր դուրս բերելու նպատակով: Սույն աշխատանքի տրամախոսության տեսակետից քննվող խնդրի բազմակողմանի դիտարկման նպատակով ներկայացնենք բրիտանացի քաղաքագետ Ա. Ֆինլեյսոնի ազգայնականության համեմատական սահմանումը, որը հատկանշական է նաև մեզ համար. «Չկան ազգայնականության երկու այնպիսի տեսակներ, որ նույնական լինեն: Սա չափազանց աչքի զարնող է, բայց հաճախ անուշադրության է մատնվում ընդհանրական ճշմարտության որոնումներում: Ըստ էության, Ֆրանսիայում և Անգլիայում ազգայնականությունը պետք է տարբեր լինի, քանի որ մեկն առնչվում է ֆրանսիականության, մյուսը՝ անգլիականության ինչ-որ պատկերացման (notion) հետ»³⁰⁹: Բնական է, որ անգլիականության և ֆրանսիականության օրինակները տարածվում են բոլոր մյուս քաղաքական ազգերի, ժողովուրդների ոչ միայն ազգայնականության վրա, ինչի սահմանումների կամ կիրառության մանրամասներին անդրադարձը դուրս է սույն աշխատանքի ծիրից, այլև ազգային ինքնության, արժեքաբանության և, որ մեզ համար ամենաէականն է, քաղաքակրթական ինքնության վրա: Դժվար է պատկերացնել այն ֆրանսիացուն կամ անգլիացուն, հետևաբար նաև հային, հույնին կամ մեկ այլ ազգի ներկայացուցչի, որը որպես ազգայնականության հիմք է դիտարկում իր ինքնության մշակութային ինքնատիպության գիտակցումը, սակայն հանրային մակարդակում այն դուրս է մնում արդիականացող ազգային

³⁰⁹ Alan Finlayson Ideology, discourse and nationalism, Journal of Political Ideologies, 3:1, 1998, p. 100. https://www.researchgate.net/publication/233246088_Ideology_Discourse_and_Nationalism

ինքնության քաղաքակրթական չափումից՝ անկախ անհատի քաղաքակրթվածության մակարդակից: Հետևաբար կարելի է պնդել, որ մշակութային ու հոգևոր արժեքների համալիրը իր ողջ ներկայակերպով արտացոլվում է ոչ միայն հանրության մշակութաբանական-արժեքաբանական ինքնորոշման զանազան չափումների վրա, այլև ազգային ինքնության և քաղաքակրթական տեղորոշման: Ահա այստեղ է այն հանգույցը, որը կապում է Հին Հայաստանի՝ Հայկի ոգեղեն ինքնությունը **«Հոգևոր Հայաստանի»** գաղափարի հետ: Մեր ընդհանրական նպատակն է վեր հանել այն խորքային կապերը, որոնք հայկյան ինքնության՝ հայկականության վերաբերման, արդիականացման հիմքով կարող են «Հոգևոր Հայաստանի» հայեցակարգը դարձնել համընդգրկուն գաղափարախոսություն: Հետևաբար անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ գաղափար-գաղափարախոսություն տարբերակման մեր սուբյեկտիվ ընկալումներին՝ պայմանավորված սույն հետազոտության նպատակների գիտական հիմնավորումներով: Այսպես, Չիկագոյի համալսարանի սոցիոլոգ Ջոն Մարտինը գրում է. «Ժողովրդավարացման գործընթացում մեզ հետաքրքրում է քաղաքական գաղափարախոսությունը, ինչը նշանակում է, որ մի կողմից մենք այն պիտի տարբերենք նրանից, ինչը կարող է համարվել գաղափարախոսություն ընդհանրապես, իսկ մյուս կողմից՝ ոչ գաղափարաբանական քաղաքական հավատամքներից (beliefs): Թեպետ որոշ տեսաբաններ կարող են փաստարկել, որ ցանկացած գաղափարախոսություն, ըստ էության, քաղաքական է, սակայն «քաղաքական» բառի ավելի նեղ, ընդհանուր հավանության արժանացած (consensually defined) կիրառություն կա հատկապես ժողովրդավարական երկրներում: Այն վերաբերում է այն գործընթացներին և կազմակերպություններին, որոնք ձգտում են վերահսկելու պետական մեքենան...»³¹⁰:

Ջոն Մարտինի հայեցակարգային մոտեցումը ժողովրդավարական հասարակությունում քաղաքական գաղափարախոսությանը համադրելի է սույն աշխատության նպատակներից բխող մեր մեկնաբանության հետ, այն է՝ **«Հոգևոր Հայաստանի» գաղափարը** այն տեսլականն է՝ արժեքաբանական ուղենիշը, որը կարող է դառնալ քաղաքական ինստիտուտների կառավարման ոգեղենությունն ապահովող խթան: Նկատի ունենալով, որ

³¹⁰ John Levi Martin; What Is Ideology? SOCIOLOGIA, PROBLEMAS E PRÁTICAS, n.º 77, 2015 pp. 9-31. <http://home.uchicago.edu/~jlmartin/Papers/What%20is%20Ideology.pdf>

«Հոգևոր Հայաստան» ունի խորքային քաղաքական-քաղաքակրթական նշանակություն, բայց ինստիտուցիոնալ իմաստով չունի պետական մեքենան վերահսկելու նկատառում, նախընտրում ենք այն դիտարկել որպես կառավարման ոգեղենության արժեքաբանության վրա ձևավորված և կենսունակությունը դարերի հոլովությամբ պահպանված գաղափար՝ ազգային գաղափարախոսության համատեքստում: Այսպես, միավորելով քաղաքական գաղափարախոսության³¹¹ վերաբերյալ մեր պատկերացումները ազգային ինքնության մշակութափոխան ինքնատիպության մեր համոզմունքների և գիտականորեն ընդունված տարրորոշող չափանիշների հետ՝ փորձենք հասկանալ, թե որքանով են վերոբերյալ դիտարկումները տեղավորվում հայկական ինքնության արդիականացման հրամայականի և **Արևելք-Արևմուտք** քաղաքակրթական չափումներում: Այս հանգուցային կետում մի կողմից գլոբալ միջքաղաքակրթական հարաբերությունների և դրանց ժամանակային պարույրի մեջ հայկական քաղաքակրթության դերի նկարագրությունը, մյուս կողմից Հայկի և նրա սերունդների ինքնության արդիականացման հնարավոր ուղիների խաչմերուկում արված վերլուծությունը մեզ օգնում են եզրահանգումներ կատարելու և ուղենշելու՝ հայկական քաղաքագիտական մտքի զարգացման առաջնահերթությունները՝

³¹¹ Քաղաքական գաղափարախոսության բազմակողմանի քննարկումների և սահմանումների առատությունը վկայում է, որ այն միշտ էլ գտնվում է հասարակագետների ուշադրության կենտրոնում: 2009 թվականին Նյու Յորքի համալսարանի, ինչպես նաև Մինեսոտայի համալսարանի քաղաքագետների և հոգեբանների հրապարակած ուսումնասիրության մեջ ապացուցվեց քաղաքական գաղափարախոսության բազմազանության և համընդհանուր ընդունելի սահմանումների բացակայությունը: Գաղափարախոսության սահմանումների հստակությունից զատ, այն խնդրահարույց է նաև հանրության արժեքաբանական-գաղափարախոսական կողմնորոշումների տեսանկյունից: Հանրության ընկալումների տեսակետից վերլուծելով գաղափարական կողմնորոշումների **ավանդական ձախակողմյան և աջակողմյան** տարանջատման եզրերը նրանք գրում են. «Ուսումնասիրողներն ընդհանուր առմամբ համաձայն են ձախերի և աջերի պատմական ու փիլիսոփայական բաժանման հետ, և հասկանալի է, որ կառավարությունում, կուսակցական և ակտիվիստների կազմակերպություններում, մեղիայում, ակադեմիական տիրույթում համեմատաբար հեշտությամբ ու հաճախակի են օգտվում քաղաքական դիսկուրսի և որոշումների ընդունման այս չափումից: Այնուամենայնիվ, Կարիբյան ճգնաժամից հետո սկսեցին թերահավատ վերաբերվել քաղաքացիների կողմից կիրառվող գաղափարական կողմնորոշումներին՝ կապված ձախերի և աջերի հետ, որպեսզի կանոնավորեն իրենց քաղաքական հայացքները... Առաջնային նշանակություն ստացավ մարդու և բնության էկոլոգիան» (John T. Jost et al.; Annu. Rev. Psychol. 2009. 60:307–37; p.311

<https://www.psych.nyu.edu/jost/Political%20Ideology%20structure,%20functions,%20and%20elective%20a.pdf>

պայմանավորված ինքնության և քաղաքակրթական ինքնորոշման հույժ կարևոր խնդիրների այժմեականությամբ: Այս անելու հնարավորություն ենք ստանում՝ հենվելով Կառլ Յունգի անգիտակցականի և սիմվոլների մեկնաբանության վրա. «Քանի որ կան բազմաթիվ երևույթներ, որ դուրս են մարդու հասկացողությունից (understanding), մենք մշտապես գործածում ենք սիմվոլներ այն հասկացությունները ներկայացնելու համար, որոնք մենք չենք կարող սահմանել կամ ամբողջությամբ ըմբռնել»³¹²: Յունգի այս մեկնաբանությունը տարածելով քաղաքական-քաղաքակրթական ինքնորոշման անհրաժեշտության մեր մտապատկերի վրա՝ հնարավորություն ենք ստանում սիմվոլների միջոցով տեղորոշելու հայկական ինքնությունը **անցյալ-ներկա-ապագա** եռաչափության մեջ և համակարգելու **Արևմուտք-Արևելք** քաղաքակրթական արեալում: Միննույն ժամանակ քննական մոտեցում ցուցաբերելով հայկական ինքնության վրա գլոբալ քաղաքականության, քաղաքակրթությունների բախման կամ երկխոսության հետևանքների ու ազդեցությունների նկատմամբ՝ կարող ենք առկա մարտահրավերներին պատասխանելու հնարավոր բանաձևեր դուրս բերել՝ դիտարկելով արտաքին ու ներքին փոփոխությունների բացասական ազդեցությունը: Այլ կերպ ասած՝ սիմվոլիզմի մշակութաքաղաքակրթական-քաղաքագիտական վերլուծությունը ճանապարհ է հարթում հայկական ինքնության բոլոր շերտերի կենսունակության բացահայտման համար: Կենցաղային, կրոնական, մշակութային, գրական և քաղաքական տեքստերի վերլուծությունը հենց այն փրկողակն է, որը կանխատեսում է վտանգների առաջացումը և **ապահովում անցումը մարտահրավերներին պատասխանող հարացույցից մարտահրավերներին պատասխանող ու մարտահրավերներ նետող հարացույցի**: Ուստի անհրաժեշտ ենք համարում նորովի վերացարկելու ինքնության արդիականացման և ազգային արժեքները քաղաքագիտորեն ձևակերպելու անհրաժեշտությունը: Այս պարագայում մշակութային-քաղաքական տեքստերը, ազգային սիմվոլները կարող ենք դիտարկել որպես պատմության հոլովույթում կերպավորված և արժեքաբանական ընդհանրական կաղապարների միջոցով գտված ու ձևավորված ենթագիտակցականի արգասիք: Հենց դրա վրա էլ հիմնվելով՝ այդ տեքստերից

³¹² Юнг Карл Густав. Человек и его символы.- Пер. И.Н. Сиренко, С.Н. Сиренко, Н.А. Сиренко,- М.: Серебряные нити, 2006. с. 15

դուրս կրերվեն բանաձևեր, որոնց օգնությամբ հնարավոր կլինի անցնել մարտահրավերներ նետող հարացույցին: Այս համատեքստում միասնության մեջ հնարավորություն կունենանք դիտարկելու նախ ինքնակառավարման և ինքնավերահսկման, ապա քաղաքակրթական ինքնօրինակությունից մինչև մարդկային անվտանգության արդիականացման³¹³ և հայկական սփյուռքի ազգային ինքնության պահպանման հիմնախնդիրները: Հանրագումարենք. Հայկական քաղաքական-քաղաքակրթական ինքնորոշման հույժ կարևորությունը ՀՀ ներքին և արտաքին մարտահրավերների համատեքստում մեծացնում է իր կշիռը՝ նպաստելով ինքնության արդիականացման հարացույցի այնպիսի փոփոխությանը, որն ինքն է մարտահրավեր նետում ժամանակի ու տարածության մեջ իրեն մարտահրավեր նետած երևույթներին: Փաստորեն այս փոխադարձությունն էլ դառնում է ազգային ենթագիտակցականի՝ սիմվոլները և քաղաքական-մշակութային տեքստերն արդիականացնող և ազգային ինքնությունն ու արժեքներն ամրապնդող շարժիչ ուժը:

5.1. Ոգեղենությունը՝ որպես հայկական քաղաքակրթությունը համակարգող ամբողջություն

³¹³ Արագ փոխվող, փոխազդեցությունների ոլորտում էվոլյուցիայի ենթարկվող աշխարհակարգի պայմաններում մարդկային անվտանգությունն աճող կարևորություն ունեցող գործոն է: Հայն իր անկախ պետականության կերտման ճանապարհին անհրաժեշտաբար պետք է զուգամիտի արտաքին և ներքին անվտանգության խնդիրները մարդու անվտանգ, ստեղծարար և երջանիկ գործունեության համար անհրաժեշտ կենսոլորտի ապահովման միջավայրում: Այս իմաստով մարդկային անվտանգության մեր պատկերացումները համընկնում են Ռոտերդամի «Էրազմուս» համալսարանի պրոֆեսոր Դես Գասպերի (Des Gasper) սահմանման հետ. «Մարդկային անվտանգությունը քննարկվում է տարբեր մակարդակների (scale) վրա՝ տարբեր աստիճանի (scope) սպառնալիքների վերաբերյալ: Շարժվելով ավելի ընդգրկուն սահմանումներից դեպի ավելի նեղը՝ այն կարելի է դիտարկել որպես մարդ տեսակի (human species) անվտանգություն կամ մարդ անհատների (human individual) անվտանգություն: Վերջինիս շրջանակում այն կարող է կենտրոնանալ անհատներին ուղղված սուր, առաջնահերթ վտանգների վրա՝ դատելով, օրինակ, բարոյական ազդեցությամբ (morality impact) կամ զգացվող անհանգստության (felt disquiet) աստիճանով: Խիստ առաջնահերթ սպառնալիքները երբեմն սահմանափակվում են ցանկությունից ազատության (freedom from want) կամ ահից ազատության (freedom from fear) կամ էլ անգամ միայն վերջինիս մտահոգությամբ»: Des Gasper: The Idea of Human Security: January, 2010; p. 25

<https://www.researchgate.net/publication/289025826> The idea of human security

Քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափմանը ներկայացվող այժմեական պահանջները իրենց բազմազանությամբ ենթադրում են **ոգեդեմոկրատիայի** ուսումնասիրություն: Արդիականացման քաղաքակրթական փորձի (խորհրդային, «երրորդ ալիքի», «գունավոր», «թավշյա» հեղափոխություններ) հանրագումարը ակնհայտ է դարձնում, որ պետական կառավարման ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ ժողովրդավարացումը կարելի է ապահովել միայն ոգեդեմոկրատիայի հիմքի վրա զարգացող ազգային արժեքների իմացության դեպքում: Այդ իմաստով էլ առանձնապես ուշադրության է արժանի նախ քաղաքական զարգացման ընթացքում ոգեդեմոկրատիայի արժեքների հարատև և բնականոն արդիականացման ապահովման, ապա՝ համընդհանուր քաղաքակրթության հետ ունեցած տարաբնույթ իտեգրացիոն կապերի հարաբերության հիմնախնդիրները:

Ոգեդեմոկրատիայի պատմության հոլովությունում ձևավորված հանրային համակեցության կազմակերպման (արժեքային կոդմոնոքիզների հաշվառման՝ «մշակութային սուրբ պատ») գործընթացների հանրագումարն է, և, որպես այդպիսին, ներառում է գիտակցության մեջ տեղի ունեցող փոփոխությունների և երևույթների գնահատման ամբողջականությունը. ի՞նչ են անում և ինչպիսի՞ կենցաղ ունեն մարդիկ: Այս հանգամանքով պայմանավորված՝ ոգեդեմոկրատիան ինչպես հասարակության, այնպես էլ անհատի, անձի կայացման գերակա արժեք է: Այն բնորոշ է բարեկրթություն, մեծահոգություն, առաքինություն, զգայական և վարքաբանական բարձր հատկանիշներ ամբարած մշակույթ կրող և արարող մարդկանց, հանրություններին և էլիտար խմբերին: Լինելով բազմաչափ երևույթ՝ ոգեդեմոկրատիան ունի բարոյական, քաղաքական, կրոնական, քաղաքակրթական դրսևորումներ, որոնք, որպես հարաբերական անկախ մեծություններ, ներդաշնակում են ռացիոնալը և իռացիոնալը: Ավելին, ոգեդեմոկրատիան անհրաժեշտ է դիտարկել որպես մարդկային գործունեության առարկայական բաղկացուցիչների բացահայտման, անձի ինքնաշահադրման հնարավորություն: Առաջարկվող մոտեցումը հնարավորություն է տալիս երևույթը հիմնավորել որպես հանրային համակեցությունն արդիականացնելու գործընթաց:

Ոգեդեմոկրատիայի այսպիսի ընկալման դեպքում առաջնային է դառնում մարդու գործունեության որակը և այդ որակի ապահովման նպատակով

համակեցության ընդարձակման, համագործակցության, բանակցությունների գիտակցված կարևորումը:

Գիտական գրականության մեջ առկա են «ոգեդեներություն» եզրույթի տարբեր բնորոշումներ, որոնք ընդգծում են եզրույթի այս կամ այն բաղադրիչը: «Ոգեդեներություն» ընդունված է դիտարկել որպես անհատի մտավոր-ստեղծագործական հիմնական ներուժ: Այստեղ վեր են հանվում այնպիսի բնորոշիչներ, ինչպիսիք են «ճշմարտության ձգտումը» (իմացաբանական պահանջ), արարման ձգտումը՝ հանրային բարեկեցության աճի համար («ուրիշի համար» այլասիրության ձգտում՝ **Ագապէ**), զարգացած զգացմունքայնությունը, կարեկցելու կարողությունը, մտորումները կյանքի իմաստի վերաբերյալ, հոգևոր հարստությունը: Ոգեդեներությունն ունի այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են մարդու վերաբերմունքը գիտելիքի նկատմամբ, աշխարհում սեփական դերը գիտակցելը, ինչպես նաև կամայնության միջոցով վերաձևավորվելու և վերստեղծվելու ձգտումները: Ոգեդեներությունը հասարակության գիտակցության զարգացման հիմքն է՝ գիտություն, արվեստ, բարոյականություն, որոնք փոխկապակցված են հասարակական գիտակցության ստեղծարար ձևերի կայացման հետ՝ փիլիսոփայություն, կրոն, իրավունք, քաղաքականություն և այլն: Փաստորեն, ոգեդեներությունն կուտակում է համամարդկային արժեքները: Որպես այդպիսին՝ այն անհատի, ազգի, հասարակության կայացման և արդիականացման անսպառ աղբյուր է: Ամերիկացի սոցիոլոգ Պ. Սորոկինը³¹⁴ ոգեդեներությունը բնորոշում է որպես անհատի արժեքաբանական մոտեցում՝ աշխարհի հանդեպ արժեքների կերտման, պահպանման և արխիվացման ճանապարհով: Համաձայնելով Պ. Սորոկինի հետ՝ նշենք, որ ոգեդեներությունը՝ որպես արարիչ գործունեության հիմք, սոցիալական, հասարակական, բարոյական, կրոնական, էկոլոգիական, վարքաբանական միջմշակութային համագործակցության նորմատիվների համակարգ է: Այն թույլ է տալիս հասնել որոշակի իմաստային, իմացաբանական մակարդակի, ինչի շնորհիվ անձն իր բարոյական նորմերը համադրում է աշխարհի կերպարին: Մենք ոգեդեներությունը դիտարկում ենք որպես մշակութաքաղաքակրթական

³¹⁴ Сорокин П. А., Социальная и культурная динамика: Исследование изменений в больших системах искусства, истины, этики, права и общественных отношений / пер. с англ. В.В. Сапова. СПб.: РХГИ, 2000. 1054 с. Сорокин П.А. Тайнственная энергия любви // Социологические исследования. 1991. № 8. С. 121–137.

Ֆենոմեն, որը գոյության, իսկության ճանաչման, իրականության գնահատման և արարման առանձնահատուկ ձև է: Որպես այդպիսին՝ դրա շրջանակներում էլ պատմության հոլովությունը ըստ հրամայականի ձևավորված և բնականոն արդիականացող սիմվոլիկ, իմաստային բաղադրիչը բնորոշում է երևույթների մշակութաքաղաքակրթական մակարդակը գոյության ֆիզիկական, մարդաբանական և հասարակական ձևերում: Իմաստի մշակութաքաղաքակրթական արժեքաբանությունը կերպափոխում է հանրային ու քաղաքական երևույթների բնույթը:

Կարևորելով իմաստը որպես ցանկացած փոփոխականի հիմնական պայման և դիտարկելով այն որպես ինքնին սինգուլյարություն՝ Ժ. Դելյոզը նշում է. «Եթե որպես սինգուլյարություն հանդես են գալիս փոփոխական իրողությունները, ապա նրանք հաղորդակցվում են նույն իրադարձության շրջանակներում, որն անվերջ վերաբաշխում է այն, իսկ նրանց կերպափոխումը ձևավորում է պատմությունը»³¹⁵:

Փաստորեն, իմաստային համակարգերի ձևավորումը, զարգացումը և արդիականացումը սինթեզում են երևույթների ամբողջականություն՝ բնորոշելով ոգեղենությունը: Իմաստաբանական համապատասխանության փնտրտուքը ներթափանցում է երևույթի խորքերը, որի հիմքը հումանիզմն է՝ բոնության բացակայության, արդարության գաղափարի, մարդու գիտակցական մակարդակի և բոլոր այն արժեքների բնութագրիչներով, որոնք նպաստում են մարդկային համակեցության զարգացմանը: Տվյալ երևույթը ժամանակի և տարածության մեջ ունեցել է իր դրսևորման առանձնահատկությունները: Օրինակ՝ միջնադարյան եվրոպական հասարակության գաղափարական հիմքը քրիստոնեությունն էր, իսկ մարդու գոյությունը, ողջ էությունը, նրա հոգևոր հիմքերը բնորոշվում էին եկեղեցական դոգմաների անժխտելիությամբ, կրոնական ծիսակարգերի և պատվիրանների անվերապահ իրականացման անհրաժեշտությամբ: Պատմության հոլովությունը սերտված հենց այս վարքաբանական նորմերով է պայմանավորված նաև իրավունքի գերակայությունը՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորման և համակեցության պահպանման անժխտելի պայման: Վերոնշյալից ցանկացած շեղում հասարակության մեծամասնության կողմից ընկալվում էր որպես շեղում համընդհանուր արժեքներից, ինչն էլ պախարակելի և պատժելի էր:

³¹⁵ Делёз Ж. Логика смысла /Пер. с фр. Я. Свирского, М.: Академический Проект, 2011, с. 76.

Վերածննդի դարաշրջանում ոգեղենությունն արժևորեց մարդուն և նրան օժտեց իր հնարավորությունների և ուժերի նկատմամբ անսպառ հավատով:

Մարդկային գործունեության ցանկացած ձև կրում է ոգեղենության դրոշմը: Մարդու գործունեությունն ու ոգեղենությունը անխախտելի միասնություն են, քանի որ «Ես»-ի ինքնաճանաչողությունը, ժամանակի և տարածության մեջ իր տեղի գիտակցումը տեղի են ունենում ոգեղենական արժեքների առարկայացման միջոցով: Փաստորեն, ոգեղենությունը ոչ միայն արժեքների, նորմերի, նպատակների ամբողջություն է, այլև մոտիվացիայի, գիտակցության տարբեր մակարդակների և տարբեր ոգեղեն վիճակների համակարգ՝ ինքնության հիմք: Ոգեղենությունը՝ որպես մարդու գործունեության պարուրային արդիականացման գործընթաց, հիմնվում է ոչ միայն մշակույթի, գիտելիքի, գիտակցության, սոցիալական փորձի, այլև մարդու կողմից իրականությունը ստեղծագործաբար իմաստավորելու վրա: Փաստորեն, ոգեղենությունը համընդհանուր արժեքների հիման վրա համախմբում է «Ես»-ի գոյության բոլոր շրջանակները՝ նպաստելով ժամանակային բազմաչափությամբ հագեցած ստեղծարար սկզբի ինքնադրսևորմանը: Կարևորելով ժամանակի եռաչափության համարժեք գիտակցումն ու արժևորումը կայացման պարույրում՝ Ժ. Դեյոզը նշում է. «Միայն ներկան գոյություն ունի ժամանակի մեջ, իսկ ժամանակը հավաքում և հեռացնում է անցյալն ու ապագան, սակայն միայն անցյալն ու ապագան են, որ համառում են ժամանակի մեջ և անվերջ տրոհում ցանկացած ներկա»³¹⁶:

Այս դիտանկյունից ոգեղենությունը ինքնակերտման սկզբունք է և կոչված է փոխակերպելու արժեշահային կողմնորոշիչները, ինքնությանը ուղղված մարտահրավերները՝ վերլուծելով այն ամենը, ինչն ուղղված է անվտանգության ապահովմանը և տեղի չի ունենում բնական-կենսաբանական ճանապարհով: Այս երևույթն ընդգծված էթնոագգային հիմք ունի, քանի որ, լինելով արտաքին և ներքին աշխարհների հանրագումար, ինքնությունն ազդում է ոչ միայն անհատի ինքնանույնականացման, այլև ազգային մտահայեցողության միջոցով փոխակերպվող աշխարհի մարտահրավերներին համահունչ պատասխանելու հրամայականների վրա: Ազգային մտահայեցողությունը բարդ և բազմաբնույթ հասկացություն է և,

³¹⁶ Делёз Ж., Логика смысла /Пер. с фр. Я. Свирского, М.: Академический Проект, 2011, с. 14.

որպես այդպիսին, ստեղծվում է որոշակի էթնիկական հանրության պատմական զարգացման ընթացքում, այն իրադարձությունների, պարտությունների և հաղթանակների ազդեցությամբ, որոնք հոգեբանորեն ձևավորել են նրան: Եթե տվյալ ազգն իր մտահայեցողությունը ձևավորել է բռնությամբ՝ տեղի դառնալով ուրիշի տարածքներին, հոգևոր արժեքներին, ապա դա իր կնիքն է դնում նրա կողմից իրականացվող իշխանության վրա: Նման դեպքում տվյալ ազգի մտահայեցողության մեջ գերիշխող է դառնում այն հոգեբանությունը, թե բռնությունը և այլ ազգերի վրա գերիշխանություն հաստատելը իբր իրենց ի վերուստ տրված իրավունք է՝ պատմական առաքելություն: Քաղաքական զարգացումը այսպես են ընկալել և այժմ էլ այդպես են ընկալում այն ազգերի ներկայացուցիչները, որոնց մտահայեցողությունը հիվանդ է կայսերական ախտանիշով³¹⁷: Նրանք, քաղաքական ժամանակի մեջ անհրաժեշտորեն օգտագործելով մարդասիրական գաղափարները, կարող են այդ գործընթացը վարել մարդու իրավունքների, իրավահավասարության և ժողովրդաիշխանության սկզբունքներից ելնելով, չնայած համոզված են, որ միայն ուժն է ծնում իրավունք, և հենց այդ դրույթից ելնելով էլ՝ արդիականացում են իրականացնում: Այս առումով մտահայեցողությունը հնարավորություն է ստեղծում հաշվի առնելու ազգի «Ես»-ի լինելիության առանձնահատկությունները իր կողմից իրականացվող քաղաքական իշխանության արդիականացման կառուցակարգում: Փաստորեն, ազգային մտահայեցողությունը ենթադրում է կենսագործունեության այնպիսի ձևերի ամբողջություն, որոնք կարելի է ազատորեն ընտրել տվյալ իշխանության սահմաններում՝ **պահպանելով ոգու հաղթանակի կարողությունը ընդդեմ ազգային և օտար, բիրտ ինքնիշխան ուժի և համահարթեցման:**

Հանրագումարենք. ազգային մտահայեցողությունը երկու ակունք ունի: Մի կողմից այն աշխարհագրական միջավայրի, պայմանների ու պատմականորեն կուտակված մարդաբանական տվյալ տեսակի զարգացման հետևանք է և դրսևորվում է որպես աշխարհաճանաչողության առանձնահատկություն: Մյուս կողմից իշխանության իրականացման մշակույթի, այլ ժողովուրդների հետ շփվելու միջոցով վերցրած և

³¹⁷ Кеннеди Пол., Вступая в XXI век. пер.с англ., М.: Весь мир 1997г. 480 с.; Кеннеди Пол.- Взлеты и падения великих держав, Пер.: Евгений Калутин, Максим Андреевич Леонови, М.: изд. ГОНЗО, 2018, 848с

վերարժևորած ավանդույթների, սովորույթների և գաղափարների ամբողջությունն է: Հետևաբար ազգային մտահայեցողությունն ամփոփում է տվյալ ազգի ծագումնաբանությունը, նրա տեղն ու դերը աշխարհի սոցիո և էթնոմշակութային կառուցվածքում՝ ի մի բերելով նրա կողմից կուտակված նյութական և հոգևոր արժեքների վերարտադրության փորձը և ապահովելով տվյալ քաղաքակրթության արժեքաբանական համակարգի կենսունակությունը:

Դրանով իսկ ազգային մտահայեցողությունը որոշակի կնիք է դնում և՛ քաղաքացու, և՛ կուսակցական առաջնորդի, և՛ քաղաքական էլիտայի, լիդերի իշխանության իրականացման մշակույթի վրա: Որպես այդպիսին՝ ազգային մտահայեցողությունը իբրև համակարգող ամբողջություն գործում, կուտակվում և արդիականանում է պատմական հոլովույթի ընթացքում ձևավորված, տարբեր մակարդակներում դրսևորվող իշխանության իրականացման մշակութաքաղաքակրթական նորմերի մեջ: Վերջինս պատմության հոլովույթի մեջ ընկալելու և ուսումնասիրելու անհրաժեշտությունը պահանջում է ճանաչել ոչ միայն նրա անցյալը, այլև ներկան և երագել ապագայի մասին:

Քաղաքակրթության փորձն ապացուցում է, որ պատմականության զգացումը հնարավորություն է ընձեռում հանրույթին արժևորելու իրականությունը ոչ միայն իր կողմից իրականացվող իշխանության բովանդակության արժեքային ժառանգությամբ, այլև այն գիտակցությամբ, որ քաղաքակրթական տեքստում արժեքային համակարգն իր քաղաքական էությամբ ունի էթնոպաշտպան նշանակություն: Վերջինս էլ օրինաչափորեն հարատևող կարգ է ապահովում իշխանության արդիականացման գործընթացում: Առկա կարգը կատարյալ է մինչև քաղաքական արժեքի վերարժևորումը, բայց քանի որ արժեքային համակարգում կարգը պիտի պահպանվի ցանկացած նորույթի ներմուծումից հետո էլ, ապա առկա կարգը փոփոխության է ենթարկվում (թեկուզ՝ երբեմն խիստ աննշան)՝ ազգային մտահայեցողական արժեքները համադրելով ամբողջի հետ՝ **արքետիպերը**³¹⁸

³¹⁸ **Արքետիպ (հուն. ἀρχέτυπος (archetupos) նշանակում է «առաջինը ձևավորված»).** ըստ Կ. Գ. Յունգի՝ արքետիպը ներառում է այնպիսի կերպարների նախնական ձևի ենթագիտակցական վերարտադրում, որոնք ապրիորի խթանում են երևակայության ակտիվությունը: Որպես բազմամակարդակ ոգեղեն տարածք՝ արքետիպը դրսևորվում է կոլեկտիվ

պահպանելու ակնկալիքով: Կարգի նմանօրինակ ընկալումը վկայում է այն մասին, որ ներկան պիտի վերափոխի անցյալը այնչափ, որչափ անցյալն է կառավարում ներկան: Ահա ավանդույթի և արդիականացման փոխներդաշնակման տրամաբանության մեխանիզմը՝ ազգային մտահայեցողության դերը՝ որպես **հայկական քաղաքակրթությունը համակարգող ամբողջություն:** Պատմականության այս ընկալումն ամենասուր կերպով զգացվում է այն դեպքում, երբ փորձում ենք հստակեցնել ազգային մտահայեցողության տեղը քաղաքակրթական ժամանակի մեջ: Վերջինս անընդհատ **վերակառուցվածքավորվում է**, քանի որ էթնոսը որպես ժամանակի հոլովույթում ձևավորված նպատակադրում մասնակցում է այդ արժեքաստեղծ ոգեղեն գործընթացին և՛ որպես քաղաքականության, և՛ որպես քաղաքակրթության դերակատար: Եվ նրա համար ապագան դառնում է տեսանելի, էթնոազգային մշակույթով արժևորված կենսահենթերգետիկ տարածք: Այդտեղ որոշիչը ոչ թե ճակատագիրը, աստվածային նախախնամությունն ու քաղաքական խաղերն են, այլ ակտիվ կենսագործունեություն ապահովող **ԱՆՀԱՏ-ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԿԱՐԳԱՍՏԵՂԾ** գործունեությունը: Դա էլ ռացիոնալացնում է քաղաքական ժամանակը՝ ստիպելով էլիտաներին հրաժարվել ամբոխահաճությունից (դեմագոգիա), պոպուլիզմից և իրենց վարքաբանությունում նպատակամետոդեն

անգիտակցականի միջոցով և ընկալվում է որպես խորհրդանիշների հիմքում դրված ունիվերսալ հոգեկան կառույց՝ կազմելով կոլեկտիվ անգիտակցականի բովանդակությունը: Արքետիպերի միջոցով որևէ տեսակի, ցեղի ընդհանուր հավաքական վարքագծում և կենսափորձում վերլուծության են ենթարկվում անցյալ-ներկա-ապագա զարգացումները: Պարունակելով **խորքային ոգեղեն կյուր**՝ դրանք բացատրում են ողջ մարդկության ինքնարտահայտման և անվտանգության մեխանիզմների կատարելագործման հատուկ ձգտումը: Ուստի արքետիպերն ի սկզբանե արժևորված գաղափարներ կամ հիշողություններ են, որոնք ստիպում են մարդկանց համարժեք արձագանքել որոշակի մարտահրավերների: Լինելով բազմամակարդակ արքայիկ երևույթ՝ արքետիպը բոլոր ժամանակներում դրսևորվում է բոլոր ժողովուրդների առասպելներում կամ բանահյուսության մեջ, կոլեկտիվ անգիտակցականի կառուցվածքում: Անցյալ-ներկա-ապագա եռաչափության մեջ արքետիպն անպայման պետք է ունենա գործնական դրսևորում. իրական կյանքից կտրված արքետիպեր գոյություն չունեն: Որպես այդպիսին՝ արքետիպն ունի ընդհանուր աշխարհայացք ունեցող անհատների հավաքագրման, մարդկանց հույզերի և սպասումների վրա ազդելու, ինչպես նաև նախաձեռնողականության գործառույթներ և կարող է ստեղծել գործողության մղող անհրաժեշտ խթաններ (Юнг К., Человек и его символы. Санкт-Петербург: Б. С.К., 1996, Психология политики: политические и социальные идеи К. Г. Юнга / В. Одайник ; вступ. ст. М.-Л. Франц; пер. с англ. К. Бутырина. - Санкт-Петербург: Ювента, 1996. - 382 с.):

արդիականացնել ազգային ինքնությունը: Ասվածի շրջանակում համակարգային և սոցիալ-մշակութային հայեցակետի ներքո դիտարկելով սփյուռքի ինքնությունը՝ քաղաքագետ Ջ. Լևինը հատուկ ուշադրության է արժանացրել այն փաստը, որ սփյուռքի ցանկացած անդամ մոլորակի տարբեր անկյուններում մնում է հավատարիմ իր քաղաքակրթական առանձնահատկություններին՝ արժեքային համակարգին, լեզվին, ավանդույթներին, կրոնին, արքեպիսկոպին և այլն, չնայած նա այլևս իր պատմական հայրենիքի քաղաքացին չէ³¹⁹: Հենց դրա համար էլ յուրաքանչյուր սփյուռք էթնոպաշտպանության նկատառումներով ազգային ինքնությունը դարձնում է իր վարքաբանության անբաժանելի տարրը: Հայկական սփյուռքի հետ համախմբված լինելու փաստը ՀՀ-ին կօգնի հաղթահարելու բազմաթիվ մարտահրավերներ: Այդ իմաստով ուշագրավ է Ս. Հանթինգթոնի «Քաղաքակրթությունների բախում» աշխատությունում հետևյալ եզրահանգումը.

«90-ական թվականների կեսերին ամերիկյան հասարակության կողմից հայերին հատկացվող օգնության չափը կազմել է տարեկան 50-75 միլիոն դոլար: Սփյուռքի ներկայացուցիչները նույնպես քաղաքական զգալի ազդեցություն ունեցան այն երկրի կառավարության վրա, որը դարձել էր նրանց երկրորդ հայրենիքը: ԱՄՆ-ի ամենամեծ հայկական համայնքը գտնվում է առանցքային նահանգներում՝ Կալիֆոռնիայում, Մասաչուսեթսում և Նյու Ջերսիում: Այդ պատճառով էլ ԱՄՆ Կոնգրեսը արգելք դրեց Ադրբեջանին հատկացվող ցանկացած օգնության վրա, իսկ Հայաստանը դարձավ աշխարհի երրորդ երկիրը, որը ԱՄՆ-ից օգնություն էր ստանում՝ ըստ բնակչության թվի: Արտերկրից ստացված այդ աջակցությունը կարևոր դեր խաղաց վերապրած Հայաստանի հետագա կենսունակության հարցում, որտեղից էլ հասկանալի է, թե ինչու ձևավորվեց այն արդարացի կարծիքը, որ Հայաստանը կարող է դառնալ «Կովկասի Իսրայելը»³²⁰:

Պատմականության նմանօրինակ ընկալումը ստիպում է ամենասուր կերպով զգալ ազգային մտահայեցողության տեղը քաղաքական ժամանակի մեջ, ինչն էլ նրան հնարավորություն է տալիս պարզելու իր սեփական ժամանակի էությունը: Նման հանգամանքներում ժամանակն անընդհատ

³¹⁹ Левин З. И., Менталитет диаспоры (системный и социокультур-ный анализ), М., Институт востоковедения РАН; Изд. «Крафт+», 2001, с. 102-107

³²⁰ Хантингтон С., Столкновение цивилизаций. Пер. с англ. Т. Велимеев. М.: АСТ, 2007, с. 456

վերակառուցվածքայնացվում է, և էթնոսը մասնակցում է այդ արժեստեղծ ոգեղեն իրողությանը՝ որպես արդիականացման պատմական նպատակայնությունը կարևորող քաղաքականության սուբյեկտ: Վերջինիս համար ապագան դառնում է տեսանելի, ընկալելի՝ արդեն ազգային մտահայեցողությամբ արժևորված կենսաէներգետիկ տարածություն, որտեղ որոշիչը ոչ թե ճակատագիրը, աստվածային նախախնամությունն ու քաղաքական խաղերն են, այլ առկա հնարավորությունների պայմաններում կենսագործունեություն ապահովող արժեքներ ստեղծելու և պահպանելու ոգեղենական կարողությունը:

Հազարամյակների պատմություն ունեցող ազգային մտահայեցողությունը գործառնական առումով փոխներդաշնակում է աշխարհաճանաչողությանը՝ «քառս-միֆ», «հերոս-հակահերոս» արժեքային համակարգերի ներհակ բնեռները, որոնցից յուրաքանչյուրն անհրաժեշտ է ընկալել որպես պատմական իրականության իրացման կերպ: Մեր կարծիքով, նման մոտեցումը հնարավորություն է տալիս հանրույթի արդիականացման գործընթացը և մշակութաքաղաքակրթական արժեհամակարգը դիտարկելու որպես համակարգի անվտանգության ապահովման միասնական կոդեր: Նրանց միջև կապի բացահայտման նպատակով ազգային մտահայեցողությունում անհրաժեշտ է տարբերակել սոցիալական և հոգևոր իրականության եզրերը, որոնք ևս ձևավորում, բնութագրում են մշակութաքաղաքակրթական արժեքային համակարգը: Այս պայմաններում ազգային մտահայեցողական արժեքները հանդես են գալիս թե՛ որպես սոցիալական վարքաբանության առարկայական որոշիչներ, թե՛ սոցիալական կեցությունն ամբողջականացնող խորհրդանշանային իրականություն, թե՛ անձի, հանրույթի, կոլեկտիվի և բնության կապը համընդհանրացնող չափանիշներ: Հարաբերվելով համամարդկային արժեքներին՝ ազգի արժեքային համակարգը նոր բովանդակություն և իմաստ է ստանում՝ հանդես գալով տարբեր հիերարխիկ «Ես»-երի լինելիության սահմաններում. այն դառնում է սնուցող միջավայր անձի, հանրույթի էության և ինքնության արդիականացման գործընթացի համար: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս քաղաքական արդիականացումն ուսումնասիրելու հավաքական մեթոդաբանությամբ, որի օգնությամբ կարելի է պատմության հոլովությամբ վերլուծել հայ հանրույթի ձևավորած մշակութաքաղաքակրթական արժեքաբանության կերպավորության շարժը: Հայ մարդու գոյաբանության

որակական փոփոխություններին զուգահեռ անհրաժեշտ է բացահայտել նաև համամարդկային և ազգային արժեքների փոխներգործությունը: Մեր կարծիքով, հայ քաղաքակրթական միջավայրի ժողովրդավարացման գործընթացը **«հավաքական մեթոդաբանությամբ»** ուսումնասիրելու հիմք կարող են ծառայել Է. Դյուրկհեյմի սոցիոլոգիան, Կ. Յունգի հոգեվերլուծությունը («արքետիպեր», «խորքային հոգեբանություն»), Կ. Մանհեյմի «զաղափարի» և «ուտոպիայի» փոխհարաբերության և Է. Ֆրոմի «առողջ» ու «հիվանդ» հասարակությունների մասին տեսությունները: Դրանցից յուրաքանչյուրը, յուրովի արձագանքելով հասարակության արդիականացման գործընթացում ծագած որոշակի հիմնահարցերի, այնուհանդերձ ընդունում է, որ տարաբնույթ հասարակությունները ոչ միայն իրենց գոյաբանական կերպը պահպանելու համընդհանուր հատկանիշներ ունեն, այլև այդ գործընթացում որոշիչ է կառավարող էլիտայի տեղն ու դերը: Հենց այդ հանրայնացումն է, որ հնարավորություն է տալիս ներդաշնակելու Է. Դյուրկհեյմի «կոլեկտիվ գիտակցությունը» հոգեվերլուծողների (Ջ. Ֆրոյդ, Կ. Յունգ) «զանգվածների հոգեբանություն», «արքետիպեր» և «կոլեկտիվ ենթագիտակցական» եզրույթների հետ: Իսկ Կ. Մանհեյմի «զաղափար» և «ուտոպիա» կատեգորիաների միջոցով հնարավոր է որոշել հասարակության «հիվանդ» կամ «առողջ» վիճակները (Է. Ֆրոմ)³²¹:

Հայկական քաղաքակրթության արժեքային բնեռները: Հիմք ընդունելով մեր կողմից առաջադրված հավաքական մեթոդաբանության տրամաբանությունը՝ նշենք, որ հին հայկական աշխարհաճանաչողության մեջ արժեքային կառուցվածքը ութափուլ, ութափթիվ ընթացք ունի, ինչն ակնհայտ երևում է հայկական ժայռապատկերների, դիցաբանական և ընդհանրապես մշակութային տեքստի վերլուծությունից³²²:

Արեգակնային ծագում ունեցող, տիեզերական հավասարակշռություն ապահովող ութը, **անսահմանության (∞) մեջ** ներդաշնակորեն զարգացող ինքնություն խորհրդանշելով, ամբողջացնում է հայ մշակութային տեքստի

³²¹ Э. Дюркгейм. О разделении общественного труда. Метод социологии, Пер. с фр. и послесловие Л. Б. Гофмана. М.: Наука, 1991; К. Юнг. Психологические типы, СПб.: "Ювента" – М.: 1996; К. Манхейм. Идеология и утопия (Диалог нашего времени), М.: Юрист. 1994; Психоанализ и культура: избранные труды К. Хорни и Э. Фромма, / Ред. Г. В. Бурменская, Т. В. Панфилова. – М.: Юрист, 1995:

³²² Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, ֆրանս. թարգման. Վ. Պ. Սեդրոյանը, Եր., «Հայաստան», էջ 287-347, Степанян А.А. Развитие исторической мысли в древней Армении. Миф. Рационализм. Историческое описание. Ер., 1991, 251с.

արժեքաբանական (աքսիոլոգիական) բևեռները:

Վերջինս ունի **բիոֆիլ** (քառս-արարում, սկիզբ-միջ, ընթացք-արժեք, վերջ-վերարժևորված արժեք) և **նեկրոֆիլ** (քառս-ավերում, սկիզբ-միջ, ընթացք-արժեքի քայքայում, վերջ-մահ կամ ողբ) բևեռները: Արարիչ (բիոֆիլ) բևեռում մարմնավորվում է պայքարը ապակառուցվածքային «արժեքների»՝ պատահականությունների, երևույթների տարերային զարգացման, ճակատագրի, քաղաքական խաղերի դեմ և մշակվում է արարչաստեղծ գոյաբանության մեխանիզմ: Ավերիչ (նեկրոֆիլ) բևեռում դրսևորվում, նյութականացվում է կազմալուծող, քայքայող, մահասփյուռ տարերքը: Հենց այդ բևեռների համադրմամբ էլ մշակութային տեքստում ստեղծվում է «կոլեկտիվ գիտակցություն», որը ենթադրում է ինքնորոշման, ինքնակառավարման, ինքնահաստատման համակարգ:

Պատմական հոլովույթում հանրույթի **«կոլեկտիվ գիտակցականի»** հաստատման այս համակարգը, հենվելով «մեխանիկական միասնության» (Է. Դյուրգհեյմ) վրա, կապ է պահպանում միֆամտածողության և ռացիոնալիզմի միջև: Այդ կապի օգնությամբ էլ Է. Ֆրոմը մշակել է գոյաբանության աստվածաշնչյան սկզբունքներն անտեսելու հետևանքով առաջացած մարդկային ապակառուցողականությունը՝ իր արարչասեր և ավերչասեր արժեքային բևեռներով³²³: Ուշագրավ է, որ հեթանոսական և աստվածաշնչյան արժեքային համակարգն իր մեջ ամբարած հայ մշակութային տեքստը համակարգվում է նույն սկզբունքով: Այսինքն՝ հայ «Ես»-ի համար տիեզերաստեղծ աշխարհաճանաչողություն, ինքնություն ապահովող միֆամտածողությունը ներդաշնակ կերպով փոխհարաբերվում է համամարդկայինի հետ: Այս իմաստով էլ հայ էթնոսի աշխարհաճանաչողության միֆական ըմբռնումը պայմանավորվում է ազգային մտահայեցողության արժեքային բևեռներով: **Միֆը կենսականորեն կողմնորոշված, ինքնություն ապահովող, անձի և հանրույթի սոցիալական եռանդն ակտիվացնող, խմբային միասնություն, համերաշխություն մարմնավորող, ընդհանուր արժեքահոգեբանական գիտակցություն ձևավորող արարչասեր և ավերչասեր իշխանություն է:** Միֆական տեղեկատվությունը հոգեբանորեն կանոնակարգում է անձի ու հանրույթի «Ես»+«Մենք» բևեռները և «Նրանք» բևեռի հետ հարաբերություններ հաստատելու ուղիներ է

³²³ Эрих Фромм, Анатомия человеческой деструктивности, Пер. с англ. Э. М. Телятникова, Т. В. Панфилова, М.: Изд.: АСТ, 2014, с. 150-180

նախանշում: Այս ամենը, ինչպես նշել է գերմանացի մտածող Կ. Հյուբները, «ազգին հնարավորություն է տալիս միասնական վերաբերմունք մշակելու իրականացվող բազմաբնույթ իշխանության նկատմամբ³²⁴»: Քաղաքակրթության փորձը հավաստում է, որ այդ բազմաբնույթ իշխանության մեջ անհրաժեշտ է պահպանել էթնոազգային ինքնությունն ապահովող արժեքային համակարգի քաղաքական էությունը: Այս ամենի բացակայության հետևանքով ոչ միայն խաթարվում է ցեղի միասնականությունը, այլև «Ես» և «Մենք» բնեռները մարզինալացվում են և, կորցնելով քաղաքական իրականությունը ռացիոնալ գնահատելու ընդունակությունը, երկուստեք սկսում են իրականացնել ասիմիլյացիոն տիպի կառավարում: Վերջինս իր հետ բերում է արժեքների անկում, քայքայում, թշնամանք, քառու, ավերում և վերջապես՝ **ողբ**: Ողբն իր քաղաքական հազցվածությամբ համամարդկային թեմա է. պատմական հոլովույթի մեջ յուրաքանչյուր «Ես» ողբում է իր համար իշխանությունն ապահովող, բայց արդեն կորցրած ազգային գոյաբանության հիմք կազմող արժեքի բացակայությունը (անտեսումը, տրոհումը, ոչնչացումը): Այս իմաստով հայոց ողբը նույնպես քաղաքական բովանդակություն ունի՝ պայմանավորված իր ժանրային բազմազանությամբ: Լինելով ներքին և արտաքին ավերչասեր իշխանության իրականացման արդյունք՝ ողբը՝ որպես հարատև տեղեկատվություն, արդիականացնում է պատմությունը ազգային միասնությունն ապահովող մշակութաքաղաքական դրսևորման անհրաժեշտության դիտանկյունից: Միայն այդպես կարելի է դիմակայել իշխանության ավերիչ մեխանիզմին: Հայոց ողբում ամբողջացված է Ազգի և Հայրենիքի թեման, և իր քաղաքակրթական էությամբ այն Ազգի և Հայրենիքի նկատմամբ ունի գաղափարական դրսևորում: Այս իմաստով հայ մշակութային տեքստի քաղաքական էության մեջ արմատավորված ողբը ոչ միայն քրիստոնեական հավատի իշխանությամբ սահմանակարգված վշտի, հառաչանքի, **մեղքի, զղջման, այլև ինքնության, էության պահպանման ծրագիր է ապահովում: Հայոց ողբը 5-րդ դարից ի վեր՝ Մովսես Խորենացուց մինչև մեր օրերը, իշխանություն իրականացնող հայ հանրույթին ինքնորոշել է որպես ինքնութենապաշտ, համասեր, համալեզու արքետիպային արժեքների տեր մարդկանց միություն: Այն միաժամանակ հանդես է եկել**

³²⁴ Хюбнер Курт. Истина мифа, Пер. с нем. И. Касавина. Пер. справочного аппарата выполнен И. Шишковым. — М.: Республика, 1996. с.164-165

որպես հանրային ինքնահաստատման, ինքնամաքման, ինքնորոշման նպատակին ծառայող արժեքային համակարգի քաղաքական էության ամբողջական մեկնություն: Նման հիմքի վրա իրականացվող իշխանությունը արժեքաբանորեն ամբողջացվում է ծիսականությամբ: Պատմական հոլովությունում իշխանությունն արժեքավորող ծիսականության մշակած արարողակարգը դուրս է մղում հնարավոր (և՛ առկա, և՛ կուտակվող) հակասություններն ազգային մտահայեցողությունից՝ դրանով իսկ ապահովելով վերակառուցողական երևույթները ներդաշնակ կապի մեջ ընկալելու ունակություն: Այդպիսի ճանապարհով իրականացվող իշխանության ժամանակակարգի մեջ հայտնված մարդը հաղորդակցվում է ազգի համար միասնականություն ապահովող վեհ, հզոր, սրբազան, բայց արդեն պատմականացված և հերոսականացված ժամանակին: Հենց այս հաղորդակցմամբ էլ ծիսական արարողակարգի օգնությամբ արդիականացվող մտահայեցողությունը հաղթանակ է տանում ավերիչ քառսի հանդեպ և հաստատվում է կարգ՝ ցեղի իշխանությունը: Ծիսական արարողակարգի միջոցով հանդես եկող անջատվողականության (պարտիկուլյարիզմ) մտահայեցողությունը միայն նպատակադրված ինքնաճանաչողություն չէ. այն ունի գոյի հարատևման նպատակ՝ չձուլվելու և էություն պահպանելու համար Տեսակն իրեն զատում է շրջապատից՝ զարգանալու և ոչ թե կաղապարվելու նպատակադրմամբ: Դիցուք՝ հայերն իրենց **Տեսակը զատելու աստվածաշնչյան ընկալումներ ունեն**. Հայկն առաջինն էր, որ ընդվզեց ընդդեմ Բելի, Տրդատ Մեծն առաջինն էր, որ Պարթև Անակի որդու՝ Գրիգորի օգնությամբ քրիստոնեությունն ընդունեց որպես պետական կրոն, Մաշտոցն առաջինն էր, որ արարեց հայոց այբուբենն ազգային արժեքի ընկալման իր էզոթերիկ յուրօրինակությամբ, Քաղքեդոնի ժողովում հայերն առաջինն էին, որ ընդդիմադիր մեխանիզմ մշակեցին...

Տեսակի գիտակցությունը կառուցվածքայնացնում է ազգային մտահայեցողությունը՝ ինքնորոշելով իրականացվող իշխանության մեխանիզմը, այն զուգորդելով արարչաստեղծ գերագույն սկզբունքի՝ ցեղի լինելիության և հարատևման հետ: Իշխանական հարաբերություններում ցեղի անհատականությունը բարձրագույն արժեք է, եզակի և անկրկնելի գոյություն: Այս ամենն իր արտահայտությունն է ստացել ազգային սիմվոլներում, որոնք տվյալ հանրային կենսառճի, իր սոցիալ-էթնիկական խմբի մասին ունեցած պատկերացումների և տարբեր բնական ու սոցիալական երևույթների

նկատմամբ դիրքորոշման խտացված դրսևորումն են: Յուրաքանչյուր հանրույթ ունի ոչ միայն իր ստեղծած, այլև փոխառած սիմվոլները, որոնք դարերի ընթացքում ազգային բովանդակություն են ստանում: Աստվածներն ու կիսաստվածները, ունենալով քաղաքական-բարոյական նշանակություն և խորհրդանշելով բարու, չարի, գեղեցիկի, հերոսականի իշխանությունը, միննույն ժամանակ հասարակական-քաղաքական կարգ են ապահովում: Վերոշարադրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ պատմական հոլովությամբ հայկական արդիականացումը, ի սկզբանե ձևավորվելով ոգեղենության հիմքի վրա, պայմանավորվել է հայկական լուսավորականության մշակած գոյաբանական տեքստի արժեքաբանությամբ: Հենց դրանով էլ բացատրելի է Հայկական քաղաքակրթության ոգեղենությունը: Տվյալ պարագայում Հայ մեծերը ոգեղենություն ասելով հասկացել են այն, որ գիր, գրականություն, քաղաք, ճարտարապետություն, ոռոգվող գյուղատնտեսություն ստեղծած հայերը, արարելով հայկական քաղաքակրթություն, այնուհանդերձ, դարեր շարունակ զրկված են եղել պետականությունից, սակայն պահպանել են ոգեղենության գերիշխանությունը: Նման գերիշխանությանը, հատկապես արևելյան (ասիական) աշխարհին ընդդիմանալու (հակադրվելու) միտումների մեխանիզմներին է անդրադարձել Հ. Գևորգյանը: «Հայ ժողովրդի պատմության առանձնահատկություններից մեկն այն է, որ, ինչպես ասացինք, ասիական միջավայրում նա միշտ ձգտել է ունենալ ազգային կյանք՝ ոչ միայն գոյատևել՝ պահպանելով իր ավանդական ազգագրական մշակույթը, այլև պահպանել ու միշտ արդիական դարձնել մշակույթի բարձր՝ քաղաքակրթական ձևերը, էլիտար մշակույթը, և ճիշտ այդպես էլ հասարակության կյանքի կարգավորման ավանդական՝ բարոյական-սովորութային ձևերից անցում կատարել դեպի իրավաքաղաքական ձևերը»³²⁵:

Գաղափարակիր «Ես»-ի արարիչը հայ մտահայեցողության մեջ: Յեղի պատմական գոյաբանությունը դիտարկել ենք որպես արարչագործ անհատի և՛ ստեղծագործական ինքնիրացում, և՛ մշակութաստեղծ կարողությունների դրսևորում: Այսպիսի դիտարկման դեպքում ազգային մտահայեցողության հենքում որոշիչ են դառնում պատմական անձի արժեքահամակարգող գաղափարներն ու պատկերացումները, մի դեպքում որպես «Ես»-ի կողմից

³²⁵ Գևորգյան Համլետ Ա., Փիլիսոփայություն, պատմություն, մշակույթ: ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի, իրավունքի ինստիտուտ: Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2005, էջ 435-436:

Տեղի հոգևոր ընկալման, իրացման աստիճան, այլ դեպքում՝ որպես ինքնորոշման, ինքնաճանաչողության տեսություն, որը հանրությին գերծ է պահում քառսից: Վերջինս արտահայտվում է հայ ժողովրդի հոգևոր աշխարհի հնագույն գանձերի՝ առասպելների և էպոսի բովանդակության մեջ, որոնք որպես գեղարվեստական ամբողջություն՝ առաջին անգամ գրի են առնվել պատմահայր Մ. Խորենացու կողմից: Ժամանակի և տարածության մեջ ինքնորոշելով անհամասեռ մշակութային հենք ունեցող իշխանության իրականացման մեխանիզմը՝ Քերթոդահայրը մշակեց ազգի կառավարման կառուցողական մոդել՝ կատարելով ազգային իշխանության արժեքավորում միֆամտածողությունից մինչև ռացիոնալիզմ:

Շարադրելով հայոց պատմությունը վաղնջական ժամանակներից մինչև իր ապրած ժամանակաշրջանը՝ Հայաստանի բաժանումը Սասանյան Պարսկաստանի և Արևելյան Հռոմեական կայսրության միջև (387թ.), Արշակունիների թագավորության վերացումը (428թ.)՝ Մ. Խորենացին հայ գեղարվեստական մտածողության մեջ արարեց իշխանություն կրող և իրականացնող գաղափարակիր «Ես»-ին: Դրանով նա համալրեց ուսուցչապետ Մեսրոպ Մաշտոցի գործը և հասավ «Հոգևոր Հայաստանի» և գաղափարակիր «Ես»-ի համակարգմանը: Այդ գաղափարակիր «Ես»-ը Խորենացու նպատակադրմամբ ոչ թե պետք է իրականությունն արդիականացնելով մերժեր (կամ անտեսեր) իր ժամանակակիցների հայրենասիրական ոգին, այլ նրանց մղեր նպատակադիր գործունեության, որի համար իշխանության իրականացման ժամանակ իբրև ուղեցույց հանդես է գալիս որոշակի մի իդեալ: Այդ իդեալը Խորենացին մարմնավորել է հայերի և նրանց առաջին թագավորների կերպարներում, որոնք թշնամիների դեմ պայքարում դրեցին հայկական պետականության հիմքը: Հայոց ոչ մի քրիստոնյա թագավոր չի արժանացել Խորենացու այն բարձր գնահատականին և գովեստներին, որոնցով նա բնութագրել է Հին Հայաստանի պետականության ծաղկման շրջանի թագավորներին: Տվյալ դեպքում կրոնականը նահանջում է հետին պլան, և այս կամ այն թագավորի գործունեությունը գնահատելիս առաջնակարգ կարևորություն է ստանում նրա որոշակի ավանդը **անկախ հայկական պետականության ստեղծման, նրա ինքնության ամրապնդման և անվտանգության ապահովման գործում:**

Ազգային յուրաքանչյուր արժեք, փոխանցված նախաքրիստոնեական շրջաններից, քերթոդահայր Խորենացու համար ունի կրոնից անկախ և

ուրույն մտահայեցողական առանձնահատկություններ: **Հայրենիքի – Պետության – Ազգի** ընկալման այսպիսի մակարդակում Խորենացին, անջատվելով իր ժամանակաշրջանի գաղափարախոսության ընդհանուր մթնոլորտից, հայ ազգային մտահայեցողության մեջ Պետության ընկալումը հասցրեց քաղաքական բացարձակ արժեքի մակարդակի: Դրանով իսկ, քաղաքական ընկալումները պատմական հոլովությունում որոշակիացնելով, Քերթողահայրն ինքնորոշեց հայ «Ես»-ի արժեքային համակարգը, որի հիմքը պետականապաշտությունն է: Ինքնորոշման համար որպես միջոց քաղաքականապես իմաստավորելով «Ճանաչիր ինքդ քեզ» սկզբունքը՝ պատմահայրը համոզված էր, որ «ուրիշներին» և նրանց իրականացրած իշխանությունը հնարավոր է ճիշտ հասկանալ միայն սեփական «Ես»-ի իմացության միջոցով:

Ձևակերպելով երևույթները կապի մեջ ընկալելու «Ես»-ի ինքնաճանաչողության իր տեսությունը, որը հանրության կարող է զերծ պահել քաղաքական քառույց, Խորենացին հիմնավորում է իշխանություն իրականացնող անձի կերպարի կառուցման միակ հնարավորությունը՝ այն բխեցնելով «Ես»-ի ազգային էության իմացությունից: Արժեքային համակարգում վերոհիշյալ սկզբունքների բացակայությունը, հայ հանրության զրկելով ավանդական կառավարման մեխանիզմից, հանգեցրել է անորոշության և զգացմունքային «խլության»: Հանրությո՜ւր, չկարողանալով ռացիոնալ գնահատել քաղաքական իրականությունը, օտարվում է նրանից, և տեղի է ունենում փախուստ ազատությունից: Դրա հետևանքով հանրությո՜ւր կորցնում է ազգային մտահայեցողությունը որպես համակարգող ամբողջություն ընկալելու ունակությունը: Այս ամենի հետևանքով է, որ դադարեց Արշակունյաց ցեղի հայոց թագավորությունը, և հայը կորցրեց պետության գաղափարի արժեքնորման հոգեբանական անհրաժեշտությունը: Արժեքային համակարգի քաղաքական էության մեջ տեղի ունեցած այս փոփոխություններն է ողբում Խորենացին. «...Վերացան թագավորդ ու քահանադ, խորհրդականդ ու ուսուցանողդ. վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը»³²⁶: Քաղաքականության փորձը հանրագումարելով՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ արժեքային համակարգում ազգային մտահայեցողության

³²⁶ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն/ Թարգ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, [Խմբ.՝ Գ. Սարգսյան].- Եր., Հայաստան, 1990, էջ 235

առանձնահատկությունները գոյաբանորեն պահանջում են կառավարման **ուժացման (ասիմիլյացիա) և բյուրեղացման (ակոմոդացիա)** տիպերի փոխներդաշնակություն:

Ասիմիլյատիվ տիպի կառավարման ժամանակ կառավարողը, ելակետ ունենալով իր շահերը, հաշվի չի առնում, որ հանրային մտահայեցողական կողմնորոշումները չեն համընկնում սեփական արժեքների հետ: Նկատի ունենալով այս ամենը՝ կառավարողը, կանխավ սահմանակարգելով մտահայեցողություն կազմող արժեքները, նրանց կենսագոյությունը հասցնում է նվազագույնի: Կառավարման պրակտիկայում այլոց արժեքների նկատմամբ ունեցած այսպիսի վերաբերմունքն արտահայտվում է մենիշխանական վարքագծով, որտեղ զանգվածներին կառավարելու սկզբունքի մեջ կառավարողը բացարձակացնում է իր արժեքային համակարգի քաղաքական էությունը: Արժեքների ասիմիլյացիան իրականացնող կառավարողի մենիշխանական վարքագիծն էլ հենց հիմք է դնում հասարակական քառսի: Հանրային մենիշխան վարքաբանությամբ իշխանություն իրականացնող առաջնորդներից գերադասում է հասարակական քառսը: Այդ հոգեբանությունը խիստ դիպուկ է բնորոշել Մ. Խորենացին. «... (Մեզ) տիրեցին խստասիրտ ու չար թագավորներ, որոնք ծանր դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս. կառավարիչները կարգ չեն պահպանում...³²⁷»:

Ո՞րն է ելքը: Քաղաքակրթությունների զարգացման և արդիականացման փորձը հուշում է, որ նման պայմաններում առավել ներգործուն է ազգային մշակույթի ու մտահայեցողության ճշգրիտ լծորդումը նրա ինքնակառավարման երկու՝ **ուժական (ասիմիլյատիվ) և հարմարվողական (ակոմոդացիոն)** հարացույցների համադրությամբ: Գործառույթները ռացիոնալի և իռացիոնալի փոխհարաբերությունների մեջ դիտարկող վարչակարգն ունի թե՛ մեկը, թե՛ մյուսը, քանի որ դրանց կիրարկմամբ ապահովվում է հանրության համակեցությունն ու հավասարակշռությունը: Մակայն դրանցից որևէ մեկի բացարձակացման պարագայում քառսն անխուսափելի է: Ուժական հարացույցի բացարձակացումը, որպես կանոն, հանգեցնում է նրան, որ կառավարողը (կամ կառավարողները) հաշվի չի նստում կառավարվողների

³²⁷ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն/ Թարգ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, [Խմբ.՝ Գ. Սարգսյան].- Եր.,Հայաստան, 1990, էջ 239

հետ, չի նկատում, որ իր (մեծ մասամբ՝ եսակենտրոն) արժեքները չեն համընկնում հանրության արժեքային կոդմոնոքոնումներին: Դրա հետևանքով ձևավորվում է մարգինալ համակեցություն: Ծրագրված փոփոխության է ենթարկվում ազգային մտահայեցողությունը, իսկ էլիտան, լիդերը, անհատը, կորցնելով կապը իրենց ընկերային-մշակութային երբեմնի արարիչ միջավայրի հետ, իշխանական հարաբերություններում զբաղեցնում են հարաբերականորեն ինքնուրույն տարածություններ: Նրանք և իրենց նմանները կազմում են «սև զանգվածի» (օխլոս) այն մասը, որը պատրաստ է ծառայելու ցանկացած ուժեղ ձեռքի, որն ունակ է բավարարելու իրենց առօրեական (հատկապես՝ կերակրման) պահանջները: Համակեցության սկզբունքներն սկսում են կազմակերպվել ըստ մարգինալության սկզբունքի՝ «Որտեղ հաց, այնտեղ կաց»: Արդյունքում ուժական կառավարման ծայրահեղ դրսևորումը ձևախեղում է ազգային համակեցական տեսակն ու մտահայեցողությունը: Փաստորեն, ասիմիլյատիվ վարչական սկզբունքը, տարբերություն չդնելով գոյություն ունեցող ազգային պետական և ընդհանրապես պետական շահերի միջև, արժեքների գնահատման մարգինալ հոգեվիճակ է ստեղծում: Հանրության մարգինալ հոգեբանությունը ասիմիլյատիվ կառավարում իրականացնողներին հնարավորություն է տալիս մտահայեցողության մեջ ծրագրված կերպով քառասային փոփոխություններ կատարելու: Այդ քառասային փոփոխությունների հետևանքով կառավարող էլիտան կորցնում է կապը իր սոցիալ-մշակութային միջավայրի հետ և ավանդական արժեքների նկատմամբ ոչ միայն ձեռք է բերում կրկնակի սահմանային դիրքորոշում, այլև կերպափոխվում է՝ պայմանավորված քաղաքական գործընթացներով:

Սոցիալ-մշակութային նոր միջավայրում հայտնված, կառավարողների կողմից քաղաքական խաղի յուրօրինակ մասնակից դարձած «Ես»-ը, մոռանալով իր մտահայեցողական արժեքները, պատրաստակամ է ծառայելու յուրաքանչյուրին, միայն թե վերջիններս «կերակրման» ինստիտուտների օգնությամբ բավարարեն իր պահանջմունքները: Ասիմիլյատիվ կառավարման ժամանակ հանրությո՞ւր բաժանվում է մարգինալ «Ես»-երի, ստեղծվում է սոցիալական յուրաքանչյուր խմբի կառավարման մարիոնետային համակարգ: Ինչպես տեսնում ենք, ասիմիլյատիվ կառավարումը ձևախախտում է ազգային մտահայեցողությունը:

Ի տարբերություն դրա՝ հարմարվողական հարացույցի բացարձակացումը ենթադրում է մի այնպիսի վիճակ, երբ հաստատվում է քառս, որը կրկին

ուղեկցվում է ազգային տեսակի ու մտահայեցողության խաթարմամբ: Բայց այս անգամ դա կարգի և օրենքի քայքայման հետևանք է: Այս դեպքում «սև զանգվածի» եասսիրությունը գերակա է դառնում իշխանական հարաբերություններում: Ինչպես նշվեց, ելքը երկու հարացույցների համադրումն է: Խառը **«ուծականհարմարվողական»** հարացույցի կիրարկման պարագայում հստակեցվում են ազգային համակեցության արժեքներն ու հաստատությունները: Հանրային սկսում է գիտակցել, որ ուղղակի և հակադարձ կապի շնորհիվ հնարավոր է երկխոսություն համակեցության բոլոր մակարդակներում՝ նպատակամիտված բարեշրջելու-բարեփոխելու ընկերային միջավայրը: Ասվածը, անշուշտ, առաջին հերթին վերաբերում է «հանրային-իշխանություն» հարաբերություններին:

Երկխոսությունը ծավալվում է ազգային համակեցության ոչ միայն ներկայի, այլև անցյալի հարթությունում: Արդյունքում ազգը երկխոսության մեջ է մտնում իր իսկ անցյալի և տեսանելի ու կանխատեսելի ապագայի հետ: Բազում սերունդներ խտանում են ժամանակային «ներկայի» ծիրում ընդհանուր գերխնդրի գիտակցությամբ: Եվ բացահայտվում է համակեցության հակված «փոքրի ուժն ու մեծությունը»: Միայն այդ պարագայում է, որ բացահայտվում է ընկերային համակեցության ճշմարիտ նպատակը՝ ապահովել և կազմակերպել հանրային կյանքը: Դրա ճշգրիտ բանաձևմամբ է, որ պատմահայր Խորենացին շեշտում է. «...Թեպետ մենք փոքր ածու ենք և թվով շատ սահմանափակ ու գորությամբ թույլ և շատ անգամ օտար թագավորությունների կողմից նվաճված, բայց և այնպես մեր աշխարհում էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել»³²⁸: Այսինքն՝ ներկա ժամանակի մարտահրավերները ծնում են այն լիդերներին, որոնք քաղաքական ժամանակն օգտագործում են իրենց տեսակի հզորացման, իրենց ինքնության արդիականացման, իրենց անվտանգության ապահովման համար: Այդ իմաստով խիստ ուսանելի են բոլշևիկներ **Ալեքսանդր Մյասնիկյանի, Ադասի Խանջյանի** կերպարները, որոնք իրենց կուսակցական գործունեությամբ համադրեցին ազգայինը և բոլշևիզմը:

Հայ իրականության մեջ ազգայինի գերակայության նոր էջ է Արցախի անկախության համար հերոսացած անմահների պայքարը, որոնք, քաղաքական ներկայում գիտակցելով «ազգային ոգու ուժն ու մեծությունը», կարողացան

³²⁸ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն/ Թարգ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, [Խմբ.՝ Գ. Սարգսյան].- Եր..Հայաստան, 1990, էջ 8

միավորվել՝ «Ազատագրական բանակի» հրամանատար **Լեոնիդ Ազգալոյանի նման** փաստելով. «Մա Հայաստանն է, և վերջ...»:

Հանրագումարելով՝ նշենք, որ ազգային մտահայեցողությունը՝ որպես համակարգիչ ամբողջություն, ենթադրում է.

1. **Տարբեր մակարդակներում հանդես եկող իշխանություն կրող լիդերների և էլիտաների ինքնաձանաչողություն**՝ քաղաքական իրականության պատմական գիտակցության և ռացիոնալի ու իռացիոնալի փոխհարաբերության համատեքստում: Կառավարող էլիտան հասարակական քառսից խուսափելու համար մտահայեցողության մեջ արարչորեն պետք է կրի ինչպես պատմական արժեքները, այնպես և ապագան՝ որպես ազգի իշխանության համար Ինքնություն, Կարգ ու Տեղ ապահովող ցանկալի մոդել:

2. **Քաղաքական համագործություն**. համակեցության կանոնները (modus vivendi) պահպանելու միջոցով բյուրեղացնելով էլիտաների մտահայեցողական առանձնահատկությունները՝ կառավարման ասիմիլյատիվ և ակոմոդացիոն տիպերի փոխներդաշնակության պայմաններում հնարավորություն է ստեղծվում նրա զարգացման համար: Արժեքային համակարգը քայքայվում է, հասարակական կյանքում քառս է տիրում, երբ կառավարման այդ տիպերը հանդես են գալիս մաքրագտված վիճակում, երբ պետության, ազգի, անհատի և հասարակության հարաբերությունների արժևորման, կարգավորման սկզբունք է դառնում դրանցից միայն մեկը:

3. **Հասարակական-քաղաքական երևույթները կապի մեջ ընկալելու հնարավորություն**: Ի տարբերություն միֆամտածողության, որտեղ աշխարհը արժեքագրված է ցեղի հավաքական էությունը բացահայտող իշխանության մեջ, մշակութային այս փուլում այն համակարգվում է իշխանություն իրականացնող էլիտայի կողմից, որն արժևորում է իշխանության բարձրագույն ձևը՝ **պետականը**: Մովսես Խորենացին հայ իրականության մեջ ազգային ինքնագիտակցության հիմքի վրա իրականացվող գերագույն՝ պետական իշխանության գաղափարախոսն ու ջատագովն էր: Ազգային մտահայեցողությունը, որը, փաստորեն, որոշիչ դեր ունի ազգի քաղաքական ծրագրի ձևավորման գործընթացում, միաժամանակ իրականացվող իշխանության բովանդակության էությունն է: Նման սկզբունքների վրա հիմնվելով՝ ազգի իրականացրած իշխանությունը հանրույթի կառավարման մեխանիզմում բացառում է քաղաքական քառսը: Հայ քաղաքական մտքի պատմության մեջ Քերթոզահայր Խորենացին այս ամենը հանրագումարեց որպես սոցիալ-քաղաքական և մշակութային օրինաչափություն, որի չիմացությունն ու անտեսումն էլ հայ հան-

րույթի կյանքում դարերով հարատևող քառս ստեղծեց: Ժառանգություն թողնելով արժեքային համակարգի գնահատման նմանօրինակ մեխանիզմ՝ Պատմահայրը պատգամել է սերունդներին. «...Ամբարիշտներին խաղաղություն չկա»³²⁹: Այս տրամաբանությամբ էլ Հայ մշակութային տեքստում ձևավորվեց և այսօր էլ խիստ արդիական է Հոգևոր Հայաստանի գաղափարի հիմքի վրա մեր կողմից գրված Սահմանադրությունը:

5.2. «Հոգևոր Հայաստանի» Սահմանադրություն

Չնայած արտաքին աննպաստ պայմաններին՝ հայ ժողովուրդը դարեր շարունակ իր կենսագործունեությունը կազմակերպել է ազգային գաղափարախոսության բարձր ոգեղենության շնորհիվ: Այստեղ որոշիչ տեղ ու դեր է վերապահվում էզոթերիկ միասնության մեջ գտնվող **սկզբունքների համակարգին՝ ազատ անհատ, անկախ հայրենիք, արդարադատ պետություն, ոգու հաղթանակ՝ հանուն Աստծո և հանուն մերձավորի**: Հայ «Ես»-ի կենսապահովման կամ կենսագործունեության սիներգետիկ ուժը պատմական դրսևորում և խորքային պաշար ունի, հատկապես ճգնաժամային պայմաններում նրա մտավոր եռանդը բարդ հիմնախնդիրների արագ լուծման համակցություն է ապահովում (Ձիրավ, Ավարայր, Սարդարապատ, Շուշի...): Այս հանգամանքն անհրաժեշտ է հաշվի առնել Հոգևոր Հայաստանի գաղափարի արդիականացման ժամանակ: **Ըստ իս՝ միօրինակության գնացող մարդկության ապագան այսօր շատ բանով որոշվում է արարող ոգու (այդ թվում՝ հայի) առողջության պաշարով**:

Հետևաբար, Հոգևոր Հայաստանի գաղափարի յուրահատկությունն այն է, որ, դուրս գալով զուտ ազգային կեցության պահպանման շրջանակներից, ձեռք է բերում գիտատեսական նշանակություն: Եթե Հայկական լեռնաշխարհը հնդեվրոպացիների հայրենիքն է, ապա հայն այն էթնոսն է, որի ծագումը, զարգացումը և ապագան հարատև կապված են տվյալ աշխարհագրական վայրի կենսաէներգետիկ գործունեության հետ: Ահա թե ինչու հայ ազգային ոգեղենության ուսումնասիրությունը կարող է որոշիչ լինել ինչպես հնդեվրոպական այլ ժողովուրդների ծագումնաբանական ընդհանրության ընկալման խնդրում, այնպես էլ հայկական ոգեղենության յուրօրինակության բացահայտման գործում: Այս տեսակետից հայության՝

³²⁹ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն/ Թարգ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, [Խմբ.՝ Գ. Սարգսյան].- Եր., Հայաստան, 1990, էջ 239:

որպես յուրօրինակ ոգեարարիչ հանրույթի գոյությունը խիստ անհրաժեշտ է պահանջմունքային առումով համահարթեցման գնացող մարդկության համար: Անձի, ազգի և ընդհանրապես մարդկության տեսանկյունից այն համակարգում է հավատի, արդարության, ինքնատիպության գաղափարախոսությունը: Հավատ, արդարություն, յուրակերպություն կրող անձը վերածվում է կապ իրականացնող էներգածին գեներատորի: Այսինքն՝ դառնում է ՀԱՅԿ: Հենց այս տրամաբանությամբ էլ Հայկ Նահապետի հավաքական կերպարն ամփոփում է հայի աշխարհընկալումը: Այդ մասին խիստ դիպուկ է արտահայտվել Քերթոզահայր Խորենացին. «Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլորին, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների և դյուցազունների վրա տիրապետելու»³³⁰: Կապի նմանօրինակ ընկալումը ստեղծեց շփման միջավայր, որի միջոցով էլ հայ մարդը որպես Հայկ դուրս եկավ «փակ» համակարգից: Այս առումով էլ հաղորդակցության ընկալումը հնարավորություն է ընձեռում իրականացնելու հայ ոգու գաղափարական էվոլյուցիան, որը երկար ու դժվարին ուղի է դեպի արարող, քերթող հայ մարդը:

Երևույթները կապի մեջ ընկալելը հայ մշակութային տեքստին բնորոշ հատկանիշներից է: Քերթոզահայր Խորենացուց մինչև Պարույր Սևակ հայ ազգային արժեքների գաղափարակիր «Ես»-ն ուղղորդվում է «Երջանիկ կառավարում է նա, ով երևույթների միջև եղած կապն է հասկանում» կարգախոսով: Այս կարգախոսով երևույթները կապի մեջ ընկալելու ունակությունը դարերի երկայնքով ինքնաճանաչողություն է ապահովել հայ գաղափարակիր «Ես»-ի համար, և հնարավորինս, եթե ոչ քաղաքական, ապա մշակութային առումով հայ հանրույթը գերծ պահելով քառսից՝ ստեղծել է «Հոգևոր Հայաստանի» լուսավոր կերպարը:

Համակարգելով հայ մշակութային տեքստը՝ եզրակացնում ենք, որ այդ գաղափարի վերածննդի ակնկալիքով էլ մեր կողմից համակարգված է հայ ոգու սահմանադրությունը, որի սկզբունքներն են՝ ազատ անհատ, անկախ հայրենիք, արդարադատ պետություն, ոգու հաղթանակ՝ հանուն Աստծո և հանուն մերձավորի:

1. Ազատ անհատ - Աստծո տաճար դարձած նրա ոգին ունի հետևյալ իրավունքներն ու պարտականությունները.

ա) անսահման հարատևող՝ իր արարման և ազատության հավատով

³³⁰ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն/ Թարգ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, [Խմբ.՝ Գ. Մարգարյան].- Եր..Հայաստան, 1990, էջ 24

հագեցած ինքնարժևորում, այսինքն՝ հավատա՝ Աստծուն և պահպանիր էությունդ:

բ) անսահման հարատևող արդարամտություն իր և այլոց նկատմամբ, այսինքն՝ էությամբ արդարամիտ եղի՝ր:

գ) անսահման հարատևող ինքնատիպ հոգևոր-մշակութային արժեքների յուրօրինակ արարում՝ հանուն մերձավորի, հասարակության, աշխարհի, այսինքն՝ էությունդ է՝ արարել և սիրել ամենեցուն:

2. Անկախ հայրենիք - Հայրենիքը կենսաուժ է, ոգին կենարար պահելու քերթության վայր, այսինքն՝ Հայք (Հայաստան): Ճիշտ է, պատմության քառուղիներում Հայքի սահմանները նեղացել են, բայց մինչև այսօր էլ հայ անհատի հոգում թևածում է հանուն հայրենյաց քերթության սկզբունքը: Այսօր Հայքը գոյություն ունի հայ մարդու ոգու քերթողական ուժով: Քերթել քրիստոնեաբար, արարել ոչ միայն սեփական «Ես»-ի, այլև այլոց համար: Ստեղծագործելով օգտակար լինել **Հայրենիքին – Պետությանը – Մարդկությանը:**

3. Արդարադատ պետություն – Պետությունը անհատի և հասարակության օգնականն է: Հայր պետություն ասելով հասկանում է նախ արտաքին ավտանգություն և այլոց հետ հարաբերության պահպանում *modus vivendi*-ի կանոններով, այնուհետև՝ հասարակական դաշինքի առկայության անհրաժեշտություն: Պետական այրը եթե Հայկ է, չպետք է գայթակղվի իրեն տրված իշխանությամբ, այլապես կկորցնի հայի ոգին, կդադարի Աստծո կողմից տրված կենսաուժի աղբյուր լինելուց և կվերածվի սովորական մարդու: Պետությունը հզոր է, երբ Հայկն է անհատի և հանրային շահերի կրողը:

4. Ոգու հաղթանակ – Երանելի է նա, ով իր հավատով, արդարությամբ և արարման յուրօրինակ ձևով հաղորդակցվում է Աստծո հետ, կապ պահպանում իր նախնիների և հարևանների հետ: Անհրաժեշտ է վերացնել չարի հանդես գալու պատճառը, ինչն արդյունք է ոգու թուլության: Չարին հաղթում են արարմամբ: զրանով ոգին ավելի է զորանում, իսկ ոգու կրողը ավելի հզորանում է: Այսպես է հնարավոր հաղթահարել քո (և այլոց) ոգում տեղ գտած թուլությունը՝ գերազանցել բոլորին քերթության ոգով: Հայ ոգին միշտ էլ բարձր է՝ կենսունակ ու հզոր, ոգով ենք մարտնչել, դիմակայել չգիտես ում կողմից դարերի մեջ մեզ պարտադրված ավերչասեր քաղաքական խաղի օրենքներին:

Ընդհանրացնենք. հայ ազգի ռազմավարական շահերը պաշտպանող և նպատակների իրագործման հիմնահարցերն ամբողջացնող ոգեարարչասիրական ազգային գաղափարախոսությունը պատմության հոլովույթում չի

կարողացել գերծ մնալ ավերչասեր հզորների քաղաքական որոգայթներում հայտնվելու հարկադրանքից: Ակնհայտ է, որ **քաղաքակիրթ մարդկության գործած ութ մահասփյուռ մեղքերը**³³¹ վկայում են, որ կառավարման գլոբալ խնդիրների լուծման համամարդկային մտահոգության անվան տակ աշխարհաքաղաքական գործընթացների խնդրո առարկան եղել և մնում է

³³¹ **Քաղաքակիրթ մարդկության ութ մահասփյուռ մեղքերը** - Մրցունակ լինել ոչ միայն մարտահրավերներին պատասխանելու, այլև մարտահրավեր նետելու անհրաժեշտության գիտակցմամբ: Մոտեցումն հիմնավորել եմ՝ կարևորելով 1973 թ. Նոբելյան մրցանակի դափնեկիր Կ. Լորենցի տեսակետը: Եվ այսպես... **1. Գեղքնակեցում** - «Մեծ քաղաքները, հզոր երկրները և ակտիվ ու հաջողակ մարդկանց խմբերն իրենց շահերի համար կարող են ազգեր, պետություններ կործանել և հսկայական տարածություններ ամայացնել»: **2. Կենսոլորտի ամայացում** - «քաղաքակիրթ» մարդիկ չեն պահպանում համակեցության կանոնները՝ անխնա սպառելով ոչ միայն իրենց, այլև ուրիշների ռեսուրսները: Նման միջավայրում գեղագիտական և բարոյական զգացմունքներն այլակերպվում են: **3. Մրցավազք ինքներս մեզ հետ** - Մարդիկ դաժանորեն մրցում են միմյանց հետ՝ հանուն փողի, իսկ այն չունենալու վախը հյուծել է, հյուծում է և կիյուծի միլիոնների... **4. Զգացմունքների «ջերմային» մահ** - Մարդիկ, ձգտելով հաճույքների կորցրել են աշխատելու և խոչընդոտներ հաղթահարելու ունակությունը և չեն ցանկանում «Ճանաչիր ինքդ քեզ» սկզբունքի հիման վրա ինքնակատարելագործվել...: Մարդիկ մահացու ձանձրույթի հաղթահարման համար աղմուկն են «պաշտում»...: **5. Գենետիկ այլաստում**- Ըստ Կ. Լորենցի՝ պատմության հոլովությունում ձևավորված «բարոյական վարքագծի» անտեսումը զարգացնում է թշնամանք լավի, բարոյականության և հումանիզմի հանդեպ: Որպես օրինակ է բերված թուլամիտ՝ երիտասարդի պատմությունը. նա սպանեց իրեն մերժած տատիկին և փող վերցրեց՝ նամականիշի և կինոյի համար: **6. Խզում ավանդույթներից** - Ավանդույթների անտեսումը տանում է սերունդների միջև աճող և տևական կոնֆլիկտի: Այստեղից էլ քայքայվում է ընտանիքը, նվազում է պատասխանատվությունը... **7. Ինդուկտիվացիա (որոշակի գաղափարի (քաղաքական, կրոնական և այլ) նպատակաուղղված տարածում կամ յուրացում)** - «Այժմյան մարդկությունը հեռացել է բնությունից, այն հավատում է միայն կոմերցիոն արժեքներին, զգացմունքորեն աղքատ է և կորցրել է կապը մշակութային սովորույթների հետ», - փաստում է Կ. Լորենցը: Կորցնելով երևույթները կապի մեջ տեսնելու ցանկությունը՝ մարդիկ օբյեկտիվորեն չեն վերլուծում իրենց ինֆորմացիան և ինքնակամ ենթարկվելով մանիպուլյացիայի՝ օտարվում են իրականությունից: **8. Միջուկային սպառազինություն** - «Վնասը, որը տալիս է միջուկային զենքը մարդկությանը», այն է, որ ստեղծելով ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐՋԻ տրամադրվածություն, շատերին կա մ ազդեսիվ է դարձնում, կա մ անտարբեր... Երկու դեպքում էլ անորոշություն և քառս է արտադրվում: Աշխարհը կգոյատևի միայն մի պայմանով՝ **Տեսակները պետք է շահագրգռված լինեն պաշտպանելու իրենք իրենց, իսկ «քաղաքակիրթվածները» հասկանան՝ Տեսակը իրավունք չունի ոչնչացնելու Տեսակին, դրանով իրենք ինքնասպանություն են գործում:** (St u Конрад Лоренц. «Восемь смертных грехов цивилизованного человечества», по книге К. Лоренца- «Оборотная сторона зеркала», М.: изд. «Республика», 1998.

<http://www.igrunov.ru/vin/vchk-vin-discipl/ecology/books/vchk-vin-discipl-ecol-Lorenz.html> 20.02.2019)

«կախյալ զարգացման» և «վազող/հասնող արդիականացման» շրջանակներում գտնվող երկրների բնական ռեսուրսների անխնա օգտագործումը:

Հետևաբար «համամարդկային մտահոգությունների» չափազանց բարդ խնդիրների լուծման իրավունքը ստանձնած գերտերությունները կամա թե ակամա, ցանկացած Տեսակի ինքնակառավարման շրջանակներում, իրենց քաղաքական շահերին են փորձում ենթարկել սոցիալական խնդիրների լուծման համար մշակված բոլոր տարբերակները: Բնականաբար հարց է ծագում. եթե 21-րդ դարի համար արդեն մշակված նոր աշխարհակարգի գաղափարական հիմքը «համամարդկային արժեքներն են», ապա այս դեպքում Տեսակի (դիցուք՝ ազգային) ինքնակառավարման ի՞նչ սկզբունքների մասին է խոսքը, այն էլ ոգեարարիչ՝ Հոգևոր Հայաստանի տեսքով:

Վիճահարույց խնդիրն ունի մեկ պատասխան. ըստ մեզ՝ համամարդկային արժեքների հաստատման գործընթացում նոր աշխարհակարգի իրագործումն անպայման ենթադրում է ազգային արժեքների և ինքնության քաղաքական էության բնականոն արդիականացում: Ուստի նոր աշխարհակարգը պետք է ունենա ազգային և համամարդկային արժեքների գուգամիտման տրամաբանություն: Քաղաքակրթության փորձն ապացուցում է, որ միայն ռացիոնալ արժեքների վրա կառուցվող բաց համակարգերը կենսունակ չեն: **Տեսակը իրավունք չունի ոչնչացնելու տեսակին, աշխարհը դրանով աղքատանում է:** Այսպիսի մոտեցմամբ էլ Գրիգոր Նարեկացուն ներկայացնենք որպես հայկական և գլոբալ քաղաքակրթության կենսունակության աղբյուր:

5.3. Գրիգոր Նարեկացու գոյաբանական և իմացաբանական հայեցակարգերը՝ որպես հայկական քաղաքակրթության կենսունակության աղբյուր

Երկիր մոլորակի զարկերակը տրոփում է անչափ լարված ու անհանգիստ. արտակարգ իրավիճակներ, բնական և տեխնածին աղետներ, ահաբեկչություն, ապակառուցողականություն, նյութապաշտություն, անկառավարելի քառս՝ ուղղված Մարդու, ազգերի, ժողովուրդների և բնության դեմ: Տեղեկատվահաղորդակցական նոր տեխնոլոգիաների, գիտատեխնիկական նոր առաջընթացի պայմաններում, քաղաքակիրթ «կենտրոնների» հետ հարաբերվելով, «հետամնաց ծայրամասերում» մարդիկ իրենց վրա զգում են «վազող/հասնող արդիականացման» պերճանքն ու

թշվառությունը: Շուկայականացված իրականության մեջ սարսափելին Մարդ արարածի՝ լքվածության, օտարվածության և մենության զգացումն է, իսկ թմրամոլությունն ու հարբեցողությունը, համասեռամոլությունն ու մարմնավաճառությունը խաթարում են նրա ներդաշնակ կեցության բանականի և զգայականի սահմանները: Զարմանալի չէ, որ «Լավ է այնտեղ, որտեղ մենք չկանք» օգտապաշտ և անպատասխանատու մտայնությամբ տարված՝ խարխլվում են ազգային արժեքներն ու ավանդույթները, իսկ անցողիկ հաճույքներով տարված՝ Մարդը տեղից տեղ է գաղթում՝ շրջանցելով բարոյական հրամայականներն ու մարդասիրությունը: Նյութապաշտ աշխարհը խժռում է բանական կյանքի արմատը և ընդարձակում անպատասխանատու ազատության սահմանները՝ կեղծելով Մարդու արարչաստեղծ էությունն ու մարդասիրությունը՝ որպես քաղաքակրթության ակունքի գիտակցում:

Այս համատեքստում էլ կարևորել ենք Արևելքի և Արևմուտքի քաղաքակրթական խաչմերուկներում ապրած, առաջինից երկրորդ հազարամյակներ ձգվող ժամանակահատվածում Մարդու հիմնախնդիրը ուսումնասիրող, տիեզերական մտքի թռիչքներով օժտված աստվածաբանի և մարդաբանի, փիլիսոփայի և բժշկի՝ Գրիգոր Նարեկացու (951-1003)³³² գոյաբանական և մարդասիրական հայացքները՝ որպես հայկական քաղաքակրթության կենսունակության աղբյուր: 10-րդ դարն իր արժեքային բազմաչափությամբ տրոհել էր հայ մարդու պատկերացումները սեփական անկախ գոյության և հարատևման խնդիրների մասին. մի կողմից Բագրատունիների, մյուս կողմից Արծրունիների թագավորությունները, գերիշխանության համար նրանց միջև ծավալված սուր հակասությունների տիրույթներում ինքնությունը կորցրած ավատատիրական տները, լայն թափ ստացած թոնդրակյան շարժումը, Արաբական խալիֆայության և

³³² 2015 թվականի ապրիլի 10-ին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում, Գթասրտության Սուրբ տարվա (2015-ի դեկտեմբերի 8-ից մինչև 2016-ի նոյեմբերի 20-ը) միջոցառումների շրջանակում, Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին մատուցված պատարագի ընթացքում Հռոմի Ֆրանցիսկոս պապը 10-րդ դարի մեծագույն հայ բանաստեղծ Սուրբ Գրիգոր Նարեկացուն հռչակեց Տիեզերական եկեղեցու վարդապետ: Գրիգոր Նարեկացին դարձավ այդ տիտղոսը կրող 36-րդ սրբադասված հոգևոր անձը: Հազար տարի անց 1,200 միլիարդ հետևորդ ունեցող կաթոլիկ եկեղեցին ընդունեց Աստվածաբանության մեջ Գրիգոր Նարեկացու ներդրումը և նրա գոյաբանական, իմացաբանական ու ճանաչողական արժեքանությունը՝ որպես Մարդու ինքնակառավարման, ինքնարդիականացման և ինքնամաքման նոր հնարավորություն:

Բյուզանդական կայսրության կողմից հրահրվող բանասարկությունները... Այս ամենը երկատել էր հայ մարդուն, և նա դարձել էր աշխարհի նյութական սկզբի, ծանր հարկերի, սահմանային պատերազմների, աստվածամերժ մտայնության զոհ: Լինելով իր ժամանակի կրթված և մարդասիրական արժեքներ որդեգրած տաղանդավոր անձ՝ Գրիգոր Նարեկացին ստեղծեց Մարդու ինքնարդիականացման մի այնպիսի կառուցակարգ, որը, դարերի հոլովույթում քննություն բռնելով, հնարավորություն է տալիս մարդ էական ոգեղենության, մարդասիրության, սիրո և բարու բարձր արժեքները համադրելու նյութականության հետ: Այս էլ հիմք ընդունելով՝ կարող ենք հավաստել, որ Նարեկացին հայ Վերածննդի գաղափարախոսության մունետիկն է և, որպես այդպիսին, ներկայանում է բարենորոգչական առաքելությամբ: Ինչպես վկայում է Վ. Չալոյանը, Նարեկացու բարենորոգչություններն այդ ժամանակաշրջանում ընթանում էին թոնդրակյան շարժման շրջանակներում. «...Որոնք VIII - IX դարերում ժողովրդական շարժման մի հսկայական պոռթկում առաջացրին ավատատիրական կեղեքման դեմ, ինչպես և օտար հարստահարիչների, մասնավորապես՝ Բյուզանդիայի տիրապետության դեմ»³³³:

Մարդու գոյաբանության արժեքային համակարգը: Ոգեղեն և մարդասեր հավատացյալ Մարդը՝ որպես տեղեկատվահաղորդակցական համակարգ, իր գոյաբանական զարգացման միտումներով հիմնված է ավերիչ (եսակենտրոն աստվածամերժություն) և արարիչ (համայնակենտրոն աստվածասիրություն) արժեքային բազմաչափության վրա: Այս մոտեցմամբ էլ Գրիգոր Նարեկացին մշակել է **Մարդ-Հասարակություն-Աստված-Բնություն-Կառավարում** հարաբերությունների նոր աստիճանակարգ՝ հենվելով մարդասիրության գաղափարների վրա:

Յուրաքանչյուր քաղաքակրթություն ժամանակի հոլովույթում մշակում է սեփական գոյաբանությանը բնորոշ արժեքային համակարգ, համաձայն որի՝ արդիականանում է մարդկանց աշխարհաճանաչողությունը և համակեցությունը, ինչպես նաև սոցիալ-քաղաքական կարգի պահպանման տրամաբանությունը: Այս առումով Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգությունը» նոր էջ է մարդու գոյաբանության արժեքային համակարգի և համաշխարհային մշակույթի պատմության մեջ: Ժամանակի հոլովույթում այն մարդուն

³³³ Չալոյան Վ. Կ., Հայկական Ռենեսանս: [Հայկական Վերածնության հարցեր] /; Խմբ.՝ Վ.Շ. Պողոսյան. - Երևան: Հայպետհրատ, 1964, էջ 57:

հնարավորություն է տալիս հավասարաբեք պատասխանելու առկա մարտահրավերներին՝ միաժամանակ ընդարձակելով ինչպես միջմշակութային հարաբերությունների տիրույթները, այնպես էլ արդիականացնելու գոյաբանության արժեքային համակարգը:

Հիմք ընդունելով «նարեկացիագիտության»³³⁴ նվաճումները՝ ցանկանում ենք յուրովի լրացնել այն՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով մարդու գոյաբանության արժեքային համակարգի բազմաչափության խնդրին, քանի որ Գրիգոր Նարեկացին, համակարգային առումով մշակելով մարդու «Ես»-ի՝ ինքնաձևավորման, ինքնաճանաչողության և ինքնագարգացման հիմնախնդիրները, բացահայտել է սոցիալականի տարածական հիմքերի արժեքային կողմնորոշիչները: Նարեկացու ստեղծագործություններում գոյաբանության այդ պարույրն անկումների, հաղթանակների, դավաճանությունների, հիասթափությունների, հարստության և աղքատության հարահոս մի շղթա է, որտեղ աստվածահաճությունը՝ սերը, հույսն ու հավատը, դառնում են գոյաբանության արժեքային համակարգի հենքը: Այս պատճառով էլ, թերևս, Գրիգոր Նարեկացու «Մատյանը» մարդու գոյաբանության միասնությունն ու հակադրությունը ներդաշնակող արժեքային համակարգ է՝ մարդասիրության, բարոյականության, հանդուրժողականության, համագործակցության և բնապաշտական սկզբունքներով: Այս սկզբունքների տիրույթներում Նարեկացին զարգացնում է տեղեկատվական տեքստ, որն իր հին և նոր կտակարանային հենքով պարուրում է երևույթները փոխադարձ կապի մեջ տեսնելու հանգամանքը՝ կարևորելով **«մարդու ներքին և արտաքին աշխարհների հարաբերական ամբողջությունը»**: Այս նպատակով էլ, ըստ հեղինակի, իրավիճակով թելադրված՝ մարդն իր ներքին և արտաքին աշխարհով տրոհվում է՝ սեր առ Աստված, առ Բնություն, առ Մարդ: Մարդու սերն էլ կյանքի կառուցողական և ապակառուցողական ուժերի հանդեպ օգնում են կայանալու որպես Մարդ՝ իր մեջ ամբարելով բարու և չարի սկիզբը: Ամբարելով հին և նոր կտակարանային արժեքները՝ Գրիգոր Նարեկացին հնարավորություն է

³³⁴ Մկրյան Ս., Գրիգոր Նարեկացի, Եր., 1955, Մ. Աբեղյան, Ս. Գրիգոր Նարեկացի, Երկեր, հ. Գ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1968, Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996, Հ. Թամրազյան, Գրիգոր Նարեկացին և նոր պլատոնականությունը, Եր., 2006; Միրզոյան Հ. Գ. Նարեկացիագիտական հետազոտություններ (հոդվածների ժողովածու) /Հ. Գ. Միրզոյան.- Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2010 և այլք:

տալիս իր ժամանակի մարդուն բացահայտելու իր տեսակի զարգացումը **անցյալ-ներկա-ապագա** եռաչափության մեջ: Այս համատեքստում էլ վստահորեն կարելի է փաստել, որ Պլոտինիոսի մոտեցումներն առկա են Նարեկացու ճանաչողության հայեցակարգում: Այս առումով պատմաբան Ա. Ստեփանյանը հավաստում է. «Մարդ էակը, համաձայն Պլոտինիոսի, համադրական բարդ կառույց է՝ բաղկացած երկու ներհակ բաղադրիչներից: Դրանցից մեկը՝ հոգեղենացած մարմինը կամ մարմնացած հոգին, արդյունք է հոգու ցանկական հատվածի և նյութի մերձեցման: Այն ապրում է առօրեական (կամ հասարակ) կյանքով՝ տրված մարմնական հաճույքներին ու տառապանքներին: Մյուս բաղադրիչը նույնական է հոգու բանական հատվածին, «... որը վեր է մարմնից, և որին պատկանում են վերընթաց շարժումը, գեղեցիկն ու աստվածայինը» [II, 3, 9, 20-25]: Նա մեր հոգեմտավոր բարեկեցության աղբյուրն է, որի շնորհիվ «մենք ինքներս ենք»: Մարդկային կյանքի գերագույն իմաստը ինքնակատարելագործման ճիգով աստվածակերպ դառնալն է [I, 1, 3, 10]: Ըստ որում, այդ գործընթացը կայանում է մարդու բարոյական առաքինությունների ձևավորման ճանապարհով, «...որպեսզի ամեն ոք ենթարկվի իր [մեջ առկա] կառավարող սկզբին, ինչպես զինվորը՝ հրամանատարին» [III, 3, 13, 25]: Անտարակույս, «կառավարող սկիզբը» բանական հատվածն է, որին պետք է ենթարկվի մարմնականը: Այլ խոսքով՝ Պլոտինիոսը մարդ էակին դիտարկում է իբրև ենթարկելու և ենթարկվելու հարաբերությունների ամբողջություն»³³⁵ :

10-րդ դարը՝ **աստվածակենտրոնությունից դեպի մարդակենտրոնություն** դրսևորումներով, սոցիալական ընդլզումներով, գահակալական նկրտումներով, մարդուն դրել էր իրականության բազմաչափ ընկալման այնպիսի իրավիճակում, որը նրան իր անհանդուրժողական, հավակնոտ, աստվածամերժ, օտարված վարքաբանությամբ, անվտանգ կեցության ապահովման ակնկալիքով մղել էր նյութապաշտության: Այս համատեքստում Գրիգոր Նարեկացին, արտահայտելով ժամանակի սոցիալական, քաղաքական, մշակութային և գիտական հիմնախնդիրները, ձևավորեց նարեկյան մշակույթը: Այսօրվա կառավարելի քառսի պայմաններում նարեկյան մշակույթը պահպանել է իր արդիականությունը՝ կիզակետում ունենալով Մարդու (դիցուք՝ հայ տեսակի)

³³⁵ Պլոտինիոս, Էնենեադներ, գիրք 5 (Հաղագս Բանականի), հին հուն. թարգմ., ուսումնասիրություն և մեկնություններ՝ Ա. Ստեփանյանի, Ե., 1999: էջ XXXVI-XXXVII

գոյաբանական և իմացաբանական հիմնախնդիրները՝ հանուն նրա անվտանգության ապահովման:

Գրիգոր Նարեկացին մարդուն ներկայացնում և մեկնաբանում է մի քանի մակարդակով. ա) մարդը Աստծո կողմից արարված էակ է, և նրա հնարավորությունները պետք է բավարարեն Աստծո պատգամները պահպանելու, կատարելու համար, բ) սերը դեպի Բարձրյալի ստեղծածը անսկիզբ և անվերջ է, ժամանակով և տարածությամբ են բացահայտվում այն փորձությունները, որոնց ենթարկվում է մարդը Արարչի կողմից, գ) Տիրոջ հանդեպ ունեցած անվերապահ սերն ու հավատը հնարավորություն են տալիս մարդուն ընդարձակելու իր գոյաբանական տարածությունը՝ հանուն աստվածային արարման և կենսասիրության:

Որպես կենսասեր փիլիսոփա՝ նա սիրում է կյանքը և իր օրինակով մարդուն ապացուցում, որ Նարեկա վանքում մեկուսացած, բայց և պայծառատես, ժամանակի փայլուն կրթություն ստացած անձը, հաղթահարելով նյութականի գերակայությունը, արարչասիրությամբ է ապրում: Վերջինն էլ նրան օժտում է բազմաչափ կենսասիրությամբ, որն էլ, դառնալով նրա գոյաբանության արժեքային համակարգի հիմքը, հնարավորություն է տալիս հավատալով երկրպագելու Տիրոջը՝ նախ բնությունը և տիեզերքը ստեղծելու, ապա՝ այս ամենի նկատմամբ գիտակցական վերաբերմունքը միայն մարդուն շնորհելու համար: Նման ելակետային մոտեցմամբ էլ ընդունելով աշխարհի ներդաշնակությունը՝ Գրիգոր Նարեկացին գոյաբանության իր արժեքային համակարգը ներկայացնում է երկվության սկզբունքով՝ **նյութական և ոգեղեն**, և որոնում է երկվության հաշտեցման եզրեր Աստծո կողմից արարված ամենակատարյալ էակի՝ մարդու ներաշխարհում: Այս միջոցով էլ հեղինակը մարդու կենսագործունեության կազմակերպման, հավատի, սիրո, հույսի գոյակարգ է մշակել՝ նրան կողմնորոշելով դեպի համակեցություն և ինքնաճանաչում: Գրիգոր Նարեկացու ստեղծած այս գոյակարգի հենքում մարդու բարոյական ինքնակատարելագործման սկզբունքն է: Որպես այդպիսին՝ նա հնարավորություն է տալիս մարդուն ընդարձակելու գոյաբանության արժեքային համակարգի շրջանակները «կյանքը խաղ է» սկզբունքով:

Հնդեվրոպական մշակութային տեքստերի գիտակ է. Բենվենիստը, կյանքը որպես խաղ դիտարկելով, հանգել է այն համոզման, որ խաղ է նաև Աստծո հանդեպ հեղինակություն և վստահություն ներառող հավատը:

Վերջինիս օգնությամբ էլ մարդը լեզվատիրացնում է իր հավատը՝ Աստծո, նրա Որդու և Սուրբ Հոգու հանդեպ՝ ակնկալելով օգնություն ստանալ իր բարեպաշտության դիմաց. «Ես քեզ հավատում եմ և զոհ մատուցում, իսկ դու՜.....»³³⁶:

Վերոբերյալը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ Գրիգոր Նարեկացին իր ժամանակին արդեն հանգել էր նման եզրակացության: Գրողի գոյաբանության արժեքային համակարգի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ **Բնություն-Աստված-Մարդ** ներդաշնակ հարաբերությունների գործընթացում էական նշանակություն ունի հավատի միջոցով կյանքն իբրև խաղ ընկալելու ունակությունը. անհնար ոչինչ գոյություն չունի հավատացյալի համար՝ հավատացի և ստացա, հավատացի և ունեցա, հավատացի և հաղթեցի:

Հավատի միջոցով է մարդն ինքնահաստատվում և ինքնաիրացվում որպես մտածող և մարդասեր էակ: Կյանքի բանական խաղը ճիշտ հասկանալով էլ մարդն իր հավատով կարողանում է վեհացնել իրեն (ԾԷ-Դ)³³⁷: Հավատի շենքը կառուցելիս Գրիգոր Նարեկացին բարձրացնում և վեհացնում է մարդուն՝ համոզված, որ «Ես»-ը ինքնահաստատվում է միայն այն դեպքում, երբ խորապես կարևորում է իր հավատի իրատես, բանական սկիզբը: «Եվ կամ ի՞նչ օգուտ կտա սաղմոսն ինձ, եթե չըմբռնեմ իմաստը նրա» (ԿԲ-Ա): «Ըմբռնել սաղմոսի իմաստը» նշանակում է հավատալ Քրիստոսի ուսմունքին, նրա իմացությանը, որի միջոցով էլ մարդը ինքն իր համար բացահայտում է և՛ իր, և՛ կյանքի խաղի էությունը: Այս առումով էլ Նարեկացին մշակում է տիեզերքի գերագույն էակի՝ **մարդու՝ որպես աշխարհաքաղաքացու գոյաբանության արժեքային համակարգը**: Ուսումնասիրելով մարդու գոյաբանությունը՝ Գրիգոր Նարեկացին Աստծո համամարդկային բնույթին ներդաշնակ քննում է մարդու կոսմոպոլիտ էությունը³³⁸:

³³⁶ Бенвенист Э., Словарь индоевропейских социальных терминов, М.: Прогресс-Универс, 1995. с. 210

³³⁷ Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության / Աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազիսյանի, պատ. խմբ. Լ. Ս. Խաչիկյան, Պ. Ս. Շարաբխանյան, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985. – 1123 էջ:

³³⁸ **Կոսմոպոլիտիզմ** - հայրենիքի գաղափարի ընդարձակում, որն առաջացել է Պելեպոնեսյան պատերազմից հետո հունական քաղաք-պետությունների քաղաքական կյանքի անկման հետևանքով: Դեռևս Սոկրատեսն էր իրեն աշխարհաքաղաքացի համարում. «Եթե ճիշտն այն է, ինչ հավաստիացնում են փիլիսոփաները աստծո և մարդկանց

Այս ամենն էլ ելակետ ընդունելով՝ կարող ենք ասել, որ Գրիգոր Նարեկացին դիտարկում և քննության է առնում մարդու հիմնախնդիրը ոչ միայն իբրև տիեզերաստեղծ, այլև դրան միահյուսված և մարդասիրությամբ պայմանավորված տիեզերապահպանման ելակետով: Ելակետ ընդունելով Աստվածաշունչը՝ Նարեկացին «Մատյանում» ստեղծել է հայ մարդու համար նոր Ավետարան՝ Նոր Աստվածաշունչ՝ ՆԱՐԵԿ: Ավետարանական կերպարների գերազանց իմացությունը նրան հնարավորություն է ընձեռում ճանապարհ բացելու իր Հայ Տեսակի համար՝ որպես արարչաստեղծ էակի: Ազգային մշակույթի հենքի վրա ի հայտ եկող վերաբժնորումներն էլ «...հայ հոգևոր մշակույթը վերածում են եվրոպական Վերածնունդը նախապատրաստող, գոյացնող ընդհանուր մշակութային զարթոնքի անբաժան մաս», – գրում է Գևորգ Խոլոպյանը³³⁹: Համաձայնելով հեղինակի հետ՝ նշենք, որ որպես հայոց Աստվածաշունչ՝ «Նարեկը» հնարավորություն է տալիս մեկնաբանելու մարդու էությունն ու բնույթը ինչպես սոցիալ-տնտեսական, քաղաքական տեսանկյունից, այնպես էլ սեփական «Ես»-ի հետ ունեցած երկխոսության ծիրում: Հայոց Աստվածաշնչի միջոցով հայ մարդը հնարավորություն է ստանում երկխոսություն վարելու իր նմանի և Աստծո հետ՝ բացահայտելով սեփական կեցության անվտանգ գոյատևման և հարատևման հնարավորությունները: Գրիգոր Նարեկացու մարդասիրությունը, հետևաբար, հենվում է աշխարհի բազմակիության (plureal) և այլընտրանքային իրականության վրա:

Նարեկյան մշակույթի գոյաբանության նպատակը Մարդուն այնպիսի աշխարհաճանաչողությամբ օժտելն է, որի օգնությամբ նա, յուրացնելով նորկտակարանային կերպարների իմաստությունները, հնարավորություն կունենա ընդարձակելու իր ճանաչողությունը՝ հանուն իրականության այլընտրանքային մեկնությունների: Փաստորեն, հանձին Նարեկացու «Մատյանի»՝ ինչպես հայր, այնպես էլ մարդկությունն ունի Նոր Աստվածաշունչ, որը թույլ է տալիս նրան, անկախ ազգությունից և դավանանքից, գոյաբանական նոր արժեքային տիրույթներում հաստատվել տարածական բոլոր հարթություններում: Դա է պատճառը, որ դեռևս 1965 թ.

ազգակցության մասին, նման դեպքում այն հարցին, թե որն է քո հայրենիքը, պետք է պատասխանել Սոկրատեսի բառերով. «Ես արենացի կամ կորնթացի չեմ, այլ՝ աշխարհաքաղաքացի (B. C. Персесянци, Сократ. М.: Изд. ИНФРА-М—НОРМА, 1996. с. 85-90):

³³⁹ Խոլոպյան Գ., Գրիգոր Նարեկացու իմաստասիրական հայացքները, «Գարուն», 1982, N 6, էջ 27:

«Գրիգոր Նարեկացի» հոդվածում Պարույր Սևակը գրողին համարել է մեր առաջին մարդագիրն ու մեծագույն մարդերգուն, որը «...մեծատառով է գրում ոչ միայն Մարդը, այլև ՈՄՆ-ը ...որ մարդկային արարածներից յուրաքանչյուրն է: ...Նա երգիչն է ՈԳՈԻ, և այդ բնագավառում չունի զույգ ու մրցակից»³⁴⁰:

Այս համատեքստում պատահական չէ, որ ռուս գրողը Նարեկացուն բնորոշում է որպես «խորապես մարդկային» և «քրիստոնյա մարդասիրության արտահայտություն»³⁴¹:

Լինելով նարեկյան դպրոցի վանական արիստոկրատիայի՝ Խոսրով Անձևացու, Անանիա Նարեկացու գաղափարակիրը՝ մտածողը մարդու գոյաբանության արժեքային նոր մարդասիրական համակարգ է մշակել՝ հիմնադրելով նարեկյան մշակույթ: Փաստորեն, սինթեզելով Մովսես Խորենացու, Դավիթ Անհաղթի, հունահռոմեական և քրիստոնեական իմաստասիրությունը³⁴², Նարեկացին այն արդիականացրեց և մարդասիրական հիմքի վրա ստեղծեց **նարեկյան մշակույթ**, որն էլ հային (ընդհանրապես Մարդուն) օգնել, օգնում է և կօգնի դիմակայելու և՛ իր, և՛ ապագա ժամանակների մարտահրավերներին: Իր բարենորոգչական բնույթով **նարեկյան մշակույթը** կրոնական և աշխարհիկ հակադրություններ չի ենթադրում. այն մարդկանց հաղորդակից է դարձնում նոր աշխարհատեսությանը, որտեղ իշխում է ոչ թե նյութը, այլ ոգին և ոգեղենությունը: Նյութն անցողիկ է, ոգին՝ հավերժ, նյութական սին աշխարհը չարություն է ամփոփում, իսկ ինքը ոգեղենական արժեքներով է առաջնորդվում:

Նարեկյան մշակույթի հիմնաքարը քաղաքակրթության տիեզերաբանությունն է՝ հակամարտության մեջ նրա փոխակերպման նախապայմանը: Անդրադառնալով փոփոխությունների մասնակիցների ճանաչողության գործոնի կարևորության մակարդակին՝ կարծում ենք, որ այն արդյունքի վրա էական ազդեցություն ունի, քանի որ, համաձայն մեր պատկերացումների,

³⁴⁰ Պարույր Սևակ, Գրիգոր Նարեկացի.- Երկերի ժողովածու 6 հատորով, հատոր 5, Եր., «Հայաստան» հրատ., 1974, էջ 249:

³⁴¹ Аверинцев С. С., Роскошь узора и глубины сердца: поэзия Григора Нарекаци. Поэты. - М., 1996. - с. 53, <http://www.philology.ru/literature4/averintsev-96.htm>

³⁴² Թամրազյան Հ., Գրիգոր Նարեկացին և նեոպլատոնականությունը, Եր., «Նաիրի», 2004, էջ 53:

տիեզերաբանությունն իր արմատներով ձգտում է «Ես»-«Մենք» նույնականացման: Այս առումով էլ նարեկյան մշակույթը՝ որպես ինքնության անվտանգության ապահովման համակարգ ամբողջացնում է առկա «Ես»-երի հակամարտության ուսումնասիրությունը (**Ես-Աստված, Ես-Բնություն, Ես-Քրիստոս, Ես-մարդ, Ես-չար, Ես-Բարի, Ես-Լույս, Ես-Խավար** և այլն): «Ես»-ի բազմաչափ դիտարկվող մակարդակները հայ քրիստոնեական մշակույթի հիմքն են, որի նարեկյան դրսևորումներն արդյունք են ժամանակի հակամարտության կենսաշրջանների՝ «Ես»-ի և՛ ինքնահաստատման, և՛ ինքնադրսևորման կառուցակարգային առանձնահատկությունների: Այս հանգամանքն էլ նրան հնարավորություն է ընձեռում, իր «Ես»-ի ճանաչողության գործընթացը պարուրաձև զարգացնելով հանդերձ, ապահովել նաև համակեցության կանոններ տարաբնույթ «Ես»-երի համար: Այն ենթադրում է «Ես»-ի երկխոսություն Աստծո հետ, այլ դեպքում նրա տեղն ու դերն է ճշտվում Աստծո կողմից արարված բնության մեջ, այլ պարագայում նա փորձում է կապ տեսնել Մարդու «Ես»-ի, Աստծո «Ես»-ի և Բնության «Ես»-ի միջև, քանի որ յուրաքանչյուրը մի ուրույն աշխարհ է իր գոյաբանական առանձնահատկություններով: Հենց այս աշխարհների միասնության խնդիրն է զբաղեցնում Նարեկացուն. ընդունելով, որ ճանաչողությունը բազմամակարդակ երևույթ է, նա միաժամանակ հասկանում է, որ բազմամակարդակ դրսևորվող այդ «Ես»-երը ինքնուրույն չեն կարող գոյություն ունենալ, քանի որ, միմյանց հետ սերտորեն փոխալսմանավորված լինելով, հարաբերական անկախ են և լրացնում են միմյանց:

Նարեկյան մշակույթի մասին ամբողջական պատկերացում կազմելու նպատակով հատկապես կարևորում ենք «Մատյան ողբերգություն» պոեմում Աստծուն ուղղված փոխակերպման դրվագները: Բազմադեմ Աստծո նարեկյան պատկերացումներում միանգամայն հստակ ներկայացված են և՛ երկրային աններդաշնակությունը, և՛ մարդկային ավերող սկիզբը, որոնց նկատմամբ կարելի է հաղթանակ տանել միայն Տիրոջ գործությամբ (ԺԱ - Բ): Նարեկացին համոզված է, որ երկրային աններդաշնակությունն ու մարդկային ապակառուցողականությունը արդյունք են քրիստոնեական պատվիրանների շրջանցման: **Աստված-Բնություն-Մարդ** ներդաշնակությունը ստեղծվում է միայն այն դեպքում, երբ չեն անտեսվում Բարձրյալի պատվիրանները, և Մարդը հավատարիմ է մնում դրանց: Մեծ մարդաբանը վստահ է, որ այդ կարգացույցների պահպանումը և դրանց հանդեպ

հավատարմությունն օգնում են մարդուն տեսնելու, զգալու, ընդունելու, հասկանալու և հավատալու Աստծուն, որը ոչ միայն ամենագետ ու ամենագոր է, այլև մարդ արարածի դատավորը. չէ՞ որ իր բոլոր արարքների համար մահկանացուն պատասխանատու է Երկնային Թագավորին: Մարդու բոլոր գործերի **մարդասիրական հանրագումարը** ենթադրում է ինքնահաշվետու դարձնող պատճառահետևանքային փոխալսմանավորվածություն և համակեցություն, քանի որ նրա բոլոր խոսքերն ու արարքները՝ չար կամ բարի, իրեն են վերադառնում. «Մի՛ դատիր, որ չդատվես», «Ոգիդ մի՛ հիվանդացրու չարով», «Մի՛ մոռացիր, որ չարը, գայթակղելով քեզ, մղում է թվացյալ հաղթանակների՝ քեզ զրկելով արարչության շնորհից»: Մարդն անվերապահ ընդունում է արարչությունը որպես հավատո հանգանակ, իսկ նրա մարդասիրությունն էլ համապատասխան պարտավորություններ է թելադրում (ԼԵ-Գ):

Այս իմաստով էլ նարեկյան մշակույթի մարդասիրական հենքը Սուրբ Երրորդության սկիզբ ունի. Հայր Աստծով սկսած և Հիսուս Քրիստոսով ու Սուրբ Հոգով ամբողջացած քրիստոնեությունը՝ որպես ազգային հավատի և պատվիրանների բացահայտման օրենք, ձևավորեց ամբողջական Մարդու կերպարը: Մի դեպքում Մարդն անցյալ-ներկա-ապագա եռաչափության կրողն է, այլ դեպքում, քրիստոնեական արժեքաբանությամբ պայմանավորված, արարիչ: Այս երկակիությունն էլ նրան հնարավորինս զերծ է պահում անօրենությունից, մարդատյացությունից, որոնք կարող են «Ես»-ին դարձնել աններդաշնակ և բախումներ հրահրել ընդունված կարգուկանոնի, սահմանված օրենքների դեմ: Այս նկատառումներից ելնելով էլ Նարեկացին համոզված է, որ Աստծո նկատմամբ ունեցած բացարձակ և անվերապահ հավատը Մարդուն ուղղում է գիտակցված գործողությունների ոլորտ այն հույսով, որ իր համար՝ որպես հանրային մասնիկի, հավատն անվտանգ կեցության հնարավորություն է ապահովում:

Նարեկյան մշակույթը քրիստոնեությունը դիտում է երևույթների շղթայական ամբողջության մեջ, համաձայն որի՝ քրիստոնեական հավատը մեղքերի, Աստծուն հնազանդության, խոստովանության, զղջման, ապաշխարանքի, պարբերական գայթակղությունների և քավության, Տիրոջ կողմից հնարավոր թողություն ստանալու բարդ ու բազմաչափ շղթա է: Այդ շարքի ավարտն էլ հարաբերական է, քանի որ մեղսագործ, ապաշխարող և գայթակղվող Մարդուն ներելու կամ չներելու իրավունքը միայն Աստծունն է,

և Մարդն ի սկզբանե պետք է պատրաստ լինի դրան: Նման մոտեցման հիմքում էլ ամենագո ուղղահայացության գիտակցումն ու պահպանումն է, որը Մարդու բնականոն զարգացման երաշխավորն է՝ իր արժեքային բազմազանությամբ: Աստված իրավունք է տալիս Մարդու վարքի քրիստոնեական կերպը քննելու և՛ հորիզոնական (ցանցային), և՛ ուղղահայաց (աստիճանակարգային) ձևերով: Նարեկյան մշակույթում Մարդը՝ որպես ընդհանուրի անդամ, ներկայանում է ամենագո աստիճանակարգության մեջ: Մարդու՝ Աստծո հանդեպ ունեցած հավատը, հույսն ու սերը պետք է լինեն անվերապահ ու բացարձակ: Այս սկզբունքով են թելադրված Մարդու բոլոր արարքները և մարդասիրական չափանիշները: Ըստ էության՝ Մարդու բոլոր արարքների հիմքում Բարձրյալի հանդեպ ունեցած վերաբերմունքն է, քանի որ խախտել օրենքը նշանակում է ոտնձգություն կատարել Տիրոջ կողմից արարված էակի՝ Մարդու հանդեպ: Այս տրամաբանությամբ էլ նարեկյան մշակույթը ներառում է նեոպլատոնական իմաստասիրությունը՝ «Պահպանի՛ր կարգը, որ կարգն էլ քեզ պահպանի» կարգախոսով: Համաձայն Նարեկացու՝ Մարդու հականարտության գործընթացն սկսվում է մահկանացուի մեղսագործությունից և ավարտվում Աստծո ողորմածության դրսևորումներով: Նարեկյան մշակույթի ձևավորման ընթացքում ի սկզբանե հեղինակին զբաղեցնող խնդիրների կիզակետում օրինազանց մեղսագործն է, իսկ մնացածը սոսկ համատեքստ է:

Կյանքը թատերաբեմ է, որտեղ յուրաքանչյուր Մարդ իր դերն է կատարում. մեղք է գործում, հետո ապաշխարում, իսկ Տիրոջ ողորմությանն արժանանում են միայն ապաշխարողները (ԺԲ-Գ):

Նարեկյան մշակույթի արժեքաբանության կենտրոնը Մարդն է՝ բոլոր ժամանակների հանճարեղ ստեղծագործողն ու փիլիսոփան, որը պարտավոր է ըստ արժանվույն գնահատել ոչ միայն Արարչին, այլև իր նախորդների վաստակը: Մեծն Նարեկացին այն համոզմանն էր, որ տիեզերական տարածության և ժամանակի բազմաչափության մեջ Մարդու հիմնախնդիրը միանշանակ չի կարելի մեկնաբանել. չէ՞ որ Հիսուսի մատնության գիշերը Պետրոս Առաքյալը երեք անգամ ուրացավ Քրիստոսին (Մատթ. ԻԶ, 69-75), չէ՞ որ հրեաները Բարաբային գերադասեցին Քրիստոսից, չէ՞ որ Տիրոջ աշակերտները չէին հավատում, որ իրենց Ուսուցիչը «հարյավ ի մեռելոց»:

Իր մեջ ներառելով դարերի հոլովություն մնալով ավանդական հոգևոր-մշակութային արժեքները՝ նախնական մշակույթը, այնուհանդերձ, այդ իրականության կերպարային վերլուծությանը չի անդրադառնում, քանի որ առաքելական-քրիստոնեական հայ տեքստը ի սկզբանե՝ Մովսես Խորենացուց սկսած, «...ամեն կողմից խռովություն... ամբարիշտներին խաղաղություն չկա»³⁴³ մտայնությամբ հնարավորություն էր տվել գրողին տրոհված հայ սոցիալ-քաղաքական իրականության մեջ ապրող Մարդու ուշադրությունը սևեռելու ինչպես անվտանգության ապահովման, այնպես էլ համամարդկային խնդիրների վրա: Գրողն այն համոզմանն է, որ սա է այն ուղին, որին ձգտելով էլ հայը ինչպես ազգային, այնպես էլ վերազգային սոցիալ-քաղաքական իրականության մեջ երկրի, իր տեսակի ապահովման ակնկալիքով, արդիականացնում է իր ինքնությունը՝ դառնալով դերակատարը ոչ միայն ողբի, այլև արարման:

Նարեկացին իր ճանաչողության արժեքային համակարգը խարսխում է հետևյալ սկզբունքների վրա. **ա) Ճանաչի՛ր ինքդ քեզ, բ) Պահպանի՛ր համակեցության կանոնները, գ) Երջանիկ է նա, ով երևույթների միջև եղած կապն է հասկանում:** Այս եռաչափ ճանաչողական հայեցակարգը գրողին հնարավորություն է տվել հարահոս ժամանակի և տարածության մեջ քննելու հավաքական Մարդու ինքնակառավարման կերպարային «Ես»-երի դրսևորումները: Տարաբնույթ ժամանակների և տարածական հարթությունների միջև էլ ընթանում է Մարդու «Ես»-ի ճանաչողության պարուրաձև զարգացումը: Այս պարագայում էլ «Ես»-ի ինքնադրսևորումը համադրվում է Աստծո հետ երկխոսության և բանավեճի միջոցով՝ ճշտելով մարդու տեղն ու դերը Աստծո կողմից արարված բնության մեջ, քանի որ յուրաքանչյուրն իր գոյաբանական առանձնահատկություններով է ներդաշնակվում համատիեզերականին: Սոցիալ-քաղաքական, բարոյահոգեբանական և մշակութային տրոհվածության պայմաններում Նարեկացին իր գոյաբանության և ճանաչողական հայեցակարգի հիմքում դրեց մարդասիրությունը՝ փորձելով հասկանալ՝ միջմշակութային տարածություններում գտնվող մարդիկ իրենց հավատով և ապրած ընդհանուր կյանքով են ինքնադրսևորվում և ինքնաիրացվում, թե՞ իրավիճակով պայմանավորված՝ գործողություններ են կատարում՝ չկարևորելով մարդու

³⁴³ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն/ Թարգ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, [Խմբ.՝ Գ. Սարգսյան].- Եր., Հայաստան, 1990, էջ 316:

գերագույն էությունը՝ արարել, ստեղծել և ապրել Բարձրյալի շնորհած կյանքը: Տրոհված քաղաքական իրավիճակում գտնվելու փաստը հայ մարդուն զրկել էր միացյալ հայրենիքից, սեփական «Ես»-ի հետ հաշտ ու խաղաղ ապրելու հնարավորությունից: Երկատված հայրենիք, քոչվոր ցեղերի անսպասելի հարձակումներ, հոգևոր և աշխարհիկ ֆեոդալների կողմից սահմանված ծանր հարկեր. այս ամենն աղճատել է հայ մարդու «Ես»-ը: «Ես»-ին հնարավորինս միասնական պահելու նկատառումներով էլ Գրիգոր Նարեկացին առաջադրում է մարդու հիմնախնդիրը՝ միաժամանակ վստահ, որ մարդն ի գործու է դիմակայելու բոլոր դժվարություններին սիրելով, հավատալով և հուսալով, որովհետև դրանք կօգնեն նրան ոչ միայն ամրակուռ ոգի ձեռք բերելու, այլև բնականոն որոշումներ կայացնելու՝ սոցիալ-քաղաքական բարդ և իրարամերժ կացության մեջ պահպանելով համակեցության կանոնները: Հենց այս հանգամանքով է բացատրվում, որ միջնադարում այդքան շատ ընդօրինակել են Նարեկացուն, քանի որ անխուսափելի պահանջ էր զգացվում նրա առաջադրած գաղափարների, նրա կողմից մշակված գոյաբանական գործոնների հիմքի վրա իրականացնելու հայ տեսակի գոյության անվտանգ կեցությունը:

Այս մտայնությամբ էլ Նարեկացին, մեկնաբանելով անորոշության և անկայունության մեջ գտնվող իր ժամանակի սոցիալ-քաղաքական իրավիճակը, մշակեց **Աստված-Մարդ, Մարդ-Մարդ, Մարդ-Բնություն** հարաբերությունների արդիականացման նոր համակարգ, որտեղ առկա հակամարտությունները «Ես»-ի՝ ինչպես սեփական, այնպես էլ ընդհանուր, ժամանակի ներդաշնակ և աններդաշնակ տիեզերաբանական ընկալումների արդյունք էին: **Աստծուն** հավատալով՝ **Մարդը** վեհանում է և, մարդասիրությամբ առաջնորդվելով, ինքն իրեն հնարավորություն է տալիս երկխոսություն ծավալելու առաջին հերթին Աստծո, ապա՝ իր նմանների հետ, որոնց ներդաշնակելով՝ վերածվում է աստվածային մարդասիրություն կրողի:

Միայն այս դեպքում է հնարավոր **«Ես», «Նա», «Մենք»** հարաբերությունների արժեքային համակարգի ընդունմամբ մարդասիրություն դավանել ոչ թե ձևականորեն, այլ բանականորեն: Մարդասիրությունը կենսասիրության ակունքն է, ուստի հավատի, հույսի և սիրո տարաբնույթ դրսևորումներով Մարդը պարտավոր է լինել արարչապաշտ, մարդասեր, բնապաշտ և մտահոգվել իր ու իր նմանների անվտանգ, արժանապատիվ, ներդաշնակ

կեցության համար:

Վերոշարադրյալը հիմք ընդունելով՝ մարդասիրությունը դիտարկել ենք որպես նարեկյան մշակույթի արժեքային համակարգի հիմք: Այս ծիրում **հավատի, հույսի և սիրո** եռամիասնության մեջ գտնվող մարդասիրությունը **հանգուցում** է քաղաքակրթական արժեքային բևեռները: Ասվածը հիմնավորենք Գրիգոր Նարեկացու Աղոթամատյանում յուրաքանչյուր մասի սկիզբն ավետող խոսքով՝ «Բանը՝ (Լոգոս)» (Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ), որը ներառում է ժամանակի ու տարածության մեջ իսկությունը ճանաչելու բազմաշերտ մակարդակներ: Ամեն անգամ «Բանը» որպես իմացության նոր եզր գործածվելով՝ ստեղծվում է ներդաշնակ **կեցության ցանցային ճանաչողության համակարգ**, հեղինակը հավատը, հույսը և սերը ներկայացնում է որպես մարդասիրության ակունք³⁴⁴: Աստված իր արարչությամբ Մարդուն կյանքը ապրելու, ժամանակն ու տարածությունը հարափոփոխ արդիականացման մեջ ընկալելու, ինչպես նաև աստվածաշնորհ գործողություններ կատարելու միջոցով նրան սեփական տեսակի անվտանգությունն ապահովելու հնարավորություն է ընձեռում: Աստված իր ստեղծած աշխարհով բազմազան է, և Մարդը, ընդարձակելով իր գիտակցության սահմանները, իմացության իսկությամբ օժտված, դառնում է պարուրային (մանկություն, պատանեկություն, հասունություն) ժամանակի և տարածության մեջ տեղեկատվության կրիչ:

Գրիգոր Նարեկացին, անդրադառնալով Հին և Նոր կտակարանների կերպարներին, յուրաքանչյուրին դիտարկեց իբրև գոյաբանության քառուղիներում կայացած, մարդասիրությամբ իմաստնացած դերակատարներ, որոնց ամբարած արժեքները, որպես տեղեկատվահաղորդակցական համակարգ, փոխանցվում են սերունդներին: Գրիգոր Նարեկացու կենսասիրությամբ հագեցած մարդասիրությունը բազմաչափ է. նա սիրում է Արարչին, նրան, ով ստեղծել է իրեն և բնությունը: Մարդուն դիտարկելով որպես բնությունն ամբողջացնող գոյ՝ Նարեկացին Տիրոջը երկրպագում է նրա համար, որ բնության հանդեպ գիտակցական վերաբերմունքը միայն Մարդուն է շնորհել, ինչն էլ Մարդուն օժտել և՛ համակեցությամբ, և՛ կենսասիրությամբ: Դա նրան հնարավորություն է տալիս աշխարհը տեսնելու բազմազանության և

³⁴⁴ Մարգարյան Մ., Զաքարյան Մ., Հավատը մարդասիրության ակունք՝ ըստ Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան».- «Պատմաբանասիրական հանդես», թիվ 1, 2011, էջ 157-175:

այլախոհության մեջ: Այս մեխանիզմին հաղորդակից լինելու վիճակն (ունակություն) էլ նպաստում է բազմամակարդակ սոցիալականացմանը: Հենց այդ վիճակն է, որ նոր աստիճանի տարածություն է ստեղծում և հնարավորություն տալիս ճանաչելու և ընդունելու նոր որակի համակեցության արժեքներ, որտեղ ինտեգրումն ընկալվում է ոչ թե որպես մեխանիկական նույնականացում և գծային ասիմիլյացիա, այլ արդեն դյուցազնավիպական նախակերպարով ինքնորոշված ռազմավարական պակտերի («կարգի տեսության» շրջանակում) արդիականացման անհրաժեշտության գիտակցում: Դա էլ՝ որպես «Ես»-ի արդիականացման անհրաժեշտ հրամայական, դրսևորվում է իբրև «համակեցության և կենսասփրության» պահպանման միջոց՝ իր բնույթի և բնության նկատմամբ ունեցած հավատարմության ենթատեքստով: Բնության հանդեպ պաշտամունքի գերակայության անվերապահ ընդունումով հեղինակը մարդուն ուղղորդում է դեպի հոգևորի աշխարհը՝ ցանկանալով շեղել նրան սոցիալական ծանր հոգսերից և օգնել գիտակցաբար վեր կանգնելու աններդաշնակ կեցությունից: Այս տիրույթներում էլ Նարեկացու բնապաշտությունն ի հայտ է գալիս երկու սկզբով՝ **նյութական և ոգեղեն**: Գրողը փորձում է երկվության հաշտեցման եզրերը տեսնել Աստծո կողմից արարված ամենակատարյալ էակի՝ մարդու հոգում՝ հավատը, հույսը և սերը համարելով մարդասիրության ակունք՝ դրանով իսկ հայ Մարդու համար մշակելով համակեցության համակարգ: Նման արժեքանությամբ էլ, որպես «... ոտքից գլուխ նորարար և վիթխարի անհատականություն»³⁴⁵, նա փորձեց պատասխանել իր քաղաքակրթական ժամանակի մարտահրավերին և, «...անցնելով մեր բոլոր սրբավայրերից՝ կամրջեց Մեսրոպ Մաշտոցի, Մովսես Խորենացու և իր պատմական ժամանակները...»³⁴⁶: Գրիգոր Նարեկացին հայ ինքնության արդիականացման և ներդաշնակ աշխարհի կայացման առաքելությամբ ոչ միայն նոր մակարդակի բարձրացրեց մարդասիրությունը, այլև **արդիականացրեց «Հոգևոր Հայաստանի» գաղափարը**:

Այս ենթատեքստում էլ Նարեկացին կարևորել է Մարդու (դիցուք՝ հայի) փոխակերպման հնարավորությունները, որոնցից չօգտվելու դեպքում տարածության մեջ ի հայտ է գալիս տեսակների աններդաշնակ ընկալման

³⁴⁵ Պարույր Սևակ, Գրիգոր Նարեկացի.– Երկերի ժողովածու 6 հատորով, հատոր 5, Եր., «Հայաստան» հրատարակչություն, 1974, էջ 245:

³⁴⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 245:

հակասությունը: Բարձրյալը մարդուն արարել է՝ նրան ես պարզենելով Արարման հնարավորություն, որի խորհուրդը քննելով՝ հեղինակն ի հայտ է բերում ժամանակի և տարածության մեջ սոցիալական լոգացող միավորի իր եռաչափ (**ցանկական, բանական, ցասնական**) պատկերացումները: Այս տիրույթում էլ մի դեպքում ժամանակը դիտարկվում է մարդու **մանկության, հասունության, ծերության** գոյաբանական պարույրում, այլ դեպքում՝ մարդ-բնություն-տիեզերք հարաբերությունների ընկալման, մեկնության և ճանաչման տարածական ծիրում: Մարդասիրության հայեցակարգի քննությունն առավել ընդգրկուն դարձնելու նպատակով գրողն իր բազմահարուստ լեզվական միջոցներով շրջանառության մեջ է դրել «ինքն/ա/» դերանվամբ կազմված բառեր³⁴⁷՝ ակնառու դարձնելով «Ես»-ի ինքնամաքրման ժամանակային պարույրը **անցյալ-ներկա-ապագա** շղթայում: Նարեկացին մարդու «Ես»-ի ինքնամաքրման ունակությամբ է միայն մեկնում նրա կողմից Արարչին արժևորելու և գնահատելու հանգամանքը:

Հանճարեղ մտածողի կարծիքով, աշխարհն ի սկզբանե ներդաշնակ է ստեղծված, քանի որ Աստված բոլորին արարել է սիրով և կարևորելով նրանց **ՏԵՍԱԿԸ՝** յուրաքանչյուրին օժտել է որոշակի առաքելությամբ: Հենց այս հանգամանքն էլ ապահովում է **ՏԵՍԱԿՆԵՐԻ** բազմակիությունը՝ շեշտելով նրանց պատասխանատվությունը աշխարհի ներդաշնակ գոյության հանդեպ (ԼԳ, Ը): Տարածական այդ հարթություններում կատարած բազմաբնույթ գործողությունների օգնությամբ Գրիգոր Նարեկացին **մարդ-մարդ** հարաբերություններում ուրույն կառուցակարգ է մշակում՝ ինքնամաքրվել ինչպես երկխոսության, այնպես էլ բանավեճի միջոցով: Գրիգոր Նարեկացու համոզմամբ, ախտից ազատվելու միայն մեկ ճանապարհ կա. մարդը պետք է համոզվի, որ նյութը հոգուն բավարարել չի կարող, և գործողություններ կատարելիս տարածությունը և ժամանակը լցնի **ինքնահամագործակցությամբ, ինքնաիրացմամբ**: Այս միջոցով էլ Նարեկացին բժշկել և բժշկում է Մարդու հոգին, մաքրում ախտերից՝ նկատի առնելով նրա՝ չորս տարրերից կազմված էությունը: Լինելով անտիկ փիլիսոփայության չորս տարրերի մասին տեսության հետևորդ՝ Նարեկացին ԻԶ «Բան»-ում «Բազմահատուած էութիւն բնութեանս, ներհակք միմեանց ի պատերազմի»

³⁴⁷ Միրզոյան Հ. Գ., Նարեկացիագիտական հետազոտություններ (հոդվածների ժողովածու) / Հ. Գ. Միրզոյան. - Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2010, էջ 163-212:

տողով նկատի է ունեցել մարդկային էությունը՝ կազմված չորս սկզբնական տարրերից՝ հուր, օդ (երկնային), ջուր, հող (երկրային): Այս հանգամանքն էլ Տիրոջ հետ հարափոփոխ հաղորդակցման օգնությամբ «Ես»-ը նորոգելու և շրջապատը երկխոսության ու բանավեճի միջոցով նորովի ընկալելու հնարավորություն է տալիս մարդուն: Գրիգոր Նարեկացու ճանաչողության հայեցակարգն իր տարածական բազմաչափության մեջ էությունաբանական արժեք ունի Մատյանում (ԺԴ, Գ):

Նման մոտեցմամբ էլ Նարեկացու աշխարհաճանաչողության համակարգում Մարդու «Ես»-ը կայացած է, եթե նա հաշվետու է իր խղճի առջև: Այս պարագայում խիղճը ոչ միայն հույզերի ածանցյալ է, այլ, որպես ինքնության բաղադրիչ, իր էսթետիկական և բարոյական հագեցվածությամբ ենթադրում է «Ես»-ի երկխոսություն: Հենց այս նկատառումներով էլ Քրիստոսն իր կերպարով մարդուն հնարավորություն է ընձեռում ժամանակի և տարածության մեջ կերպափոխվելու և կառուցելու իր «հավատի շենքը»: Ժամանակային հարացույցը իբրև ելակետ օգտագործելիս բացահայտվում է **սկզբի, վերջի և հայտնության**, ինչպես նաև **մաքրագործման (կատարսիս) փուլայնությունը**: Այսինքն՝ այն կենսագործունեության տիրույթը, որտեղ «Ես»-ը ժամանակի ընթացքում արդիականանում է, միաժամանակ երկխոսում է՝ հանուն մարդասիրության և համակեցության: Քրիստոնեական մարդասիրությունը համապատասխան վարքագիծ ու վերաբերմունք է ենթադրում, որտեղ ժամանակն անվերջ է մարդասիրության համար, իսկ ներքին և արտաքին «Ես»-ի ինքնակատարելագործումը՝ հարափոփոխ:

Նարեկյան մշակույթը՝ հասարակական, անհատական և ազգային դրսևորումներով, «Ես»-ը դիտարկում է «հանգույց-ցանց» փոխհարաբերություններում. «Ես»-ը և՛ հանգույց է, և՛ ցանց, որոնց օգնությամբ նա ոչ միայն արժեք է փոխանցում, այլև ստանում և կուտակում՝ որպես տեղեկատվական համակարգ: Նարեկյան մշակույթի տեսանկյունից «Ես»-ի ներքին և արտաքին մարդու շաղկապվածությունը իրականություն է հարաբերականորեն միասնության և բաժանելիության մեջ, իսկ «Ես»-ի անհատական էության հիմքը նրա հավատն է առ **Աստված, Մարդ, Բնություն**՝ իր բազմաչափ դրսևորումներով:

Ե՛վ ցանցերը, և՛ հանգույցները հնարավորություն են տալիս «Ես»-ին՝ ներքին և արտաքին մարդուն, արժևորելով իր հարատև արդիականանալու

գործընթացը, գիտակցորեն խուսափելու «գորդյան հանգույցի» ճակատագրից: Այս ամենն ազդեցություն է թողնում «Ես»-ի հակամարտության ընկալման վրա, որը նարեկյան մշակույթում դիտվում է որպես «Ես»-երից կազմված և «Մենք»-ի ներսում ձևավորված ապակառուցողական երևույթ: Նման «Մենք»-ը, կորցնելով ներդաշնակ և անվտանգ կեցության կարգավիճակի գերակայության անհրաժեշտությունը, արտաքին աշխարհի ազդեցությամբ տրոհվում է զգայականի և բանականի բևեռներում (նկատի ունենք հայ ինքնությունը ջլատող երևույթները՝ պայմանավորված թոնդրակյան շարժմամբ): Նարեկացու համոզմամբ, հավատը, հույսը և սերը, որպես մարդասիրության ակունք, Մարդուն ձերբազատում են իրականությունը տրոհված ընկալելու հնարավորությունից՝ չսահմանափակելով նրան ո՛չ հասարակական, ո՛չ էլ անհատական ժամանակի միարժեք ընդունումից:

Այս պարագայում էլ սերը իր բազմաչափությամբ (**առ Աստված, Բնություն, Մարդ**) բևեռացնում է մարդու պատասխանատվությունը կատարած արարքների, արտահայտած մտքերի, զգացմունքային ապակառուցողականության նկատմամբ: Վերոբերյալը նարեկյան մշակույթի հիմքն է, որտեղ մարդասիրությունը՝ որպես գործողության բարոյական արժեքանություն, միահյուսված է կյանքի պարույրին, կամքին, պատասխանատվությանը և հակամարտությանը: Այս փոխկապված երևույթների շարունակական ամբողջությունը կերպափոխվում է ժամանակի մեջ՝ «երբեմն ջրվեժելով», «երբեմն լեռն ի վեր մագլցելով», «անդունդը գահավիժելով ճյուղավորված գետաբազուկներով», և նպաստում է «Ես»-ի ինքնահզորացմանն ու ինքնամաքրմանը: Ինքնամաքրվելով՝ Մարդը փնտրում է այն ոսկե միջինը, որի օգնությամբ ներդաշնակում է նյութականը և ոգեղենը. այս դեգերումների հիմնաքարը հավատքն է, հավատալ ոչ թե վախենալով, այլ սիրելով: Աստված, սիրելով մարդուն, նոր ուխտ է կնքում նրա հետ՝ զոհաբերելով Որդուն: Նա գիտի, որ Մարդը չար է, նախանձ, դաժան և դավաճան: Բարձրյալը ճանաչում է Մարդուն, ուստի ցանկանում է բժշկել նրան (ԽԴ, Ա): «**Հավատալ սիրելով**» հայեցակարգը առաջին հերթին նշանակում է մարդուն բանական հավատի հնարավորություն տալ՝ հանուն մարդասիրության դիմելու գիտակցված գործողությունների: Մարդասիրությունը աստվածային լույսի աղբյուր է և իբրև ներդաշնակ կեցության գրավական՝ ուղղորդել է Նարեկացուն ողջ կյանքի ընթացքում:

Ասվածը փաստենք՝ վկայակոչելով նրա անձի մասին պահպանված բանահյուսական³⁴⁸ բազմաթիվ ավանդությունները, որոնց մեջ ներկայացված են նրա՝ ինչպես կրոնական, այնպես էլ աշխարհիկ կյանքի ճանաչողությունը: Այս համադրումն էլ առանցքային է նարեկյան մշակույթի հիմքը կազմող մարդասիրության մեջ: Այս ամենը իր ամբողջական դրսևորմամբ է ներկայանում «Մատյանի» ԼԳ-Զ բանում:

Ակնհայտ է, որ Նարեկացու հայեցակետով սերը՝ իբրև կյանքի աղբյուր, հնարավորություն է ընձեռում Մարդուն սիրո լույսի և հույսի ներքո ապրելու՝ ընդունելով և ճանաչելով տիեզերական ներուժը: Տասը դար անց իր «Սիրելու արվեստը» գրքում Էրիխ Ֆրոմը (1900–1980), անդրադառնալով ժամանակակից մարդու գոյաբանական հիմնախնդիրներին, եզրակացրել է. **«Մերն այնպիսի արվեստ է, ինչպիսին ապրելն է»³⁴⁹:**

Նարեկացին «Մատյանում» իր ճանաչողության հայեցակարգը կառուցել է՝ ամբարելով անտիկ շրջանից ինքնակառավարման մասին մշակված սկզբունքները: Հենվելով դրանց վրա՝ Նարեկացին ճանաչողությունը դիտարկում է որպես բազմակի երևույթ՝ այն ամբողջացնելով բազմաչափ սիրո փիլիսոփայությամբ, այսինքն՝ սերը նրա «Մատյանում» քննարկվում և զուգամիտվում է ն՝ Արարչի, ն՝ մարդկանց, և՛ իրականության ու բնության նկատմամբ: Բազմաչափ սիրո այս զուգամիտումներն էլ հիմք են տալիս Նարեկացուն համարելու կենսասիրության և համակեցության փիլիսոփա. որպես այդպիսին՝ նա մի նոր աստիճանի բարձրացրեց գոյաբանության հայեցակարգը՝ հնարավորություն տալով ինքնակառավարվելու **հավատով, հույսով և սիրով:**

Նարեկացու այս մոտեցումը հայ Մարդուն դարերի հոլովությամբ օգնել և օգնում է ճանաչելու կյանքը՝ որպես հոգնակի երևույթ, նրան՝ բնության մասնիկին, ստիպելով իր գործունեությամբ պատասխանատու լինել Արարչի, մարդկության և բնության առջև: Արարչի երկրպագությունը մարդուն հնարավորություն է ընձեռում հավատի օգնությամբ ճանաչելու ինքն իրեն,

³⁴⁸ Այդ մասին տե՛ս Ա. Ղանալանյան–Ավանդապատում, Երևան, 1969: Նարեկացու մասին ժողովրդական ավանդություններ ու գրույցներ պարունակող ամենահարուստ ձեռագիր ժողովածուն՝ «Վարք և պատմութիւն սրբոյն Գրիգոր Նարեկացոյն» խորագրով, պահվում է Մատենադարանում՝ 9861 թվահամարի տակ, պարունակում է 17 ուշագրավ պատմություններ և գրույցներ:

³⁴⁹ Ֆրոմ Է., Սիրելու արվեստը, թարգմ. և առաջաբանը՝ Մ. Մարգարյանի, Եր., Մխիթար Գոշ, 1996, էջ 16:

բնությունը և ամենքին: Գրիգոր Նարեկացին այդ գործողությունների հիմքում դնում է կենսասիրությունը, համագործակցությունը և համակեցությունը՝ հանուն բնության, բանականության և հոգու էկոլոգիայի փոխապայմանավորվածության³⁵⁰: Այս փոխապայմանավորվածության հիմքի վրա էլ դիտարկելով գործունեության պատասխանատվությունը՝ Նարեկացին մարդ էական սեփական պահանջմունքների բավարարման գործում զսպվածության է կոչում, ինչի արդյունքում էլ ինքնակառավարման սկզբունքները յուրացրած մարդը հնարավորություն է ստանում ասկետականության շնորհիվ մշակելու սեփական գոյաբանության համակարգը: Այս ամենն էլ հիմք է տալիս եզրակացնելու, որ նարեկյան ասկետիզմը³⁵¹ հազեցած է իրականության հանդեպ քննական վերաբերմունքով և մարդուն հնարավորություն է ընձեռում ճանաչողության գործընթացը դարձնելու բանական: Միննույն ժամանակ այն, ռացիոնալացնելով վարքը, մերժում է նյութականությունը որպես միակ գլխավոր և գերագույն նպատակ ընկալելու մտայնությունը, որտեղ **Ասկեզան դրսևորվում է ոչ թե միայն կրոնական բարձրագույն վիճակ՝ ամփոփված Sacrificium – ում, այլ որպես Disciplina**: Իրականության հանդեպ նման մոտեցումն էլ հնարավորություն է տալիս վեր կանգնելու այն աններդաշնակ և ապակառուցողական կեցությունից, որի մեջ հայտնվում է մարդը նյութի ու մտքի անհամատեղության պատճառով: Մարդը պետք է ընդունի հոգևորը՝ միտքը, գաղափարը՝ նմանվելով արարիչ Աստծուն, քանի որ նյութական

³⁵⁰ **Էկոլոգիա** - 20-րդ դարի 50-ական թթ. փիլիսոփա Գ. Բեյտոնը (1904-1980) և 70-ականներին կենսաբան Կ. Լորենցը (1903-1989), ուսումնասիրելով նեոպլատոնականությունը, պարզեցին, որ այն բնության, բանականության և հոգու էկոլոգիայի փոխհարաբերությունների անվտանգության պահպանման համակարգ է: Համաձայնելով նրանց հետ՝ կարծում ենք, որ նեոպլատոնականության արժեքաբանությամբ հազեցած՝ Նարեկացին նոր մակարդակի բարձրացրեց գոյաբանության հայեցակարգը, քանի որ համակարգված մշակեց բնության, բանականության և հոգու էկոլոգիան՝ հանուն հայ ինքնության ներդաշնակ և անվտանգ գոյաբանության:

³⁵¹ **Ասկետիզմ** (հուն. ἄσκησις, որևէ բանում վարժվող, ճգնափոր) - մրցումներից առաջ հունական մարզիկները ֆիզիկական վարժությունների և մարզումների օգնությամբ սովորում էին ճնշել զգայական բնույթով պայմանավորված մարդու պահանջները, որ հասնեն բարոյական կատարելության և աստվածային հարաբերությունների: Տարաբնույթ մշակույթներում ոգու և նյութի փոխհարաբերությունները, որպես երկու թշնամական սկիզբների մոտեցում, ժամանակի ընթացքում մերժվեցին (պյութագորականներ): Ոգու ամրությամբ մարդը հաղթահարում է աղքատությունը, օտարվածությունը, անօրինականությունը և զգայականությունը:

աշխարհը փոփոխական է, սակայն իմաստագուրկ չէ: Ընդունելով աշխարհը հարաբերական ամբողջության մեջ՝ Նարեկացու ասկետիզմը ներկայանում է երկու հիմքով՝ նյութական և ոգեղեն, որոնց օգնությամբ գրողը փորձում է երկվության հաշտեցման եզրերը տեսնել Աստծո արարած ամենակատարյալ էակի՝ մարդու հոգում: Այս ամենով էլ պայմանավորված է նրա բանական մոտեցումները ճանաչողության հարահոս փոփոխությունների նկատմամբ.

Կորնչիմք, եւ ոչ հիանամք,
Թաղեցեալ լինիմք, եւ ոչ խոնարհիմք,
Տարագրիմք, եւ ոչ տագնապիմք,
Եղծանիմք, եւ ոչ զղջանամք,
Մաշիմք, եւ ոչ մտառեմք,
Պակասիմք, եւ ոչ պատրաստիմք,
Գնամք, եւ ոչ զգուշանամք,
Գերիմք, եւ ոչ եւս զգամք (ՕԵ-Գ)³⁵²:

Լինելով ժամանակի սոցիալ-քաղաքական հարաբերությունների արտահայտիչը՝ Նարեկացին ուսումնասիրում է ինքնակառավարման գերակայությունը՝ պայմանավորված իր նմանների հանդեպ ունեցած վերաբերմունքով: Ժամանակակից մարդու կերպարի, նրա որպիսության և լինելության բազմակողմանի բացահայտումն ուղղված էր իշխող դասի կողմից իրականացվող կառավարման բարոյականության դեմ, քանի որ նրանք, խեղաթյուրելով իրականությունը և խաղարկելով մարդու գիտակցությունը, գերիշխում են ոչ միայն իրենց կամքը պարտադրելով, այլև ոգեղենությունն անտեսելով. «Ամեն կողմից աղքատության հնոցն է մրրկում»: Մարդու մասին Նարեկացու դիտարկումներն այնքան բազմաչափ են, որ նա, «հոգեկործան կայսրերի» և «զրկող զորականների» կերպարների բացահայտման հետ համատեղ, փորձում է Քրիստոսի՝ «անթերի մարդկությամբ, անապական աստվածությամբ» կերպարի միջոցով ուշադրություն հրավիրել ինքնակառավարման երկակի բնույթի վրա՝ պայմանավորված նյութական և հոգևոր ակունքներով: Այդ երկուսի մեջ միայն մեկ պարագայում կարող է ընդհանրություն լինել. եթե մարդը ցուցաբերի անսպառ սեր Աստծո, բնության և իր նմանների նկատմամբ՝ ղեկավարելով իր կենդանական սկիզբը և դրանից բխող հետևանքները: ՕՉ-Բ

³⁵² Գրիգոր Նարեկացի, Մատենա ողբերգութեան, աշխատասիրությամբ՝ Խաչատրյան Պ. Մ. և Ղազիսյան Ա., Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1985, էջ 446-447.

բանում Նարեկացին, ինքնակառավարման երկակի բնույթով պայմանավորված, համակարգված ձևով ներկայացնում է մարդկային բազմադիմությունը՝ անկախ նրա սոցիալական կարգավիճակից և նյութի հանդեպ գայթակղություններից:

Մարդ-Աստված-հասարակություն-բնություն աստիճանակարգում մարդու կարգավիճակին անդրադառնալով՝ Գրիգոր Նարեկացին հատկապես առանձնացնում է իշխողների, կառավարիչների «մանրախնդրությունը, գծուծությունը», և այստեղ առկա է նրա հարազատությունը Մ. Խորենացու «Ողբ»-ին:

Քննության ենթարկելով ժամանակի սոցիալական աստիճանակարգը՝ Նարեկացին քննադատում է Աստծո կամոք «թագավոր և իշխան» կարգավիճակում ծնված մարդկանց. «Որոնք մեռցնելու, քան թե կյանք տալու հնարներ են միշտ մտածում միայն»(ԾԱ-Ա)³⁵³: Այնուհանդերձ, հեղինակը Մարդուն չի պատկերացնում առանց հայրախնամ իշխանության, որը, ճիշտ է, Նրա մենաշնորհն է, սակայն, Աստծո թույլտվությամբ, նաև երկրային իշխանությունը իրականացնողի առաքելություն: Հրապուրված իրենց իշխանությամբ՝ նրանք, ներկայանալով Տիրոջ անունից, իրենց գոռոզությամբ, նյութապաշտությամբ, անհանդուրժող կեցվածքով խախտում են Աստծո հաստատած կարգ ու կանոնը՝ խաթարելով Մարդու հավատը Աստծո հայրիշխանության նկատմամբ: Ապակառուցողականությունը, չարությունը, անհանդուրժողականությունը Մարդու հնարավորություն չեն տալիս կարևորելու Աստծո հետ հաղորդակցվելու խորհուրդը: Մինչդեռ պարուրաձև զարգացում ենթադրող **Մարդ-Աստված** հաղորդակցական համակարգը, աստիճանաբար հարստացնելով մարդու ճանաչողությունը, բյուրեղացնում է նաև մարդ-բնություն հաղորդակցական կառուցակարգը: Այս դեպքում է, որ մարդը կյանքի փորձություններով պարպում է իր չար հույզերը և հասնելով (կարող է նաև չհասնել) բարու արարիչ ուժի գիտակցմանը՝ բնությունը դիտարկում է համընդհանուր մարդկային կացարան՝ որպես մարդու կեցության միակ իրական ապաստան:

Նման ենթատեքստով էլ պետք է մեկնել Նարեկացու ԻԶ «Բանի» «Ի նոյն գիրքերեալ զաւարմունս տանցն» տողի «տուն» բառը: Աշխարհը մարդկանց տունն է, և մարդն իր հոր տանը պետք է իրեն ապահով ու անվտանգ զգա: Հետևաբար տեսակն իրավունք չունի տեսակին ոչնչացնելու, որովհետև նման

³⁵³ Գրիգոր Նարեկացի, Մատենանոց տպարան, աշխատասիրությամբ՝ Խաչատրյան Պ. Մ. և Ղազինյան Ա., Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1985, էջ 446-447

դեպքում կամ մարդն է աղքատանում՝ կորցնելով իր «Ես»-ը, կամ էլ «Ես»-ը կորցրած մարդը կորցնում է Աստծո հետ հաղորդակցվելու կառուցակարգը: Այս համատեքստում Նարեկացին, իր ճանաչողության հայեցակարգի հիմքում դնելով ինքնակառավարման գերակայությունը, հնարավորություն է տալիս Մարդուն անվերապահ ընդունելու Արարչին՝ **լայնացնելով «Ես»-ի ընկալման սահմանները...**

Բարձրյալը մարդուն արարել է՝ նրան պարզնելով ապրելու իրավունք, որի խորհուրդը քննելով՝ գրողն ի հայտ է բերում ժամանակի և տարածության մեջ սոցիալական լողացող միավորի իր եռաչափ (**ցանկական, բանական, ցասնական**) պատկերացումները: Այս տիրույթում էլ հեղինակը մի դեպքում ժամանակը դիտարկում է մարդու մանկության, հասունության, ծերության գոյաբանական պարույրում, այլ դեպքում՝ մարդ-բնություն-տիեզերք հարաբերությունների ընկալման, մեկնության և ճանաչման տարածական ծիրում: Հարաբերական անկախության մեջ համակարգաստեղծ այս ճանաչողության միջոցով էլ տիեզերքն իր մեջ ամբարած մարդը՝ տիեզերքի քաղաքացին, ճանաչողության երկակի եռաչափության մեջ իրեն իրավունք չի վերապահում, տարվելով նյութականությամբ, անտեսել գոյի և չգոյի փոխհարաբերությունների սահմանը: Մարդը՝ մեղավոր, անկատար և նյութապաշտ այդ էակը, ապրելով Աստծո ստեղծած «բնություն» կոչվող կացարանում, պետք է իմաստնանա **Աստված-Բնություն-Մարդ-Մարդ** հարաբերություններում: Մարդու կողմից համակեցության կանոնները սեփական «Ես»-ի ճանաչողության երևույթների միջև եղած կապը տեսնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ նարեկյան մշակույթը մարդուն հնարավորություն է տալիս այլ «Ես»-երի հետ համագործակցելու միջոցով ինքնահաստատվելու և ինքնաիրացվելու որպես **ՏԵՍԱԿ**: Այս պատճառով էլ, կարծում ենք, նարեկյան մշակույթը, ժխտելով սոցիալական կառուցակարգին ենթարկվելու նյութապաշտ հակումները, մարդասիրությունը «լիցքավորում» է երկխոսությամբ և համագործակցությամբ: Դրանով իսկ նա հայ մարդու գոյության արդիականացման եզրեր է մշակում՝ նրան մղելով համակեցության, ինքնաճանաչման, հանդուրժողականության, այլախոհության և ոգեղեն արարման:

ՎԵՐՋԱԲԱՆ
(ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

1. Քաղաքական արդիականացման տեսության հիմքում գլոբալ քաղաքական գործընթացների կառավարման ընդհանուր մոդելի հիմնավորման գաղափարն է: Այս մոդելի հաստատման և արդյունավետ գործառնության համար նախատեսվում է անցում կատարել ավանդական (փակ) հասարակությունից դեպի ժամանակակից (բաց) տեղեկատվական հասարակություն, որը բացառապես գիտատեխնիկական առաջընթացի, սոցիալական շարժունակության, արժեքային և նորմատիվ համակարգերի վերակառուցման կամ արմատական փոփոխության արդյունք է:

2. Քաղաքական արդիականացումը քաղաքական համակարգի բազմաչափ փոփոխությունների վերլուծության ու կանխատեսման վրա հիմնված համարժեք կերպափոխման գործընթաց է: Այն պայմանավորված է մի կողմից քաղաքական իշխանության իրականացման մշակույթով, իսկ մյուս կողմից՝ **արտածին (Ս. Հանթինգթոն) և ներծին (Խ. Լինց)** գործոնների հիման վրա տեղի ունեցող ժողովրդավարացման հրամայականներով: Քաղաքական համակարգի ժողովրդավարացման առումով արդիականացման գլխավոր ուղղություններն են՝ **սեփական սիմվոլներով ու արժեքներով ճկուն քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ ձևավորումը, վարչական մեքենայի արդյունավետ գործառնումը, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների կիրառումը, ազգային անվտանգության ընդարձակված օրակարգի ապահովումը:** Գործընթացը հենվում է քաղաքական իրականությունը պարբերաբար նորարարացնող դերակատարների՝ նոր ազատական պոլիարխիկ էլիտայի, պետության և ազգային շահերը ներկայացնող կրթված ու առաջադեմ միջին խավի, ինչպես նաև առանձին ռազմավարական ստեղծագործ անհատների վրա:

3. Քաղաքական արդիականացման տրամաբանությունը արմատապես փոխվեց, երբ 1974 թ. Պորտուգալիայից մեկնարկած ժողովրդավարացման «երրորդ ալիքի» «կարմիր մեխակների» հեղափոխությունից հետո տվյալ ժամանակի տեսաբանները (Գ. Ալմոնդ, Դ. Փաուել, Լ. Փայ, Ս. Հանթինգթոն և ուրիշներ) համոզվեցին, որ հասարակության զարգացումը պայմանավորված չէ միայն **«ավանդական-արդիական»** արժեքների մեխանիկական դիստոտմիայով: Այդ տեսակետից էլ քննադատվեց քաղաքական

արդիականացման առաջին երկու փուլում (1950-1960-ական թթ. և 1970-1980-ական թթ.) Լատինական Ամերիկայում և Աֆրիկայում **«Ժամանակակից հասարակություն»** կառուցելու գործընթացը: Նախ մերժվեց այդ նպատակով ծավալված վեկտորայնությունը (միայն ազատականացում), ապա՝ մեխանիկական «արևմտականացման» փոփոխությունների նպատակահարմարությունը: Ակնհայտ էր, որ դրանց հետևանքով էին առաջացել քաղաքական զարգացման ճգնաժամերը (բաշխման, մասնակցության, շարժունակության, ինքնության և լեգիտիմության):

4. Գլոբալացման և տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների զարգացման պայմաններում, որպես ռազմավարական կառավարման ապահովման հիմք, գերակա տեղ և դեր ունի քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափումը: Այս համատեքստում քաղաքական զարգացման ճգնաժամերի արագ հաղթահարման ակնկալիքով քաղաքական արդիականացումը սահմանվեց որպես ինստիտուցիոնալ նորամուծությունների, ռեսուրսների մոբիլիզացման, երիտասարդության սոցիալականացման, էլիտաների պատասխանատվության բարձրացման և անվտանգայնացման ռազմավարության մշակման, ինչպես նաև խաղաղության մշակույթի ինստիտուցիոնալ կայացման գործընթաց:

5. Քաղաքական արդիականացումն անհրաժեշտ է ուսումնասիրել **ժողովրդավարական անցումից համախմբում** հարացույցի ներքո, որի համաձայն՝ բոլոր զարգացող երկրները պետք է ունենան անցման միասնական կերպ. **ավտորիտարիզմի քայքայում և փլուզում, վարչակարգային ազատականացում, ինստիտուցիոնալ ժողովրդավարացում, ոչ համախմբված ժողովրդավարության փուլ և, վերջապես, ժողովրդավարական համախմբում**: Այս դիտանկյունից ժողովրդավարական համախմբման գործընթացը սերտորեն կապված է քաղաքացիական հասարակության, հաշվետու քաղաքական էլիտայի, իրավունքի գերակայության, հանրային աջակցությունը վայելող վարչակարգի և տեղեկատվահաղորդակցական նոր տեխնոլոգիաների կիրառմամբ պայմանավորված բնականոն արդիականացման գործընթացի հետ:

6. Քաղաքական համակարգի արդիականացումը բնակչության ավանդույթների և սոցիալական հիշողության դեմ ուղղված պայքար չէ: Գաղտնիք չէ, որ ՀՀ-ում քաղաքական համակարգի արդիականացման առաջին փուլում

(1990-1996թթ.) արդեն հայ հասարակությունն ընկղմվեց քաղաքական զարգացման ճգնաժամերի մեջ: ՀՀ-ում իրականացված գծային ազատականացման հետևանքով ծագած քաղաքական զարգացման առաջին ճգնաժամը **բաշխման ճգնաժամն էր**: Իրականացված գծային ազատականացման բարեփոխումներից հետո (1990-1996թթ.) «նոր ժողովրդավարների» առաջին սերունդը քաղաքական, տնտեսական և բազմաթիվ այլ արտոնություններ ստացավ («Հաղթողը ստանում է ամեն ինչ»), ինչն էլ ուղեկցվեց հասարակության բևեռացումով: Սոցիալական-քաղաքական-տնտեսական խմբերից հաճախակի մարզինալ դեգերումները, օտարվածությունը, սոցիալական բևեռվածությունը առաջ բերեցին **մասնակցության և շարժունակության ճգնաժամ**: ՀՀ քաղաքացիների համար «նոր ժողովրդավարների» առաջին սերնդի կողմից ներդրվող ազատական ժողովրդավարական արժեքները կորցրին իրենց գրավչությունը, ինչը հանգեցրեց հաստատված վարքի նոր ձևաչափերի, իսկ արժեքների նկատմամբ ձևավորված անվստահությունը հարուցեց **ինքնության ճգնաժամ**: Այս գործոններով էլ պայմանավորված՝ ՀՀ-ում քաղաքական իշխանությունն ընկղմվեց **լեզիտիմության ճգնաժամի** մեջ: Սոցիալական բևեռվածությունը, աղքատությունը, կոռուպցիան, իշխանության իրականացման ցածր մշակույթը նպաստավոր միջավայր ստեղծեցին տրոհված և աններդաշնակ կորպորատիվիստական շահերի արտահայտման, փոխհամաձայնեցված խմբիշխանության հաստատման, ինչպես նաև զանգվածային մարզինալացման համար:

7. Քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարումը մարտահրավեր է, որին համահունչ պատասխանելը հասարակությունների, ազգերի, մասնավորապես քաղաքական էլիտաների առաքելությունն է: Սկսած 1990-ական թվականներից՝ **բնաշխարհիկացումը (Indigenization)** ոչ արևմտյան քաղաքակրթություններում դարձել է ռազմավարական կառավարման օրակարգի գերակա բաղադրիչ: ՀՀ-ում բնականոն արդիականացման իրականացման համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը. ռազմավարական կառավարումը նպաստում է, որ ինդիգենիզացված էլիտան դրսևորի քաղաքական կամք և «վերևից» իրականացվող շարունակական բարեփոխումների միջոցով հաղթահարի քաղաքական զարգացման ճգնաժամերը՝ հենվելով **«մարտահրավեր-պատասխան-մարտահրավեր»** հայեցակարգի վրա:

8. Քաղաքական արդիականացման գործընթացում վճռական դեր ունի **«փափուկ ուժի» (soft power)** գործառույթը: Գիտակցության **«վերակոդավորման»** վրա հիմնված **«փափուկ ուժի» միջոցով տեղի է ունենում** խորհրդանշական աշխարհի բնականոն արդիականացում: Ընդ որում, քաղաքական արդիականացման գործընթացում հենց **խորհրդանշական հեղափոխություններն են** կոչված կտրուկ փոխելու պատմության հոլովություն ձևավորված աշխարհի պատկերը՝ մշակելով **բարեկեցիկ Ներկայի և երջանիկ Ապագայի** տեսլականն ու իրականացման մեխանիզմները:

9. Քաղաքական արդիականացման գործընթացում տեղի ունեցող փոփոխությունների արդյունավետությունը հիմնականում որոշվում է իշխանության լեգիտիմության մակարդակով: Այս իմաստով ՀՀ-ն՝ որպես «վագոդ» արդիականացման երկիր, երկու տասնամյակ գտնվելով լեգիտիմության ճգնաժամի մեջ, ապրել է ավտորիտար ժողովրդավարության պայմաններում: Վերջինիս հաղթահարումը և նոր որակի (**ազգակենսորոն, պետականակենսորոն, քաղաքացիակենսորոն**) քաղաքական արդիականացման գործընթացների կրողն ու արարողը ՀՀ-ում դարձել է «նոր սերնդի ժողովրդավար» երիտասարդությունը: Եթե վարքի միասնական մոտիվացիա և արժեշահային համակարգ ունեցող զարգացած հասարակության երիտասարդության համար հեղափոխությունը տեղի է ունենում գիտակցության մեջ, ապա կերպափոխվող հասարակություններում երիտասարդության դրոշակակրի կարգավիճակը առավել վառ դրսևորվում է **«խզման գծերի»** (Ս. Հանթինգթոն) երկայնքով:

10. **«խզման գծերն»** այն տարածքներն են, որտեղ տեղի են ունենում քաղաքակրթական ներթափանցումներ, և որտեղ կարելի է մոդելավորել հեղափոխական իրադարձությունների զարգացման բազմաթիվ տարբերակներ: Ակնհայտ է, որ հենց **«խզման գծերի»** երկայնքով է տեղի ունենում տարբեր քաղաքական արդյունքների հանգեցնող և՛ «գունավոր հեղափոխություններ», և՛ «թավշյա հեղափոխություններ»: Եթե «գունավոր» վարկաբեկում և տապալում են ոչ թե ռեժիմը, համակարգն ու ինստիտուտները, այլ գործող քաղաքական վերնախավը, ապա «թավշյա հեղափոխությունների» արդյունքում տեղի է ունենում շրջադարձային փոփոխություն՝ **հակաժողովրդավարական ռեժիմների քայքայում, վերնախավի փոփոխություն, քաղաքական համակարգի վերափոխում և**

Ժողովրդավարական համախմբում ավետող ռազմավարական քաղաքականության մշակում:

11. Հայկական «թավշյա հեղափոխության» արդյունավետ փոփոխությունների համար անհրաժեշտ է «վերաբժնորել» հայ հասարակության գիտակցությունը: Որպեսզի քաղաքական իշխանությունը Հայաստանում միաժամանակ լինի լեգիտիմ, ռացիոնալ-խարիզմատիկ և հրաժարվի անորոշություններ մակածելուց, ապա ի սկզբանե պետք է ներկայացնի իր կողմից կառուցվող աշխարհի ազատության և արդյունքի կառավարման փիլիսոփայությունը: Հայ հասարակության խորհրդանշական հիերարխիայի արժեքային փոփոխությունը մոտավորապես պետք է ընթանա հետևյալ մոդելով՝ ա) քաղաքական գիտակցության բնականոն արդիականացում՝ տեղեկատվության, մրցունակ գիտելիքների, մարդկային կապիտալի նպատակամետ կառավարման, ինովացիայի և մշակույթի օգնությամբ, բ) «թշնամի-բարեկամ» համակարգի հիերարխիայի վերաբժնորում՝ պայմանավորված նոր աշխարհատեսությամբ, աշխարհընկալմամբ, ինչպես նաև ազգային ու պետական շահերի ներդաշնակման հրամայականներով, գ) ծիսային տարածության փոփոխություն PR տեխնոլոգիաների և GR կապերի զարգացման միջոցով, դ) արդյունքի կառավարման նոր մակարդակի և իշխանության խարիզմայի երկարակեցության ապահովում, ե) գաղափարախոսական նոր տեքստերի մշակում և շրջանառում, տեքստեր, որոնք կոչված են ներդնելու ազգային անվտանգության ընդարձակված օրակարգի նոր ընկալումները՝ ապահովելով հասարակության ու իշխանության ռացիոնալ և իռացիոնալ էներգիան, զ) նպատակադրված գործունեություն են ծավալում ազգային մրցունակության բարձրացման և հայկական քաղաքակրթության բնականոն արդիականացման նոր հերմենալ տեքստ մշակողներ՝ լրագրողներ, գրողներ, գիտնականներ, ինչպես նաև վիրտուալ աշխարհի դերակատարներ՝ բլոգերներ, սոցիալական ցանցերի օգտատերեր, է) շարունակական քաղաքացիական կրթություն և քաղաքացիական մշակույթի զարգացում, որը հնարավորություն կտա հիմնավորելու քաղաքացիավարության (civilianarchic) ինստիտուտի արժեքաբանությունը, ը) «փորձի և սխալի» կառավարման հարացույցի մերժում և «գիտավերլուծական» կառավարման հարացույցի օգնությամբ իշխանության իրականացման մշակույթի հումանիզացում, գերշահույթի և փոխհամաձայնեցված խմբիշխանության մերժում, տրիպարտիզմի հաստատում,

ինչպես նաև հասարակության շարունակական քաղաքական սոցիալականացում:

12. Ամբոխավարության, մարզինալության կանխման, ինչպես նաև ազգային անվտանգության նոր սպառնալիքների բացահայտման նկատառումներով ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմության հաստատման հիմնախնդրի ուսումնասիրումն այսուհետ իրականացնել «քաղաքական համախմբագիտություն» (կոնսոլիդոլոգիա) գիտաճյուղի շրջանակներում: Դա հնարավորություն կտա պետական և հանրային քաղաքականություն մշակել «գիտավերլուծական» հարացույցի սկզբունքներով:

13. ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմացման գործընթացում որոշիչը մրցակցող էլիտաների փոխհարաբերությունների, նրանց կողմից քաղաքական շուկայի արդիականացման գործընթացում համագործակցության մշակույթի զարգացումն է: ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմացումը պետք է տեղի ունենա իշխանական հարաբերությունների բոլոր մակարդակներում՝ բազմակողմանի դիսկուրս ծավալելով **«բարեփոխումներ վերնից»** կամ **«հեղափոխություն վերնից»** (M. McFaul) սցենարի նպատակադրված կիրառման համար: ՀՀ-ում պետական կառավարման արդյունավետության բարձրացման նկատառումներով կարևորում ենք քաղաքական էլիտայի կողմից **կառավարման ծրագրային, գիտական ապահովման և արդյունավետության բարձրացմանն ուղղված համակարգերի ստեղծման անհրաժեշտությունը:**

14. Քաղաքական արդիականացման բարդ և բազմաչափ գործընթացի առանձնահատուկ դերակատար է ազգը: «Վազող/հասնող» արդիականացման փորձը վկայում է, որ ազգերի և ազգ-պետությունների «դժբախտությունն» սկսվում է այն ժամանակ, երբ քայքայվում է ժամանակի ընթացքում ձևավորված նրանց մշակութանորմատիվային և բարոյահոգեբանական համակարգի քաղաքական էությունը, երբ լեգիտիմության ցածր մակարդակը մարզինալացնում է հասարակությանը, քաղաքացուն և հատկապես երիտասարդությանը՝ տրոհելով ազգային ինքնությունը: Լինելով պատմության հոլովույթում ձևավորված և պարբերաբար կերպափոխվող սոցիալ-քաղաքական տեքստ՝ ազգային ինքնությունը ներառում է ազգի ծագումը, զարգացումը, ազգային հոգեկերտվածքն ու պատմական հիշողությունը, ինչպես նաև արժեքային համակարգի այն հիմնարար բնութագրիչները, որոնք ձևավորում են ազգ-պետությունը: Այս

դիտանկյունից անհրաժեշտ է վերլուծել **պատմական, ծագումնաբանական, գործառնական և քաղաքակրթական** կապերի այն առանձնահատկությունները, որոնք առկա են ՀՀ-ում պետության և նոր ձևավորված աշխարհակարգի ինստիտուցիոնալ կազմավորումների միջև:

15. **Հայաստանի և հայության համար, երբ սոցիալ-քաղաքական համակարգի կերպափոխումը հղի է տարաբնույթ անորոշություններով, երբ արագորեն փոխվում է ինքնության արդիականացման արտաքին միջավայրը, հոգևոր անվտանգության ապահովումն ունի քաղաքակրթական նշանակություն:** Հոգևոր անվտանգության հիմքում ազգ-պետության անվտանգությունն ապահովող բոլոր այն բարոյահոգեբանական և հայրենասիրական նորմավորված արժեքներն են, որոնց միջոցով ժողովուրդն արտահայտում է իր պատրաստակամությունը պաշտպանելու իրեն, իր պետությունն ու պետականությունը: **Այս մոտեցման շրջանակում էլ անհրաժեշտ է վերաբժնորել հասարակության հոգևոր անվտանգության ապահովման հրամայականները՝ զարգացնելով ՀՀ-Սփյուռք-ԱՀ ցանցային համագործակցությունը և համակեցության մշակույթը:** Հայության միավորումը և **բարեկեցիկ, երջանիկ ապագայի տեսլական ունեցող Հայաստանի** արդիականացումը հնարավոր է միայն հոգևոր անվտանգության ապահովման և համակեցության մշակույթի **զարգացման** պայմաններում:

16. Պատմականությունը պետության ինքնիշխանության բնականոն արդիականացման բաղադրիչ է: Այն ոչ միայն անցյալը վերլուծելու, այլև տեղեկատվական հոսքերի պարուրային վերականգնման գործընթաց է, որի տիրույթներում էլ քաղաքական ժամանակը դառնում է առավել կենսունակ և մրցունակ: Այս գործընթացում առաջարկում ենք շրջանառել **«անցյալի ընտրություն»** եզրույթը, որը հնարավորություն կտա ռացիոնալ մակարդակում պատմական հիշողությունից «կանչելու» այն հատվածը, որի հետագա գեներացումը կապահովի և՛ կենսունակություն, և՛ մրցունակություն՝ միևնույն ժամանակ գտելով տեղեկատվական աղմուկը:

17. ՀՀ-ում քաղաքական արդիականացման գործընթացի վերլուծությունն անհնար է առանց պատմական դաշտի քննարկման, քանի որ **քաղաքական համակարգը, որը միջանկյալ է պատմականության դաշտի և սոցիալական կազմակերպման միջև, ազդվում է առաջինից և ուղղորդում է երկրորդի արդիականացման գործընթացը:** Այս պարագայում ՀՀ-ում կառավարման

ինստիտուցիոնալ նոր համակարգի վերլուծությունը նպատակահարմար է իրականացնել գործառնական մոտեցմամբ:

18. Խաղաղության մշակույթի գործառումը մեծացնելով՝ ՀՀ-ում մասնակցության ազատական մոդելի հաստատման հնարավորությունը իրական պայմաններ է ստեղծում հայ մարդու համար իր մրցունակ գիտելիքը և կրթությունը դարձնելու փոխհամաձայնեցված խմբիչխանության մենաշնորհի պայքարի դեմ հաղթանակի գրավական: Առաջարկվող մոդելի օգնությամբ ժողովրդավարական համախմբման սկզբունքների շուրջ կմիավորվեն բոլոր սոցիալական խավերը՝ ընդգրկվելով կոռուպցիայի և աղքատության դեմ մղվող պայքարի նպատակամետ գործընթացում, քանի որ **ժողովրդավարությունը պատասխանատվության որոշակի տեսակ է, այլ ոչ թե հասարակական անարդյունք բանավեճերի կազմակերպման ձև:**

19. ՀՀ-ում քաղաքական բնականոն արդիականացման հրամայականից ելնելով՝ անհրաժեշտ է հրաժարվել նոր անորոշություններ մակածող «վագոդ» արդիականացման մոդելից: Հեռանկարային է ռեֆլեքսիվ արդիականացումը, որը հնարավորություն կտա ըստ հրամայականի իմաստավորելու բնականոն արդիականացումը և միաժամանակ այն իրականացնելու հայկական քաղաքակրթության նորացման պահանջներին համարժեք: Այս համատեքստում, հայ իրականությունում ստեղծելով անցյալի վերաթնոթման հիմքեր, ռեֆլեքսիվ զարգացումը համեմատության մեջ իրատեսորեն կհամակարգի արդիականացման մոդելների դրական ու բացասական հատկանիշները և կստեղծի հայկական արդիականացման արդյունավետ մոդել: Նման մոտեցման համար հիմք են ծառայում իրենց «հետամնաց ավանդույթների» տիրույթներում բնականոն արդիականացող երկրների գրանցած արդյունքները: Այդ երկրները, արդիականության այս կամ այն ինստիտուտի ընդօրինակման նպատակով օգտագործելով ընտրության առավել տարաբնույթ և ճկուն կառուցակարգեր, քաղաքական զարգացման ճգնաժամերի հետևանքները չեզոքացնելու հարուստ փորձ են կուտակել: Այս դիտանկյունից առավելապես սեփական անցյալի վրա հենված հայկական ռեֆլեքսիան նպատակահարմար է օգտագործել ինչպես սեփական, այնպես էլ այլ քաղաքակրթությունների անցյալի, ներկայի և ապագայի տեսլականի իմացության համար:

20. Ազգային մրցունակության և ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտ է «ժողովրդավարություն»,

«ազատականություն», «պահպանողականություն», «մարդու իրավունքներ», «քաղաքական ազատություն» արժեքներն ընդունել որպես քաղաքական արդիականացման կառուցվածքային բաղադրիչներ: Միայն այս պարագայում, հաղթահարելով պահպանողական և ազատական մոդելների մեխանիկական ձուլման և կոշտ գծային ազատականության հետևանքով իր քաղաքական, սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական բազում հիմնախնդիրներով հայտնի փոխհամաձայնեցված խմբիշխանական մոդելը, ՀՀ կառավարող էլիտան կկարողանա արդիականացման այլընտրանքային ուղիներ մշակել: Այսինքն՝ քաղաքական արդիականացումը պայմանավորված է առաջին հերթին հասարակական գիտակցության կերպափոխումով, և հենց հասարակական գիտակցության զարգացման մակարդակն է, որ արդիականության գործընթացում արդյունքի կառավարում ապահովելու նպատակադրմամբ թելադրում է կառավարող էլիտային ի սկզբանե համադրել «անցում-համախմբում» գործընթացները: Միայն այդպիսի համադրելիությունը առավել կենսունակ դարձնի հայկական քաղաքակրթությունը և կնորարարացնի այն:

21. Քաղաքական արդիականացման գործընթացում իշխանության իրականացման քաղաքակրթական փորձի հանրագումարից ակնհայտ է, որ առանց ազգային և հանրային արժեշահային համակարգի իմացության անհնար է արդյունավետ սկզբունքներ մշակել պետական իշխանության ժողովրդավարական լեգիտիմացման համար: Այդ նկատառումներով էլ ՀՀ-ում քաղաքական արդիականացման գործընթացի համակարգայնության ապահովումը ենթադրում է քաղաքականության դերակատարների, հատկապես կառավարող էլիտայի վարքաբանության մեջ ազգային գաղափարի տեղի ու դերի կարևորում, ինչպես նաև հայկական քաղաքակրթության հիմք հանդիսացող ոգեղենության զարգացում՝ «Հոգևոր Հայաստանի» տեսքով: Հայ ոգեղեն «Ես»-ի արարման մեխանիզմի համակարգումը սկսվել և շարունակվում է բոլոր այն ՀԱՅ ՄԵԾԵՐԻ կողմից, որոնք ժամանակի մարտահրավերներին հավասարաթեք ստեղծել և սերունդներին են փոխանցում «Հոգևոր Հայաստանի» լուսավոր երազանքը: Հենց այս երազանքն է Հային պարբերաբար հիշեցրել, որ ինքը **հավատի, արդարության, յուրօրինակության կրող է, այսինքն՝ ՀԱՅ, իսկ իր հայրենիքը ՀԱՅՔՆ է, այսինքն՝ հավատի, արդարության, յուրօրինակության, քերթության վայր:**

22. **«Հոգևոր Հայաստանը»՝ որպես** հայ քաղաքական մտքում ձևավորված և ժամանակի մարտահրավերներին **համահունչ արդիականացող ազգային գաղափար, մեր համոզմամբ,** այն տեսլականն է, այժմեական արժեքային այն ուղենիշը, որը կարող է քաղաքական ինստիտուտների կառավարման ոգեղենությունն ապահովող խթան լինել: Նկատի ունենալով, որ «Հոգևոր Հայաստանն» ունի խորքային քաղաքական-քաղաքակրթական նշանակություն և ինստիտուցիոնալ իմաստով սահմանափակ կիրարկում (այն չի ենթադրում պետական մեքենան վերահսկելու ձգտում), նախընտրում ենք այն դիտարկել որպես ոգեղենության արժեքաբանության վրա ձևավորված և կենսունակությունը դարերի հոլովությամբ պահպանված գաղափար՝ **որպես հայկական քաղաքակրթությունը ժողովրդավարական արժեքների միջոցով համակարգող ամբողջություն:**

23. Արդի տեղեկատվահաղորդակցական, մարդաբանական ու քաղաքակրթական փոփոխությունները մարտահրավերներ են նետել քաղաքական արդիականացման և զարգացման գործընթացում գտնվող ժողովուրդների ինքնությանը: Այս համատեքստում էլ կարևորել ենք Արևելքի և Արևմուտքի քաղաքակրթական խաչմերուկներում ապրած, Մարդու ոգեղենության հիմնախնդիրը հայկական քաղաքակրթության հիմնաքար դարձրած, տիեզերական մտքի թռիչքներով օժտված Գրիգոր Նարեկացուն: 10-րդ դարը՝ **աստվածակենտրոնությունից դեպի մարդակենտրոնություն** իր դրսևորումներով, սոցիալական ընդլզումներով, գահակալական նկրտումներով, մարդուն դրել էր իրականության բազմաչափ ընկալման այնպիսի իրավիճակում, որը նրան մղել էր նյութապաշտության: Այս համատեքստում մեկնաբանելով անորոշության և անկայունության մեջ գտնվող իր ժամանակի սոցիալ-քաղաքական իրավիճակը՝ Նարեկացին մշակեց **Աստված-Մարդ, Մարդ-Մարդ, Մարդ-Բնություն** հարաբերությունների իմացաբանական նոր հայեցակարգ, որտեղ առկա հակամարտությունները «Ես»-ի արդիականացման ինչպես սեփական, այնպես էլ ընդհանուր ժամանակի ներդաշնակ և աններդաշնակ տիեզերաբանական ընկալումների արդյունք էին: Նարեկացին իր իմացաբանական հայեցակարգի արժեքային համակարգը խաբսխում է հետևյալ սկզբունքների վրա. **ա) «Ճանաչի՛ր ինքդ քեզ», բ) «Պահպանի՛ր համակեցության կանոնները», գ) «Երջանիկ կառավարում է նա, ով երևույթների միջև եղած կապն է հասկանում:** Այս եռաչափ իմացաբանական հայեցակարգի օգնությամբ Նարեկացին

հիմնավորել է այն գաղափարը, որ Մարդը իր գոյաբանական առանձնահատկություններով է ներդաշնակվում համատիեզերականին: Արդի անորոշությունների և քառասյուրքայան պայմաններում կարևորելով մեծ մտածողի գաղափարները՝ մեկնում ենք Մարդու բանականի և զգայականի ներդաշնակ կեցության սահմանները: Ըստ Նարեկացու՝ գոյաբանության այդ պարույրն անկումների, հաղթանակների, դավաճանությունների, հիասթափությունների, հարստության և աղքատության հարահոս մի շղթա է, որտեղ աստվածահաճությունը՝ սերը, հույսն ու հավատը, դառնում են գոյաբանության արժեքային համակարգի հենքը:

24. Աշխարհը ներդաշնակ տեսնելու Նարեկացու ցանկությունը պայմանավորված էր այն քաղաքական, սոցիալ-տնտեսական կացությամբ, որի ականատեսն էր մեծ մտածողը: Ներդաշնակ աշխարհի ստեղծման նպատակով էլ մարդը պետք է կարևորի սերը ոչ միայն Աստծո, այլև իր նմանների և բնության նկատմամբ: Նարեկացին իր Ճանաչողության համակարգն ամբողջացրեց բազմաչափ սիրո փիլիսոփայությամբ՝ **«Հավատալ՝ սիրելով կյանքը»**, այսինքն՝ սերն ամբողջական է և գիտակցված միայն այն դեպքում, երբ դրսևորվում է և՛ Արարչի, և՛ մարդկանց, և՛ իրականության ու բնության նկատմամբ: Բազմաչափ սիրո այս գուգամիտումների հիման վրա էլ Նարեկացուն կարելի է համարել գոյաբանության և իմացության փիլիսոփա: Միայն կյանքը սիրելով է Մարդն ինքն իրեն հնարավորություն տալիս Աստծո կողմից իրեն պարգևած ժամանակն ու տարածությունն անցնել արարելով՝ համաձայն ոչ թե **«Ունենալ լինելու համար»**, այլ **«Լինել ունենալու համար»** մտայնությամբ: Հազար տարի հետո, սիրո իր բազմաչափության քաղաքականությունը մշակելով, Է. Ֆրոմը (1900-1980) կգրի. **«Հավատալ սեփական ուժերին, հավատալ մարդկանց, հավատալ՝ սիրելով»: Ավելին. «Բազմաչափ սերն է արարման և կենսասիրության աղբյուրը»**, իսկ նյութով ախտահարված հոգեբանության տեր մարդու հոգին անհաղորդ է ոգեղենությանը, և նյութի հիման վրա զարգացող արևմտյան քաղաքակրթությունը կեղծ է իր հզորության մեջ:

25. Յուրաքանչյուր քաղաքակրթական ժամանակ մշակում է սեփական զարգացմանը բնորոշ արժեքային համակարգ՝ արդիականացնելով համակեցությունը և ինքնակառավարվելու հնարավորությունը: Լինելով ժամանակի սոցիալ-քաղաքական հարաբերությունների արտահայտիչը՝

Նարեկացին ինքնակառավարման հիմքում դրել է **«Տեսակն իրավունք չունի տեսակին ոչնչացնելու, որովհետև այդ դեպքում կա՛մ մարդն է աղքատանում՝ կորցնելով իր «Ես»-ը, կա՛մ էլ «Ես»-ը կորցրած մարդը կորցնում է Աստծո հետ հաղորդակցվելու հնարավորությունը»** կառուցակարգը: Այս խորհուրդը քննելով՝ Նարեկացին ի հայտ է բերում ժամանակի և տարածության մեջ լողացող սոցիալական միավորի՝ Մարդու և նրա եռաչափ (**ցանկական, բանական, ցասնական**) պատկերացումները: Նարեկացին, ձևավորելով և հստակեցնելով Մարդու գոյաբանական և իմացաբանական հիմքերը, ստեղծեց աստվածակենտրոն և մարդակենտրոն աշխարհների ներդաշնակման վրա հիմնված **նարեկյան մշակույթը**: Այն Մարդուն օգնել է, օգնում է և կօգնի զարգանալով դիմակայելու և՛ իր, և՛ ապագա ժամանակների մարտահրավերներին: Իր բարենորոգչական բնույթով **նարեկյան մշակույթը** կրոնական և աշխարհիկ հակադրություններ չի ենթադրում. այն մարդկանց հաղորդակից է դարձնում իր աշխարհատեսությանը, որտեղ իշխում է ոչ թե նյութականը, այլ ոգեղենը: Ոգեղենությունը՝ որպես հանրային համակեցության կազմակերպման և զարգացման գործընթացների արտացոլանք, ներառում է գիտակցության մեջ տեղի ունեցող փոփոխությունների և երևույթների գնահատման ամբողջականությունը: Փաստորեն, Նարեկացին, մշակելով իմացաբանական նոր հայեցակարգ, **արդիականացրեց «Հոգևոր Հայաստանի» գաղափարը**՝ որպես հարափոփոխ տարածական բազմաչափության մեջ սիրով (կենսասպիրությամբ) հագեցած ոգեղենությունն արդիականացնող **էութենաբանական** արժեք: **Պ. Սորոկինը, ընդգծելով սիրո դրսևորման տարածաչափական այլ հարթություն, հավելում է, որ սիրո էներգիան կամ ուժը տարբերվում է մնացյալ բոլոր էներգիաներից և համադրելի չէ «ուժ» (force), «աշխատանք» (work), «հզորություն» (power) և «էներգիա» (energy) ֆիզիկական մեծությունների հետ:**

26. Համակեցության կանոնների պահպանումը հնարավորություն է տալիս Մարդուն ինքնահաստատվելու և ինքնազարգանալու որպես **ՏԵՍԱԿ**: Ակնհայտ է, որ կյանքի բանական խաղը որպես ոգեղեն արարում ընկալելով, գիտակցաբար հաղթելով իր նյութապաշտ սոցիալական ագրեսիվությանը՝ Մարդը վեհացնում է իրեն և համագործակցում զարգացման ձգտող իր նմանների ու բնության հետ: Այս մտայնությամբ էլ Նարեկացին մեծարում է Մարդուն՝ վստահ, որ «Ես»-ը ինքնահաստատվում և ինքնաիրացվում է, երբ

խորապես կարևորում է իր իմացության բանական սկիզբը՝ որպես արարման ձգտող էակ:

27. Ոգեղեն և մարդասեր Մարդը՝ որպես տեղեկատվահաղորդակցական տեքստ, իր գոյաբանական զարգացման միտումներով հիմնված է **ավերիչ (եսակենտրոն-աստվածամերժ) և արարիչ (համայնակենտրոն աստվածասիրություն)** արժեքային բազմաչափության վրա: Հենց այս ենթատեքստի բացահայտումն է հնարավորություն տվել Նարեկացուն մշակելու **Մարդ-Հասարակություն-Աստված-Բնություն-Պետություն-Կառավարում** հարաբերությունների նոր աստիճանակարգ՝ դառնալով համագործակցության մշակույթի գաղափարախոս: Ինքնակառավարման այս դրսևորումների հետ սերտ շփման եզր ունի Նոբելյան մրցանակի դափնեկիր, էթնոլոգ Կոնրադ Լորենցի (1903-1989) գոյաբանական և իմացաբանական հայեցակարգը: Փաստորեն, ապրելով հազար տարի իրարից հեռու՝ նրանցից յուրաքանչյուրը յուրովի բացահայտել է Մարդու կողմից **նյութականի և ոգեղենի սահմանների ներդաշնակման գիտակցման անհրաժեշտությունը**: Նարեկյան մշակույթը մարդուն օժտել է այնպիսի աշխարհաճանաչողությամբ, որի օգնությամբ նա, յուրացնելով աստվածաշնչյան կերպարների իմաստությունները, հնարավորություն ունի ընդարձակելու իր ճանաչողությունը՝ հանուն ինքնակառավարման և ինքնարդիականացման:

28. Նարեկյան մշակույթի հիմնաքարը քաղաքակրթության տիեզերաբանությունն է, որը, համաձայն մեր պատկերացումների, իր արմատներով ձգտում է ոչ թե **«Ես-Մենք-Նրանք»** մեխանիկական նույնականացման, այլ համագործակցության: Փաստորեն, նարեկյան մշակույթը համակեցության և համագործակցության սկզբունքների պահպանման ամբողջություն է, որը հնարավորություն է տալիս Մարդուն լինելու մարդկության մասնիկը՝ ապահովելով սեփական **ՏԵՍԱԿԻ** բնականոն արդիականանալու հարատևությունը: Այս ամենով էլ պայմանավորված՝ նարեկյան մշակույթը՝ որպես **Հայ ՏԵՍԱԿԻ** ինքնության բնականոն արդիականացման ուղենիշ, հազար տարվա հեռավորությունից հայկական «լոկալ» քաղաքակրթությունը քարձրացրեց գլոբալ մակարդակի:

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

МАРИАМ МАРГАРЯН

ИМПЕРАТИВЫ ПОЛИТИЧЕСКОЙ МОДЕРНИЗАЦИИ В
РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

MARIAM MARGARYAN

THE IMPERATIVES OF POLITICAL MODERNIZATION IN
THE REPUBLIC OF ARMENIA

Խմբագիր և սրբագրիչ՝ ԱՆՈՒՇ ՍԱՄՎԵԼՅԱՆ

Համակարգչային
ձևավորող՝ ՀԱՍՄԻԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Գրքի կազմի նկարը՝ Երվանդ Քոչար, «Մարդը և քաղաքը» (մասնավոր
հավաքածու):

Գիրքը տպագրվել է հեղինակի միջոցներով:

Չափսը՝ 70x100 1/16: Ծավալը՝ 19.5 տպ.մամուլ: Թուղթը՝ օֆսեթ, 80 գր.:
Տպաքանակը՝ 500 օրինակ:

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ տպարանում

ԵՐԵՎԱՆ 2019

